Ֆ. ՖՐԱՆԳԵԱՆ

ԱՏՐՊԱՏԱԿԱՆ

(ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԺՈՂՈՎԱԾՈՒ)

ԹԻՖԼԻՍ
Էջմիածնայ տպարան «ՀԱՅՐՄԷՍ» բնկ.
Մադաթեան փող. № 15.
(115)

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՏԵՂ

Այս ժողովածուի մէջ ամփոփուած են միայն մեր այն յօդուածները, որոնց մեծագոյն մասը տպել են «Մուրճ» ամսագրում եւ կրում են աւելի մնայուն բնաւորութիւն, իսկ ընթացիկ հարցեր օգտագործող թղթակցութիւնները բաց են թողնուած: Գրքի մէջ կան նաեւ բոլորովին նոր գլուխներ, արտասպումներն էլ այս են տեսնում նոր սրբագրութեամբ, աւելի բարեփոխուած եւ ընդարձակած,

Անելորդ չեմ համարում ասել, որ ժողովածուն կազմելիս աչքի առաջ եմ ունեցել եւ ուրիշ աղբիւրներ, զանազան պարբերական թերթերում լոյս տեսած մանր-մունր թղթակցութիւններ եւ յօդուածներ, որոնցից վերցրել եմ վիճակագրական տեղեկութիւններ եւ այլն,

Այս աշխատութիւնը ունի անշուշտ իր աչքի զարնող պակասութիւնները եւ թերութիւնները, բայց լինելով առաջին փորձ, սիրում եմ հաւատալ, որ ընթերցող հասարակութիւնը մի յայտնի չափով գիջողաբար կը վերաբերուի: Սա գուցէ ծառայէ իբր աղբիւր ուրիշներին ապագայում աւելի լաւ մշակուած աշխատութիւններ տալու համար: Ցամենայն դէպս մենք համոզուած ենք, որ այս գիրքը ընթերցողին կը տայ ամփոփ գաղափար պարսկահայերի, հայկական այս հատուածի, ինչպէս եւ նրա հարեւան, կողմ-կողմի ապրող քիւրդերի, ասորիների եւ թուրքերի մասին:

Ե. ՏՐԱՆԳԵԱՆ

ՄԱՍ I

ՀՈՑԵՐԸ

ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՀԱՑԵՐԸ

Հնումն Ատրպատականը Հայաստանի հարաւ-արևելեան կողմն էր ընկնում և իր մէջ պարունակում էր Հայոց Պարսկահայքը և Փայտակարան նահանգը, նոյնպէս և Վասպուրականի մի մասը։ Բուն Ատրպատական նահանգը ընկնում էր Ուրմիոյ լճի արևելեան կողմից մինչև Գիլանի սահմանները, հիւսիսային կողմից տարածւում էր մինչև Արաքս գետը, իսկ հարաւից մինչև Պարսից Քիւրդստանը։ Ատրպատական նահանգը, որովհետև երբեմն հայերի, երբեմն մարաց կողմից նուաճւում էր, կամ կէսը մէկին և կէսը միւսին էր պատկանում, այդ պատճառով կոչւում է Ատրպատական Հայոց և Ատրպատական Մարաց։ Հատ յոյների այս նահանգը կոչւել է Ատրպատական դեռ պարսից Դարեհ VI թագաւորի ժամանակներից, Ատրպատ նախարարի անունով. սակայն աւելի հաւանական է համարւում, թէ Աստ բառից ստացած լինի անունը, որ պարսկերէն կրակ է նշանակում և սրանից հետևեցնում են, որ կրակապաշտութիւնը նախ այստեղ է սկսած։

Ատրպատականը, այս ընդարձակ աշխարհը մի ժամանակ, Վաղարշակից սկսած մինչև Արտաւազդ I, ճանաչում էր հայերի գերիշխանութիւնը, բայց յետոյ անցաւ պարսից ձեռքը։ Իսկ այժմ Ատրպատականը կամ Ադերբեջանը համարւում է Պարսկաստանի մի կտորը, բռնում է Պարսկաստանի հիւսիսային մասը և համարւում է ամենալաւ նահանգներից մէկը։

Ատրպատականը բռնում է 104,840 քառակուսի հազարամետր տարածութիւն և ունի մօտաւորապէս 2,000,000 բնակիչ։ Ազգաբնակութեան մեծամասնութիւնը ի հարկէ կազմում են թուրքերը, յետոյ քիւրդերը, ասորիները և ապա հայերը։ Ամբողջ Ատրպատականում հայերի թիւը հաշւում են մօտաւորապէս 34,000, դրանից ոչ աւելի։ Այդ մի ափ հայերը ցրւած են համարեա ամբողջ տարածութեան վրայ։ Հայերի մեծագոյն մասը բռնում է գաւառները,—ինչպէս Սալմաստ, Չարադաղ, Ուրմի, Սուլդուզ, Միանդուաբ, Խոյ, Մակու, իսկ մի մասն էլ ցրւած են քաղաքներում։ Ամենաբազմահայ քաղաքը, ոչ միայն

Արդաստանում, այլ և ամբողջ Պարսկաստանում, համարում է Թաւրիզը։ Թաւրիզը, որ Արդաստանի ամենամեծաւաղաղ և գլխաւոր քաղաքն է,— ունի մօտաւորապէս 200,000 բնակիչ։ Այդ թւի միմիայն 5,000-ը հայեր են, ինքնըստինքեան մի ահռելի քանակութիւն։ Այդ մի բուռը հայերը, ամբողջ դարեր ապրելով այլազգիների-Թուրքերի հետ խառն, ոչ միայն չեն ձուլուել, այլ նոյնիսկ պահպանել են իրենց ինքնուրոյնութիւնը, ազգային առանձնայատկութիւնները և այժմ կանգնած են վերածնման ճանապարհի վրայ։ Թաւրիզի հայերը ապրում են երկու թաղերում՝ Լիլաւա և Ղալաւ։ Ղալան կամ Բերդաթաղը ուելի հին է և Լիլաւայի վերաբերմամբ համարում է թաղաքի Ղալայի հայերի մեծագոյն մասը, եթէ չասեմ բոլորը, կազմում են Ղարագաղի, Մուժումբարի, Սոյլուբի և Այշամուլքի գաղթականութիւնները։ Այժմ Ղալայի հայերի թիւը հասնում է մօտաւորապէս 320 տան, իսկ Լիլաւայինը 480, այնպէս որ ամբողջ Թաւրիզում կան 800 տուն հայեր։ Լիլաւա թաղը աւրագ և գեղեցիկ կերպով ընդարձակւում է և լցւում նոր հայերով։ Այդ երկու հայաբնակ թաղերը իրարից հեռու են մօտ 1½ վերստով և միջին տարածութիւնը բռնել են թուրքերը։

Թաւրիզից դէպի հիւսիս, մօտաւորապէս 40 վերստ հեռաւորութեան վրայ գտնւում է Մուժումբար գիւղը։ Մուժումբարը գուցէ հայաբնակ է և համարւում է շատ հին գիւղ, ուելի հին, քան Թաւրիզը։ Մուժումբարը ունի մօտաւորապէս 140 տուն, այսինքն ընտանիքը, ինչպէս և Թաւրիզում, բազմանդամ է, այնպէս որ համարձակութեամբ կարելի է 6 անդամ հաշուել, նոյնիսկ ուելի։ Մուժումբարի մօտ կան երկու փոքրիկ գիւղեր՝ Այշամուլք և Սոյլուբ։ Սրանք մի ժամանակ հայաշատ են եղել, բայց այժմ բոլորն էլ ցրուել են. Սոյլուբում կան մօտ 5 տուն հայեր, իսկ Այշամուլքում երկու-երեք, գուցէ սրանք էլ շուտով հեռանան։ Թէ վերջին երկու գիւղերը և թէ Մուժումբարը ունեն ընդարձակ, մեծ գերեզմանոցներ, որոնք ապացոյց են նրանց հարգաստութեան անցեալում։ Մուժումբարից հայերը գաղթել են ոչ միայն Թաւրիզ, այլ ուելի հեռուն, դէպի Արդաբիլ։

Արդաբիլը Արդաստանի վաճառաշահ քաղաքներից մէկն է և գտնւում է Սաւալանի հարաւ-արևելքում։ Արդաբիլը ունի միայն 30—35 տուն հայեր։ Անցեալում Արդաբիլը, ինչպէս Արդաստանի միւս մասերը, եղել են հայերով լիցուն։ Մինչև այժմ էլ կայ Արդաբիլում մի մզկիթ, որի բակում և առաջը գտնում ենք հայկական գերեզմանաքարեր՝

հայկական մակագրություններով։ Հայերը չնայած իրենց անշնչան քանակությանը, պահել են իրենց գոյությունը և համեմատաբար աւելի բարեկեցիկ վիճակի մէջ են, ազատ հարստահարություններից և կեղեքումներից։ Հայերի նշանաւոր մասը եկեղեցիներ են, որոնք գաղթել են յիսունական և վաթսունական թուերին Թաւրիզից և մասամբ Մուժումբար գիւղից։ Ընդհանրապէս հայերը առևտրականներ են, այս և այն վաճառականական տան ներկայացուցիչներ։

Համեմատաբար աւելի բազմահայ է Մարաղա քաղաքը։ Մարաղան գտնուում է Թաւրիզից հարաւ և կազմում Սաուջ-Բուլաղ գաւառի շարունակությունը, աւելի հիւսիս, և ունի մօտ 100 տուն հայեր։ Անցեալում այս քաղաքն էլ եղել է բազմահայ, միևնոյն ժամանակ նշանաւոր կենդրոն հայերի, ինչպէս և ասորիների համար։ Իսկ այժմեան Մարաղան իսկական թուրքական քաղաք է։ Մարաղան սարդայի, չոր ժգերի արտահանության տեսակէտից գրաւում է նշանաւոր տեղ։ Ատրպատականում Մարաղայի հայերը համեմատաբար աւելի ընկած են պարսկական ազդեցության տակ, շատ բան ընդօրինակել և սեփականել, քան միւս մասերը։ Այդ կողմից իրաւամբ կազմում է Պարսկական Քիւրդիստանի շարունակությունը։ Մարաղայի հայն էլ հագնուում է թուրքի նման, ածիլում թուրքի նման, իր առանձնայատկություններով, սովորություններով, մանաւանդ խարակտերիստիկով նման է իր դրկից թուրքին։ Իսկապէս որ այդ կողմի հայերը զուտ հայկական քիչ բան ունին։

Ասացի որ հայերը ցրուած են, շաղ տուած ամբողջ տարածության վրայ։ Այդ բեկորներից մէկն էլ ընկած է Արաքսի ափունքներում։ Ս. Ստեփաննոս Նախավկայի վանքը, որ իր փառահեղ անցեալի միայն մի խղճուկ ճեացորդն է ներկայացնում, ուղղակի ողբում է իր դրությունը։ Զրկուած է նա իր անցեալ հարստություններից, ամայացած է գեղեցիկ շրջակայքը, խլուած կալուածները և թողնուած մի յեղաթիւրուած բեկոր։ Բայց նա ասես իր դրությունը թեթևացնելու համար ամուր կպցրել է կրծքին իր մի քանի հարազատներին և չի ուզում հեշտությամբ զատուել, պոկ գալ։ Դա իր՝ վանքի գիւղն է, որը ունի մօտաւորապէս 28—30 տուն հայեր։ Ս. Նախավկայի վանքը իր գիւղով Արաքսի ափում, Ս. Թադէի վանքը իր գիւղով սահմանում, կազմում են մի-մի փառահեղ յուշարձան, հայերի անցեալ փառքի մի-մի կոթող։

ՄԱԿՈՒԻ ԽԱՆՈՒԹԻՒՆԸ

I.

Մակուի խանութիւնը բռնում է Ատրպատականի սմենահիւսիս-արևմտեան ծայրը. սահմանակից է թէ Ռուսաստանին և թէ Տաճկաստանին։ Նոր է Ատրպատականի այդ մասը ստացել Մակու անունը։ Դա մասամբ Վասպուրականի Արտազ գաւառին է համապատասխանում։ Այդ գաւառը շատ անցեալում կոչուել է զանազան անուններով, ինչպէս Արտազական գաւառ, Արտազակէ, Արտաւազդ, նաև Շաւարշան, իսկ Արտազ անունը ստացել է այն ժամանակ, երբ Արտաշէս II-ի հրամանով Սմբատ Բագրատունին բնակեցրեց այս գաւառը Այլանաց երկրից բերած գերիներին և նրանց անունով էլ կոչուեց Արտազ, որովհետև նրանց որտեղից բերուեցին Արտազ էր կոչւում։

Արտազը նշանաւոր և յայտնի է իւր նեբրական վայրերով, օրինակ Թադէոս Առաքեալի վանքը, Վարդանանց պատերազմի վայրը-Աւարայրի դաշտը և Տզմուռ գետը։ Եւ այս բոլորը այժմ կան Մակու գաւառում. ահա դրանից հաստատապէս կարող ենք եզրակացնել, որ այժմեան Մակուի խանութիւնը Վասպուրականի հին Արտազ գաւառն է, եթէ ոչ բոլորովին, գոնէ մեծ մասով։ Իսկ Մակու անունը նոր է ստացել այդ գաւառը։ Պարսիկները, ինչպէս և Թուրքերը, այս գաւառը կոչում են Միան-քուհ, որ պարսկերէն նշանակում է երկու սարերի մէջ։ Եւ իսկապէս, Մակուի խանութեան քաղաքը-Մակուն ընկնում է երկու ժայռերի մէջ, իսկ այդ քաղաքի անունով էլ կոչուել է ամբողջ գաւառը։ Շատ հաւանական է որ Միան-քուհ բառը փոքր ինչ փոփոխութեան է ենթարկուել և այժմ դարձել «Մակու»։ Տարբերութիւնը այս երկու բառերի մէջ շատ մեծ չէ, և դիւրին հնչելու համար կարող էր «Միան-քուհ» հեշտութեամբ դառնալ «Մակու»։ Ցամենայն դէպս այս պարզ է, որ այդ գաւառը «Մակու» անունը ստացել է վերջնականապէս Պարսից գերիշխանութեան տակ ընկնելուց յետոյ. հնումն այդ անուանը ոչ մի տեղ չենք պատահում և չըկայ յիշատակուած։

Մակուի գիրքը լեռնային է և քարոտ։ Ամբողջ երկիրը ներկայացնում է բարձրաբերձ լեռների և խոր-խոր ձորերի մի ամբողջ ցանց. և այդ ձորերի միջով քչքչալէն, ահագին ազմուկով հոսում են զանազան ուղղութիւններով լեռնային գետակներ և փոքրիկ վտակներ։ Ահա այդ անմատչելի լեռների և ժայռերի շնորհիւ է, որ Մակուն անառիկ լինելով, վայելում է յայտնի չափով անկախութիւն և շատ քիչ չափով կախումն ունի պարսից կառավարութիւնից. իսկ անցեալում Մակուն բոլորովին անկախ երկիր—խանութիւն էր. այժմ էլ նա վայելում է կիսանկախ դրութիւն։ Ասենք, որ այդ կախուած է տիրող խանների բնաւորութիւնից. օրինակ, այժմեան խանի հօր կառավարութեան միջոցին, Մակուն աւելի անկախ էր, քան հիմա է։ Բայց մենակ Մակուն չէ Պարսկաստանում, որ որոշ չափով անկախ է. կան և ուրիշ վայրեր ու ժողովրդներ, որոնք սահմանափակ անկախութիւն են վայելում։ Ցիշենք, օրինակի համար, պարսից Քիւրդստանը ընդհանրապէս, Թարգավար եւ Մարգավար գաւառակները մասնաւորապէս։ Դրանց շարքին կարելի է թուել և Շահ-սեվանները, որոնք հռչակուած են իրենց քաջութիւնով և բռնում են Արդաբիլ քաղաքի շրջակայքը։ Հէնց անցեալ 1901 թ. օգոստոսի 13-ին սրանց և տէրութեան զօրքի մէջ կատարեալ ճակատամարտ է տեղի ունենում և Շահ-սեվանների գլխաւոր խանները ու քէդները սպանուած անձնատուր են լինում։ Պարագլուխները 9 հոգի էին, որոնց շղթայում և բերում են Թաւրիզ։ Դրանցից մէկին—Խոսրով խանին գլխատեց Թագաժառանգը Արդաբիլի բերդում։

Պարսից կառավարութիւնը ձգտում է Մակուն էլ միանգամայն ենթարկել իւր ազդեցութեանը, ինչպէս Ատրպատականի շատ գաւառներն են։ Այդ ձգտումը աւելի նկատելի է այս մի երկու տարում, իսկ առաջ բոլորովին մոռացութեան էր տրուած։

Վայրենի և կուսական Մակուի երկիրը,—վայրենի թէ իւր բնութիւնով և թէ բնակիչներով,—թէև ամբողջ դարերի կեանք ունի այս երկիրը, բայց ոչ մի փոփոխութիւն, առաջադիմութեան ոչ մի հնաք. էլի նոյն յարաբերութիւնները, նոյն կեանքն է, ինչ դարեր առաջ։ Երկիրը դեռ կոյս է, բոլորովին կոյս. քաղաքակրթութեան անողոք ճառագայթները դեռ չեն յանդգնել պատռելու այս երկրի կուրծքը։ Այդ զանգուածը, Մակուի խանութիւնը, ծանր օրօրւում է թանձր, մթութեան չափ թանձր, խաւարի անսահման ծալքերի մէջ։ Եւ տէրութիւնն անհոգութեան շնորհիւ, Ատրպատականի այս ընդարձակ կտորը թողնուած է ճակատագրին և բախտի խաղին, ոչ մի փորձ

երկրի բարեկեցութեան, ժողովրդի կեանքի և գոյքի ապահովութեան վերաբերմամբ։

Մակուի խանութիւնը միանգամայն կտրուած և անջատուած է արտաքին աշխարհից. նա բոլորովին զրկուած է քաղաքակրթութեան շնորհած բարիքներից, և չը գիտեն մակուցիները թէ ինչ է կատարուած իրենց երկրից դուրս։ Մակու գաւառը, ինչպէս և ամբողջ Ատրպատականը, չունի ոչ մի կանոնաւոր ճանապարհ. խճուղիների մասին խօսք անգամ չի կարող լինել։ Ճանապարհները ձգուում են ձորերի միջով, նեղ, վտանգաւոր, ահ ու զարգանդով լի։ Իւրաքանչիւր ճանապարհորդ պէտք է, նոյն իսկ անհրաժեշտ է, զինուած լինի. ամեն րոպէ կարող է վտանգ պատահել, յանկարծ աւազակներ կարող են առաջդ դուրս գալ։

Ամբողջ Մակուի խանութիւնը միանգամայն զուրկ է նաև հաղորդակցութեան ուրիշ անհրաժեշտ միջոցներից, ինչպէս են հեռագիր, փոստ և այլն։ Ատրպատականի միւս մասերը գոնէ քաղաքակրթութեան այդ բարիքը վայելում են, թէև խղճուկ չափով, բայց այդքանից էլ զուրկ է Մակուն։ Պաշտօնական մարդիկ առանցին սուրհանդակներ են պահում, որոնք կատարում են և՛ փոստի և՛ հեռագրի դերը։ Ամենք Մակու գաւառում, չհաշուած պաշտօնեաները, բացառութիւն պէտք է համարել այն անձնաւորութիւններին, որոնք պահանջ են զգում հեռագրի և փոստի, իսկ մնացած մնծագոյն մասը, որը կազմում է ամբոխ—մասսան, ոչ մի առանձին քարդ պահանջ չունի, և չի էլ կարող ունենալ պարզացման այդ աստիճանի վրայ կանգնած ժողովուրդը։ Ամբողջ օրը կողոպտել և ուտել, ահա նրա պահանջը, և սրանից այն կողմը չէ անցնում։

Ահա որ աստիճան անջատուած և առանձնացած է այս երկիրը, ընկած մի հեռու անկիւն, ապրում է ինքն իրենով, ոչ մի առնչութիւն չունենալով արտաքին աշխարհի հետ։ Անհրաժեշտ է յիշատակել միևնոյն ժամանակ և այն հանգամանքը, որ Մակուի խաներն էլ իրենց կողմից ձգտում են երկիրը անջատուած պահել. նրանք էլ չեն ախորժում երբ իրենց երկրի մասին գրում, կամ երբ եւրոպացիները գալիս են ուսումնասիրելու, հետազօտելու նպատակով։ Նրանք միշտ էլ տրամադիր են ենթադրելու, որ դրանք յետին և գաղտնի մտքերով են մտել իրենց երկիրը, և ով գիտէ, մի օր էլ յանկարծ իրենց գեղեցիկ երկիրը կըտեսնեն ձեռքից գնացած։ Այս հանգամանքը, ի հարկէ, որոշ չափով դեր է խաղում քաղաքակրթութեան յետ մղելու գործի մէջ։

Եւ այդ կտրուած և մոռացուած անկիւնը ունի 3000-ից ա-

ելի գիւղեր, որոնք պատկանում են տեղական խաներին։ Այդ գիւղերից իւրաքանչիւրը թառած մի լեռան կրծքին կամ մի խոր ձորի մէջ տարածուած՝ ունի իր բնական ամրութիւնը և կարող է երկար ժամանակ ապահով պաշտպանուել վտանգի դէպքում։ Մի երկիր է Մակուն, ուր չկայ ընդհանուրի ապահովութիւն, և ապրում է նա, ով ուժեղ է։ Տէրութիւնը չի տալիս ապահովութեան միջոցներ, դրա համար էլ ժողովուրդն է միջոցներ ստեղծում։ Իւրաքանչիւր մակուցի գիտէ,—տարիների փորձն է նրան այդ եզրակացութեան հասցրել,—որ մէկին, թէկուզ օրը ցերեկով, սպանեցին, կերթայ ու կերթայ։ Այդ գիտեն բոլորը և աշխատում են գոյութեան կուռում յաղթող հանդիսանալ, գլուխ պահել այդ կուռում։ Ամեն մի ճամբորդ, լինի նա իշապան, ուղտապան և այլն, զինուած է և պատրաստ։ Գիւղերում նոյնիսկ բնակիչները փոփոխուելիս մէջքներին, տարճանակ և դաշոյն կախած, ման են գալիս։ Կեանքն է այդպէս ստիպում. ուրիշ կերպ էլ չէր կարող լինել, որովհետև ամեն մի բոպէ վտանգ է սպառնում։

Այդ գիւղերից ամեն մէկը իր խանը ունի, իր աղան ունի. իսկ այդ բոլոր գիւղերը, ամբողջ գաւառը կառավարում է մի խան, որին ենթարկւում են միւս բոլոր խաները և աղաները։ Մակուի ընդհանուր դատաւորին-խանին տեղացի ժողովուրդը Սարդար կամ Իքբալ Իւլ Սալթանէ անունն է տալիս։ Մակուի արդի դատաւորը Թէմուր խանի որդի Մուրթզայ դուլի խանն է, որը նստում է համանուն Մակու քաղաքում։ Սա համարւում է Մակուի խանութեան կենդրոնական և գլխաւոր քաղաքը կամ, այսպէս ասած, մայրաքաղաքը։

Մակու քաղաքը գետնուած է մի նեղ, խոր և անդրնդանման ձորի մէջ, որի երկու կողմը հսկայական ժայռեր են բարձրանում և կամարի նման կռանում դէպի իրար, ասես, ուզում են միանալ։ Հէնց այդ է պատճառը, որ ձմեռը այնտեղ արևը շատ քիչ է իւր երեսը ցոյց տալիս։ Այդ ձորի միջով հոսում է ահագին աղմուկով Մակուի գետը, որի յատակը ամբողջապէս ժայռեր են, և այդ գետը դարերի ընթացքում հոսելով, կտրել, ճեղքել է ժայռերը, կազմել է մի նեղ ու խոր վիհ, որի միջով ջուրը գալարումներով, չար օձի նման վշշալով, սողում է դէպի արևելք և թափւում Արաքս, երբեմն-երբեմն անյայտանալով բոլորովին գետնի տակ՝ կազմում է բնական կամուրջ։

Մակուն փոքր քաղաք է, ունի մօտ 800 տուն։ Ասացի, որ քաղաքը ձորի մէջ է, և մի սև ժայռ կամարի նման կախուել է քաղաքի վրայ. և այդ կամարի տակ, բնակարանների վերև, պոկուել և ընկել են ժայռի կտորներ, որոնք, կարծես,

ամեն վայրկեան սպառնում են գլորել վար և աւերել պատահած ամեն ինչ։ Իսկապէս բաւական է մի թեթև երկրաշարժ, որ Մակու քաղաքը, եթէ ոչ բոլորովին ոչնչանայ, գոնէ անապին ջնջուած կրի։ Այդ ժայռէ կամարը շատ դիւրութեամբ կարող է պոկուել, իսկ միւս քարերը՝ միշտ էլ սպասելի է, որ կարող են գլորուել ցած և մեծ աղէտների ու աւերումների պատճառ դառնալ. և ինչպէս պատմում են, նման դէպքեր եղել են ու շատ զոհեր տարել։ Հին ժամանակ մի արհեստական ճախարակ է եղել, որով քաղաքացիները բարձրանում էին կամարի վրայ, բայց այժմ ճախարակի պարանը կտրուած է և կրկնած են հնարաւորութիւնից։

Սոնա այդ քաղաքումն է նստում Մակուի Սարդարը. իսկ Մակու քաղաքից քիչ հեռու տարածուում է մի մեծ լեռնաշղթայ, որի գագաթին գտնուում է Մակուի պետի ամրանոցը— Դարա-իաշը՝ սեւ խաչ։

Մակուի այժմեան դատաւորը, Մուրթզա-գուլի-խանը թէև մի քանի անգամ եղել է Եւրոպա, այցելել է Գերմանիա, Ֆրանսիա, Աւստրիա, տեսել է Եւրոպայի կեանքը, և քաղաքակրթութեան հրաշալիքները, թէև կինը աւարտել է Երևանի օրիորդաց պրոգիմնազիան, բայց ոչ մի ձգտում չէ նկատուում բարելաւելու երկրի ներկայ դրութիւնը. նոյնիսկ չեն ձգտում փոփոխութիւն մտցնել իրենց մասնաւոր կեանքի մէջ։ Նրանք դարձեալ նոյն թուրքերն են, ինչ տարիներ առաջ իրենց հայրերն էին և ոչնչով չեն տարբերուում շրջապատող ժողովուրդներից։

Ներկայ Սարդարը Պարսկաստանում համարուում է հարուստներից մէկը, իսկ Ատրպատականում գրեթէ ամենահարուստը։ Սարդարը ունի 150 սեփական գիւղեր, ամբողջ Մակուի բերդերը պատկանում են սրան. Մակուի դատաւորն է, ունի անագին եկամուտ, իսկ իր դիրքի և կարողութեան համեմատ շատ աննշան ծախս։ Ահա այս հանգամանքը—հարստութիւնը—շատ մեծ դեր է խաղացել Մուրթզա-գուլի խանի դատաւոր լինելու խնդրում, թէ չէ այնքան քաջ, պատերազմիկ և նուաճող բնաւորութիւն չունի։ Հէնց այս է շատ մասով պատճառը, որ այժմ կան Մակուի մէջ սրանից անկախ խաներ։ Միայն ներկայ դատաւորի հօր, Թէյմուր խանի օրով և նրա ենթակայութեան էր, որ բոլոր խանները և ազատները խիստ հնազանդուում էին նրան։

Բայց Թէյմուր խանի մեռնելուց յետոյ այնտեղ շատ քան

փոխեց *). այլ ևս այնտեղ կամքի ոյժը գործ չէ տեսնում, այլ միայն թուժաններն են, որ մեկը միւսին գերազանցում են։ Դրանց մէջ այժմեան դատաւոր Մուրզաթզա-դուլի խանը իր մեծ հարստութեամբ գերազանցում է բոլորին, տոնում է Մակուի դատաւորութիւնը և դառնում իր հօր ժառանգորդ։ Բայց սա չէ ունենում հօր դիրքը, նրա ղեկավարող ձեռքը, ընկճող բնաւորութիւնը. և Մուրթզա-դուլի խանին չէ աջողւում վերջ դնել առաջացած մի շարք երկպառակութիւններին և խաղաղ վիճակի մէջ պահել ազգաբնակութիւնը։ Շարունակ խռովութիւններ, շարունակ յուզումն. չը կայ այնտեղ հանգըստութիւն և ապահովութիւն, միշտ յաղթողը թալանողն է։

Մակուի բնակիչները մեծ մասով թուրքեր են, բայց ոչ պարսիկներ, այլ թաթարներ, ինչպէս ամբողջ Ատրպատականում։ Մակու գաւառում կան նաև քրդական ցեղեր և փոքր մասով հայեր։ Այս թուրքերի մի մասը վերաբերում է Ալի Ալլահի աղանդին, այսինքն Ալին իբրև Աստուած ընդունող. տեղացիները սրանց ասում են կարակոյունցիք—տես. ոչխարներ։

Այժմ խօսենք այդ ժողովուրդներից ամեն մէկի մասին մանրամասն և առանձին-առանձին։

II.

Ասացինք, որ Մակուի աղգաբնակութեան մէջ բազմամարդութեան կողմից առաջին տեղն են բռնում թուրքերը, որոնք կառավարւում են տեղական խաների ձեռքով, իսկ ընդհանուր պետը, ի հարկէ, Սարդարն է։ Թուրքերը մեծ մասով բռնում են Մակուի դաշտային և ցած տեղերը, իսկ քիչ մասը լեռնային բարձրութիւնները։ Սեղմ ժողովուրդը հանգիստ ու դադար չունի, նա միշտ էլ պատերազմական վիճակի մէջ է։ Այդ էլ, ի հարկէ, շնորհիւ իրենց կառավարող խան-աղաների. տարի չի լինում, որ խաները մէկ մէկի դէմ չը կռուեն, եղբայրը հօր, հայրը եղբօր դէմ։ Շատ անգամ կռւում են շատ չնչին խնդրի համար. և այս յուսահատական դրութիւնը տեսում է երբեմն շաբաթներ, ամիսներ. ամեն մի բոպէ սպասւում է սաստիկ բռնկումն և միևնոյն ժամանակ աշխատում են անընդհատ հե-

---

*) Շատ անգամ, ինչպէս պատմում են, թէյմուր խանը ձեռնելով և հայհոյելով ճանապարհ էր դնում թոգժառանգի կողմից ուղարկւած մարդկանց. նրա ժամանակ երկիրը շատ էր անկախ։

ագիրներ տեղալ Խոյ և Թաւրիզ, իւրաքանչիւրը իրեն արդարացնելու համար, կամ խմբերով դիմում են Մակու քաղաքը՝ Սարդարի մօտ։ Իւրաքանչիւր խան իրեն յաս ուկ տուրհանդակներով—երբեմն էլ սարբազներով շրջապատած—տեղեկագիրներ է հասցնում Խոյ։ Գտնուում են շատ անգամ երկու կողմի տուրհանդակների մէջ ընդհարումներ. իւրաքանչիւրը դրանցից աշխատում է մէկը միւսի դէմ եղած մեղադրանքը շուտ հասցնել. ի հարկէ այսպիսի դէպքում խորամանկը և փողատէրը աւելի է գործ տեսնում։ Այսպիսի կռիւների, երկպառակութիւնների դէպքում, տուժում է խեղճ ռայեա ժողովուրդը, որովհետև այդ ապատողական վիճակի միջոցին աշխատում են խանները միմեանց ջնջել, թալան են բերում, տանում ցանքերը. կողոպտում և չարչարում են, բանտարկում և տսկալի պատիժներ տալիս. իսկ այս բոլորին վերջ է տրւում միայն այն ժամանակ, երբ գալիս է կառավարութեան մաժորը-պաշտօնեան և վերջ դնում առաջացած վէճերին ու երկու կողմից էլ տուգանք առնելով վերադառնում իր տեղը։

Այսպէս է այս երկրում. մի փոքր վէճի համար զէնքի են դիմում, կռիւ սկսում, ժողովրդին իրար դէմ ուռի հանում։ Հէնց մի երկու տարի առաջ, Սարդարի բացակայութեան միջոցին [1]), սրա քրոջ որդի Իբադուլլահ խանի ու Մահմադ փաշայի նոքարների (ծառաների) մէջ մի շատ չնչին և հասարակ կռիւ է պատահում, և այդ առթիւ զէնքի կանչում են իրենց ամբողջ սարբազներին, ռայեա ժողովրդին. երկու կողմից դիրք են բռնում և փակում ճանապարհը, կտրում երթևեկութիւնը։

Այսպիսի դէպքերում, ինչպէս վերև ասացի, ամենից շատ տուժում է ժողովուրդը. թէև խաներն էլ տալիս են տուգանք, այն էլ մեծ գումարներ, բայց այդ էլ յետոյ ռայեաթի ջանքից են հանում, նրա արիւնը ծծում, կաշին քերթում, թալան-թրաշի դիմում։

Մակուում թալանի և կողոպուտի միջոցները շատ են. այդ բանը կախում ունի խանների կամքից, ամբողջ օրիով պարապ են մնում և մտածում են գինեւելու, փողի ու թալանի մասին. երկու ժողովուրդների տարաձայնութիւններից օգտուում են խանները, ռայաթների մէկ կամ միւս կողմը թալանում են ի պատիժ նրանց։

Իւրաքանչիւր խան բռնի կերպով իր ռայեա ժողովրդին հրացան է առնել տալիս. ամեն մի տուն մի գինեւոր տալու

---

[1]) Խանը (գաւառը) գնացել էր արտասահման հիւանդութեան պատճառով։

պարտական է. ձի, հրացան ու իրան պիտոյքները ինքը զինուորը իր ծախսով է առնում և խանը ոչ մի կերպ չէ մասնակցում նրան. միայն կուի ժամանակ, այն էլ շատ հազվագիւտ դէպքերում, խանը մասնաւոր ուտեստ է բաժանում և ձիերին դարի, պաշար մատակարարում, երբեմն էլ, զէնք չեղած դէպքում, բաժանում, տալիս զինուորներին իր զէնքերից։

Ժողովուրդը ամեն կերպ և ամեն դէպքում կեղեքւում, հարստահարւում է խաների ձեռքից։ Խանները վարւում են ժողովրդի հետ, ինչպէս ճորտերի. անում են այն, ինչ. որ կամենում են, ինչ իրենց քմահաճոյքն է թելադրում. ծեծում, թալանում, պատիժների ենթարկում, շատ անգամ դէն շպրտում, գիւղից դուրս վռնդում։ Ժողովուրդը չունի ոչինչ սեփական. նա հողազուրկ է. բոլոր հողերը և գիւղերը պատկանում են խաներին և աղաներին։ Գիւղացին աշխատում, վարում, ցանում, բերք է ստանում և մեծագոյն մասը գնում է գիւղատէր խանի ամբարը։ Մի խօսքով գիւղացին խանի ստրուկն է, նրա կեանքը խանի ձեռքումն է, կարող է ամեն խաղ խաղալ նրա հետ։ Իսկ եթէ մի փոքր գիւղացին վիրաւորէ, կամ ընդդիմանայ իր աղային, էլ ամեն ինչ վերջացաւ։ Անմիջապէս հրաման է արձակւում և թալանում են տուն-տեղ, գրաւում նրա ունեցած-չունեցածը, ու հազար օրիններ գլխին բերելուց յետոյ, տուն տեղից դուրս հանում։ Այսպէս ուրեմն, ռայեան պարտաւոր է հնազանդել և կատարել գիւղատիրոջ ամեն մի հրամանը. նա պարտաւոր է գործի, աշխատանքի ժամանակ թողնել իր լուծը դաշտում, հրացանը վեր առնել և գնալ խանին ծառայելու. էլ Աստուած է իմանում թէ երբ է ազատւելու, ցանքն ու վարն էլ չեն փչանայ արդեօք մինչև ազատւելը։

Այսպէս է խեղճ ռայեա ազգարնակութեան վիճակը,— միանգամայն մատնուած թշուառութեան ճիրաններին և ամենապէս օրէցօր քայքայւում, վատթարանում։

Ամբողջ Մակուի խանութեան մէջ, նոյնպէս և Պարսկաստանում, աշխատողը մէկ է, տասից աւելին ուտող։ Խանները և նրանց հետևորդները բոլորն էլ ուտողներ են, ձրիակերներ. դեռ չենք ասում սէյիդները, որոնք ահագին լէգէոններ են կազմում Պարսկաստանում և ապրում են բացառապէս ժողովրդի աշխատանքով. այդ արտօնութիւնը Ալլահից է շնորհուած նրանց։ Հերիք չէ, որ գիւղատէր խան-աղաները իրենց կարգին կողոպտում, թալանում են, մի կողմից էլ պատապարան են տալիս իրենց մօտ աւազակ փախստականներին և դրանք մեծ համարում ունեն խաների մօտ։ Ամեն մի խան իր դաչակին պահում, պաշտպանում է, որովհետև դրա միջոցով կարող

է այս և այն խանի սահմանի վրայ յարձակուել, աւերել և թալանել։ Այդ փախստականների միակ զբաղմունքը գողութիւնն է և աւարելը. դրանց հետ միանալով և տեղացիներ, ասպատակում են Ատրպատականը, Երևանեան նահանգի և Գիւրգիստանի մի քանի գաւառները։ Սրանք յարձակւում են կարաւանների վրայ, կտրում ճանապարհորդների առաջը, թալանում, կողոպտում են, մտնում են գիւղերը, նոյնիսկ քաղաքները և գողութիւններ անում։ Շատ անգամ այդ բոլորը կատարում են օրը ցերեկով, բայց ով է դրանց դէմ առնողը։ Գիւղատէրը,—նա էլ խան և միացած է գողերի հետ։ Ընդհանուր դատաւորը,—նա էլ այնքան ոյժ չունի, անկարողէ։ Կառավարութիւնը,—ոչ մի փորձ չի եղել և միանգամայն կառավարութեան կողմից անուշադրութեան է մատնուած, չեմ կարծում կարողանայ էլ։

Այսպէս է ընդարձակ Մակուն։ Օր չէ անցնում, որ գողութիւն չլինի Մակուի շրջանում. կարելի է ասել, որ ոչ մի տեղ Ատրպատականում չկան այնքան գողեր, որքան Մակուում։ Անխտիր կողոպտւում են այնտեղ ամենքը, երբ չեն ունենում որև է խանից թուղթ, կնիք, կամ գինուոր և այլն.

Բացի տեղական այդ աւազակներից և կեղեքիչներից, պակաս չէ նաև Տաճկաստանից եկող քրդական աւերը, որոնք թանար խանի սպանելուց յետոյ գալիս են յաճախ, համարձակ և մեծ խմբերով։ Մի հանգամանք էլ կայ, որ որոշ չափով նպաստում է կողոպուտների լայն չափերով տարածելուն, այդ այն է, որ իւրաքանչիւր խան ունենալով իւր սահմանը, իրեն պատասխանատու չէ համարում իր սահմանից դուրս կատարուած այս կամ այն դէպքին. իսկ պարսից կառավարութիւնն էլ շատ բան քննել չի ուզում. ուստի որի սահմանում պատահել է կողոպուտը—ցնաստը, այնտեղի խանին է յանցաւոր դնում և պահանջում է տուգանքը—ջառիմանա։ Ահա այս հանգամանքից և կարգապրութիւնից օգուտելով խան-ազանները, աշխատում են ցնաստել միմեանց,—ուղարկում են իրենց մարդկանց կամ մի խումբ գողերի, ուրիշ խանների գիւղերը թալանի նպատակով և միւս կողմից էլ շտապում են յայտնել տէրութեան, որ այսինչ գիւղում կամ ձորում մարդիկ թալանեցին և այլն։

Գողութիւն և թալան,—ահա այդ խան-ազանների օրուայ պարապմունքը, ահա նրանց ստացելու առարկաները. և նրանց դիւանում (դատարան) միշտ էլ գանգատը թալան-թրաշի, գողութեան է վերաբերում, մէկը ասում է իմ էշը խլեց, միւսը՝ ոչխարը, երրորդը՝ հրացանս առան, բեռս առին

այս ինչ գիւղացու պարտքի տեղ, ցանքս աւերեցին և այլն, և այլն։

Եւ Մակուի գրեթէ բոլոր խանները կովկասեան դաւառներից եկող գաղթականներ են, որոնք գաղթել են այստեղ ռուս-պարսկական պատերազմի ժամանակ։ Այս խանների մօտիկ ազգականները դեռ այժմ էլ ապրում են Ալէքսանդրոպոլի շրջաններում, Երևանում և Հին-Նախիջևանում։

Երկրի վիրաբերեալ գործերը, ի հարկէ, այդ խան-աղա գիւղատէրերն են կարգադրում, տնօրինում, սրանք են յանցաւորին գտնում, պատժում։ Յանցաւորին շղթայում, ծեծում են կամ գցում մի քանի արշին գետնափոր հորի մէջ։ Օրինակ, Մակուի ներկայ գատաւորը ամենամեծ յանցագործին գցում է յայտնի քարաժայռի գլխի որոշեալ տեղից, որի բարձրութիւնը յատակից հաշւում են հարիւր սաժէն։ Յանցաւորին հանում են ժայռի գագաթին, ձեռները և ոտները կապում և գլորում են ցած, նա ընկնում է քարերի վրայ և կտոր-կտոր լինում։ Իսկ գետնափորի մէջ յանցաւորը մնում է երկար ժամանակ, շարունակ շղթան վզին, տանջւում է խոնաւութեան և ապականութեան մէջ, մինչև որ խանը կը բարեհաճի ազատման հրաման արձակել։ Այդ գետնափորի խորութիւնը լինում է մինչև 25 արշին, հացը գցում են ներքև փոսի քարակապ շինուած բերանից։ Ինչպէս հացը, նոյնպէս և յանցաւորին շատ անգամ գցում են փոսը առանց կախելու կամ իջեցնելու։ Դեռ այդքան տանջանքը բաւական չէ, օրը մի անգամ էլ հանում են դուրս, ծեծում և էլի շղթայակապ գցում են փոսը, շատ անգամ էլ պատահել է, որ ծեծելով մեռցրել են։

Բացի այդ պատիժներից, որոնք համարւում են ամենածանրերը, կան և ուրիշները, ինչպէս քիթ և ականջ կտրել, մի քանի յանցաւորներ շղթայած միասին։ Չմոռանանք ասել, որ բոլոր խանները չունեն յանցաւորների համար վերև յիշուած գետնափոր փոսեր։ ուրիշները գցում են ախոռներում կամ ներքնայարկներում։ Մակուում չկան բանտեր և բանտային առանձին վարչութիւն։ իւրաքանչիւր խան իրեն յատուկ պատիժը ունի և այն է գործադրում։

Եթէ վերև առաջ բերուած կեղեքումները խանների և ուրիշ աւագակների կողմից չլինէին, ժողովուրդը վարէր հանգիստ և խաղաղ կեանք, սրանք կապրէին գոհ, և ժողովրդի անտնտական վիճակը այդքան խայտառակ չէր լինի։ Պէտք է ասել, որ Մակուի բնակիչները շատ են տարբերւում Պարսկաստանի միւս մասերի բնակիչներից թէ իրենց բնաւորութիւնով և թէ պատրաստմունքով։ Մակուի ազգաբնակութիւնը նահապետական ժո-

ղովուրդ է. պարապում են գլխաւորապէս խաշնարածութեամբ և երկրագործութեամբ. վաճառականութիւնը և արհեստները զարգացած չեն, դեռ միանգամայն նահապետական վիճակի մէջ են, և եղածն էլ գտնում է մի բուռն հայերի ձեռքին։

Մակուի թուրք ազգաբնակութիւնը իսկական բնութեան զաւակ է և ոչնչով չէ տարբերւում քիւրդերից, թուրքն էլ նոյնքան քաջ և զէնք սիրող է, որքան քիւրդը։ Թուրքերը ապրում են բնութեան ծոցում և միանգամայն կտրուած են քաղաքակիրթ երկրներից։ Դպրոց և ուրիշ հասարակական հիմնարկութիւններ գոյութիւն չունեն Մակուի խանութեան մէջ, էլի Աստրկատականի միւս մասերում մաղրասաներ կան, ուր մոլլաները գրել կարդալ են սովորեցնում։ Մակուում այդ էլ չկայ։ Հասարակական կեանք, պարզ է, չի կարող լինել։

Մակուի ազգաբնակութիւնը զերծ և անարատ է մնացել մի երկու մոլութիւններից և ախտերից։ Պարսկաստանի միւս մասերում շատ մեծ չափերով տարածուած է օպիումի (թրիաք) և ոգելից խմիչքների գործածութիւնը, մանաւանդ առաջինը, որից գործ են ածում նոյն իսկ մուրացիկ կանայք։ Թաւրիզում դուք շատ կըտեսնէք դեղնած դէմքեր, որոնք օպիումի հետևանք են, այն ինչ Մակուի ժողովուրդը դրա հակապատկերն է ներկայացնում. նա մնացել է թարմ և վայրենի։

Ահա Մակուի թուրք ազգաբնակութիւնը, նրա վիճակը և նրան կառավարող խան-աղաները։ Ազգաբնակութեան մի ստուար մասն էլ կազմում են քրդերը։ Մենք այստեղ աւելորդ ենք համարում երկար խօսել քրդերի մասին, քանի որ առանձին յօդուածում մանրամասն կանգ ենք առել։ Միայն այս կասենք, որ Մակուի քրդերը բաժանւում են մի քանի գլխաւոր աշիրէթների (ցեղերի), որոնց գլխաւորներն են՝ Զիլալցիք, Մլանցիք, Բուռկցիք, Հայդարանցիք, Մօսկցիք և այլն և այլն։

Մակուի քրդերի մեծ մասը պատկանում է Մուրթզայ դուլի խանին, երկրի դատաւորին, իսկ մնացած փոքր մասը՝ Մուստաֆա-բէյին, Կարինի դատաւորին։ Մակուի քրդերն էլ խաշնարածներ են, որը քրդի միակ և սովորական պարապմունքն է։

Քրդերը բռնում են Մակուի ամենաշատ արօտատեղիները և դրանց համար վճարում են խանին շատ չնչին տուրք, բայց պարտաւոր են վտանգի ժամանակ օգնել նրան. իսկ դրա փոխարէն մեծ ջնաներ են հասցնում թուրք ազգաբնակութեանվերջիններս, չլինելով իրենց աւազակաբարոյ բնաւորութեանը, չեն կարողանում քիւրդերի հետ գլուխ հանել, մրցել նրանց հետ։

Քիւրդերը եայլաղ (ամարանոց) բարձրանալիս, (լեռնային բարձրութիւններն են կազմում նրանց ամարանոցները) կամ այնտեղից ցած իջնելիս, որ գիւղի մօտով անցնեն՝ անպատճառ մի զգալի ՁԼաս կըտան։ Շատ անգամ գիւղի անասուններից խառնում են իրենց նախիրներին և սիւրուներին ու քշում տանում, կամ քիւրդերը իրենց նախիրները լցնում են թուրքերի արտերը, ոտի տակ տալիս, տրորում, ոչնչացնում, իսկ գիւղացին հնարաւորութիւն չունի պաշտպանելու, իր ՁԼասը պահանջելու։ Մակուի կառավարութիւնն էլ չը կարողանալով զսպել քիւրդերին և վերջ դնել նրանց սխրագործութիւններին, միայն գարնան և աշնան սկզբներին հրաման է արձակում և յայտնում, որ այս ինչ ամսին քրդերը պիտի բարձրանան սարերը կամ ցած գան, թող իւրաքանչիւր գիւղ միջոցներ ձեռք առնի ինքնապաշտպանութեան համար։

Այս է կառավարութեան միջոցը, ուրիշ հ ար չգիտէ նա։

III.

Այս երկրում, ինչպէս տեսանք յօդուածի առաջին գլխում, դեռ դարեր առաջ տիրում էին հայերը. նշանաւոր և յայտնի էր իր հազարաւոր, այս և այն կողմ փռուած յիշատակներով, հռչակաւոր վանքերով և սուրբ վայրերով, օրինակ՝ Թադէի վանքը, Աւարայրի դաշտը, Ստեփաննոս Նախավկայի վանքը և այլն։ Բայց այժմ չկան այդ բոլորը, նրանք աւերուել են. այժմ մնացել են միայն դրանց բեկորները։ Այնտեղ եղել է և իշխել է Հայոց իշխան, եղել են բազմաթիւ հայեր. և այսօր Մակուի բոլոր գիւղերում կան և նշմարւում են հայերի կենդանի նմուշներ — եկեղեցիներ, գերեզմանատներ, պատուական քաղաքի, գիւղերի աւերակներ, մնում են դեռ բերդերի, շինութիւնների հետքերը, առանց կորսուելու, իսկ Արտազ-Շաւարշանը աւերակների մի գանձարան է ներկայացնում։

Դեռ XIX դարի սկզբներում էլ Մակուում տիրող տարրը կազմում էին հայերը. դրանք գաղթել, հեռացել են իրենց ծննդավայրից գլխաւորապէս պարսկահայոց ամենամեծ գաղթականութեան միջոցին, այսինքն 1827—1828 թուականներին, ռուս-պարսկական պատերազմի ժամանակ։

Եւ այժմ այդ գաւառում մնացել է միմիայն մօտ 180 տուն հայ, այն գաւառում, ուր տասնեակ հազար հայեր են եղել,

ապրել, շինացրել երկիրը, զարդարել պատկառելի և նոր-կան յիշատակներով։

Ս. Թադէոս առաքեալի վանքը, որ ամբողջ դարեր է անցել, անցեալում այնքան փառք է ունեցել, և սիրելի է եղել ժողովրդին ու փայփայուել նրանից, այժմ թէև էլի կանգուն է այդ հռչակաւոր վանքը, բայց խարխուլ, շատ մասերը աւեր-

ՄՈՒՉԱՖՖԷՐ-ԷԴ-ԴԻՆ ՇԱՀՆՇԱՀԸ

ւած։ Հայկայ կամարները, որ մի շարք անցքերի և արիւնոտ տեսարանների են ականատես եղել, դեռ կանգնած են։

Ս. Թադէի վանքը Սւարայը գաւառի հիւսիս-արևմուտքումն է, Մակու քաղաքի հարաւային կողմը 5 ժամ հեռաւորութեամբ. և այդ հնութիւնը, 16 դարեայ պատկառելի հնութիւնը պատիւ է հայ ժողովրդի համար։

Վանքից մի քանի սաժէն հեռաւորութեան վրայ՝ դէպի արեմուտք՝ կայ մի բլուր, որի վրայ շինուած է մի փոքրիկ մատուռ, ուր ըստ աւանդութեան նահատակել են Հայաստանի առաջին լուսաւորչին։ Այդ բլուրի երկարութեամբ ձգուած են մի շարք պարսպաձև ժայռեր, ասում են, որ Թադէոս Առաքեալը հալածելով Սանատրուկի դահիճներից՝ ապաստանել է այդ ժայռերի մէջ, բայց դահիճները վրայ են հասել և տեղն ու տեղը նահատակել։ Մատուռը, որը շինուած է նահատակութեան տեղում, մի փոքրիկ բան է, և դեռ կանգուն է։ դա շատ հին ժամանակի շինութիւն չը պիտի լինի, որովհետև քարէ դուռը դեռ կախուած է ծեացել և ներսը դատարկ է։ Այս բլրի վրայ կան և մի քանի մատուռներ։

Իսկ ս. Թադէի վանքից դէպի արևելք, կէս վերստ հեռաւորութեան վրայ, բարձրանում է մի բլրակ, ուր նահատակուել է Սանդուխտ կոյսը, որի վրայ նոյնպէս շինուած է մի մատուռ։ Եւ այս մատուռը, այս նուիրական վայրը այժմ ծառայում է քիւրդերին որպէս ոչխարների փարախ։ Եւ այնտեղ, այդ մատուռի շուրջը տարածւում է Շաւարշանի դաշտը՝ լայն ընդարձակ։ Մատուռից մի քանի վերստ հեռաւորութեան վրայ գտնւում է Կոխ-Բուլաղ գիւղը, որ շինուած է Շաւարշանի աւերակների վրայ։ Գիւղից վերև կայ մի բարձր բլուր, ասում են, որ այդ բլրի գագաթին շինուած է եղել Սանատրուկի բերդը, և իսկապէս, այնտեղ կան բերդի պարիսպների հետքեր, իսկ շուրջը բաւական ընդարձակ տարածութեան վրայ քաղաքի աւերակներ կան, արտերի մէջ թափթփած են շատ ընտիր տեսակի թրծած աղիւսների կտորներ, տաշած քարեր, ամանների կտորներ և այլն։ Այդ աւերակ քաղաքի միջով դէպի բլուրը բարձրանում է մի ուղիղ ճանապարհ, որի երկու կողմն էլ շարուած են մեծ ժայռերից պատեր և շատ որոշ երևում ու նկատուած է, որ դա յատկապէս շինուած է միջնաբերդը բարձրանալու համար։ Մինչև այժմ էլ դեռ տեղացի թուրքերի և քրդերի մէջ այսպիսի մի աւանդութիւն կայ, որ այդ բլրի վրայ շինուած բերդում ապրել է մի հեթանոս թագաւոր, որի աղջիկը չէ հաւատացել իր հօր պաշտած կուռքերին և երկրպագութիւն չէ տուել նրանց, հայրն էլ աղջկան յանձնել է դահիճներին և սպանել տուել։

Առաջ Կոխ-Բուլաղում ապրում էին 40 տան չափ հայեր, որոնք հանգիստ կեանք էին վարում քիւրդ Դահաբ խանի ձեռքի տակ։ Վեցերորդ տարին էր, որ սրանք գաղթել էին Թիւրքա-Հայաստանից ու բնակւում էին այդ տեղ։ Դահաբ-խանը օգնում էր նրանց նիւթապէս, սերմ էր տալիս և պարապում

էին հողագործութեամբ։ Իդէպ է ասել, որ ընդհանրապէս գիւղատէրերը, գաւառների թուրք և քիւրդ պեռերը, պաշտպանում են հայերին՝ իբրև մի արդիւնաւէտ տարրի՝ իբրև աշխատող ժողովրդի, քանի որ թուրքերը և քիւրդերը իրենց ծուլութեամբ և անշնորհքութեամբ մեծ օգուտներ չեն տալիս գիւղատէրերին և պեռերին։

Այսպէս հանգիստ շարունակում էին ապրել հայերը Կոխ-Բուլաղ գիւղում մինչև 1901 թի յունիս ամիսը, երբ Դահար խանը, Թիւրքա-Հայաստանի սահմանի վրայ, քրդերի և կանոնաւոր զօրքերի հետ ունեցած ընդհարման ժամանակ, սպանուեց։ Գիւղն էլ ցիր ու ցան են անում, հայերին թալանում, տները քանդում։ Այդ արել են Կոխ-Բուլաղ գիւղի շրջակայ թուրք և քիւրդ գիւղացիները։ Մակուեցիները ոչ ունէին խանի դէմ և նրա սպանելուց յետոյ իրանց վրէժը այս կերպ հանեցին։ Թեղհ հայերը գաղթում են Կովկաս, իսկ մի մասն էլ վերադառնում է Թիւրքա-Հայաստան։ Այժմ Կոխ-Բուլաղում միայն 5—7 տնուորներ կան. նորից շինում են աւերուած տները և ապրում այնտեղ։ Այդ գիւղում կան, ի հարկէ, թուրք և քիւրդ տնուորներ էլ։

Հայեր կան այժմ նաև Մակու քաղաքում [1])։ Այս քաղաքը ընդամենը ունի մօտ 800 տուն ժողովուրդ, որից 78 տունը հայեր են։ Հայերը ունեն եկեղեցի ս. Վարդան անունով։ Սրանք մեծ մասով արհեստաւորներ են, գլխաւորապէս գինեգործներ։ Հայերը իրենց տարազովը, ածիլելու ձևով, նիստ ու կացով չեն տարբերուում թուրքերից, լեզուն է միայն յայտնում նրանց հայ լինելը։

Մակու քաղաքից դէպի արևմուտք, 15 վերստ հեռաւորութեան վրայ, գտնուում է Թիշմիշ-Թափա գիւղը՝ մօտ 67 տուն հայ բնակիչներով, որոնք զբաղուում են երկրագործութեամբ, ունի եկեղեցի և քահանայ։ Իսկ Մակու գաւառի արևելեան կողմը, Արաքսի ափին, գտնուում է ս. Ստեփաննոս Նախավկայի հռչակաւոր վանքը, բայց միանգամայն անշուք և խեղճ գրութեան մէջ։ Վանքից քիչ հեռու գտնուում է Դարաշամ գիւղը, որ պատկանում է վանքին։ Դարաշամը ունի 30 տուն հայ, բոլորն էլ աղքատ և ողորմելի, միշտ ենթակայ քիւրդերի և թուրքերի աւարառութիւններին ու ասպատակութիւններին։

---

1) Այս քաղաքը, ինչպէս տեսնում էք, շատ փոքր է, մի աւանի չափ, բայց քաղաք չը լինելու պատճառով և յարմար դիրք ունենալով, մանաւանդ կենդրոնական է, դրա համար համարուում է քաղաք։

Ահա այն վայրերը, ուր կան և ապրում են հայեր. և, ինչպէս տեսնում էք, Մակուի գանագան գիւղերում ցրուած հայերի թիւը 180 տանից չէ անցնում։

Ուրեմն հայերը կազմում են ազգաբնակութեան շատ անշնչան մասը. և պէտք է ասել, դրանց վիճակը շատ աննախանձելի է։

Այսպիսի պայմանների մէջ մի ժողովուրդ անկարող է իր առաջադիմութեան մասին մտածել և դժուար էլ է այնտեղ կատեսաւոր գործ սկսել։ Այժմ Մակուի հայ ազգաբնակութիւնը իր ժառաւոր աստիճաններով գրեթէ ոչնչով չի տարբերուում թուրքերից։ Այդ մի բուռը հայերին հոգւում է ս. Թադէի վանահայր Գէորգ ծ. վարդապետը։

Մակուում սովորութիւն կայ, որ բանտարկեալներին յանձնում են հայերի հսկողութեան. երբեմն դրանց հետ լինում են նաև թուրք պահապաններ։ Հայերը անխտիր իրենց հերթին գնում և հսկում են բանտարկեալներին, թէ գիշեր և թէ ցերեկ։ Շատ անգամ պատահել է, որ նենգ միջոցներով փախցնել են տալիս բանտարկեալին և միւս կողմից յանցաւորի փոխարէն խեղճ պահապան հային են բանտարկում կամ տուգանք առնում և բաց թողնում։ Հայերը պարտաւոր են հրացանաւորներ տալ իրենց խանին. եթէ մի կոիւ առաջանայ խանների մէջ, իւրաքանչիւր խանի հայն էլ ստիպւած պիտի կռուի միւս խանի հայի դէմ. հայերը բաժանւում են մի քանի խանների վրայ։ Հայերը ստիպւած են շարունակ օրամ և ընդառ գնալ։ Ամանը այնքան էլ չի մտնում նրանց դրութեան մէջ, ինչ էլ լինի, նա իր գործն է առաջ տանում, թէկուզ լինի հողագործի ամենաթանգ ժամանակը։ Ամանը տանում, աշխատեցնում է հային ճանապարհի, այգու, ախոռի, տան և պարսպի վրայ օրերով և, նոյնիսկ, շաբաթներով, շատ անգամ իրրև վարձ տրւելիք օրական երկու հացն էլ մերժում են, աշխատաւորը պէտք է դնէ կամ իր տանից բերէ հացը։

Կատարեալ ճորտութիւն։

Հայերը հեռու, նոյն իսկ մօտիկ, անցեալում, երբ խանների թիւը պակաս էր, ունեցել են անդորր և ապահով կեանք։ Բայց այժմ որքան շատանում են խանները, երկիրը բաժանւում է փոքրիկ մասերի—խանութիւնների, հայերի չարչարանքները, ընդհանրապէս բոլոր ազգաբնակութեան, շատանում են, աւելի ու աւելի նա թշւառութեան գիրկն է ընկնում։ Հայը ստիպւած է և՛ սրա գործն անել և՛ միւսի։ Այդ թշւառութեան դէմը որոշ չափով կարող են առնել վանահայրերը, հոգևոր առաջնորդները, բայց դրանք, գոնէ անցեալում,

եղել են անտարբեր, նրանց թուլութեան շնորհիւ աւելի ստրկացել են հայերը։

Ահա այսպէս Մակուի հայերը այն՝ ինչ ունեցել են դարեր, տասնեակ տարիներ առաջ, հեռագնաէ, ժամանակի ընթացքում, կորցրել են։ Ամբողջ դարեր, եկել անցել են այդ պատմական ժողովրդի և պատմական, պատկառելի ու նիւթական վայրերի, հիմնարկութիւնների, հարիւրաւոր հրաշակերտների վրայով, թողել են իրենց հետքերը, մարդի անոթոք ձեռքը դիպել է այդ յիշատակներին, աւերել նրանց, զրկել իրենց նախկին պայծառութիւնից։ Բայց այժմ, ամբողջ դարեր յետոյ, էլի կանգուն են այդ դարաւոր փառահեղութիւնները, արձանները և յիշատակները։

Ճիշտ է, սրանք այժմ չունեն իրենց նախկին պայծառութիւնը, չունեն առաջուայ փայլը, բայց դեռ պահպանում են իրենց վսեմ դիրքը. նրանք հէնց իրենց աւերուած տեղով էլի մարդի պատկառանք են ազդում և հազար ու մի նիւթական զգացումներ առաջ բերում։

Ահա ինչ ունի Մակուն։

ՎԵՑ ՕՐ Ս. ԹԱԴԷԻ ՎԱՆՔՈՒՄ

(Այցելուի դիտողութիւններից)

I.

Բռնութեան աւերող և անխիղճ ձեռքը անցեալի շատ մեծացորդներ ու յիշատակներ քարուքանդ է արել, հաւասարեցրել է հողին, շատ-շատ մնացել են միայն նրանց բեկորները ցրուած պանապան կողմերում։ Բայց ո. Թադէի փառաւոր վանքը, որի վրայով անցել է դարերի ամբողջ շղթայ, ենթարկուել է աւերումների, նա այժմ էլ կանգնած է որպէս կենդանի վկայ և հսկում է շրջակայքի վրայ։ Նա չի կորցրել իր հմայքը և վեհութիւնը. այցելուն մի տեսակ հպարտութեամբ է նայում դարերի այս մնացորդի վրայ, և մարդի սիրտը արագ բաբախում է, և նա համակւում է մի շարք քաղցր, պատմութիւնից մնացած յիշողութիւններով։

Այս հռչակաւոր վանքը ծանր նստած է մի փոս տեղ, ձորի մէջ, և երեք կողմերից բարձրանում են լեռները, միայն առաջն է բաց։ Մերկ են այդ լեռները. նրանք կազմում են մի-մի յարմար և ապահով, բայց վանքի համար շատ վտանգաւոր դիրքեր։ Այս դիրքերը բռնած դէպքում գրեթէ ոչ մի շարժում անհնարին կը լինի վանքի մէջ։ Վանքի պարսպի տակից հոսում է Մակուայ գետի մի փոքրիկ վտակը։ Իսկ վանքի առաջ տարածւում է դաշտավայրը. մեծ և ընդարձակ է այդ հարթութիւնը. նա ծածկուած է կանաչ, բարձր խոտով և ցորենի արտերով։ Նայում ես, և քամին, բարակ և ախորժելի քամին շընչշընչալէն գալիս շոյում է կուրծքդ և անցնում գնում։ Միշտ էլ կայ այդ քամին, սառն և դուրեկան, և մաքուր կանաչ դաշտավայրը օրօրւում է ինչպէս ծովի ալիքները։ Բարձր է վանքի շրջակայքի դիրքը, մանաւանդ Ծոյ գաւառի հետ համեմատած։ Այժմ թէև յուլիսի 10-ն է, և Ծոյ գաւառում հունձը և կալսելը կանոնաւոր սկսել է, բայց այստեղ ձորենը դեռ կանաչ է։ Ամարանոց է այստեղ, օդը սառն. մրգեր, խաղող նայելն չեն հասնում։

Իսկ վանքի հարաւային կողմում, լեռան լանջում թառած ապրում են մի բուռն հայեր։ Դա մի փոքրիկ գիւղ է, մօտ 30 տուն հայեր, որը թէև կոչւում է վանքի գիւղ, բայց պատկանում է Մակուի խաներից մէկին, Իզօ խանին։

Ահա հէնց այստեղ այցելուն կանգ է առնում և նրա սիրտը լցւում է տխուր զգացմունքով։ Վանքի գիւղը այժմ պատկանում է մի խանի, ահա ինչ։ Ճիշտ է, ս. Թադէի վանքը թէև կանգուն է և պահպանել է իր հմայքը և վեհութիւնը, բայց չունի նա իր անցեալի հռչակը և դիրքը. Ո՞ւր է, չկայ նրա հին և փառաւոր անցեալը, Ուր են այնքան հարստութիւնները և կալւածները, Ուր է նրա ընդարձակ իշխանութիւնը։ Այժմ չկայ դրանցից և ոչ մէկը, և նա վերածւել է մի հասարակ վանահայրութեան։ Ահա այս տեսակէտից շատ տխուր, շատ անմիխիթար է վանքի ապառորութիւնը։

Չկայ ոչ մի գրաւոր տեղեկութիւն նրա այդ փառաւոր շրջանի վերաբերմամբ, եթէ չը հաշուենք մի քանի արձանագրութիւնները. վանքում չկայ և ոչ մի թուղթ այս կամ այն առաջնորդի, այս կամ այն վանահայրի գործունէութեան մասին։ Զարմանալի է, այնքան վանահայրեր են եկել գնացել, բայց ոչ մէկը չի թողել իրանից յիշատակ իր նախորդի մասին մի փոքրիկ և համառօտ տեղեկագիր։ Եւ այցելուն մի բան իմանալու համար ստիպւած դիմում է գիւղացիների մէջ դեռ վառ պահւած յիշողութիւններին, օգտւում է այս և այն արձանագրութիւնից։

Արձանագրութիւններից մենք իմանում ենք, որ վանքը նորոգւել է երկու անգամ։ Վանքի արևելեան մասը, ուր գտնւում է Թադէոս առաքեալի գերեզմանը և կազմում է սեղանը և խորանները, շինւած է հայկական ՉՀԸ թւին, այսինքն մօտ 590 տարի սրանից առաջ. և դրա վերաբերմամբ գտնում ենք հետևեալ արձանագրութիւնը։

«Այս տաճար լուսակիր և երկնանման, առկայացել. հաստատագոյն հիմամբք ի վերայ աստուածարնակ չիրիմին ս. առաքելոյս Թադէոսի. որ ըստ բազմատեսակ յանցանց մեր ըզկործանումն էառ ի շարժէ. իսկ ես Նազաստ ապառաւոր մին, Զաքարիա եպ. որդի պարոն Մանուէլայ, կարողութեամբ Աստուծոյ սկիզբն արարի կրկին նորոգութիւն առաւել քան զառաջինն, ի ժամանակին սատիկ նեղութեան և հալածանաց քրիստոնէից, որ և բազում եկեղեցիք քակտին. վասն որոյ արձանագրեցաք զյիշատակս մեր առ ի յիշատակել զմեզ առաջի մեծին Աստուծոյ և անարիւն զենման զառինն Աստուծոյ հանդերձ ծնողօք և զարմիւք և զաշխարհն մեր աղբաւր որդին, զտէր

Տիրացուն և գհարագատ եղբայրս մեր զՊետրոս և զՍարգիս, որք հիմնարկութեան նպաստաւորք եղեն ընչիւք կատարումն Թւին ՉԺԸ»։

Իսկ վանքի միւս մասի նորոգութիւնը սերտ կերպով կապուած է երջանկայիշատակ Սիմէոն արքեպիսկոպոսի հետ։ Ամենամի գիւղացի երկիւղածութեամբ և օրհնանքով է յիշում այդ անունը. այս անուան հետ կապուած են շատ քաղցր յիշողութիւններ։ Սիմէոն արքեպիսկոպոսը համարւում է ամենաշինարարը. նա է շինել վանքի արևմտեան մասը, որը կազմում է ամբողջ վանքի-տաճարի մեծագոյն բաժինը։ Սպիտակ և յղկուած քարերից է շինուած այդ մասը, կանգնեցրած են հաստ և կայուն սիւներ և դրսի կողմից. պատերի վրայ քանդակուած են առաքեալների պատկերները. զանազան տեսակի կենդանիներ։ Մի տեղ անա կուում են երկու առիւծներ, մի ուրիշ տեղ հրեշտակն է յաղթական կերպով կանգնած, վանքի մուտքի առաջ, սիւների վրայ զոյգ առիւծները... թէև այնքան նուրբ չեն այդ քանդակագործութիւնները, բայց շատ կոպիտ էլ չեն, և պէտք է ենթադրել, որ անագին աշխատանք և ծախս է գործ դրուել։

Բացի այդ քանդակագործութիւններից, պատերի, ամենամի սեան վրայ կան արձանագրութիւններ, ուր յիշատակուած են, թէ այդ սիւնը, այս քարը ով է տուել և այլն։ Տաճարի սպիտակ մասի վրայ եղած արձանագրութիւններից գրեթէ իւրաքանչիւրի մէջ յիշատակուած է Սիմէոն արքեպիսկոպոսի անունը։ Ի միջի այլոց տաճարի առաջ դուռն վրայ գտնւում է մի արձանագրութիւն, որը անհրաժեշտ եմ համարում առաջ բերել, որովհետև վերաբերում է արևմտեան մասի շէնքին, չընայած մի երկու բառ որոշ չի կարդացւում։

«Սրբազան Սիմէոն արքեպիսկոպոսիս սրբոյ էջմիածնեցի երբեմն աթոռակալ տէրութեան (մի բառ չի կարդացւում), Նստուցին յաթոռոյս, առաջնորդ, շինեցաւ շնորհիւ Ամենակալին Աստուծոյ չքնեղ գեղ (որոշ չէ) և լուսակիր տաճարս և զանգակատունս հիմանէ կարի աշխատութեամբ և հոգածութեամբ առաջնորդ Սիմէոն արքեպիսկոպոսիս, յիշատակ և ծնողացս Մուրատին և Գայիանին *)»։

Ինչպէս այս, նոյնպէս և այն բոլոր արձանագրութիւնները, որոնց մէջ յիշատակուած է Սիմէոն սրբազանի անունը, կը-

---

*) Արձանագրութիւնների մասին աւելի մանրամասն տեղեկութիւններ ցանկացողները թող թերթեն «Արարատ» 1898 թւի համարները. Հոչիկ վարպետը գրեթէ բոլոր արձանագրութիւնները առաջ է բերել։

բում են ԹՄԿ հայկական թեւականը. շատ-շատ մի երկու տարով աւել կամ պակաս։ Ուստի սրանից կարելի է, կարծում եմ, ենթադրել, որ Սիմէոն արքեպիսկոպոսը առաջնորդ է եղել Արտազ գաւառում XIX դարի սկզբներում։

Բացի տաճարի նորոգութիւններից, Սիմէոն արքեպիսկոպոսը շինել է վանքի բակում առաջնորդարան, գանագան խուցեր, որովհետև նրա ժամանակ, ինչպէս և առաջ, բացի առաջնորդից եղել են և վարդապետներ, ուրիշ խօսքով վանքը եղել է մի միաբանութիւն։ Այդ թեւականներին թագաժառանգ է եղել Ատրպատականում Նայիբ Սալթանէն, Աբաս շահը. և մինչև այժմ էլ ցոյց են տալիս այն խուցը, ուր մի անգամ գիշերել է թագաժառանգը։ Թէ առաջնորդարանը և թէ միւս շէնքերը ամբողջապէս քարից են շինուած։ Շատ է ծախսուած անշուշտ, մեծ աշխատանք գործ դրուած. բայց շէնքերը շատ հաստատակ են, շատ ցածր, խոնաւ, մութ, գրեթէ միանգամայն անյարմար բնակութեան համար։ Բայց այդ մասին մանրամասն յետոյ։

Սիմէոն արքեպիսկոպոսի ժամանակ, ինչպէս և որոշ ժամանակ նրանից յետոյ, ս. Թադէի վանքը համարւում էր Ատրպատականի առաջնորդարանը. բաւականին յետոյ միայն առաջնորդարանը փոխւեց Թաւրիզ։ Հարուստ, միանգամայն ապահով էր Նիւթականի կողմից Ատրպատականի առաջնորդարանը։ Այստեղ գաւառը, ինչպէս և ամբողջ Ատրպատականի նահանգը լիքն էր հայերով, ստացւում էր առատ հասոյթ, բացի այդ հասոյթից՝ վանքը—առաջնորդարանը ունէր իր սեփական գիւղերը և կալւածները, որոնցից ստացւած արդիւնքը կարող էր լիուլի բաւարարութիւն տալ թեմի բոլոր պահանջներին։ Նա ուրիշ խօսքով եղել է մի հարուստ և ընդարձակ միաբանութիւն, իր բոլոր պարագաներով և յարմարութիւններով։ Վանքը ունեցել է թւով 15 գիւղ, որոնք գտնւում են Մակու և Խոյ գաւառներում, և մինչև այժմ էլ այդ գիւղերի վերաբերեալ—որպէս վանքի սեփականութիւններ—եղած բոլոր վաւերագրերը—ֆիրմանները պահւում են էջմիածնում, իսկ անունները ես կարողացայ ստանալ ներկայ վանահօրից։ Ահա նրանք։

1) Մըզրա, արևմուտք, վանքից 4 ժ. հեռաւորութեան վրայ։
2) Իւմրի-դաշ, արևելք, 3—4 ժ.։
3) Ղարաքիլիսա (վանքի գիւղ), կպած է վանքին։
4) Դիպակ-դաշ։
5) Աղբուլաղ։
6) Ղարաթուլքի, արևելք, 1/2 ժամ։
7) Սոնա-բուլաղ, հարաւ, 1/2 ժ.։

8) Աղդաշ։
9) Մահլազան, Խոյ գաւառում։
10) Ղորուդ, վանքից 3 ժամ հեռաւորութեան վրայ։
11) Նուշիկ, մէկ օրուայ ճանապարհ։
12) Բեռիրեվան, Խոյ գաւառում, Սէյդաւարի մօտ։
13) Զորս, մօտ Շուրուկ. Մակուում։
14) Բահան, հարաւ, 1 ժ. հեռ. վրայ։

Այս 14 գիւղերից զատ, վանքը ունեցել է դանազան տեղերում մի արտ, մի այգի, մի տուն և այլն, ինչպէս օրինակ՝ Դիզա գիւղում (Խոյ գաւառ) ունէր մի տուն և մի այգի, Զորս գիւղում «բաստի» հողը, Փեռա գիւղի մէջ մի անտառ, Խոյ քաղաքում մի այգի և տուն (այգու մէջ է այժմ շինած եկեղեցին և դպրոցը), Հաֆթվանում (Սալմաստի գաւառ) մի քանի արտեր, Խոյում, ինչպէս և Մակուում ունեցել է մի քանի ձիթհան գործարաններ։ Եւ այս բոլոր կալուածների համար կան այժմ «զաբալաներ». բայց արդեօք այդ վաւերաթղթերը և ֆիրմանները ունեն այժմ այնքան զօրութիւն, որ հնարաւոր լինի յետ ստանալ կալուածները, այդ թողնում եմ էջմիածնին մտածելու։ Բայց յամենայն դէպս այս բոլորը պարզ ցոյց է տալիս, թէ ժամանակին վանքը որքան հարստութիւն, որքան կալուածներ և գիւղեր է ունեցել։

Բացի վերև առաջ բերուած գիւղերից և սեփականութիւններից՝ վանքը ունէր լծկան մի քանի զոյգ եղներ և գոմէշներ, գութաններ, սայլեր, ջրաղաց. նախիրներով տաւար, հօտերով ոչխար էր դուրս գալիս վանքից։ Որ իսկապէս վանքը ունեցել է մի քանի հօտ ոչխարներ, որպէս փաստ կարող է ծառայել և այն, որ վերոյիշեալ վաւերաթղթերի մէջ յիշատակուած է, թէ վանքը ունէր դանազան լեռներում երեք ամառոցի տեղեր։

—Ջանամ, առանձին շեշտով նկատեց գիւղի ուէս Թաթոսը, ուրիշ բան է եղել մեր վանքը, ամբողջ մի գիւղ, թնչքան մարդիկ են լիացել նրա սեղանից։

—Հէյ գիտի երանելի ժամանակ, հառաչեց գիւղի տէրտէրը։ Էն ժամանակները, վարժապետ ջան, ուրիշ բաներ էին, էլ էն օրերը չենք տեսնելու. մենակ երեսուն, քառասուն հոտաղ ունէր, էդքան էլ տնտեսներ։ Էս խուցերը տեսնում ես, սարանք լիքն էին վարդապետներով. հէջ հաշիւ կար, վարժապետ, մեր վանքի գեղջուկին է՞յ, էլ էնենց բան տեսնալու չենք, թող փիս մարդի տունը քանդի։

Գիւղի բոլոր մարդիկ մի տեսակ յափշտակութեամբ և մինոյն ժամանակ հպարտութեամբ են պատմում վանքի այդ

փառաւոր շրջանի մասին։ Այդ յիշողութիւնները անցնում են բերնէ բերան, սերնդից սերունդ և շատ վառ, շատ թարմ պահպանւում են ժողովրդի մէջ։ Ամենքը գիտեն այդ. պատմում են միշտ, առանց ձանձրանալու, պատմում են որպէս մի նոր դէպք, ասես մի օրւայ յիշողութիւն լինի։ Վեց օր մնացի նրանց մէջ, վանքում, բայց նոյն պատմութիւնը մի քանի անգամ լսեցի։ Գալիս նստում են վանքի պատի տակ և սկսում զրուցել, խօսել վանքի երանելի ժամանակներից։ Ամենահետաքրքիրը այդ պատմութիւնների մէջ գիւղացիների ողնորութեան և յափշտակութեան շեշտն է, որ նկատելի է բոլորի մէջ, և մարդ լսում է սրանց առանց յոգնելու կամ ձանձրանալու, որովհետև նրանք հոգի, կեանք են դնում պատմութիւնների մէջ։

—Տէր հայր, այդքան որ պատմում էք նոյն բանը, ըը չէք ձանձրանում, դիմեցի ես։

Բոլորի դէմքերին երևաց մի ուրախ ծիծաղ։

—Ի՜հ, տնաշէն, ձանձրանալս ոնն ա։ Ես շորս քսան և հինգ տարեկան եմ, բայց միշտ էլ պատմել եմ, իսկի ձանձրանալ կա՞յ։ Ինչս, տարեկան քանի՞ անգամ եմ պատմում.

—Ես ի՞նչ գիտեմ, տէրտէր։ Գ. վարժապետ, օրեկան երկու անգամ հաշուիր գնայ, դեռ քիչ եմ ասում։

—Էտենց ա՞ը, ես եմ գիտում է՞. հաշուել չի լինի, ջանմ, ժպտալով վրայ բերեց տէրտէրը։

Օրիժինալ և հետաքրքիր են գիւղացիների զրոյցները, նրանց յիշողութիւնները. մենք այդ կլսենք կամաց-կամաց, աստիճանաբար։ Այժմ մենք անցնենք բուն խնդրին։

Մի փոքր վերև ասացի, որ այդ ժամանակ Ատրպատականի առաջնորդարանը ս. Թադէի վանքն էր. այս միայն մի քանի տասնեակ տարի է, որ առաջնորդարանը փոխուել է Թաւրիզ։ Վանքում նստած առաջնորդը ոչ միայն հսկայուում էր հոգևոր պետ Ատրպատականի հայ ժողովրդի համար և հոգևոր գործերն էր վարում, այլև նա համարւում էր միևնոյն ժամանակ աշխարհիկ պետ։ Նա էր ղեկավարում հոգևոր, հասարակական և քաղաքական խնդիրները։ Ճիշտ է, այժմ էլ նոյն իրաւունքները վայելում են Ատրպատականի առաջնորդները, բայց առհասարակ թոյլ են գտնւում և չեն կարողանում լիուլի օգտուել իրանց ընդարձակ իրաւունքներից. ի հարկէ՝ մեր խօսքը բացառութիւնների մասին չէ։

Այն շրջանում, անցեալում Ատրպատականի թեմը, զանազան յիշողութիւնների և վանահօր տուած տեղեկութիւնների վրայ հիմնւած, աւելի մեծ և ընդարձակ է եղել, առաջնորդի իրաւասութիւնը շատ հեռուն էր տարածւում, քան թէ այժմ։

Դեռ ռուս-պարսկական պատերազմից առաջ Ատրպատականի թեմի վրայ էր Սուրմալուի ընդարձակ գաւառը, Բայազէտը, Աղթակը, Բարգուդիմէոսի վանահայրութիւնը։ Այս բոլորը մի կողմից. իսկ միւս կողմից էլ նրա իշխանութիւնը դէպի Պարսկա-Հնդկաստանի թեմը աւելի հեռուն, աւելի լայն չափով էր տարածւում։

—Եւ իսկապէս, նկատեց վանահայրը, այն ժամանակ եղել է մի մեծ թեմ, ընդարձակ իրաւունքներով, հայաշատ, հարուստ կալուածներ, առատ արդիւնք, ի հարկէ՝ այդպիսի պայմանների մէջ կարող էր վանքը բարգաւաճել, դիրք և փայլ ստեղծել իր համար։ Բայց ինչ կայ այժմ, գրեթէ ոչինչ. այժմ վեր է ածւել միայն մի խեղճ վանահայրութեան շնորհիւ մի շարք պատճառների։

Բայց այժմ անցնենք այդ «մի շարք պատճառներին»։

II.

Վրայ է հասնում 1828 թուականը։ Տեղի է ունենում ռուս-պարսկական պատերազմը, իսկ այս պատերազմի անմիջական հետևանքը և արդիւնքը լինում է պարսկահայերի գաղթը։ Ատրպատականի ընդարձակ և հայաշատ նահանգը կամաց-կամաց, օր աւուր սկսում է դատարկուել։ Ամբողջ Արտազ գաւառը, այժմեան Մակուի խանութիւնը, որը բռնած էր գրեթէ միմիայն հայերով, և միակ հայերն են եղել տիրողները, տարէցտարի նւազում է գաւառը, հայերը գաղթում և բնակութիւն են հաստատում Կովկասի և Թուրքստանի զանազան մասերում։

Հարւածը շատ մեծ էր թեմի համար։ Ատրպատականի առաջնորդարանի—վանքի դիրքը խախտւում է. նրա հեղինակութիւնը թուլանում և իջնում է իր բարձրութիւնից։ Ամբողջ թեմը կորցնում է իր ուժը հայերի պակասելու պատճառով։

Բացւում է կողոպուտների և աւարառութիւնների մի լայն ասպարէզ։ Պարսկա-տաճկական սահմանագլխի սարերի վրայ թառած քիւրդերը ախորժակները բացած և ժանիքները սրած ցած են գալիս իրանց բարձրութիւններից և ստանձին-առանձին հրոսակախմբեր կազմում, յարձակւում են հայաբնակ գիւղերի վրայ և գարկում տանում։ Թալան-թառաչը քիւրդերի պապենական և միևնոյն ժամանակ սրբազործւած սովորութիւնն է։ Քանի-քանի անգամ քիւրդերը յարձակումներ են գործել վանքի վրայ, աւար, թալան վերցրել և հեռացել։ Նրանց յարձակումները, այս վերջին 10—15 տարիներում աւելի յաճա-

խակի էին տեղի ունենում և աւելի վայրագ բնաւորութիւն կրում, այդ էլ պիտի բացատրել մեր կեանքում տեղի ունեցած «յայտնի դէպքերով», որ մի տեսակ դժգոհութիւններ առաջ բերին և յարեցին քիւրդերին հայ ազգաբնակութեան դէմ, կամ աւելի ճիշտ է ասել, որ քիւրդերի վերաբերմունքը մի փոքր խստացրին, քանի որ առանց այդ «յայտնի դէպքերի» էլ հաշտ չէին հայերի հետ, և միշտ էլ յարձակումներն անպակաս էին։

Այս այսպէս լինելով հանդերձ, հէնց այդ քիւրդերը գալիս են վանք ուխտի, այն էլ ընտանիքներով, մեծ խմբերով։ Գուցէ առարկի ընթերցողը, թէ նրանք գալիս են, որ ցերեկով ծառնօթանան վանքին, տեսնեն նրա ոյժը, ճանաչեն մօտիկից, թէ նրանց վերաբերմունքը կեղծ է, շինծու։ Բայց չեմ կարծում. ինչպէս նաև ուրիշներն են պատմում, նրանք, այդ վայրենի քիւրդերը մօտենում են վանքին մեծ երկիւղածութեամբ, մաքուր, անկեղծ սրտով։ Բայց դժուար թէ հնարաւոր լինի մի կերպով հաշտեցնել այս երկու ծայրայեղ—թալանել և պաշտել—և իրար հակասող վերաբերմունքները, թէև իրական կեանքը երկուսի վերաբերմամբ էլ տալիս է անթիւ և կատարուած փաստեր։

Հետաքրքիր է նաև յիշատակել, որ վերջին 3—4 տարիներում վանքը ապահով է եղել և միանգամայն ազատ քիւրդական յարձակումներից։ Եւ հայերին աջողուել է վերացնել քիւրդերի և իրանց մէջ եղած ատելութիւնը և բարեկամական յարաբերութիւն ստեղծել։ Այդ աջողուել է, ի հարկէ, մեծ դժուարութեամբ և տարիների ընթացքում, այն էլ միմիայն Կաբինի և նրա շրջակայքում եղած քիւրդերի հետ, որոնց պետն է Մուստաֆա բէյը, որն այժմ մի քանի կալուածական խնդիրների առիթով միանգամայն լարուել է Մակուի սարդարի դէմ։

Այսպէս ահա, քիւրդերի յարձակումները, թալան-թալանը մի կողմից, ասես այս հերիք չէր, միւս կողմից էլ թիւրք խաներն ու բէգերն են գալիս, իրանց ժողովրդի հետ միասին էլ աւելի վատթարացնելու հայ ազգաբնակութեան վիճակը, էլ աւելի դառնացնելու նրա կեանքը։ Ատրպատականի, ինչպէս և Արտաղ գաւառի դատարկ և բացուած տեղերը լցուում են թիւրքերը, տարէցտարի այնքան են լցուում, որ կազմում են ազգաբնակութեան մեծագոյն մասը։ Բնականաբար նրանք սկսում են մի շարք ոտնձգութիւններ հայերի վերաբերմամբ, երկրի իշխանութիւնը և կառավարութիւնն անցնում է նրանց ձեռքը, սկսում են ճնշել և հալածել հայ ժողովրդին, աչք են տնկում վանքի կալուածների և սեփականութիւնների վրայ և կամաց-կամաց, ժամանակի ընթացքում տիրում են այդ բոլորին։ Եւ մէկ էլ յանկարծ սթափւում է վանքը, նայում է շուրջը, մնում

է գրեթէ ոչինչ, տեսնում է միմիայն ամայի և դատն իրակա-նութիւնը։

Ասես հէնց այդ ժամանակներում, այդ ցաւալի իրակա-նութեան միջոցին, Ատրպատականի առաջնորդարանի տեղա-փոխութիւնը գալիս է հռչակաւոր վանքի անկումը էլ աւելի արագացնելու և կատարեալ կացուցանելու։ Իրերի այդպիսի խառն վիճակում, որ անհրաժեշտ էր մի ուժեղ ձեռք, շատ մօտիկից հսկող մի զօրեղ առաջնորդ՝ վանքը անկումից պահպա-նելու, յանկարծ եղածն էլ հեռանում է։ Թէ ճիշտ ոչ թւին է եղել առաջնորդարանի տեղափոխութիւնը ս. Թադէի վանքից Թաւրիզ, յայտնի չէ, բայց այսքանս պարզ է, որ այդ տեղի է ու-նեցել մօտ քառասնական թուականներին և Սահակ եպիսկոպոս Սաֆունեանի օրով, որին գիւղացիք Սաֆունով են կոչում։

—Չէ՛, ջանմ, վիճում են գիւղացիք, երբ տէրտէրը ձայնը բարձրացրեց, ես էնպէս եմ յիշում սրբազան Սաֆունովին, ա-սես երէկ լինի։ Նա փախաւ, գնաց Սալմաստի, Թաւրիզի կող-մերը որպէս թէ պտղի հաւաքելու, մնաց Թաւրիզ, էլ չիկաւ։ Էդ կըլինի դուռ 3 քսան տարուայ խօսք, կամ հինգ տարի գրա-նից պակաս, էն ժամանակ, պ. վարժապետ, ես քո հասակի կը լինէի հա...

—Հա, էդպէս կըլինի, 60 կամ 55 տարի սրանից առաջ, ընկատեցին ուրիշ Թաթոսը և մի ծերունի։

Գիւղերի և քաղաքների կողոպուտները և ասպատակու-թիւնները, առաջնորդարանի տեղափոխութիւնը և պարսկա-հայերի գաղթը, վանքի վիճակը դարձնում են անմխիթար և աննախանձելի. պակաս մնացած տեղն էլ գալիս են լրացնելու վանքի վանահայրերը։ Իրար յետևից գալիս են մի քանի վա-նահայրեր, մէկը միւսից ապիկար, մէկը միւսից ընչաքաղց և խաղտաւակ։ Ճգմում, հիւծում են հարուստ վանքը և թողնում են դատարկ և չոր քարերը, որոնք ողբում են ցաւալի իրա-կանութիւնը։ Մարդ ակամայ մտածում է, լաւ է որ քարերն էլ չեն կերել։

—Է՞հ, վարժապետ, որտի խորքերից հառաչեց տէրտէրը, փիս ժարդիկ էին մեր վարդապետները, փիս, ա՛յ նրանց տու-նը քանդի, ինչպէս մեր վանքը ըսորովին քանդեցին։

—Տէր հայր, գիմեց վանահայրը, Եսայ վարդապետի պատմութիւնները արա, որ պ. Երեմնդը լսի։

Տէրտէրի երեսը փայլեց, և սկսեց իրան հաւաքել, որ սկսի։

—Է՞հ, պ. վարժապետ, ինքն պատմելու բաներ կան, Հըգիտեմ որը պատմեմ։ Եսայի վարդապետ, ա՛յ նրա օջաղը

այրի, ասում եմ. Եսայի վարդապետը 39 տարի էստեղ հայրսուրբ էր (պէտք է հասկանալ վանահայր)։ Էն ժամանակ էլ վանքը շատ հարուստ էր, ունէր լծկան եզներ, գոմէշներ, կըթան կովեր և մատակներ, մի քանի սայլեր, գութաններ, սուրուններով ոչխարներ և նախիրներով տաւար, ջրաղաց, ինչ գլուխդ ցաւացնեմ, շատ մեծ հարստութիւն, բայց էդ տնաքանդ վարդապետը ամենը տկանց արեց, բոլորը...

Լռեց նա, զգուշութեամբ նայեց շուրջը, գլուխը մօտեցրեց ինձ, խորհրդաւոր կերպով և ցածր ձայնով փսփսաց. «բոլորը տնաւեր հայր սուրբը (ցրեց իր ազգօր տունը, որը հէնց հիմայ էլ մեր գիղումն աս։ «Բ՛ը, էտենց ա հա», բարձրացրեց ձայնը տէր հայրը և ժպիտը երեսին նայեց ոչս Թաթոսին և վանահօրը։

—Ոչ միայն այդ, աւելացրեց վանահայրը, ինչպէս պատմում են, գողացել է նաև վանքի իրերից, ինչպէս խաչ և այլն, և իսկապէս այժմ դրանցից շատերը չկան։ Այժմ նրա բարեկամը մեծ հարստութեան տէր է։

—Հ՛ըմ, բմծիծաղ տուեց ոչս Թաթոսը և ձեռքը ամուր խփեց վանքի պատին,—ստրա զօրութեանը մեռնեմ, իսկի կը թողնի, որ իր չոփը հալալ ուտեն, բթենիից դուրս կըբերի։ Ինչպէս երևում է հայր սուրբը բանի եղելութիւնը դեռ չի իմացել։

—Ոչ, ինչ է պատահել։

—Ի՞նչ է պատահել. երեք-չորս օր առաջ Աւետիսից (Եսայի վարդապետի բարեկամը) գողացել են փողերը, ասում է ինքը, որ եղել է 28 հատ տաճկական ոսկի, 30 հատ ռուսական տաս մանէթանոց, 200 մէկ մանէթանոց, դեռ ուրիշ բան էլ կայ, բայց չի ասում։

—Էդպէս է, մեր վանքը ոչ մէկին անպատիժ չի թողնում, վրայ բերեց մի գիւղացի և խաչակնքեց երեսը։

Առհասարակ այստեղի ժողովուրդը շատ երկիւղածութեամբ է վերաբերւում դէպի վանքը։ Եղել են դէպքեր, որ յանցաւորները պատիժ են կրել, այս կամ այն կերպ ջնջուել, և ժամանակի ընթացքում այդ հաւատը աւելի ու աւելի արմատացել է ժողովրդի մէջ։ Նոյն այդ երկիւղածութիւնը և հաւատը նկատելի է թուրքերի մէջ։ Թէև ես վեց օր մնացի վանքում, բայց մի քանի անգամ թուրքեր եկան վանք ուխտի. նրանք աւելի հաւատով են մօտենում վանքին, քան հայ գիւղացիները։ Մեծ հաւատ ունի մանաւանդ Մակուի այժմեան սարդարը և մի քանի անգամ առաջարկել է, որ իր ծախսով մի բան շինուի վանքում, որպէս իր հաւատի նշան։ Շատ անհ-

գամ թուղթերը նախատում են հայերին և ասում. «դուք ունէք շատ զօրաւոր վանք, կարող սուրբ ունէք, բայց չէք կարողանում նրան արժանի կերպով պատուել»։

Ինչ որ է. գալով Եսայի վարդապետին, պիտի ասեմ, որ ոչ ոք մի լաւ յիշողութիւն չըպատմեց նրա 39 տարեայ կեանքից։ Բոլոր դիւղացիների բերանից անէծք, միայն անէծք էր լսւում նրա հասցէին։ Սիմէոն արքեպիսկոպոս և Եսայի վարդապետ. այս երկու անձնաւորութիւնները հակապատկեր են ներկայացնում վանքի տարեգրութեան մէջ։ Մէկը որքան շինարար, միւսը նոյնքան աւերող, մէկը այժմ սուրբի հռչակ ունի ժողովրդի մէջ և միշտ էլ փառաբանւում է, իսկ միւսը մի ան բիծ է կազմում վանքի տարեգրութեան մէջ, և անէծք է թափւում նրա գլխին։

—Հէնց բոլոր վանահայրերը այդպէս աւերող և թոյլ են եղել, գիտեցի՞ ես։

—Հա՛, ա՛. վարժապետ, վրայ բերեց մի գիւղացի, շինարար հայը սուրբ շատ քիչ ենք ունեցել, բոլորն էլ կերել, փըչացրել են։

—Ցիշում ես, տէրտէր, Փիլիպոս հայը սուրբին, սկսեց ուէս Թաթոսը. նա շատ Ֆաղիր (խեղճ) մարդ էր, անճար, ուտել էլ չըգիտէր։ Ամբողջ օրը փակւած էր նեղսը. նա մնում էր այ էն օթախում, խեղճը էնքան էր մնում փիս օդի և ծխի մէջ, որ գլուխը գժւում էր, և չէր կարողանում դուրս գալ, յետոյ մենք էինք քաշում դուրս հանում։ Քանի անգամ հա՛ գլուխը խփել է էն դրան քարերին և ուռել է։

—Է՞հ, նա շատ անճար և ողորմելի մարդ էր, աւելացրեց տէրտէրը. նա թէև շատ թոյլ էր, անպէտք, բայց էնքան ինչաս էլ չէր տալիս վանքին։ Էտոնց վարդապետներ ենք ունեցել. տեսնում ես, վարժապետ, էն շինութիւնները (նա ցոյց է տալիս գոմերը, մարագը և այլն), գրանց բոլոր դիրանները քանդել, հանել և վառել են. այ էտոնց վարդապետներ ենք տեսել։ Ծնաւորները հէչ իրանց ետին օրւայ մասին չէին մտածում, միայն քանդում, աւերում և ուռում էին, էն էր մնացել, որ պատերն էլ ուռէին։ Իսկ Բաղունին-Մաղունին, ամենին էլ ասանները պէս ճանաչում եմ. ոչ մէկն էլ բարի պտուղ չէր, մանաւանդ Բաղունին։ Էս էլ ասեմ, ա՛. վարժապետ, որ էդ Բաղունին լաւ հայ էլ չէր, շատ ալա-բուլա (կասկածելի) էր երևում մեր աչքին։

—Չէ, տէրտէր, ժպիտով նկատեց ուէս Թաթոսը, մեր վարժապետը, ինչպէս երևում է, լաւ ականջ ունի, լաւ լսող է։

—Հա, երևում ա, մենք էլ հէնց էտոնց մարդի ենք ման

գալիս, դեռ ինքան պատմութիւններ կան. էսօր էսքանը հերիք ա։

Գիւղացիները ոտքի կանգնեցին և մէկ-մէկ, իրար յետևից հեռացան. նա մնացի հազար տեսակի ճնշող պատմութիւնների և զրոյցների աշխարհում։

III.

Բազունի վարդապետից յետոյ վանքը կարճ ժամանակով համարեա թէ թափուր մնաց. կառավարում էր մի աշխարհական մարդ, որից անմիջապէս յետոյ նշանակւում է այժմեան վանահայր՝ Գէորգ ծ. վ. Նալբանդեանը։ Այնպէս որ այս մօտաւորապէս երկու տարի է, դուցէ և մի քիչ աւելի, որ ս. Թադէի վանահայրութիւնը յանձնւել է Գէորգ վարդապետին։

Բայց ինչ գտաւ նա վանքում, ունէր վանքը գէթ ապրելու միջոցներ։

Իրականութիւնը շատ տխուր էր, նոյնիսկ սպանիչ։ Ջը կար կալւածներից և ոչ մէկը. դեռ այդ ոչինչ։ Ջրկային լրծկան գոմէշներ կամ եզներ, որպէսզի վարուցանքն սկսւի, չը կար սայլ և գութան, աւերակ էր դարձել և ջրաղացը։ Եղած մի քանի հատ կովերը և ոչխարները չեն տալիս բաւարար բան, ցորեն գրեթէ չըկայ։ Ահա այս աստիճան յուսահատական էր իրերի դրութիւնը։ Գէորգ վարդապետը ստանձնում է պաշտօնը, գալիս է վանք, տեսնում է դառն իրականութիւնը և բոլորովին շշմում և շւար է մնում։ Ամբողջ շաբաթներ են գալիս ու անցնում, և հնարաւորութիւն չունեն մի տաք կերակրի երես տեսնել, շատ անգամ ցամաք հացով են օրեր սպանել։

Այս ապրուստը. իսկ ինչ էր ներկայացնում վանահօր ընտանեքանը։ Շատ հետաքրքիր է այդ խուցը։ Դա մէկն է այն սենեակներից, որ շինել է Սիմէոն արքեպիսկոպոսը սրանից մօտ 90 տարի առաջ, թէև յանցանք է այդ խուցերին սենեակ անուն տալը։ Ցածրիկ և խոնաւ են այդ խուցերը. դեռ այդ, ասենք, տանելի է. ապա ողորմելի և խղճուկ լոյսը։ Վանահօր խուցը, որը համարւում է առաջնորդարան և ամենալաւը, երբ մարդ խարխափելով մտնում է, մի քանի րոպէ ոչինչ չի կարողանում տեսնել, սպասում, սպասում է և յետոյ հնարաւոր է լինում նշմարել խուցի իրերը։ Եւ այդ ասում ենք առանց ծայրայեղութիւնների մէջ ընկնելու։ Դեռ սա համարւում է ամենալաւը, հասկանում էր։ Այդ խուցը ստանում է լոյսի մի քանի ողորմելի շողեր—ճառագայթներ իր խեղճ ու կրած լուսամուտներից։ Երկու հատ են այդ «լուսամուտները» և դրանք բռնում

[illegible]
[illegible]
[illegible]
էլ ասեմ, որ միայն վանք [illegible], խուցի «լուսամուտները» ունեն ապակիներ, այն էլ ներկայ վանահայրն է գցել տալ, միւսները այդ բախտից էլ զրկուած են։ Փոշի, անձրև անարգել լցւում են ներս. կամ հակառակ դէպքում պիտի շորով բռնեն, այն ժամանակ լոյսի կողմից էլ աւելի անտանելի կը դառնայ։

Մի խօսքով միանգամայն անյարմար և ֆնասակար են ապրուստի համար. խոնաւ օդը մարդի խեղդում է և իսկոյն մարդ բնմատիզմ կարող է առանալ։ Զարմանալի է, այնքան ծախս է արուած, ահագին աշխատանք գործ են դրել և շինել են այսպիսի անպէտք բնակարաններ։ Գրկնակի զարմանալին այն է, որ այնքան վանահայրեր են եկել և գնացել, բայց ոչ ոք չի մտածել իր համար մի կարգին բնակարան շինել, այլ միայն այժ են տալ շորթելուն։ Ահա ձեզ հանկայ անհոգութիւն և անտարբերութիւն։

Բայց դեռ այս չէ ամենը. խուցերի վերաբերմամբ ամենահետաքրքիրը մնում է։ Մի գիշեր, ընթրիքի միջոցին նկատեցի, որ ապիտակ թեփ է թափւում առաստղից հացի վրայ։ Ընդհատեցի ճաշելը և սկսեցի նայել վեր։

—Ի՞նչ էք նայում, հարցրեց ժպտալով վանահայրը։ դա փտած տախտակի թեփն է։ Ահա այսպիսի օրեր ենք թաշում, պ. Երանդ։

Եւ իսկապէս. ես ուղեցի ատուգել այդ. հովանոցի ծայրով կամացուկ շօշաթեցի տախտակը, և յանկարծ կոտրուեց և ընկաւ մի կտոր փտած, միանգամայն լիկուած, քրքրուած տախտակ։

—Բոլորն էլ այդպէս է, նկատեց Գէորգ վարդապետը, իդուր տեղը ձեռք մի տուէք. միշտ էլ թափւում է, չէ՛ր տևանում, մի քանի տեղ նոր տախտակներ եմ դրել։

Կրկին յիշեցնում եմ, չըմոռանաք, որ սա ամենալաւն է։ Եթէ այս բոլորի վրայ աւելացնենք և այն, որ տանձարի այս կամ այն մասը աւերուել, փուլ էր եկել և անհրաժեշտ էր նորոգութեան, կարծում եմ, պատկերը այլևս թերի կողմ չի ունենայ։

Ահա ինչպիսի ողբալի վիճակի մէջ էր ս. Թադէի հոյակաւոր վանքը, երբ Գէորգ վարդապետը առանձնում է նրա վանահայրութիւնը

Նա թէև սկզբում շատրում է՝ տեսնելով վանքի թշուառ դրութիւնը, բայց յետոյ սթափւում և սկսում է կամաց-կամ-

մաց գործել։ Հէնց առաջին անգամ նա ձեռնարկում է ջրաղացի խնդիրը, և նրան կարճ ժամանակում աջողւում է վերաշինել ջրաղացը, որն սկսում է գանոնաւոր գործել։ Իսկ այդ առհագին ապահովութիւն էր վանքի համար։ Դա այնպիսի մի աջողութիւն էր, որ ոչ ոք, ինչպէս գիւղացիք են խոստովանւում, չէր կարողանում հաւատալ, որ նորից վանքը ջրաղաց է ունենալու։ Այժմ ջրաղացը տալիս է վանքի գրեթէ տարեկան պարէնը. իսկ այդ քիչ բան չէ։

Այս մի կողմից, միւս կողմից որոշ չափով օգնութեան է հասնում վեհ. Կաթողիկոսը՝ որոշ գումարներ տալով վանքի նորոգութիւնների համար, տեսնելով վանքի ընկած, աննախանձելի կացութիւնը։ Մոյ գաւառն էլ միացնում է վանքին։ Ճիշտ է, Մոյ գաւառի հայ ազգաբնակութիւնը ամառնապէս ընկած լինելով, չէր կարող խոշոր գումար տալ տարեկան, յաժենայն դէպս ուսածն էլ մի փոքր բացուած կարող էր ծածկել։ Այնպէս որ այս երեք հանգամանքների շնորհիւ վանահայրն սկսում է մի փոքր ազատ շունչ քաշել և սառնութեամբ դիտել շուրջը։

Ներկայ վանահայրը, ճիշտ է, շունչ մեծ զարգացում և կրթութիւն, բայց բռնուած է գործելու տենչով. նա ունի լաւ ձգտումներ և անկեղծ կերպով աշխատում է օգուտ տալ վանքին, մի բան անել։ Եւ պէտք է ասել, նա գործ է շինում, ի զուր օրեր չի սպասում։

Ջրաղացը գործի դնելուց յետոյ, նա ձեռնարկում է վանքի նորոգութեանը։ Զաքարիա եպիսկոպոսի շինած բաժնի մի փոքր մասը քանդել էր, այդ մասն է նա շինում, փոքր եմ ասում, բայց մեծ աշխատանք և ծախս է պահանջում։ Այժմ թէև վանքը շատ նորոգութեան տեղեր ունի, ինչպէս օր. զանգակատունը, տաճարի գաւան վիրակը, որ Սիմէոն արքեպիսկոպոսը կիսատ է թողել և այժմ անձրև է գալիս, քարերի արանքով յլւում է պատերի մէջ և փչացնում է. ասում եմ, նորոգելու շատ տեղեր կան, բայց փող, փող չկայ։

Այս երկու տարուայ ընթացքում շինում է նաև մի քանի լաւ սենեակներ, ի հարկէ, կանոնաւոր սենեակներ, բայց մինչև այժմ գեռ չի ծածկել, թէև ամեն ինչ պատրաստ է. առնում է գուբան, յծկան եզներ և քոմէշներ, առնում է սայլ և սկսում է կանոնաւոր մշակել վանքի մնացած մի քանի կտոր արտերը և կարգի բերել վանքի քայքայուած տնտեսական դրութիւնը։

—Հ՛ը, ասա թաքոս, ի՛նչ Գէորգ վարդապետը իսկի բան չի՞ կերել վանքից, գիտեցի՞ ես։

—Լաւ կուտէր, հաճա ուշ հասաւ, հէչ մի շոփ էլ չէին թողել տնաքանդները էս ֆաղիրի համար։

—Չէ, պ. վարժապետ, պիտի Աստծով խօսինք, էս մարդից շատ գոհ ենք, մարդը շինարար է. էդ Ջազացը ինչ ա, մէկ միլլիոն արժի մեզ համար, ասաց տէրտէրը։

Իմ մշտական այցելուները և խօսակիցներն էին տէրտէրը, ոէս Թաթոսը և մի երկու գիւղացի, ի հարկէ և վանահայրը, և մեծ մասով մեր խօսակցութիւնը պատում էր վանքի շուրջը։

—Դրուստ է ասում տէրտէրը, աւելացրեց մի գիւղացի, էս մարդը շատ գործող է. մնաշէնը բերնից կտրում է, որպէսզի վանքը կարգի բերի։

Շատ գիւղացիների խօսքերի, բոլորն էլ գրեթէ, աննշան բացառութեամբ, գոհ էին վանահօրից։ Այնպէս որ այժմ շնորհիւ Գէորգ վարդապետի՝ վանքը մի փոքր բարեկաւ վիճակի մէջ է։ Վանքը այժմ ունի 32 ոչխար, տասը կթան, 15 տաւար, 4-կթան կով և մատակ, 4 եզ, 4 գոմէշ, մի գութան, մի սայլ, Ջրազաց, մօտ 30 խալւար հող, երկու հատ ձէթհան գործարան, նոյնպէս և հաւեր, բադեր և այլն. մի փոքրիկ միաբանութիւն։ Այնպէս որ այժմ վանքի վիճակը բաւականին բարւոք կարելի է համարել և կարելի է յուսալ, որ հետզհետէ, ժամանակի ընթացքում աւելի ու աւելի կըբարձրանայ։

Բայց վանքի միայնութիւնը սարսափելի է, ապրելը ուղղակի անտանելի։ Ընկած մի անկիւն, լեռների մէջ, միանգամայն բացակայում են կանոնաւոր ճանապարհներ, չըկայ փոստ և հեռագիր, գրեթէ ոչինչ։ Եւ իսկապէս շատ ծանր է վանական կեանքը, մանաւանդ այսպիսի պայմանների մէջ։ Եղեղները հընարաւորութիւն չ'ունեն դէթ թերթ ստանալ, իմանալ ինչ է կատարւում արտաքին աշխարհում, ինչ է անցնում-դառնում, և եթէ թերթ էլ ստանում են, ի հարկէ սուրհանդակի միջոցով, այն էլ բաւականին ուշ, ու իրանց թարմութիւնը կորցնում են, թէև նրանց համար էլի թարմ, նոր են լինում։

Այսպէս է վանքի կեանքը. թէև ես վեց օր Ռեազի վանքում, և ամեն ինչ նորութիւն էր ինձ համար, բայց էլի շատ տաղտկալի էին անցնում օրերը, և շատ արտեղում էի։

Վանքի շուրջը, լեռների վրայ կան փոքրիկ եկեղեցիներ, և ենթադրւում է, որ դրանք Թադէոս առաքեալի չարչարանաց վայրերն են։ Վանքի առաջ, ընդարձակ դաշտի մէջ, մի ցածր բլրի վրայ երևում է ս. Սանդուխտ կոյսի մատուռը։ Փոքր և անպանծկ է այդ մատուռը։ Եւ երբ մարդ մտածում է, որ մի շարք դարեր են անցել սրանց վրայով, ակամայ բացագանչում է, որ յաւիտեան դէպ շատ մեծ է եղել հայ ժողովրդի հաւատը և ջերմեռանդութիւնը, որ կանգուն է պահել իր սուրբ վայրերը. և այդ պատիւ է բերում հայ ժողովրդին։

Իսկ վանքից աւելի հեռուն, ամբողջ Մակուի խանութեան մէջ ցրուած են և աչքի խփում եկեղեցու բեկորներ, քաղաքի մեացորդներ, փլուած շէնքեր, որոնք մի-մի կենդանի վկաներն են հայ ժողովրդի անցեալ փառքի, մի-մի պերճախօս փաստեր են, որ անցեալում այս կողմերը տիրապետող տարրը եղել է հայ ազգաբնակութիւնը։ Տխուր է այդ բեկորների, հնութեան այդ մեացորդների թողած տպաւորութիւնը։ Եւ ընդհանրապէս հնագայ վանքից աւելի տխուր յիշողութիւնների և տպաւորութիւնների տակ...

1903 թ.

ԽՈՅ ԳԱՒԱՌԻ ՆԵՐԿԱՅ ՎԻՃԱԿԸ

I.

Խոյը ընկնում է Ատրպատականի հիւսիս-արևմտեան կողմում. նրա սահմանակից գաւառներն են, հարաւից՝ Սալմաստը, հիւսիսից՝ Մակուի խանութիւնը, արևմուտքից նա ձգւում է մինչև օսմանեան կառավարութեան սահմանները, իսկ արևելքից տարածւում է համարեա մինչև Ղարադաղի սահմանները։ Ահա այդ տարածութեան վրայ է ընկնում Խոյ գաւառը։ Խոյը կազմում է Արտազ գաւառի շարունակութիւնը և բռնում է նրա հարաւային մասը, որը բաւականին ցածր է և խոր ընկած։ Դա մի ընդարձակ և տափարակ ձոր է, որի չորս կողմերից էլ բարձրանում են լեռներ և բլուրներ։ Բարձր չեն այդ լեռները. բացի Աւրուն, Զէյլիանա և Ղոթուրի սարերից՝ միւսները ցածր բլուրներ են։ Մերկ և չոր են այդ լեռները, միանգամայն զուրկ կանաչ ծիլից. միայն մի քանի տեղ, լեռների լանջերի վրայ տեսայ կանաչ բուսականութիւն իբրև օազիս ընդհանուր ամայութեան մէջ։ Այսպէս է ոչ միայն Խոյում, այլ գրեթէ Ատրպատականի բոլոր մասերում։ Թաւրիզից Խոյ գնալիս անցնում էք ահագին տարածութիւններ, կորում անցնում էք լեռներ և բլուրներ, բայց լերկ են բարձրութիւնները, չոր, ամայի է հարթութիւնը։

Սակայն, որ Խոյի բռնած տեղը խոր է, ցածր։ Այդ խորութիւնը պարզ և որոշ նկատւում է մանաւանդ սահմանակից բլուրներից դիտելիս, իսկ Մակու գնալիս շատ զգալի է լինում, որովհետև հետզհետէ բարձրանում էք։ Անշուշտ հէնց այս հանգամանքին կամ գաւառի ցածրութեանը պիտի վերագրել այն, որ ամառները Խոյում սաստիկ շոգեր են լինում։ Այս ամառ մի քանի օր այնպիսի շոգեր արեց, սաստ բոցել և կրակ էր թափւում երկնքից, այն ինչ Սալմաստում, որը աւելի հարաւ է, շատ աւելի մեղմ է լինում ամառը։ Այնպէս որ անտանելի կըլինէր ամառները Խոյում եթէ չըլինէր զով քամին, որ երեկոները միշտ փչում է սարերից։ Ընդհանրապէս վերցրած՝ կլիման բարեխառն է և օդը մաքուր։

Որքան խեղճ, որքան չոր է բուսականությունը շրջապատող բարձրությունների վրայ. նոյնքան ճոխ, նոյնքան հարուստ և փարթամ է ամբողջ հարթության վրայ. Ամբողջ Խոյ գաւառում չկայ մի թէկուզ փոքրիկ անկիւն, որ բոլորովին զուրկ լինի կանաչից։ Ընդարձակ տարածությունը ծածկուած է բազմաթիւ գիւղերով, իւրաքանչիւր գիւղ շրջապատուած է մեծ և հարուստ այգիներով, ունի իր չափ արտեր,—հողը բերրի է և ուժեղ, ջուրն էլ առատ։

Խոյի աչքն է կպչում Դաղ-բաղին, որը գտնւում է քաղաքի հարաւային կողմը, մօտ մէկ վերստ հեռաւորության վրայ։ Դա մի ընդարձակ և միևնոյն ժամանակ հրաշալի այգի է, ունի գանազան ալէյներ, մէջը կայ աղբիւր, որի ջուրը վըճիտ և առողջարար է, իսկ ամբողջ այգին ծածկուած է կանաչով, մեծ և փոքր ծառերով, թեթև և դուրեկան քամին էլ հոանդակաս է։ Դաղ-բաղին հիանալի զբօսատեղի է. քաղաքացիները յաճախ գնում են այնտեղ, և գնում են ընտանիքով, կարգին պատրաստութիւններով և մնում են այնտեղ ամբողջ օրը։ Գնում են ոչ միայն քաղաքի բնակիչները, այլ և մօտիկ գիւղացիները. այնպէս որ Դաղ-բաղին հռչակուած է ամբողջ գաւառում։ Ամեն մի ճանապարհ, ամեն մի օտարական Խոյ գալիս անհրաժեշտօրէն առաջին անգամ այցելում է Դաղ-բաղին. և ուրիշ կերպ էլ չի կարող լինել, քանի որ միշտ զբաւիչ պատմութիւններ կըլսի նրա մասին։ Ճիշտ է, Խոյ գաւառում շատ կան գեղեցիկ, կանաչկոտ վայրեր, բայց դրանցից ոչ մէկը չունի Դաղ-բաղու գրաւչությունը, նրա յարմարությունները և գեղեցկությունը։ Ճոխ և գեղեցիկ է բնությունը Խոյ գաւառում, որտեղ առատ է նրա ջուրը և բերրի՝ հողը։ Խոյը թէև ունի մի հատիկ գետ, բայց նա առատ ջուր է մատակարարում ամբողջ գաւառին։ Ղոթուր է կոչւում այդ գետը. Ղոթուր-չայ են ասում բոլոր թուրքերը, իսկ Տզմուտ գետ՝ հայերը։ Խոյ գաւառի արևմտեան կողմում, պարսկա-տաճկական սահմանապլխում կայ մի փոքրիկ գաւառակ, որը շրջապատուած է բարձր լեռներով, որոնք կոչւում են Ղոթուր։ Ահա այդ լեռներից է սկիզբն առնում Ղոթուր-չայը և դրանցից էլ ստացել է իր անունը։ Ղոթուրը կտրում, անցնում է Խոյի ամբողջ երկարությամբ, արևմուտքից դէպի արևելք, մեծ և փոքր առուներով ջուր մատակարարում աջ ու ձախ կողմերում գտնուած գիւղերին և այսպիսով ոռոգում բովանդակ գաւառը։

Չրի պակաս այս գաւառում լրացնում են աղբիւրները, որոնք այնքան շատ են այս կողմերում։ Մաքուր, յստակ և առողջարար է աղբիւրների ջուրը, ազգաբնակությունը իր խմե-

լու. ջուրը վերցնում է այդ աղբիւրներից, որովհետև Ղոթուրի ջուրը խմելու համար այնքան էլ լաւ չէ։ Մեծ է Խոյի զանազան կողմերում եղած աղբիւրների թիւը. ամեն մի քայլափոխում դուք պատահում էք աղբիւրի, որից բղխում է լաւ և անուշ ջուր. իւրաքանչիւր գիւղ ունի մէկ, երկու և աւելի աղբիւրներ, ինչպէս օրինակ Մէջդաւարը, որը ունի շատ անուշ ջուր և գտնւում է Խոյի հիւսիս-արևմտեան մասում։ Մէջդաւարը աղբիւրների մի ցանց է, որ բռնել է գետնի այդ ամբողջ մասը. և դրանք բացի ազգաբնակութեանը համեղ ջուր ժամանակաբերելուց՝ մեծ դեր են խաղում և գետնի ոռոգման գործում։ Յայտնի աղբիւրներից են համարւում նաև Զըլզըլա-բուլաղ (երկրաշարժի աղբիւր), Խոշ-բուլաղ (քաղցր աղբիւր) և այլն։

Աղբիւրներից պակաս դեր չեն խաղում և քեահրիզները, այսպէս ասած, արհեստական աղբիւրները։ Քեահրիզները դեռ շատ հին ժամանակներից սկսած ծանօթ են պարսիկ ժողովրդին և յայտնի դեր են կատարում Պարսկաստանի կեանքի մէջ։ Բայց ի՞նչ է քեահրիզը և ի՞նչպէս են շինում։ Դա մի առուակ է, որ հոսում է գետնի տակով և ոչ երեսով։ Պարսկաստանի համարեա թէ բոլոր մասերում գործածական է այդ ձևի ջրի ժամակարարումը։ Քեահրիզի ջուրը համարեա նոյնքան մաքուր և լաւ է, որքան աղբիւրի ջուրը։

Ահա այդ նպաստաւոր պայմանները, որոնք տալիս են հարուստ պտղաբերութիւն, չընայած որ ժողովուրդը դեռ գետինը ներկում, մշակում է իր նախնիների անկարգ միջոցներով։ Խոյում ցանում են գլխաւորապէս ցորեն և բամբակ, պակաս չափով գարի, ծխախոտ. լինում են և բոստաններ։ Նա շատ հարուստ է պտղի կողմից, խաղող, նուշ, քաղ, տանձ, սալոր, խնձոր և այլն, այնքան առատ, այնքան արժան են, որ, ինչպէս ժողովուրդն է ասում, հոգի դին է։ Խոյը, և շատ իրաւացի, համարւում է դուբմայի (սեխ) աշխարհ։

Խոյ գաւառում կայ և տաք բուժիչ ջուր, որից, բնականաբար, չըգիտեն տեղացիները օգտուել, ինչպէս հարկն է։

Խոյը աղի հանք էլ ունի։ Դա մի փոքրիկ բլուր է, որ գտնւում է Խոյի հարաւային կողմը, Սալմասի ճանապարհի վրայ։ Այս էլ պէտք է աւելացնել, որ այդ աղի հանքը այնքան էլ մաքուր չէ, բայց յամենայն դէպս ազգաբնակութեան համար մեծ բարիք է։

II.

Այդ տարածութեան վրայ կան բազմաթիւ գիւղեր։ Ինչ ասել կուզի, որ ստատիստիկան միանգամայն բացակայում է այս երկրում, և մարդ շատ անգամ մօտաւոր թիւեր անգամ անկարող է լինում առաջ բերել։ Նոյի ամբողջ ազգաբնակութիւնը կազմուած է թուրքերից, հայերից և քիւրդերից, դրանցից զատ ուրիշ ազգութեան պատկանող ժողովուրդներ գրեթէ չկան այս գաւառում։ Թուրքերը, ինարկէ, իրանց թիւով բռնում են առաջին տեղը և կազմում են ամբողջ ազգաբնակութեան մեծագոյն բաժինը, ապա գալիս են քիւրդերը, իսկ ամենափոքր թիւը կազմում են հայերը։

Ինչպէս անցեալում, նոյնպէս և այժմ, գաւառի գլխաւոր քաղաքը համարւում է Նոյը, որը նստած է համարեա ուղիղ գաւառի հարթութեան կրծքի վրայ և շրջապատուած իրար մօտիկ մի շարք գիւղերով։ Նոյը բերդաքաղաք է, շրջապատուած հաստ և բարձր պարիսպներով։ Այս բերդը համարւում է XVII դարի գործ։

Ամբողջ Նոյ քաղաքը կազմուած է երկու մասից. մէկ՝ պարիսպների միջի տարածութիւնը, ուր բռնում են բացառապէս թուրքերը, և այդ մասը կոչւում է բերդ, և երկրորդ՝ բերդից դուրս, մօտ 15 բոլէի հեռաւորութեան վրայ, ուր ապրում են հայեր և թուրքեր խառն, որը կազմում է բերդաքաղաքի մի թաղը, հէնց այդ մասը «Թաղ» էլ ասւում է։ Նոյ քաղաքը ընդհանրապէս գեղեցիկ դիրք ունի, շրջապատուած է սիրուն ծառուղիներով, որոնց տակը կազմում է դէպի Սալմաստ տանող ընդարձակ, լայն և գեղեցիկ խիաւանը. ունի գեղեցիկ կանաչկոտ վայրեր, ինչպէս Դաղ-բաղին, լաւ այգիներ։ Քաղաքի մէջ զանազան կողմերից ճեղքում անցնում են փոքրիկ առուներ, և բոլորի հարներում էլ կան տնկած ուռի և բարդի ծառեր. այդ կողմից հարուստ և գեղեցիկ է մանաւանդ Թաղը։

Առաջ, դեռ XVII դարում, Նոյը կազմում էր մի ընդարձակ և ուժեղ խանութիւն, իսկ նրա կառավարիչը՝ խանը համարւում էր միահեծան, անկախ պետ, նա չէր ճանաչում պարսից շահնշահի գերիշխանութիւնը։ Իսկ այժմ Նոյը դարձեալ է Պարսկաստանի ամենաստորակարգ գաւառներից մէկը։ Նոյում մնում է մի դատաւոր, հաքիմ, որ համապատասխանում է Կովկասի գաւառապետին և ամբողջ գաւառի կառավարութիւնը յանձնուած է նրան։ Պարսկաստանում առհասարակ հաքիմը ոչ միայն կառավարութիւնից ոռճիկ չէ ստանում, այլ այդ պաշտօնը ստանալու համար ինքն է վճարում որոշ գու-

մար։ Ուրիշ խօսքով, դատաւորութիւնը ծախւում է այս կամ այն անհատին, այս կամ այն խանին։ Ներկայ դատաւորը, ինչպէս պատմում են, երբորդ անձնաւորութիւնից է գնել։ Ատրպատականի բարձրագոյն վարչութիւնից ստացել է մի ուրիշը, նա ծախել է այդ պաշտօնը, իհարկէ՝ անշուշտ օգուտով, մի երկրորդ անձի, իսկ սրանից էլ ստացել է ներկայ դատաւորը։ Այս էլ առեմ, որ Խոյի դատաւորը յանախ փոխւում է, պաշտօնանկ է լինում [1]։ Խոյի դատաւորը համարւում է նաև Սալմաստի ընդհանուր կառավարիչ։

Ոչ միայն դատաւորութիւնը, այլ ամեն ինչ այդպիսի հիմքերի վրայ է հաստատուած Պարսկաստանում։ Ահա և սարիարաստութիւնը, որ նոյնպիսի հիմունքների վրայ է դրուած, ինչ դատաւորութիւնը, դեռ աւելի վատթար։ Այս պաշտօնն էլ է ծախւում, և ով շատ է վճարում, նա է ստանձնում պաշտօնը։ Սարիարաստը համարւում է միայն քրիստոնեաների պաշտպան, իրօք՝ կեղեքող, հարստահարող։ Սարիարաստութիւնը Պարսկաստանում հաստատուած է Իրան-տանգկական պատերազմից անմիջապէս յետոյ, մօտ 1829—30 թուականներին։ Այդ այն ժամանակներն էին, երբ պարսիկ դատաւորը չէր պաշտպանում քրիստոնեաներին այնպէս, ինչպէս հարկն էր։ Այդ պաշտօնը հաստատել է հէնց քրիստոնեաների խնդիրքով և դա համարւում է բէֆօրմ։ Չըմոռանամ ասել, որ մինչև եօթանասնական թուականները սարիարաստներ եղել են միայն հայերը, դրանից յետոյ է միայն անցել թուրքերի ձեռքը։ Ինչպէս առաջ, նոյնպէս և այժմ իւրաքանչիւր քրիստոնեայ առն վճարում է սարիարաստին տարեկան որոշ տուրք, որպէս առմիկ։ Այդ առմիկով նա, իհարկէ, չէ բաւականանում, այլ փոխանակ մի շարք կեղեքիչներից պաշտպանելու ժողովրդին, ինքն էլ մի կողմից է կեղեքում. ամենահասարակ առիթը մատի փոքրիկ դարձնելով՝ սկսում է տուգանքի ենթարկել հայերին, մի խօսքով հարստահարում, դատցնում է նրանց առանց այդ էլ անմխիթար կեանքը։

Միանգամայն սխալը այժմ հայերը տարիների ընթացքում չեն կարողանում շտկել։ Ճիշտ է, դատաւորի դէմ պաշտ-

---

[1]) «Պաշտօնանկ անելը» յիշեցրեց մի հետաքրքիր և միևնոյն ժամանակ տարօրինակ բան, որը տեղ կը գայ միմիայն Իրանի երկրին։ Պաշտօնանկ լինելու դէպքում դատաւորը կառավարութիւնից վրէժ առած լինելու համար շատ անգամ դեռ չը հեռացած քաղաք է մտնում բանտի դռները և ազատում է բանտարկեալներին։ Այսպիսի դէպք պատահեց և այս տարի, ներկայ դատաւորի նախորդին պաշտօնանկ անելիս։ Ահա ձեզ երկիր, ահա ձեզ կառավարութիւն։

պանելու համար է առաջացել սարփարաստութիւնը, բայց այժմ դատաւորից հաճեմատաքար աւելի գոհ է ժողովուրդը, քան սարփարաստից։ Այժմ բոլոր հայերը դժգոհ են այդ պաշտօնից և միանգամայն աւելորդ են գտնում այն։ Մնում է միայն, որ հայ ազգաբնակութիւնը մի խոհուն, խելացի թեմական առաջնորդութեամբ դիմի բարձրագոյն իշխանութեանը և խնդրի այդ պաշտօնը վերացնել, մանաւանդ որ այժմ Ռոյ գաւառի ռակաւաթիւ հայերը (258 տուն) անկարող են մի անկուշտ սարփարաստ պահել։ Ատրպատականի հայերը կարող են այդ անել, այսինքն վերացնել սարփարաստութիւնը, եթէ միայն խելացի կերպով յինի դիմումը և ոչ թէ այնպիսի անտակտութեամբ, ինչպէս վարեց Ե. վ. Մուրադեանը թերթի իրաւունք խնդրելու գործում ..

Դեռ այդ չէ բոլորը, գիւղատէր բէգ-ագաների ճնշումները և կեղեքումները գալիս են աւելի ցաւոտ կերպարանք տալու պատկերին։ Դրանք ազրուկներ են, որ ամենաանխիղճ կերպով ծծում են ժողովրդի արիւնը։ Խեղճ երկրագործը աշխատում, տքնում է, չարչարւում գրեթէ ամբողջ օրը, արիւն-քրտինք թափում, և իր հալալ աշխատանքի ամենաչնչին բաժինն է միայն իրան մնում, մնացածը լցւում է ագայի ամբարը։ Ցորենից, գարուց, բամբակից և այլն ստանում են ագաները ընդհանրապէս բերքի 1/2-ը։

Բացի այդ կայ գլխահարկ, անասունների հարկ. ահա նրանց մօտաւոր չափը, որ կարելի է համարել բոլոր գիւղերի համար։

1) Գլխահարկ (ագամարդի) [1]	3	դրամ։		
2) Մատակ գոմշի հարկ .	2	»	.	10 շահի.
3) Կովի . . . » . .	1	»	.	5 »
4) Ձիի . . . » . .	2	»	.	10 »
5) Էշի . . . » . .	1	»	.	5 »
6) Ոչխարի . . . » . .	—	»	.	8 » [2]
7) Տան . . . . » . .	4	»	.	— »

Ահա այսքան ծանրաբեռնուած են խեղճ գիւղացիները բազմապիսի հարկերով։

---

1) Գլխահարկ վերցնում են 16 տարեկան պատանուց սկսած. այդ հասակի տղերքը արդէն համարւում են աշխատանքի ընդունակ, իսկ դրանից փոքրներից գլխահարկ չեն վերցնում։

2) Գոմշից, եզից հարկ չեն վերցնում, որովհետև այսպէս են բացատրում, թէ սրանք արդէն աշխատում են, և նրանց ու

Բայց դրանցով դեռ չի վերջանում ազգուկների թիվը, մնում են սէիդները, որոնց ամենայն իրաւունքով կարելի է կոչել Պարսկաստանի «ձրիակեր դասակարգը»։ Նրանք ոչինչ չանելով՝ ոչ միայն խնդրում են, այլ և պահանջում։ Եւ ինչու։ Որովհետև «մարգարէի ցեղից» են համարւում։ Մոյում ընդհանրապէս շատ կրօնաւորներ՝—սէիդներ, մոլլաներ կան, հէնց դրա համար էլ Մոյը պաշտօնական թղթերի մէջ յիշւում է «Դարբլ-մոմինին», այսինքն հաւատարիմների-սրբերի վայր։ Մի երկու գիւղ կայ, որ զուտ սէիդաբնակ են։ Սէիդները, որպէս ազնուականներ, որոշ տուրք են առնում ժողովրդից, օրինակ թուրքերը պարտաւորւում են տարեայ բերքի 1/6 տալ սէիդներին, իսկ հայերը, երբ մի հող են առնում թուրքերից, սէիդը իրաւունք ունի առանալ այդ գետնի արժէքի 1/3 մասը։ Նրանք մանաւանդ մոլեռանդ պարսիկ գիւղացու աչքում մեծ հեղինակութիւն են վայելում։ Երբ մի յանցաւոր, թէկուզ նա լինի մարդասպան, պատսպարւում է սէիդների տանը, նա միանգամայն ազատ է համարւում։

Այսպէս է Պարսկաստանի «ձրիակերների դասակարգը» ինչպէս Մոյ գաւառում, նոյնպէս և ամբողջ երկրում։ Նա թէև երբէք չի աշխատում, բայց և ամենից խիստ պահանջողն է, և ամենացաւալին այն է, որ ամենայն ճշտութեամբ կատարւում են այդ պահանջները։

Մոյում էլ նոր տարիքի և սակագների առթիւ թեթև դժգոհութիւններ եղան, և գրգռողները բացառապէս գիւղատէր հոգևորականները, և ագա-բէգերն էին։ Այսպէս է միշտ։ երբ լուր է տարածւում, թէ նոր կարգեր են մտցնելու հողատիրական սիստեմի մէջ, գիւղատէրները սարսափում են, ժողովրդին գրգռում են զանազան ծուռումուռ միջոցներով, ոտքի կանգնեցնում և բողոքում այդ կարգադրութեան դէմ։ Բայց այս ամառ ժողովուրդը հասկացել էր մասամբ գործի իսկական էութիւնը և, ինչպէս շատ թուրքերից լսեցի, բողոքում էին գիւղատէրերի դէմ և խուլ կերպով մրմնջում. «դա մեր օգտին է. ուզում են մեր դրութիւնը բարելաւել, մեզ դիտմամբ սրանք ստի են հանում»։ Արդեօք թուրք մասսայի գիտակցական վերաբերմունքի նշոյլներ չեն դրանք...

Մոյ գաւառում գործածական պատիժներ են՝ ականջ կլտրել, ֆալախկայի դնել, ճիպոտներով ծեծել և այլն։ Իւրաքանչիւր ագայի, դատաւորի քմահաճութիւնից է կախւած, թէ որ յանցանքի համար ի՞նչ պատիժ կընշանակէ։ Սակայն ամենատ-

վորական պատիժը տղաների, հէքիմների համար «տուգանքն» է. այդ կողմից շատ անխնայ, շատ անգութ են։

Իսկ Արտեղից է ժողովուրդը միջոցներ գտնում յոգեցնելու համար այդ բոլոր անկուշտ որկորները։ Ժողովուրդը գործ ունի հողի հետ, հողը բերրի է, լաւ բերք է տալիս, Թոյում հացահատիկները—ցորենը, գարին, կորեկը—տալիս են սովորաբար մէկին 10, իսկ այդ չափը համարւում է լաւ. կան տեղեր, ինչպէս դեմիները, Ղոթուրի կողմերը, որ տալիս են 1-ին 15—25։ Հողը հերկում են փոքրիկ ոսկիներով, գութան շատ քիչ գիւղերում մուտք է գործել։ Ժողովուրդը պարապում է նաև արհեստներով, ինչպէս հիւսնութիւն, պայտառութիւն և այլն, մասամբ պարապում են նաև վաճառականութեամբ, այն էլ միայն քաղաքում։ Շատ քիչ առևտրականներ կան, որ յարաբերութիւն են պահպանում, ապրանք բերում արտասահմանից. այդ էլ ի հարկէ մեծ դժւարութեամբ և զոհողութիւններով, շնորհիւ հաղորդակցութեան կանոնաւոր և դիւրին միջոցների բացակայութեան։

Թոյը միայն մի քանի տասնեակ սաժէն երկարութեամբ շնորհով ճանապարհ ունի, այն է դէպի Մալմասա տանող խճուանը, մնացածներին չի կարելի ճանապարհ անունը տալ, մանաւանդ դէպի Մակու տանողը։ Անշուշտ այս հանգամանքին պիտի վերագրել և այն, որ շատ տեղեր, ինչպէս և Թոյում, պոստը բերւում է ոչ թէ կառքով, այլ ձիով, շատ անգամ էշով և եզով։ Թոյս կար, որ բելգիացիների ձեռքը անցնելով մաքսային և պոստային վարչութիւնը կը կանոնաւորի, որոշ հիմունքների վրայ կը դրի ամեն ինչ, բայց պէտք է խոստովանուել, պոստը էլ աւելի վատթարացել է։ Թոյը ունի նաև հեռագիր։

III.

Դեռ XVIII դարում Ատրպատականի այս անկիւնը շատ հայաշատ է եղել։ Թոյի հարթութիւնը, որը հոտարւում է Աւաթայը դաշտի շարունակութիւնը, իսկ ամբողջ գաւառը կազմում է Արտազ գաւառի մի անկիւնը, մի ժամանակ ծածկւած է եղել մի շարք զուտ հայաբնակ գիւղերով. դրան որպէս ապացոյցներ կարող են ծառայել զանազան կողմերում ցրւած հնութեան բեկորները և մնացորդները։ Ահա օրինակ՝ Գեօհնաւա գիւղը։ Նա սրբատեղի է. կայ հայկական եկեղեցի, թէև խարխուլ։ Այդ գիւղում այժմ ոչ մի՛ հայ չի ապրում, զուտ

Թուրքարնակ է դարձել. եկեղեցում, քարերի վրայ կան արձանագրութիւններ, բայց չեն կարդացուում։ Ահա և Դիզա գիւղը։ Դա մի փոքրիկ տեղ է, բայց ունի ընդարձակ, մեծ եկեղեցի, որը երկու հարիւր տարուայ շէնք է համարուում. միայն երկու տեղ է քանդուել, բոլորովին կանգուն է մնացել և իր բարձրութեամբ իշխում է ամբողջ շրջակայքի վրայ։ Դիզա գիւղից քիչ հեռու, Թուրքարնակ մի գիւղում կանգնած է հայկական եկեղեցու միայն երկու պատը։ Մի փոքր հեռու, դիմացի բլրի վրայ երևում է մի մատուռ։ Շատ անպաճոյճ է այդ մատուռը, բայց ժողովրդի մէջ խօսող ուանդութիւնը, որ սերընդէ-սերունդ անցնում է, մեզ ասում է, որ դա Վաքդանի, քաջ նահատակի ճակատի հանգչելու վայրն է։ Բոլորը գիտեն այդ, և ուրիշ անունով երբէք չեն կոչում այդ մատուռը։ Շատ յարմար դիրք ունի նա և դիտում է առաջը տարածուող շրջակայքի վրայ։ Եւ այդ մատուռի տակով ծանր, դանդաղ հոսում է Տղմուտ գետը կամ Ղարբուր-չայը։

Խոյ քաղաքի բերդից դուրս, Թաղում՝ կայ մի հին եկեղեցի։ Մի քարի վրայ եղած արձանագրութիւնը վերաբերում է միայն նորոգութեանը, որը 100 տարուայ է, իսկ եկեղեցին համարուում է մօտ 1000 տարուայ արդիւնք։ Այսպիսի մեծ, ընդարձակ եկեղեցի կայ նաև Մահլազանում, և բոլորն էլ ունեն արձանագրութիւններ։ Շատ լաւ կըլինէր, եթէ մի մասնագէտ գար, լուսանկարէր այդ արձանագրութիւնները, մանրամասն ուսումնասիրէր հնութիւնները։ Աստրպատականը, գլխաւորապէս Մակու և Խոյ գաւառները, մասամբ Սալմաստը և Սօսային, կարող են այդպիսի մասնագէտ անձնաւորութեան շատ հետաքրքիր նիւթեր մատակարարել։

Ի՞նչ են եղել ուրեմն հայերը։ Ցայտնի է, որ նրանք գաղթել են ուրիշ երկրներ։ Զրհաշուած մանր, աննշան գաղթականութիւնները, եղել է երկու նշանաւոր գաղթականութիւն։ Մէկ՝ 1805 թուին, երկրորդ, որ ամենագլխաւորն է, պարսկահայերի մեծ գաղթականութեան միջոցին, ռուս-տաճկական պատերազմի ժամանակ, 1828 թ., դրանից յետոյ համարեա այլևս չեն գաղթել, միայն մասամբ կոտորուել և ձուլուել են տեղական տարրերի մէջ։ Այժմ էլ թէև խոյեցի հայը պանդխտում է Ռուսաստան, գնում է դարբիրութեան համար առնելու, բայց նրի վաղ թէ ուշ վերադառնում է։ Այս էլ ասեմ, որ այժմ աւելի քիչ են գնում պանդխտութեան։

Ի՞նչքան հայեր կան այժմ Խոյում։ Շատ քիչ, միմիայն 258 տուն և դրանք էլ ցրուած են եօթ զանազան գիւղերում։

Ահա այսպէս։

Խոյ քաղաքում	110	տուն,	տունը	հաշուելով	5 անգամ	= 660	ռուբ.
Սէյդաւար գիւղ	86	»	.	»	.	480	»
Մահլազան	22	»	.	»	.	110	»
Դիզա	18	»	.	»	.	90	»
Շորաւ	17	»	.	»	.	75	»
Վառ	4	»	.	—	.	28	»
Փեռա	1	»	.	—	.	7	»
Ընդամենը	258	տուն				1290	ռուբ.

Ցիշած գիւղերից Շորաւը նոր է կազմուել, 98 թուին։ Այդ թուից մի տարի առաջ, հայկական կեանքի «յայտնի դէպքերից» յետոյ, երբ Շարաֆ-բէգը կոտորեց Վառ գիւղի հայերի մի մասին, մնացածները գաղթեցին, շարժուեցին դէպի քաղաքի մօտերը, բնակութիւն հաստատեցին 20 րոպէի հեռաւորութեան վրայ և կազմեցին այժմեան Շորաւ գիւղը։ Վառեցի մի քանի ընտանիք էլ գաղթում և ապրում են Դիզա գիւղում։

Քաղաքում հայերը ապրում են «Թաղ» բաժնում և բռնում են երեք թաղեր, կամ աւելի ճիշտ է ասել, երեք փողոցներ, այն է Փոս-թաղ, Աղայի-թաղ և Քիւչա-բաղի։ Այս փողոցները, ուր ապրում են հայերը, բաժանուած են ուրիշ թաղերով և փողոցներով, որտեղ բռնած են թուրքերը։ Այնպէս որ բոլոր գիւղերումն էլ հայերը ապրում են խառն թուրքերի հետ, միայն Սէյդաւարն է զուտ հայաբնակ։

Ինչպէս տեսնում էք, հայերը թէ նւազ են թւով և թէ ցրուած, և հէնց այդ հանգամանքը մեծ արգելք է լինում այնտեղ կանոնաւոր և ճնայուն գործ սկսելուն։

Խոյը կանոնաւոր դպրոցի շէնք ունի և մեծ մասով աւ Թաղէի վանքի վանահայր Նալբանդեան վարդապետի ջանքերի և հետևողութեան շնորհիւ։ Ամառը մի քանի հայ տուն կարեցին, և շնորհիւ էլի վարդապետի եռանդոտ աշխատանքի, իրերը յետ ստացուեցին։ Գարսիկ կատարած ամբոխը յարձակուում էր հայ թաղի վրայ, վարդապետը կանգնեց ամբոխի դէմ և թոյլ չտուաւ խուժել հայերի տները՝ յետ դարձրեց։

Աղքատ է Խոյի հայը։ Կան ընտանիքներ, որ օրերով ոտք կերակրի երես չեն տեսնում։ Ահա այս անմիջապէս իրականութեան մէջ «գերման-հայկական որբանոցը» ամենայն իրաւունքով կարելի է համարել մի բարիք, այն էլ մեծ բարիք։ Այս որբանոցի հիմնադիրն է գերմանացի յայտնի և հայասէր դոկտոր Լեպսիուսը։ Վերջինիս ջանքերով Գերմանիայում կազմուած է մի ընկերութիւն յատկապէս հայերին օգնելու համար։ Առաջ այդ ընկերութիւնը կոչուում էր «գերման-հայկական օգ-

նոց ընկերութիւն», իսկ այժմ ասւում է՝ «արևելեան միսիոնէրական ընկերութիւն»։ Այս ընկերութիւնը Գարսկաստանում ունի երկու որբանոց, Ուրմիում և Խոյ քաղաքում։ Խոյի որբանոցը առաջ Սալմաստուում էր, միայն 1898-ից տեղափոխուել է այստեղ։ Այս միսիոնէրական ընկերութիւնը որբանոցներ ունի նաև Տաճկաստանում։ Այս ամառ ես երկու անգամ այցելեցի Խոյի «գերմանա-հայկական որբանոցը», և պէտք է խոստովանուել, որ տպաւորութիւնը շատ բաւական էր։ Որբանոցի շէնքը կառուցուած է մի ընդարձակ գեղի վրայ, որը գտնւում է «Քաղի» հարաւ-արևելեան անկիւնում։ Առաջին հայեացքից թւաց ինձ, որ դա մի փոքրիկ գիւղ է կամ նահապետական մի մեծ բազմանդամ տուն։ Ահա այստեղ մի խումբ տղաներ և աղջիկներ խաղում են, վազում, ծիծաղում. մի կողմում մանուածք են անում, այնտեղ հիւաներն են աշխատում։ Բակը մեծ և մաքուր է, ունի ընդարձակ պարտէզ, գեղեցիկ մարգեր. մի խօսքով արտաքուստ ամեն ինչ լաւ էր, սիրուն։ Եւ այդտեղ, այդ փոքրիկ «գիւղում», ապրում էին 98 որբեր, իսկ եթէ որբանոցի «մայրիկին» և «հայրիկին» էլ հաշուենք, կըլինի ուղիղ 100։ Այդ 98 որբերից 27-ը տղաներ են, իսկ 61-ը աղջիկներ։ Ահա ինչու ենք ասում, որ դա մեծ բարիք է։ Եթէ չըլինէր այդ, քանի՞-քանի՞ որբեր կըմնային մերկ, քանի՞-քանիսը կըմնկնէին փողոցը, կըսկսէին հաց մուրալ, քանի՞-քանի հասած աղջիկներ կանգնէին։ Տեղացիները, ինչպէս և ուրիշներն, ամենայն ուրախութեամբ հարս են ընտրում որբանոցի աղջիկներից։ Միակ թերութիւնը, որ ես կարողացայ նկատել, այդ այն է, որ սենեակները մի փոքր խոնաւ են, քնելու տեղը անյարմար և հակասողջապահական։

Ամենաուշագրաւը «գերմանա-հայկական» որբանոցում արհեստանոցն է։ Այդ բաժինը տարուում է շատ խնամքով և բարեխիղճ կերպով։ Արհեստանոցում սովորեցնում են մի քանի արհեստներ, օրինակ հիւսնութիւն, կօշկակարութիւն, շոր գործել, չիթ, կտաւ և այլն։ Հիւսնութեան վարպետն է պ. Շուն-մանը, որը գերմանացի է և հմուտ իր արհեստում։ Աշակերտ-հիւսները այնպիսի դեղեցիկ, մաքուր, ճաշակով կահկարասիք են պատրաստում, որ մարդ հիանում է. միշտ էլ դրանք գնահատուում և լաւ արժէքով ծախուում են։ Իսկ միւս արհեստներից էլ որբերը կարողանում են պատրաստել իրանց համար հագուստ, ոտնաման։ Առհասարակ ամենքն էլ իրանց յարմարեցրած աշխատանք ունին այնտեղ։

Եւ ընդարձակ, բազմանդամ տան ընդհանուր կառավարիչն է պ. Օրցենը, որին որբերը «հայրիկ» են ասում, իսկ

ընդհանուր կառավարչուհին՝ միսս Հառնակը, որին կոչում են «մայրիկ»։ Այս երկու անձնաւորութիւններն էլ ունեն բարձր կրթութիւն։ Երկուսն էլ հասակրեալ անձնաւորութիւններ են երևում։ Սրանք, ի հարկէ, բացի կրօնական միասիայից, ունեն նաև քաղաքական նպատակ. թէև իրանք ասում են, որ միայն մարդասիրական նպատակով են եկել Պարսկաստանի այս խուլ և հեռաւոր անկիւնը։ Ճիշտ է, նկատելի է, որ ուզում են կրօնական ոգի ներշնչել սանների մէջ, այդ ազդեցութիւնը կայ, բայց ոչ այն չափով, ինչ տեսնում ենք Թաւրիզի բողոքականների մօտ։ Այստեղ երբէք չեն առաջարկում որբերին, որ բողոքականներ դառնան։

Որբանոցի ամենաթոյլ և անբաւարար բաժինը կարելի է համարել ուսումնական-կրթական մասը։ Որբանոցը ունի երեք բաժանմունքից կազմուած դպրոցական մաս. այնտեղ շատ թերութիւններ կան. դասարանների նստարանները անյարմար են, դասերի տեղութիւնը շատ երկար է, 6-7-8 տարեկաններին տրւում են 50 բոպէ տեղութեամբ դասեր. աւանդւում են երեխաների կարողութիւնից միանգամայն վեր առարկաներ, ինչպէս ընդհանուր պատմութիւն, բուսաբանութիւն և այլն, և խնդիր երեխաները կրկնում են թութակի նման շատ բաներ, որոնց իմաստը իրանց խելքից շատ վեր է։ Լաւ է տալ քիչ և երեխաների համար մարսելի, քան շատ բան անցնել և ոչինչ չիւրացնել։ Ուսուցիչները այնքան էլ պատրաստուած, հմուտ չեն։

Բացի «գերման-հայկական» որբանոցի դպրոցից՝ Թոյ գաւառում կայ նաև երեք դպրոց։ Քաղաքում կայ երկու դպրոց, մէկը բողոքականների դպրոցն է, ուր սովորում են նաև աղջիկներ, միւսն էլ հայ-լուսաւորչականների ուսումնարանը, ուր լինում են առհասարակ 40-50-70 աշակերտ։ Երրորդ դպրոցն էլ Սէյդաւարումն է. այնտեղ էլ թւով 40-50 աշակերտներ են լինում։

Կրթական գործը Թոյ գաւառում ընդհանրապէս անմիջաբար, անբաւարար է, և հնարաւոր էլ չէ հիմնաւոր գործ սկսել, շնորհիւ հայերի ցրուած լինելուն. պիտի ասել, որ ժողովուրդն էլ շատ անտարբեր է և կրթութեան պահանջ չի զգում։ Ընթերցանութիւնն էլ նոյն վիճակի մէջ է. չլկան գրագէտներ, էլ ո՞ւրտեղից կարող է լինել ընթերցանութիւն. քաղաքը միայն ունի գրադարան, աննշան քանակութեամբ գրքեր. գրադարան-ընթերցարանը կոչւում է «Ս. Նազարեան»։ Ստացւում է պարբերական հրատարակութիւններից միայն «Մշակ». բայց ո՞վ է կարդում, քանի՞ հոգի են օգտւում գրադարանից. հազիւ մի երկու հոգի։ Շատ անմխիթարական, յուսահատա-

կան է այդ կողմից ոչ միայն Խոյը, այլ ամբողջ Ատրպատականը։

IV.

Պարսկաստանի այս մի բուռն հայ ժողովուրդը ամբողջ դարերի ընթացքում ապրելով Թուրքերի մէջ ազդել է նրանցից և այնքան փոխուել, որ գրեթէ չի տարբերուում իր հարևաններից։ Նա այնքան է նման Թուրքին, որ միայն երկար տարիներ այստեղ ապրածի աչքը կարող է դժուարութեամբ ճանաչել հայը Թուրքից։ Հայը հագնուում է ճիշտ Թուրքի նման, խուզուում, ածիլուում Թուրքի նման, Թուրքի անուններ է կրում (Խուդավերդի, Իսադուլի, Շահգեալդի և այլն)։

Հայերը ոչ միայն արտաքինով, այլև իրանց ամբողջ ներքին աշխարհով են նման Թուրքերին։ Խոյեցի հայը քաղաքագէտ է և ծածկամիտ։ Որքամանկ մարդկանց մէջ դժուար թէ անկեղծ բարեկամական յարաբերութիւններ լինեն։ Խոյում հէնց այսպէս է։ Անկեղծութիւն ասած բանը չըկայ։ Ասենք՝ այս աչքի է զարկում ոչ միայն Խոյում, այլ ամբողջ Ատրպատականում։ Դա պարսկահայերի և առհասարակ արևելցիների բնաւորութեան յատկանիշ գծերից մինն է։

Իսկ ամենացած, ամենաայլանդակ և զայրացուցիչ երևոյթը խոյեցիների մէջ՝ ջգրու հաւատափոխութիւնն է և դրանով ապառնալն է. վանահայրը պահանջում է խոյեցուց պտղին կամ մի բանաւոր դպրոցում աշխատելու, նա զայրանում, կանչում է. «Ինչ է, էդպէս էք անում, որ գնամ հաւատափոխ լինեմ, լաւ, կերթամ մահմէդական կըդառնամ, անունս Մկրտիչ չըլինի, թող Մահմուդ լինի, ինչ տարբերութիւնս։ Թեմակալ առաջնորդը նկատողութիւն է անում Խոյի քահանային, երեսով տալիս նրա թերութիւնները, քահանան զայրանում, կանչում է. «Էն չէք ուել (ցոյց տալով Փարաջան), կըհանեմ կըզցեմ էն կողմը, դրա տեղը կըհագնեմ ապիտակ, իսկ սև գլխարկիս տեղ էլ կըդնեմ ապիտակ փաթոյթ»։ Ահա ժողովուրդը գրգռուել է առաջնորդի դէմ մի խնդրի առթիւ, շատերը հաւաքուել են, բողոք խմբագրել և տակը անպայման աւելացրել են. «եթէ այս մեր պահանջները չիրականանան, մենք մահմէդական կըդառնանք»։ Եւ սրանք իմ ներկայութեամբ կատարուած փակտեր են, ոչ թէ երևակայութեան ծնունդ... Այժմ կան մի քանի թուրքացած հայեր։

Դրանով չի վերջանում նրանց բնաւորութեան այլանդակութիւնները։ Նրանց մէջ խորը արմատներ է գցել իրար չու-

զողությունը, նախանձը, իրար ոտի տակ փոս փորելու ագեղ յատկությունը։ Նրանց աչքը չի վերցնում, որ հարևանի գործերը աջող են, ամեն խարդաւանանքներ ձեռք են առնում նրանց ջնջելու համար։

Օգեվճառությունը, այդ կեղտոտ, զզվելի սովորությունը, այստեղ էլ կայ։ Ռոյեցի հայը ընդհանրապէս իսկական ալկոհոլիկ է։ Գինի չի գործածում, իսկ օղին գործածական է և Թուրքերի մէջ, նրանց օղի մատակարարողը հայն է։ Թուրքերին քաջ յայտնի է, թէ որ տնում օղի է ծախում, որն է լաւ, որտեղ ածան է։ Գալիս են լկտի, փչացած, սրիկայ լամուկները, ոտք կոխում հայ գերդաստանի մէջ, ճնում երկար, խմում և հարբում, փողոցային, Թուրք լամուկին յատուկ հայհոյանքներ շպրտում իրար, զզվելի ակնարկներ անում, նոյնիսկ այդ տան անդամների վերաբերմամբ, երեխաների ներկայությամբ, կանանց առաջ։ Տուն էլ կայ, որ հէնց կանայք են Թուրքերին օղի մատակարարողները. այդ էլ մի միջոց է, ցած, անարգ միջոց, ասելի յանախորդներ գրաւելու համար։ Ասում եմ, շնորհիւ այդ ագեղ երևոյթի՝ սրիկայ Թուրքերը շատ լաւ և մտերմական ծանօթ են հայ տների ամեն ծակուծուկի հետ, և անշուշտ հէնց սրան պիտի վերագրել այն, որ յանախ գողություններ են պատահում, կտրում են հայերի տները։ Հայերը այնքան երես են տուել Թուրքերին և իրանց ոյժը ձեռքից Թոգել, որ չեն կարողանում զսպել մի լամուկի, դողում են նրանից, որովհետև իրանք են մեղաւոր, իրանք են ստեղծել այդ դրությունը։

Թուրքերի մէջ ամենաաչքի զարնող և սովորական երևոյթը ներկուելն է։ Արևելքը զարմանալի սիրահար է սև յօնքերի։ Եւ կանայք աշխատում են ձեռք բերել այդ արհեստական կերպով։ Ընդհանրապէս Ասորաստանում, մասնաւորապէս Ռոյում դուք չէք պատահի մի Թուրք կնոջ, որ ներկած չլինի յօնքը, թարթեւունքները։ Յօնքերը անճաշակ և անոռնի ձևով հատացնում, թանձրացնում են, բաւականին երկարացնում, ցածրացնում և միացնում իրար հետ. շատ անգամ բարձրացնում է յօնքը ճակատի վրայ։ Նոյն անճոռնիությամբ վարւում են և թարթեւունքների հետ և ստեղծում այլանդակ կերպարանք։ Ամենաանսովոր աչքը անգամ կարող է իսկոյն նկատել ներկուած լինելը, այն էլ շատ հեռից. ի հարկէ՝ կան և ճաշակով ներկուողներ. բայց դրանք միայն շատ հարուստ կանայք են, որոնք ունեն պահանջող պարագաները և յարմարությունները. շատերը քսում են հէնց մատով։ Այստեղ ներկւում են ոչ միայն կանայք, ոչ միայն հասակ առած աղջիկներ, այլ նոյնիսկ

4—5 տարեկան հրեխան, ի հարկէ աղջիկը. ներկում են դեռ աւելի փոքրերին։ Զարմանալին այն է, որ ներկւում է և պատուր։ Գուցէ մասամբ և այդ սովորութեան շնորհիւ բոլոր Թուրքերի աչքերն էլ ցաւագար են, արտևանունքները և յօնքերը թափած. բացառութիւններ կարելի է համարել առողջ, գեղեցիկ աչքերը Թուրքերի մէջ։ Այս բանում դ՛ը են խաղում ի հարկէ՝ և ուրիշ պայմաններ ու պարագաներ ինչպէս օրինակ հարեմական կեանքը, բաղնիքները, որ միևնոյն կեղտոտ ջրի մէջ լողանում են հիւանդը և առողջը. այդ է պատճառը, որ ճաղատութիւնը այնքան տարածուած է Պարսկաստանում։

Ցաճախ թրքուհիները մարդու են գնում 9-10-12 տարեկան հասակում։

Հետաքրքիր է Թուրքի հասկացողութիւնը ամօթի մասին։ Ինչպէս այստեղ, այնպէս և ամբողջ Ատրպատականում, Թուրք կանայք ման են գալիս ընդհանրապէս ոտաբոբիկ. մերկ է նրանց ոտները, մերկ մինչև ազդրերը, դեռ աւելի բարձր, և դա ամօթ չի համարւում, իսկ երեսը բաց ման գալը մեծ ամօթ է։ Տան մէջ պահանջւում է նոյնիսկ, որ կինը անպայման կարճ շորեր հագնի ու ոտքերը բաց լինին։

V.

Այժմ անցնում ենք մեր յօդուածի վերջին մասին։ Ռոյ գաւառի արևմտեան կողմը, Ռոյ քաղաքից մօտ 10 ժամուայ հեռաւորութեան վրայ, պարսկա-տաճկական սահմանագլխի մօտ, ընկնում է Ղոթուրը, որ մի լեռնային գաւառակ է։ Ղոթուրը ամբողջապէս շրջապատուած է բարձր և ցածր լեռնաշղթաներով, ինչպէս Ղոթուրի և Աւրուն լեռները, որոնք լաւ ուժում են անանցանելի ձորեր և կիրճեր. հէնց այդ ձորերի միջով էլ անցնում է ճանապարհը։ Ահա այդ լեռներից, այդ գաւառից է սկիզբն առնում Ղոթուր գետը, որը առատ ջուր է մատակարարում ամբողջ Ռոյ գաւառին։

Այժմ Ղոթուրի ազգաբնակութիւնը կազմուած է զրեթէ միմիայն քրդերից. «զրեթէ» եմ ասում, որովհետև կան նաև 15 տուն քրդացած հայեր։ Այո, միայն քրդեր են. բայց առաջ այդպէս չէր։ Դեռ ռուս-տաճկական վերջին պատերազմից (1878) առաջ, Ղոթուր լեռնագաւառը համարւում էր Տաճկաստանի հող, միայն այդ պատերազմից յետոյ անցաւ պարսիկների ձեռքը։ Այդ ժամանակ Ղոթուրում կային մեծ թւով հայեր, մասաւորապէս 150 տուն։ Ամբողջ գաւառը համարեա նրանց ձեռքն է հողել, ունեցել են մեծ ուժ և տնտեսապէս էլ բարգաւաճ կացութիւն։

Բայց պատերազմից մի քանի տարի յետոյ վրայ է հասնում երկու անգամ սով, մէկը միւսից սարսափելի։ Այլևս անհանրին է լինում մնալ այնտեղ և ապրել, ստիպուած են լինում գաղթել։ Ազգաբնակութեան մի մասը գաղթում է Կովկաս, բնակութիւն հաստատում գլխաւորապէս Հին-Նախիջևան, Թէրուլ, Էջմիածին, իսկ մի յայտնի քանակութիւն էլ անցնում է Տաճկաստան և այնտեղ պատսպարւում։ Ամբողջ գաւառակում հազիւ մնում է 40—50 տուն հայ։ Վրայ է հասնում 1896 թիւը։ Լուր է ստացւում, թէ Բահրի փաշայի հրամանով Շարաֆ-բէգի մարդիկ գալիս են Ղոթուրի վրայ կոտորելու հայերին։ Պարսից կառավարութիւնն իսկոյն հաղորդում է այդ մասին և կարգադրում, որ շուտով հայերը հեռանան Ղոթուրից դէպի Խոյ քաղաքի մօտերը։ Հայերը կատարում են այդ հրամանը, թէև տհաճութեամբ և իրանց հետ վերցնելով միայն թեթև իրերը։ Նրանք գալիս և բնակութիւն են հաստատում Վան գիւղում։ Անցնում է բաւական ժամանակ, յանկարծ 97 թւի օգոստոսի 31-ին, լուսադիմին, երբ ամբողջ գիւղը քնած էր, Շարաֆ-բէգի զրդերը կամացուկ սարից ցած են գալիս, յարձակւում քնած ժողովրդի վրայ։ Բարձրանում է աղմուկ, աղաղակ, հրացանի ձայն, և սկսւում է սարսափելի, անգութ կոտորած, որ տևում է մի քանի ժամ։ Այդ կոտորածի ժամանակ սպանւում են մօտ 30 հոգի վառեցիներ, իսկ 60—70 հոգի ղոթուցիներից։ Կոտորածից յետոյ, երբ զրդերը կողոպտում, թալանում են ամեն ինչ և բարձրանում սարը ու հեռանում, գիւղը ստանում է կատարեալ աւերակի տեսք. կենդանի մնացածներն էլ թողնում են գիւղը, գաղթում և կազմում Շորաւը։

Զարմանում ասել, որ Վանի կոտորածից առաջ 15 տուն հայեր չկարողանալով ապրել հեռու իրանց հայրենի գիւղից՝ Ղոթուրից, որը շատ գեղեցիկ տեղ է, աչքի առաջ ունենալով և այն, որ պարսից կառավարութիւնը թոյլ չի տալիս նրանց ապրելու այնտեղ, ստիպւեցին քրդանալ։

Այսպէս ահա, այժմ Ղոթուրում կան միայն 15 տուն քրդացած հայեր, որոնք աւելի լաւ են համարել զոհել կրօնը, քան ծննդավայրը։ Իսկ ղոթուրցիներից մի քանիսը, որ ազատուել են կոտորելուց, այժմ ցրւած են Խոյ գաւառում։ Հէնց Խոյ քաղաքի անցեալ քահանան ղոթուրցի էր, որից ստացել եմ Ղոթուրի մասին տեղեկութիւնները։

Ամբողջ Ղոթուր գաւառամասում այժմ կայ 18 գիւղ, 500 տուն բնակիչով. այդ գիւղերից մեծերն են Ղոթուր, Ըստիրան, Զէրի, որոնք ունին մօտ 100-ական տուն։ Ղոթուրի քրդերը շատ քաջ են, ապրում են մաքուր օդի մէջ, թառած ազատ լեռ-

նեբի վրայ, բայց միշտ էլ ուժեղ դիմադրություն տեսնելով՝ յետ են նահանջում։ Այժմ հայկական ոչինչ չկայ այնտեղ. մնացել է միայն աւերակ եկեղեցին, որը դարձել է գարմանանոց։

Ղոթուրը կառավարում է պարսից տէրությունից նշանակուած գառաւորը։ Ղոթուրի ազդարնակությունը պարապում է երկրագործությամբ, մասամբ անասնապահությամբ։ Նրանք ցանում են միմիայն ցորեն. հողը բերրի է, մեծ մասը դէմի և փոքր մասը ջրարբի։ Ջրարբի տեղերը ընդհանրապէս տալիս են մէկին 10—12, իսկ դէմի հողերը տալիս են բաւարար անձրև եղած տարին համարեա 1-ին 20, նոյնիսկ 25, անձրև չեղած տարին՝ ինարկէ՝ 1-ին 5—6 էլ չեն տալիս։ Բայց առհասարակ իւրաքանչիւր տարի Ղոթուրի ժողովուրդը ունենում է բաւարար բերք։ Ցորենից զատ, մնացած անհրաժեշտ մթերքները ստանում են Խոյից։

Ղոթուրի և Խոյի հարկերի մէջ զգալի տարբերություն կայ։ Ղոթուրը անհամեմատ ազատ է. այնտեղ չկան ագանել, հողը ժողովրդի սեփականությունն է, և կառավարությունը վերցնում է բերքի միայն տասից մէկ բաժինը։ Եթէ այդպէս լինէր և Խոյում, հայերը երբէք նեղություններ չէին կրիլ, անտեսապէս չէին քայքայուիլ։

1903 թ. Խոյ.

ԹԱՒՐԻԶԻ ԼՍԱՐԱՆԸ

Ժողովրդական համալսարանները քաղաքակիրթ երկիրներում արդէն իրենց պատուաւոր տեղն ունին։ Դրանք այնպիսի հասարակական հաստատութիւններ են, որոնք կազմակերպուած են գլխաւորապէս հասարակ ժողովրդի, մասսայի համար։ Ժողովրդական համալսարանների կատարելիք նշանաւոր դերը ժողովրդի մտաւոր, հասարակական կեանքում ի հարկէ անուրանալի է։ Եւ այժմ քաղաքակիրթ երկրները ոչ թէ տալիս այդ հիմնարկութիւններին, աւելի ու աւել ծաւալում և կանոնաւոր հիմունքների վրայ դնում։

Ժողովրդական համալսարանների գաղափարը կամաց-կամաց ժողովրդականանում և արմատանում է նաև հայերիս մէջ։ Այդ հասարակական կրթական հիմնարկութիւնները մեր մէջ թէև համեմատաբար անկերպարան են և սաղմնային վիճակի մէջ, բայց իրենց էութեամբ մտնում, նմանում են եւրոպական տէրութիւնների ժողովրդական համալսարանների տիպին։

Պարսկահայերն էլ ունեն իրենց ժողովրդական համալսարանը։ Դա Թաւրիզի «Լսարան»-ն է։ Այն ընկերութիւնը, որ դեկավարում է «Լսարանի» գործը, կոչւում է «Լսարանական» ընկերութիւն։ Այդ հաստատութիւնը ունի 7 տարուայ կեանք. հիմնուած է 1893 թ. մարտ ամսին։

«Լսարանի» սկիզբը դրուել է այնպիսի ժամանակ և այնպիսի պայմանների մէջ, որ այնքան էլ բարեյաջող, նպաստաւոր չէր։ Ձեռնարկութիւնը նոր լինելով խորթ էր շատերի համար, չէր լինում ունկնդիրների բաւարար թիւ, չկային պատրաստուած դասախօսներ և այլն։ Բայց այն միանգամայն համակրելի ձեռնարկութիւնը, հանրօգուտ հաստատութիւնը պահպանեց իր գոյութիւնը և յարատևեց շնորհիւ հիմնադիր դոկ. Կ. Փաշայեանի տոկուն աշխատանքի և հաստատ հաւատի։ Դոկտորը, իր վրայ վերցնելով աշխատանքի գրեթէ մեծագոյն բաժինը, տարաւ բոլոր անհարմար պայմանները, դիմադրեց մի

շարք արգելքներին և «լսարանը» հարցերից ներկայ ծաղկած վիճակին [1]։

«Լսարանի» դրած նպատակը շատ պարզ է և ընդգծած։ Նա գալիս է օժանդակելու դպրոցին և նրա պակասը լրացնելու, նպաստելու ժողովրդի ընդհանուր զարգացմանը և ընդլայնելու նրա մտաւոր հորիզոնը։ Ահա նրա նպատակը։

Իր դրած նպատակին հասնելու համար, «լսարանը» կազմակերպում է պարբերական դասախօսութիւններ զանազան հետաքրքիր և օգտակար նիւթերի մասին, ինչպէս, գիտական, գրական, հասարակական, առողջապահական, պատմական, մանկավարժական և այլն։ «Լսարանը» ամեն շաբաթ գիշեր ունենում է դասախօսութիւն, ի հարկէ հերթով, մի շաբաթ Լիլաւա թաղում, միւս շաբաթ՝ Ղալայում։ Չունենալով իր առանձին հիմնարկութիւնը, «լսարանական» ընկերութիւնը դասախօսութիւնները տալիս է երկու թաղերի թատերասրահներում։

«Լսարանական» ընկերութեանը մասնակցում է ամեն մի հայ, ինչ սեռի և դաւանանքի պատկանելիս լինի նա։ Մի հիմնարկութիւն է դա, որի դռները բաց են բոլորի առաջ, անդամակցելու համար պահանջւում է միմիայն 6 դրամ, մօտ մէկ բուբլի։

Այստեղ էլ գործի ծանրութիւնը ընկած է գլխաւորապէս ուսուցիչների վրայ, որոնք առանց դրան էլ ծանրաբեռնուած են։ Բայց նրանք այդ տանում են առանց տրտունջի և դժգոհութեան։ Նրանք միաբերան համարում իրենց, որովհետև տեսնում են, որ իրենց ջանքը ապարդիւն չէ անցնում։

«Լսարանը» այնպիսի մի հիմնարկութիւն է, ուր ամեն մի մանկան, լինի նա երիտասարդ թէ ծեր, կին թէ օրիորդ, ուսուցիչ թէ արհեստաւոր, շատ ու շատ բաներ ունի սովորելու։ Այնտեղ, «լսարանում», քննւում են տեղական բարքերը և խիստ կերպով հաբւածում ազգի, անձիս սովորութիւնները և նախապաշարմունքները։ Այնտեղ, «լսարանում», ուսանողները սովորում է թէ ինչպէս պիտի կրթել, դաստիարակել փոքրերին, ինչպէս պիտի վարուել վարակիչ հիւանդութիւնների, համաճարակների դէպքում և ինչ միջոցներ ձեռք առնել դիմադրելու, կռուելու համար։ Այնտեղ, «լսարանում» քննւում, լուսա-

---

[1]) Դոկ. Փաշայեանի ջանքերով է կազմակերպւած նաև «հակալկոհոլական» ընկերութիւնը, որը, շնորհիւ իր մի շարք դասախօսութիւնների, ունեցաւ իր օգուտները, պաքսեց ալկոհոլի ուտելումները և սկզբում բաւականին ծաւալեց և համակրողներ ձեռք բերեց. բայց ցաւելով պիտի ասենք, որ ընկերութեանը տրւեց զրեթէ կրոնական և ֆանատիկ բնաւորութիւն, որի կողքից իր համակրութիւնը և շատերը հեռացան։

քանում է ընդհանրապէս մարդկային, մասնաւորապէս հայկական կեանքում կատարուած և կատարուող խոշոր երևոյթները և շարժումները... մի խօսքով «լսարանը» պատռում է ժողովրդի աչքը ծածկող խաւարը, բացում լայն, փայլուն հորիզոն և նա գիտակցաբար վերաբերուում իր շուրջը կատարուող ամեն մի երևոյթի։

Ահա ինչ դասախօսիչ և գրուիչ բան ունի «լսարանը»։ Որպէս զի ընթերցողը աւելի ամփոփ հասկացողութիւն կազմի դասախօսուած նիւթերի մասին, աւելորդ չեմ համարում առաջ բերել դրանցից մի քանիսը։

«Մանկանց կրթութիւնը. պարսկահայոց անցեալը. հրաբուղխներ և երկրաշարժ. Նանսէնի ճանապարհորդութիւնը. լեզուների ծագումը. ընկերական խնդիրներ. Աստրպատականի տնտեսական դրութիւնը. քաղաքական տնտեսութիւն. հայոց հին գրականութիւնը. կովկասի հայոց նորագոյն գրականութիւնը. Ալկոլականութեան վտանգները. Մխիթարեան միաբանութիւնները. մեր երիտասարդները. հայկական նախապաշարումներ. բարոյագիտութիւնից. XIX դարը գիտութեան տեսակէտից. XIX դարի էվոլիւցիան հայկական կեանքում. պատերազմ թէ խաղաղութիւն. վեներական ախտեր. ամուսնական խնդրի դիմաց. ընտանեկան դաստիարակութիւն։ Նախնական մարդը. բաբիզմ. կենդանական և բուսական աշխարհների աստիճանական զարգացումը. երեխաների լեզուն, երևակայութիւնը. երեխաների սնունդը...

Դասախօսութիւնները, ինչպէս տեսնում էք, եղել են ընտրովի, ուրեմն դրանց հասցրած օգուտներն էլ պիտի համարել անվիճելի։ Բայց ի հարկէ, պատահում էին մէկ-մէկ դասախօսութիւններ, որ ժողովրդին այնքան էլ մատչելի չէին լինում և անցնում էին համարեա ապարդիւն։ Այդ զգում էր ժամանակին և վարչութեան ամեն մի անդամը։ Մի պակաս, որ միշտ էլ աչքի է զարնել և նկատուել, այդ այն է, որ խիստ սիստեմ, յաջորդականութիւն չի լինում դասախօսութիւնների մէջ, նիւթերը տրուում են խառն, անկանոն, բացակայում է ներքին կապը։ Այդ պակասը միշտ էլ զբաղեցրել է վարչութիւններին, բայց շօշափելի արդիւնքի չեն հասել։ Դա մի անհրաժեշտութիւն է յամենայն դէպս, որը չը պիտի աչքաթող անել։

Դասախօսութիւնները կամաց-կամաց դառան պահանջ Թաւրիզի հայերի համար. յանախորդների թիւը սուտրացաւ և ունց շատ գոհացուցիչ քանակութիւն։ «Լսարանի» ամենափայլուն ժամանակամիջոցը, հօթամեայ գոյութեան ընթաց-

քում, կազմում են 1900—3 տարեշրջանները, երբ «լսարանը» համարում էր մի պատկառելի հիմնարկություն, կանգնած իր կոչման բարձրության վրայ։ Ինչ տարիներ էին։ Պատահում էր, որ «լսարանը» ունենում էր 200—250 ունկնդիրներ, ամբողջ թատերասրահը ծայրէիծայր լիքը։ Եւ ինչ հետաքրքրությամբ գալիս, լցւում էին։ Գանայք ոչ միայն աչքի ընկնող թվով յաճախում էին դասախօսություններին, այլ և՝ սկսեցին խօսել, խօսել ամագին բազմության առաջ, հարցեր տալ դասախօսության այս-այն կէտերը աւելի լուսաբանելու համար, երբեմն էլ նոյնիսկ վիճել։ Հարեմական կեանքից նոր դուրս եկած կանանց այդ քայլն արդէն մեծ առաջադիմություն էր։ Զըմոռանամ ասել, որ դասախօսությունից յետոյ լինում է քննադատություն, երկար վիճաբանություն։ Դասախօսությունը տեւում է մի ժամ, քիչ աւելի կամ պակաս, բայց քննադատությունը շատ անգամ մի քանի ժամ է տեւում։ Ունկընդիր հասարակության, մանաւանդ զարգացման ցածր աստիճանի վրայ կանգնածների համար, շատ բան լուսաբանում, ըմբռնելի է դառնում քննադատության, վիճաբանության ժամանակ, շատ անգամ հէնց դրա միջոցով էլ ժողովուրդը հասնում որոշ և ճիշտ եզրակացության։

Ընդհանրապէս համամարդկային, մանաւորապէս հայկական կեանքում կատարուող խոշոր երևոյթներին և դէպքերին, «լսարանական» ընկերությունը արձագանք է տալիս իր արտակարգ, սովորական դասախօսություններից դուրս, գրական հանդէսներով, որոնք օրանը տալիս են հանդիսաւորություն և փառաւոր տօն։ Նման հանդիսաւոր օրեր շատ է ունեցել «լսարանը»։ Է. Զօլայի և Հ. Արսէն Այտընեանի մահը, Գր. Արծրունու մահուան տասնամեակը, XX-րդ դարամուտը, Ղ. Աղայեանի գործունէության քառասնամեակը, արձագանք են գտել «լսարանում» և կազմել են նրա գործունէության մէջ մի մի անմոռանալի, խնկելի օր։ Ինչ ոգևորություն, ինչ խուռն բազմություն։ Բայց դրանց մէջ էլ կայ ամենափառաւոր օրը, դա Գ. Արծրունու, անմահ հրապարակախօսի տասնամեակի օրն էր, երբ լցել էր չըտեսնուած բազմությունը, 250-ից աւելի, և հասարակությունը ամբողջ 2½ ժամ ապրում էր մեծ հրապարակախօսի մարքերի աշխարհում, նրա գաղափարների մասին լսում, նրա մասին մտածում, նրա հետ կապուած նեբրական զգացմունքներով համակւում...

Առհասարակ արտակարգ դասախօսությունների ժամանակ լինում է նաև՝ երաժշտական բաժին, ստանաւոր-երգեր և մէկից աւելի դասախօսություններ։

«Լսարանը» լինելով գիտության տաճար, ժողովրդական համալսարան, բարձր է կանգնած միայն բոլոր հասարակական, կրոնական հիմնարկությունների, նա մի տեսակ ոգն է տալիս վերջիններին։ «Լսարանը» անոգոք կերպով քննադատում, ուղղություններ և խորհուրդներ է տալիս այս կամ այն ընկերության ու հիմնարկության. և այդ միշտ էլ լինում է ճիշտ և անաչառ։ Այդ շատ հասկանալի է. նախ՝ «լսարանին» մասնակցում է Թաւրիզի ամենաընտիր և զարգացած մասը, և երկրորդ, կազմած է զանազան կուսակցություններից։ Օրինակ, Թաւրիզի հայուհնաց բարեգ. ընկերության արհեստանոցների փակման հարցի վերաբերմամբ, եթէ չասենք մեծ, գոնէ յայտնի դեր խաղացել է «լսարանը»։ Նա առաջին անգամ լսելի և հեղինակաւոր ձայնով յարուցեց արհեստանոցների փակման հարցը և արծարծեց աղջկանց կրթությանը մեծ տեղ տալու խնդիրը—առաջարկելով բանալ դպրոցներին կից չորրորդ դասարան։

Աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ որոշ դասախոսությունների հրատարակումը առանձին բրոշիւրով կարող է անհրաժեշտ համարուել և օգտակար, «լսարանական» ընկերությունը իր վրայ է վերցրել նման դասախոսությունների հրատարակման գործը։ Մինչև այժմ «լսարանը» հրատարակել է միմիայն մի դասախոսություն, այն է դոկտ. Փաշայեանի «երեխաների մնունդը»։

Իւրաքանչիւր տարեշրջանում «լսարանը» ունենում է մօտ 22—28 դասախոսություն, իհարկէ՝ հաշուած նաև արտակարգ գրական-երաժշտական հանդէսները։ Դասախոսներին յարմարություն և դիւրություն տալու համար նիւթը աւելի լաւ ուսումնասիրելու և բաղմակողմանի դարձնելու, «լսարանը» բերում է զանազան գիտական և հասարակական անհրաժեշտ գրքեր և դնում դասախոսի տրամադրության տակ, որով կազմուում է մի հետաքրքիր գրադարան։

Ահա Թաւրիզի «լսարանը», ժողովրդական համալսարանը։ Ընդունելով նրա կատարելիք ահագին դերը պարսկահայերի կեանքում, ցանկալի էր, որ այդ գաղափարը աւելի ու աւելի տարածուի և ստանայ որոշ կազմակերպական գոյն։ Ճիշտ է, Պարսկաստանի այս և այն կողմում, ինչպէս Սալմաստ, Թէհրան և այլն, երբեմնակի լինում են ժողովրդական դասախոսություններ, բայց ոչ կանոնաւոր և մշտական. անհրաժեշտ է այդ դարձնել ճեայուն և յարատև՝ դնելով կանոնաւոր, շիտակ հիմունքների վրայ։

ՍԱԼՄԱՍՏԻ ՀԱՅԵՐԸ

I.

Սալմաստ, անշուշտ շատ անգամ է հնչել ձեր ականջին այդ անունը. դա այնքան էլ անծանոթ չէ ձեզ, շատ էք լսել այդ անկիւնի մասին։ Այո՛, գրել է, բայց այդ ամենը տխուր, անմխիթար է եղել, բոլոր այդ գրութիւններն էլ—ժանաւանդ վերջին տարիներս—ցաւոտ շեշտ են ունեցել։ Ո՞րքան դառն արկածներ, սարսափելի պատմութիւններ լսել, կարդացել էք այդ անկիւնի կեանքից։

Սալմասը համարւում է Ատրպատականի ամենահայաշատ գաւառը, որը ընկնում է պարսկաստանի հիւսիս - արևմտեան անկիւնում, Թիւրքիայի սահմանագծի վրայ։ Նրա սահմաններն են կազմում հարաւից՝ Ուրմի գաւառը, հիւսիսից՝ Խոյ գաւառը, արևելքից՝ Ուրմիոյ լիճը, արևմուտքից՝ Հարաուլի լեռները։

Մաջիդ-ուլ-Սալթանէ

Ահա այդ սահմանների մէջ է ձգւում Սալմասի դաշտավայրը, որը երեք կողմից շրջապատուած է լեռներով, իսկ արևելեան կողմում ձգւում է լիճը։ Մեծ չէ այդ տարածութիւնը, հաշւում են մօտ 500 քառ. վերստ։ Բայց գեղեցիկ, սիրուն է Սալմասի հարթութիւնը, իսկ գարնանը, ինչպէս և ամառուայ սկզբներին, Սալմասը ներկայացնում է մի հրաշալի, դիւթիչ տեսարան, որ նայողի սիրտը լցնում է բերկրութեամբ։

Գէտք է տեսնել և զգալ այդ։

Ճոխ է բնութիւնը Սալմասում. չկայ, չէք գտնի այդ

տարածութեան վրայ մի բուռն հող, մի թիզ տեղ, որ անբերրի, անպէտք լինի։ Սալմաստի հողը, ինչպէս Խոյինը, խիստ բերրի և ուժեղ է։ Շնորհիւ այս հանգամանքի, ինչպէս և բաւարար ջրի, ամբողջ գետինը ծածկուած է հացաբոյսերի արտերով, արհեստական անտառներով, այգիներով, բոստաններով և այլն և այլն։

Կլիման Սալմաստում բարեխառն է։ Եթէ համեմատելու լինենք Սալմաստի կլիման հարևան գաւառների կլիմաների հետ, մենք կտեսնենք, որ այդտեղ թէ Խոյից և թէ Ուրմիից ամառները աւելի մեղմ և զով է լինում, բայց պատահում են երբեմն սաստիկ շոգեր։ Ձմեռներն էլ այնքան ցրտեր չեն անում, թէև հարևան գաւառներում լինում են երբեմն սաստիկ ցրտեր։ Եւ չորս եղանակներն էլ գրեթէ հաւասար տևողութիւն են ունենում։

Բերրի հող, բարեխառն կլիմայ և բաւարար ոռոգման ջուր. ահա այն երեք հանգամանքները, որոնք փայլ, գեղեցկութիւն են տալիս Սալմաստի բնութեանը։ Թէև ամբողջ գաւառում մի հատիկ գետ կայ, այն էլ փոքրիկ, բայց ջուրը հատաքուում է բաւարար և ոռոգում է ամբողջ դաշտավայրը։ Զօլա գետը նոյն դերն է կատարում Սալմաստի համար, ինչ որ Զոթուր-չայը՝ Խոյ գաւառի համար։ Սալմաստի ջրերը բղխում են ընդհանրապէս Սալմաստի արևմտեան կողմերում գտնուած լեռների փեշերից։ Հէնց այդ կողմից է սկսւում Զօլա գետակը, որը ոլոր-մոլոր գալարումներով կտրում է ամբողջ գաւառը, անցնում է արևմուտից դէպի արևելք, ամէն ու ձախ ճառուներով ջուր է մատակարարում գիւղերին և գնում, թափւում է Ուրմիոյ լիճը։

Սալմաստցի կանայք

Բացի Զօլա գետակից կան և շատ փոքր ու մեծ առուներ, որոնք մեծ մասամբ սկիզբն են առնում դարձեալ արևմտեան բարձրութիւններից և զանազան ձևի ակոսներով Սալմաստի հարթութիւնը՝ ոռոգում են նրան։

Զօլա գետակի և առուների պակասը լրացնում են աղբիւրները։ Սալմաստի շատ տեղերում մարդ պատահում է աղբիւրների։ Թէև շատ է դրանց թիւը, բայց

փոքր են, չկան նշանաւոր աղբիւրներ, մեծ և յայտնի Փայաջուկի առուն, որը ոռոգում է գիւղի ամբողջ դաշտավայրը, կազմւած է աղբիւրներից։ Ընդհանրապէս Սալմաստի ջրերը անուշահամ են։ Խմելու համար գործ են ածում թէ աղբիւրների և թէ առուների ջուրը։

Դերիկի, Զնդաշտի և Փրչաւուշի մօտերը կան և այնպիսի աղբիւրներ, որոնց ջուրը շատ առողջարար է, և ունի զելտներեան ջրի յատկութիւն։ Այդ շրջանում կան և տաք ջրեր, որոնցով որոշ հիւանդութիւններ բժշկւում են։ Դերեկում կայ մի աղբիւր, որը դարերից ի վեր բղխում է, մի փոքր տեղ հոսում և լեռնանում. և այժմ, ամբողջ երկար տարիներ յետոյ, կազմւել է մարմարիոնի մի ահագին լեռնաբլուր։

Ասացի, Սալմաստի հողը բերրի է. դրա, ինչպէս և միւս նպաստաւոր պայմանների շնորհիւ, բերքը առհասարակ լինում է բաւարար։ Զրարքի մասերում բերքը տալիս է սովորաբար 1-ին՝ 6—7—8, աշող պայմաններում քիչ աւելի։ Իսկ անջրդի մասերում 1-ին՝ 12—15—20։ Հողի մեծ մասը յատկացնւում է գլխաւորապէս հացաբոյսերի, հունդեղէնների և բանջարեղէնների համար, ուր ցանում են՝ ցորեն, գարի, կորեկ, գետնախընձոր, կաղամբ, բոդկ, լոբի, գնջութ, դազար, սոխ, ճակընդեղ և այլն։ Ապա գալիս են այգիները, որ խաղողի որթեր են և պտղատու ծառեր՝ սալորի, ծիրանի, խնձորենի, ընկուզենի, փշատ, դեղձենի, տանձենի և այլն։

Իսկ երրորդ տեղը բռնում են արհեստական, ձեռատունկ անտառները, որոնք տարէց տարի, աւելի ու աւելի ընդարձակւում, լայն ծաւալ են ստանում։ Շատ վաղուց չէ, որ Սալմաստի ազգաբնակութիւնը ձեռնարկել է այդ, հազիւ 15—20 տարի լինի։ Բայց այժմ բոլոր գիւղերն էլ ունեն անտառներ և աւելի ու աւելի շատանում են։ Այդ արհեստական անտառները կազմւած են բացառապէս բարդի, մասամբ և ուռի ծառերից։ Արհեստական անտառներ տնկելու միտքը յղացել է այն ժամանակ, երբ զգալի կերպով թանգացել է փայտը. այժմ թէ ծածկի և թէ վառելու համար գործ են ածում գլխաւորապէս բարդի ծառեր։

Ահա Սալմաստի ամբողջ հարթութիւնը։

II.

Ահա այդ տարածութեան վրայ գետեղւած է մօտաւորապէս 60 գիւղ։ Ազգաբնակութեան մեծագոյն բաժինը կազմում են թուրքերը, ապա հայերը, քրդերը, ասորիները և հրէանե-

ը։ Մենք չենք խօսի բոլորի մասին, այլ կանգ կառնենք մի-միայն հայերի վրայ։

Սալմաստի ամբողջ ազգաբնակութիւնը հաշուում են մօտաւորապէս 40,000 բնակիչ, որի գրեթէ 1/4 մասը կազմում են հայերը։ Հայերի թիւը XIX դարի սկզբներում աւելի է եղել, քան այժմ։ Ռուս-Պարսկական (1828 թուականի) պատերազմին անմիջապէս յաջորդող մեծ գաղթականութիւնը դատարկել է Սալմաստը։ Հայերը, թողնելով Ատրպատականը, շարժւում անցնում են Արաքսի միւս ափունքները և ցրւում գրեթէ Երևանի նահանգի ամբողջ տարածութեան վրայ։ Այժմ Սուրմալու գաւառում, Հին Նախիջևանի շրջակայքում, կան մի շարք գիւղեր, որոնց բնակիչները Սալմաստի հարազատ գաւառներն են։

Այժմ կան Սալմաստում մի շարք գիւղեր, օրինակ, Հախվերան, Հէրանաւա, Շերոան, Ասլանիկ, Գարիկ և այլն, որոնք առաջ հայաշէն, հայերով լեցուն են եղել, այժմ նրանք դատարկուել են և այնտեղ բնակութիւն են հաստատել քրդերը և Թուրքերը։

Այնպէս որ պարսկահայերի այդ գաղթականութիւնից յետոյ հոսանքը՝ դէպի Ռուսաստան՝ թէև շատ դանդաղեց, բայց այժմ էլի գաղթում են, թէպէտ աննշան չափով։

Ճիշտ է, մի կողմից դատարկւում է Սալմաստը, հայերը գաղթում են, բայց միւս կողմից նա ներկայանում է որպէս գաղթավայր Վասպուրականում հեծող, տառապող հայերի համար։ Վասպուրականից Ատրպատական հայերի գաղթականութիւնը կատարւել է երկու անգամ։ Առաջին անգամ դեռ վերջին ռուս-տաճկական պատերազմի ժամանակ, երբ բովանդակ Վասպուրականը արձակ թատերարեմ էր ներկայացնում ընչաքաղց քրդերի սանձարձակ, բարբարոս աւերումների և ապատակութիւնների համար, Վասպուրականի Աղբակ գաւառից, որ սահմանակից է Սալմաստ գաւառին, հազարաւոր հայեր կեղեքւած, հարատահարւած, թողնում են իրանց հայրենի հողը, հայրենի երկիրը և չւում, պատսպարւում են Ատրպատականի զանազան մասերում, գլխաւորապէս Սալմաստ գաւառում։

Իսկ երկրորդ գաղթականութիւնը կատարւում է 1896—97 թուականներին։ Ահա այդ ժամանակ էր, որ էլի Աղբակի գաղթականութեան դուռը բացւեց և կամաց-կամաց դատարկւեց նաև։ Մինչև այժմ էլ բաց է այդ դուռը, փախչում է նա ազատելու արհաւիրքներից։

Երկրորդ անգամ գաղթած աղբակեցիների թիւը հաշուում

մօտաւորապէս 3000. դրա միմիայն աննշան մասը յետ դարձաւ, մնացածները բացառապէս լցուել են Սալմաստ։

Ահա Վասպուրականի այդ երկու գաղթականութիւնները որոշ չափով լցրին Սալմաստի գաղթականութիւնից առաջացած պակասը և բաց տեղերը, այնպէս որ էլի որոշ հաւասարակշռութիւն պահպանուել է ազգաբնակութեան քանակութեան տեսակէտից։

Այժմ Սալմաստի գանազան կողմերում ցրուած բեկորները, հնութեան մնացորդներն ևս գալիս են ապացուցանելու, որ առաջ հայերն են գերակշիռ տեղ բռնողները եղել։ Այդ բեկորների վրայ կան արձանագրութիւններ, բայց մարդ յարմարութիւններ չունի կարդալու։ Կենդանի է մնացել նոյնպէս արաբական տիրապետութեան մնացորդներից մի բեկոր, որ մինչև այժմ էլ կանգուն է և գտնուում է Հին-Քաղաքի մօտ։ Դա արաբական մինարէթ է, ուր պատրաստուում էին Բաֆֆիի Ասլանը, Կաբան և միւսները։ Բաֆֆիի ամեն մի ընթերցողը գիտէ անշուշտ այդ մինարէթի մասին։

Սալմաստի հայերը, որ այժմ հաշուում են մօտաւորապէս 10,000 հոգի, ցրուած են համարեա Սալմաստի ամբողջ տարածութեան վրայ։ Եղած 60 գիւղերից 23-ում հայեր կան։ Ահա այսպէս։

Գիւղեր	Տուն	Բնակիչ	Գրիշկ	24	125
Հաֆթվան	463	2600	Շեյթանաւա	19	87
Փայաշուկ	350	2000	Վարդան	21	105
Մահլամ	200	1100	Խարովա	36	140
Ղալասար	121	685	Քէօչամիշ	15	66
Սաւրա	168	809	Զէվաշուկ	6	33
Սարամերիկ	90	450	Ըռկաւա	14	70
Սառնա	90	450	Ռէյա	9	38
Հին-Քաղաք	125	625	Այան	21	115
Ախտրխանա	60	305	Աղիսայէլ	4	19
Ղզըլջա	47	262	Փաթաւուր	3	17
Քեալաշան	28	130	Գիւլիզան	2	19
			23 գիւղ	1916 տ.	10250 բն.

Այս 23 գիւղերից միմիայն Հաֆթվանը, Փայաշուկը, Մահլամը, Սառնան և Ղալասարն են զուտ հայաբնակ, և հէնց այդ գիւղերումն էլ կենդրոնացել է հայ ազգաբնակութեան մեծագոյն մասը. մնացած գիւղերում հայերը ապրում են խառն թուրքերի, ասորիների և քրդերի հետ։

Անհրաժեշտ եմ համարում շեշտել այն բանի վրայ, որ թուերը և ընդհանրապէս ստատիստիկան Պարսկաստանում թերի

պիտի ընդունել։ Ռուսաստանը հազարաւոր խոչնդոտների է պատահում Պարսկաստանում ճիշտ թուր, և ճշգրիտ վիճակագրութիւն առաջ բերելիս։ Այստեղ, Իրանի երկրում, ոչինչ չը-կայ հիմնաւոր, պարզ։ Իսկ այսպիսի վայրում. ինչպիսին Սալ-մաստն է, ուր ժողովուրդը միշտ էլ շարժման մէջ է, գաղթում է, տեղափոխւում է մի գիւղից միւսը, կարծում եմ, էլ աւելի վատթար է։ Կարող է պատահել. և զարմանալի էլ չէ, որ հէնց մի երկու ամսից յետոյ, Գիւլիզանի հայերը գնան ժողովել մի մեծ գիւղ, մի խօսքով գիւղից մի քանի տուն տեղափոխւի մի ուրիշ գիւղ։

Սալմաստի գիրը առհասարաւելի գեղեցիկ, նահանգի գիւղնայն դէպս, մի թիւն կայ Սալ- և Երևանի, մաժալու գաւառի դա զարմանալի նոյն ժողովուրդն նուր հայրենիքի

Միհարէր

Ընդհանրագիւղերի տները ջնապատուած են հայաբնակ գիւրակ գեղեցիկ են, քան Երևանեան գիրը։ Բայց, յատիպատ նմանումաստի գիւղերի նաւանդ Սուրգիւղերի մէջ։ Եւ էլ չէ, քանի որ է և մի ընդհանրաւակներ են։ պէս Սալմաստի բարձր են, շրբարձր պատ-

տերով, ասես պարիսպներ լինեն, մանաւանդ Ղալասարի, Փաչաջուկի և այլն։ Տներն ընդարձակ են, ներսից գեղեցիկ, թէև դրսից ոչինչ չի կարելի իմանալ, քանի որ փակւած են։ Ասենք Պարսկաստանի բոլոր կողմերում այդպէս է, միայն Թաւրիզում վերջին մի երկու տարին սկսել են լուսամուտներ բանալ փողոցի վրայ, այն էլ շատ բարձրից և փոքր դիրքով։ Տան բակերում կան ծառաստաններ, գեղեցիկ մարգեր։ Փողոցները լայն են, բայց ոչ էլ այնքան մաքուր. ամեն տեղ էլ կուտակւած կոնեանէք անասունների աղբը։

Սալմաստի գիւղերի գեղեցկութեանը փայլ տուող հանգամանքներից մէկն էլ այն է, որ գրեթէ բոլոր գիւղերն էլ, մանաւանդ հայաբնակ գիւղերը, շրջապատուած են այգիներով և անտառներով։ Եւ գարնանը երևում է ամեն ինչ կանաչ, սիրուն, և այդ կանաչի ընդհանուր գեղեցկութեան մէջ ասես նստած հանգստանում է գիւղը։

Ոչ հայաբնակ գիւղերը անհամեմատ կեղտոտ են, ագեղ,

զուրկ գիղեցիկ այգիներից, ծառաստաններից. տները ցածր, փողոցները չափից դուրս նեղ և կեղտոտ։ Անծանօթ աչքն անդամ անմիջապէս կարող է նկատել այդ տարբերութիւնը։ Հէնց այն գիւղերում, ուր հայերը ապրում են խառն Թուրքերի հետ, իսկոյն աչքի է զարնում այդ երևոյթը՝ հայերի Թաղը սիրուն է համեմատաբար, փողոցները լայն և մաքուր, տները կոկիկ և այլն։ Իսկ Թուրքերի Թաղը, ասես, տգեղութեան և ապականութեան մէջ է նստած. այդ նկատելի է ոչ միայն Սալմաստի գիւղերի մէջ, այլ և այնտեղ, որտեղ կան հայեր, և միշտ էլ նա տարբերւում է իր շնորհքով և ապրուստով։

III.

Ի՞նչ է ներկայացնում Սալմաստի հայերի տնտեսական վիճակը։ Հարցիս պատասխանը այնքան էլ միթԹարական չէ։ Սալմաստի ազգաբնակութիւնը ընդհանրապէս, իսկ հայերը մասնաւորապէս, պիտի լցնեն մի շարք անյագ որկորներ, պիտի բաւարարութիւն տան մի շարք արդարացի և Թէ անարդար պահանջների։ Ի՞նչ ունեն դրանց դիմաց։

Սալմաստի հայ ժողովուրդը ընդհանրապէս գործ ունի հողի հետ։ Արհեստներ գրեթէ չկան. մատների վրայ կարելի է հաշուել բովանդակ Սալմաստում եղած արհեստաւորներին։ Մի անՆշան, չնչին տոկոս են կազմում։ Մնում են վաճառականները։ Ճիշտ է, Սալմաստում կան վաճառականական տներ, որոնք զբաղւում են գլխաւորապէս հում և անմշակ նիւթերի արտահանութեամբ, բայց դրանց Թիւն էլ շատ փոքր է։ Սալմաստի վաճառականները արտահանում են Ռուսաստան գլխաւորապէս սաթը, չոր միրգ, ինչպէս օրինակ նուշ՝ իր տեսակներով և ուրիշ մրգեղէններ։ Կան նաև բազազներ, բայց շատ փոքր Թւով։

Առաջ, դեռ մի քանի տարի առաջ, հայերը անհամեմատ տնտեսապէս աւելի բարեյաջող կացութեան մէջ էին գտնւում, քան այժմ։ Եւ այդ շնորհիւ ճշիլագործութեան։ Այդ արհեստը դեռ շատ վաղուց ծանօթ էր Սալմաստի հայերին և ահագին օգուտ էին վերցնում նրանից։ Հայերը բամբակէ Թելից կտաւ էին գործում, ներկում, շիլա շինում և արտահանում ոչ միայն Պարսկաստանի զանազան կողմերը, այլ և Ռուսաստան, գլխաւորապէս Երևանի նահանգը։ Շիլագործութեան համար, ի հարկէ, կային առանձին գործարաններ, ուր աշխատում էին արհեստաւոր գործաւորներ։ Այդ ժամանակներում, ինչպէս պատմում են գիւղացիք, կեանքը եռում էր, պարապ մարդ

չկար, ամեն տեղ աշխատանք։ Փայաջուկը, Ղալասարը և Հաղբ-թվանը, ուր կենտրոնացած է եղել շիլագործությունը, տուաւոնները իրանց շաչիւնով, աղմուկ աղաղակով գիւղացիների սիրտը լեցնում էին բերկրությամբ։

Այդ արդիւնաւոր աշխատանքը տևեց մինչև 1895 թուականը, մինչև այն ժամանակ, երբ առաջին անգամ ռուսական համեմատաբար նուրբ, ճաշակաւոր և միևնոյն ժամանակ արժան չիթը ընդհանուր գործածության մէջ է մտնում թէ Երևանեան նահանգում և թէ Պարսկաստանում։ Սալմաստի շիլագործները՝ լինելով անպատրաստ և անկարող մրցելու ֆաբրիկայի դէմ, տեղի են տալիս, և ընդմիշտ դադարում է այդ արհեստը, իսկ գիւղացիները մնում են պարապ, անգործ։ Դա խիստ տնտեսական հարուած էր Սալմաստի հայերի համար։

Այդպէս ուրեմն, Սալմաստի հայ ազգաբնակությունը չունենալով ուրիշ արդիւնաւոր զբաղմունքներ, նա կպել է հողին և յոյսը նրա վրայ է դրել։ Բայց ինչ է տալիս հողը նրան։

Առաջին գլխում նկատեցինք, որ Սալմաստի հողը բերրի է, ուրեմն պիտի յուսալ, որ բաւարարություն կտրուի բոլոր պահանջներին։ Տեսնենք։

Սալմաստում, ինչպէս և ամբողջ Ատրպատականում, հողատիրական սիստեմը զանազանակերպ է։ Սալմաստի գիւղերը բաժանուած են երեք կարգի՝ խալիսա, աղալը եւ համփալը։

Այն գիւղերն են կոչւում խալիսա, որոնք արքունի սեփականություն են համարւում։ Աղալը այն գիւղերն են կոչւում, որոնք աղաների սեփականությունն են։ Այնպէս որ աղան իր սեփական գիւղը, իր հողը տալիս է գիւղացիներին, որոնք բնակություն են հաստատում, հողը մշակում և արդիւնքի կէսը կամ 1/3 աղային տալիս, ի հարկէ, ամբողջ աշխատանքը գիւղացիներից։ Բայց ժողովուրդը սեփական համարելու ոչինչ չունի, ամեն ինչ աղայինն է, տունն էլ իրանը չէ, աղան միշտ էլ կարող է բռնել ձեռքից և դուրս շպրտել։ Իսկ պակասը լրացնում է գեօրգեգաները, ձրի աշխատանքը, որը խեղճ գիւղացու հոգին է հանում։

Իսկ համփալը կոչւում են այն գիւղերը որոնք թէև ունեն աղաներ, բայց միայն հողային տուրք են տալիս 1/8, 1/9, բայց հողը գիւղացիների սեփականությունն է, նրանք կարող են նոյն իսկ հողը ծախել. Փայաջուկը, օրինակ, համփալը է, թէև ունի գիւղատէր, ոլին տալիս 1/8, բայց հողը, այգին, տունը իր սեփականությունն է։

Առհասարակ գիւղատէր աղաները կամ նրանց ներկայա-

ցուցիչները անխիղճ կերպով ճնշում, հարստահարում են գիւղացիներին և նոցա այդպիսով խեղճացնում։

Բացի այդ հարկից, գիւղերը տալիս են նաև արքունի տուրք։

Ահա այսպէս.

Ցորենի, մի քեռան [1]) տեղ	12	դր.	10	շհ.
Անտառ	12	»	10	»
Աւելոյտ, այգի՝ նոյնը, միայն ցանելու տեղը։				
Սոխ և բոստան քեռան տեղը	25	35	դր.	
Մարգագլ. (տ. 14 տ. սկսած)	12	դր.	10	շհ.
Տուն-ծուխ	1	»	10	»
Կով, կթանից	1	»	5	»
Ձի, էգ	2	»	10	»
Էշ	2	»	10	»
Գոմէշ	2	»	10	»
Ոչխար, կթան	1	»	4	»

Ահա արքունի տուրքերը։ Այս նոյն չափերն են համարեա ամբողջ գաւառում, աննշան տարբերութեամբ։ Շատ անգամ պատահում է, որ գիւղատէրը, տէրութեան ներկայացուցիչը կամ հարկ հաւաքողները այդ նշանակուած, որոշուած տուրքի կրկնապատիկը և դեռ աւելին են հաւաքում գիւղացիներից։ Սահմանուած գումարը հասցնում են արքունի գանձարանը, իսկ մնացածն էլ գնում իրանց անյատակ գրպանը։

Բայց այդ դեռ բոլորը չէ։ Ահա սարփաբաստը։ Այդ պաշտօնեան ասես կանչուած է միայն հարստահարելու ժողովրդին, թէև նրա պաշտօնն է օգնել, պաշտպանել քրիստոնեայ ազգաբնակութեան։ Բայց «պաշտպանել» բառը այժմ միայն հեգնութիւն է, դառն հեգնութիւն, որ խփում է իւրաքանչիւր հայի երեսին։ Նա իրօք պիտի պաշտպանէր քրիստոնեաներին հաքիմի դէմ, այժմ ընդհակառակն է, կարծես։ Պատմում են դատաւորներ, որ աւելի բարեհաճ աչքով են նայում հայերի վրայ, քան սարփաբաստը։ Օրինակ, Մաջիդ-ուլ-Սալթանէն, որը շատ հաճակրելի անձնաւորութիւն է, հմուտ պաշտօնեայ էր և բաւականին ազատ մտածող։

Սալմաստի հաքիմը, սարփաբաստը և ուրիշ պաշտօնեաները լինում են Դիլիմանում, որը հաստատուած է Սալմաստի կենդրոնական քաղաքը և ունի մօտ 1000 տուն բնակիչ, գուտ թիւրքաբնակ։ Դիլիմանումն է գաւառի փոստատունը, հեռա-

---

1) Սալմաստում չափ համարում է քեռը, որ հաւասար է ուսաց 10 քառ. սաժ։

գրաստունը, բանտը, մաքսատունը, շուկան։ Ամեն կիրակի օր Դիլիժանում լինում է բազար, ուր լցուում են ծախելու ու առնելու բոլոր գիւղերից ժողովուրդը։ Կիրակի օրերը Դիլիժանում առհասարակ խաղաղ կեանքը եռուն, շարժուն և հետաքրքիր է դառնում։ Գարսկա-Թիւրքական սահմանագլխում, Սալմաստի շրջապատող բարձրութիւնների վրայ բուն դրած քրդերը անդադար, գլխաւորապէս գարնանը և աշնանը, յարձակուում են դաշտային ժողովրդի վրայ, աւերում, ասպատակում, մի պատառ խլում և նորից քաշուում իրանց գիւղերը։ Քրդական ասպատակութիւնները և աւառաբութիւնները շատ անգամ կատարուում են հէնց օրը ցերեկով, պարսիկ պաշտօնեաների ներկայութեամբ։ Մի քանի գիւղեր, որոնք ենթակայ են քրդերի անմիջական յարձակումներին, հնարաւորութիւն չունեն անգամ նախիր պահել, որովհետև մէկ էլ յանկարծ ցած կիջնեն քրդերը և կտանեն ասուարը

Իսկ եթէ այդ բոլորի վրայ աւելացնենք տարէց տարի կեանքի պահանջների բարդանալը, կենսական պիտոյքների թանգանալը, սարսափելի «ջարմայի» կծիկը, կարծում ենք, Սալմաստի հայերի տնտեսական վիճակի կերպարանքը աւելի պարզ և աւելի որոշակի կլինի՝ բայց միևնոյն ժամանակ տագնապալից, անմխիթար։

Ի՞նչ ունի Սալմաստի հայը, ինչպէս դիմանայ, ինչպէս բաւարարութիւն տայ այդ պահանջների շղթային։ Նա պանդխտում է։ Սալմաստցու պանդխտավայրերն են Անդրկովկասը և Սև ծովի ափերին եղած նաւահանգիստները։ Նրանք զբաղուում են ընդհանրապէս ժլատութեամբ, դունապանութեամբ, գործակատարութեամբ և փոքր առևտրով։ Սալմաստը ահագին տոկոս պանդուխտ է տալիս. եթէ հաշուենք միայն աշխատելու ընդունակ մարդկանց թիւը, կըտեսնենք, որ նրանց մօտ 70%. պանդուխտ է, նոյնիսկ աւելի էին տալիս։ Այդ ի հարկէ, սարսափելի թիւ է։ Աւելի պանդուխտներ են տալիս Սաւրան, Փայաջուկը, Հաֆթվանը, Մահլամը, համարեա ողջամարդկանց կէսը, դեռ շատ աւելին։

Զարմանալի է, շրջում էք Սալմաստի հայաբնակ գիւղերը և ի՞նչ, չկան ողջամարդիկ, կամ եթէ կան, շատ քիչ։ Իսկ երիտասարդներ չկան ու չկան, այդ կողմից խեղճ են մանաւանդ Փայաջուկը, Սաւրան, էլի մարդ երիտասարդների է պատահում Հաֆթվանում։ Թուասատանը լափում է բոլոր պէտքական, թարմ ոյժերը և թողնում միայն պառաւները։ Շնորհիւ ողջամարդկանց երկար բացակայութեան՝ կանայք անհաւատարիմ են և անբարոյականութիւնը որոշ չափով տարած-

ւած. իսկ շնորհիւ պանդուխտ ամուսիններին Ռուսաստանից բերած հիւանդութիւնների, Սալմաստում տարածւած է զանազան վարակիչ հիւանդութիւններ։ Գատահում են նոյնիսկ 15—20 տարեայ պանդուխտներ։

Սակաւ չէ այն պանդուխտների թիւը, որոնք միանգամայն գերի են դառնում անառակութեան, ալկոհոլամոլութեան և ուրիշ մի շարք մոլութիւնների։ Անբարոյականութեանը նպաստում են յայտնի չափով նաև օտարականները, տականք օտարականները և տեղացի կանայք ասես ուրախութեամբ ընկնում են նրանց գիրկը։

IV.

Սալմաստը, լինելով Ատրպատականի ամենահայաշատ գաւառը, հոգևոր իշխանութեան կողմից առանձին ուշադրութիւն է դարձնւում և նա կազմում է առանձին փոխանորդութիւն։ Վերև յիշատակւած մի շարք կեղեքումների, ապատակութիւնների և ոտնձգութիւնների առաջն առնելու համար, միշտ էլ անհրաժեշտ է համարւել Սալմաստում ունենալ առանձին փոխանորդ, աշխուրջ և կարող յաջորդ։ Բայց սրտի ցաւով պիտի նկատենք, որ շատ դէպքերում նա էլ մի առանձին ծանրութիւն է լինում հայ ժողովրդի քամւած վզին. մի կողմից էլ նա է հարստահարում, իր գրպանը ուռցնում։ Իսկ դրանց դիմաց եղել են այնպիսի յաջորդներ, որոնք իսկապէս կանգնած են եղել իրանց բարձրութեան վրայ և մեծ օգուտներ տւել Սալմաստի խղճուկ հայ ժողովրդին։ Շատ անգամ էլ յաջորդները անկարող են լինում օգտակար հանդիսանալ ժողովրդին իրենցից բոլորովին անկախ պատճառներով։ Սալմաստում յաջորդը հազիւ մի քանի ամիս է մնում և իսկոյն հեռացնում կամ յետ են կանչում։ Այս 1½ տարեայ ընթացքում եկել են Սալմաստ երեք վարդապետներ, Ընծակ, Մատթէոս և Մաշտոց։ Վերջինս աւելի քան կարող էր օգտակար լինել, բայց, ցաւելով պիտի ասել, մեր հոգևոր իշխանութիւնը իսկոյն յետ է կանչում յաջորդներին, երբ մի պարսիկ պաշտօնեա բողոքում է, առանց պահանջելու գործի խիստ քննութիւնը. ասես փոխանորդութիւնը դարձել է մի խաղալիք և երբ ուզենան թուրք պաշտօնեաները կարող են հեռացնել։

Այնպէս որ յաճախ Սալմաստը մնում է թափուր, հոգևոր գործերը վարում է դործակալ քահանան, որը միանգամայն անկարող է և անընդունակ այդ ծանր պաշտօնի համար։ Եթէ այդպէս պիտի շարունակւի յաջորդութիւնը և ամեն մի հաստ-

ռակ դէպքում յետ կանչի կամ հեռացի, ուելի լաւ է հէչ չուղարկել և վերացնել փոխանորդութիւնը։

Սալմաստը, համեմատած միւս գաւառների հետ, շատ հարուստ է քահանաների կողմից։ Այժմ Սալմաստի բոլոր գիւղերն էլ համարեա ունեն իրանց քահանաները, միայն մի քանի փոքր գիւղեր չունեն, նրանք էլ օգտւում են մօտակայ գիւղերի քահանաներից։ Սալմաստում եկեղեցիների թիւը հաշւում են 27, որոնք կանգուն են։ Սալմաստի բոլոր քահանաներն էլ, համարեա առանց բացառութեան, տգէտ և թերուսներ են. մի հատ լուրջ և կրթւած քահանայ չկայ դրանց մէջ։ Այդ քահանաները գիրք ու հեղինակութիւն չունեն ժողովրդի մէջ. և դա հասկանալի է, քանի որ նրանք իրանց մտաւոր կարողութեամբ, իրանց զարգացմամբ գրեթէ հաւասար մակերեսոյթի վրայ են կանգնած հասարակ ժողովրդի հետ։ Բացի այդ, նրանք առանձին բարոյական ոյժ էլ չունեն, նոյն իսկ բացակայում է հասարակ յարգանքը։

Բուրքանշիր քահանայ առնւազը արդիւնք կունենայ մօտաւորապէս տարեկան 60—120 թուման, որը Սալմաստի համար այնքան էլ անբաւարար չէ։ Այս էլ ասեմ, որ բոլոր քահանաներն էլ, շատ աննշան բացառութեամբ, հողեր ունեն և պարապում են երկրագործութեամբ։

Սալմաստի եկեղեցիները մնտեսապէս շատ աննախանձելի վիճակի մէջ են, նրանք չունեն ոչ շարժական և ոչ անշարժ կայք, իսկ եթէ առաջ մի քանիսը ունեցել են կալւածներ, այն էլ այժմ անցել են ուրիշների ձեռքը, չըհաշւած մի երկու բացառութիւնները։

Բացի 27 կանգուն եկեղեցիներից, Սալմաստում կան վանքեր, որոնց մէջ ամենայայտնին է Դէրիկի ս. Աստուածածնի վանքը, որ այժմ բոլորովին աւերակ է։ Դէրիկի վանքը գտնւում է Սալմաստի արևմտեան մասում, Հին-քաղաքից դէպի արևմտա-հիւսիս երկու ժամ հեռաւորութեան վրայ. ընկած է ձորի մէջ, փուած լեռնաբլուրի լանջի վրայ, որը շրջապատւած է լեռնաշղթաներով։ Օդը սքանչելի է, աղբիւրի ջրերը անուշ և լաւ, մի գեղեցիկ տեսարան և դիրք է ներկայացնում։

Դեռ 90-ական թւականներին՝ հանգուցեալ Թաւաքալեան վարդապետի անդուլ ջանքերով վանքը նորոգւեց, կալւածներ գնեցին և կարգին վանահայրութիւն հաստատեցին։ Լաւ էին այդ տարիները, ոգևորութեան տարիներ։ Սալմաստի ժողովուրդը միշտ էլ հիացմունքով, յափշտակութեամբ է յիշում այդ ժամանակները։ Բայց չի անցնում մի քանի տարի, երբ 1894 թւին քրդերը, յարձակւում են Դէրիկի վրայ, քարուքանդ են

անում, իսկ միաբանութիւնը անկարող է լինում պաշտպանել և ամեն ինչ սատանում է իր առաջւայ տեսքը։ Այժմ միայն մնում է վանքի մի քանի բեկորը, իսկ նրա ջրից, նրա գեղեցկութիւնից օգտւում է քիւրդը. այժմ հնարաւորութիւն չկայ նոյնիսկ ուխտի գնալու, այդ էլ է դադարել։

Բացի Դէրիկի վանքից, յիշենք նաև ս. Թադէոսի վանքը Հաֆթվանում։ Կան նոյնպէս մատուռներ, ինչպէս օրինակ, Հին-Քաղաքում ս. Օհաննէսի մատուռը, Սառնայում ս. Յովհաննէսի, Զէվաջուկ գիւղում և այլն։

Սալմասցի երիտասարդ

Կրթական գործում ընդհանրապէս, վատթար դել։ Թէև պիտի մատի հայ ժողովուրդը վաղուց գգացեան անագին նրա խիստ անհրաժեշտութիւնը. վաղուց ըստ արանները, կրթութիւններ բաղուսաւորութիւն, բաստել, բայց ցել են գրեթէ արդիւն։ Իրաքիչ է փոխւել։ Սալմասի դպրոցների կեանքը թողնւած է պատահականութեան, կեանքի խաղին, ինչպէս սրանից տասը տարի առաջ։ Մենք կդժւարանանք մատնանիշ անել մի դիւղ, որ մի քանի տարի շարունակաբար ունեցած լինի կանոնաւոր դպրոց։ Դրանց գրութիւնը միշտ էլ հղել է խախուտ, երեքուն, իսկ հիմքը աւազի վրայ դրւած։

Ահա ինչպէս։ Համարեա ոչ մի դպրոց սնտեսապէս ապահովւած չէ. ոչ դրամագլուխ ունեն, ոչ էլ ուրիշ մշտական բաւարար աղբիւրներ։ Տարեկան բիւրժէն ծածկւում է այս կամ այն անձերի նւէրներով, ներկայացումներով, աշակերտների թոշակներով և ուրիշ պատահական միջոցներով։ Ո՞վ էր տեսել, որ ուսուցչի պայմանի մէջ լինի և այսպիսի կէտ, թէ նա պարտաւորւում է ամբողջ տարում երեք ներկայացում տալ։ Բայց սա Սալմաստի դպրոցական կեանքում սովորական երևոյթ է։ Սալմաստում, մասամբ և ամբողջ Ատրպատականում,

ուսուցիչը իր ոռնկի մեծ մասը, եթէ ոչ բոլորը, հէնց ինքն է աշխատում, իւր սրիւն քրտինքով։

Դպրոցների անկանոն, խախուտ լինելուն նպաստում է և այն հանգամանքը, որ Սալմաստում տեղացի ժողովուրդը միշտ էլ կրաւորական դիրքի մէջ է եղել, գեկավարները, գործի ոգին կազմել են դրսեցիները։ Եղել է, որ նրանք դպրոցները բացել, կանոնաւոր ընթացք են տուել, հեռացել են նրանք, նրանց հետ աւերուել է և գործը։ Ամենայուսահատականն այն է, որ ասես մարդ գալիս է այն ցաւալի եզրակացութեան, թէ սալմաստցին առանց դրսեցու նախաձեռնութեան ոչինչ անկարող է անել, ասես նա ինքնուրոյնութիւնից, կեանքի մղումից զուրկ է։ Մարդ դժուարանում է ցոյց տալ մի դպրոց, մի հասարակական հիմնարկութիւն, մի օգտակար ձեռնարկութիւն, որի նախաձեռնողը ինքը բնիկ հայը լինի։ Այժմ եթէ մի քանի դպրոցներ կան գիւղերում, որոնք փոքր ի շատէ կանոնաւոր են, էլի շնորհիւ դրսեցիների։

Դեռ տարիներ առաջ կարիք է զգացուել մի կենդրոնական դպրոցի Սալմաստում, բայց մինչև այժմ մի շօշափելի, դրական գործ չի արուած, թէև մօտ 11,000 բուբլի կայ արդէն Սալմաստի կենդրոնական դպրոցի անունով։ Ատրպատականի նախկին առաջնորդ Ե. վ. Մուրադեանը, իրան յատուկ մակերևոյթային «ոգևորութեամբ», էլի արծարծեց այդ հարցը, պոչին էլ կպցրեց «արհեստագիտական» «գիւղատնտեսական» խօսքերը, հող էլ առաւ, յոյսերով կերակրեց ժողովրդին և հեռացաւ... Այո, միայն յոյսերով կերակրեց։ Այժմ Հաֆթվանցիք ուզում են կենդր. դպրոցի համար յանձնուած հողը ծախել։

Այժմ մանաւանդ, երբ արդէն բաւարար թւով դպրոցներ կան Սալմաստում, անհրաժեշտութիւն է զգացուում մի կենդրոնական, գէթ չորսդասեան դպրոցի, որովհետև մեծամասնութիւնը անկարող է իր տղաներին դրկել Թաւրիզ կամ Կովկաս ուսումը շարունակելու։

Դեռ վաղուց Ղալասարում կազմուած «Ֆաֆֆի» կանանց բարեգործական ընկերութիւնը, պիտի ասել, իր իսկական նպատակին չէ ծառայում։ Նա մի վարժուհի է պահում Ղալասարի դպրոցում և ուրիշ ոչինչ։ Բայց այդ գիւղը առանց մազաչափ անգամ ծանրութեան կարող է պահել կանոնաւոր միդասեան, երկդասեան դպրոց։ Ուրեմն, էլ ինչու համար է ուրիշի բարեգործութիւնը։

Եթէ իսկապէս կանանց բարեգործական ընկերութիւնը ուզում է օգուտ տալ, նպաստել իգական սեռի կրթութեան, պարտաւոր է միանգամայն փոխել բարեգործական այդ ձևը։

Առանց այդ էլ Ղալասարը կարող է վարժուհի պահել։ Թող կանանց բարեգ. ընկերությունը դպրոց բանայ, նպաստի այնպիսի գիւղերի, որոնք իրօք անկարող են և օգնելու կարօտ։ Ահա այդ դէպքում միայն նա արած կըլինի բարեգործություն։ Այս է մեր բարեկամական և անկեղծ խորհուրդը։

Պարսկական ազդեցությունը ինչպէս Ատրպատականի ուրիշ անկիւններում, նոյնպէս և Սալմաստում ապրող հայ ժողովրդի վրայ զգալի է։ Բայց մենք այն զօրեղ ազդեցությունը, որ տեսնում ենք Խոյում, նոյն չափով այստեղ չկայ։ Այստեղ համեմատաբար ժողովուրդը փոքր ինչ բարձր է կանգնած այդ տեսակէտից, գուցէ շնորհիւ այն հանգամանքի, որ այստեղ հայերը էլի խմբված, կենդրոնացած են ապրում և այնքան չեն շփվում թուրքերի հետ։ Բայց մի բան, որ խիստ աչքի է զարնում և ընդհանուր է համարեա ամբողջ պարսկահայերի մէջ, դա անկեղծության բացակայությունն է։ Այդ տեսակէտից պարսկահայերը նման են իրար. ի հարկէ, մի տեղ դա աւելի չափով է տիրում, մի ուրիշ տեղ պակաս. բայց այդ գիծը անպայման կայ։ Այդ յատկությունն էլ, ես կարծում եմ, պարսկական կեանքի ազդեցության անմիջական հետևանքն է։ Անկարելի է անպայման հաւատ ընծայել Սալմաստի, ընդհանրապէս Ատրպատականի հային. նա կազմում է պարսկական խորամանկությունների մի հիւսուածք։ Ճիշտ խօսք, անկեղծությունից բղխած խօսք շատ հազւագիւտ դէպքերում կլսէք Սալմաստի հայերից. այդ էլ բացառությունների շարքում պիտի դնել։ Շատ բնորոշ է և մի հանգամանք։ Երբ մէկը ուզում է գնալ Ատրպատականի այս կամ այն գաւառը և դիմում է մի ծանօթի և փորձուածի ու խորհուրդ հարցնում, անպայման ամենից առաջ այս պատասխանն է ստանում. «Ոչ ոքի չպիտի հաւատալ, չպիտի խաբել նրանց շողոքորթությունից»։

Սալմաստի հայերի մէջ անկեղծ, փոխադարձ սէր, բարեկամական յարաբերություն, համարեա չկայ, հէնց դրա անմիջական հետևանքն այն է, որ յանախ հայերը վազում են դատարան գանգատի, գրպարտելու, հարևանին ջնասելու։ Հէնց պարսիկ պաշտօնեան էլ այդ է ուզում։ Առանց արդարությունը երևան հանելու, նա տուգանք է առնում և՛ սրանից և՛ նրանից։ Ի՞նչքան խոշոր գումարներ են տուժել հայերը հէնց այդ պատճառով։ Ամեն մի հասարակ բանի համար հայը վազում է դէպի Դիլիման և «ջառմայի» տակ գցում հարևանին։

Ուրախությամբ պիտի նկատեմ, որ երկար և «դաառն փորերից» խրատեցին հայերը, հազիւ խելքի եկան, զգացին իրանց այդ տգեղ և իրա՞ համար կորստաբեր սովորության

հեռանքը, այժմ կամաց-կամաց նուազում է զանգուածների թիւը, հեռանում է այդ վատ սովորութիւնը։

Ահա Սալմաստի հայերը, պարսկահայերի մի բեկորը, իր ցաւերով ու տառապանքով։ Դա միևնոյն ժամանակ մի անկիւն է, որը լայն և ազատ, կարիքներով լի ասպարէզ է ներկայացնում եռանդուն, գործին նուիրուած և պատրաստուած գործիչի համար։

ԿԱՊՈՒՏԱՆԻ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԵՒ ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՓԵՐԸ

I.

ՈՒՐՄԻԻ ՀԱՅԵՐԸ

I.

Ամբողջ Պարսկաստանում կայ միայն մի նշանաւոր լիճ, նշանաւոր գէթ մեծութեամբ, դա Կապուտանն կամ Ուրմին է։ Ուրմի լիճը տարածւում է Ատրպատականի համարեա կենտրոնում, որի շուրջը խմւած է ազգաբնակութեան նշանաւոր բաժինը։ Այս լիճը անցեալում աւելի ընդարձակ և մեծ է եղել, քան այժմ։ Ցարեց-տարի ջուրը պակասում է, ցամաքային ափերը աւելի ու աւելի ընդարձակւում և ջրի տակից երևում են նոր-նոր բլուրներ և լեռներ։ Այս լեռներից կամ կղզիներից նշանաւորներն են Իսպիր-դաղ, Գոյուն-դաղ, Ղաթըր-դաղ, Էշշակ-դաղ և այլն։ Այս կղզիներից մի քանիսը դեռ անտառապատ են։ Այս լիճը թէև բռնում է մօտ 4500 քառ. վերստ տարածութիւն, բայց այնքան էլ օգտակար չէ ազգաբնակութեանը։ Նա միայն արտադրում է մեծ քանակութեամբ աղ։ Կապուտանի ջուրը առհասարակ ծանծաղ է, ամենախոր տեղերը հազիւ 25—30 արշին լինեն։ Հէնց դրա համար էլ մեծ նաւեր չեն բանում նրա վրայ, կան միայն մի քանի առագաստաւոր նաւեր, որոնք մեծ մասով փայտ են փոխադրում։ Մովակի կղզիները ունեն ընդարձակ անտառներ, որից օգտւում է ժողովուրդը։ Այստեղ բուսականութիւնն էլ ճոխ, փարթամ է և շատ անգամ ոչխարների հօտերը այնտեղ են փոխադրում։ Ուրմի ծովակում թափւում են մի քանի գետեր,—Զօլա, Նազլու-չայ, Շհար-չայ, Բարանդուզ-չայ, Աշի-չայ, Սօֆի-չայ և այլն։ Այս գետերից մի քանիսը, օրինակ Զօլա, Աշի-չայ, որոշ ժամանակ գրեթէ չորանում են, ջուրը բոլորովին պակասում է։ Միայն գարնանը նրանք յորդանում են։

Կապուտանի կամ Ուրմի ծովակի արևմտեան և հարաւային ափերում կան ցաւրած մի բուռն հայեր, որոնք բռնում են գլխաւորապէս Ուրմի-Բարանդուզ, Սուլդուզ, Սօուղ-բու-

լեռ և Միանդուաբ գաւառները։ Խօսենք նախ Ուրմի-Բարանդուզի մասին։ Ուրմին ընկնում է լճի արևմտեան կողմը և բռնում է ընդարձակ տարածութիւն, մօտ 3200 քառակուսի վերստ, և համարւում է Ատրպատականի ամենամեծ գաւառներից մէկը։ Ուրմիի հարթութեան սահմաններն են—հիւսիսից՝ Սալմաստ գաւառը, հարաւից՝ Սուլդուզը, արևելքից՝ Կապուտանը, իսկ արևմուտքից Վանի վիլայէթը։ Այս սահմանների մէջ ընկած տարածութիւնը ամբողջապէս ցած և գեղեցիկ հարթութիւն է, որը իրենով ներկայացնում է մի սիրուն տեսարան։ Գեղեցիկ ծառուղիները, ծառաստանները և այգեստանները, որոնք անթիւ են Ատրպատականի այս մասում, հարթութեանը տալիս են աւելի գրաւչութիւն և կազմում են ամբողջացած և ներդաշնակ գեղեցկութիւն։ Գրեթէ ամեն մի գիւղ շրջապատուած է գեղեցիկ խիտաւաններով (ծառուղիներով) և սիրուն այգիներով։ Այդ ծառուղիները այնքան խնամքով, այնքան գեղեցիկ են պատրաստուած, որ դրանցից շատերը եւրոպացիների հիացմունքի առարկան են դառել։ Այդ կողմից աւելի յայտնի է Բարանդուզ գաւառամասը, որը ամենագեղեցիկ անկիւններից մէկն է։ Հրչակւած է Դիզա-Թաքայի ծառուղին։ Բնութեան այս գեղեցկութիւնը պիտի բացատրել նրանով, որ Ատրպատականի ոչ մի գաւառը այնքան առատ և հարուստ չէ ջրով, որքան Ուրմիի հարթութիւնը։ Նազլու-չայ, Շնար-չայ և Բարանդուզ նշանաւոր գետերը, որոնք սկիզբն են առնում պարսկա-տաճկական սահմանագլխի լեռներից, հաւասար հեռաւորութեամբ կտրում են Ուրմիի ընդարձակ հարթութիւնը, ոռոգում ընդարձակ տարածութիւններ և գընում, թափւում են Կապուտանում։ Այս երեք գետերից աւելի նշանաւոր է Բարանդուզ-չայը։ Միւս երկու գետերի ջուրը բաւականին նւազում է ամառը և աշնանը, այն ինչ Բարանդուզ-չայի ջուրը միշտ էլ առատ է լինում։ Բարանդուզ-չայը իր սկիզբն առնում է Մարգեաւար գաւառամասի Մուրա սարից։ Բարանդուզ-չայը Մարգեաւարում կոչւում է գաւառակի անունով։

Բացի այս երեք գլխաւոր և մեծ գետերից, կան նաև փոքր գետակներ, ինչպէս Բարբիշլի-չայ, Թումաթար-չայ և այլն։ Այս գետերից զատ, կան նոյնպէս բազմաթիւ բնական և արհեստական աղբիւրներ։ Մի խօսքով Ատրպատականի այս մասում ջուրը աւելի քան առատ է և ժողովուրդը ջրից այնքան «խեղճութիւն» չի քաշում։ Եւ ջրի առատութեան շնորհիւ Ուրմիի բուսականութիւնը աւելի քան ճոխ ու փարթամ է։ Հողն էլ բերրի է և ամբողջ հարթութիւնը մշակւում է։

Շատ աննշան տարածություններ են մնում անմշակ։ Դէմիրճիի տեղերն էլ տալիս են նշանաւոր բերք։

Ուրմիի աղգաբնակութեան համար նշանակալից տեղ է բռնում այգեգործութիւնը, որից վերցնում է առատ արդիւնք։ Գեղեցիկ և ընդարձակ են այդ այգեստանները։

Ասացի, որ ամբողջ Ուրմի գաւառը ցած հարթութիւն է։ Կան միայն զանազան կողմերում մի շարք բլուրներ կամ հոդակոյտեր։ Ամեն քայլափոխում մարդ պատահում է նման հոդակոյտերի, որոնք աւերակների կոյտեր են և որոնցից երբեմն դուրս են գալիս հնութիւններ, իսկ լուրջ պեղումների շնորհիւ անշուշտ էլ աւելի հետաքրքիր իրեր, հնութեան մնացորդներ երևան կգան և գուցէ շատ բան լուսաբանելի անցեալից։ Այդ բլրակներից շատերը հէնց մոխրակոյտեր են, նամանաւանդ Բարանդուզում շատ է նրանց թիւը։ Դրանք հաւանական է մեհեանների սուրբ մոխիրն է և թուրքերի մէջ էլ աւանդութիւն կայ, որ իբր թէ Զրադաշտը Բարանդուզցի է եղել։ Այդ մոխրակոյտերի միջից դուրս են գալիս ամաններ, պուտուկներ՝ վէգերով լիքը և այլն։

Ուրմիի թէ դաշտում, հարթութեան վրայ, և թէ բլուրների լանջերում, չկան բնական անտառներ, քիչ են նաև արհեստական անտառները, աւելի քիչ, քան Սալմաստում է, միայն առատ են խիաւանները, որոնցից շատերը տարածուում են մօտ 20—25 վերստ։ Այդ ծառերը առհասարակ ուռենի են։ Աղքատ է Ուրմին նաև հանքային հարստութիւնների կողմից, միայն համանուն լիճը տալիս է մեծ քանակութեամբ աղ։

Ուրմի գաւառի կլիման ընդհանրապէս բարեխառն է։ Ձմեռը աւելի կարճ է լինում, քան Սալմաստում. ամառն երբեմն պատահում են անտանելի շոգեր, երբ աղգաբնակութեան մեծագոյն մասը փոխադրուում է այգիներում։ Իւրաքանչիւր այգում կայ «ամարաթ», և այնտեղ են մնում մինչև աշուն, մինչև խաղողի քաղելը։

II.

Ամբողջ գաւառը բաժնւած է մի շարք գիւղախմբերի կամ գաւառամասերի։ Այս գիւղախմբերից շատերը կոչւում են այն գետի անունով, որի շուրջը խմբւած են։ գաւառամասերն են.— Էնգալ, Նուզլու-չայ, Թազա-չայ, Շհալ-չայ, Բարբիշլի-չայ, Բարանդուզ, Մարկեաւար, Զարբօթի (մի փոքրիկ մնալ է, որ ընկնում է Մարգեաւարի մէջ) Բրադօստ, Դաշտ, Թարգեաւար,

Սօմայի, Ալբակի, Դաշտաքել, Ուշնի և Գօլ։ Ամբողջ այս գաւառամասերում գիւղերի թիւը հաշւում են մօտաւորապէս 800։ Ազգաբնակութեան մեծագոյն մասը կազմում են թուրքերը, որոնք բռնում են գլխաւորապէս դաշտային գիւղախմբերը։ Լեռնային գաւառակները, ինչպէս Մարգեաւար, Թարգեաւար, Բրազսար, Սօմայի և այլն, բռնել են սարի գաւակները, քիւրդերը, որոնք նշանաւոր քանակութիւն են կազմում։ Դաշտային մասերում, բազմամարդութեան կողմից, երկրորդ տեղը բռնում են ասորիները, ապա հայերը։ Ասորիները խմբուած են գլխաւորապէս Շհար-չայի, Նազու-չայի և Բաբանդուզ-չայի շուրջը։ Դան փոքր թւով նաև հրէաներ, որոնք ապրում են գլխաւորապէս քաղաքում և պարապում են հասարակ, մեծ մասամբ չթի առևտրով։ Պարսկաստանում ընդհանրապէս հրէաները յարգանք չունեն և բնիկները նրանց վրայ նայում են ասես ոչ իրրև մարդու, այլ սառը արարածի։

Հայերը, որոնց հաշւում են մօտաւորապէս 1000 տուն, բռնում են գլխաւորապէս Նազու-չայ և Բաբանդուզ-չայ Մհալները։ Պարսկահայերի մեծ գաղթականութիւնից առաջ, Ուրմիոյ Ծովակի ամբողջ արևմտեան, մասամբ և հարաւային, ափերը բռնած է եղել հայ ժողովուրդը։ Ո՛չ միայն դաշտային մասերը, այլ և լեռնային գաւառակները հայերի բնակավայրերն էին։ Սօմայի լեռնագաւառը, որը այժմ բացառապէս բռնում են քիւրդերը և կան միայն երկու-երեք տուն հայեր, 1828—9 Ռուս-տաճկական պատերազմից առաջ՝ գերակշիռ տեղ էր բռնում հայ ազգաբնակութիւնը։ Մինչև այժմ էլ կանգուն են մնացել այդ քիւրդաբնակ լեռնագաւառում հնութիւններ-եկեղեցիները, հայկական շինութիւնների մնացորդներ, ընդարձակ գերեզմանատներ, նոյնիսկ մի գեղեցիկ պալատի պատերը և հայ անցեալից մնացած մի շարք բեկորներ և յիշատակներ, որոնք մի մի պերճախօս փաստեր են հայ ժողովրդի անցեալ փառքի և բազմամարդութեան։ Քիւրա գիւղը, ինչպէս վկայում է մի ծերունի, առաջ ունեցել է մօտ 800 տուն հայեր, այն ինչ այժմ ունի միմիայն 9 տուն։ Որ առաջ շատ հայեր են եղել այս գիւղում, դրան ապացոյց կարող է ծառայել մինչև այժմ գոյութիւն ունեցող գեղատիպ եկեղեցին և արձանագրութիւնը։ Ոչ միայն այս վայրերում, այլ Ատրպատականի ամեն մի անկիւնում կան հայ ժողովրդի անցեալ կեանքի յիշատակները, բեկորները և մնացորդները։ Եւ Ատրպատականի մի շարք գաւառները ներկայացնում են լուրջ պեղումների, հետազօտութիւնների համար աւելի քան հետաքրքիր վայրեր։

Ուրմիի այժմեան մի ափ հայերն էլ մի բեկոր են անցեալից, մի ջարդած, տրորուած բեկոր։

Ուրմի ընդարձակ գաւառը, ասացի, ունի մօտաւորապէս 800 գիւղ։ Հայերը բնակւում են 36 գիւղերում։ Դրանցից մի քանիսը միայն զուտ հայաբնակ են. մեծագոյն մասը ապրում են Թուրքերի, ասորիների և քիւրդերի հետ խառն։

ՈՒՐՄԻ—ՆԱԶԼՈՒ-ՉԱՑ

		տուն	բն.			տուն	բն.
1)	Ուրմի . . .	55	335[1]	12)	Կարակըզ . .	22	132
2)	Գեարդաբատ	122	732	13)	Ըմբլաբար . .	15	90
3)	Թահվա . . .	115	690	14)	Շիրաբադ . .	22	132
4)	Իռալու . . .	40	240	15)	Թաքալու . .	15	90
5)	Նախիջև-Թափա	76	256	16)	Գզըլ-աշուդ .	15	90
6)	Իքի-ադաջ . .	45	270	17)	Խան-բաբախան	21	126
7)	Բաուլբо . . .	38	226	18)	Չիշակլու . .	15	90
8)	Դիզալա . . .	27	162	19)	Սիւփիւր-դան .	12	72
9)	Զարբաշ . .	25	150	20)	Ղարադեօզ . .	10	60
10)	Ղալաջալու .	20	120	21)	Ադա	10	60
11)	Ճախկ-բակլու	18	108		Ընդամենը—	738	4428

Փոքր թւով հայեր կան նաև Զամաքի, Խանիշան, Սարաջուկ, Զամալաւա և Զէյնալու գիւղերում, իւրաքանչիւրում մօտաւորապէս 2—5 տուն։ Պիտի նկատել, որ այդպիսի գիւղերից հայերը շուտ-շուտ տեղափոխւում են։ Սարաջուկը ունէր միայն 1 տուն, գուցէ, ով գիտէ, հիմա այդ տունն էլ տեղափոխուել է մերձակայ մի ուրիշ գիւղ։ Այդ տեսակէտից փոքրիկ գիւղերի ստատիստիկան աւելի քան թերի պիտի ընդունել։

ՈՒՐՄԻ—ԲԱՐԱՆԴՈՒԶ

		տուն	բն.			տուն	բն.
1)	Բաքառու . .	58	299	7)	Սարալան . .	6	34
2)	Դարբաառու . .	36	187	8)	Սահաթլու . .	9	48
3)	Բալանիշ . .	21	107	9)	Թումաթար . .	35	169
4)	Սարդարուա .	22	112	10)	Թազա-քիանդ .	10	41
5)	Դիզա-Թաքա .	33	148	11)	Ղասըմլու . .	1	6
6)	Գիւքիա . .	9	45		Ընդամենը—	240	1196

1) Տունը հաշուած է 6 հոգի։

Բացի այդ. Ուշնի գյուղական Ռանա գիւղում կայ 2 տուն հայ, իսկ Դոլ գյուղական Ենիքանում գիւղում 12 տուն։

Ուրեմն Կողբանքի գրեմանան ազգերի հայերն են մոտաւորապէս 1000 տուն կամ, թիչ կլորացնելով, 5600 բնակիչ։ Այս 36 գիւղերից գուռ հարաբնակներն են Գնարդարաղ, Նախիջևան-Քաղա, Իրի-ազաջ, Բուզու և Բանու Վերջինումս կան մի քանի տուն ասորիներ։ Հենց այս գիւղումն էլ կենտրոնացած է հայերի առաւելագոյն բաժինը։



Գրեմի հայերի

Ուրմի գաւառում, որը հանդիսանում է Աստրապատականի երկրորդ գաւառը (Թարիզ), հայերը ապրում են երկու խոշոր ծաղիկներում՝ Ֆաքիրաբադ գիւղ և Նանամլիրան։ Այս երկու խոշոր ծաղիկը իրարից կարուած են մի գրաբնակ ծաղիկով։ Հայերի կենտրոնական գիւղերն են՝ մեծ մասը ազգատարածք, վանեցի, ծաւրիզցի վաճառականներ։ Ուրմի բնակչութիւնը գեղեցիկ քաղաք է. ունի բարձր, սիրուն շինութիւններ. փողոցները հա-

մեծաստաքար մաքուր և գեղեցիկ են, շատ տեղերում սալայատակած. տները ունեն ընդարձակ բակեր, բոլոր տների միջով անցնում է ջուրը. քիչ հեռու, Շհար-չայի ափին շինված են միսիոնարների շինությունները, որը կոչվում է դալա, քաղաքի շրջապատի այգիները, ծառուղիները, այդ բոլորը Ուրմիին տալիս են ավելի քան լաւ քաղաքի տեսք և գեղեցկություն։ Քաղաքի մի անկիւնը, որ սուում է Գիւլ-գիշա, ուղղակի հիանալի տեղ է։ Քաղաքի այդ մասի տները նոր են շինված և գեղեցիկ են, բակերը ընդարձակ, ջուրը մէջը, ծառ-ծաղկունքով ծածկված, օդը յստակ, բնությունը գեղեցիկ։ Քաղաքի այդ մասումն է կենդրոնացած եկեղեցիների նշանաւոր բաժինը։ Մի խօսքով Ուրմին Ատրպատականի ամենագեղեցիկ քաղաքներից է, ունի լաւ դիրք և վաճառաշահ է։

Գեղեցիկ են նաև Ուրմի—Բարանդուզի գիւղերը։ Սրանց գեղեցկությունն և փայլ տուողներն խիտաւաններն են և այգեստանները։ Բուսականությունը փարթամ է, ջուրը առատ և ամեն տեղ ծածկված է կանաչով։ Ցոգնած, դաղարած ծամբորդը համարեա ամեն քայլափոխում գտնում է հանգստանալու հով և կանաչուտ տեղ. շատ անգամ խիտաւանը տանում է մի գիւղից մինչև միւս գիւղը։ Շատ գիւղեր իրար հետ միացած են այդպիսի երկարաձիգ ծառուղիներով։ Դրանք իսկապէս կազմում են Ուրմիի ամենագեղեցիկ, գրաւիչ զարդը։ Ուրմիի գիւղերը առհասարակ նման են Ատրպատականի միւս մասերի գիւղերին. տները ցածր են և ոչ գեղեցիկ. փողոցները կեղտոտ. բայց անհամեմատ տարբերւում են հայաբնակ գիւղերը միւսներից, նոյնիսկ թաղերը։ Այս բոլորը ասես ընդհանուր գեղեցկության, բնության գեղեցկության առաջ աչքի չեն զարնում և ծածկւում է։ Այս մասի գիւղերն կարելի է ասելի գեղեցիկ համամարել, քան Սալմաստինը, թէև վերջինիս էլ գեղեցիկ են։

III.

Ուրմիի ազգաբնակությունը ընդհանրապէս, հայերը մասնաւորապէս տնտեսապէս անմխիթար վիճակի մէջ են։ Հայ ազգաբնակությունը պարապում է գլխաւորապէս երկրագործությամբ և այգեգործությամբ։ Հողը մշակւում է նահապետական միջոցներով, թէև ստացւում է բաւարար բերք, բայց ժողովուրդը իր աշխատանքի արդիւնքի տէրը չէ։ Հայրկերը հասնում են առասպելական աստիճաններին։ Այսպէս որ հողից ասելի քան աննշան արդիւնք է վերցնում գիւղացին։ Մնում է

այգեգործությունը։ Հրաշալի այգիներ կան այս շրջանում, բոլորն էլ խաղողի։ Այս շրջանը իւրաքանչիւր տարի հարիւր հազարաւոր պուդերով սաբզա արդիւնք է տալիս։ Տարիներ են լինում, որ խաղողի բերքը հասնում ապշեցուցիչ չափերի, բայց յաճախ ընկնում են այգեստանները զանազան հիւանդութիւններից, ամենաընդհանրաբար Ղարա-խաչն կոչուած հիւանդութիւնն է, որը սևացնում և փչացնում է խաղողի հատիկները։ Գարկուան էլ հասցնում է իր պատուհասը։ Այստեղ ձմեռը խաղողի որթերը չեն թաղում, այնպէս որ խիստ ցուրտն էլ երբեմն փչացնում է և ոչնչացնում։ Գեղեցիկ են Ուրմի այգիստանները. իւրաքանչիւր այգի ունի իր ամառանոցը, իր բոլոր յարմարութիւններով և ժողովուրդը ամառը տեղափոխւում է այգիները մինչև այգեկութը։ Ամառը Ուրմի քաղաքը համարեա դատարկւում է։ Ուրմի գաւառը հրչակւած է ոչ միայն խաղողի առատութեամբ, այլ խաղողի տեսակներով։ Ուրմին ունի բաղմապիսի և ընտիր խաղողներ. Ուրմիում հաշւում են մի քանի գոյնի և 30 տեսակի, գուցէ և աւելի, խաղողներ։ Ուրմիում մի ընտանիք եթէ ունի մօտաւորապէս 3-500 առու խաղող, նա արդէն ապահովւած է։

Ուրմիի սաբզան արտահանում են արտասահման, գլխաւորապէս Ռուսաստան, իւրաքանչիւր տարին շուրջ 400,000 պուդ։ Ատրպատականի գրեթէ իւրաքանչիւր քիչ ու շատ յատանի առևտրական առուն ունի իր ներկայացուցիչը Ուրմիում։

Ուրմին արտահանում է մօտակայ գաւառները նաև բրինձ, ալ, ծխախոտ, բամբակ։ Գովւած է Ուրմիի գօշաբը, որ ուղարկւում է Նոյնիսկ Տաճկաստան։

Այո, այսպէս հարուստ է Ուրմիի հարթութիւնը, բայց ազգաբնակութիւնը էլի մնում է անանխանձելի վիճակի մէջ։ Ժողովուրդը խեղճացած է գլխաւորապէս հարկերից և անարդար կեղեքումներից։ Ուրմիի բոլոր գիւղերն էլ աղալ են։ Գիւղերի մեծագոյն մասը հարուստ աղա-բէգերի և հոգևորականների սեփականութիւն է։ Հարկերի նշանակումը կախւած է իւրաքանչիւրի քմահաճոյքից. հէնց այս է պատճառը, որ քանի գիւղատէր կայ, այնքան տեսակի էլ հարկեր գոյութիւն ունեն։ Այսպէս է գրեթէ ամբողջ Ատրպատականում։ Հարկեր են դրւած բոլոր կենսական առարկաների և պիտոյքների վրայ և այդ է, որ ծռում է խեղճ ռայեթի շլինքը։

Ահա Գեարդաբաղ գուտ հայաբնակ գիւղի հարկերը։

1) Գլխահարկ	. .	5 դրան	10 շահի.
2) Իւրաքանչիւր գլուխ	.	3 մշակ կամ	3 դր. փող
3) » »	տան հարկ	.	8 դր.

4) » » տունը 2 հաս.
5) Իւրաքանչիւր գլուխ առու հանելու համար 2 մշակ.
6) գիւղատիրոջ բրինձը ցանելու և հնձելու 2 մշակ.
7) Գոմշին . . 3 դրան 4 շահի.
8) Գովին . . . 1 » 12 »
9) Մատակ իշուց . . 1 դրան 12 շահի.
10) » » ձիուց 3 » 4 »
11) Գիւղատիրոջը Նովրուզին, տունը . 15 շահի.
12) Հարսանիքին . . 2 գլուխ շաքար.
13) Բամբակի արտի թանաքին . . 14 դրան.
14) Առույտ ցանած արտի թանաքին . 14 »
15) Այգու թանաքին . . . 14 »

Բացի այդ մի շարք բազմապիսի հարկերից և տուրքերից, աշխատող գիւղացին ցորենի բերքի կէսը տալիս է գիւղատիրոջը, չնայած որ վերջինս տալիս է միմիայն սերմնացուի կէսը, իսկ բոլոր աշխատանքը, վարել, ցանել, ջրել, հնձել, կալսել - բոլորը ծանրանում է ռայեա ժողովրդի վրայ։ Գիւղացին ոչ միայն աշխատում է իր ցանած արտի վրայ, (որի արդիւնքի կէսը էլի իրենն է), այլ և աշխատում է աղայի արտի վրայ, ի հարկէ ձրիաբար։ Ուզդակի հորտեր են աղանների ձեռքում։ Գիւղացիները ոչ չեն նաև իրենց տների, սեփական ոչին չունեն, միայն օրէնքով նրանց է հանելու շինութիւնների փայտերը, ծածքը, լուսամուտը-դռները, շատ անգամ կալատեղերը այդ էլ չեն տալիս։ Եւ երբ կամենայ գիւղատէրը կարող է բռնել գիւղացիների օձիքից և դուրս շպրտել, այդ նրա իրաւունքն է։ Ահա որքան խայտառակ է այս կողմի հայ գիւղացիների դրութիւնը։

Ուզդակի հարկերի մէջ է նաև սարփարաստի 2 դրանը. ամեն մի քրիստոնեա տուն տուրք է տալիս 2 դրան։ Բայց որքան ուրախ կլինէր հայ ժողովուրդը եթէ այդ 2 դրանով, նոյն իսկ դրա եռապատիկով պրծնէր։ Զունենալով որոշած ոճիկ, սարփարաստը կեղեքում է, հարստահարում ոչ խլած ժողովուրդներին, ամեն մի թեթև առիթ մատի փաթաթ է դարձնում և անագին «ջառմա» առնում։ Պարսկահայերի կեանքում սարփարաստութիւնը բոլորովին աւելորդ պաշտօն է և բռնազբօսիկ կերպով կապուած է հայերի հետ։ Այժմ սարփարաստ է Ուրմիում տիրահրչակ Մուլլալալը, որ մի ժամանակ պաշտօնավարում էր Սալմաստում և տնտեսական նշանաւոր հարուած հասցրեց հայերին։ Պակաս չի ընաւում ազգաբնակութիւնը քիւրդերի սխրագործութիւններից։ Նրանք բռնած լինելով լեռնային գաւառամասերը յանախ յարձակւում են դաշտի վրայ,

գլխաւորապէս լեռներին մերձակայ գիւղերի վրայ, թալանում, կողոպտում են և մեծ աւարով էլի բարձրանում լեռները։ Շատ անգամ գալիս են նաև Ցանկաստանի քիւրդերը անարգել, առանց դիմադրութեան, քանի որ պարսից կառավարութիւնը սահմանապահ զօրքեր չունի։

Այս բոլոր անյաջ ուրկրները լեցնելու, կեանքի անհրաժեշտ պահանջներին բաւարարութիւն տալու համար՝ ուրմեցի հայն էլ պանդխտում է։ Թէև պիտի ասել, օր համեմատել չի կարելի ասորիների հետ, նոյնիսկ Սալմասոի հայերի։ Գեարդաբաղ հայաբնակ գիւղը ունի միմիայն 30 պանդուխտ, այն ինչ Սալմասում կան գիւղեր, որոնք ունեն մօտ 200 պանդուխտ, տղամարդկանց կէսից աւելի։ Ուրմեցի հայերը պանդխտում են գլխաւորապէս Կովկաս, Ռուսաստանի խորքերը շատ քչերն են գնում և ուրախալին այն է, որ կաթ են մնում պանդուխտավայրերում և շուտ վերադառնում են հայրենիք։

II.

ՊԱՐՍԿԱԿԱՆ ՔԻՒՐԴՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԸ

Առրպատականում մի անկիւն, որ աւելի դառն, աւելի քստմնելի պատկերով է ներկայանում մեզ, դա Ուրմիի ծովակի հարաւային ափերն են, պարսկական Քիւրդստանը։ Այս հին և պատմական Մարաստանում և նրա շրջակայքում կան մի բուռն հայեր, որոնք ցրուած են համարեա բոլոր մասերում և ապրում են հարիւրաւոր թուրքերի և քիւրդերի հետ խառն։ Դուք կպատահէք մի հեռաւոր անկիւնի զուտ քրդաբնակ գիւղերում մի հայ ընտանիքի, իհարկէ, միայն անունով հայ, իսկ 4—10 հայ ընտանիք ունեցող գիւղեր շատ կան։ Նրանք ցրուած ապրում են Սուլդուզ, Սուղ-Բուլաղ եւ Միանդուաբ գաւառներում։

Այս չորս գաւառամասերում կայ ընդամենը 250 տուն հայ ազգաբնակութիւն և ցրուած 18 գիւղերում։ Սուլդուզ գաւառը, հայաշատութեան կողմից առաջին տեղն է բռնում։ Հայերը ապրում են Սուլդուզի հետևեալ գիւղերում։

	տուն		տուն
Նաղադէյ .	60	Մահմադեան .	34
Թօփուզաւա .	4	Ռախտանա . .	14
Գեօնաւա .	5	Զայեանա . .	3
Գեօյ . . .	3	Գեարվանսարա .	2
Հասալի . .	2	Անրա . . .	2
		Գումար	128

Սուլդուզ գաւառում միմիայն Նաղադէյը և Մահադեաոը ունին եկեղեցի, և մի պանդուխտ քահանայ։

Սուլդուզ և Միանդուաբ գաւառների մէջ ընկնում է Մուքրի գաւառը, ուր կան 37 տուն հայ և ապրում են 4 գիւղերում։

	տուն		տուն
Գըզլ-Գուրի	. . .	. . . . .	2
Դարալաք	. . 30	Կշաւա	. . 3
Լաճ	. . . 2	. . . .	»
		Գումարը	. 37

Չըկայ և ոչ մի քահանայ. եկեղեցի թէև կայ, բայց բոլորովին քանդուած. նա գտնւում է Դարալաք գիւղում։

Միանդուաբ գաւառում, որը բռնում է Ուրմիոյ լճի հարաւային մասը, մի քիչ դէպի հարաւ-արևելք, կան 118 տուն հայեր. այն է.

	տուն		տուն
Միանդուաբ	. 20	Թազագել	. . 42
Գարավերան	. 8	Թաղիապատ	. 33
Սոյլուրթափա	. 2	Սուզ-բուլաղ	. 3
Գեալբաոիզա-խան		. . . .	9
		Գումար	1180

Այս շրջանում եկեղեցի կայ Միանդուաբ և Սուզբուլաղ քաղաքներում, Թաղիապատ գիւղում, նոյնպէս և Թազագեղում, բայց չըկայ և ոչ մի քահանայ։ Թազագեղը այն տաս տարի է, որ հաստատուել է. այս գիւղի հայերը գաղթել են Դարալաքից և Սուլդուզ գաւառից։

Ահա Պարսկաստանի այդ հեռաքրքիր անկիւնի հայերը։ Նրանք, ինչպէս տեսում էք, 282 տուն են. տունը միջին թւով 5 հոգի հաշուելով, կստանանք 1600 հայեր, որոնք ցրուած ապրում են 21 գիւղերում, թուրքերի և քիւրդերի հետ խառն։ Թուրքերը կազմում են ազգաբնակութեան մեծագոյն մասը։ Դան այդ մասերում նաև կարապափախ թուրքեր, ասորիներ և հրէաներ։

Այդ բոլոր մասերումն էլ հայերը հողագործ և ռայեա ժողովուրդ են. նրանք չունեն սեփական հողեր. չունեն ոչինչ, կեղեքւում, հարստահարւում են, տնքում են ծանր հարկերի տակ, որոնք հասնում են առասպելական աստիճանների։ Այդտեղ հայ տարրը թշուառանում, քայքայւում է տնտեսապէս և մի ցաւալի պատկեր է ներկայացնում։ Շատ ընտանիքներ զուրկ են նոյնիսկ օրւայ չոր հացից։ Այսպէս է բոլոր գաւառներում, բայց ամենից խեղճը, ամենից թշուառը Սուլդուզ գաւառն է։

Հարկերն են, որ Սուլդուզը թշուառացրել են և քայքայել տնտեսապէս։ Ահա առաջ ենք բերում Սուլդուզի գլխաւոր-

գիւղի—Նադաղէի հարկերը. որից որոշ գաղափար կարելի է կազմել ընդհանուրի մասին։ 1. տան հարկ 3—5 դրան (դրանը —19 կ) 2. իւրաքանչիւր տանից 5 հաւ, իսկ ինչ, ձու և այլն ինչքան ուզէ գիւղատէրը, 3, կովից՝ 2 դրան, 4. գոմէշից՝ 3 դրան, 5. ձիուց՝ 3 դրան, 6. սիրմացուի կէսը գիւղատէրից և կէսը գիւղացուց, ամեն աշխատանքը գիւղացուց, արդիւնքի ²/₃ գիւղատէրին, իսկ ¹/₃-ը գիւղացուն, 7. նոյնը և բրնձի, գարու վերաբերմամբ, 8. բամբակի ցանքի մէկ թանաֆին 12 դրան 10 շահի։ 9. Աուոյտի թանաֆին նոյնքան և ուրիշ հընդեղէններից։

Սուլդուզի Մահմադեաս գիւղում էլ աւելի են հարկերը. ցորենի, բրնձի, գարու աւելի քան երկու բաժինը գիւղատիրոջն է, բոլոր աշխատանքը և ծախսը գիւղացիներից։ Բամբակից, գերշագից և այլն, բացի այն, որ սերմը և աշխատանքը գիւղացուց է և արդիւնքի կէսից աւելին գիւղատէրն է տանում, դեռ իւրաքանչիւր թանաֆից էլ վերցնում է 5 դրան։ Որպէս գլխահարկ իւրաքանչիւր տանից ստանում է 4 գլուխ շաքար։

Այսպէս են հարկերը Սուլդուզի բոլոր գիւղերում, շատ աննշան զանազանութեամբ. և դա շատ հասկանալի է, որովհետև մի էլ է իշխում, գլխաւորապէս կարապափախներն են գիւղատէրերը։ Սուլդուզից գրեթէ չեն տարբերւում նաև միւս գաւառներն իրանց հարկերով։

Բայց այդ չէ դեռ բոլորը. որքան ուրախ կլինէր այդ անկիւնի հայ տարրը և ժողովրդի ազգաբնակութիւնը, եթէ միայն հարկերը լինէին։ Բայց աւելի անտանելին դեռ մնում է. դա բեգիարն է, ձրի աշխատանքը։ Սուլդուզ գաւառի Նադաղէյ գիւղի իւրաքանչիւր ընտանիք պարտաւոր է տալ տարեկան 30—35 բեգեար. դեռ սա ամենաքիչը կարելի է համարել։ Մահմադեաս գիւղի ամեն մի տունը երբեմն տալիս է 200 բէգեար։

Կատարեալ ճորտութիւն...

Գիւղացիները համարեա տարուայ մեծագոյն մասը աշխատում են ձրիաբար գիւղատէր աղաների և բէգերի համար։ Գիւղատէրերի արտերը գիւղացիներն են ցրում, նրանց շինութիւնների վրայ գիւղացիներն են աշխատում, նրանք են ծեծում աղայի բրինձը, մաքրում նրա կտուրների ու բակի ձիւնը, փայտը բերում, (ի հարկէ, իրանց սայլերով) կտրատում, և դարձեալ գիւղացի կանայք են մանում աղայի բուրդը և բամբակը։

Մի խօսքով, գիւղատէր աղաները և բէգերը, որպէս տրզրուկներ, քամում, ծծում են թշւառ գիւղացու արիւնը և նե-

առում թշուառութեան վերկը։ Միակ մի բանը, որ նա գիտէ, այդ պանդխտութիւն է։ Եւ նա պանդխտում է։ Այժմ շատ ուսուցիչներ գաղթել և բնակութիւն են հաստատել Երևան, Մարաղա, Թաւրիզ և այլն։

*
* *

Այդ մի բուռն հայերը ցրուած լինելով զանազան քրդաբնակ և թիւրքաբնակ գիւղերում, կազմելով շատ չնչին տոկոս, հեռացնում, տարրների ընթացքում, ազդել են նրանցից, ընդօրինակել և ընդունել են նրանց սովորութիւնները, միանգամայն կերպարանափոխել նոյնիսկ արտաքինը, նրանց նման ածիլում, նրանց նման խուզում և հագնում. գրեթէ ոչնչով չեն տարբերուում։ Հայերը մոռացել են նաև իրենց մայրենի լեզուն, խօսում են թուրքերէն, մասամբ և քրդերէն։

Այնտեղ, այսպէս ասած, կան ոչ թէ հայեր, այլ հրիստոնեայ թուրքեր։ Այդ գաւառամասերի և գիւղերի հայերը գրեթէ բոլորն էլ թրքախօս են, միայն Սօուղբուլաղի հայերը քրդախօս են։ Հասակաւորներից ոչ ոք հայերէն չգիտէ, միայն նորերից, նոր սերնդից են մէկ-մէկ, որ հայերէն խօսել գիտեն, այն էլ ոչ կանոնաւոր։ Սօուղ-բուլաղում թէև գրել-կարդացողներ կան, բայց նրանք էլ են քրդերէն խօսում։ Այդ շրջանում, Բարանդուզն էլ հաշուած, տիրապետող լեզուն է թուրքերէնը։ Միայն Ուրմիի հայերը գիտեն մայրենի լեզուն։

Այս գաւառակները 1908 թուին, ինչպէս ցոյց է տալիս առաջնորդարանի այդ թուին կազմած վիճակագրութիւնը, ունեցել են միմիայն 6 քահանայ, (Բարանդուզն էլ) իսկ այժմ, ինչպէս տեսանք, ունեն միայն մէկ (Բարանդուզը չհաշուած) քահանայ։ 1500 բնակիչը, ցրուած 21 գիւղերում, ունի միայն մի քահանայ։ Այդտեղ երեխաները մեծանում են առանց կնունքի, մեռելները երբեմն օրերով մնում են անթաղ, տանը, մինչև որ մօտակայ գիւղից կամ Ուրմի քաղաքից քահանայ է գալիս։ Շատ անգամ հէնց իրանք են թաղում առանց արարողութիւնների, կամ փոքր ինչ կարդալ գիտցող մի տիրացու կարդում է աւետարանից մի գլուխ։ Շատ անգամ հէնց ուսուցիչներն են թաղում. այդպիսի օրինակներ շատ կան։ Բարանդուզի մի ուսուցիչ պատմում է մի ուշագրաւ դէպք իր կեանքից։ Եկեղեցում պիտի թափօր լինէր, աշակերտները չգիտէին եկեղեցական արարողութիւններ, և տոխպուած երգում են ժողովրդական երգեր, իսկ ժողովուրդը երկիւղածութեամբ նայում և խաչակնքում է։ Մի անգամ էլ, մեռել թաղելիս երգել

են ազգային երգ։ Այդ անկիւնում քահանան էլ քրդերէն կամ թիւրքերէն է խօսում, թուրքերէն է լինում նրա քարոզը։ Դրքից մի գլուխ կարդալիս նա բացատրում է դարձեալ թիւրքերէն կամ քրդերէն։

Այդ թրքացած հայերը լաւ քրիստոնեաներ են և շատ մեծ եռանդով հետևում են պաս պահելուն։ Այդ մասին մի բնորոշ դէպք են պատմում։ Մի տարի, դեռ երկու շաբաթ առաջ, սկսում են պահել պասը, կարծելով, որ հէնց այդ շաբաթն է պասը։ Անցնում է ամբողջ շաբաթը և յանկարծ մէկը յայտնում է, որ իրենք սխալուած են, այս շաբաթ չէր ։ Սարգսի պասը, այլ առաջիկայ շաբաթ։ Եւ նրանք միւս ամբողջ շաբաթն էլ են պաս պահում դարձեալ վերջին օրը կասկածներ են առաջ գալիս և ստիպուած մէկին ուղարկում են Մարաղա հաստատ բան իմանալու և ի հարկէ, ճիշտը իմանալով, պահում են նաև երրորդ շաբաթը։

Բացառութիւններ չին անշուշտ այն օրինակները, որ հայը ամուսնանում է քրդի, թուրքի հետ, թէկուզ բռնութեամբ, և այդ ընտանիքն էլ բնականաբար դառնում է թուրք։ Դիւղացին այդտեղ սեփական ոչինչ չունի, շատ տեղերում տունն էլ գիւղացունը չէ, գրաւատէրն է տներ շինում և յանձնում իր ճորտերին, իսկ երբ քէֆն ուզենայ՝ կարող է թնչից բռնել և դուրս նետել։

Այդ բոլորը մի կողմից, քիւրդ աշիրաթների պարբերաբար կրկնուող աւարառութիւնները և կոդոպուտները միւս կողմից, աւելի ու աւելի վէրքեր են առաջացնում և ստեղծում մի թշուառ ու ստրկացած տարր։ Զանազան քիւրդ ցեղեր իրար հետ ընդհարուելիս խեղճ գիւղացիներն են մէջտեղում տուժում, նրանք են հարստահարուում և ջնաս կրում։ Իսկ յաճախ կրկնուող բռնաբարութիւնները և առևանգումները գալիս են պատկերի պակասը լրացնելու և ամեն ինչ կատարեալ կացուցանելու։

Բացի այդ բոլորից, այդ կողմի հայերը ընկած լինելով այդ խուլ անկիւնում, բոլորովին կտրուած են արտաքին աշխարհից, որոշ գիւղեր ոչ մի յարաբերութիւն չունեն դրսի հետ։ Նրանք չգիտեն թէ ինչ է կատարուում մի քանի հարիւր վերստ հեռաւորութեան վրայ և կարծում են, որ երկրագնդի վրայ ապրում են միմիայն իրենք և քիւրդերը։

Խեղճ ժողովուրդ...

Բայց ինչ է ներկայացնում այդ անկիւնի հայերի կրթական գործը։ Բողոքական միսիոնարները վաղուց սկսել են իրանց պրոպագանդան և այժմ ունեն մի երկու դպրոց, բայց

Ասուած դպրոց համարէ։ Այդ դպրոցները կառավարում են չարչի և տիրացու ուսուցիչներ, որոնք իրանց ողորմելի մտաւոր պաշարով բոլորովին անկարող են կեանքի մէջ փոփոխութիւն մտցնել, օգուտներ տալ։ Նրանք առհասարակ ձգտում են մարդիկ որսալ։ Նրանք քիչ ու շատ աշխոյժ ունեն Ուրմի հայերի մէջ։

Կանանց բարեգործական միացեալ ընկերութիւնն է վերցրել իր վրայ այդ շրջանի կրթական գործի ծանրութիւնը և, պիտի խոստովանեմ, նա պատուաւոր կերպով առաջ է տանում։ Ուրմիում և պարսկական քրիստոնում ընկերութիւնը ունի մի շարք ուսուցչուհիներ, որոնք մի մի լուսոյ ջահեր են այդ թրքացած հայերի համար։ Մայրենի լեզու կամաց-կամաց այդ դպրոցների միջոցով տարածում է նոր-սերունդների մէջ։ Ինչքան հրչում է մարդ, երբ տեսնում է փոքրիկ թրքական հայը թոթովում է մայրենի լեզուով։ Ցոյս ունենք, որ ընկերութիւնը աւելի ու աւելի կը բարելաւի դպրոցները, պատրաստուած մարդիկ կը հրաւիրի պաշտօնի, դպրոցների համար յատուկ շէնքեր կը շինի, մի պակաս, որ շատ աչքի է խփում ընկերութեան դպրոցների համար։ Զը հաշուած Թաղիադրաղը, ոչ մի գիւղ չունի դպրոցական յարմար շէնք։

Բայց այդ բոլորը միայն մի կաթիլ է կազմում կարիքի մեծ ովկիանոսում։ Կարծում ենք, իւրաքանչիւր հայի պարտականութիւնն է մտածել այդ մի բուռն հայերի մասին, միջոցներ ձեռք առնել, որքան հնարաւոր է, փրկել նրանց կորստից, կրթութիւն տարածել, սերունդ պատրաստել։ Ամենից շատ այդ պարտականութիւնը ծանրանում է Առաքելական առաջնորդարանի վրայ, բայց ի՞նչ է անում նա, կատարում է իր պարտականութիւնը։ Դէտք է ասել ցաւելով, որ առաջնորդները ընդհանրապէս շատ քիչ, գրեթէ երբէք ուշադրութիւն չեն դարձրել այդ քրիստոնեայ թիւրքերի և քրդերի վրայ և չեն դարձնում այժմ էլ։ Ուրմին թէև առանձին փոխանորդութիւն է համարուում, բայց առհասարակ լուրջ և պատրաստուած հոգևորականներ չեն եկել։ Այս շրջանը աւելի քան կարիք ունի խելացի և փորձուած փոխանորդի, աչքի առաջ ունենալով հայերի հոգևոր անմխիթար վիճակը մի կողմից, օտար միսիոնարների զօրեղ պրոպագանդը միւս կողմից։ Ուրմի այժմեան փոխանորդ Թշտունի վարդապետը շատ անյարմար է, ոչ պատրաստուած անձնաւորութիւն է, ոչ էլ փորձուած, այնպէս որ բոլորովին անկարող է օգտակար լինել հայ ժողովրդին, նա միայն մի ուելորդ քեռն է։ Ուրմին և Սալմասը կարիք ու-

նեն լուրջ և տեսուած հոգևորականների, ամեն ջանել վարդապետի տեղը չէ։

Եթէ ուզում ենք տալ պարսկական քիւրդստանի հայերին օրինաւոր կեանք, եթէ ուզում ենք ստեղծել նրանց համար բարեկեցիկ վիճակ, պէտք է հիմնօրէն փոփոխել տիրող պայմանները, դնել այն ժողովրդին բոլորովին այլ պայմանների մէջ, ազատել այդ առասպելական հարկերից ու բեգերից վերացնել հարստահարութիւնները, ապահովել նրա սեփական աշխատանքը, և այլն և այլն։ Այս դէպքում նա և՛ տնտեսապէս կըբարգաւանի և՛ կուլտուրապէս։

Ահա մի նեղրական, արքազան գործ, ամբողջ մի ժողովրդի ազատագրութեան գործ. թող առաջ գան մեր հարուստ բարեբարները, թող չխնայեն իրենց նեղները եթէ լինի փող, նիւթական միջոց, կարելի է հոգեր գնել այդ թշուառ ժողովրդի համար, կենդրոնացնել նրանց մի տեղում և դրա հետ միասին զարկ տալ կրթական գործին, զարգացնել ազգային գիտակցութիւնը, տարածել հայ լեզուն—մի խօսքով հայացնել նրան։

Ահա ծառայութեան, լուրջ ծառայութեան արժանի առարկայ։

ՂԱՐԱԳԱՂԻ ՀԱՅԵՐԸ

Ղարաղաղը Ատրպատականի ընդարձակ և հայաշատ գաւառներից մէկն է և բռնում է հիւսիսային ծայրը։ Ղարաղաղը ամբողջապէս ծածկւած է լեռնային ցանցով, իսկ այդ լեռները բռնւած են խիտ անտառներով։ Այդ կողմից Ղարաղաղը միակն է ամբողջ Ատրպատականում, իսկ ամբողջ Պարսկաստանում քիչ մասեր կան, որ այդ տեսակէտից հաւասարւեն Ղարաղաղին։ Այս վայրերի անտառները և լեռնային ցանցերի ծալքերում թաղւած բնական հանքերը կազմում են Ղարաղաղի անհատնում, անսպառելի հարստութիւնը։ Հէնց այդ տեսակէտից նա գրաւում է առաջնակարգ և նշանակալից դիրք։ Այո, հարստութեան անսպառելի աղբիւր։ Բայց միայն այդքան։ Բնիկ ժողովուրդը դեռ այնքան անպատրաստ, այնքան տգէտ է, որ անկարող է շահագործել իրեն վիճակւած բնական, հանքային հարստութիւնները։ Նոյն անպատրաստութիւնը և անկարողութիւնը ցոյց է տալիս նաև կառավարութիւնը։ Վերջերս միայն այդ հարստութիւնները գրաւել են օտար շահագործողների ուշադրութիւնը։

Այժմեան Ղարաղաղ գաւառը չունի իր նախկին փայլն ու հռչակը, այն պատմական շրջանի, երբ Ատրպատականի այդ լեռնագաւառը կոչւում էր Փայտակարան։ Այդ հռչակաւոր և պատմական Փայտակարանը այժմ վերածւել է մի սովորական գաւառի. ուրիշ ոչինչ։ Ոչ միայն այդ, Ղարաղաղը, Պարսկաստանի այդ նշանաւոր գաւառը, առանձնացած և չեզօքացած անկիւն է ներկայացնում իրենով։ Նա բլորովին կտրւած է «դրբոխ» աշխարհից։ զուրկ քաղաքակրթութեան բարիքներից և մատնւած սոսկալի անուշադրութեան։ Ղարաղաղը չունի ոչ փոստատուն, ոչ հեռագրատուն։ Այնպէս որ ժողովուրդը ոչ մի հնարաւորութիւն չունի իմանալ «դրսի» անցած-դարձածի մասին։ Եթէ երբեմն էլ լրագիրների թափթփուկներ, հնացած համարներ ստացւում են Ղարաղաղում, այդ լինում է եկողների ձեռքով. թէև հէնց այդ հին համարները թարմ են ղարաղաղ-

ցինքի համար։ Կամ եթէ այս բոլորի վրայ աւելացնենք և այն, որ այստեղ գոյութիւն չունեն իսկական դպրոցներ, վերցրած ընդարձակ մաքով, կարծում եմ տխուր, մռայլ պատկերը աւելի ամբողջացած, աւելի լրիւ կլինի։ Բայց այդ մասին յետոյ։

Ամբողջ Ղարադաղը կազմուած է 5 գաւառամասերից-Գէյվան, Տզմար, Մեշափար, Մնջուան և Հասանով—և պարունակում է իր մէջ 29 հայաբնակ գիւղեր։

ԳԷՑՎԱՆ ԳԱՒԱՌԱԿ

տուն հայ, տունը 6 հոգ.											
Սքղէն	100	.	.	.	600	Սուրուն	30	.	.	.	180
Ղասումաշէն	60	.	.	.	360	Նորաշէն	20	.	.	.	120
Գեօկդարա	60	.	.	.	360	Աշրապ	20	.	.	.	120
Ասրան	50	.	.	.	300	Մրհատաւու	20	.	.	.	120
Բերդ	40	.	.	.	240	Ընդամ.	400	տ.	հայ		2,400

ՏԶՄԱՐ ԳԱՒԱՌԱԿ

տուն հայ											
Խանակեան	96	.	.	.	576	Աղաղան	41	.	.	.	246
Իւրկիւթ	51	.	.	.	306	Ղշլաղ	39	.	.	.	234
Սարգու	48	.	.	.	288	Ղուլուտի	34	.	.	.	204
						Ընդամ.	309				1,854

ՄԵՇԱՓԱՐ

տուն					
Ողան	65	.	.	.	390
Մէղկիթ	40	.	.	.	240
Կէրմանաւա	35	.	.	.	210
Քալալա	25	.	.	.	150
Նէփէշթ	16	.	.	.	96
Ընդամենը	181				1,086

ՄՆՋԻԱՆ

տուն					
Վինէ	78	.	.	.	468
Էմրէդուլ	40	.	.	.	240
Քարագլուխ	35	.	.	.	210
Սեահոդ	25	.	.	.	150
Վարդանաշէն	23	.	.	.	138
Ընդամենը	201				1,206

ՀԱՍԱՆՕՎ

տուն					
Նորաշէն	40	.	.	.	240
Օղա	35	.	.	.	210
Լիւմա	18	.	.	.	108
Վիաքիւ	15	.	.	.	90
Ընդամ.	108				648

Ուրեմն Ղարադաղն ունի 1,199 տուն կամ 7,194 բնակիչ հայ ազգաբնակութիւն, մի քիչ կլորացնենք թիւը՝ կասցուի 7,000 հայ։ Դա փոքր թիւ չէ և Ղարադաղը հայերի շատութեան կողմից Արբպատականում համարւում է երկրորդ գաւառը (Սալմաստ)։

Ղարադաղի գիւղերի մեծագոյն մասը պատկանում է թուրք բեգերին և խաներին։ Ողան, Մեզկիթ, Էմբեդուլ, Քարագլուխ, Վարդանաշէն և Վինէ գիւղերը պատկանում են Թումանեանցներին, իսկ Նորաշէն և Վիանքիւն «Ցոյժ» եկեղեցուն, ինչպէս և Օղան գիւղի կէսը։ Անյիշատակելի ժամանակներից, Նոյնքան վերստ թեան վրայ ցիկ ձորում ս. Գէորգ նստանը, նի ուխտատոզ ՂարէնաՑոյժ»նը ունի զեր և անարդիւնք, միայն նրա մեացել անառանց դպմենատատխուլ է, վերթեան անպէտքեր նստանի դիւնքը, որ տարեկան թուման, է թուրքիանց դպրոցներ։ Ինչ դաւն, միևնոյն ժամանակ հեղնական հիմարութիւն է. հարստահարած գաւառացու կոպէկներով կրթւում է հարուստի զաւակը, իսկ ինքը, հարստահարուածը...

Ղարադաղցի հայ

29 գիւղերից միմիայն Աղադանը, Ծանագեանը և Ողանը ունեն դպրոցներ, բայց այն էլ Աստուած դպրոց հաստատի։ Առաջինը պահւում է կանանց բարեգործական ընկերութեան ծախսերից, Նոր հեռաւորութեամբ գեղեցանում է «Ցոյժ» մեղը յայտնեղի է ատրաղաղում։ մենատոգիւղեր, հոտաւանք ու բայց, ոչ գիւղերն են մինիթաբ, բոցի, այլև նը խարբաշինուհրաժեշտ ունի։ Մեսաբրոդ Ջաբլինում է մոտ 4-500 յատկացնել զի «Աբամեան» դպրոցին։ Ինչ դաւն, միևնոյն ժամանակ հեղնական հիմարութիւն է. հարստահարած գաւառացու կոպէկներով կրթւում է հարուստի զաւակը, իսկ ինքը, հարստահարուածը...

29 գիւղերից միմիայն Աղադանը, Ծանագեանը և Ողանը ունեն դպրոցներ, բայց այն էլ Աստուած դպրոց հաստատի։ Առաջինը պահւում է կանանց բարեգործական ընկերութեան ծախ-

ով, իսկ վերջին երկուսը Եղ. Թումանեանների։ Այս երեք գիւղերի ուսուցիչներն էլ անպատրաստ, իրենց կոչմանը անարժան մարդիկ են։ Գան նաև մասնաւոր պարապողներ, որոնք դասաւանդում են գլխաւորապէս տներում։ Զարմանալի է, Եղբ. Թումանեանները, որոնք ամենայն պատրաստակամութեամբ և առատութեամբ նուիրաբաշխում են զանազան հիմնարկութիւնների, ընկերութիւնների, այն ինչ իրենց հայրենի գիւղի, իրենց ծննդավայրի վերաբերմամբ ասես շատ ժլատ են, ասես չեն ուզում ձեռք մեկնել իրենց հարազատ ժողովրդին։ Ինչին վերագրել այդ, չէ՞ որ եթէ ուզենան (և այդ նրանց սեպուհ պարտականութիւնն է) կարող են ամբողջ Ղարադաղը ծածկել դպրոցներով։

Ղարադաղի ժողովուրդը աւելի քան տգետ է և վերին աստիճանի մոռացողաղ։ Նրանք հաւատում են մի շարք նախապաշարմունքների. քահանաներն՝ փոխանակ ձգտելու այդ փարատել՝ միւս կողից աւելի ամրապնդում, նոյնիսկ տարածում են և նրանք են զանազան «Քաւչ»-երի հեղինակը ու հովանաւորութեամբ են պարապում։

Ճիշտ է, դարադաղցի հայը տգետ, կռպիտ և վայրենի է, բայց ունի լեռնականի ժողովրդներին յատուկ լաւ, գովելի յատկութիւններ։ Դարադաղի հայերը իրենց քաջութեամբ և անվեհերութեամբ անհամեմատ բարձր են Պարկատանի միւս մասերի հայերից։ Ղարադաղցի հայերը գիտեն լաւ բանեցնել զէնք. դրեթէ ամեն մի ընտանիք ունի իր ընտիր հրացանը և միանգամայն պատրաստ են ինքնապաշտպանութեան համար։ Իսկ պահանջը ամեն թոյլ զգացուում է, քանի որ յաճախ ենթարկուում են Թուրքերի և քիւրդերի յարձակումներին։ Իրենց պապերի քաջարի կուելու յատկութիւնը ստացել են սրանք։ Անցեալում Ղարադաղը ունեցել է մի շարք մելիքներ, օրինակ Մելիք-Սարգիս, Ջհան, Ծաչատուր, որոնք անագին դեր են խաղացել և լաւ կռուողի համբաւ են վայելել։ Այդ ազդեցիկ մարդիկ կարողացել են ճնշել, յաղթահարել աւազակաբարոյ քիւրդերին, ինչպէս Թուրք խան-բէգերին և գաւառն ազատ պահել աւարառութիւններից և յափշտակութիւններից։ Բայց այժմ չկան նրանք հրշակաւոր և ազդեցիկ մելիքներ, մնացել են միայն նրանց թափթփուկները։

Ղարադաղը ունի ընդհանրապէս բերրի, արգաւանդ հող և ժողովուրդը պարապում է գլխաւորապէս երկրագործութեամբ և անասնապահութեամբ, մասամբ էլ շերամապահութեամբ։ Արհեստները զարգացած չեն։ Հողի արդիւնքը բաւարարութիւն չի տալիս պահանջող կարիքներին, նամանաւանդ Թուրքի ոտ-

Եռա հայերին, որոնք արդիւնքի արդէն նշանաւոր բաժինը տա-
ւել են գիւղատէր Թուրքերին։ Եւ դարադարձին էլ պանդխտում
է մի կտոր հաց ձեռք բերելու համար. գնում են խմբերով,
գլխաւորապէս Շուշի և Կովկասի միւս քաղաքները։ Ատրպա-
տականի շատ մասերում ցորենի բերքը երբեմն ծախսն հաղիւ
է հանում։ Նախ՝ բերքի նշանաւոր մասը գիւղատէրն է տա-
նում, և երկրորդ, գիւղացին չկարողանալով կատարելագործուած
միջոցներով մշակել հողը՝ ստանում է աննշան բերք, այն ինչ
գնում է բաւական ծախս և աշխատանք։ Եւ այս պատճառով՝
գաւառացու սիրտը ատում, կտրւում է հողից։

Այո, պարսկահայ գաւառացու տնտեսական վիճակը ամէն
տեղ անմխիթար է և ոչ բարեկեցիկ։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԹԵՄԻ ՀԱՅԵՐԸ

Պարսկաստանի Թեմի հայերը բնում են բուն Իրանը, գլխաւորապէս Սպահանի կուսակալութիւնը և Մազանդարան կամ Գիլան նահանգները։ Այս Թեմի հայերը, ինչպէս յայտնի է, ծնունդներ են այն մեծ գաղթականութեան, որ կատարուեց XVII դարում Շահ-Աբաս մեծի ձեռքով։ Ատրպատականը դատարկուեց, ինչպէս և հարևան մի քանի գաւառներ, և այդ վայրերի հայերը քշուեցին 1665 թուին դէպի Պարսկաստանի բուն նահանգները, գլխաւորապէս Սպահանի շրջակայքը և կազմեց այս Թեմը։ Աւերուեց Հին-Ջուղան և նրա տեղ, Սպահանի մօտ, կազմուեց Նոր-Ջուղան, որը շատ կարճ ժամանակում այնքան ծաղկեց, առաջադիմեց, որ ստացաւ մեծ հռչակ։ Սպահանի բուն հայերն էլ գաղթեցին դէպի արևելք և բնակութիւն հաստատեցին Հնդկաստանում Ջաւայում և այլն։ Այս գաղթականութիւնն էլ միացած է Նոր-Ջուղայի հետ կոչւում է Պարսկա-Հնդկաստանի Թեմ. բայց մենք զբաղուելու ենք միմիայն պարսկական հողում եղած հայերով։

Պարսկաստանի Թեմի կենտրոնը և առաջնորդարանիստ վայրը համարւում է Նոր-Ջուղան։ Պարսկաստանի Թեմի հայերը ընդհանրապէս ցրուած են, բնում են մեծ տարածութիւն, բայց մեծ մասը կենտրոնացած է Նոր-Ջուղայի շուրջը։ Պարսկաստանի այդ մասի գրեթէ բոլոր վաճառաշահ քաղաքներում հայեր կան, թէև, իհարկէ, թւով ոչ նշանաւոր։ Այս Թեմի հայերի թիւը հաշւում են մօտաւորապէս 30 հազար. ասում եմ «մօտաւորապէս», որովհետև բնակիչների ճիշտ վիճակագրութիւն կայ։ Նոր-Ջուղայի հայերը հաշւում են 524 տուն. Թեհրան 350 տուն, Ռաշտ 100 տուն, Համադան 70 տ. Ղազուին 40 տ. Ենզելի 22 տ, Շիրազ 10 տ. հայեր կան փոքր թւով նաև Բուշիր Բալֆրուշ, Մեշիդիսար և Զէնջան քաղաքներում, կայ մօտ 1140 տուն հայ ազգամբնակութիւն, տունը հաշուելով 5-ից քիչ աւելի անդամից, անում է 6500 բակիչ։ Բացի այդ՝ Թեհրանի շրջակայքում կան 6 հայաբնակ գիւղեր՝ 60 տուն բնակչով, իսկ Համա-

դանին կից Շաւարին գիւղը՝ 70 տուն։ Ուրեմն ամբողջ քաղաքների և այդ շրջանի՝ 7 գիւղերի հայ ազգաբնակութիւնն է մօտ 6800 բնակիչ. ուրեմն կընշանակի մնացած մեծագոյն բաժինը կենտրոնացած է Նոր-Խուդայի շրջակայ գաւառամասերում։

Ամենահայաշատ գաւառներն են Փերիա և Զհար-մհալ։ Փերիան ունի 26 հայաբնակ գիւղեր, 1901 թւին կազմած վիճակագրութեան համաձայն՝ 1,500 տուն բնակիչ և համարւում է ամենահարուստը բոլոր գաւառների մէջ։

Փերիա գաւառի գիւղերից 16 զուտ հայաբնակ, իսկ մնացածները խառն են պարսիկներով։ Իսկ Զհար-մհալ գաւառը ունի 10 գիւղ, 800 տուն բնակչով,

ՓԵՐԻԱ ԳԱՒԱՌ

	տուն
Թովլաթաբադ	40
Գրդեր	40
Նամակերտ	170
Սանգիբարուն	165
Վերին Խոյգեան	130
Ներքին Խոյգեան	30
Դաշան	20
Բոլորան	110
Նազարշրիբ	40
Ղօշղալա	10

ԶՀԱՐ-ՄՀԱԼ ԳԱՒԱՌ

	տուն
Մաժուան	75
Լիւասիան	150
Ստորին Գունարք	40
Վերին Գունարք	100
Սինագան	25
Բօլդալի	40
Մաժուքա	140
Հաշիաբադ	65
Սիրաք	85
Ահմադաբադ	70
Ընդամենը	800 տ. 4300 բնակիչ.

ՓԵՐԻԱ ԳԱՒԱՌ

	տուն
Ծահրա	45
Ազնաւուլ	25
Հաղաս	90
Խունկ	45
Բժկերտ	20
Շրդկան	50
Միլակերտ	110
Զիգան	30
Գարամելիք	20
Անկերտ	45
Սդիգան	40
Բարդալա	40
Սվարան	45
Ղարդուն	100
Շահրուլաղ	38
Գողխաուտ	17
Ընդամենը	1500 տ. 8000 բնակիչ.

Թէ Փերիա գաւառի և թէ Զհար-Մհալի գիւղերը իրար շատ մօտիկ են ընկած, և յարաբերութիւնը կատարւում է դիւրութեամբ։

են ազգային երգ։ Այդ անկիւնում քահանան էլ քրդերէն կամ թիւրքերէն է խօսում, թուրքերէն է լինում նրա քարոզը։ ս. Գրքից մի գլուխ կարդալիս նա բացատրում է դարձեալ թիւրքերէն կամ քրդերէն։

Այդ թրքացած հայերը լաւ քրիստոնեաներ են և շատ մեծ եռանդով հետևում են պաս պահելուն։ Այդ մասին մի բնորոշ դէպք են պատմում։ Մի տարի, դեռ երկու շաբաթ առաջ, սկսում են պահել պասը, կարծելով, որ հէնց այդ շաբաթն է պասը։ Անցնում է ամբողջ շաբաթը և յանկարծ մէկը յայտնում է, որ իրենք սխալուած են, այս շաբաթ չէր ս. Սարգսի պասը, այլ առաջիկայ շաբաթ։ Եւ նրանք միւս ամբողջ շաբաթն էլ են պաս պահում դարձեալ վերջին օրը կասկածներ են առաջ գալիս և ստիպուած մէկին ուղարկում են Մարաղա հատուատ բան իմանալու և ի հարկէ, ճիշտը իմանալով, պահում են նաև երրորդ շաբաթը։

Բացառութիւններ չեն անշուշտ այն օրինակները, որ հայը ամուսնանում է քրդի, թուրքի հետ, թէկուզ բռնութեամբ, և այդ ընտանիքն էլ բնականաբար դառնում է թուրք։ Դիւղացին այդտեղ սեփական ոչինչ չունի, շատ տեղերում տունն էլ գիւղացունը չէ, գրւդատէրն է տներ շինում և յանձնում իր ճորտերին, իսկ երբ քէֆն ուզենայ՝ կարող է թևից բռնել և դուրս նետել։

Այդ բոլորը մի կողմից, քիւրդ աշիրաթների պարբերաբար կրկնւող աւարատութիւնները և կողոպուտները միւս կողմից, աւելի ու աւելի վէրքեր են առաջացնում և ստեղծում մի թշւառ ու ստրկացած տարր։ Զանազան քիւրդ ցեղեր իրար հետ ընդհարուելիս խեղճ գիւղացիներն են մէջտեղում տուժում, նրանք են հարստահարւում և ջնաս կրում։ Իսկ յաճախ կրկնւող բռնաբարութիւնները և առևանգումները գալիս են պատկերի պակասը լրացնելու և ամեն ինչ կատարեալ կացուցանելու։

Բացի այդ բոլորից, այդ կողմի հայերը ընկած լինելով այդ խուլ անկիւնում, բոլորովին կտրւած են արտաքին աշխարհից, որոշ գիւղեր ոչ մի յարաբերութիւն չունեն դրսի հետ։ Նրանք չգիտեն թէ ինչ է կատարւում մի քանի հարիւր վերստ հեռաւորութեան վրայ և կարծում են, որ երկրագնդի վրայ ապրում են միմիայն իրենք և քիւրդերը։

Խեղճ ժողովուրդ...

Բայց ի՞նչ է ներկայացնում այդ անկիւնի հայերի կրթական գործը։ Բողոքական միսիոնարները վաղուց սկսել են իրանց պրոպագանդան և այժմ ունեն մի երկու դպրոց, բայց

Աստուած դպրոց համարէ։ Այդ դպրոցները կառավարում են չարչի և տիրացու ուսուցիչներ, որոնք իրանց ողորմելի մտաւոր պաշարով բոլորովին անկարող են կեանքի մէջ փոփոխութիւն մտցնել, օգուտներ տալ։ Նրանք առհասարակ ձգտում են մարդիկ որսալ։ Նրանք քիչ ու շատ աջողութիւն ունեն Ուրմի հայերի մէջ։

Կանանց բարեգործական միացեալ ընկերութիւնն է վերցրել իր վրայ այդ շրջանի կրթական գործի ծանրութիւնը և, պիտի խոստովանեալ, նա պատուաւոր կերպով առաջ է տանում։ Ուրմիում և պարսկական քրդաստանում ընկերութիւնը ունի մի շարք ուսումնարաններ, որոնք մի մի լուսոյ ջահեր են այդ թրքացած հայերի համար։ Մայրենի լեզու կամաց-կամաց այդ դպրոցների միջոցով տարածում է նոր-սերունդների մէջ։ Ինչքան հրչում է մարդ, երբ տեսնում է փոքրիկ թրքական հայը թոթովում է մայրենի լեզուով։ Ցոյս ունենք, որ ընկերութիւնը աւելի ու աւելի կը բարելաւի դպրոցները, պատրաստուած մարդիկ կը հրաւիրի պաշտօնի, դպրոցների համար յատուկ շէնքեր կը շինի, մի պակաս, որ շատ աչքի է խփում ընկերութեան դպրոցների համար։ Զը հաշուած Թաղիաբաղը, ոչ մի դիւղ չունի դպրոցական յարմար շէնք։

Բայց այդ բոլորը միայն մի կաթիլ է կազմում կարիքի մեծ ովկիանոսում։ Կարծում ենք, իւրաքանչիւր հայի պարտականութիւնն է մտածել այդ մի բուռն հայերի մասին, միջոցներ ձեռք առնել, որքան հնարաւոր է, փրկել նրանց կորստից, կրթութիւն տարածել, սերունդ պատրաստել։ Ամենից շատ այդ պարտականութիւնը ծանրանում է Ատրպատականի առաջնորդարանի վրայ, բայց ինչ է անում նա, կատարում է իր պարտականութիւնը։ Պէտք է ասել ցաւելով, որ առաջնորդները ընդհանրապէս շատ քիչ, գրեթէ երբէք ուշադրութիւն չեն դարձրել այդ քրիստոնեայ թիւրքերի և քրդերի վրայ և չեն դարձնում այժմ էլ։ Ուրմին թէև առանձին փոխանորդութիւն է համարում, բայց առհասարակ լուրջ և պատրաստած հոգևորականներ չեն եկել։ Այս շրջանը աւելի քան կարիք ունի խելացի և փորձուած փոխանորդի, աչքի առաջ ունենալով հայերի հոգևոր անմխիթար վիճակը մի կողմից, օտար միսիոնարների զօրեղ պրոպագանդը միւս կողմից։ Ուրմիի այժմեան փոխանորդ Թշուռնի վարդապետը շատ անյարմար է, ոչ պատրաստուած անձնաւորութիւն է, ոչ էլ փորձուած, այնպէս որ բոլորովին անկարող է օգտակար լինել հայ ժողովրդին, նա միայն մի աւելորդ բեռն է։ Ուրմին և Սալմաստը կարիք ու-

նեն լուրջ և տեսուած հոգևորականների, ամեն ջահել վարդապետի տեղը չէ։

Եթէ ուզում ենք տալ պարսկական քիւրդստանի հայերին օրինաւոր կեանք, եթէ ուզում ենք ստեղծել նրանց համար բարեկեցիկ վիճակ, պէտք է հիմնօրէն փոփոխել տիրող պայմանները, դնել այն ժողովրդին բոլորովին այլ պայմանների մէջ, ազատել այդ առասպելական հարկերից ու բեգիատից վերացնել հարստահարութիւնները, ապահովել նրա սեփական աշխատանքը, և այլն և այլն։ Այս դէպքում նա և՛ անտեսապէս կբարձրանի և՛ կուլտուրապէս։

Ահա մի նեբրական, սրբազան գործ, ամբողջ մի ժողովրդի ազատագրութեան գործ. թող առաջ գան մեր հարուստ բարեբարները, թող չխնայեն իրենց նեբրները եթէ լինի փող, նիւթական միջոց, կարելի է հողեր գնել այդ թշուառ ժողովրդի համար, կենդրոնացնել նրանց մի տեղում և դրա հետ միասին զարկ տալ կրթական գործին, զարգացնել ազգային գիտակցութիւնը, տարածել հայ լեզուն—մի խօսքով հայացնել նրան։

Ահա ժառանգութիւն, լուրջ ժառանգութիւն արժանի առաքելոյ։

ՂԱՐԱԴԱՂԻ ՀԱՑԵՐԸ

Ղարադաղը Ատրպատականի ընդարձակ և հայաշատ գաւառներից մէկն է և բռնում է հիւսիսային ծայրը։ Ղարադաղը ամբողջապէս ծածկուած է լեռնային ցանցով, իսկ այդ լեռները բռնուած են խիտ անտառներով։ Այդ կողմից Ղարադաղը միակն է ամբողջ Ատրպատականում, իսկ ամբողջ Պարսկաստանում քիչ մասերը կան, որ այդ տեսակէտից հաւասարուին Ղարադաղին։ Այս վայրերի անտառները և լեռնային ցանցերի ծալքերում թաղուած բնական հանքերը կազմում են Ղարադաղի անհատնում, անսպառելի հարստութիւնը։ Հէնց այդ տեսակէտից նա գրաւում է առաջնակարգ և նշանակալից դիրք։ Այո, հարստութեան անսպառելի աղբիւր։ Բայց միայն այդքան։ Բնիկ ժողովուրդը գեռ այնքան անպատրաստ, այնքան ոգէտ է, որ անկարող է շահագործել իրեն վիճակուած բնական, հանքային հարստութիւնները։ Նոյն անպատրաստութիւնը և անկարողութիւնը ցոյց է տալիս նաև կառավարութիւնը։ Վերջերս միայն այդ հարստութիւնները գրաւել են օտար շահագործողների ուշադրութիւնը։

Այժմեան Ղարադաղ գաւառը չունի իր նախկին փայլն ու հռչակը, այն պատմական շրջանի, երբ Ատրպատականի այդ լեռնագաւառը կոչւում էր Փայտակարան։ Այդ հռչակաւոր և պատմական Փայտակարանը այժմ վերածուել է մի սովորական գաւառի, ուրիշ ոչինչ։ Ոչ միայն այդ, Ղարադաղը, Պարսկաստանի այդ նշանաւոր գաւառը, առանձնացած և չիզօքացած անկիւն է ներկայացնում իրենով։ Նա բլոքովին կտրուած է «դրբոի» աշխարհից։ զուրկ քաղաքակրթութեան բարիքներից և մատնուած սոսկալի անուշադրութեան։ Ղարադաղը չունի ոչ փոստատուն, ոչ հեռագրատուն։ Այնպէս որ ժողովուրդը ոչ մի հնարաւորութիւն չունի իմանալ «դրսի» անցած-դարձածի մասին։ Եթէ երբեմն էլ լրագիրների թափթփուկներ, հնացած համարներ ստացւում են Ղարադաղում, այդ լինում է եկողների ձեռքով. թէև հէնց այդ հին համարները թարմ են դարադաղ-

ցինքի համար։ Դակ եթէ այս բոլորի վրայ աւելացնենք և այն, որ այստեղ գոյութիւն չունեն իսկական դպրոցներ, վերցրած ընդարձակ ժողով, կարծում եմ տխուր, ժողովրդը աւելի ամբողջացած, աւելի լրիւ կլինի։ Բայց այդ մասին յետոյ։

Ամբողջ Ղարադաղը կազմուած է 5 գաւառամասերից—Քէյվան, Տզմար, Մեշափար, Մնջուան և Հասանով—և պարունակում է իր մէջ 29 հայաբնակ գիւղեր։

ՔԷՑՎԱՆ ԳԱՒԱՌԱԿ

տուն հայ,	տունը 6 հոգ.	ք֊ն.	տուն հայ,	տունը 6 հոգ.	ք֊ն.
Սրղբն .	100	600	Սուրուն	30	180
Գասումաշէն	60	360	Նորաշէն	20	120
Գեօկդարա	60	360	Աշրապ	20	120
Ասրան .	50	300	Մրհուաւու	20	120
Բեբդ .	40	240	Ընդամ.	400 տ. հայ	2,400

ՏԶՄԱՐ ԳԱՒԱՌԱԿ

տուն հայ		ք֊ն.	տուն հայ		ք֊ն.
Խանակեահ	96	576	Աղարան	41	246
Իւրկիւթ .	51	306	Ղշլաղ .	39	234
Սարդու .	48	288	Ղուլուսի	34	204
			Ընդամ.	309	1,854

ՄԵՇԱՓԱՐ

	տուն	ք֊ն.
Ողան .	65	390
Մէզկիթ	40	240
Կէրմանաւա	35	210
Քալալա .	25	150
Նէփէշթ .	16	96
Ընդամենը	181	1,086

ՄՆՋԻԱՆ

	տուն	ք֊ն.
Վինէ .	78	468
Էմրէղուլ	40	240
Քարագլուխ	35	210
Սևահոդ .	25	150
Վարդանաշէն	23	138
Ընդամենը	201	1,206

ՀԱՍԱՆՕՎ

	տուն	ք֊ն.
Նորաշէն	40	240
Օղա .	35	210
Լիւմա .	18	108
Վիաքիւ	15	90
Ընդամ.	108	648

Ուրեմն Ղարադաղն ունի 1,199 տուն կամ 7,194 բնակիչ հայ ազգաբնակութիւն, մի քիչ կլորացնենք թիւը՝ կստացուի 7,000 հայ։ Դա փոքր թիւ չէ և Ղարադաղը հայերի շատութեան կողմից Ատրպատականում համարւում է երկրորդ գաւառը (Սալմաստ)։

Ղարադաղի գիւղերի մեծագոյն մասը պատկանում է թուրք բէգերին և խաներին։ Ոզան, Մէզկիթ, Էմրէգուլ, Գարապլուխ, Վարդանաշէն և Վինէ գիւղերը պատկանում են Թաւմանեանցներին, իսկ Նորաշէն և Վիեանքիւն «Ցոյժ» եկեղեցուն, ինչպէս և Օղան գիւղի կէսը։ Անյիշատակելի ժամանակներից, Նոչորս վերստ թեան վրայ ցիկ ձորում ս. Գէորգ նստատանը, նի ուխտաւորջ ՂարէլեաՑոյժ»նը ունի դեր և անարդիւնք, միայն Դրա Ամացել անառանց գոմնատաւոր է, վեթեան անպէտքնք նստատանի դիւնքը, որ տարեկան թուան, է թուրքաշէնից հեռաւորուսի գեղգանուում է «Ցոյժ» մեոյը յայտաեղի է ամրաղաղում մնատատագիւղեր, հոտաներ ու բայց, ոչ գիւղերն են միխիթար, բոցի, այլև նը խաբրաշինուհրաժեշտ ունի։ Մեամբոզ Ջաբլինում է մօտ 4-500 յատկացել զի «Աբամնան» գպրոցին։ Ի՞նչ դառն, միևնոյն ժամանակ հեգնական ճշմարտութիւն է. հարստահարւած գաւառացու կոպէկներով կրթւում է հարուստի զաւակը, իսկ թնքը, հարստահարւածը...

29 գիւղերից միմիայն Աղաղանը, Խանագեանը և Ոզանը ունեն գպրոցներ, բայց այն էլ Աստուած գպրոց համարի։ Առաջինը պահւում է կանանց բարեգործական ընկերութեան ծախ-

Ղարադաղցի հայ

ով, իսկ վերջին երկուսը Եղ. Թումանեանները։ Այս երեք գիւղերի ուսուցիչներն էլ անպատրաստ, իրենց կոչմանը անարժան մարդիկ են։ Գան նաև մասնաւոր պարապողներ, որոնք դասաւանդում են գլխաւորապէս տներում։ Զարմանալի է, Եղբ. Թումանեանները, որոնք ամենայն պատրաստակամութեամբ և առատութեամբ նեղբարաշխում են զանազան հիմնարկութիւնների, ընկերութիւնների, այն ինչ իրենց հայրենի գիւղի, իրենց ծննդավայրի վերաբերմամբ ասես շատ ժլատ են, ասես չեն ուզում ձեռք մեկնել իրենց հարազատ ժողովրդին։ Ինչին վերագրել այդ, չէ՞ որ եթէ ուզենան (և այդ նրանց սեպուհ պարտականութիւնն է) կարող են ամբողջ Ղարադաղը ծածկել դպրոցներով։

Ղարադաղի ժողովուրդը աւելի քան ազնիւ է և վերին աստիճանի անոտիապաշտ։ Նրանք հաւատում են մի շարք նախապաշարմունքների. քահանաներն՝ փոխանակ ձգտելու այդ փարատել՝ միւս կողից աւելի ամրապնդում, նոյնիսկ տարածում են և նրանք են զանազան «Ֆալչ»-երի հեղինակը ու հրմայութեամբ են պարարում։

Ճիշտ է, դարադաղցի հայը ազնիւ, կոպիտ և վայրենի է, բայց ունի լեռնաբնակ ժողովրդներին յատուկ լաւ, գովելի յատկութիւններ։ Դարադաղի հայերը իրենց քաջութեամբ և անվեհերութեամբ անհամեմատ բարձր են Պարկատանի միւս մասերի հայերից։ Ղարադաղցի հայերը գիտեն լաւ բանեցնել զէնք. գրեթէ ամեն մի ընտանիք ունի իր ընտիր հրացանը և միանգամայն պատրաստ են ինքնապաշտպանութեան համար։ Իսկ պահանջը ամեն բոլէ զգացւում է, քանի որ յաճախ ենթարկւում են Թուրքերի և քիւրդերի յարձակումներին։ Իրենց պապերի քաջաբի կուելու յատկութիւնը ստացել են սրանք։ Անցեալում Ղարադաղը ունեցել է մի շարք մելիքներ, օրինակ Մելիք-Սարգիս, Ջհան, Ծաչատուր, որոնք ահագին դեր են խաղացել և լաւ կուռդի համբաւ են վայելել։ Այդ ազդեցիկ մարդիկ կարողացել են ճնշել, յաղթահարել աւազակաբարոյ քիւրդերին, ինչպէս Թուրք խան-բէգերին և գաւառն ազատ պահել աւարառութիւններից և յափշտակութիւններից։ Բայց այժմ չկան նրանցպէս հրշակաւոր և ազդեցիկ մելիքներ, մնացել են միայն նրանց թափթփուկները։

Ղարադաղը ունի ընդհանրապէս բերրի, արգաւանդ հող և ժողովուրդը պարապում է գլխաւորապէս երկրագործութեամբ և անասնապահութեամբ, մասամբ էլ շերամապահութեամբ։ Արհեստները զարգացած չեն։ Հողի արդիւնքը բաւարարութիւն չի տալիս պահանջող կարիքներին, նամանաւանդ Թուրքի-տոյ-

*ետ հայերին, որոնք արդիւնքի արդէն նշանաւոր բաժինը տա-
լիս են գիւղատէր Թուրքերին։ Եւ գաբաղաղցին էլ պանդխտում
է մի կարգ հաց ձեռք բերելու համար. գնում են խմբերով,
գլխաւորապէս Շուշի և կովկասի միւս քաղաքները։ Աստղա-
տականի շատ մոտերում ցորենի բերքը երբեմն ծախսն հազիւ
է հանում։ Նախ՝ բերքի նշանաւոր մասը գիւղատէրն է տա-
նում, և երբորդ, գիւղացին չկարողանալով կատարելագործուած
միջոցներով մշակել հողը՝ ստանում է սննդեան բերք, այն ինչ
գնում է բաւական ծախս և աշխատանք։ Եւ այս պատճառով
գաւառացու սիրտը սառում, կտրւում է հողից։*

*Այո, պարսկահայ գաւառացու տնտեսական վիճակը ամեն
տեղ անմխիթար է և ոչ բարեկեցիկ։*

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԹԵՄԻ ՀԱՅԵՐԸ

Պարսկաստանի Թեմի հայերը բռնում են բուն Իրանը, գլխաւորապէս Սպահանի կուսակալութիւնը և Մազանդարա կամ Գիլան նահանգները։ Այս Թեմի հայերը, ինչպէս յայտնի է, ճեացորդներ են այն մեծ գաղթականութեան, որ կատարուեց XVII դարում Շահ-Աբաս մեծի ձեռքով։ Ատրպատականը գատարկուեց, ինչպէս և հարևան մի քանի գաւառներ, և այդ վայրերի հայերը քշուեցին 1665 թուին դէպի Պարսկաստանի բուն նահանգները, գլխաւորապէս Սպահանի շրջակայքը և կազմեց այս Թեմը։ Աւերուեց Հին-Ջուղան և նրա տեղ, Սպահանի մօտ, կազմուեց Նոր-Ջուղան, որը շատ կարճ ժամանակում այնքան ծաղկեց, առաջադիմեց, որ ստացաւ մեծ հռչակ։ Սպահանի բուն հայերն էլ գաղթեցին դէպի արևելք և բնակութիւն հաստատեցին Հնդկաստանում Ջաւայում և այլն։ Այս գաղթականութիւնն էլ միացած է Նոր-Ջուղայի հետ կոչւում է Պարսկա-Հնդկաստանի Թեմ. բայց մենք զբաղուելու ենք միմիայն պարսկական հողում եղած հայերով։

Պարսկաստանի Թեմի կենտրոնը և առաջնորդարանիստ վայրը համարւում է Նոր-Ջուղան։ Պարսկաստանի Թեմի հայերը ընդհանրապէս ցրուած են, բռնում են մեծ տարածութիւն, բայց մեծ մասը կենտրոնացած է Նոր-Ջուղայի շուրջը։ Պարսկաստանի այդ մասի գրեթէ բոլոր վաճառական քաղաքներում հայեր կան, թէև, իհարկէ, թւով ոչ նշանաւոր։ Այս Թեմի հայերի թիւը հաշւում են մօտաւորապէս 30 հազար. ասում եմ «մօտաւորապէս», որովհետև բնակիչների ճիշտ վիճակագրութիւն կայ։ Նոր-Ջուղայի հայերը հաշւում են 524 տուն. Թեհրան 350 տուն, Ռաշտ 100 տուն, Համադան 70 տ. Ղազբին 40 տ. Էնզելի 22 տ, Շիրազ 10 տ. հայեր կան փոքր թւով նաև Բուշիր Բալֆրուշ, Մեշիդիսար և Զէնջան քաղաքներում, կայ մօտ 1140 տուն հայ ազգաբնակութիւն, տունը հաշուելով 5-ից քիչ աւելի անդամից, անում է 6500 բակիչ։ Բացի այդ՝ Թէհրանի շրջակայքում կան 6 հայաբնակ գիւղեր՝ 60 տուն բնակչով, իսկ Համա-

գանին կից Շուարին գիւղը՝ 70 տուն։ Ուրեմն ամբողջ քաղաքների և այդ շրջանի՝ 7 գիւղերի հայ ազգաբնակութիւնն է մօտ 6800 բնակիչ. ուրեմն կընշանակի Ճացած մեծագոյն բաժինը կենտրոնացած է Նոր-Ջուղայի շրջակայ գաւառամասերում։

Ամենահայաշատ գաւառներն են Փերիա և Չհար-մհալ։ Փերիան ունի 26 հայաբնակ գիւղեր, 1901 թուին կազմած վիճակագրութեան համաձայն՝ 1,500 տուն բնակիչ և համարւում է ամենահարուստը բոլոր գաւառների մէջ։

Փերիա գաւառի գիւղերից 16 զուտ հայաբնակ, իսկ Ճացածները խառն են պարսիկներով։ Իսկ Չհար-մհալ գաւառը ունի 10 գիւղ, 800 տուն բնակչով,

ՓԵՐԻԱ ԳԱՒԱՌ

	տուն
Թովլաթաբադ	40
Գրդեր	40
Նամակերտ	170
Սանգիրաբուն	165
Վերին Խոյգեան	130
Ներքին Խոյգեան	30
Դաշան	20
Բոլորան	110
Նազարշրիր	40
Ղօշղալա	10

ՉՀԱՐ-ՄՀԱԼ ԳԱՒԱՌ

	տուն
Մամուռան	75
Լիւասիան	150
Ստորին Գունարք	40
Վերին Գունարք	100
Սինագան	25
Բօլղալի	40
Մամուրա	140
Հաշիրաբադ	65
Սիրաք	85
Ահմադաբադ	70
Ընդամենը	800 տ. 4300 բնակիչ.

ՓԵՐԻԱ ԳԱՒԱՌ

	տուն
Ճանրա	45
Ազնաւուլ	25
Հաղաւ	90
Խունկ	45
Բժկերտ	20
Շրդկան	50
Միլակերտ	110
Չիգան	30
Դարամելիք	20
Անկերտ	45
Սդիգան	40
Բարդալա	40
Սվարան	45
Ղարդուն	100
Շահբուլաղ	38
Գողխաոտատ	17
Ընդամենը	1500 տ. 8000 բնակիչ։

Թէ Փերիա գաւառի և թէ Չհար-Մհալի գիւղերը իրար շատ մօտիկ են ընկած, և յարաբերութիւնը կատարւում է դիւրութեամբ։

Սպանանի շրջակայ միւս գաւառակներն են։

Բուրվարի գաւառ,	15 հայաբնակ գիւղեր	630 տ.	3400 բն.
Գեամարա . . .	9	530	2800 »
Գեապչա	10	460	2400 »
Գեաղազ	10	450	2300 »

Ընդամենը 45 հայաբնակ գիւղ 2,070 տ. 10900 բն. հայերով։

Այսպէս ուրեմն. Պարսկաստանի բուն նահանգների հայերի թիւը առաջ բերուած թուականների համաձայն, հասնում է մօտ 5646 տան, հաշուելով տունը 6 անդամ, կլինի 33,840 բնակիչ։ Բայց, որովհետև կան վայրեր, ուր իւրաքանչիւր տունը միջին թւով ունի 6-ից պակաս բնակիչներ (միայն Փերիա գաւառում տունը կազմուած է շատ հոգուց), վստահութեամբ կարելի է Պարսկաստանի թեմի հայերը հաշուել 30,000։

Քաղաքներում բնակւող հայերը անհամեմատ հանգիստ են, կեղեքումներից, հարստահարութիւններից ազատ և պարապում են գլխաւորապէս վաճառականութիւնով, հում նիւթերի արտահանութեամբ և ժամը առնարով։ Միայն վերջերս մի քանի քաղաքներ, ինչպէս Թեհրան, Թաշտ, Էնզէլի և այլն, հայերը սկսել են զբաղուել գինեվաճառութեամբ, ինչպէս օղիավաճառութեամբ, մի ոգեղ, անպատուաբեր զբաղմունք հայերիս համար։

Անտաւաբեր է նրա համար, որ խմիչքները ծախում են գլխաւորապէս թուրքերին-պարսիկներին և շատ անգամ «սկիտանախանան» լինում է տան մէջ, երբեմն մատակարարում են նոյնիսկ կանայք։ Դրանով հայ ընտանիքի դուռը բացւում է պարսիկների, գլխաւորապէս լկտի, սրիկա պարսիկների առաջ։ Նոյն այդ ցած պարապմունքը, արատով աշխատանքը կայ Ատրպատականի բոլոր կողմերում, շատ անշան բացառութեամբ։ Պարսկահայը իր պատիւը չարատաւորելու համար պիտի աւելի գերադասի «հալալ», մաքուր աշխատանքի ցամաք հացը, քան այդ սև, բծաւորուած աշխատանքի փլաւը-խորտիկը։

Գաւառացի հայերի ունեցական դրութիւնը անմիջապէս է։ Բոլոր գիւղերը բաժանւում են երկու կարգի—«քալիս է» կամ արքունական և «ատրաբի»։ «Քալիս է» գիւղերը անհամեմատ բարձր են ունեցապէս, քան «ատրաբի» գիւղերը։ Այդ գիւղերը տալիս են միմիայն արքունական տուրը, այն էլ միայն գեանի հարկ, ամբողջ արդիւնքը աշխատողին-համայնքին է։ Իսկ «ատրաբի» կամ ազատական գիւղերը տալիս են արդիւնքի 1/9-ը և գլխահարկ։ Այնպէս որ այս թեմի հայերի դրութիւնը

լաւ է, քան Ատրպատականին։ Այս թեմումն էլ, «Բարբարի» անհամեմատ գիւղերը ենթարկուած են կուլտուրտէրերի քայքայիչ ազդեցութեան, կրում են ամեն տեսակի անպատուութիւն և անխիղճ կերպով կեղեքւում և հարստահարւում են։ Քիչ ու շատ բարեկեցիկ և հանգիստ կեանք են վարում այն գիւղերը, որոնք ունեն հաստատ, ազդեցիկ կուլտուրտէր-աբրաքներ, ինչպէս Զիլի սուլթան, Նայիբ սալթանէ և այլն։

Հայերը թէև հագնւում են պարսկի նման, բայց պահպանում են ազգային առանձնայատկութիւնները։ Վերին ատրճանի կրօնասէր ժողովուրդ է, որ հասնում է մինչև իսկ կրօնամոլութեան, պահում են ամենաանշան պատն անգամ, խօսում են մաքուր հայերէնով, շատ մօտիկ Արարատեան բարբառին։ Անծանօթ մարդը դժուարութեամբ կըկարողանայ տարբերել գաւառացի պարսկահային Արարատեան դաշտի հայից, ի հարկէ լեզուի կողմից։ Այդ կողմից անհամեմատ բարձր են սրանք Ատրպատականի հայերից։ Մենք չենք կարող ցոյց տալ բուն Պարսկաստանում մի անկիւն, որ հայերը լինէին պարսկախօս կամ Թուրքախօս, այն ինչ Ատրպատականում այդպիսի շատ անկիւններ մատնանիշ ենք արել։ Բայց Պարսկաստանի թեմումն էլ կան շատ գաւառներ և գիւղեր, որ դեռ տիրում է խորին տգիտութիւնը և անհրաժեշտօրէն պահանջ է զգացւում ջերմացնող լոյսի։ Բուն Պարսկաստանի հայն էլ պանդխտում է, բայց հէչ ատրպատականցու չափ։ Գաղթում են գլխաւորապէս Նոր-Ջուղայից, և սրանց պանդխտավայրերն են Հնդկաստան, Ջաւա և այլն։ Ամեն տարի Նոր-Ջուղայից 50-ի չափ տղամարդիկ և մանուկ-պատանիներ են գաղթում, բայց շատ անչնչան տոկոսն է վերադառնում. մեծագոյն բաժինը փլչանում, այլասերւում է։ Մի ընդհանուր չարիք է դա պարսկահայերի համար, որ պիտի աշխատել միջոցներ ձեռք առնել և կանգնեցնել այդ հոսանքը։

Այստեղ էլ հարեմական կեանքը դեռ տիրում է, կանայք միշտ էլ գրեթէ փակուած են տանը, գործ են ածում նոյնիսկ քթկալ, մի բան, որ Ատրպատականում արդէն վերացել է։ Ընտանիքները անհամեմատ բազմամարդ են. նահապետական դրութիւնը շարունակւում է։ Կան ընտանիքներ, ինչպէս պատմում են, որ կազմուած են 20—30 հոգուց։ Նոյնիսկ աւելի, մի բան, որ Ատրպատականում կըդժուարանանք այդպիսի մի ընտանիք անգամ ցոյց տալ։

ՊԱՐՍԿԱՀԱՅԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸ

I.

Պարսկահայերի կրթական գործը ունի մեծ յիսուն տարուայ պատմութիւն։ Կանոնաւոր և անդրանիկ դպրոցները պարսկահայերի կեանքում հիմնւում են յիսունական թուականներին։ Դրանից առաջ գոյութիւն ունէին միայն խալիֆայական վարժարաններ, այն էլ մի երկու հատ, ինչպէս Նոր-Ջուղայում, ս. Թադէի վանքում, Թաւրիզում, և որտեղ անւում, կրթւում էր ամբողջ մատաղ սերունդը։ Այդ վարժարաններում իհարկէ սովորում էին միայն հասարակ գրագիտութիւն, եկեղեցական ժամասացութիւն, ժամագիրք և այլն։

Անցեալ XIX դարի կէսին միայն հոգևոր պետը, Ներսէս Ե. Աշտարակեցին առանձին և լուրջ ուշադրութիւն դարձրեց Պարսկահայերի վրայ և դրեց ճշմարիտ կրթական հաստատութեան հիմքը։ Թաւրիզ և Նոր-Ջուղա. ահա այն երկու կենտրոնական վայրերը, ուր հիմնեցին պարսկահայերի կրթութեան առաջին որթանները։ Այդ անդրանիկ դպրոցների հիմնադիրներն էլ հոգևորականներ էին, երկու թեմական առաջնորդներ՝ Սահակ և Թադէոս եպիսկոպոսները։ Երկուսն էլ ուսումնասէր էին. երկուսն էլ կարող և գործին նւիրւած, որոնք ուղարկւած էին Ներսէս Ե. Աշտարակեցու կողմից այն հրահանգով, որ իրենց գործունէութեան մէջ մեծ տեղ տան կրթութեան գործին։ Այդպէս էլ անում են։ Թադէոս եպիսկոպոսը դպրոցի հիմքը դնում է իր թեմում՝ Նոր-Ջուղայում, իսկ Սահակ եպիսկոպոսը Թաւրիզում։ Երկու եպիսկոպոսներն էլ մեծ հաւատով և անսահման եռանդով սկսած գործը աջողութեամբ գլուխ են բերում, Թադէոս եպիսկոպոսը դպրոցի հիմքը դնելուց զատ, նա նւէրներով ապահովւում է դպրոցի դրութիւնը, վերջին էլ իր ամբողջ գոյքը և ունեցածը կտակում դպրոցին։ Աւելի լուրջ և խիստ դիմադրութիւն է ունենում Սահակ եպիսկոպոսը Թաւրիզում։ Նրա տոկուն ջանքը, մեծ հաւատն էին որ ամեն ինչ ոչնչաց-

բեցին և սկսած գործը յաղթանակով պսակեց։ Թաբրիզի «Արաժեան» դպրոցի այժմեան շէնքը, ինչպէս և առաջնորդարանը, Սահակ եպիսկոպոսի շինածն են։ Մինչև այժմ էլ պատմում են Թաւրիզում այդ հաստատութիւնների շինութեան հետ կապուած յիշողութիւնները և արկածները. պատմուում է նոյն իսկ շատ մանրամասնութիւններով։ Ժողովուրդը, ֆանատիկ ժողովուրդը կատաղել, գրգռուել էր առաջնորդի այն վարմունքի համար, որ մտադիր էր գերեզմանոցի մի մասի վրայ շինել առաջնորդարանը և դպրոցը։ Բայց նա չի վհատուում և համարձակութեամբ ձեռնարկում է շինութիւնը։ Պատմում են, որ նա ծածուկ և դիշերով շինութեան հիմքը գցեց, ինքն էլ էր աշխատում, ինչով նա կարող էր, և աշխատում էր հնար եղածին չափ շուտով վերջացնել։ Յաջորդ օրը առաւօտեան կատաղած ամբոխը յարձակուում է առաջնորդարանի վրայ և ուզում են բանուած հիմքը քանդել, բայց Սահակ եպիսկոպոսը կուրծքը դէմ է տալիս սպառնացող ժողովրդին և թոյլ չի տալիս մօտենալ հիմքին։ Քանի-քանի անգամներ էլի մտածել, կազմակերպել են նման յարձակումներ, բայց նա դիմադրել է այդ բոլորին և աջողութեամբ վերջացրել։

Այո, այն ժամանակ հալածում, քարկոծում էին, իսկ այժմ... այժմ երախտապիտութեամբ են յիշում նրա անունը և միայն փառաբանում է։ Սահակ եպիսկոպոսն էլ կատակեց դպրոցին իր ունեցածը և մնայուն դրամագլուխ կազմեց, մի դրամագլուխ, որից մինչև այժմ էլ կիսով չափ ապահովուած է դպրոցը։

Այսպէս ուրեմն, պարսկահայերի կանոնաւոր և ճշմարիտ ուսման հիմքը դրին այդ երկու հոգևորականները և նրանց կատարած դերը այդ գործում անագին է։ Դրանք եղան Պարսկահայերի լուսաւորութեան պիոնէրները, բայց, դժբախտաբար, չունեցան իրենց հաւասար յաջորդները, որոնք նոյն հաւատով, նոյն անձնուիրութեամբ շարունակէին սկսուած գործը, աւելի ու աւելի ընդարձակ էին, զարգացնէին և սիստեմատիքաբար առաջ տանէին։ Ճիշտ է, եղել են թեժակալ առաջնորդներ, որոնց դրաղեցրել է դպրոցական գործը, բայց չեն փայփայել դպրոցը, չեն դարձրել մտածմունքի լուրջ և խիստ կարևոր առարկայ։ Անշուշտ դրանով պիտի բացատրել այն աչքի զարնող երևոյթը որ այդ փայլուն շրջանին հետևում են երկար և ամուլ տարիներ, հետևապէս պարսկահայերի կրթութեան գործը առաջ է գնում կրիայի քայլերով, կաղէկաղ, առանց նշանաւոր բարեփոխութիւններ ցոյց տալու։

Այդ վհատեցուցիչ և աղօտ իրականութիւնը շարունակուում է համարեա մինչև XIX դարի վերջերը։ Ինսուլնական թեմական-

ներին միայն առանձին կենդանության նշաններ էին նկատվում այդ ասպարիզում։ Ասես այժմ է միայն հասկացվում կրթության ահագին անհրաժեշտությունը պարսկահայերի համար, մի անհրաժեշտություն, որ կազմում է ամեն մի ժողովրդի գոյության խարիսխը։ Այժմ երևում են հրապարակում հոգևորական և աշխարհական, և ձեռք ձեռքի տված և ընդհանուր ոյժերով մղում, զարկ տալիս դպրոցական գործին։ Մէկիկ-մէկիկ դպրոցները բացվում են Պարսկաստանի զանազան նշանավոր տեղերում, շինվում են դպրոցական շէնքեր և կամաց-կամաց կրթական գործը հասնում է ներկայ համեմատաբար կանոնավոր և նախանձելի վիճակին։ Այժմ շատ խուլ անկիւններ անգամ ունեն իրենց դպրոցները։ Եւ այդ ահագին առաջադիմությունը կատարվել է մոտ մի տասնեակ տարվայ ընթացքում։

Պարսից վեհապետները միշտ էլ, ինչպէս անցեալում, նոյնպէս և այժմ, հաշտ աչքով են նայել և նայում են հայերի այդ շարժումների վրայ նոյնիսկ խրախուսում, իրենց հովանավորության տակ վերցնում նման ձեռնարկությունները, մի խօսքով ամեն կերպ հնարավորություն* և դիւրություն տալիս։ Նոյն բարեացակամ և լուսամիտ վերաբերմունքը դէպի հայերը ունի նաև այժմեան Մուզաֆֆէր-Էդդին Շահնշահը և որպէս փայլուն ապացույց այդ վերաբերմունքի շնորհել է նա այս փէրմանը, որև ստորև անփոփոխ առաջ եմ բերում։

«Այն օրից, ինչ Փէյան փառահեղ թագավորների գահը և Իրանի կայսրության Շահնշահությունը մեր Օգոստափառ անձնավորության վիճակեց, իբրև երախտագիտություն առ Աստուածային նախախնամությունը, մենք տարածեցինք մեզ շնորհած ողորմության հառագայթները մեր կայսրության բոլոր բնակիչների վրայ, ինչ ազգի, ինչ ցեղի և կրոնի պատկանէին սրանք, և ամենքին հայրենիքի որդիներ համարելով՝ ամեն առիթով և ամեն պարագայում նրանց բարօրության համար ոչինչ չբնայեցինք։ Ցոյս ունենք, որ ամենակարող Աստծու օգնությամբ աւելի քան ցարդ վայելելով երկնային օժանդակության շնորհը մեր այս սուրբ պարտականության մէջ լի առջողություն գտնենք։

«Եւ արդ, մի բան, որ մեր սրտի բարի իղձերի հետ կատարելապէս համապատասխան է, այն է, որ մեր կայսրության հայ ազգաբնակությունը որ հին ժամանակներից ի վեր ապաստանած է առ ոտս պարսից արքայական գահի, և որը մշտական հաւատարիմ հպատակության և հայրենասիրության ապացույցներ է տուել, այժմ մտադիր է իր դպրոցների թիւն

աւելացնել. Թեհրանում, Դավրէժում և Պարսկաստանի այլ գաւառներում հաստատել մի քանի կենդրոնական նշանաւոր դպրոցներ և այս առիթով մեր Օգոստոփառ Վեհափառութիւնից արտօնութիւն է խնդրել այդ դպրոցների բացման համար։ Հայերի այդ նպատակը մեր սրտաբուխ փափագների հետ համաձայն գտնելով և նկատելով, որ այդ նպատակը մեր հպատակների առաջադիմութեան պատճառ պիտի դառնայ կրթութեան, արհեստների և երկրագործութեան ասպարէզներում, և վաճառականութեան զարգացման մղիչ պիտի հանդիսանայ, ասոյն հզօր Արքայական ֆիրմանով շնորհում ենք նրանց արտօնութիւն՝ Պարսկաստանի հայ դպրոցների բացման համար, և այդ դպրոցները մեր մասնաւոր հոգածութեան և պաշտպանութեան տակ առնելով՝ հրամայում ենք, որ այն գումարները, որոնք այդ ձեռնարկութեան համար յատկացուելու են, գործադրուեն նոյն գործի ձեռնարկողների և հոգաբարձուների մշակելիք կանոնագրութեան համեմատ որոշուած ծախսերի համար։ Ընդհանրապէս բոլոր հաստատուած դպրոցները մեր արքայական Անձնաւորութեան պաշտպանութեան տակ դնելով, հրամայում ենք, որ մեր բոլոր պաշտօնեաները ամեն տեսակ աջակցութիւն և օգնութիւն ներեն նոյն սուրբ գործի աջողութեան համար։

Տրուած է Իէջէր ամսին, 1318 թուին։

II.

Այսպէս ուրեմն, պարսկահայերի կրթական հիմնարկութիւնները միանգամայն ապահովուած են և վայելում են բարձրագոյն իշխանութեան հովանաւորութիւնը։ Մնում է միայն հրապարակ գան խելացի և պարտաւորուած ղեկավարներ, հարուստ բարեբարներ և անցնեն գործի գլուխ։ Եւ պէտք է ասել, որ այս վերջին մի քանի տարիների ընթացքում շատ լաւ արուեց։ Այժմ երկու թեմերում էլ—Ատրպատականի և Պարսկա-Հնդկաստանի լաւագոյն ոյժերի մասնմունքի և հոգածութեան ամենակարևոր և կենսական հարցն է դառել կրթութեան յուսաւորութեան գործը։ Երկու թեմերից համեմատաբար աւելի բախտաւոր է Ատրպատականը, այդ էլ գուցէ այն պատճառով, որ հայերը աւելի խմբուած են և մօտ է Գոմկասին, որտեղից և ստացել է իր ուսուցիչները։ Մօտենք թեմերի մասին գատ-գատ։

Նոր-Ջուղան լինելով Պարսկա-Հնդկաստանի թեմի առաջնորդարանիստ քաղաքը և հայաշատ կենդրոնը, որի շուրջը ա-

սես ծնաբած են մի շարք հայաբնակ գիւղեր, ամբողջ ուշադրութիւնը իր վրայ է գրաւել անցեալում, ինչպէս և այժմ գրաւած պահում է։ Նոր-Ջուղան դեռ իր հիմնարկութեան առաջին տարիներից ունեցել է դպրոց, ի հարկէ խալիֆայական բնաւորութեամբ և Տէր-Թոդիկեան—խալֆանները։ Այդ դպրոցները եղել են և վանքում և եկեղեցիներում, ուր սովորեցնում էին հասարակ գրագիտութիւն, գրել-կարդալ, առևտրական իրաւունք. եկեղեցուն վերաբերող ուսմունքներ։ Այդ դպրոցների ուսուցիչները եղել են ընդհանրապէս առաջնորդները և հոգևորականները։ Այդ դպրոցները իրենց էութեամբ այնքան ողորմելի, այնքան խեղճ ու կրակ էին, որ բոլորովին անկարող էին շարժում առաջ բերել, կենդանութիւն մտցնել և սերունդ պատրաստել։ Եւ այդպէս կաղէկաղ, անկերպարան գրութեամբ շարունակւում է մինչև յիսունական թուականները, երբ գալիս է Թադէոս արքեպիսկոպոս Բէկնազարեանը, այն ուժեղ բազուկը, տաք սիրտը, որը այնքան պատուաւոր տեղ ունի կրթութեան պատմութեան էջերում և եղաւ ճշմարիտ դպրոցի հիմնադիրը Պարսկա-Հնդկաստանի թեմում։ Նա միանգամից երկու դպրոց է բանում և աշխատում հետզհետէ կանոնաւոր հիմունքների վրայ դնել։ Նրա օրօք է բացւում նաև օրիորդաց «Ս. Կատարինեան» դպրոցը (1868 թ.) որը առաջինն է ոչ միայն այդ թեմում, այլ ամբողջ Պարսկաստանում։ Այդ դպրոցը շատ մեծ դեր է խաղացել Նոր-Ջուղայի հայերի կեանքում և մեծ զարկ տուել կանանց կրթութեանը։ Վերջապէս 1880 թուին եղած դպրոցները միացւում են և կազմում այժմեան «ազգային կենդրոնական դպրոցը»։ Իր սկզբնական շրջաններում «ազգային կենդրոնական» դպրոցն էլ անկերպարան վիճակի մէջ է եղել, սիստեմատիկ դասաւանդութիւնը գրեթէ բացակայել է և չէ ունեցել պատրաստուած, իրենց կոչմանը արժանի ուսուցիչներ։ Բայց այժմ նա հասնում է գրեթէ ամենականոնաւոր և դասընթացով ամենաբարձր դպրոցը։ «Ազգային կենդրոնական» դպրոցը այժմ բաղկացած է երկու նախակրթարանից և եօթ դասարաններից, որը իր կուրսով համապատասխանում է մեր հոգևոր միջնակարգ դպրոցներին, զուցէ մի քիչ ուելի։ Իսկ 1900 թուին Հնդկաստանում, Ջաւայում և Նոր-Ջուղայում հանգանակութիւն է սկսւում և այդ նպաստներով լինում են օրիորդաց դպրոց, մի ընդարձակ շինութիւն, իր բոլոր բաժանմունքներով։ «Ս. Կատարինեան» օրիորդաց դպրոցն էլ տարէց տարի ընդարձակւելով և կանոնաւորւելով այժմ ունի երկու նախակրթարան և վեց դասարան, որը մտնում է գիմնազիային։

1901 թվին Նոր-Ջուղայում աւելացաւ մի դպրոց էլ, ապահովւած և ապագայ խոստացող դպրոց, որը հաստատել է տիկին Վասիլառէ Քանանեանը իր ամուսնու յիշատակին և նրա անունով էլ կոչւում է «Գէորգ Քանանեան»։ Այդ դպրոցը ունի արդէն իր գեղեցիկ և ընդարձակ շէնքը։ «Քանանեան» դպրոցն էլ կապւած է «Ազգային կենդրոնականին», բայց նա պահպանելու է յամենայն դէպս իր որոշ ինքնուրոյնութիւնը։

Բացի վերև յիշւած հայոց ազգային դպրոցներից, Նոր-Ջուղայում կաթոլիկները և բողոքականներն էլ ունեցել են և այժմ էլ ունեն իրենց դպրոցները։ Օտարները ունեցել են տարիներ, երբ իրենց նախանձելի աստիճանին հասած՝ խիստ կերպով մրցել և յաղթանակել են մեր ազգային դպրոցներն և ունեցել նշանաւոր թւով աշակերտներ։ Բայց այժմ, երբ կան ազգային կանոնաւոր ներ, քնակնաբար է հակակշիռ դեր փելիսրէն տեղի են թը նկատելի է ոչ նման նշանաւոր կաստանի այն ամեն անգամ, ուր ունենք ւոր դպրոցներ։

Մաբաղայի կին

Ջուղայի շուրջը կան մի շարք գիւղեր, ւոր մնունդը սատ-Նոր-Ջուղան պիտի յանձն առնի գիւղատպագրում այդ և բարձր դպրոցանկարող են մի որև խաղալ և անխուսափելիս։ Այդ երևոյթիայն Նոր-Ջուղայի վայրում, այլ Պարսխուլ անկիւններում ազգային կանոնա-

Ասացի, որ Նոր-ծւարած, խմբւած որոնք իրենց մասնում են նրանից։ գեկավարողի դեր բի վերաբերմամբ և տեսակէտից կատա-

բելիք նրա դերը լինելու է մեծ և նշանակալից։ Բայց մինչև այժմ ասես ամեն ուշադրութիւն բացառապէս նւիրել են այդ կենդրոնին և գործ են դնում խոստացած հոսանք և ջանք։ Այն ինչ մի շարք գիւղեր և կաբևոր վայրեր շրջակայքում կազմում են, «խաւար աշխարհ» մի անկիւնը։ Ճիշտ է, այդ գիւղերում կան դպրոցներ, աւելի ճիշտ կլինի ասել, դպրոցի նման բաներ, բայց դրանք էլ այնքան անկանոն և խեղճուկ են, որ առաջին դեր անկարող են խաղալ։ Այդ դպրոցները լինում են շատ անգամ ուսի, ցածլիկ և խոնաւ խրճիթներում, գետնի վրայ նստած, իսկ ուսուցիչներն են ընդհանրապէս տիրացուպիրներ, տէր-Թոդիկի հաւատարիմ յաշորդները։ Միայն Հա-

մաղանում վերջի տարիներս սկսել է կրթության գործը կամաց-կամաց կանոնաւորել՝ շնորհիւ տեղական փոխանորդի և երևող իսկական դպրոցի տեղի հիմնարկութիւնն։ Կանոնաւոր դպրոց կայ նաև Ղազինում։

Նոր-Զուղայից յետոյ, Պարսկա-Հնդկաստանի թեմում երկրորդ տեղը բռնում է Թէհրանը։ Այստեղ էլ ամեն բան կատարւել է միայն վերջին մի քանի տարուայ ընթացքում, իսկ աւելի կանոնաւոր ընթացքի մէջ է մտել անցեալ 1903/04 ուսումնական տարեշրջանից. իհարկէ այդ կանոնաւորութիւնը պիտի ընդունել համեմատական չափով, որովհետև Թէհրանի դպրոցներն այժմ էլ բարելաւելու շատ անհրաժեշտ բաներ ունին։ Թէհրանի հայ ազգաբնակութիւնը ապրում է երկու թաղերում։ Այժմ այդ թաղերն էլ—Հասանաբատ և Դարուազա-Ղազբինի—ունին դպրոցներ, որոնք գտնւում են մի հոգաբարձութիւն ձեռքում։ Աղջկանց դպրոցը երկդասեան է, իսկ տղայոց՝ չորսդասեան, իսկ ուսուցիչների քչութեան պատճառով դասարանները միացած են. մի անյարմարութիւն, որից պիտի ամեն կերպ խուսափել։ Այդ անպատեհութիւնը առաջացել է անշուշտ տնտեսականի սղութիւնից, բայց պակաս դեր չի խաղում և այն հանգամանքը, որ դասարաններում աննշան թւով աշակերտներ և աշակերտուհիներ կան։ Ամբողջ երկու դպրոցում լինում են 100 աշակերտ և աշակերտուհիներից ոչ աւելի, մի չնչին թիւ։ Այստեղ էլ բողոքականները և կաթոլիկները ունեն դպրոցներ, որտեղ բաւական թւով աշակերտներ և աշակերտուհիներ են յաճախում։ Ճիշտ է, Թէհրանի հայութիւնը քիչ է, բայց իրերը այնպէս են դասաւորւում, որ հետզհետէ բազմանալու է և նրանց վերապահւած է նշանաւոր դեր, լինելով կառավարութեան կենդրոն՝ նա ապահով է և համեմատարար անձեռնմխելի։ Անհրաժեշտ է, որ Թէհրանի հայ ազգաբնակութիւնը ապագայում, նոյնիսկ մօտիկ ապագայում կատարելիք իր այդ դերի լրջութիւնը զգայ և աշխատի պատրաստւել։ Եղած կրթական հիմնարկութիւնները շատ անբաւարար են, ոչ դեռ կանոնաւորւած. աւելի բարելաւելու և բարձրացնելու կարիք կայ, և այդ պահանջում է նրա ապագայի աջողութիւնը։

Բայց այդ մասին յետոյ աւելի երկար կըխօսենք։

Կանոնաւոր երկդասեան երկսեռ դպրոց կայ նաև Բաղում, ուր լինում է ընդհանրապէս 60—70 աշակերտ և աշակերտուհի։ Միդասեան երկսեռ դպրոց կայ նաև Ինդելում, որը տալիս է 30-ից ոչ աւելի աշակերտներ և աշակերտուհիներ։ Այս երկու քաղաքները ընկած են գրեթէ երկու թեմի միջին տարածութեան վրայ և ոչ մի թեմն էլ հնարաւորութիւն չի

ունենում կանոնաւոր հսկելու. բայց կարելի է աւելի շատ համարել Պարսկա-Հնդկաստանի թեմի վրայ։

Այս է ահա Պարսկա-Հնդկաստանի կրթութեան գործի արդի վիճակը, մի վիճակ, որ համաձայնութեամբ կարելի է նախանձելի համարել, եթէ, ինարկէ, համեմատենք մի տասնեակ տարի առաջ եղած վիճակի հետ։ Գրկնում եմ եթէ միայն համեմատենք, որովհետև ներկայ դրութիւնն իսկ նախանձելի համարելուց հեռու է։ Ներկայ փոքրիշատէ կանոնաւորութիւն էլ եթէ ունենք, այդ էլ շնորհիւ թեմի առաջնորդ Սահակ եպ. Այվազեանի և Նոր-Ջուղայի փոխանորդ Բազրատ վարդապետ Վարդապետեանի։ Վստահ լինելով այդ երկու լուսամիտ հոգեւորականների կարողութեան, ձեռնահասութեան և եռանդի վրայ՝ կարելի է ասել, որ կրթութեան գործը Պարսկա-Հնդկաստանի թեմում հետզհետէ աւելի պիտի կանոնաւորի, ընդարձակի և ծաւալի։

III.

Ասացինք, որ Ատրպատականի թեմը աւելի բախտաւոր է կրթութեան կողմից և մի քիթարական որոշ չափով։ Եւ այդպէս էլ է։ Այս թեմը անհամեմատ մեծ թւով դպրոցներ ունի, քան Պարսկա-Հնդկաստանը։ Եւ այդ բնական է, գուցէ նկատի ընթերցողը, քանի որ այս թեմն էլ աւելի հայաշատ է։ Ճիշտ է, բայց այդ համեմատութեամբ էլ Ատրպատականի դպրոցները իրենց քանակութեան կողմից գերազանցում են և գերակշռող տեղ բռնում։ Ատրպատականի մի շարք խուլ, յետ ընկած գիւղերն անգամ այժմ ունին կանոնաւոր դպրոցներ, իսկ գաւառական մի քանի դպրոցներ իրենց ծրագրով և դասընթացով գրեթէ հաւասարւում են Թեհրանի դպրոցներին։ Ահա ինչ ունի Ատրպատականի թեմը, որը ընդհակառակը բոցակայում է միւսում։ Բայց անցնենք փաստերին։

Բնականաբար Թաւրիզը բռնում է առաջին տեղը և ամենայն իրաւամբ կազմում է Ատրպատականի զարգացման կենդրոնը։ Թաւրիզի հայ ազգաբնակութիւնը բաժանւած է երկու թաղերում—Ղալա և Լիլաւա, երկուսն էլ ունեն կանոնաւոր դպրոցներ։

Ղալա թաղի «Արամեան» դպրոցը երջանկայիշատակ Սահակ եպիսկոպոսի հիմնածն է, մինչև այժմ էլ կանգնած է նրա կառուցած շէնքը, ինչպէս և առաջնորդարանը, միայն թեթև նորոգութիւններ են եղել։ «Արամեան» դպրոցը հիշտ է մօտ

յիսուն տարեայ կեանք ունի, բայց առանձին շօշափելի, աչքի դարնող արդիւնք չի ցոյց տուել, մի արդիւնք, որ համապատասխանէր նրա երկար գոյութեան։ Նա առաջ չի բերել առանձին ոչ խիստ, ուժեղ շարժում և հոսանք չի ստեղծել, նա չի տուել նոյնիսկ դաւառների համար պատրաստուած ուսուցիչներ և քահանաներ մի քան որ անհրաժեշտօրէն պիտի ժողովէր նրա նպատակների շրջանակի մէջ և բռնէր նշանակալից տեղ։ «Աբրահամեան» դպրոցը միշտ էլ կանոնաւոր ընթացքի մէջ է եղել և առանց ընդմիջումների առաջ տարել։ Այդ դպրոցը ընդհանրապէս ունեցել է երեք նախակրթարաններ և չորս կամ հինգ դասարաններ, այժմ վերջինն է, որ համապատասխանում է մօտ Ներսիսեան դպրոցի չորրորդ դասարանին։

Ղալայում կայ նաև օրիորդաց «Ս. Աննայեան» դպրոցը, որը միացած է «Աբրահամեան» դպրոցին և գտնւում է միևնոյն ուսուցչական խմբի ձեռքին։ Աղջիկները և տղաները փոքր բաժանմունքներում խառն են, իսկ բարձր դասարանները զատ զատ են։

Գարսկա-Հնդկաստանի թեմում աղջկանց կրթութեան հիմքը, ինչպէս տեսանք, դրուել է 1858 թուին, այն ինչ Ատրպատականում օրիորդաց առաջին դպրոցը երևում է մօտ 20 տարի յետոյ, 1879 թուին։ Օրիորդաց առաջին դպրոցը հաստատուած է «Աւարայրեան» ընկերութիւնը և որի հիմնադիրները եղել են Նազար Գօրոյեան, Մարգար Նազարբէգեան և տիկին Աշխէն Առաւելեան. վերջինս էլ առաջին երկու տարին պաշտօնավարում է դպրոցում։

Այժմեան «Ս. Աննայեան» օրիորդաց դպրոց է գրեթէ նրա շարունակութիւնն է. միայն ժամանակի ընթացքում զարգացել, բարելաւել է, փոխելով նաև անունը։ «Ս. Աննայեան» դպրոցը ունի երեք նախակրթարան և չորս դասարան. (վերջին դասարանը բացուած է Թաւրիզի հայուհեաց ընկ. ծախսով)։

Թաւրիզի Լիլաւա թաղում կրթութիւնը բաւականին ուշ է կանոնաւոր ընթացքի մէջ մտել։ Այդ եղել է մօտաւորապէս ինսնական թուականներին։ Գրեթէ միաժամանակ սկսւում է նաև աղջկանց կրթութիւնը։ Մինչև ինսնական թուականների վերջերը դպրոցները եղել են միդասեան կամ երկդասեան, իսկ դպրոցի շէնքը՝ մանաւանդ օրիորդաց, խարխուլ և անբաւարար։ Միայն 1895 թուին նոր. Թումանեանները իրենց քոյր Թամարի յիշատակին շինեցին եկեղեցու բակում մի ընդարձակ և հրաշալի շէնք՝ իր բոլոր յարմարութիւններով, որը և հանդուցեալի անունով կոչեցաւ «Թամարեան»։ «Թամարեան»

գպրոցի շենքը երկայնական է և բաղկացած է 13 մեծ և յուրաքանչյուր սենեակներից և մի դահլիճից։

Լիլաայի գպրոցների ամենափայլուն շրջանը կազմում է 1899—1903 տարիները։ Այդ ամբողջ շրջանի հոգին էր պ. Տիգրան Բաշմանեանը։ Նա կանգնած էր իր կոչման բարձրությանն վրայ և գործի գաղափարով ու համերաշխությամբ միացած էր իր խմբի հետ՝ նա ամբողջ հինգ տարի վարեց գպրոցնե-



Գարեգին Հրաչեանց վիճակագրի

ը, հմտությամբ և անսահման եռանդով։ Իր ամբողջ էությամբ նա այնպէս փայփայում, գուրգուրում էր գպրոցները, ասես սիրող ծնողը գգւում է իր միակ զաւակին։ Այդ միայն կարող են նրանք զգալ, որոնք նրա հետ գործել են կամ մոտիկից ծանօթ են նրա այդ հինգամեայ գործունէության հետ։

Նրա տեսչության օրով Լիլաայի «Հայկազեան» տղայոց գպրոցը երկարող դասարանից բարձրացաւ մինչև վեցերորդ

դասարանի։ 190/0²/8 ուսումնական տարեշրջանում նա արդէն ունէր երեք նախակրթարաններ և վեց հիմնական դասարան որը ունէր մեր հոգևոր միջնակարգ դպրոցների ծրագիրը և դասընթացը, միայն այս դպրոցում աւելի շատ տեղ տուած էր մանկավարժութեանը և հոգեբանութեանը, քան հոգևոր դպրոցներում, մանաւանդ առաջինին, որ անցնում էին թէ թէօրիան և թէ գործնականը։ Եւ Հայկազեան դպրոցը 1903 թ.-ից առաջին ընթացաւարտները, թւով 10 հոգի։ Դրանք տհաս պատանիներ չէին, այլ հասուն և խելահաս երիտասարդներ, և դրանք բախտուէին լինել ոչ միայն Աստրպատականի, այլ և՝ ամբողջ Պարսկաստանի առաջին ընթացաւարտները։ Յաջորդ ուսումնական տարում դրանցից 5 հոգի հրաւիրուեցին ուսուցչութեան պաշտօնով զանազան վայրերում, չորսը Սալմաստում, մէկն էլ Բաշտում։ Իսկ այս 190⁴/05 ուս. տարեշրջանում լիլաւայի ընթացաւարտներից հինգը պաշտօնավարում են Սալմաստում, մէկն էլ ընթացաւարտ աշակերտուհիներից, երկուսն էլ Թաւրիզի Լիլաւայի դպրոցում։ Հէնց այդ կողմից նրա կատարելիք դերը ահագին էր և մեծ բարիք գաւառների համար, քանի որ տնտեսականի սղութեան պատճառով անկարող են Կովկասից հրաւիրել, այն ինչ Թաւրիզից անհամեմատ պակաս վարձատրութեամբ համաձայնում են գալ։ Բայց յաջորդ տարին Պ. Թաշմանեանը անկարող եղաւ մնալ, հրաժարուեց և հեռացաւ, որովհետև նրա իրաւունքների սահմանափակումն առաջարկուեց Թեմական Առաջնորդի կողմից, իսկ դպրոցը տնտեսութեան խնդրից առաջացած խռովութիւնների պատճառով ամբողջ տարին փակուած մնաց։ Ուրիշ խոսքով, մի հարուածով հինգ տարուայ անդուլ աշխատանքի արդիւնքը աւերուեց, գործը տակն ու վրայ եղաւ։ Այս խոսքերը ես գրում եմ սրտի խորին կսկիծով և դառնութեամբ, ասենք անգամ յիշելիս մարդի հոգին տրում, արիւն է կուլ տալիս։

Օրիորդաց դպրոցը Պ. Թաշմանեանի օրով միդասեանից բարձրացաւ երկրդասեանի, բայց աւելի կանոնաւորուեց և լաւ հիմքերի վրայ դրուեց։ Այս 190⁴/5 տարեշրջանին բացուեց Լիլաւայի դպրոցները, բայց այժմ ունի միայն մինչև չորրորդ դասարան։

Լիլաւայի դպրոցները այդ հինգ տարուայ ընթացքում միշտ էլ ցոյց էր տուել յարաճուն զարգացում, և կանոնաւորութիւն ուսումնական բաժնի կողմից։ Լիլաւայի դպրոցներում մտան այնպիսի բարենորոգումներ, որոնք դեռ գործնական ընթացքի մէջ չեն մտել համեմատաբար աւելի քաղաքակիրթ շատ երկրների կրթական հիմնարկութիւնների մէջ։ Դուրս վռնդուեց թաւ-

նշանների անժիտ և անպէտք, նոյնիսկ ճշտակաբ սովորութիւնը. կրճատուեց տարեկան քննութիւնների աւելորդ և շատ անգամ կորստաբեր՝ գործածութիւնը, իսկ դրանից իբր առաջացած պակասը ծածկելու համար՝ յայտարարուեց որ դպրոցի դռները բացեն բոլորի համար, թող գան և տեսնեն թէ ինչ է կատարուում ներսում։ Ուսուցիչները իրենց պաշտօնում աւելի փորձելու և հմտանալու համար, մոցրեց «փորձնական դասերի» օգտակար սովորութիւնը. նոյնը և՛ վեցերորդ դասարանի աշակերտների համար և այլն և այլն։ Մի խօսքով այդ շրջանը կարծում ենք, կազմելու է «Հայկազեան» դպրոցի կեանքի ամենաբեղուն, լուսաւոր տարիները, թէև կուզէի սխալուած լինել, բայց չեմ կարծում։

Լիլաւայի դպրոցները ունենում են առհասարակ մօտ 300 աշակերտներ և աշակերտուհիներ, իսկ դալայի դպրոցները՝ 240—260 հոգի։ Այդ դպրոցներից զատ, երկու թաղերում կան կանանց բար. ընկերութեան մանկապարտէզները, իւրաքանչիւրում տարեկան լինում են 30—50 տղաներ և աղջիկներ, 4—7 տարեկան հասակի երեխաներ։

Բացի այդ ազգային կրթական հաստատութիւններից, Թաւրիզում ունեն դպրոցներ նաև բողոքական ու կաթոլիկ միսիոնարները։ Բողոքականները գեռ եօթանասնական թուականների վերջերին հիմնել են իրենց դպրոցը իսկ կաթոլիկները միայն անցեալ 1901 թ.ից։ Կաթոլիկների դպրոցը ուղղակի մտքի սպանդանոց է, մտքի ազատ թռիչքները սեղմելու, խեղդելու մի վայր։ Ինչ անուն ուզում տուէք, բայց յամենայն դէպս դպրոց չէ, ազատ մտածողութեան համար լայն հորիզոններ բաց անող հիմնարկութիւն չէ։ Եւ եթէ տեղացիները իրենց ազգաներին ուղարկում են կաթոլիկների մօտ միայն ֆրանսերէն լեզուն սովորելու համար է։ Բողոքականների դպրոցները անհամեմատ բարձր են առաջիններից, բայց նրանք էլ ճշմարիտ դպրոցին այնքան մօտիկ չեն։ Նրանց դպրոցներում տիրում է խիստ կրօնական ոգի և ֆանատատիկ «աստուածաշնչապաշտութիւնը»։ Բողոքականների և կաթոլիկների դպրոցներում սովորում են 150-ից աւելի աշակերտներ և աշակերտուհիներ։ Այդ դպրոցների պոյութիւնը, նամանաւանդ կաթոլիկներինը, ոչ միայն աւելորդ է, նոյնիսկ ճշտակաբ, Հարկաւոր է միայն ազգային դպրոցները աւելի ընդարձակել և աշխատել չեղոքացնել միսիոնարներին։ Այժմ առանց այդ էլ նրանց գիրքը խախտուում է, քանի որ ժողովուրդը կամաց-կամաց գիտակցական ոյժ է ներկայացնում. և որքան բարձրանայ մասսայի մտաւորական և իրերի խորը թափան-

ցելու կարողութիւնը, այնքան աւելի երերուն և կասկածելի կը դառնայ միսիոնարների դրութիւնը Թաւրիզում, ինչպէս և ամբողջ Պարսկաստանում։

Սրանք են ահա Թաւրիզի դպրոցները, կրթական հիմնարկութիւնները։ Ամբողջ Թաւրիզը, որ ունի մօտ 700 տուն հայ ազգաբնակութիւն, տալիս է մօտաւորապէս 800 աշակերտներ, իւրաքանչիւր տունը ուրեմն տալիս է մէկ սովորողից աւելի։

Այս է Ատրպատականի կենդրոնական վայրի կրթութեան գործի պատկերը։ Այժմ դառնանք նրա գաւառներին։ Բոլոր գաւառներից համեմատաբար մխիթարական վիճակի մէջ է Սալմաստը, որը բռնում է առաջին տեղը։ Մենք Սալմաստին կը նուիրենք առանձին գլուխ։ Սալմաստից յետոյ աչքի է ընկնում էլի Ուրմին։ Ուրմին, ինչպէս և համանուն լճի արևմտեան կողմը ընկած միւս գաւառամասերը, օրինակ Սուլդուզ, Բարանդուզ, Միանդուաբ և Սօուղ-բուլաղ, երկար ժամանակ մատնուած էին սոսկալի, ապանիչ անուշադրութեան։ Այդ վայրերի հայ ազգաբնակութիւնը խարխափում էր խորին տգիտութեան և խաւարի աշխարհում։ Ժողովուրդը մոռանում էր իր ազգային առանձնայատկութիւնները, հալւում և կենդանի կենդանի մեռնում։ Հարկաւոր էր լոյսի տաք և սթափեցնող ճառագայթներ, որ ցնցէր նրանց և ջերմութիւն տար։ Եւ այս վերջին տասնամեակում մէկի-մէկի երևացին այդ խաւար աշխարհում պլպլացող, լուսաւոր ջահեր, Դրանք հայոց դպրոցներն էին, որոնք հիմնւում էին գլխաւորապէս կանանց բարընկերութեան և հայ բարերարների ջանքերով։ Եւ որքան և-րախտագիտութեամբ պիտի յիշեն դրանց անունները կորստեան ճանապարհի վրայ կանգնած այդ ժողովրդի զաւակները։ Եւ այժմ այդ գաւառամասերում կան մի շարք գիւղեր, օրինակ։ Բաքառու, Բալանիշ, Գեաբդաբաղ, Դարալաք, Դիզա-Թաքա, Թաղիաբաղ, Իքի-ագաջ, Ուրմի, Նախիջևան-Թափ և Թահուա, որոնք ունեն իրենց քիչ ու շատ կանոնաւոր միդասեան կամ երկդասեան դպրոցները։ Ցոյս կայ, որ կամաց-կամաց պիտի կանոնաւորւի կրթական գործը այդ մասում, պիտի աւելի կայուն հիմունքների վրայ դրւի և ծածկւի ամբողջ տարածութիւնը դպրոցների ցանցով։ Այդ տասը դպրոցներում անցեալ տարի եղել են մօտ 5-600 աշակերտներ և աշակերտուհիներ։ Մի պակաս, որ խիստ աչքի է խփում Ուրմիում, դա դպրոցական կանոնաւոր շէնքերի կատարեալ բացակայութիւնն է։

Ճաւալի վիճակի մէջ է կրթական գործը ընդարձակ Ղարադաղում։ Այդ մասը առհասարակ քիչ ուշադրութիւն է դարձ-

բել իր վրայ, ինչպէս անցեալում, նոյնպէս և այժմ 1898 թուին կազմած վիճակագրութիւնը ցոյց է տալիս, որ նոյն տարում ամբողջ Ղարադաղը ունեցել է միմիայն մի ուսումնարան, այն էլ 16 աշակերտով։ Ահա ձեզ առաջադիմութիւն։ Իսկ այժմ կանոնաւոր դպրոց կայ միայն Աղազան գիւղում, որը պահում է բարեգործական ընկերութեան հաշուով։ Մի քանի գիւղերում, երբեմն-երբեմն երևում են դպրոցներ, բայց չեն յարատևում. կան և մասնաւոր ուսումնարաններ։ Փոքր ինչ սև ու սպիտակ հանաչող, կրել-կարդալ գիտցողը 7—15 աղջիկներ և տղաներ հաւաքում է իր տունը և պարապում են նրանց հետ։

Ամբողջ Խոյ և Մակու գաւառներումն էլ կայ մի դպրոց, այն էլ Խոյ քաղաքումն է։ Դպրոցը ունի յարմար և գեղեցիկ շէնք։ Ցոյս կայ, որ հետզհետէ աւելի կանոնաւորի այդ դպրոցը, քանի որ մի բարերար իր վրայ է վերցրել նրա ծախսը։ Խոյի դպրոցը ունենում է ընդհանրապէս մի ուսուցիչ և մօտ 60—70 աշակերտներ և աշակերտուհիներ։ Մակու քաղաքն էլ երբեմն-երբեմն ունենում է իր դպրոցը։ Այժմ մոռացում է փոքրիկ վարժարան բանալ նաև ս. Թադէի վանքում և այդ նպատակով հանգանակութիւն էլ սկսել է։ Մարաղան և Արտաբիլն էլ ունեն կանոնաւոր միաղասեան և երկդասեան դպրոցները, իսկ Մուժամբարը, որ բաւականին մեծ գիւղ է և թէև մօտ է կենդրոն Թաւրիզին, բայց մատնուած է անուշադրութեան։ Մուժամբարը երբեմն է ունենում դպրոց։

Այս է ահա Ատրպատականի—բացի Սալմաստից—կրթական գործի դրութիւնը թէ անցեալում և թէ ներկայումս։ Այժմ անցնենք Սալմաստին։

IV.

Սալմաստի դպրոցական գործն էլ ունի իր երկար տարիների պատմութիւնը։ Ինչպէս միւս վայրերում, նոյնպէս և Սալմաստում դպրոցական գործը ունի իր երեք շրջանները խալֆայական, անկերպարան և կանոնաւոր։ Համարեա մինչև եօթանասնական թուականները ասպարէզը եղել է խալֆաներին, որոնց մասաւոր կարողութիւնը բնականաբար եղել է շատ ողորմելի։ Տիրացու Աւետիսը և Ղազարը Սաւրայում, Միրզա Կարապետը Ղալասարում, տիրացու Աւէտը Մահլամում, տիրացու Յակոբը Հաֆթվանում, Տէր-Եղիշէն Փայաղուկում. ահա մի շարք խալֆաներ, որոնք և սրանց նմանները անցած են եղել երկար ժամանակ գործի գլուխ։ Այժմ էլ կան դրանց թափ-

թվականները. որոնք յանդգնում են դեր խաղալ։ Այդ խալֆաներից ոմանք դասաւանդել են իրենց տներում, գեռնի վրայ, ծալապատիկ նստո

, ոմանք էլ եկեղեցիների բակում եղած խարխուլ շինութիւնների մէջ։ Մինչև այժմ կենդանի և թարմ են մնացել ժողովուրդի մէջ այդ տիրացու ուսուցիչների մասին յիշողութիւնները և յաճախ պատմում են մեծ հաճոյքով։ Այդ «վարժապետ»-ներից էլի ամենալուսաւորը և առաջադէմը եղել է Ցակովը տիրացուն, որը աշխատել է նորութիւններ մտցնել. միւս տիրացուներից լաւ պահել իր «վարժարանը»։ Եւ այդ մի յայտնի չափով աջողւում է նրան։ Ցակովը տիրացուն յետոյ ձեռնադրւում է վարդապետ և էլի վերադառնում Հաֆթվան. բայց որովհետև նա խելացի և օգտակար ընթացք չի բռնում, այլ սկսում է ճնշել և կեղեքել ժողովրդին, ուստի շուտով հեռացւում է։

Դպրոցները Սալմաստում այս կերպարանքով շարունակւում են մինչև ութսունական թուականները. երբ գալիս է Գրիգոր եպիսկոպոս Մուշեղեանը (1881 թ) և դնում է կանոնաւոր դպրոցի հիմքը։ Ընդհանրապէս մեծ երախտագիտութեամբ է յիշւում Մուշեղեան եպիսկոպոսի անունը և նշանակալից տեղ է բռնում Ատրպատականի կեանքում։ Նա մի քանի տարուայ ընթացքում երեք անգամ այցելում է իր գաւառացի ժողովրդին ինչպէս և Սալմաստի, և նրա ամենաառաջին և գլխաւոր գործն է լինում դպրոցական խնդիրը։ Դպրոցները կանոնաւոր և ճոյուն դարձնելու համար, նա տեղացի ունևորների վրայ պարտաւորութիւն է դնում և նշանակում մի որոշ գումար, որի տոկոսիքը պիտի յատկացւէր դպրոցին և դրանցով էլ պահւէր։ Այդ ինարկէ նրան աջողւում է։ Գալիս է եպիսկոպոս Մխիթարեանը և մուրհակներ առնում այդ գումարների համար, իսկ Այվազեան եպիսկոպոսը նորից հաստատում է նորոգում այդ մուրհակները։ Այժմ էլ թէև կան այդ մուրհակները, բայց բոլորից էլ չեն օգտւում դպրոցները, որովհետև թեմականները լուրջ ուշադրութեան չեն դարձնում և յիշում այդ մասին։

Այսպէս ուրեմն դպրոցները Սալմաստում կանոնաւոր ընթացքի մէջ մտնում են ութսունական թուականներից։ Դեռ աւելի առաջ, 1872 թւից գործում էր նաև Մահտեսի Թուքէն Աշիմեանը, որը 12 տարի ուսուցչութիւն է արել Սալմաստում, գլխաւորապէս Հաֆթվան, Փայաշուկ և Ղալասար գիւղերում։ Նա անհամեմատ բարձր է եղել իր նախորդներից, նստարանների մուտքը սկսել է դպրոցներում, ներկայացման սկիզբը դրել Փայաշկում, դասաւանդութիւնը փոքր ինչ կանոնաւորել։ Ապա գալիս է Գոլշեանը, որի գործունէութիւնը կենդրո-

նանում է Հաֆիվանում։ Նա է դնում գրադարան ընթերցարանի հիմքը Հաֆիվանում, դպրոցը կարքի բերում և բաւականին բարձրացնում դրութիւնը։

Գօլշեանով սկսվում է Սալմաստի համար բնորոշ առանձնայատուկ մի շրջան։ Սալմաստը լինելով հայաշատ յարմար և կարևոր պունկտ, միշտ էլ դրաւել է գաղափարական գործիչներին։ Եւ յիրաւի սկսած ուրբաթական թուերից Սալմաստը ունեցել է այդպիսի «գաղափարական գործիչների» մի ամբողջ շարք, որոնք թէև կրթական գործի համար եղել են պատահական մարդիկ, բայց անցնելով դպրոցական գործի գլուխ որոշ գարկ են տուել և հասցրել ներկայ քիչ ու շատ նախանձելի վիճակին։ Վերջին մի երկու տարին է միայն, որ մարդիկ հրաւիրուում են յատկապէս ուսուցչութեան համար։ Թէև անցեալներումն էլ այդպիսի օրինակներ կան, բայց համարձակութեամբ կարելի է բացառութիւններ համարել։

Այդ մի շարք «գաղափարական գործիչներից» արժէ յիշատակել Գօլշեանի, Մկրտիչ Աւետիսեանի և Ս. Թադէոսեանի անունները։ Առաջինի մասին արդէն ասել ենք։ Մ. Աւետիսեանը գործել է միայն 1893—4 ուսումնական տարեշրջանում իբր ընդհանուր տեսուչ և այդքան կարճ ժամանակամիջոցում շատ բան կարողացել է նա անել։ Սալմաստի կրթական գործի ամբողջ պատմութեան ընթացքում, չհաշուած վերջին երկու տարին, Աւետիսեանի տեսչութեան տարեշրջանները համարուում են ամենափայլունը։ Նրա ջանքերով գրեթէ բոլոր տէրի ընկնող գիւղերը ունեցել են իրենց շնորհքով դպրոցները. նա ունեցել է ընդհանուր ուսուցչական ժողովներ և աշխատել է միօրինակ ծրագիր և դասաւանութիւն մտցնել բոլոր դպրոցներում և դրել է յարաբերութեան մէջ. դպրոցների ուսումնականից զատ, նա մի քանի գիւղերում, օրինակ Հաֆիվան, Սառնա, Ախտախանա, Սաւբա դպրոցի համար յատուկ շէնքեր է շինել, ի հարկէ ժողովրդի աջակցութեամբ։ Իսկ գալով Ս. Թադէոսեանին, պիտի ասենք, որ նա թէև առանձնացած է եղել Ղալասար գիւղում, բայց ուրիշ գիւղերումն էլ ուսուցիչներ հրաւիրելու, դպրոցներ բանալու և պահելու մէջ որոշ դեր է խաղացել։ Ղալասար գիւղը եթէ ամբողջ տարիներ քիչ-շատ կանոնաւոր դպրոց է ունեցել, նամանաւանդ յարատև, այդ շնորհիւ Թադէոսեանի։ Բացի այդ նրա ջանքերով է գինուել Ղալասարի թատերասրահը, որ համարուում է ամբողջ Սալմաստում առաջինը։ Այժմ Սալմաստի համարեա բոլոր նշանաւոր գիւղերը, բացառութեամբ մի երկուսի, ունեն կանոնաւոր դպրոցի շէնքեր։ Փայլուկումն էլ այս 1904—4 ուսումնական

տարում Եղբ. Մանասէրեանները մեր յորդորներով և խրախուսանքով շինեցին կանոնաւոր և գեղեցիկ երկյարկանի շէնք իրենց տան յիշատակին որը առաջինն է ամբողջ Սալմաստում։ Իսկ մեր ջանքերով Փայաջուկում այս տարի շինուեց ընդարձակ և յարմար թատերասրահ։

Մնում է միայն մի երկու գիւղերում էլ, ինչպէս Հին-քաղաք և Սարա, կանոնաւոր շէնքեր շինել և ամբողջապէս նուիրուել դպրոցների կանոնաւորութեան խնդրին, պատրաստուած ոյժեր բերել և յարատև դարձնել։ 1903—4, 1904—5ª ուսումնական տարեշրջանները ամենայաջող ժամանակամիջոցը պիտի համարել պատրաստուած ուսուցիչների կողմից։ Այս թուերին, մանաւանդ վերջին 1904—5 տարեշրջանում, ամենանշանակալից երևոյթը այն էր, որ ուսուցիչների և ուսուցչուհիների մեծագոյն մասը հրաւիրուած էր յատկապէս այդ պաշտօնի համար, այնպէս որ գործի ղեկավարները նախկին տարիների նման պատահական մարդիկ չէին։ Մենք լինելով ընդհանուր տեսուչ այդ տարեշրջանում ամեն կերպ աշխատեցինք իրենց կոչմանը արժանի մարդկանց հրաւիրել պաշտօնի։ Եւ այդ յայտնի չափով աջողուեց մեզ 1904—5 ուսում. տարում։ Այդ տարում մենք ունեցանք նոր ոյժեր վեց ուսուցիչներ և չորս ուսուցչուհիներ։ Այնպէս որ Սալմաստը այդ ուսում. տարում ունէր 26 ուսուցիչներ և ուսուցչուհիներ։ Հաֆթվանը և Փայաջուկը ունէին երկդասեան կանոնաւոր դպրոցներ, իւրաքանչիւրը 4 ուսուցչով և մէկ վարժուհիով։ Ղալասարը, Մահլամը և Սարան միդասեան դպրոցներ, առաջինը ունէր երեք ուսուցիչ և մէկ վարժուհի։ Բացի այդ հինգ գլխաւոր գիւղերից, դպրոցներ ունէին նաև ախտախանա, Հին քաղաք, Սառնա, Ղալշա, Գեալաշան և Սարամերիկ գիւղերը, որոնք ունին մի-մի ուսուցիչ։ Այս 11 գիւղերում 1904—5 ուս. տարում սովորում էին մօտ 800 աշակերտներ և աշակերտուհիներ, իսկ եթէ դպրոցները աւելի կանոնաւորուեն և դրուեն յարատևող հիմունքների վրայ՝ սանների թիւը 1000-ից կանցնի։ Վերջին երկու տարեշրջաններում դգալի բարեկարգութիւններ եղան նաև ուսումնական բաժնում։ Ուսուցչական խումբը ունեցաւ մի շարք ընդհանուր ժողովներ, ուր խորհրդակցութեան նիւթ էին դառնում զանազան մանկավարժական, դպրոցական հարցեր։ Վերացուեց հրապարակային քննութիւնների և թուանշանների փնտրակար սովորութիւնը, մտցուեց ուփորձնական դասի օգտակար սիստեմը և մշակուեց երկդասեան դպրոցների համար ընդհանուր ծրագիր, որով ղեկավարուում էր ուսուցչական խում-

քը 1904—5 ուսում. տարում։ Այնպէս որ բոլոր դպրոցներում էլ տիրում էին նման կարգեր և դասաւանութիւն։

Բացի այդ ազգային դպրոցներից, Սալմաստում կաթոլիկները ևս ունեն դպրոցներ Խոսրովա և Սաւրա գիւղերում, որոնք ունեն բնականաբար նոյն կերպարանքը ինչ որ տեսանք ուրիշ վայրերում։ Տիրողը կրօնական ոգին է և այնքան էլ բարեկամ վիճակի մէջ չեն։

Սրանք են ահա Սալմաստի դպրոցները անցեալում և ներկայում։

V.

Այսպէս ահա, պարսկահայերը ունեն դպրոցներ գրեթէ քիչ ու շատ բոլոր նշանաւոր վայրերում։ Եւ իսկապէս, Պարսկաստանում դպրոցական գործը մտել է մի հետաքրքիր և ուշագրաւ ֆազիսի մէջ և կանգնած է առաջադիմութեան շաւղի վրայ։ Կրթութեան, լուսաւորութեան հարցը պարսկահայերի համար դարձել է ամենահրատապ և կենսական խնդիրը։ Հետևաբար անհրաժեշտ է սկսած գործը պահել կենդանի և վառ, միևնոյն ժամանակ ուղի ընդլայնել, ծաւալել և յարատև դարձնել։

Գոյութիւն ունեցող դպրոցները ճիշտ է փոքրիշատէ կանոնաւոր են, բայց դեռ անբաւարար են իրենց դասընթացով և ունկարող խելահաս և պատրաստուած երիտասարդութիւն պատրաստելու։

Ուրեմն ինչ է մնում ձեզ անել, որ ստեղծի ցանկալի դրութիւն։ Ահա մի հարց, որը պիտի զբաղեցնի պարսկահայերի բարօրութիւնը և պատուաւոր գոյութիւնը նախանձախնդիր ամեն մի ինտելիգենտ և կարող անհատ։ Վայելելով Վեհափառ Շահնշահի բարեացակամ և բարձր հովանաւորութիւնը, պարսկահայերը պիտի ձգտեն երկիրը ծածկել դպրոցների ցանցով և որքան շուտ սկսի այդ, այնքան լաւ։ Երեք գլխաւոր վայրերը—Թաւրիզ, Սպահան-Նոր-Ջուղա և Թեհրան—անհրաժեշտօրէն պիտի ունենան միջնակարգ դպրոցներ, գէթ ներքսական դպրոցի ծրագրով։ Բայց այդ, մի քանի նշանաւոր և հայաշատ գաւառներում, ինչպէս Սալմաստ, Փերիա, Ղարադաղ, Ուրմի, Բաշտ և այլն, պիտի ունենան չորսդասեան, երեքդասեան, նոյնիսկ հինգդասեան կենսրոնական դպրոցներ։ Այդ կարևոր է այն տեսակէտից, որ դաւառացիները հնարաւորութիւն չեն ունենայ իրենց զաւակներին ղրկել Թաւրիզ կամ Նոր-Ջուղա, նամանաւանդ որ սովորելու են մօտ 4—5

տարի շարունակ։ Այդ բարձր ուսումնարաններից զատ, իւրաքանչիւր գիւղ ունենալու է իր միդասեան կամ երկդասեան դպրոցը, ի հարկէ պատրաստուած, ցենդաւոր ուսուցիչներով և ուսուցչուհիներով։

Այս է ահա ցանկալի, բաղձալի դրութիւնը։ Բայց ինչպէս հասնենք այդ նպատակին։

Այդ ցանկալի նպատակին հասնելու համար ամենից առաջ անհրաժեշտ է ունենալ մի մարմին՝ կազմուած ձեռնհաս և կարող անձնաւորութիւններից, որը անցնի գործի գլուխ և ղեկավարի ամբողջ Պարսկահայերի լուսաւորութեան, դպրոցական հարցը։ Այժմ, երբ չկայ այդ ղեկավարող և պաշտօնական «մարմինը», պարսկահայերի մէջ տիրում է անշատ, իրարից անկախ գործունէութիւն, մի դրութիւն, որ չի կարելի ուրախալի համարել։ Այն ինչ այդ մարմնի գոյութեան դէպքում բոլոր դպրոցները կապուած կլինեն իրար հետ, սերտ յարաբերութեան մէջ, կունենան մի օրինակ ծրագիր և նման կարգ ու կանոն։ Դեռ 1900 թուից սրծարծուել է այդ հարցը, մի խումբ մարդիկ ունեցել են Թեհրանում խորհրդակցութիւն, նոյն իսկ նախնական ծրագիր մշակել, բայց շօշափելի հետևանք և արդիւնք չունեցաւ և այնպէս էլ մնաց։ Այժմ հարցը աւելի հասունացել է և ունի այժմէութիւն, անհրաժեշտ է ամեն անձնական դրդումներ և ինտրիգներ մի կողմ թողնել և ուժգնօրէն նետուել գործելու սապարէզը և առաջ մղել այդ աւելի քան կենսական խնդիրները։ Հարկաւոր չէ ձեռնթափ լինել և յուսահատուել, կանցնի ժամանակը անօգուտ և մենք վրայ կտանք և չարաչար կըփոշմանենք։

Այժմ աւելի քան մի ուրիշ ժամանակ պէտք է մի պատասխանատու և ղեկաւարող մարմին։ Ասում եմ այժմ, որովհետև կամաց-կամաց հրապարակ են իջնում հաղուստ բարեբարներ, երևում տաք սրտեր, որոնք ցանկանում են և նպատակ ունեն նպաստել պարսկահայերի կրթութեան գործին, ինչպէս տ. Գանանեան, Տիգրան Աֆրիկեան և այլն. իսկ կան ուրիշները, որոնք թէև միայն տրամադրութիւն են ցոյց տալիս։ Հարկաւոր է դրանց խրախուսել, առաջ քաշել և օգտուել տրամադրութիւնից։ Իսկ այդ դերը վերապահուած է պատասխանատու և ղեկավարող մարմնին, որը՝ ներկայացնելով իրը ընտրուածներ համայն պարսկահայերի կողմից, միևնոյն ժամանակ իրենով վստահութիւն կընդունի։ Առանց այդ «մարմնի», եթէ չասեմ անհնարին, գէթ դժուար կլինի խոշոր գումարներ ձեռք բերել, դպրոցները հիմնաւոր և յարատև դարձնել և հասցնել «ցանկալի դրութեանը»։ Այս էլ պիտի աչքի առաջ

ունենալ, որ պարսկահայերի բոլոր դպրոցների, քաղաքու-թեամբ մի երկուսի, տնտեսական վիճակը շատ անմխիթար է և բոլորովին անապահով, հետևապէս նրանց յարատևութիւնն կասկածելի է։ Գոյութիւն ունեցող դպրոցների ժեծագոյն մասը ծածկում է տարեկան բիւդժէն ներկայացուցիչներով, (որի պատճառով շատ անգամ ժողովրդի տհաճութիւնը և առնւազը տրտնութիւն ենք տանում), իսկ տեղօսարեր դրամագլուխներ շատ քիչ դպրոցներ ունեն, եղածներն էլ անբաւարար են։ Նիւթական սղութեան պատճառով շատ անգամ գործի են կանչւում անպատրաստ ուսուցիչներ, նոյնիսկ խալֆա և բաղիրոզուկ անճանաչութիւններ, մի խօսքով իրենց կոչմանը ոչ արժանի մարդիկ։ Այս անպատեհութիւնները և անհարթութիւնները գէթ որոշ չափով, թէև մեզ թւում է բուրովին կըվերանան, եթէ հրապարակ գայ պատասխանատու և դեկավարող ժարմինը։

Պարսկահայը թող լաւ գիտակցի իր կատարելիք դերը ապագայում և որպէսզի յետ չմնայ իրը անպատրաստ ասբր անհրաժեշտօրէն պիտի ուժ տայ իր կուլտուրական գործին և աւելի ընդլայնի և ծաւալի։

ԿԱՆԱՆՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

I.

Գարսկահայերի ընկերութիւնների շարքում պատուաւոր և աչքի ընկնող տեղ է բռնում Թաւրիզի կանանց բարեգործական միացեալ ընկերութիւնը, որ նշանակալից դեր է խաղացել Ատրպատականի հայերի ցաւոտ կեանքում և ունի ամբողջ 16 տարուայ պատմութիւն։

Այդ ընկերութիւնը դեռ երեք տարի առաջ ներկայացնում էր իրարից բոլորովին բաժան, թէև՝ նպատակներով նման, երկու ընկերութիւններ, որոնք կրում էին տարբեր անուններ.— «Թաւրիզի կանանց բարեգ. ընկերութիւն» և «Ատրպատականի կանանց բար. ընկերութիւն»։ Դրանցից ամեն մինը, մինչև միութիւնը, ունի իր առանձին պատմութիւնը և ուրոյն գործունէութիւնը։ Կանգ առնենք այդ գործունէութիւնների վրայ առանձին-առանձին։

Սկսենք «Թաւրիզի կանանց բար. ընկերութիւնից», որին պատկանում է առաջնութեան պատիւը։

Ե՞րբ և ինչ պայմանների մէջ է ծնուել այդ ընկերութիւնը։

Ընդհանուր խաւարի աշխարհում բացառիկ տեղ չէր բռնում և Թաւրիզը, որը համարւում է Ատրպատականի մտաւոր կենտրոնը։ Թաւրիզում նոյնիսկ բացակայում էին տղայոց կանոնաւոր դպրոցներ, իսկ աղջիկների կրթութեան մասին չէր մտածւում։ Մեծ թւով մանուկներ, թէ աղջիկ և թէ տղայ, ծնացել էին փողոցներում անկիրթ, անուսում, և մեծանում էին անդիտակից դէպի իրանց շրջապատող երևոյթները, ընդհանրապէս դէպի կեանքը։

Այդ հանգամանքը մի կողից, «Գովկասում և Կ. Պոլսում յարաճուն և գործունեայ նպաստաւորոյց ընկերութիւնների բարեբար գոյութիւնը, որոնք անդուլաշատ նոր գրգիռ և ազդեցութիւն էին սփռում ամենաբէնք», միւս կողմից, միտք է յղա-

նում Թաւրիզում փոքրաթիւ կանանց մէջ նման ընկերութիւն ձեռնարկել, որը անւանւում է «Թաւրիզի կանանց բարեգործական ընկերութիւն»։ Այդ ընկերութիւնը թէև հիմնւել է 1890 թւին, բայց որոշ կազմակերպութեան բնաւորութիւն է ստացել յաջորդ տարին, 1891 թ. օգոստոսի մէկին, Ստեփանոս եպ. Մխիթարեանի օրով և նրա հաստատութեամբ, և հիմնադիրներն են Տ. Տ. Իսկուհի Յակոբեան և Շուշանիկ Մալինցեանց։

Ընկերութեան ղեկավարները ձեռնարկում են գործը միայն ունենալով մօտ 130 թուման դրամագլուխ, մի չնչին գումար։ Բայց այդ հանգամանքը չի յուսահատեցնում նրանց, այլ լցուած լինելով հաւատով դէպի սկսած գործը, ձգտում են աւելի ու աւելի ընդարձակել, հաստատուն հիմունքների վրայ դնել և լայն չափով օգտակար լինել ժողովրդին։ Առաջին տարում ընկերութիւնը ունէր 32 անդամուհիներ և միմիայն նրպատում էր Լիլաւա թաղի օրիորդաց դպրոցին՝ տալով 12 աշակերտուհու համար հագուստ և դասական առարկաներ։ Այդ է միայն եղել 1891—92 ուսում. տարեայ նրա գործունէութիւնը, աւելին էլ հնարաւոր չէր անել, քանի որ ընկերութեան նիւթական միջոցները չէին թոյլ տալիս, ընկերութիւնը դեռ գտնւում էր անկերպարան և երերուն վիճակի մէջ։

Յաջորդ 189⁶/₇ ուսումնական տարում ընկերութիւնը մի քայլ առաջ է գնում. նա կարիք է զգում բանալ «չքաւոր աշակերտուհիների համար» կար ու ձևի արհեստանոց, հոգալով և նրանց հագուստը։ Առաջին տարում արհեստանոցում ունենում են 10 աշակերտուհի, իսկ Լիլաւայի դպրոցում ձրիավարժ աշակերտուհիների թիւը հասցնում են 20-ի։

Ընկերութիւնը դեռ իր սկզբնական շրջանում որոշ ուշադրութիւն է դրաւում և վայելում է թէ պարսկահայերի և թէ կովկասահայերի համակրանքը, ստանում է և զգալի նիւթական օգնութիւն։ Այդ հանգամանքը աւելի խրախուսում, հոգի և կեանք է տալիս ընկերութեան ղեկաւարներին. նրանք աւելի ընդլայնում են իրենց գործունէութեան շրջանը և աւելի գօտեպնդած նետւում են գործելու ասպարէզը։

Վրայ են հասնում 1894, 95 թուականները, ցաւի և ցասման տարիները։ Այդ այն սև տարիներն էին, երբ բռնակալութեան թափած արիւնը Տաճկահայաստանում յորդ գետեր էր կազմել, երբ ամբողջ հայ ժողովուրդը տնքում էր և անխիղճ տէրութիւնը ձգտում էր միանգամայն բնաջինջ անել մի ամբողջ ժողովուրդ։ Ահա այդ տարիներն էր, որ բովանդակ Վասպուրականը կամաց-կամաց հիւծւում, դատարկւում էր։ Եւ նրանք, հայերը, սրտի ցաւով թողնում են իրանց հայրենի եր-

կիրը, որի հետ կապված են այնքան քաղցր և միևնոյն ժամանակ նուիրական յիշողութիւններ, թողնում, և գլխիկոր և սար դարդը կրծքներում թաղած, հեռանում են, չուռ են գէպի հեռու, օտար երկիրներ։ Այդ՝ թշուառների մի երկար շղթայ էր։

Ատրպատականն էլ որպէս ապաստան հանդիսացաւ այդ թշուառների համար։ Ատրպատականի համարեա բոլոր մասերում էլ կային գաղթականներ։ Անհրաժեշտ էր նրանց հովանաւորել, յարմարութիւններ տալ ապրելու և գէթ օտարութեան մէջ մի բոպէ մոռացնել տալ նրանց մեծ վիշտը։ Եւ ինչքան գործ կար նրանց վերաբերմամբ անելու։ Անխուսափելի կարիք էր զգացւում մի ընկերութեան, մի մարմնի, որ իր վրայ վերցնէր գաղթականներին խնամելու պատասխանատու գործը։ Ահա այդտեղ ստեղծւեց գալիս «Թաւրիզի կանանց բարեգործական ընկերութիւնը» և վերցնում է այդ գործի ծանրութեան մեծագոյն բաժինը իր վրայ, որով և բացւում է նրա համար գործելու լայն և նուիրական ասպարէզ։

Այդ պատասխանատու պաշտօնից պատուաւոր կերպով դուրս գալու համար անհրաժեշտ էր անշուշտ նիւթական մեծ օժանդակութիւն։ Այդ հանգամանքի վրայ է հրաւիրում ընկերութիւնը հայ ժողովրդի ուշադրութիւնը և ձեռնարկում է հանգանակութեան և նրա կոչը չի մեռնում ձայն բարբառոյ յանապատի»... այնպէս որ ընկերութիւնը հնարաւորութիւն է ունենում բաւարարութիւն տալ գաղթականների գէթ անհրաժեշտ պէտքերին։

1896—97 թւին Վասպուրականի գաղթականների վրայ աւելանում են նաև Ղոթուրի և Վան գիւղի հայերը. և ընկերութիւնը հարկ է համարում մարդ դրկել թէ Սալմաստ և թէ Խոյ, որպէսզի տեղն ու տեղը ուսումնասիրի ամեն ինչ և այնպէս հոգան նրանց կարիքները։

Ընկերութիւնը ոչ միայն իր շրջանում օգնել, նպաստել է գաղթականներին, այլև 4767 դրան (105 սմ. ոսկի) ուղարկել է գերապատիւ Իզմիրլեան պատրիարքին, ի հարկէ, էլի տառնկահայոց օգտին։

Այդ ժամանակ միայն հիմք է դրւում մանկապարտէզի (1886), նպաստ է յատկացւում գոյութիւն ունեցող դպրոցներին։

Չմոռանանք ասել, որ 1895 թւին ընկերութիւնը բացեց գորգի գործարան, ուր աշխատանք էր տրւում աղքատ կանանց, բայց հէնց սկզբնական շրջաններում նկատւեց թէ ուրիշների կողմից, և թէ ինչպէս փորձով տեսաւ նաև ընկերու-

թիւնը, որ գործարանը առանձին օգուտ չի տալիս, այն ինչ պահանջում է մեծ ծախս և աշխատանք, ուստի ստիպւած փակեցին։ Թաւրիզում մանաւանդ կան այնպիսի գորգի գործարաններ թուրքերի մէջ, որոնք դրւած են շատ լաւ հիմքերի վրայ և տալիս են գեղեցիկ ապրանք. դրանց դէմ երբէք հնարաւորութիւն չէր ունենայ մրցելու ընկերութեան գործարանը։

Անցնում են «աղէտի օրերը», ընկերութիւնը իր ուշադրութիւնը կենդրոնացնում է կրթական գործի վրայ։ Նա աւելի ընդարձակում է կար ու ձևի արհեստանոցը և մանկապարտէզը աւելի հաստատուն հիմունքների վրայ դնում։ Բացի այդ՝ ընկերութիւնը աչքը յառում է աւելի հեռուն, դէպի գաւառները, ուր այնքան անհրաժեշտ են խնամող և փայփայող ձեռներ և ուր 1898—9, 1900 ուսումնական տարիներում հնարաւորութիւն է ունենում բանալ դպրոցներ Աղաղան (Ղարադաղ), Դիզա-Թաքէ (Բարանդուզ), Իքի-աղաջ (Ուրմի), Բարքուռու, (Բարանդուզ), և Թահվա (Ուրմի) գիւղերում։ Հինգ պլպլացող հրագներ ամենախուլ անկիւններում։ Այդ արդէն մեծ առաջադիմութիւն էր կանանց ընկերութեան համար և գրաւական նրա յարաջուն եռանդի։

Բացի իր սեփական հաստատութիւններից, ընկերութիւնը միշտ էլ աշակերտուհիների հագուստը հոգացել է, նպաստ է տւել Լիլաւայի դպրոցին, Մուժամբարի և Արամեան դպրոցներին։

Յաջորդ 1900—1901 ուսումնական տարում ընկերութիւնը գոյութիւն ունեցող հաստատութիւնների վրայ աւելացնում է միայն մի դպրոց-Մարաղա քաղաքում։ Այնտեղ արդէն կազմւած էր կանանց ընկերութիւն, որ հանձնւում էր Թաւրիզի բար. ընկերութեան ճիւղը։ Այդ թւին կազմալուծւում էր ընկերութիւնը և նրա դրամագլխով (500 թուման), և աւելացնելով ընկերութեանը գանձարանից 100 թուման բանում է երկսեռ դպրոց։

Ընկերութիւնը այդ վեց հիմնարկութիւնների մէջ սովորելիս են եղել 170 աշակերտներ և աշակերտուհիներ։ Այդ թիւը, պիտի ասել, որ գաւառների, այդ խուլ-մոռացւած անկիւնների համար անշուշտ փոքր չէ։

Ընկերութեան մի կողմից ձգտում էր աւելի ընդլայնել իր գործունէութեան ասպարէզը, միւս կողմից աշխատում էր ձեռք ձգել նիւթական խոշոր օժանդակութիւն, դրամական մեծ գումար, որպէսզի հնարաւորութիւն ունենայ եղած հիմնարկութիւնները աւելի ամուր և հաստատուն հիմունքների վրայ դնել։ Եւ այդ նրան աջողւեց։ Ընկերութիւնը իր գոր-

ծունկուքիւնը սկսել է մի անշան (130 ք.) դրամագլխով և սակաւաթիւ անդամներով, իսկ այժմ ունի իսկապէս խոշոր դրամագլուխ և մասնակցողների ստուար թիւ։ Մանաւանդ աչքի առաջ պիտի ունենալ այն, որ նրա նիւթական աղբիւրը կազմում են անդամների անդամավճարները, հանդէսներից, ոճնածուից ստացած դրամը և զանազան պատահական նուէրներ։ Դրանցից միայն առաջինն է յարատև, մշտական, միւս միջոցների վրայ անպայման վստահել անկարելի է։ Ուրեմն տարեկան ծախսը ծածկելու և դրամագլուխն աւելացնելու համար միմիայն պիտի յենուել անդուլ աշխատանքի և ընկերութեան դեկավարների ջանքերի վրայ։ Եւ իսկապէս ընկերութիւնը աշխատել է, այդ երևում է հետևեալ թուերից։

	Մուտք	երբ	դրամագլուխ	տար. անդ.	մշտ. անդ.	պատ. անդ.
1891/ 92 ուս. տ	2011 ղ.	779 ղ.	1232	32	—	—
1900/901 » »	29117 »	31,709 »	78475	60	36	8*)

Նկատենք, որ պատուաւոր և մշտնջենական անդամներ կարող են ընդունուել և տղամարդիկ, և իսկապէս պատուաւոր անդամների մեծ մասը տղամարդիկ են։ Այդ անդամները շատ մեծ չափով նպաստել են ընկերութեանը թէ նիւթապէս և թէ բարոյական աջակցութեամբ։ Այդ անձնուրութիւնների ջանքերի շնորհիւ է որ ընկերութիւնը արժանացաւ վեհափառ Շահնշահ Մուզաֆր-էդդին բարձր շնորհին և ուշադրութեանը ու ընդունեց նրա հովանաւորութեան տակ։

Ահա այդ Ֆէրմանը։

Ամենակարող Աստուծով ծագեց յաղթութեան ու փառքի աստղը և Ամենակալի օգնութեամբ Շահութեան կնիքն ստացաւ Մուզէֆֆէր-էդդին Շահը։

Որովհետև շարունակ մեր արքայական փափագն է եղել տարածելու բարին ու գեղեցիկը և քաջալերելու այն անձանց, որոնք ձեռնամուխ են լինում նմանօրինակ գործերի, այս առթիւ Թաւրիզի հայուհեաց բարեգործական ընկերութիւնը աղերսագրեալ եղած լինելով առ ոտն օրհնեալ գահոյից ընդունելու յիշեալ ընկերութիւնը մեր արքայական (սուրբ անձնուրութեան) պաշտպանութեան տակ, ուստի ցոյց տալու համար մեր համոտաբեր շնորհը բարձր տէրութեան բոլոր հպատակներին, թագաւորական այս յուսահատանչ հրովարտակի ծագմամբ այդ ընկերութիւնը Մեր հովանաւորութեան ներքոյ ընդունելով, հրամայում ենք, որ այս առանձին շնորհի պատճառով մեծարուի և յոյս ունենայ Մեր ողորմածութեան վրայ։

Շէվալ ամիս. 1318.

Ֆէրմանը կրում է նաև Աֆթաբէգ-Ազամ Սադրազամի և

---

*) Տարեկան անդամների գրուղը տալիս է 4 ռուբլի. մշտնջենականը միանգամայն 50 ռ. իսկ պատուաւոր անդամ լինելու համար՝ նայած՝ թէ որչ չափով աջակցութիւն ցոյց են տալիս ընկերութեանը։

Մուշիր-Իսվլէի կնիքները։ Վերափոխ. Շանշանի այդ առանձին շնորհը շատ թանգ է ընդհանրապէս բոլոր պարսկահայերի և մասնաւորապէս «Թաւրիզի հայուհեաց բար. ընկերութեան» համար։ Այդ երկրորդ քաղցր ուշադրութիւնն է, որ այդքան կարճ միջոցում Պարսկաստանի ինքնակալը ցոյց էր տալիս դէպի իր հպատակ հայ ժողովուրդը։

Այդ բարձր հովանաւորութիւնը շատ մեծ խրախուսանք և քաջալերութիւն էր ընկերութեան համար՝ աւելի ուժեղ թափով նեռուելու կարիքների ծովը և աւելի ու աւելի ամրացնելու իր դիրքը և պատուաւոր ու բացառիկ տեղ գրաւելու հասարակական-կրթական հիմնարկութիւնների շարքի մէջ։

Այսքանս բաւական համարելով «Թաւրիզի կանանց բարեգ. ընկերութեան» մասին, այժմ անցնենք «Ատրպատականի կանանց բար. ընկերութեան» անջատ գործունէութեան շրջանին։

II.

Նոյն ծրագիրը և գործառնութեան նոյն շրջանը ունենալ «Ատրպատականի կանանց բարեգ. ընկերութիւնը», ոչ միայն նման են նպատակներով կանանց այդ երկու ընկերութիւնները, այլ չեն տարբերուում նոյնիսկ գործելու տակտիկայով։ Այդ ընկերութիւնների միակ տարբերութիւնը գուցէ կայանում է անունների և վարիչների մէջ։

Եթէ այդպէս է, էլ ինչու համար է այդ։ Անշուշտ ամեն մի ընթերցողի առաջ կըցցուի այդ հարցը։

Այս հարցի պատասխանը Թաւրիզի կեանքին ծանօթ ամեն մի անհատի համար շատ պարզ է։ Թաւրիզի մի քուռը հայ ազգաբնակութեան մէջ շատ ընդհանրացել և ընտանեկան երևոյթի կերպարանք է ստացել իրար հեռանալու, իրար նեռնելու սովորութիւնը։ Հերիք է մի թաղում մի ընկերութիւն կազմակերպուեց, մի հիմնարկութեան սկիզբն դրուեց, և ահա միւս թաղում երևում է նմանօրինակ ձեռնարկութիւն, նման թէ իր ծրագրով և թէ գործելու եղանակով։ Այնպէս որ Թաւրիզում բոլոր հասարակական-կրթական հիմնարկութիւններն էլ զոյգ-զոյգ են, երկուորեակներ... Այսպէս ահա, երկու «Թատերասիրաց» ընկերութիւններ, երկու «գրաղարան, ընթերցարաններ», երկու դպրոցներ», երկուսն էլ գրեթէ նոյն բարձրութեան վրայ կանգնած, երկու «կանանց բարեգ. ընկերութիւններ», և այլն և այլն։

Այդպէս է ահա Թաւրիզը. ընկերութիւնների մի երկար

շարք կայ այնտեղ։ Ընկերութիւնների և հաստատութիւնների այդ «երկւորեակութիւնը»,—եթէ կարելի է այդպէս բնութագրել—անշուշտ արդիւնք է երկու թաղերի մէջ գոյութիւն ունեցող խորթութեան, որը չի թողնում միացած ուժերով և համերաշխութեամբ առաջ տանել գործը։ Մեծ տեղ է բռնում և այն, որ հայաբնակ թաղերը իրարից բաւականին հեռու են և կտրուած են թուրքաբնակ թաղերով։ Բայց յամենայն դէպս պիտի ձգտեն, որ վերանայ երկու թաղերի մէջ եղած սառը յարաբերութիւնը, ժողովուրդը ինչպէս և նրա հաստատութիւնները, կազմեն մի ամբողջութիւն։ Այդ պիտի լինի իր կոչման բարձրութեան վրայ կանգնած ամեն մի հիմնարկութեան, ինչպէս և իւրաքանչիւր ինտելիգենտ անհատի սրբազան պարտականութիւնը։ Հերիք է, ինչքան այդ խորթութեան պատճառով առաջ են երկու թաղերն էլ, թէ նիւթապէս և թէ բարոյապէս։

Բայց անցնենք մեր բուն նիւթին։

Ատրպատականի կանանց բար. ընկերութիւնը կազմուել և վաւերացուել է 1895 ա. թ. փետրուարի 26-ին։ Այս ընկերութեան ղեկավարն էլ, ինչպէս նոյնը տեսանք Թաւրիզի կանանց ընկերութեան վերաբերմամբ, գործի սկիզբը դնում են շատ աննշան դրամագլուխ և անդամուհիների փոքր քանակութիւն ունենալով։

Դեռ ընկերութեան կազմակերպութեան առաջին ուսումնական տարում հիմք է դրուում Թաւրիզում կար ու ձևի արհեստանոցի և մանկապարտէզի, և այդ հաստատութիւնների համար ուսուցչուհի է բերուում Կովկասից, որը երկար ժամանակ պաշտօնավարում է այդ հիմնարկութիւնների մէջ։ Այդ երկու հաստատութիւններն էլ (Ղալա թաղում), դրուած էին կանոնաւոր հիմքերի վրայ և առաջ էին տարում շատ գոհացուցիչ կերպով։ Կար ու ձևի արհեստանոցը միշտ էլ ունէր բաւարար թւով աշակերտուհիներ և տուել է շատ ընթացաւարտներ, իսկ մանկապարտէզը աւելի քարեկաւ և մխիթարական դրութեան մէջ էր, քան Թաւրիզի կան. բար. ընկերութեան մանկապարտէզը։ Ընկերութեան ղեկավարները, մանաւանդ տիկին Հեղինէ Ժօրժը, որը միշտ եղել է ընկերութեան ոգին, նրան կեանք տուողը, ամեն կերպ աշխատում, ջանք և եռանդ չէին խնայում հիմնարկութիւնները պահելու համար ցանկալի բարձրութեան վրայ։

Ինչպէս տեսնում էք, այս ընկերութիւնն էլ իր գործունէութիւնը սկսել է Թաւրիզից։ Ընկերութիւնը բաւականին ուշ է աչքերը դարձնում դէպի հեռուն, մոռացած և խաւար

գաւառները։ Այդ ընկերութիւնը երևան եկաւ այնպիսի մոմենտում, այն ցաւի և լացի օրերում, որ բոլորն էլ զբաղուած էին գաղթականներով, բոլորն էլ ասես շշմել էին։ Ամեն մարդ ապիս էր, ինչքան կարող էր օգնում էր, ինչով հնարաւորութիւն ունէր։ Ատրպատականի ընկերութիւնն էլ անտարբեր չէր կարող մնալ. նա էլ նեռւում է գործելու ասպարէզը, նա էլ իր յուժան է տալիս։ Ընկերութեան վարիչներին զբաղեցնում է նոյնիսկ գաղթականներին աշխատանք տալու հարցը և դրա վերաբերմամբ 1898—9 ուս. տարուայ տեղեկագրում կարդում ենք.—«Որպէսզի գաղթական քոյրերն ու եղբայրները հարկ եղած ինամքը և սփոփանքը ստանալուց յետոյ կարողանան հեռու մնալ ժուրնալիստութեան անարդ սովորութիւնից, վարչութիւնս հիմնեց Թաւրիզում մի արհեստանոց-գործարան զանազան տարազագործութիւնների վերաբերող, ուր յարմար պարապմունքը պիտի գտնեն գաղթական կանայք, աղջիկները և տղամարդիկ ու ըստ իրանց աշխատութեան պիտի վարձատրուի։ Այս գործարանը միայն 7 ամիս է գոյութիւն ունենում. ընկերութեան միջոցները չեն. ներում շարունակել, քանի որ պահանջւում էր բաւականին ծախս, ստիպւած փակում են։

Ատրպատականի կանանց բարեգ. ընկերութիւնը միայն 1898—8 ուս. տարում հնարաւորութիւն է ունենում ուշադրութիւն դարձնել գաւառների վրայ, այն ժամանակ, երբ արդէն գաղթականների հոսանքը դադարել էր և նրանք տեղաւորւած էին։

«Կատարելապէս համոզւած լինելով, որ գաւառներում տիրող խեղճութեան և տառապանքների գլխաւոր պատճառներից մէկն է տգիտութիւնը, վարչութիւնս որոշեց, և իրան նպատակն է, իր կարողութեան չափով նպաստել կրթական գործի առաջադիմութեանը, մանաւանդ աչքի առաջ ունենալով այն, որ այդ աննախանձելի վիճակի տեղութիւնը կարող է գաւառացիներին առաջնորդել դէպի բարոյական անկումը։

Ահա այս շատ լուրջ հանգամանքը ի նկատի ունենալով՝ ընկերութիւնը Ուրմի գաւառի Գեարդաբադ հայաշատ գիւղում բացում է դպրոց, հոգալով ուսուցչի ռոճիկը և աշակերտների դասական առարկաների ծախքը։ Այդ արդէն ընկերութեան կողմից մի համակրելի և առաջադիմական քայլ էր, որով նրա գործունէութեան շրջանը աւելի ընդլայնում էր և ակիզբն դրւում նրա գաւառական գործունէութեան։

Բացի այդ, ընկերութիւնը 500 դրան նւիրում է Մաղազայի նորակառոյց դպրոցի շինութեանը, որոշում է հինգ տա-

թի անընդհատում 200 դրամ նպաստ տալ Մուսամբարի նորահաստատ դպրոցին։ Դրանով էլ ընկերությունը մասամբ զարկ, մղում է տուած լինում կրթական գործին գաւառներում։ Իսկ Թաւրիզում, իր սեփական հաստատություններից դատ, ընկերությունը որդեգրուհներ էր պահում Վալայի Ս. Անապատի դպրոցում, վճարելով նրանց խոշոր և հոգում հագուստը ու դասական պիտույքը։



Ս. Թարգմանչաց վանքը

Յաջորդ 1899–1900 ուսումն. տարում ընկերությունը հնարաւորություն է ունենում իր կրթական հիմնարկությունների թիւը մի կողմ տեղադրել։ Պարսկական Միջագետքի Սարդուդ գաւառամասի Նոգաղէյ գիւղում է բացում դպրոց, մի կարևոր կենտրոնական վայրում։ Բայց գժբախտաբար հէնց միւս տարին դպրոցը փակում է, օրոմիան, ինչպէս ընկերության վարչությունն է տեղեկանում, աշակերտների թիւը

նապ էր։ դպրոցի համար յարմար չէնք չկար և ժողովուրդն էլ անտարբեր էր։ Այդ դպրոցի փոխարէն հարեան Սօուդ-բուլաղ գաւառի Դէրեկէք գիւղում բացում է, ուսուցիչներ, աւելի յարմարութիւններով։

Այդ նոյն տարում ընկերութիւնը մտածում է դպրոց բանալ նաև Բաբանդուզ գաւառում, բայց յարմար ուսուցիչ չգտնելով հնարաւորութիւն չի ունենում իրագործելու իր մտադրութիւնը։

Ընկերութիւնը գաւառական գործունէութեան մէջ 1900—1901 ուս. տարում մի կարևոր քայլ էլ առաջ է փնում։ Այդ կարևոր քայլն այն էր, որ Ուրմի քաղաքի մէջ դպրոցի հիմք էր դրում։ Այդ չափազանց ուրախալի առաջադիմութիւն էր, որովհետև այդ կէտը, լինելով կենտրոն, ապագայում կարող է նշանաւոր տեղ բռնել և հատուցել կենտրոնական դպրոց, որի շուրջը կըխմբուեն միւս դպրոցները և այդտեղից կըգնան հրահանգները, միևնոյն ժամանակ կըհանդիսանայ իբր կապող օղակ։ Այդ հանգամանքը մի կողմից, օտարազգաւան տարրերի պրոպագանդը և մրցումը միւս կողմից աւելի ու աւելի կարևոր վայր են դարձրում այդ քաղաքը։

Իր ուժերի ամենամեծ մասը նուիրելով գաւառի կրթական գործին, ամեն տարի նոր դարկ և մղում տալով նրան, ընկերութիւնը չէր մոռանում միևնոյն ժամանակ հսկել Թաւրիզի իր հաստատութիւնների կանոնաւորութեան վրայ և աւելի բարելաւելու այն։

Այս ընկերութիւնը դրամական օժանդակութեան կողմից չունեցաւ այն փայլուն յաջողութիւնը, ինչ տեսանք «Թաւրիզի կանց. բար. ընկերութեան» վերաբերմամբ, բայց յամենայն դէպս թէ պարսկահայերը և թէ ռուսահայերը անտարբեր չգտնուեցին նաև դէպի այս կազմակերպութիւնը։ Գտնուեցին նոյնիսկ անձնաւորութիւններ, ինչպէս պ. պ. Ս. Տէր-Օհանեան, Ա. Մելիք-Ազարեան եղբայրներ, որոնք ուրախութեամբ յանձն առին մէկ-մէկ դպրոցի ամբողջ ծախքը։ Այդպիսի անձնաւորութիւններ ունի և Թաւրիզի կանանց բարեգ. ընկերութիւնը, որոնց մասին յետոյ առիթ կունենանք խօսելու։ Դրանց անունը անշուշտ միշտ էլ անմոռաց կը մնայ, իսկ նրանց օգտակար քայլը օրինակելի ուրիշների համար։

Ճիշտ է Ատրպատականի կանանց բարեգ. ընկերութիւնը միշտ էլ ունեցել է կողմնակի նպէրներ և օժանդակութիւն, բայց նրա, ինչպէս և նրա քոյր ընկերութեան, մեծագոյն աղբիւրները հոգեր են անդամավճարները, հանդէս-ներկայացումները և մասամբ տոկոսներ, այն էլ վերջին տարիներս։

Վերջին 1900—1901 ուսումնական տարում ընկերութեան անդամ-անդամուհիների թիւը հասնում էր 91 ի, որից 3-ը պատուաւոր, 3-ը մշանջենական, իսկ մնացած 85-ը հիմնական և տարեկան։ Ինչպէս տեսնում էք այս ընկերութիւնը ունի չորս տեսակ անդամուհիներ։ Պատուաւոր անդամներ համարւում են նրանք, որոնք ընկերութեանը մի նշանաւոր ծառայութիւն են անում և դրանց ընտրում է ընդհանուր ժողովը։ Մշանջենական՝ նրանք են, որոնք առնւազն կրվճարեն միանւագ 50 թուման (100 ր.), հիմնական, որոնք վճարում են 5 թուման (10 ր.), իսկ տարեկան, որոնք տարեկան կրվճարեն միայն 2 թուման (4 ր.)։

Հէնց միայն անդամավճարներից բաւականին գումար է գանձւում, մանաւանդ տարէցտարի աճում է նրանց թիւը։ Ընկերութիւնը 1901—1902 ուսումնական տարւան համար ունէր գուտ դրամագլուխ մի համեստ գումար՝ 38,649 դրամ։

Ատրպատականի ընկերութիւնը անտարբեր հանդիսատեսի դերի մէջ չի եղել նաև խոշոր արկածների ժամանակ և մեր կեանքում փոքր ի շատէ աչքի զարնող երևոյթների հանդէպ։ Նա իր համեստ նէրով մասնակցել է մանկավարժ պ. Ս. Մանդինեանի 15-ամեայ յոբելեանին, տուել է համեստ նպաստ Ախալքալաքի գաւառում երկրաշարժից փլատակներին։ Այստեղ այնքան նշանակութիւն չունի գումարը խոշորութիւնը, որքան զգալու և մասնակցելու տրամադրութիւնը։

Ատրպատականի ընկերութիւնը հաստատել և վաւերացրել է Հայոց Վեհափառ Կաթողիկոսը։

III.

Այդ երկու նոյն նպատակներով և գործունէութեան գրեթէ նոյն եղանակով ընկերութիւնների գոյութիւնը միևնոյն վայրում արդէն վաղուց աչք էր ծագում։ Միութեան հարցը դեռ շատ առաջ արծարծւել էր և երկու ընկերութիւնների վարիչների լուրջ ուշադրութիւնը հրաւիրել այդ կենսական խնդրի վրայ։ Միութեան հարցը գրաւեցրել է նոյնիսկ մամուլի էջերը, այն էլ շատ անդամներ և փաստաբից ապացոյցներով նշանակել նրա օգտակարութիւնը։ Այդ հարցի վերաբերմամբ խօսւել է նաև լսարանական և այլ հրապարակական դասախօսութիւնների ժամանակ և միշտ էլ ընդհանուրի ցանկութիւնն է եղել տեսնել ընկերութիւնները միացած։ Այդ առթիւ ստացւում է յորդորներ նոյնիսկ Վեհափառ Կաթողիկոսի

կողմից, խորհուրդ են տալիս նաև ընկերության մասին և բարեկամ մարդիկ։ Մի խոսքով ամենքի կողմից ցանկալի և օգտակար էր համարում միության հարցը։

Արդեն խնդիրը հասունացել էր, դժուար էր դիմադրել այդ ընդհանուր ցանկությանն։ Եւ վերջապես 1901 թ-ին միության հարցը դրվում է գործնական հողի վրայ և սկսվում՝ երկու ընկերությունների մեջ բանակցությունները։ Լինում են մի շարք նիստեր, ուր խոսվում է միության պայմանների մասին, նշանակում են ընկերության անունը, մշակում են նոր կանոնադրություն և մի քանի անհրաժեշտ հարցերի վերաբերմամբ խորհրդակցություն է լինում, և դրանով միությունը կատարված է համարվում։

«Նոր կանոնադրությունը նորից քննելով ընդհանուր ժողովներում և վավերացնելով երկու ընկերությունների սահմանադրությամբ, ուղարկվում է ս. Էջմիածին և հաստատվում է Վեհափառ Կաթողիկոսի կողմից»։

Ընկերությունների միությունը վերջնականապես կատարված հրատարակվեց 1901 թ-ին, սեպտ. 10-ին. և 1901—1902 ուս. տարվայ համար ընտրվում է «Միացեալ» ընկերության վարչությունը, իսկ ընկերությունը կոչվում է «Թաւրիզի հայոց հանգանակական միացեալ ընկերություն»։

Միացման ժամանակ «Ատրպատականի» ընկերությունը ունէր մաքուր դրամագլուխ 25,041 դրան 75 կոպէկ։ «Թաւրիզի» հայոց ընկերության կանոնադրության 40 և 38 յոդվածները արգելում են նպաստել Լիլաւայի «Թամարեան» դպրոցին, ուստի նախ քան միանալը, ընկերությունը 30,000 դրան նվիրում է «Թամարեան» դպրոցին, այնպես որ մնում է զուտ դրամագլուխ 47,265 դրան 35 կոպէկ։ Ուրեմն «միացեալ» ընկերությունը ունենում է 72,307 դրան 10 կ. ի հարկէ սրա մէջ չեն հաշված ընկերությունների գանազան հաստատություններում ունեցած կարասիները, դասական պիտույքները և այլն։

«Թաւրիզի հայոց հանգ. միացեալ ընկերությունը» 1901—1902 ուս. տարվայ սկզբին ունէր 13 հաստատություններ.—երկու մանկապարտէզներ (Լիլաւա և Ղալա), երեք աղջկան սեռի ուսումնարաններ Ուրմիում, Գեարդաբադում և Դէրեէքում, երկու արհեստանոցներ (Լիլաւա և Ղալա), հինգ ուսումնարաններ Փիրէթէքում և Բաքառու գիւղում (երկսեռ), Աղաջանում և Իքի-Աղաջում (տղայոց) և Թանվայում (օրիորդաց)։

Եւ 1901—1902 ուս. տարում ընկերությունները միացած և թարմ ոյժով ձեռնարկում են իրանց հանրօգուտ գործու-

նէութեանը։ Շատ յոյսեր էին դրուած այդ ոյժի վրայ. շատ ակնկալութիւններ էին սպասւում այդ գործունէութիւնից։ Բայց, սրտի ցաւով պիտի ասենք, «Միացեալ» ընկերութիւնը չարդարացրեց իր վրայ դրած յոյսերը, և չտուեց ցանկալին։ Ընդհանրապէս շատ խղճուկ է «Միացեալ ընկերութեան» 1901—1902 ուսում. տարեայ գործունէութիւնը։ Ընկերութիւնը միմիայն Թահվա գիւղում բանում է նաև տղայոց դպրոց և մէկ էլ Բարանդուզի Թումաթար գիւղում տղայոց դպրոց, ուր ունենում են միայն 14 աշակերտ։ Այնպէս որ ընկերութեան գոյութիւն ունեցող հիմնարկութիւնների վրայ աւելանում է միայն այդ վերջին դպրոցը (Թումաթարի)։ Ընկերութիւնն էլ գտնում է, որ իր արածը շատ անբաւարար է և աշխատում է բացատրել նրանով, որ նրանք, որոնց վրայ յոյս էր դրել ընկերութիւնը, աջակցութիւն ցոյց չտուեցին, այդ պիտի վերագրել այն տնտեսական տագնապին, որ տեղի ունեցաւ այդ թւին։ Հետևեալ 1902—3 ուս. տարին էլ աւելի ամուլ եղաւ, եղած հաստատութիւններին չաւելացաւ և ոչ մէկը։

«Պէտք է մօտիկից ծանօթ լինել դրութեան, ցաւելով ասում է ընկերութիւնը, պէտք է ուսումնասիրած լինել մեր նահանգի հայ ազգաբնակութեան ընդհ. մեծամասնութեան տընտեսական և բարոյական աննախանձելի վիճակը, պէտք է կարդալ մեր դաւառական ուսուցիչների տուած տեղեկագրերը, որպէսզի հնարաւոր լինի նախ ըմբռնել կարիքի այն մեծ չափը, որ թագաւորում է Ատրպատականի բոլոր գաւառներում և երկրորդ՝ զգալու գործի, օգնելու և զոհողութիւնների այն մեծ պահանջը, որի համար պատասխանատու պիտի համարուի իւրաքանչիւր պարտաճանաչ մարդ։ Իսկ ինչ կարող է անել մի ընկերութիւն գործի այդպիսի մեծ պահանջների առաջ, հիմնուելով միմիայն իր ուժերի վրայ։ Հարկաւոր է արտաքին օգնութիւն, հարկաւոր է շատերի աջակցութիւնը»...

Ընկերութիւնը, կարծում ենք, արտնջալու տեղիք չունի, քանի որ այդ հաստատութիւնների դեռ սկզբնական տարիներից հայ ժողովուրդը առանձին համակրանք է տածել և չի խնայել իր նիւթական օժանդակութիւնը, այն էլ առատ օգնութիւնը. դրան ապացոյց կարող են ծառայել ընկերութիւնների դրամագլուխների արագ և զգալի աճումը։ Իսկ 1901—1902—3 թւին բացառիկ տարիներ էին և ունէին, ինչպէս նկատեցինք, իրենց խոր և տնտեսական պատճառները։ Կանանց հայուհեաց քարեգ. ընկերութիւնները երբ գործ, շօշափելի և գրական գործ են ցոյց տուել, միշտ էլ գտել են խրախուսանք, բարոյական և դրամական աջակցութիւն։

Վերջին 1903/4 ուս. տարեշրջանում միացեալ ընկերութիւնը համեմատաբար յաջողութիւն ունեցաւ, և լաւ յաջողութիւն։ Կրթական հաստատութիւնների շարքում աւելացաւ մի նորը, կանոնաւոր և հաստատուն հիմունքների վրայ դրուած։ Դա Միանդուաբի Թաղիարատ գիւղի «Արամ Ղազարեան» դպրոցն է, մի լուսաւոր ջահ թանձրամած աղջամուղջում, Պարսկական-Քիւրդստանում։ Այդ դպրոցը բացուել է Թիֆլիզեցի Արամ Ղազարեանի անունով, որը վախճանուեց Նախանցեալ տարի Եկատերինոդարում, իր կայքից 9000 բուբլի դրեց ընկերութեան տրամադրութեան տակ մի դպրոց պահելու Պարսկաստանում իր անունով։ Տեղի վերաբերմամբ՝ ընկերութիւնը աւելի քան աջող ընտրութիւն է արել։ Միանդուաբի այդ գիւղը նախ ամենախուլ անկիւններից մէկն է, և երկրորդ, կենտրոնէ մի քանի գիւղերի համար։ Այդ դպրոցը պիտի համարել բոլորովին ապահովուած և ապագայ խոստացող, նամանաւանդ ունի քիչ ու շատ պատրաստուած ուսուցիչ։ «Արամ Ղազարեան» դպրոցը ունի իր յարմար շէնքը։ Առհասարակ ընկերութեան դպրոցները ունեն երկու աչքի զարնող թերութիւններ, նախ չկան դպրոցական շէնքեր, դասատուութիւնը լինում է մասնաւոր շէնքերի մէջ և այդ ունի անպայման իր յայտնի անյարմարութիւնները, և երկրորդ, չկան պատրաստուած, իրենց կոչմանը արժանի ուսուցիչներ, չհաշուած մի երկու հոգին։ Ճիշտ է, ընկերութեան արածը արդէն շատ մեծ բան է այդ ճնշուած, հաբստահարուած և կորստի մատնուած հայերի համար և աւելին էլ դժուար է առ այժմ պահանջել, բայց ընկերութիւնը ամեն կերպ պիտի ձգտի այդ երկու պահանջներին կամաց-կամաց բաւարարութիւն տալ։ Կարծում ենք հեշտութեամբ կարելի կլինի իւրաքանչիւր գիւղում գէթ երկու սենեակով դպրոցական շէնք շինել. դա մեծ ծախս չի պահանջի։ Միևնոյն ժամանակ պէտք է աշխատել պաշտօնի կանչել ցենդաւոր, պատրաստուած անձնաւորութիւնների։ Այժմ ուսուցիչների և ուսուցչուհիների մեծագոյն մասը աւարտել են Թաւրիզի բողոքականների դպրոցը։ Դեռ մի կերպ կարելի է հաշուել այն մտքի հետ, որ այս խուլ անկիւնում կարող են գէթ մի յայտնի չափով օգտակար լինել և մանաւանդ Կովկասից մի քիչ դժուարութեամբ կը համաձայնեն գալ բայց աւելի քան զարմանալին այն է, միևնոյն ժամանակ ցաւալի, որ ընկերութիւնը Թաւրիզի մանկապարտէզների դեկաւարութիւնը անգամ յանձնել է բողոքականների դպրոցը աւարտած աղջիկներին։ Նրանց աշխատանքը այնքան սահմանափակ է մասաւոր պատրաստութիւնը այնքան ողորմելի, որ բոլորովին անկարող են դեկաւարել մանկապարտէզներ։

1903—4 ուս. տարում ընկերությունը մի ցանկալի և անհրաժեշտ փոփոխություն մտցրեց իր հաստատությունների մէջ։ Դեռ մի քանի տարի առաջ մամուլի էջերում արծարծել էր այն հարցը, որ ընկերության արհեստանոցները չեն նպաստում օրիորդների զարգացմանը, միայն տալիս են արհեստ, այն էլ շատ թեթև բան, այն ինչ անհրաժեշտ է ոչ տալ մասնաւորին, ընդհանուր կրթությանը։ Այս հարցը, որ Թաւրիզի կանանց համար ունի կենսական նշանակություն, շատ է խոսեցրել իր մասին, լսարանում եղել են մինչև իսկ մի շարք տաք վիճաբանություններ։ Առաջարկւում էր կամ արհեստանոցներում աւանդել ընդհանուր զարգացմանը նպաստող առարկաներ, ունենալ մի երկու բաժանմունք, որ կազմէր դպրոցի շարունակությունը և կամ փակել արհեստանոցները՝ դպրոցներում բանալով օրիորդաց չորրորդ դասարան, նշանաւոր տեղ տալով նաև կար ու ձևին։ Այս հարցը աւելի քան հասունացել էր և ընկերությունը 1903—4 ուս. տ. փակեց արհեստանոցները, իսկ այս տարի չորրորդ դասարան բացեց միայն Ղալայի դըպրոցում, յատկացնելով տարեկան 300 թումանս։

Ուրմիոյ ծովակի արևմտեան և հարաւային ափերում կըծկված, թշւառացած և կորստեան ճանապարհի վրայ կանգնած մի ափ հայերին ազատելու, փրկելու համար անհրաժեշտ են էլի տաք սրտեր, ուժեղ բազուկներ։ Կամաց-կամաց երևան են գալիս նման անձնաւորություններ, իսկ դրանց շարքում ամենապատուաւոր տեղը գրաւում է Պ. Տիգրան Աֆրիկեանը,՝

«Սրտի անհուն հրճանքով ասեմում եմ, գրում է ընկերությունը, որ պ. Աֆրիկեանը, կամենալով մի իրական, շոշափելի ծառայություն մատուցանել լքված, մոռացված քայքայված և իր ազգային առանձնայարկությունները կորցրած Պարսկահայ դեղջուկի կրթական գործին, յղացել է մի վերին աստիճանի մարդասէր միտք, այն է՝ Ուրմի գաւառը իր շրջակայքով պատել դպրոցական ցանցով, լուսոյ տաճարներ հիմնելով այն վայրերում, ուր կարիքը մեծ է, ուր շրջապատող օտարադաւան-օտարախօս տարրերը, իրենց մահաշունչ երախը լայն բացած, սպառնում են կլանել նրանց։ Այդ դպրոցները առ այժմ լինելու են թւով 20, նպաստ իւրաքանչիւրին 250 թումանս։ Դպրոցները պիտի բացւի պարբերաբար, տարին երկուսը։ Դպրոցները պիտի դրւեն թեմիս վիճակաւոր Առաջնորդի հովանաւորության և ընկերությանս ամիջական հսկողության և կառավարության ներքոյ»։

Աւելի քան խելացի և հեռատես է բարերարի այն կարգադրությունը, որ դպրոցները դրել է ընկերության անմիջա-

կան հոգանաւորութեան տակ, քանի որ նա ճանաչուած է վեհ. Շահնշահի կողմից իբր պաշտօնական մարմին և մինչև իսկ վայելում է նրա թանգագին հոգանաւորութիւնը։ Բայց նոյն այս բանը չենք կարող ասել միւս կէտի վերաբերմամբ։ Ընկերութեան ղեկավար կանայք, պիտի անաչառօրէն խոստովանել, անկարող են ստանձնել և կանոնաւոր առաջ տանել այդպիսի մի պատասխանատու գործ։ Դպրոցների ուսումնականի վրայ հսկելու, տոն և ուղղութիւն տալու համար անհրաժեշտ է մի ուրիշ մարմին, կազմուած կարող և դպրոցական գործին ծանօթ մարդկանցից։ Բացի այդ, աչքի առաջ ունենալով ձեռնարկութեան լրջութիւնը, անհրաժեշտ է մի ընդհանուր տեսուչ, լուրջ պատրաստուած և հմուտ անձ, որ հսկի դպրոցների վրայ, պարբերաբար այցելի և սերտ յարաբերութեան մէջ դնի բոլորը։

Այս 1903—4 ուս. տարում ընկերութիւնը ունէր 11 հաստատութիւններ, որոնցից 4 ընկերութեան ծախսով են պահւում, 7 քարեբարների (6 պ. Աֆրիկեանի)։ Այդ հիմարկութիւնների մէջ սովորում էին 420 աշակերտներ և աշակերտուհիներ, ձեռք նրանց թիւը 500 էր հասնում։

Ահա ընկերութիւնների 18 ամիս գործունէութեան համառօտ պատմութիւնը։

ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ ՁՈՒՐՋԸ

I.

Ատրպատականի հայ գաղութը, ինչպէս յայտնի է, 1901 թուին ստացաւ ժողովրդական ընտրողական սահմանադրական իրաւունք։ Այսպիսով վերանում էր «նշանակովի» առաջնորդութեան սիստեմը. ժողովուրդը ինքը պիտի ընտրէր։ Այդ արդէն խոշոր և նշանակալից եղելոյթ էր Ատրպատականի կեանքում։ Վեհափառ Կաթողիկոսի կոնդակի համաձայն իւրաքանչիւր գաւառ պէտք է մասնակցէր առաջնորդական ընտրութեան երկ-երկու պատգամաւորով, իսկ Թաւրիզը՝ 16։ Ցանկալի Ղարադաղն էլ երկու ձայն պէտք է ունենար, թոյլ էլ, այն ինչ առաջինը ունի 27 գիւղ, իսկ վերջինը միայն չորս։ Ձայները ինչպէս տեսնում էք շատ անհաւասար էր բաժանուած։ Այդ անհաւասարութիւնը փոքր ինչ վերացնելու համար, Սահակ եպ. Այվատեանը գաւառները բաժանեց գործակալութիւնների, իւրաքանչիւր գործակալութեան տալով երկու ձայնի իրաւունք։ Այս նոր բաժանման հիման վրայ, Ղարադաղը, ունենալով երեք գործակալութիւն—Տիզմար, Մեշափառ-Մընջուան և Թէյվան, երկու ձայնի փոխարէն ստանում էր 6 ձայնի իրաւունք, իսկ Սօուղ-բուլաղը, որ առանձին գործակալութիւն չէ, այս բաժանումով ձայնից զրկւում էր, բայց որովհետև առանձնապէս յիշուած էր կոնդակում, Այվատեան եպ., ի պատիւ Վեհափառի, Սուլդուզի հետ միացրած երկու ձայնի իրաւունք տուեց։ Իսկ ամենախոշոր անհաւասարութիւնը կայանում էր նրանում, որ միայն Թաւրիզը, որ թէև ունի 700 տուն, ունէր համարեա բոլոր գաւառների չափ ձայն։ Ամենահաւանականն է, որ Վեհ. Կաթողիկոսը առաջնորդուել է նրանով, որ Թաւրիզն է Ատրպատականի զարգացման կենտրոնը, ուր խմբուած են կարող անձինք, Թաւրիզն է նշանաւոր դեր խաղացող...

Սահակ եպ. Այվատեանը կոնդակը տպել տալով՝ ցրւում է գաւառները և պաշտօնական շրջաբերական ուղղելով գաւառ-

ներ, գործակալներին, յայտարարում է, որ ընտրեն երկ-երկու պատգամաւոր, որպէսզի առաջնորդական ընտրութեան մասնակցեն մի-մի ձայնի իրաւունքով, իսկ Թաւրիզում, բայի այդ, յիշել էր թէ այն օտարականը, որ միայն երկու տարի է Թաւրիզում, նա միայն քուէ տալու իրաւունք ունի, իսկ նա, որ երեք տարի է, իրաւունք ունի նաև ընտրելու։

Պատգամաւորների ընտրութիւնների ժամանակ, թէ Թաւրիզում և թէ գաւառներում գործում էր երկու կուսակցութիւն։ Երկու կուսակցութիւններն էլ շահագրգռուած էին առաջնորդական խնդրում և ունենալով բնականաբար տարբեր շահեր ամենայնի պրոպագանդ էին անում պատգամաւորական խնդրում։

Առաջին կուսակցութեան հետ էր Թաւրիզի Էլիատ թաղը, շատ ազնիւ բացառութեամբ, և գաւառների մեծագոյն մասը, իսկ երկրորդ կուսակցութիւնը կազմում էին Թաւրիզի Ղալա թաղը և մի երկու գաւառակներ։

Պատգամաւորական ընտրութիւնները ի հարկէ նշանակուած ժամանակին վերջանում են։ Այդ ընտրութիւնների մէջ ուշադրութեան արժանի կէտերն են առաջին այն, որ Ղարադաղի Քէյվան գործակալութիւնը իր ձայների իրաւունքը թողնում է կաթողիկոսին։ Ոզորմելի ժողովուրդ, որ չի հասկանում իրան տուած արտօնութեան վեհ նշանակութիւնը.... Դեռ այդ ոչինչ, քէյվանցուն, որպէս ազգ ժողովրդի, այնքան էլ մեղադրելի չէ, բայց արի ու տես, որ նոյն միտքը պաշտպանում են հասկացող և ինտելիգենտ համարուած մարդիկ։ Երկրորդ այն, որ Սօուղ-բուլաղը և Սուլդուզը զրկեցին իրանց ձայներից, որովհետև ընտրութիւնը ապօրինի ձևով էր կատարուել։ Գործակալից Այվազեան եպիսկոպոսը մի գրութիւն է ստանում, որով յայտնում էր, թէ ընտրութիւն չկայացաւ, պատգամաւորութեան յարմար մարդ չլինելու պատճառով։ Բայց դրանից երկու օր առաջ և մի քանի օր յետոյ հնարքներ են գալիս մի քանի աղաների վրայ, որ ուզում է նրանց պատգամաւոր ընտրելը։ Իսկ ո՞վ է ընտրել և ինչպէս. ոչ մի պաշտօնական բան։ Բայց յետոյ, ինչպէս պարզուեց, դա կեղծիք էր մի քանի մարդկանց կողմից։ Այդ պատգամաւորների ընտրութիւնը, ի հարկէ, ապօրինի համարուեց և դրանք չմասնակցեցին ընտրութեան։

Այսպիսով մենք ստանում ենք պատգամաւորների հետևեալ ցանկը. Թաւրիզ.—6 ձայնով, Ուրմի.—2 ձայնով, Սալմաստ.—2 ձայնով, Խոյ.—2 ձայնով, Մակու.—2 ձայնով, Խոյ.—4 ձայնով, Տիզմար.—2 ձայնով, Մեսափար-Մնջուան.—2 ձայնով, Ասդաբիլ.—2 ձայնով, Մարաղա.—2 ձայնով։

Այժմ պարզ էր, մինչև ժամանակ թէ որ կողմն է մեր, ծամանութիւնը և յաղթութիւնը։ Երկրորդ կուսակցութիւնը— Սարաջեան եպիսկոպոսի թեկնածութիւնը պաշտպանողները պարզ տեսնում էին, որ տարուած են և այդ հանգիստ չէր տալիս նրանց։ Նրանք մինչև ընտրողական ժողովը նախապատրաստական ժողովներ կազմակերպեցին, ուր ներկայ էին լինում, աւելի ճիշտ, հրաւիրւում էին միայն ոչ օտարականները. իսկ թէ ինչու օտարականներին չէին հրաւիրում, յայտնի չէ։ Դեռ այն շատ հին համոզմունքը—օտարականի վրայ խորթ աչքով նայելը, տիրապետում է այս երկրում։ Նրանք Սարաջեան եպ. թեկնածութիւնը մէջ բերելով աշխատում են ընդհանուր համաձայնութեան յանգել, բայց այդ, ինարկէ նրանց չի աջողում։ Եւ էլի նրանք են պաշտպանում Սարաջեան եպիսկոպոսին, որոնք այնպէս անարգ կերպով ճանապարհ են գրել, ուզում էին բերել. էլ աւելի վատթարացնելու համար։

Վերջին նախապատրաստական ժողովը նշանակուած էր Ապրիլի 21-ին, ուր հրաւիրուած էին բոլոր պատգամաւորները։ Ժողովի հէնց սկզբից առանց դէս դէն ընկնելու, համաձայնութեան խնդիրը մէջ են բերում։ Օտարականներն էլ միանում են նրանց հետ. դրանց ցանկութիւնն էլ հէնց այդ էր։ Աբձանագրութիւն է կազմւում և բոլորն էլ ստորագրում են։ Որպէսզի ընտրութեան ժամանակ աղմուկ և խարդախութիւն տեղի չունենայ, կամ մէկը չըցանկանայ բաց քուէ տալ, որով խանգարւում է քուէարկութիւնը, առաջարկւում է։ հէնց այժմեանից իւրաքանչիւրը իր քուէն գրած ծրարած տայ պատգամաւորներից մէկին, որին կընտրէ ժողովը. եթէ ընտրութեան ժամանակ բան պատահի այդ ծրարները գցեն թուփը։ Առաջարկը ընդունւում է։ Այդ միջոցին են դիմում, որովհետև իրար կասկածում, չեն վստահում։

Ահա այդ նախապատրաստութեամբ, միւս օրը, գնում են առաջնորդարան։ Ոչ մի աղմուկ, քաղցր ժպիտն էր խաղում բոլորի շրթունքներին։ Ընտրւում է դիւան։ Նախագահ Այվազեան եպիսկոպոսը բացում է ժողովը և մի քանի խօսքով բացատրում այդ սահմանադրական իրաւունքի նշանակութիւնը և շեշտում, որ թէև անցեալում այդպիսի ընտրութիւնները միշտ ժողովուրդին էր վերապահած, բայց յետոյ ինչ-ինչ պատճառներով անձեռնհաս է եղել այդ կատարել, իսկ այժմ էլի վերստանում է Ատրպատականի ժողովուրդը այդ իրաւունքը։ Ապա ժողովականները կանգնեցին ոտի և միաձայն ընտրեցին Արիստակէս արքեպ. Սեղբակեանին Ատրպատականի առաջնորդ։ Առաջարկւում է յոտնկայս շնորհակալութիւն յայտնել Վեհ.

Կաթողիկոսին այդ արտոնության համար, իսկ Այվազեան եպիսկոպոսին՝ նրա հոգեկան հանդուն պաշտօնավարության և գործունէության համար։ Այդ երկու առաջարկն էլ մտցնում են արձանագրության մէջ։

Ժողովի արդիւնքը անմիջապէս թէ Սահակ եպ. Այվազեանի և թէ պատգամաւորների կողմից հեռագրւում է Արիստակէս արքեպիսկոպոս Սեդրակեանին։

Արիստակէս արքեպ. Սեդրակեանը, ինչպէս յայտնի է հրաժարւում է և չի ընդունում Ատրպատականի առաջնորդութիւնը։

Մայիսի 11-ին նշանակւում է առաջնորդական նոր ընտրութիւն։ Ժողովում նախ կարդացւում են Վեհ. Կաթողիկոսի հեռագիրը, որով յայտնում էր Արիստակէս արքեպիսկոպոսի հրաժարելը և կարգադրում էր նոր ընտրութիւն անել, և Արիստակէս արքեպ. հրաժարականը հեռագրով ուղղած պատգամաւորներին։

Ուրախութեամբ յիշատակում ենք այստեղ մի իրողութ, որ Ատրպատականի համար նորութիւն է։ Այդ այն է, որ այս ընտրողական ժողովի թոյլատրութեամբ Ներկայ էին և թերթերի թղթակիցները։

Առենապետ Նազար էֆ. Գորոյեանը մի քանի խօսքով բացում է ժողովը և ասում. ընդունելով այս գործի պատասխանատուութիւնը և դժուարութիւնը, ընտրողական իրաւունքը կամ պէտք է թողնել Վեհ. Կաթողիկոսին, կամ պնդել մեր առաջուայ ընտրածի վրայ։ Ինչպէս իմ, նոյնպէս և մեծամասնութեան կարծիքը այն է, որ մենք աւելի խոհեմութիւն արած կլինենք, եթէ թողնենք Կաթողիկոսին։ Ի՞նչ էք ասում։

—Ինչ վերաբերում է երկրորդ կէտին, ասում է դոկ. Փաշայեանը, ոչինչ չունեմ, բայց մենք իրաւունք չունենք մեր ձայնը թողնել Կաթողիկոսին։ Մենք ժողովրդի իրաւունքը ի չարն ենք գործ դնում և դրանով բռնաբարում։ Գօլսում այդպիսի սահմանադրական իրաւունք ձեռք գցելու համար զոհեր են տուել, բայց մենք այժմ չենք կարողանում օգտուել այդ իրաւունքից և ուզում ենք թողնել Կաթողիկոսին. դա ամօթ և ծիծաղելի է։

—Ես էլ այդ կարծիքին եմ, աւելացնում է Ռաշմաճեան։ Մենք չենք ընտրել նրա համար, որ մեր ձայները տանք Վեհափառին, ուրիշ խօսքով նրա շնորհած իրաւունքը, արտօնութիւնը նորից իրան վերադարձնենք։ Իսկ զալով երկրորդ կէտին, ես կարծում եմ աւելորդ է մեր պնդելը, քանի որ, եթէ նա հրաժարել է, ուրեմն ունեցել է իր բանաւոր պատճառները։

—Եթէ պատգամաւորները անձեռնհաս են համարում իրանց այս խնդրում,—ասում է Մ. Յարութիւնեանը, պիտի հրաժարեն պատգամաւորութիւնից, որպէսզի նոր պատգամաւորներ ընտրեն. այդ է պահանջում ժողովրդի իրաւունքները, եթէ չենք ուզում, որ ժողովուրդը չըզրկի իրան շնորհած այդ սահմանադրական իրաւունքից։ Ես էլ եմ կարծում, որ աւելորդ է պնդել մեր առաջուայ ընտրածի վրա, քանի որ հաւատացած եմ, որ նա մեզ հետ խաղ չի անում, նա այդպիսի բնաւորութիւն չունի. ուրեմն կամ նա հիւանդ է կամ մի ուրիշ հիմնաւոր պատճառ ունի։

—Թողնելով Կաթողիկոսին,—պնդում է ատենապետը, մենք չենք զրկւում ընդմիշտ մեր իրաւունքից. այժմ անձեռնհաս ենք, իսկ մի ժամանակից յետոյ պատրաստուած կըլինենք։

—Դա մեզ համար առաջին օրինակն է, եթէ չըկարողանանք օգտուել դրանից, առարկում են ուրիշները, դա մեզ համար անպատուաբեր է։

Այս խնդիրը թէև տաք վիճաբանութեան տեղիք տուեց, բայց էլի մեծամասնութիւնը յուռ էր։ Խօսողները բոլորն էլ, ինչպէս տեսնում էք, հակառակ են Կաթողիկոսին թողնելու մտքին, բացի Բժշկեանից, որ համամիտ էր Ատենապետին։

Ատենապետը մեծամասնութեան յուռ տրամադրութիւնից օգտուելով, խնդիրը առաջարկում է քուէարկութեան.—Թողնե՞լ Կաթողիկոսին, թէ ոչ։

Այստեղ արդէն դոկ. Փաշայեանը յուզուած և դողդոջուն ձայնով ասում է։

—Ես նորից կրկնում եմ, որ դա ամօթ և խայտառակութիւն է մեզ համար, դա մեր իրաւունքից դուրս է, նոյնիսկ եթէ մեծամասնութիւնն էլ համաձայն լինի այդ մտքի հետ։ Ես և նրանք, որ համամիտ են ինձ հետ, դուրս կըգանք ժողովից մի բողոք կըխմբագրենք, դրանից մի օրինակ կուղարկենք Վեհ. Կաթողիկոսին և մի օրինակ էլ «Մշակին» տպագրելու։ Եթէ դուք ուզում էք խայտառակել, ես կըլինեմ առաջինը, այժմ ասում եմ, որ կըխայտառակեմ ձեզ մամուլի մէջ...

—Ես միանգամայն համաձայն եմ դոկ. Փաշայեանի հետ, աւելացնում է, Մ. Զաւաֆեանը։ Մենք նոյնիսկ իրաւունք չունենք այդ խնդիրը քուէարկութեան դնել, ուր մնաց մեր ձայնը տանք Կաթողիկոսին, շատ-շատ մենք կարող ենք հրաժարուել։

Էլի կարծիքների փոխանակութիւնները եղան։ Պատճառաբանեցին, որ անմիտ և ամօթալի է այդ վարմունքը և, որ ամենագլխաւորն է, դուրս պատգամաւորների իրաւասութիւնից։ Առանց այդ խնդրին վերջնական լուծում տալու և փա-

կելու, ատենապետը տեսնելով որ գլուխ գալու բան չէ, առաջարկում է կամ դիմել Վեհ. Կաթողիկոսին, որ թեկնածուների անուան ցանկ ուղարկի, հաստատ կենսագրականներով, կամ յետաձգել մի քանի ամսով, լաւ խորհելու համար, առարկելով թէ չենք ճանաչում հոգևորականներին։

Նոյն միտքը պաշտպանեց և Ալէքսանեանը, բայց աւելացրեց և այն, որ նախապէս առնել նաև թեկնածուի հաւատարմութիւնը։

—Դա նոյնն է դուրս գալիս, նկատեց որ էլի խոչնում ենք Կաթողիկոսին։

Շատերի կողմից պատճառաբանուեց և առարկեց, որ դա աւելորդ է, քանի որ ամեն մի կուսակցութիւն ունի անշուշտ իր թեկնածուն և երկրորդ՝ պատգամաւորներից շատ շատերը ճանաչում են հոգևորականներին։ Առաջարկուեց թեկնածուների մասին խորհրդակցել։ Խնդրուեց նախագահ եպիսկոպոսից, որ մի առժամանակ հեռանայ ժողովից, որպէսզի ազատ, առանց ճնշելու յայտնեն իրանց կարծիքները։

Գոկ. Փաշայեանը իր կողմից առաջարկեց Սահակ եպիսկ. Այվազեանին, Բագրատ վարդ. Թաւաքալեանին և Եղիշէ վարդ. Մուրադեանին, իսկ Վ. Բժշկեանը և Ա. Ալէքսանեանը՝ Գրիգորիս եպ. Տէր-Յովհաննիսեանին, Յովսէփ եպ. Սարաջեանին և Սահակ. եպ. Խապայեանին։

Նա, որ մի քանի բոպէ առաջ պնդում էր, թէ յարմար և արժանաւոր հոգևորականներ չենք ճանաչում, այժմ թեկնածու է առաջարկում. ինչպէս բացատրել այդ հակասութիւնը։ Այվազեան և Սարաջեան եպիսկոպոսները, որպէս բոլորին լաւ ծանօթ, դրանց մասին բոլորովին չբխեցին, այլ միւս թեկնածուների մասին խորհրդակցութիւններ եղան։ Թեկնածուներ դրանց արժանաւորութիւնները, առաջ բերին պակասութիւնները. բայց ընդհանուր համաձայնութիւն չկայացաւ և խնդիրն էլ նոյն դրութեան մէջ մնաց։

Ամբողջ ժողովի ընթացքում հետևելով բոլոր խորհրդակցութիւններին և ատենապետի ասոյթանաբար արած կիզուզութիւններին, դժուար չէր հասնել այն եզրակացութեան, որ ատենապետը և նրա համախոհները աշխատում, ձգտում էին խոչ տալ, ժամանակ յետաձգել ընտրութիւնը. թէ ինչու. այդ հանելուկ էր...

Ուշագրաւ է և մի ուրիշ կէտ։ Հասկանալի է, որ ժողովում, երբ մի խնդիր է արծարծուում, նրա մասին խօսում, վիճում, մի որոշ ընդհանուր համոզմունքի գալուց և այդ խնդիրը փակելուց յետոյ են անցնում մի ուրիշ հարցի։ Բայց ինչ...

խնդիրները բարդուում էին իրար վրայ և առանց ընդհանուր եզրակացութեան յանգելու, առանց լուռ մեացածների կարծիքը իմանալու, ատենապետը իր կողմից վճռած էր համարուած և անցնում ուրիշ գործերի։

Այդպէս վարուեց և վերջին առաջարկի վերաբերմամբ։ Առաջարկուեց մի քանի օրով յետաձգել ընտրութիւնը։ Ատենապետը դեռ ընդհանուրի համաձայնութիւնը չառած, կանչեց Այվատեան եպիսկոպոսին, և որպէս հաստատ վճիռ հաղորդեց նրան, որ ժողովը, աչքի առաջ ունենալով գործի դրութիւնը, համաձայնեց մի քանի օրով յետաձգել ընտրութիւնը։

Ահա այդ անկանոնութեան համար դիւանը նկատողութեան առնուեց։

Ընտրութիւնը ընդհանուր համաձայնութեամբ յետաձգուեց մինչև մայիսի 15-ը։

Դրանից յետոյ սկսւում են խաղեր, անվերջ խաղեր...

Մայիսի 14-ին նախապատրաստական ժողով էր նշանակուած։ Այդ նախապատրաստական ժողովում խօսում են երկու կողմի առաջարկած թեկնածուների մասին։ Երկար խորհրդակցութիւնից և զիջումներից յետոյ ընդհանուր համաձայնութեան են գալիս Եղիշէ վարդապետ Մուրադեանի վրայ։ Ճանկարծ, ինչպէս է լինում, մէջ է բերուում Հմայեակ եպիսկոպոս Դիմաքսեանի անունը և ոմանք առաջարկում են հաւասար ձայներով ընտրել երկուսին էլ և առաջարկել Կաթողիկոսին, որին ցանկանայ, նրան էլ հաստատէ։ Եղիշէ վարդապետի իսկական կուսակիցները ոչ մի կերպ չեն զիջում և չեն համաձայնուում Դիմաքսեան վարդապետի կուսակիցները առաջարկում են հրաժարուել պատգամաւորութիւնից, անձեռնհաս համարելով իրանց այդ գործի համար։ «Աքար մեր ինչ բանն է սա, մենք ինչ ենք հասկանում», ասում են Ղալայի ծխական պատգամաւորները և ուրիշները։ և այդ խոստովանութիւնը շատ ճիշտ է և բնորոշ։

Անցան այն երանելի ժամանակները, որ դրանք տէր և հրամայող էին ժողովրդին և իրանց քմահաճութեան համաձայն առաջնորդին և՛ հեռացնում, և՛ բերում էին։ Պատմում են, որ առաջ. երբ առաջնորդ բերելու խնդիր էր լինում մի քանի ազաներ թուղթ էին պատեցնում և, առանց առաջնորդի ով լինելը ասելու, ստորագրել էին տալիս ժողովուրդին։ Իսկ ով կը յանդգնէր հակառակել նրանց։ Նա, ով կեանքից ձեռք էր վերցրել, բայց քանի այդպիսի մարդիկ կը ճարուէին։ Համարեա և ոչ մէկը։ Այժմ նրանց հակառակ գործողներ կան, այն էլ

յայտնի կերպով գործողներ և առանց այդպիսի տարտափելի պատիժներ աչքի առաջ ունենալու։

Դիմաքսեան եպիսկոպոսի պաշտպանները, հէնց այդտեղ, ժողովում, պրաւոր կերպով հրաժարւում են պատասխանատուութիւնից, որ ուղղած էր Սահակ եպ. Այվազեանին, իսկ միւսները ժողովից դուրս են գալիս։ Դա էլ, իհարկէ, խաղ էր, բայց այդ էլ չաջողուեց։ Միւսների դուրս գալուց անմիջապէս յետոյ, սրանք փոխում են իրանց վճիռը, և նոր խաղի դիմում, թէև համոզուած էին, որ դրանով էլ չեն կարող հասնել իրանց որոշ նպատակին. բայց ինչ արած, ճար չունէին։

Խնդիրը ահա այդ գրութեան մէջ, միւս օրը դնում են ժողովի։

Առենապետը ժողովը բացեց և ասեցրեց, որ, ինչպէս անցեալ օրուայ նախապատրաստական ժողովումն էլ ասուեց, ցանկալի էր, որ ընտրութիւնը միաձայն լինի, այն էլ յիշած՝ երկու անձանց վրայ՝ Եղիշէ վարդ. Մուրադեանի և Հովսեփ եպ. Դիմաքսեանի։

Նախագահ եպիսկոպոսը ձայն խնդրեց և ասաց։ «Ինչպէս է, Թուսասատանում կաթողիկոսական երկու թեկնածուներ են ընտրում, համաձայն Գէորգենիայի և առաջարկում Կայսրին, որ իր վէտոն է դնում. բայց դա մեր եկեղեցու ոգուն հակառակ է։ Մենք պիտի մէկը ընտրենք և առաջարկենք հաստատութեան, ինչպէս յիշուած է կոնդակում։

Այս խաղն էլ չըյաջողուեց։ Քէչարկութիւնն իսկի ձեռնտու չէր նրանց համար։

—Եթէ այդպէս է, ուրեմն հրաժարւենք, ինչպէս անցեալ անգամ էլ ասացինք, ասում է առենապետը, համաձայն էլ...

—Ո՛չ, ոչ,—լսեցին զանազան կողմերից։

Աւելի ինչպէս կարելի է, որ ազգն իր խօսքը չկատարողանայ առաջ տանել։ Դա շատ ծանր է և ազգն անկարող է տանել. և ահա ինչու չէին խնայում ամեն աններելի միջոցներ՝ ընտրութիւնը խանգարելու, գլխաւորապէս յետաձգելու համար։ Դրանք ազնիւ պայքար և կռիւ մղելու անընդունակ են, այլ ծածուկ և կեղտոտ միջոցներով։

Ազգանիրը տեսնելով, որ ոչ մէկն էլ գլուխ չեկաւ, մի բոլոր առաջարկեցին, որի մէջ շեշտուած էր հետևեալ կէտերը.— Նախ՝ Լիլաւայի ծխականների ընտրութիւնը ապօրինի է, երկրորդ՝ Սօուզ-Բուլաղի ձայները ի զուր է կորել, ապօրինի ձևով, երրորդ՝ Տ. Բաշմաճեանը, Ա. Ղորդանեանը և Տէր-Նակոբը իրաւունք չունեն, որովհետև նախ՝ առաջինը երեք տարի լրիւ չէ ապրել Թաւրիզում, երկրորդը և երրորդը պաշտօնա-

կան ձևով չեն ճանաչուում, ժողովուրդը չէ ընտրել նրանց։

Թէ նախագահի և թէ ուրիշների կողմից պատճառաբանուեց, որ Լիլաւայի ընտրութիւնը ապօրինի չէ, քանի որ բոլորն էլ մասնակցել են քւէարկութեան և մանաւանդ, բողոքի մէջ ստորագրել էին այնպիսի մարդիկ, որ կամ ժողովում չեն եղել, կամ ստորագրել են իսկական արձանագրութեան։ Սօուզ-Բուլաղի ընտրութիւնը ապօրինի է, որովհետև գործակալից ոչ մի պաշտօնական բան չկայ, դրանք միայն մասնաւոր մարդկանց հեռագիրներ են, չենք կարող դրան հաւատալ. եթէ բողոքելու բան կար, պէտք է իր ժամանակին բողոքէր։ Տ. Բաշմաճեանը երեք տարի է, որ գործում է Թաւրիզում. ինչ նշանակութիւն ունի, թէ մի երկու ամիս պակաս է, իսկ գալով Ա. Ղորդանեանին և Տէր-Յակոբին, առաջինը հոգարարձութեան հաստատած երէցփոխն է, իսկ երկրորդը Լիլաւայի միակ ծխական քահանան. ուստի կարելի էր տալ ձայնը, չէ որ մէկը պէտք է մասնակցէր ընտրութեան։

Դրանք, աւելի ճիշտը, ոչ թէ բողոքում էին ապօրինութիւնների դէմ, այլ արդիւնքի, պարզ տեսնելով, որ տարբեր են։ Եւ բանը այն է, որ դիմելով զանազան խաղերի, ընկնում են և՛ հակասութիւնների մէջ։ Բողոքից մի բոպէ առաջ առաջարկում էին ընդհանուր համաձայնութեամբ ընտրել երկուսին էլ, ի հարկէ, ապօրինի պատգամաւորներով (նրանց կարծիքով), չընայած մի ընտրութիւն էլ արդէն կատարել են նոյն պատգամաւորներով, և այժմ բողոքում են ապօրինութեան դէմ։ Մանաւանդ յետոյ էլ առաջարկում և աւելացնում են, որ եթէ ընդհանուր համաձայնութիւն կայացնի երկուսի վերաբերմամբ, բողոքին ուշադրութիւն չեն դարձնի։ Տեսնում էք, դրանց «սկզբունքները»։

Երբ այդ վերջին խաղն էլ չաջողուեց, առենապետը իր համախոհներով դուրս եկան ժողովից։ Առենապետը գոնէ իր տարրական քաղաքավարութիւնը և պարտականութիւնը չկատարեց։ Նա պարտաւոր էր, նախ քան ժողովից դուրս գալը, հրաժարուէր իր պաշտօնից և դիւանի գործերը յանձնէր ժողովի նախագահ եպիսկոպոսին. բայց նոյնիսկ բողոքն էլ չբվեռադարձրին, չընայած որ Մնացած պատգամաւորների ին դրանոք գեր։ Նախագահը պահանջեց այդ։

Մնացած պատգամաւորները, որ մեծամասնութիւն էին կազմում, նոր դիւան կազմեցին. և բացարձակ քւէով ընտրեցին Եղիշէ վարդապետ Մուրադեանին Ատրպատականի առաջնորդ։ Ժողովում առաջարկուեց և ընդունուեց, որ ներկայ դիւանը պահանջէ նախկին դիւանից մայիսի 11-ի արձանագրու-

թիւնը, կամ նորից մանրամասն կազմել։ Թէ ինչու այդ ժողովի արձանագրութիւն կազմելուց խոյս են տուել, դա շատ պարզ է, որովհետև այդ ժողովը գրաւած էր մի շարք ամօթալի առանձնաներով։ Բայց մամուլը ժամանակին իր դերը կատարեց։

II.

Ատրպատականի ամեն մի գաւառը և անկիւնը, ուր ծնուած են հայերը, ունի ցաւերի ամբողջ մի շղթայ։ Բազմազան և բազմապիսի են այդ ցաւերը, որոնք առաջանում են տիրող կարգերից և պայմաններից, ժողովրդի տգիտութիւնից և տգիտութիւնից։ Ամեն մի գաւառի ամեն մի ցաւը և վէրքը ունի իր առանձին, ուրոյն պատմութիւնը։ Դրա վրայ աւելացրէք նաև մի շարք անհրաժեշտ կարիքները և այժմէութիւն ունենացող հարցերը, այն ժամանակ Ատրպատականի թեմը էլ աւելի ծանր, պատասխանատու կդառնայ։ Անհրաժեշտ է մի ուժեղ ձեռք, մի տաք ջերմացող սիրտ, որ կարողանայ բաւարարութիւն տալ անթիւ կարիքներին, և սպեղանի լինել այդ ցաւոտ վէրքերին, որ այնքան շատ են և ժորմոքիչ։

Այդ դերը վերապահուած է թեմական առաջնորդին, ամբողջ ազգաբնակութիւնը իր անթարթ աչքերը յառում է իր առաջնորդի վրայ և նրանից սպասում, եթէ չասեմ ամեն ինչ, գոնէ շատ բան։

Ահա ինչքան ծանր, բայց միևնոյն ժամանակ, վեհ և նուիրական է Ատրպատականի առաջնորդութիւնը։

Բայց միայն դրանով չէ վերջանում այդ պաշտօնի պատասխանատուութիւնը։

Ասեցինք, որ առաջնորդը այստեղ ներկայացնում է իրը հայերի ներկայացուցիչ, նաև աշխարհիկ պետ։

—Թաւրիզում է ճնում Ատրպատականի թեմական առաջնորդը, այնտեղ են լինում նաև օտար պետութիւնների նեկայացուցիչ-հիւպատոսներ։ Առաջնորդը իրրև հայերի ներկայացուցիչ պէտք է յարաբերութիւններ պահպանի պարսից թագաժառանգի, զանազան պաշտօնեաների և հիւպատոսների հետ։ Եթէ առաջնորդը դիրք և հեղինակութիւն չունի պարսիկ պաշտօնեաների շրջանում և չի ներկայացնում զօրեղ ոյժ, անպայման նա անկարող կլինի մի շօշափելի գործ կատարել և օգտակար լինել թեմին։

Հերիք է որ մի պարսիկ պաշտօնեայ ընդհարուի առաջնորդի հետ և զգայ նրա թուլութիւնը, ձեռք առնելով պարս-

կական ամենանուրբ խորամանկութիւնները՝ նա կաշկատի առաջնորդի դիրքը խախտել, գցել նրա պրեստիժը բարձր պաշտօնեաների առաջ և տապալել նրան։ Իսկ այդքանից յետոյ առաջնորդի թեները կոտրատելով՝ հնարաւորութիւն չի ունենայ ապատօրէն գործելու, ամեն ասպարէզում, ամեն տեղ խոչընդոտներ կը յարուցանեն նրա առաջ։ Առաջնորդը պէտք է լինի հմուտ, վարչական ընդունակութիւններով օժտուած անձնաւորութիւն, լաւ ծանօթ պարսկական յարաբերութիւններին։ Հակառակ դէպքում նա անկարող կը լինի իր դիրքը պահպանել։ Պարսկական կեանքը, ինքը պարսկաստանցին բազմազան և վերին աստիճանի նուրբ խորամանկութիւնների մի հիւսուածք է։



Ս. Թադէի վանքի նակուղ։

Այդ հիւսուածքի մէջ մտնողն էլ պիտի անհրաժեշտօրէն ունենայ նուրբ քաղաքագիտութիւն, պիտի կարողանայ հասկանալ այդ կեանքը։

Ահա այս, ինչպէս և վերևը առաջ բերուած լուրջ հանգամանքները աչքի առաջ ունենալով՝ ասում ենք, որ Ատրպատականի թեմը ծանր և պատասխանատու է։ Վերջին 50 տարուայ ստրեպրութեան մէջ յիշւում է միայն Ստեփաննոս եպիսկ. Մխիթարեանի և Մուշեղեան արքեպիսկոպոսի անունները, որոնք կարողացել են զօրեղ դիրք ստեղծել առաջնորդի համար, բարձր պահել առաջնորդարանի հեղինակութիւնը պարսիկ պաշտօնեաների առաջ։ Նրանք ունեցել են խիստ և ուժեղ բը-

նաւորութիւն և զօրեղ կամք, և ինչպէս պատմում են, պարսիկ պաշտօնեաները դողում, սարսափում էին նրանից։ Գաւառացին մեծ յափշտակութեամբ և հիացմունքով է յիշում նրանց անունը. նրանք գաւառացու համար եղել են զօրեղ պահապան թէև այս էլ պիտի ասել, որ առաջինը ունեցել է շատ հակակրելի կողմեր, մանաւանդ որպէս մարդ։

Ատրպատականի թեմը ամենայն իրաւամբ համարւում է «փորձաքար»։ Եւ իսկապէս շատ առաջնորդներ մեծ զարքով, ահագին ոգևորութեամբ մտել են Ատրպատական և հէնց առաջին քայլից զգացել են իրանց անպատրաստականութիւնը և թուլութիւնը, դէմ են առել ասես մի ժայռի։ Այսպէս է ահա Ատրպատականի թեմը։ Երբ խօսում են դրսի մի առաջնորդի մասին, գովում են նրան, թւում նրա ընդունակութիւնները, հիանում նրա գործերով և աջողութիւններով, թաւրիզցին՝ հեգնական ժպիտը երեսին առարկում է. «էհ, այդ ոչինչ, հապա թող գայ Ատրպատական, թող դայ, տեսնենք նոյն դիրքը այստեղ էլ կըստեղծի և կունենայ այն աջողութիւնները»։

Ատրպատականի թեմը, ինչպէս տեսանք, ստացաւ ընտրողական ժողովրդական իրաւունք, և ձայների հաստատակ մեծամասնութեամբ առաջնորդ ընտրուեց Եղիշէ վարդապետ Մուրադեանը։ Արդէն լրացել է ներկայ առաջնորդի երկու տարուայ պաշտօնավարութիւնը, դեռ մի երկու ամիս էլ անցել է, իսկ այդ քիչ ժամանակամիջոց չէ նրան լաւ ճանաչելու համար։

Ի՞նչ է ասում այդ գործունէութիւնը։

Սկսենք գաւառից։ Գաւառը, որը պէտք է լինի ամեն մի առաջնորդի հոգացողութեան առաջին և ամենալուրջ առարկան, միշտ էլ մոռացուում է, և առաջնորդը ընկնում է թաւրիզ, խլուում է տնական գործերի մէջ և միանգամայն մոռացութեան տալիս իր թեմի ամենագլխաւոր մասը։ Նոյն այդ բանը պատահեց և ներկայ առաջնորդի հետ։ Նա այդ երկու տարուայ ընթացքում այցելել է միմիայն Սալմաստ. իսկ ինչ է արել գէթ Սալմաստի համար։ Գրեթէ ոչ մի օգուտ, բացի մի շարք ճնշումներից։ Եղիշէ վարդապետը իր սովորութեան համաձայն Սալմաստումն էլ տալիս է մի շարք խոստումներ, փքուն ծրագիրներ է առաջարկում ժողովրդին, արծարծում է գիւղատնտեսական կենդրոնական դպրոցի միտքը, փայլուն յոյսեր է տալիս և խոստանում է շուտով մի յարմար հասցնել այդ դպրոցի համար։ Ժողովուրդը միամտաբար հաւատում է իր առաջնորդին, ոգևորւում է, և նոյնիսկ տալիս են ձրիաբար այն հողը, որի վրայ պիտի կառուցէր առաջնորդի երևակայած դպրոցը։ Առաջնորդ Մուրադեանը հեռանում է Սալմաս-

ից՝ թողնելով ժողովրդին փայլուն յոյսերի աշխարհում ենեղ-ները մինչև այսօր էլ սպասում են...

Հայերը մեծ յոյս ունէին, որ առաջնորդը տեսնելով իրանց թշուառ, յուսահատական վիճակը, միջոցներ ձեռք կառնի զսպել և սանձահարել սարփարատին, և ընդհանրապէս պարսիկ պաշտօնեաներին։ Նա ոչ միայն այդ չէ անում, այլ իր բռնած սխալ և անտակտ դիրքով աւելի է երես տալիս նրանց, որոնք յետոյ աւելի ազատ և համարձակ են դառնում իրանց կողոպուտների և հարստահարութիւնների մէջ։

Այս թւի գարնան սկզբներում այնտեղ ուղարկուեց Ընձակ վարդապետը որպէս յաջորդ։ Հէնց առաջին օրերից ցոյց է տալիս նա, որ կարող է վարել իր ստանձնած ծանր պաշտօնը. նա մնում է իր պաշտօնում ոչ երկար, միայն վեց-եօթ ամիս։ Նրա այդքան պաշտօնավարութեան գործունէութիւնը եղել է ընդհանրապէս գոհացուցիչ։ Ընձակ վարդապետը եռանդուն գործիչ է. նա ունի գործելու բուռն ցանկութիւն և նա կարող էր ապագայում անպայման օգտակար լինել Սալմաստին։ Նա ամենախիստ և ուժեղ կերպով դիմադրում է սարփարատին և և միանգամայն չէզոքացնում նրան։ Հարստահարութիւնները դրեթէ բոլորովին դադարում են. կտրում է սարփարատի մնտական արդիւնքի աղբիւրը։ Կատաղում է սարփարատը, միջոցներ է ձեռք առնում նրան հեռացնել Սալմաստից. նա կեղծ հեռագիր է կազմում հայ ժողովրդի կողմից և յայտնում թեհրան, թէ հայերը դժգոհ են յաջորդից և խնդրում են հեռացնել։ Եւ նա հեռացնում է Սալմաստից։ Հեռագրի կեղծութիւնը թէև յետոյ պարզուում է, կասկած է յայտնուում նոյնիսկ թեհրանից, և այդ ժամանակ թէև կարելի էր պաշտպանել յաջորդին, քննութիւն նշանակել, բայց առաջնորդ Մուրադեանը լռեց, չըպաշտպանեց նրան, կամ աւելի ճիշտը՝ չըկարողացաւ պաշտպանել։ Պարսիկ պաշտօնեաների հետ չկարողացաւ նա յարաբերութիւն պահպանել և դիրք ստեղծել նրանց առաջ։ Դեռ առաջին ամիսներից Մուրադեան վարդապետը ընդհարուեց քեարգուզարի հետ, որը կարևոր պաշտօնեայ է. այդ էլ շնորհիւ նրա անտակտութեան. նա միշտ էլ խօսում էր «պօլիտիկա»-այից, մի բան, որ Պարսկաստանում գոյութիւն չունի։

Նորից Սալմաստում սկսում են կեղեքումները և հարստահարութիւնները։ Էլ աւելի խիստ և մեծ չափերով. բացում է տուգանքների դուռը սարփարատի առաջ, որը յանախակի ասել է՝ «էն վարդապետը 3000 թումանի ջնաս տուեց ինձ էդ գումարը տոկոսով է տրուած ձեզ մօտ, ժողովուրդ, հիմայ պի-

տի առնեմ, էն էլ տոկոսը հեռը։ Եւ նա սկսում է իր սովորական կեղեքումը։

Երբ գանուում են ժողովրդի բարօրութեանը նախանձախնդիր անհատներ, որոնք դպրոցներ են բանում այս կամ այն գիւղում, ուսուցիչներ նշանակում և զարկ տալիս լուսաւորութեան գործին, մեր առաջնորդը իր բարձրութիւնից հրամայում և ձգտում է արգելք դնել նրանց առաջ։ Ահա Սարամերիկ գիւղը. ժողովուրդը միանգամայն ոգևոր է, հարկաւոր է կրթութիւն, պէտք է բանալ ուսումնարան. մոռածել է, մրաքոշն անգամ անցել է այդ գիւղը։ Անտարակոյս ոչ. բայց մի պարոն, ժողովրդի հաւանութեամբ կարգեց այնտեղ մի ուսուցիչ։ Ժողովուրդը գիտէք ինչքան ոռճիկ տուեց ուսուցչին, միմիայն 20 թուման. նոյնքան էլ տուեց այդ պարոնը իր մոտ եղած գումարից. այդ խուլ անկիւնը ունեցաւ իր դպրոցը։ Ամենացանք գործեց այդ պարոնը։ Ահա և Խոյ գաւառը. գիտէ առաջնորդը արդեօք, քանի հայաբնակ գիւղեր կան այնտեղ և որտեղ դպրոցներ կան, մոռածել է այդ դպրոցների մասին. ի հարկէ ոչ։ Մեղք են արել ուրեմն այն մարդիկ, որոնք Խոյ քաղաքում և Սէյդաւաք գիւղում ուսուցիչներ են նշանակել։ Ահա Փայաջուկը։ Այնտեղ կար տեղացի մի ուսուցիչ, առաջնորդը քաշ տուեց և բերեց Թաւրիզ, առանց նրա տեղը մէկին կարգելու. Բայց գտնուեցին մարդիկ, որոնք այնտեղ կանոնաւոր ուսուցիչներ նշանակեցին, մինչէ յանցանք գործեցին նրանք։

Ահա պարսկական քիւրդստանը, այդ մի բուռն խշտան հայերը. ինչ է արել նրանց վերաբերմամբ առաջնորդը, մոռածել է գէթ նրանց մասին։ Քահանաներ տուել է առաջնորդը։ Ոչ։ Գիտենք, որ հէնց այս վերջին ժամանակներս հայ ազգիկ են փախցրել բռնութեամբ, և պաշտօնապէս այդ մասին յայտնուել է առաջնորդին, բայց նա ինչ արեց։ Այսպիսի դէպքերում չի մտաբերում առաջնորդը այդ թշուառ, հարստահարուած հայերին, իսկ «պատրի» հաւաքելիս չի մոռանում նրանց։

Ղարադաղի վերաբերմամբ կան կաւլուածական մի շարք խնդիրներ. Թուրք բէգերը խլում են հողերը, աշխատում են տիրել հայերի այս և այն գիւղերին. մոռածել է այդ խնդիրների մասին մեր առաջնորդը, միջոցներ է ձեռք առել դիմադրելու համար։

Իսկ ինչ է ներկայացնում նրա գործունէութիւնը Թաւրիզում։ Ներկայ առաջնորդ Մուրադեանին ամենայն իրաւամբ կարելի է կոչել Թաւրիզի առաջնորդ։ Նա հէնց սկզբից խրեց Թաւրիզի բոլոր հասարակական հարցերի մէջ, ամեն տեղ մրաաւ և մոռացաւ իրանից մի քանի տասնեակ ազգ (մղոն) հե-

[illegible] Նա գրեթէ
ից՝ թողնելով ժողովրդին փայլուն [illegible] ներ, ինչպէս՝ մատ-
ճերը մինչև այսօր էլ սպասում [illegible] այլն։

Հայերը մեծ յոյս ունեն [illegible] չը գաւ ժողովրդի
բանց թշուառ, յուսահատ [illegible] թեռում, թէև ընդունում եմ,
զապել և սանձահարվ [illegible] ի, կենդրոնական դպրոցը, Եղի-
սիկ պաշտօնեանի [illegible] երեակայած կենդրոնական դպրոցը
բռնած սխալ [illegible] գրամագլուխ։ Եղիշէ վարդապետի հ-
որոնք յետ [illegible] ունենալու է մասնագիտական զանազան
կոդոպ [illegible] գիւղատնտեսութիւն, տեխնիկա և այլն։
[illegible] մասնագիտական բաժիններով դպրոցը առնւազն ու-
վա [illegible] 80—100,000 ր., իսկ ինչ կար կենդրոնական դպ-
ել [illegible] միայն 30—35000 ր., այդ էլ ուրիշ շէնքին։
[illegible] վարդապետը ուզում էր հասարակ միջնակարգ դպ-
[illegible] մասնագիտական բաժինների, միայն ու-
[illegible] ժամով, այդ էլ աւելորդ էր, քանի որ նոյն այդ
[illegible] դպրոց այժմ ունի Թաւրիզը։ Փոխանակ 30 հազար
[illegible] մի նոր շէնքի, կարելի էր աւելացնել եղած դպ-
[illegible] գրամագլխի վրայ, բարձրացնել այդ դպրոցներից մէ-
[illegible] լաւ ուսուցչական խումբ, այժ տալ նրան՝ կրճա-
[illegible] միւս դպրոցի բարձր դասարանները. մանաւանդ Թա-
[illegible] դպրոցի շէնքը շատ յարմար է դրա համար։ Այժմ մի-
[illegible] կայ կենդրոնական դպրոցի շէնքը, ուրիշ ոչինչ։

Կենդրոնական դպրոցը դարձել էր նրա համար ուղղակի մի ցաւ, բռնել էր դրանից, երևակայութեան մէջ փայլուն կերպով կազմակերպում էր և աջուձախ հարուածում, ցիխ էր շպրտում երկու դպրոցների հասցէին։ Առանց գէթ մի անգամ Լիլաւայի դպրոցը այցելելու և մօտիկ ճանաչելու, նա նոյնիսկ մամուլի մէջ գրեց բացասական բաներ, ի հարկէ յենելով դըրսում պտտած «ասէ-կասէներիս» և բամբասանքների վրայ։ Մինչդեռ նշանակութիւն չունի նրա այս ձևի թէ դրական և թէ բացասական կարծիքը, որովհետև հաստատուն չէ, երերուն և փոփոխական է։ Եւ գիտէք քանի անգամ նա կարծիքը փոխել է Լիլաւայի դպրոցների վերաբերմամբ։ Ասացի, որ առաջ, դեռ գրեթէ չայցելած դպրոցը, նա սկսեց աննպաստ խօսել և գրել. անցաւ մի քանի ամիս, նա ներկայ եղաւ մի փորձնական դասի, որ պարապում էր վեցերորդեցիներից մէկը։ Անմիջապէս յետոյ եղաւ փորձնական դասի քննադատութիւնը. ներկայ էին վեցերորդ դասատանի բոլոր աշակերտները, ուսուցչական խումբը և առաջնորդը։ Եւ գիտէք ինչ կարծիք յայտնեց այնտեղ նա. նա խոստովանեց, որ իր առաջ նստած են ոչ թէ պա-

տանիներ, խելքով տհասներ, այլ պատրաստուած և հասուն հեռասարդներ, և ուրախութիւն յայտնեց, որ դրանք են ամէնքի Պարսկաստանի առաջին պտուղները, առաջին ընթացարտները։

Ցաքիշտակուած իր եբնակայական չեղած կենդր. դպրոցով, սկսեց հակառակ ընթացք բռնել եղած և իրական օգուտ տուող դպրոցների վերաբերմամբ։ Եւ նա որոշ չափով հասաւ իր նպատակին։ Էիլաւայի դպրոցը տապալեց, ուսուցչական խումբը ցրեց։ Ինորոշ է նրա գործելու մի սիստեմը. այս կամ այն անձնաւորութեան հեռացնելու, չեզոքացնելու համար նա հրնարում. առաջ է բերում մի «նոր օրէնք», մի նոր կարգադրութիւն։ Ուսուցիչների առաջ հոգաբարձական ընտրողական ժողովները փակելու համար նա դեռ չը հրատարակուած և ժողովրդի սեփականութիւնը չը դարձած կանոնադրութիւնից յայտարարեց ժողովրդին, որ «այս խնդրում շահ ունեցող և շահագրգռուած անձինք ձայնի իրաւունքից զրկւում են»։ Որոշ մարդկանց առաջն առնելու համար նա «պտղի» հարցը մէջ նետեց, մի բան, որ էլի չի տեսել Թաւրիզը. վերջապէս առանձին առանձին հրաւէրներով մարդկանց կանչեց ժողովի և տունը մէկին էր հրաւէր ուղարկել, այն ինչ կանոնադրութեան մէջ պարզ կերպով ասուած է, որ ամեն մի անձնաւորութիւն կարող է մասնակցել, եթէ 21 տարիքից անց է։ Իսկ այդ չի արել անշուշտ, որովհետև նրան ձեռնտու չէր։

Այստեղ չենք ուզում նկարագրել այն խայտառակութիւնները, որ տեղի ունեցան նոր տեսուչներ փնտռելիս։ Մենք ասում ենք... որ հակառակորդների դէմ կռուելու համար առաջնորդը միջոցների մէջ խտրութիւն չի դնում։ Առաջնորդ Մուրադեանը ընդհարւում է Ղալայի դպրոցի ուսուցիչ պ. Ն. Տէր-Յովհաննիսեանի հետ, ընդհարւում է, որովհետև վերջինս կանանց բարեգ. Միացեալ ընկերութեան կողմից ուղարկւում է Ուրմի մի գործ քննելու և յանկարծ առաջնորդին հակառակ եզրակացութեան է հանում։ Նրան տրուած է եղել լիազօրութիւն այն խնդրի վերաբերմամբ։ Առաջնորդ Մուրադեանը գայրանում է, բարկանում է այդ ուսուցչի վրայ և առաջարկում է բարեգ. ընկ. վարչութեանը, որ այդ ուսուցչին հեռացնէ քարտուղարութիւնից։ Եւ վարչութիւնը այնքան թոյլ, այնքան անհեռատես և անարդար է գտնւում, որ կատարում է առաջնորդի քմահաճոյքը և միանգամայն ապօրինի պահանջը։ Ապա հերթը հասնում է և դպրոցից հեռացնելուն...

Նրա տգեղ սովորութիւններից մէկն էլ այն է, որ եկեղեցու բեմը դարձնում է հայհոյանքների և հակահաւատութեան

-ռաւորութեան վրայ ապրող և հեծող ժողովրդին։ Նա գրեթէ միաժամանակ արծարծեց մի քանի խնդիրներ, ինչպէս՝ մասիցա, կենդրոնական դպրոց, լրագիր և այլն։

Մասիցան աջող ընդունելութիւն չգտաւ ժողովրդի կողմից և չտարածուեց ամբողջ թեմում, թէև ընդունում եմ, որ օգտակար ձեռնարկութիւն է։ Կենդրոնական դպրոցը, Եղիշէ վարդապետի ծրագրած և երևակայած կենդրոնական դպրոցը, պահանջում է մեծ դրամագլուխ։ Եղիշէ վարդապետի երևակայած դպրոցը ունենալու է մասնագիտական զանազան բաժիններ, օրինակ՝ գիւղատնտեսութիւն, տեխնիկա և այլն։ Այդպիսի մասնագիտական բաժիններով դպրոցը առնւազն ունենալու է 80—100,000 ր., իսկ ինչ կար կենդրոնական դպրոցի անունով, միմիայն 30—35000 ր., այդ էլ տուին շէնքին։ Եթէ Եղիշէ վարդապետը ուզում էր հասարակ միջնակարգ դպրոց բանալ, առանց մասնագիտական բաժինների, միայն ուսումնական մասով, այդ էլ աւելորդ էր, քանի որ նոյն այդ ծրագրով դպրոց այժմ ունի Թաւրիզը։ Փոխանակ 30 հազար ռուբլի տալու մի նոր շէնքի, կարելի էր աւելացնել եղած դպրոցների դրամագլխի վրայ, բարձրացնել այդ դպրոցներից մէկը, կազմել լաւ ուսուցչական խումբ, այժ տալ նրան՝ կրճատելով միւս դպրոցի բարձր դասարանները. մանաւանդ Թամարեան դպրոցի շէնքը շատ յարմար է դրա համար։ Այժմ միմիայն կայ կենդրոնական դպրոցի շէնքը, ուրիշ ոչինչ։

Կենդրոնական դպրոցը դարձել էր նրա համար ուղղակի մի ցաւ, բռնել էր դրանից, երևակայութեան մէջ փայլուն կերպով կազմակերպում էր և աջուձախ հարուածում, ցիխ էր շպրտում երկու դպրոցների հասցէին։ Առանց գէթ մի անգամ Լիլաւայի դպրոցը այցելելու և մօտիկ ճանաչելու, նա նոյնիսկ մամուլի մէջ գրեց բացասական քաներ, ի հարկէ յենելով ղըրսում պտտած «ասէ-կոսէների» և բամբասանքների վրայ։ Մինչդեռ նշանակութիւն չունի նրա այս ձևի թէ դրական և թէ բացասական կարծիքը, որովհետև հաստատուն չէ, երերուն և փոփոխական է։ Եւ գիտէք քանի անգամ նա կարծիքը փոխել է Լիլաւայի դպրոցների վերաբերմամբ։ Ասացի, որ առաջ, դեռ գրեթէ չայցելած դպրոցը, նա սկսեց աննպաստ խօսել և գրել. անցաւ մի քանի ամիս, նա ներկայ եղաւ մի փորձնական դասի, որ պարապում էր վեցերորդեցիներից մէկը։ Անմիջապէս յետոյ եղաւ փորձնական դասի քննադատութիւնը. ներկայ էին վեցերորդ դասարանի բոլոր աշակերտները, ուսուցչական խումբը և առաջնորդը։ Եւ գիտէք ի՞նչ կարծիք յայտնեց այնտեղ նա։ Նա խոստովանեց, որ իր առաջ նստած են ոչ թէ պա-

տանիներ, խելքով տհասներ, այլ պատրաստուած և հասուն ե-
ղիտասարդներ, և ուրախութիւն յայտնեց, որ դրանք են ամ-
բողջ Պարսկաստանի առաջին պտուղները, առաջին ընթա-
ցաւարտները։

Ցափշտակուած իր երևակայական չեղած գենդր. դպրոցով,
սկսեց հակառակ ընթացք բռնել եղած և իրական օգուտ տուող
դպրոցների վերաբերմամբ։ Եւ նա որոշ չափով հասաւ իր նպա-
տակին։ Էիլաւայի դպրոցը տապալեց, ուսուցչական խումբը
ցրեց։ Ինորոշ է նրա գործելու մի սիստեմը. այս կամ այն
անձնաւորութեան հեռացնելու, չեզոքացնելու համար նա հը-
նարում է. առաջ է բերում մի «նոր օրէնք», մի նոր կարգադ-
րութիւն։ Ուսուցիչների առաջ հոգաբարձական ընտրողական
ժողովները փակելու համար նա դեռ չբնրատարակուած և ժո-
ղովրդի սեփականութիւնը չդարձած կանոնագրութիւնից
յայտարարեց ժողովրդին, որ «այս ինդրում շահ ունեցող և
շահագրգռուած անձինք ձայնի իրաւունքից զրկւում են»։ Որոշ
մարդկանց առաջն առնելու համար նա «պտղի» հարցը մէջ
նետեց, մի բան, որ էլի չի տեսել Թաւրիզը. վերջապէս ա-
ռանձին առանձին հրաւէրներով մարդկանց կանչեց ժողովի և
ասունը մէկին էր հրաւէր ուղարկել, այն ինչ կանոնագրու-
թեան մէջ պարզ կերպով ասուած է, որ ամեն մի անձնաւորու-
թիւն կարող է մասնակցել, եթէ 21 տարիքից անց է։ Իսկ այդ
չի արել անշուշտ, որովհետև նրան ձեռնտու չէր։

Այստեղ չենք ուզում նկարագրել այն խայտառակութիւն-
ները, որ տեղի ունեցան նոր տեսուչներ փնտռելիս։ Մենք ա-
մաչում ենք... որ հակառակորդների դէմ կռուելու համար ա-
ռաջնորդը միջոցների մէջ խտրութիւն չի դնում։ Առաջնորդ
Մուրադեանը ընդհարւում է Ղալայի դպրոցի ուսուցիչ պ. Ն-
Տէր-Յովհաննիսեանի հետ, ընդհարւում է, որովհետև վերջինս
կանանց բարեգ. Միացեալ ընկերութեան կողմից ուղարկւում
է Ուրմի մի գործ քննելու և յանկարծ առաջնորդին հակառակ
եպրոկացութեան է հանում։ Նրան տրւած է եղել լիազօրու-
թիւն այն խնդրի վերաբերմամբ։ Առաջնորդ Մուրադեանը
գայրանում է, բարկանում է այդ ուսուցչի վրայ և առաջարկ-
ում է բարեգ. ընկ. վարչութեանը, որ այդ ուսուցչին հեռաց-
նէ քարտուղարութիւնից։ Եւ վարչութիւնը այնքան թոյլ, այն-
քան անհեռատես և անարդար է գտնւում, որ կատարում է
առաջնորդի քմահաճոյքը և միանգամայն ապօրինի պահանջը։
Ապա հերթը հասնում է և դպրոցից հեռացնելուն...

Նրա տպեղ սովորութիւններից մէկն էլ այն է, որ եկեղե-
ցու բեմը դարձնում է հայհոյանքների և հակաճառութեան

վայր։ Լսարանում դասախօսութիւն է լինում, ներկայ է և առաջնորդը. փոքրանակ այնտեղ յայտնելու իր կարծիքը և հակառակորդները, նա քարոզի նիւթ է շինում և յարձակւում է սրա նրա վրայ, իսկ դիմացինը հնարաւորութիւն չի ունենում պատասխանելու։

Այդ գործունէութեան մէջ եղած ան բծերից է, գուցէ ամենապլխաւորը, թերթի իրաւունքի հարցը։ Նա այնքան անտակտութեամբ առաջ տարաւ այդ խնդիրը, որ Վեհափառ Շահնշահից խիստ և կտրուկ մերժում ստացաւ։ Մուրադեան վարդապետին թէև շատ-շատերը, որոնց յայտնի է տեղական պայմանները և անշուշտ այդպիսի խնդիրներում լաւ գիտեն դիմելու ձևերը, – խորհուրդ չըտուին այդ ձևով դիմել Շահնշահին, բայց նա չլսեց և ոչ մէկին, ինչպէս ասում են «իր էշը քշեց» և լաւ էլ արդիւնք ստացաւ...

Նրա գործունէութեան ընդհանուր խաւարի մէջ միակ փայլուն կէտը կազմում է մաժուլը, որը մեծ բարիք է ամբողջ թեմի համար։ Բացի այդ Ատրպատականի եկեղեցական «կանոնադրութիւնը», որ այժմ գործադրութեան թէջ է, մշակուած է որոշ չափ շնորհիւ Մուրադեան վարդապետի ջանքերի։ Այդ «կանոնադրութեամբ» շատ անարդարութիւններ վերացրին և ամեն ինչ դրուեց կանոնաւոր հիմունքների վրայ, միայն ի հարկէ եթէ խիստ հետևեն գործադրութեան վրայ։

Ահա առաջնորդի երկամեայ ընդհանրապէս անմխիթար գործունէութիւնը։

ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

I.

Կովկասում թատրոնի հիմքը դրուել է, ինչպէս գիտենք, 1859 թուականին, մի տեղական պատանու ձեռքով, որ այդ ժամանակ սովորում էր Ներսէսեան դպրանոցում։ Բայց Ատրբ-պատականում թատրոնի սկիզբն դրուում է բաւական ուշ, ճիշտ 20 տարի յետոյ, 1879 թուին։ Թատրոնի սկզբնաւորութեան մասին կասկածներ կային, ոմանք ասում էին, որ սկսուել է 1877 թուին, ոմանք պնդում էին, որ առաջին ներկայացումը եղել է 1877 թուին։ Այդ կասկածը փարատեց հանգուցեալ Փափազեան վարդապետի յիշատակարանը, ուր թատրոնի մասին յիշատակուած է հետեւեալը.

«1879 ամի, Ապրիլին, Վանայ խնամատար ընկերութեան մի նպաստ հացնելու և Դաւրիժու երիտասարդաց մէջ ազգային եռանդ մտցնելու պատճառաւ, քանիցս անգամ մեր տան մէջ ժողով հրաւիրեցի վառվռուն երիտասարդներ։ Թատրոն ներկայացնելու համար խորհեցանք և տնօրինեցինք և վերջապէս երեք անգամ ներկայացում տուեցինք մեր տան բակի մէջ, վրանի տակ և 8 լիրա ուղարկեցինք յիշեալ ընկերութեան»։

Այդ թուականին տէր-Մեսրոպ Փափազեանը տեսչութեան պաշտօն էր վարում Բերդաթաղի դպրոցում։ Նա, ինչպէս իր գրութիւնն է ցոյց տալիս, ձեռնարկում է թատրոնական գործը, նրա հետ միանում են և տեղացի «վառվռուն» երիտասարդներ (արժէ այստեղ յիշել պ. Ա. Փանուէլեանի անունը, որ միշտ էլ եղել է այդ ասպարիզում), մեծ մասով ուսուցիչներ։ Ներկայացում կազմակերպելու և բեմի հիմքը դնելու առիթը տալիս է Վանի խնամատար ընկերութիւնը, որին անհրաժեշտ էր նպաստ հացնել։

Առաջին անգամ պիտի խաղային «Աշոտ Ողորմած» և «Երկու Քաղցածներ» պիէսները։ Մի շարք փորձեր են ունենում և որքան հետաքրքիր, որքան ուրախ են անցնում այդ օրերը։ Գործի դլուխ անցածները և մասնակցող երիտասարդները ա-

ելի ու աբելի ոգևորում են և տաք սրտով կպչում գործին։ Երկար և անդուլ գործը ապարդիւն չանցաւ։ Արդէն փորձերը վերջացրել են և կազմ պատրաստ են բեմ ելնելու։ Հէնց այդ տեղ նրանց առաջ ցցւում է մի մեծ հարցական։ Ո՞րտեղ ներկայացնել, չկայ թատերատան, չկան և՛ յարմար սենեակներ։

Սրա ճարն էլ գտնում են։

«Արամեան» դպրոցի յետևում կայ մեծ տարածութիւն. այնտեղ վրաններ են խփում, և ահա պատրաստ է բեմը. այս վրանների տակ պիտի տային ներկայացումը։ Թեմական առաջնորդ Բարդուղիմէոս վարդապետն (այժմ եպիսկոպոս) էլ իր կողմից օգնում և քաջալերում է սկսած գործը։ Չը մոռանանք ասել, որ տէր-Մեսրոբը կատարում էր և՛ բէժիսորի և՛ յուշարարի դեր։

Ահա այսպէս ամեն ինչ պատրաստ էր. պատրաստ էր բեմը, պատրաստ էին և դերակատարները, մնում էր միայն խաղալ։ Բայց յանկարծ խոչնդոտ է առաջ գալիս։ Հոգաբարձութիւնը արգելում է ներկայացումը՝ պատճառաբանելով թէ պարսից կառավարութիւնը վատ աչքով կընայի մեզ, կբփակի դպրոցը, և ուրիշ անխուսափելի վնասների առիթ կըտանք մեր այս քայլով։ Հոգաբարձութիւնը միևնոյն ժամանակ սպառնում է, որ եթէ ուսուցիչները համարձակւեն թէկուզ ուրիշ տեղ տալ ներկայացումը, անյապաղ նրանց հեռացնել դպրոցից։ Այդ անմիտ սպառնալիքը ոչ մէկի վրայ չէ ազդում, նրանք եռանդուն կերպով, առանց յուսահատելու, առաջ են տանում սկսած գործը։

Վրանը և բեմական բոլոր պատրաստութիւնները տեղափոխում են տէր-Մեսրոբ Փափազեանի տունը, նորից բեմ են պատրաստում և ձեռնարկում ներկայացումը։ Տէր-Մեսրոբը տանկաց հպատակ լինելով՝ հրաւիրում է նաև տանկաց հիւպատոսին։ Սիրողների խնդիրքով ներկայ է լինում և ռուսաց կօնսուլը։ Գալիս են նոյնպէս թուրքեր, իսկ հայ հանդիսականների թիւը անագին է լինում։

Հետաքրքրութիւնը ընդհանուր էր, իւրաքանչիւրը ձգտում է ներկայ լինել ներկայացմանը, տեսնելու, իմանալու համար թէ ինչ է թատրոն ասած բանը։ Հոգաբարձութիւնը, տեսնելով այդ ընդհանուր հետաքրքրութիւնը, կօնսուլների քաղցր և սիրալիր վերաբերմունքը դէպի այդ ձեռնարկութիւնը՝ աշխատում են ներկայ լինել, բայց նրանք տոմսակ չեն կարողանում ստանալ. նրանք մեծաժում են գործողների կողմից, իրանց սպառնալիքի և տգեղ վարմունքի պատճառով։

Վերջապէս ներկայացումը աջողում է։ Ներկայացումը

անցնում է շատ աջող և ոչ մի միջադէպ կամ խլրտում տեղի չէ ունենում։ Ներկայ եղողները հեռանում են ուրախ և գոհ։ Երկար ժամանակ ընդհանուրի խօսակցութեան նիւթը լինում է այս ներկայացումը։ Նրանք, որոնք առաջին ներկայացումը չէին տեսել, բուռն ցանկութիւն էին յայտնում որ կրկնուի խաղը, շատերն էլ ուզում էին իրանց հաճելի տպաւորութիւնը կրկնել։

Այսպիսով, առաջին տարում, այսինքն 1879 թուին, թատերասէրները հնարաւորութիւն են ունենում տալ երեք ներկայացում, և դրանց արդիւնքից 8 լիրա ուղարկում են Վան ինուամատաբ ընկերութեան։

Բայց յաջորդ 1880 և 1881 թուականներին տալիս են մի շարք ներկայացումներ. պիեսները լինում են մեծ մասամբ թարգմանութիւններ Ֆրանսերէնից, երբեմն էլ հէնց իրանք խաղացողներն էին «թխում» կամ «կազմում»։

Հետաքրքիր է մի դէպք։ Տէր-Մեսրոպը տեսել էր «Վենետիկի վաճառականի» խաղը Ռուսաստանում, և նա հիմնուելով իր յիշողութեան վրայ գրում է մի պիէս, ի հարկէ նոր պիեսը, բայց նոյն սիւժէտով և անուանում է «Արդար դատաստան», որ և ներկայացնում է։

Թատերասէրները, չունենալով կանացի դերեր, ընտրում են այնպիսի պիէսներ, որոնց մէջ ըստ կարելոյն չափ կանայք չլինեն։ եղած կանացի դերերը կատարում էին տղամարդիկ, բացառութիւն կազմում էր մի դերակատարուհի—դա Տէր-Մեսրոպի աղջիկն էր, որ այդ ժամանակ վարժուհու պաշտօն ունէր։

Տարօրինակ էր և Տէր-Մեսրոպը ժողովրդի համար։ Մասով էին ցոյց տալիս տէր-հօրը և նրա աղջկան։ Փողոցով անցնելիս չորս կողմից հետաքրքրութեամբ նայում և շշնջում են, ահա «օյինբազ» տէրտէրը և նրա «օյինբազ աղջիկը»։

Այդ ժամանակ էլ չքկար յատկապէս ներկայացումների համար շինուած թատերասրահ և ներկայացումները լինում էին Տիգրան Գորոյեանի տանը, որով վերջինս մեծ ծառայութիւն է մատուցանում թատրոնական գործին։

Այդ տարիներում, ի միջի այլոց, խաղացում են հետեւեալ պիեսները.—«Փորոտաղին գահ», «Ակամայ բժիշկ», «Քրոջող բժիշկ», «Սէրը բժիշկ», «Սև հոգեր», «Արդար դատաստան» և «Արշակ Բ.»։

Որպէսզի հնարաւորութիւն ունենան ներկայ լինելու և օգուտելու այդ ներկայացումներից նաև թուրքերը, թատեր-

կան ձևով չեն ճանաչուում, ժողովուրդը չէ ընտրել նրանց։

Թէ նախագահի և թէ ուրիշների կողմից պատճառաբանուեց, որ Լիլաւայի ընտրութիւնը ապօրինի չէ, քանի որ բոլորն էլ մասնակցել են քէաբկութեան և մանաւանդ, բողոքի մէջ ստորագրել էին այնպիսի մարդիկ, որ կամ ժողովում չեն եղել, կամ ստորագրել են իսկական արձանագրութեան։ Սօուզ-Բուլաղի ընտրութիւնը ապօրինի է, որովհետև գործակալից ոչ մի պաշտօնական բան չկայ, դրանք միայն մասնաւոր մարդկանց հեռագիրներ են, չենք կարող դրան հաւատալ. եթէ բողոքելու բան կար, պէտք է իր ժամանակին բողոքէր։ Տ. Բաշմաճեանը երեք տարի է, որ գործում է Թաւրիզում. ինչ նշանակութիւն ունի, թէ մի երկու ամիս պակաս է, իսկ գալով Ա. Ղորղանեանին և Տէր-Յակոբին, առաջինը հոգաբարձութեան հաստատած եպիսկոպոսն է, իսկ երկրորդը Լիլաւայի միակ ծիսական քահանան. ո՞ւմ կարելի էր տալ ձայնը, չէ՞ որ մէկը պէտք է մասնակցէր ընտրութեան։

Դրանք, աւելի ճիշտը, ոչ թէ բողոքում էին ապօրինութիւնների դէմ, այլ արդիւնքի, պարզ տեսնելով, որ տարբեր են։ Եւ բանը այն է, որ դիմելով զանազան խաղերի, ընկնում են և՛ հակասութիւնների մէջ։ Բողոքից մի քիչ առաջ առաջարկում էին ընդհանուր համաձայնութեամբ ընտրել երկուսին էլ, ի հարկէ, ապօրինի պատգամաւորներով (նրանց կարծիքով), չընայած մի ընտրութիւն էլ արդէն կատարել են նոյն պատգամաւորներով, և այժմ բողոքում են ապօրինութեան դէմ։ Մանաւանդ յետոյ էլ առաջարկում և աւելացնում են, որ եթէ ընդհանուր համաձայնութիւն կայացնի երկուսի վերաբերմամբ, բողոքին ուշադրութիւն չեն դարձնի։ Տեսնում էք, դրանց «սկզբունքները»։

Երբ այդ վերջին խաղն էլ չաջողուեց, ատենապետը իր համախոհներով դուրս եկան ժողովից։ Ատենապետը գոնէ իր տարրական քաղաքավարութիւնը և պարտականութիւնը չկատարեց։ Նա պարտաւոր էր, նախ քան ժողովից դուրս գալը, հրաժարուէր իր պաշտօնից և դիւանի գործերը յանձնէր ժողովի նախագահ եպիսկոպոսին. բայց նոյնիսկ բողոքն էլ չվերապարձրին, չընայած որ Մնացած պատգամաւորների ինդրանքը կեր. նախագահը պահանջեց այդ։

Մնացած պատգամաւորները, որ մեծամասնութիւն էին կազմում, նոր դիւան կազմեցին. և բացարձակ քէով ընտրեցին Եղիշէ վարդապետ Մուրադեանին Ատրպատականի առաջնորդ։ Ժողովում առաջարկեց և ընդունեց, որ ներկայ դիւանը պահանջէ նախկին դիւանից մայիսի 11-ի արձանագրու-

թիւնը, կամ նորից մանրամասն կազմել։ Թէ ինչու այդ ժողովի արձանագրութիւն կազմելուց խոյս են տուել, դա շատ պարզ է, որովհետև այդ ժողովը գրաւած էր մի շարք ամօթալի առաջարկներով։ Բայց մամուլը ժամանակին իր դերը կատարեց։

II.

Ատրպատականի ամեն մի գաւառը և անկիւնը, ուր ձուլուած են հայերը, ունի ցաւերի ամբողջ մի շղթայ։ Բազմազան և բազմապիսի են այդ ցաւերը, որոնք առաջանում են տիրող կարգերից և պայմաններից, ժողովրդի տհաստութիւնից և ապիտութիւնից։ Ամեն մի գաւառի ամեն մի ցաւը և վէրքը ունի իր առանձին, ուրոյն պատմութիւնը։ Դրա վրայ աւելացրէք նաև մի շարք անհրաժեշտ կարիքները և այժմէութիւն ունենացող հարցերը, այն ժամանակ Ատրպատականի թեմի էլ աւելի ծանր, պատասխանատու կդառնայ։ Անհրաժեշտ է մի ուժեղ ձեռք, մի տաք ջերմացող սիրտ, որ կարողանայ բուժարարութիւն տալ անթիւ կարիքներին, և սպեղանի լինել այդ ցաւոտ վէրքերին, որ անչափ շատ են և ծրմռքիչ։

Այդ դերը վերապահուած է թեմական առաջնորդին, ամբողջ ազգաբնակութիւնը իր անթարթ աչքերը յառում է իր առաջնորդի վրայ և նրանից սպասում, եթէ չասեմ ամեն ինչ, գոնէ շատ բան։

Ահա ինչքան ծանր, բայց միևնոյն ժամանակ, վեհ և նուիրական է Ատրպատականի առաջնորդութիւնը։

Բայց միայն դրանով չէ վերջանում այդ պաշտօնի պատասխանատուութիւնը։

Ասեցինք, որ առաջնորդը այստեղ ներկայացնում է իրը հայերի ներկայացուցիչ, նաև աշխարհիկ պետ։

—Թուրքիոյում է Ռուսի Ատրպատականի թեմական առաջնորդը, այնտեղ են լինում նաև օտար պետութիւնների ներկայացուցիչ-հիւպատոսներ։ Առաջնորդը իրրև հայերի ներկայացուցիչ պէտք է յարաբերութիւններ պահպանի պարսից թագաժառանգի, զանազան պաշտօնեաների և հիւպատոսների հետ։ Եթէ առաջնորդը գիրք և հեղինակութիւն չունի պարսիկ պաշտօնեաների շրջանում և չի ներկայացնում զօրեղ ոյժ, ապա նա անկարող կըլինի մի շօշափելի գործ կատարել և օգտակար լինել թեմին։

Հերիք է որ մի պարսիկ պաշտօնեայ ընդհարուի առաջնորդի հետ և զգայ նրա թուլութիւնը, ձեռք առնելով պարս-

կական ամենանուրբ խորամանկութիւնները՝ նա կարիանի առաջնորդի դիրքը խախտել. զցել նրա պրեստիժը բարձր պաշտօնեաների առաջ և տապալել նրան։ Իսկ այդքանից յետոյ առաջնորդի թեները կտրատելով՝ հնարաւորութիւն չի ունենայ ազատօրէն գործելու, ամեն ատպարէզում, ամեն տեղ խոչնդոտներ կը յարուցանեն նրա առաջ։ Առաջնորդը պէտք է լինի հմուտ, վարչական ընդունակութիւններով օժտուած անձնաւորութիւն, լաւ ծանօթ պարսկական յարաբերութիւններին. հակառակ դէպքում նա անկարող կը լինի իր դիրքը պահպանել։ Պարսկական կեանքը, ինքը պարսկատանցին բազմազան և վերին աստիճանի նուրբ խորամանկութիւնների մի հիւսուածք է։



Ս. Թադէի վանքի եկեղեցի

Այդ հիւսուածքի մէջ ոտնդոն էլ պիտի անհրաժեշտօրէն ունենայ նուրբ քաղաքացիութիւն, պիտի կարողանայ հասկանալ այդ կեանքը։

Ահա այս, ինչպէս և վերևը առաջ բերուած լուրջ հանգամանքները աչքի առաջ ունենալով՝ ասում ենք, որ Ատրպատականի թեմը ծանր և պատասխանատու է։ Վերջին 50 տարուայ տարեգրութեան մէջ յիշւում է միայն Ստեփաննոս եպիսկ. Մխիթարեանի և Մուշեղեան արքեպիսկոպոսի անունները, որոնք կարողացել են զօրեղ դիրք ստեղծել առաջնորդի համար, բարձր պահել առաջնորդարանի հեղինակութիւնը պարսիկ պաշտօնեաների առաջ։ Նրանք ունեցել են խիստ և ուժեղ բը-

նաւորութիւն և գօրեղ կամք, և ինչպէս պատմում են, պարսիկ պաշտօնեաները դողում, սարսափում էին նրանից։ Գաւառացին մեծ յափշտակութեամբ և հիացմունքով է յիշում նրանց անունը. նրանք գաւառացու համար եղել են գօրեղ պահապան թէև այս էլ պիտի ասել, որ առաջինը ունեցել է շատ հակակրելի կողմեր, մանաւանդ որպէս մարդ։

Ատրպատականի թեմը ամենայն իրաւամբ համարւում է «փորձաքար»։ Եւ իսկապէս շատ առաջնորդներ մեծ զարթով, ահագին ոգևորութեամբ մտել են Ատրպատական և հէնց առաջին քայլից զգացել են իրանց անպատրաստականութիւնը և թուլութիւնը, դէմ են առել ասես մի ժայռի։ Այսպէս է ահա Ատրպատականի թեմը։ Երբ խօսում են դրսի մի առաջնորդի մասին, գովում են նրան, թւում նրա ընդունակութիւնները, հիանում նրա գործերով և աշխատութիւններով, թաւրիզցին՝ հեգնական ժպիտը երեսին առարկում է. «էհ, այդ ոչինչ, հապա թող գայ Ատրպատական, թող գայ, տեսնենք նոյն դիրքը այստեղ էլ կըստեղծի և կունենայ այն աշխատութիւնները»։

Ատրպատականի թեմը, ինչպէս տեսանք, ստացաւ ընտրողական ժողովրդական իրաւունք, և ձայների հասարակ մեծամասնութեամբ առաջնորդ ընտրուեց Եղիշէ վարդապետ Մուրադեանը։ Արդէն լրացել է ներկայ առաջնորդի երկու տարուայ պաշտօնավարութիւնը, գնա մի երկու ամիս էլ անցել է, իսկ այդ քիչ ժամանակամիջոց չէ նրան լաւ ճանաչելու համար։

Ի՞նչ է ասում այդ գործունէութիւնը։

Սկսենք գաւառից։ Գաւառը, որը պէտք է լինի ամեն մի առաջնորդի հոգացողութեան առաջին և ամենալուրջ առարկան, միշտ էլ մոռացւում է, և առաջնորդը ընկնում է Թաւրիզ, խրւում է տեղական գործերի մէջ և միանգամայն մոռացութեան տալիս իր թեմի ամենագլխաւոր մասը։ Նոյն այդ բանը պատահեց և ներկայ առաջնորդի հետ։ Նա այդ երկու տարուայ ընթացքում այցելել է միմիայն Սալմաստ. իսկ ինչ է արել գէթ Սալմաստի համար։ Գրեթէ ոչ մի օգուտ, բացի մի շարք ճնշումներից։ Եղիշէ վարդապետը իր սովորութեան համաձայն Սալմաստումն էլ տալիս է մի շարք խոստումներ, փքուն ծրագիրներ է առաջարկում ժողովրդին, արծարծում է գիւղատնտեսական կենդրոնական դպրոցի միտքը, փայլուն յոյսեր է տալիս և խոստանում է շուտով մի յարմարի գումար հատկացնել այդ դպրոցի համար։ Ժողովուրդը միամտաբար հաւատում է իր առաջնորդին, ոգևորւում է, և նոյնիսկ տալիս են ձրիաբար այն հողը, որի վրայ պիտի կառուցէր առաջնորդի երևակայած դպրոցը։ Առաջնորդ Մուրադեանը հեռանում է Սալմաս-

ոից՝ թողնելով ժողովրդին փայլուն յոյսերի աշխարհում։ Ներ-ձերը մինչև այսօր էլ սպասում են...

Հայերը մեծ յոյս ունէին, որ առաջնորդը տեսնելով իրանց թշուառ, յուսահատական վիճակը, միջոցներ ձեռք կառնի դադարել և սանձահարել սարփարատին, և ընդհանրապէս պարսիկ պաշտօնեաներին։ Նա ոչ միայն այդ չէ անում, այլ իր բռնած սիալ և անտակտ դիրքով աւելի է երես տալիս նրանց, որոնք յետոյ աւելի ազատ և համարձակ են դառնում իրանց կողոպուտների և հարստահարութիւնների մէջ։

Այս թւի գարնան սկզբներում այնտեղ ուղարկուեց Ընձակ վարդապետը որպէս յաջորդ։ Հէնց առաջին օրերից ցոյց է տալիս նա, որ կարող է վարել իր ստանձնած ծանր պաշտօնը. նա մնում է իր պաշտօնում ոչ երկար, միայն վեց-եօթ ամիս։ Նրա այդքան պաշտօնավարութեան գործունէութիւնը եղել է ընդհանրապէս գոհացուցիչ։ Ընձակ վարդապետը եռանդուն գործիչ է. նա ունի գործելու բուռն ցանկութիւն և նա կարող էր ապագայում անպայման օգտակար լինել Սալմաստին։ Նա ամենախիստ և ուժեղ կերպով դիմադրում է սարփարատին և և միանգամայն չէզոքացնում նրան։ Հարստահարութիւնները գրեթէ բոլորովին դադարում են. կտրում է սարփարատի մշտական արդիւնքի աղբիւրը։ Գատաղում է սարփարատը, միջոցներ է ձեռք առնում նրան հեռացնել Սալմաստից. նա կեղծ հնոագիր է կազմում հայ ժողովրդի կողմից և յայտնում Թեհրան, թէ հայերը դժգոհ են յաջորդից և խնդրում են հեռացնել։ Եւ նա հեռացուում է Սալմաստից։ Հեռագրի կեղծութիւնը թէև յետոյ պարզուում է, կասկած է յայտնուում նոյնիսկ Թեհրանից, և այդ ժամանակ թէև կարելի էր պաշտպանել յաջորդին, քննութիւն նշանակել, բայց առաջնորդ Մուրադեանը լուռ, չըպաշտպանեց նրան, կամ աւելի ճիշտը՝ չըկարողացաւ պաշտպանել։ Պարսիկ պաշտօնեաների հետ չկարողացաւ նա յարաբերութիւն պահպանել և դիրք ստեղծել նրանց առաջ։ Դեռ առաջին ամիսներից Մուրադեան վարդապետը ընդհարուեց քիարգուզարի հետ, որը կարևոր պաշտօնեայ է. այդ էլ շնորհիւ նրա անտակտութեան.. նա միշտ էլ խօսում էր «ազոլոժենիե»-այից, մի բան, որ Պարսկաստանում գոյութիւն չունի։

Ներքից Սալմաստում սկսուում են կեղեքումները և հարստահարութիւնները էլ աւելի խիստ և մեծ չափերով. բացուում է տուգանքների դուռը սարփարատի առաջ, որը յանախակի ասել է՝ «էն վարդապետը 3000 թումանի ջնաս տուեց ինձ էդ գումարը տակոսով է տրուած ձեզ մօտ, ժողովուրդ, հիմայ պի-

տի առնեմ, էն էլ տոկոսը հետը։ Եւ նա սկսում է իր սովորական կեղեքումը։

Երբ գտնւում են ժողովրդի բարօրութեանը նախանձախնդիր անհատներ, որոնք դպրոցներ են բանում այս կամ այն գիւղում, ուսուցիչներ նշանակում և զարկ տալիս լուսաւորութեան գործին, ահա առաջնորդը իր բարձրութիւնից հրաժայում և ձգտում է արգելք դնել նրանց առաջ։ Ահա Սարամերիկ գիւղը. ժողովուրդը միանգամայն ոգևոր է, հարկաւոր է կրթութիւն, պէտք է բանալ ուսումնարան. մտածել է, մըտքովն անգամ անցել է այդ գիւղը։ Անտարակոյս ոչ. բայց մի պարոն, ժողովրդի հաւանութեամբ կարգեց այնտեղ մի ուսուցիչ։ Ժողովուրդը գիտէք ինչքան ոռնիկ տուեց ուսուցչին, մի-միայն 20 թուման. նոյնքան էլ տուեց այդ պարոնը իր մօտ եղած գումարից. այդ խուլ անկիւնը ունեցաւ իր դպրոցը։ Ցանցանք գործեց այդ պարոնը։ Ահա և Խոյ գաւառը. գիտէ՞ առաջնորդը արդեօք, քանի հայաբնակ գիւղեր կան այնտեղ և որտեղ դպրոցներ կան, մտածել է այդ դպրոցների մասին. ի հարկէ ոչ։ Մեղք են արել ուրեմն այն մարդիկ, որոնք Խոյ քաղաքում և Սէյդաւաք գիւղում ուսուցիչներ են նշանակել։ Ահա Փայաջուկը։ Այնտեղ կար տեղացի մի ուսուցիչ, առաջնորդը քաշ տուեց և քերեց Թաւրիզ, առանց նրա տեղը մէկին կարգելու. Բայց գտնւեցին մարդիկ, որոնք այնտեղ կանոնաւոր ուսուցիչներ նշանակեցին, մինչ յանցանք գործեցին նրանք։

Ահա պարսկական քիւրդստանը, այդ մի բուռն թշւառ հայերը. ինչ է արել նրանց վերաբերմամբ առաջնորդը, մտածել է գէթ նրանց մասին։ Քահանաներ տուել է առաջնորդը,— ոչ։ Գիտենք, որ հէնց այս վերջին ժամանակներս հայ աղջիկ են փոխքրել բռնութեամբ, և պաշտօնապէս այդ մասին յայտնել է առաջնորդին, բայց նա ինչ արեց։ Այսպիսի դէպքերում չի մտաբերում առաջնորդը այդ թշւառ, հարստահարեալ հայերին, իսկ «պատրիարք» հաւաքելիս չի մոռանում նրանց։

Ղարադաղի վերաբերմամբ էլ կալւածական մի շարք խնդիրներ. թուրք բէգերը խլում են հողերը, աշխատում են տիրել հայերի այս և այն գիւղերին. մտածել է այդ խնդիրների մասին մեր առաջնորդը, միջոցներ է ձեռք առել դիմադրելու համար։

Իսկ ինչ է ներկայացնում նրա գործունէութիւնը Թաւրիզում։ Ներկայ առաջնորդ Մուրադեանին ամենայն իրաւամբ կարելի է կոչել Թաւրիզի առաջնորդ։ Նա հէնց սկզբից խրեց Թաւրիզի բոլոր հասարակական հարցերի մէջ, ամեն տեղ մըտաւ և մոռացաւ իրանից մի քանի տասնեակ ազաջ (մղոն) հե-

ուսուցչության վրայ ապրող և հեծող ժողովրդին։ Նա գրեթէ միաժամանակ արծարծեց մի քանի խնդիրներ, ինչպէս՝ մատիցա, կենդրոնական դպրոց, լրագիր և այլն։

Մատիցան աջող ընդունելութիւն չգտաւ ժողովրդի կողմից և չդատարածուեց ամբողջ Թեմում, Թէև ընդունում եմ, որ օգտակար ձեռնարկութիւն է։ Կենդրոնական դպրոցը, Եղիշէ վարդապետի ծրագրած և երևակայած կենդրոնական դըպրոցը, պահանջում է մեծ դրամագլուխ։ Եղիշէ վարդապետի երևակայած դպրոցը ունենալու է մասնագիտական զանազան բաժիններ, օրինակ՝ գիւղատնտեսութիւն, տեխնիկա և այլն։ Այդպիսի մասնագիտական բաժիններով դպրոցը առնւազն ունենալու է 80—100,000 ր., իսկ ինչ կար կենդրոնական դըպրոցի անունով, միմիայն 30—35000 ր., այդ էլ ուրին շէնքին։ Եթէ Եղիշէ վարդապետը ուզում էր հասարակ միջնակարգ դըպրոց բանալ, առանց մասնագիտական բաժինների, միայն ուսումնական մասով, այդ էլ աւելորդ էր, քանի որ նոյն այդ ծրագրով դպրոց այժմ ունի Թաւրիզը։ Փոխանակ 30 հազար բուրլի տալու մի նոր շէնքի, կարելի էր աւելացնել եղած դըպրոցների դրամագլխի վրայ, բարձրացնել այդ դպրոցներից մէկը, կազմել լաւ ուսուցչական խումբ, ոյժ տալ նրան՝ կրճատելով միւս դպրոցի բարձր դասարանները. մանաւանդ Թամարեան դպրոցի շէնքը շատ յարմար է դրա համար։ Այժմ միմիայն կայ կենդրոնական դպրոցի շէնքը, ուրիշ ոչինչ։

Կենդրոնական դպրոցը դարձել էր նրա համար ուղղակի մի ցաւ, բռնել էր դրանից, երևակայութեան մէջ փայլուն կերպով կազմակերպում էր և աջուձախ հարուածում, ցեխ էր շպրտում երկու դպրոցների հասցէին։ Առանց գէթ մի անգամ Լիլաւայի դպրոցը այցելելու և մօտիկ ճանաչելու, նա նոյնիսկ մամուլի մէջ գրեց բացասական բաներ, ի հարկէ յենելով դըրսում պտտած «կասէ-կոսէների» և բամբասանքների վրայ։ Մինչդեռ նշանակութիւն չունի նրա այս ձևի Թէ դրական և Թէ բացասական կարծիքը, որովհետև հաստատուն չէ, երերուն և փոփոխական է։ Եւ գիտէք քանի անգամ նա կարծիքը փոխել է Լիլաւայի դպրոցների վերաբերմամբ։ Ասացի, որ առաջ, դեռ գրեթէ չայցելած դպրոցը, նա սկսեց անընդատ խօսել և գրել. անցաւ մի քանի ամիս, նա ներկայ եղաւ մի փորձնական դասի, որ պարապում էր վեցերորդեցիներից մէկը։ Անմիջապէս յետոյ եղաւ փորձնական դասի քննադատութիւնը. ներկայ էին վեցերորդ դասատանի բոլոր աշակերտները, ուսուցչական խումբը և առաջնորդը։ Եւ գիտէք ինչ կարծիք յայտնեց այնտեղ նա. նա խոստովանեց, որ իր առաջ նստած են ոչ Թէ պա-

տանիներ, խելքով տհասներ, այլ պատրաստուած և հասուն եբիտասարդներ, և ուրախութիւն յայտնեց, որ դրանք են ամբողջ Պարսկաստանի առաջին պտուղները, առաջին ընթացաւորները։

Ցափշտակուած իր երևակայական չեղած գենդր. դպրոցով, սկսեց հակառակ ընթացք բռնել եղած և իրական օգուտ տուող դպրոցների վերաբերմամբ։ Եւ նա որոշ չափով հասաւ իր նպատակին։ Էիլաւայի դպրոցը տապալեց, ուսուցչական խումբը ցրեց։ Ինորոշ է նրա գործելու մի սիստեմը. այս կամ այն անձնաւորութեան հեռացնելու, չեզոքացնելու համար նա հնարում է. առաջ է բերում մի մեծ օրէնք, մի նոր կարգադրութիւն։ Ուսուցիչների առաջ հոգաբարձական ընտրողական ժողովները փակելու համար նա դեռ չբհրատարակուած և ժողովրդի սեփականութիւնը չդարձած կանոնագրութիւնից յայտարարեց ժողովրդին, որ «այս խնդրում շահ ունեցող և շահագրգռուած անձինք ձայնի իրաւունքից զրկւում են»։ Որոշ մարդկանց առաջն առնելու համար նա «պտղի» հարցը մէջ նետեց, մի բան, որ էլի չի տեսել Թաւրիզը. վերջապէս առանձին առանձին հրաւէրներով մարդկանց կանչեց ժողովի և ասաց մէկին էր հրաւէր ուղարկել, այն ինչ կանոնադրութեան մէջ պարզ կերպով ասուած է, որ ամեն մի անձնաւորութիւն կարող է մասնակցել, եթէ 21 տարիքից անց է։ Իսկայդ չի արել անշուշտ, որովհետև նրան ձեռնտու չէր։

Այստեղ չենք ուզում նկարագրել այն խայտառակութիւնները, որ տեղի ունեցան նոր տեսուչներ փնտռելիս։ Մենք ամաչում ենք... որ հակառակորդների դէմ կռուելու համար առաջնորդը մէջոցների մէջ խորութիւն չի դնում։ Առաջնորդ Մուրադեանը ընդհարւում է Ղալայի դպրոցի ուսուցիչ պ. Ն. Տէր-Յովհաննիսեանի հետ, ընդհարւում է, որովհետև վերջինս կանանց բարեգ. Միացեալ ընկերութեան կողմից ուղարկւում է Ուրմի մի գործ քննելու և յանկարծ առաջնորդին հակառակ եղրակացութեան է հանում։ Նրան տրուած է եղել լիազօրութիւն այն խնդրի վերաբերմամբ։ Առաջնորդ Մուրադեանը զայրանում է, բարկանում է այդ ուսուցչի վրայ և առաջարկում է բարեգ. ընկ. վարչութեանը, որ այդ ուսուցչին հեռացնէ քարտուղարութիւնից։ Եւ վարչութիւնը այնքան թոյլ, այնքան անհեռատես և անարդար է գտնւում, որ կատարում է առաջնորդի քմահաճոյքը և միանգամայն ապօրինի պահանջը։ Ապա հերթը հասնում է և դպրոցից հեռացնելուն...

Նրա տգեղ սովորութիւններից մէկն էլ այն է, որ եկեղեցու բեմը դարձնում է հայհոյանքների և հակառակութեան

վայր։ Լսարանում դասախօսութիւն է լինում, նեբկայ է և առաջնորդը. փոխանակ այնտեղ յայտնելու իր կարծիքը և հակաճառելու, ուր յարմարութիւն կունենան պաշտպանելու և հակառակորդները, նա քարոզի նիւթ է շինում և յարձակւում է սրա նրա վրայ, իսկ դիմացինը հնարաւորութիւն չի ունենում պատասխանելու։

Այդ գործունէութեան մէջ եղած սև թեերից է, գուցէ ամենագլխաւորը, թերթի իրաւունքի հարցը։ Նա այնքան անտակտութեամբ առաջ տարաւ այդ խնդիրը, որ Վենափառ Շահնշահից խիստ և կտրուկ մերժում ստացաւ։ Մուրադեան վարդապետին թէև շատ-շատերը, որոնց յայտնի է տեղական պայմանները և անշուշտ այդպիսի խնդիրներում լաւ գիտեն դիմելու ձևերը, – խորհուրդ չըտուին այդ ձևով դիմել Շահնշահին, բայց նա չլսեց և ոչ մէկին, ինչպէս ասում են «իր էշը քշեց» և լաւ էլ արդիւնք ստացաւ...

Նրա գործունէութեան ընդհանուր խաւարի մէջ միակ փայլուն կէտը կազմում է մաժուլը, որը մեծ բարիք է ամբողջ թեմի համար։ Բացի այդ Ատրպատականի եկեղեցական «կանոնադրութիւնը», որ այժմ գործադրութեան մէջ է, մշակուած է որոշ չափ շնորհիւ Մուրադեան վարդապետի ջանքերի։ Այդ «կանոնադրութեամբ» շատ անաթդարութիւններ վերացուցին և ամեն ինչ դրուեց կանոնաւոր հիմունքների վրայ, միայն թ հարկէ եթէ խիստ հետևեն գործադրութեան վրայ։

Ահա առաջնորդի երկամեա ընդհանրապէս անմխիթար գործունէութիւնը։

ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

I.

Գովկասում թատրոնի հիմքը դրել է, ինչպէս գիտենք, 1859 թուականին, մի տաճկահայ պատանու ձեռքով, որ այդ ժամանակ սովորում էր Ներսէսեան դպրանոցում։ Բայց Ատրբէյջանում թատրոնի սկիզբն դրուում է բաւական ուշ, ճիշտ 20 տարի յետոյ, 1879 թուին։ Թատրոնի սկզբնաւորութեան մասին կասկածներ կային, ոմանք ասում էին, որ սկսուել է 1877 թուին, ոմանք պնդում էին, որ առաջին ներկայացումը եղել է 1877 թուին։ Այդ կասկածը փարատեց հանգուցեալ Փափազեան վարդապետի յիշատակարանը, ուր թատրոնի մասին յիշատակուած է հետեւեալը.

«1879 տմի, Ապրիլին, Վանայ խնամատար ընկերութեան մի նպաստ հասցնելու և Դաւրիժու երիտասարդաց մէջ ազգային եռանդ մտցնելու պատճառաւ, քանիցս անգամ մեր տան մէջ ժողով հրաւիրեցի վառվռուն երիտասարդներ։ Թատրոն ներկայացնելու համար խորհեցանք և տնօրինեցինք և միջոցէս երեք անգամ ներկայացում տուցինք մեր տան բակի մէջ, վրանի տակ և 8 լիրա ուղարկեցինք յիշեալ ընկերութեան»։

Այդ թուականին տէր-Մեսրոբ Փափազեանը տեսչութեան պաշտօն էր վարում Բերդաթաղի դպրոցում։ Նա, ինչպէս իր գրութիւնն է ցոյց տալիս, ձեռնարկում է թատրոնական գործը, նրա հետ միանում են և տեղացի «վառվռուն» երիտասարդներ (արժէ այստեղ յիշել պ. Ա. Փանուէլեանի անունը, որ միշտ էլ եղել է այդ ասպարիզում), մեծ ժասով ուսուցիչներ։ Ներկայացում կազմակերպելու և բեմի հիմքը դնելու առիթը տալիս է Վանի խնամատար ընկերութիւնը, որին անհրաժեշտ էր նպաստ հասցնել։

Առաջին անգամ պիտի խաղային «Աշոտ Ողորմած» և «Երկու Գաղցածներ» պիէսները։ Մի շարք փորձեր են ունենում և որքան հետաքրքիր, որքան ուրախ են անցնում այդ օրերը։ Գործի գլուխ անցածները և մասնակցող երիտասարդները ա-

ելի ու ասելի ոգևորում են և տաք սրտով կպչում գործին։ Երկար և անդուլ գործը ապարդիւն չանցաւ։ Արդէն փորձերը վերջացրել են և կազմ պատրաստ են բեմ ելնելու։ Հէնց այդ տեղ նրանց առաջ ցցւում է մի մեծ հարցական։ Ո՞րտեղ ներկայացնել, չկայ թատերասրահ, չկան և՛ յարմար սենեակներ։

Սրա ճարն էլ գտնում են։

«Աբաժեան» դպրոցի յետևում կայ մեծ տարածութիւն։ այնտեղ վրաններ են խփում, և ահա պատրաստ է բեմը. այս վրանների տակ պիտի տային ներկայացումը։ Թեմական առաջնորդ Բարդուղիմէոս վարդապետն (այժմ եպիսկոպոս) էլ իր կողմից օգնում և քաջալերում է սկսած գործը։ Չը մոռանանք ասել, որ տէր-Մեսրոբը կատարում էր և՛ ըէժիսորի և՛ յուշարարի դեր։

Ահա այսպէս ամեն ինչ պատրաստ էր. պատրաստ էր բեմը, պատրաստ էին և դերակատարները, մնում էր միայն խաղալ։ Բայց յանկարծ խոչնդոտ է առաջ գալիս։ Հոգաբարձութիւնը արգելում է ներկայացումը՝ պատճառաբանելով թէ պարտից կառավարութիւնը վատ աչքով կընայի մեզ, կըփակի դպրոցը, և ուրիշ անխուսափելի ղնասների առիթ կըտանք մեր այս քայլով։ Հոգաբարձութիւնը միևնոյն ժամանակ ապառնում է, որ եթէ ուսուցիչները համարձակւեն թէկուզ ուրիշ տեղ տալ ներկայացումը, անյապաղ նրանց հեռացնել դպրոցից։ Այդ անմիտ ապառնալիքը ոչ մէկի վրայ չէ ազդում, նրանք եռանդուն կերպով, առանց յուսահատելու, առաջ են տանում ահագին ջանքերով սկսած գործը։

Վրանը և բեմական բոլոր պատրաստութիւնները տեղափոխում են տէր-Մեսրոբ Փափազեանի տունը, նորից բեմ են պատրաստում և ձեռնարկում ներկայացումը։ Տէր-Մեսրոբը տանկաց հպատակ լինելով՝ հրաւիրում է նաև տանկաց հիւպատոսին։ Սիրողների խնդիրքով ներկայ է լինում և ուսաց կօնսուլը։ Գալիս են նոյնպէս Թուրքեր, իսկ հայ հանդիսականների թիւը ահագին է լինում։

Հետաքրքրութիւնը ընդհանուր էր, իւրաքանչիւրը ձգտում է ներկայ լինել ներկայացմանը, տեսնելու, իմանալու համար թէ ինչ է թատրոն ասած բանը։ Հոգաբարձութիւնը, տեսնելով այդ ընդհանուր հետաքրքրութիւնը, կօնսուլների քաղցր և սիրալիր վերաբերմունքը դէպի այդ ձեռնարկութիւնը՝ աշխատում են ներկայ լինել, բայց նրանք տոմսակ չեն կարողանում ստանալ. նրանք մնում են գործողների կողմից, իրանց ապառնալիքի և տգեղ վարմունքի պատճառով։

Վերջապէս ներկայացումը աջողում է։ Ներկայացումը

անցնում է շատ աղոց և ոչ մի միջադէպ կամ խլրտում տեղի չէ ունենում։ Ներկայ եղողները հեռանում են ուրախ և գոհ։ Երկար ժամանակ ընդհանուրի խօսակցութեան նիւթը լինում է այս ներկայացումը։ Նրանք, որոնք առաջին ներկայացումը չէին տեսել, բուռն ցանկութիւն էին յայտնում որ կրկնուի խաղը, շատերն էլ ուզում էին իրանց հանելի տպաւորութիւնը կրկնել։

Այսպիսով, առաջին տարում, այսինքն 1879 թ-ին, թատերասէրները հնարաւորութիւն են ունենում տալ երեք ներկայացում, և դրանց արդիւնքից 8 լիրա ուղարկում են Վան խնամատար ընկերութեան։

Բայց յաջորդ 1880 և 1881 թուականներին տալիս են մի շարք ներկայացումներ. պիեսները լինում են մեծ մասամբ թարգմանութիւններ ֆրանսերէնից, երբեմն էլ հէնց իրանք խաղացողներն էին «թխում» կամ «կազմում»։

Հետաքրքիր է մի դէպք։ Տէր-Մեսրոպը տեսել էր «Վենտիկի վաճառականը» խաղը Թուսաստանում, և նա հիմնելով իր յիշողութեան վրայ գրում է մի պիէս, ի հարկէ նոր պիես, բայց նոյն սիւժէտով և անուանում է «Արդար դատաստան», որ և ներկայացնում է։

Թատերասէրները, չունենալով կանացի դերեր, ընտրում են այնպիսի պիէսներ, որոնց մէջ ըստ կարելոյն չափ կանայք չլինեն։ Եղած կանացի դերերը կատարում էին տղամարդիկ, բացառութիւն կազմում էր մի դերակատարուհի—դա Տէր-Մեսրոպի աղջիկն էր, որ այդ ժամանակ վարժուհու պաշտօն ունէր։

Տարօրինակ էր և Տէր-Մեսրոպը ժողովրդի համար։ Մառով էին ցոյց տալիս տէր-հօրը և նրա աղջկան։ Փողոցով անցնելիս չորս կողմից հետաքրքրութեամբ նայում և շշնջում են, «նա «օյինբազ» տէրտէրը և նրա «օյինբազ աղջիկը»։

Այդ ժամանակ էլ շքեղ յատկապէս ներկայացումների համար շինուած թատերարան և ներկայացումները լինում էին Տիգրան Գորոյեանի տանը, որով վերջինս մեծ ծառայութիւն է մատուցանում թատրոնական գործին։

Այդ տարիներում, ի միջի այլոց, խաղացուում են հետեւեալ պիեսները.—«Փորոսողին դահ», «Ակամայ բժիշկ», «Թրոշող բժիշկ», «Մէրը բժիշկ», «Սև հոգեր», «Արդար դատաստան» և «Արշակ Բ.»։

Որպէսզի հնարաւորութիւն ունենան ներկայ լինելու և օգուտներ այդ ներկայացումներից նաև թուրքերը, թատերա-

սէրնեբը միշտ էլ, բացի առաջին մի երկու ներկայացումից, թուրքերէն վոդվիլներ էին դնում։

Ահա այսպէս է սկսել և հիմքը դրել թատրոնական գործունէութիւնը Ատրպատականում։

II.

Անդուլ ջանքերի գործը չի դադարում, այլ կանոնաւոր կերպով առաջ տարում. երբեմնակի ներկայացումներ են լինում, բայց յաճախում են միայն տղամարդիկ։ Թատրոնը կանանց համար դեռ մի անմերձենալի և արգելած վայր էր։ Եւ այդպէս շարունակւում է մինչև ինքնական թուականները։ Միմիայն 1891 թւին տեղացի մի երկու կանայք ներկայ են լինում ներկայացման, իսկ յաջորդ 1892 թւին Թաւրիզի Լիլուա-թաղի ուսուցչական խումբը յատկապէս կանանց համար կազմակերպում է մի ներկայացում։ Հետզհետէ կազմակերպւում են գրական հանդէսներ, նոյն այդ 1892 թւականին տօնածառի սկիզբն է դրւում և տեղացի օրիորդը քեռ է բարձրանում արհամարհելով բամբասանքը։

Այսպէս ահա ինքնուրոյն թուականներից սկսած բեմական գործունէութիւնը Թաւրիզում դրւում է փոքր ի շատէ կայուն հիմունքների վրայ։ Ներկայացումները յաճախակի կրկնւում են երկու թաղերումն էլ և լինում են շնորքով պատրաստուած ներկայացումներ. կամաց-կամաց, տարէց տարի առաջ են գալիս շնորքով բեմական ոյժեր և այդ արուեստը հասկացող և գնահատող անձնաւորութիւններ։ Դպրոցների շնորհիւ մտաւոր պահանջներ են առաջանում և աւելի ու աւելի լայն ծաւալ են ստանում։ Թատրոնը, որի վրայ մի քանի տարի առաջ նայում էին որպէս մի «օյինբազիանայի» վրայ,—շուտով բռնում է իր պատուաւոր տեղը հասարակական հիմնարկութիւնների շարքում։ Եւ շուտով երկու թաղերումն էլ երեւում են թատերասրահներ, յատկապէս ներկայացումների համար ընդարձակ և գեղեցիկ շէնքեր։

Ղալա-թաղի սրահը աւելի հին է, իսկ Լիլուայինը շինւել է 1895 թւին։ Իսկ 1900 թւին երկու թաղերումն էլ կազմակերպւում են «թատերասէրների» ընկերութիւններ։ Այդ ընկերութիւններից ամեն մէկը թէև սկզբում ունէր ժամանակցողներ-անդամների փոքր թիւ, բայց կամաց-կամաց սուաքանում է։ Մօտաւորապէս նոյն այդ ժամանակներում կազմակերպւեց «երաժշտասիրաց» ընկերութիւնը, որը յետոյ միա-

ցաւ Ղալա-Թաղի «Թատերասիրաց» ընկերութեան հետ և կոչուեց «Թատերա-երաժշտասիրաց» ընկերութիւն.

Եւ յաջորդ երկու տարիներում, 1901—2 թուերին, Թաւրիզում եղան մի շարք ներկայացումներ, որ տուին այդ ընկերութիւնները, ուսուցչական խմբերը, Ծերէկեան քոյրերը սիրողների մասնակցութեամբ։ Խաղացին հետևեալ պիէսները։

«Փոքրիկնակու հարսանիքը», «Սկապէնի արարքները», «Մկնդեղ», «Բարեգործութեան դիմակի տակ», «Կրոթ-կրոթ», «Մեծապատիւ մուրացկանները», «Ոճրագործի ընտանիքը», «Օրթանալու քէֆը», «Ալշալոյս» (2 անգամ) «Մեհրուժան», «Մէդէա», «Ռոյր-Թերեզա», «Անջելո», «Մկնիկ» և այլն։

Բացի այդ՝ եղել են նոյնպէս գրական-երաժշտական երեկոյթներ և տօնածառեր։ Իսկ յաջորդ տարեշրջանում խաղում են էլ աւելի պիէսներ, ընտիր և օգտակար պիէսներ, որոնցից արժէ յիշատակել հետևեալները.—«Օտարներ», «Բարեկամներ», «Թագի համար», «Մարդոց ճրագներ», «Հեղինէ» և այլն։

Ներկայացումները Աստրպատականում ընդհանրապէս դրուում են բարեգործական նպատակներով։ Դպրոցի հոգաբարձութիւնը, բիւդժէի մի մասը ծածկելու համար. յոյսը դրել է ներկայացումների վրայ, գրադարանի վարչութիւնը իր տարեկան ծախսի մի նշանաւոր մասը ներկայացումներով է ծածկում, հայուհեաց բարեգ. ընկերութիւնը մի որոշ գումար արդիւնք է ստանում ներկայացումներից, այդ նպատակով կազմուած ընկերութիւնների ակնկալութիւնը աւելի քան հասկանալի է։ Դեռ չեմ թուում մի շարք յայտնի և անյայտ մարմիններ և ընկերութիւններ, որոնք սպասելիքներ ունեն ներկայացումներից։ Եւ չափազանցութիւն չի լինի, եթէ ասեմ, որ տարի է պատահում, որ Թաւրիզում աւելի ներկայացումներ են տրւում, քան Թիֆլիսում։ Եւ այդ պատճառով շատ անգամ ժողովուրդը ուղղակի զզուում է և ընկնում թատրոնի վարկը ժողովրդի աչքում։

Ասացինք որ ներկայացումները լինում են բարեգործական նպատակներով, հետևապէս շահադիտական դրդումներով։ Այդ երևոյթը աչք է ծակում ոչ միայն Թաւրիզում, այլ և՛ ամբողջ Աստրպատականում։ Հէնց այդ երևոյթով պիտի բացատրել այն, որ տոմսակների գները աւելի քան թանգ են նշանակում՝ 12—20 դրանը շատ սովորական գներ են առաջին կարգի համար, չնայած որ համարեա բոլոր ներկայացումներին էլ թատերասրահը լիքն է լինում։ Գների թանգութեան և անմատչելիութեան պիտի վերագրել և այն, որ թատրոնը ասես սեփականութիւն է միայն ունևորների, հարուստների համար. հա-

սէրները միշտ էլ, բացի առաջին մի երկու ներկայացումից, թուրքերէն վոդվիլներ էին դնում։

Ահա այսպէս է սկսել և հիմքը դրել Թատրոնական գործունէութիւնը Ատրպատականում։

II.

Անդուլ ջանքերի գործը չի դադարում, այլ կանոնաւոր կերպով առաջ տարւում. երբեմնակի ներկայացումներ են լինում, բայց յաճախում են միայն տղամարդիկ։ Թատրոնը կանանց համար դեռ մի անմերձենալի և արգելւած վայր էր։ Եւ այդպէս շարունակւում է մինչև ինքնակալ թուականները։ Միմիայն 1891 թւին տեղացի մի երկու կանայք ներկայ են լինում ներկայացման, իսկ յաջորդ 1892 թւին Թաւրիզի Լիլաւա-Թաղի ուսուցչական խումբը յատկապէս կանանց համար կազմակերպում է մի ներկայացում։ Հետզհետէ կազմակերպւում են գրական հանդէսներ, նոյն այդ 1892 թւականին ոստնածոռի սկիզբն է դրւում և տեղացի օրիորդը բեմ է բարձրանում արհամարհելով բամբասանքը։

Այսպէս ահա ինքնուսնական թւականներից սկսած բեմական գործունէութիւնը Թաւրիզում դրւում է փոքր ի շատէ կայուն հիմունքների վրայ։ Ներկայացումները յաճախակի կրկնւում են երկու թաղերումն էլ և լինում են շնորհով պատրաստւած ներկայացումներ. կամաց-կամաց, տարէց տարի առաջ են գալիս շնորհով բեմական ոյժեր և այդ արւեստը հասկացող և գնահատող անձնաւորութիւններ։ Դպրոցների շնորհիւ մտաւոր պահանջներ են առաջանում և աւելի ու աւելի լայն ծաւալ են ստանում։ Թատրոնը, որի վրայ մի քանի տարի առաջ նայում էին որպէս մի «օյինբազխանայի» վրայ,—շուտով բռնում է իր պատուաւոր տեղը հասարակական հիմնարկութիւնների շարքում։ Եւ շուտով երկու թաղերումն էլ երևում են թատերասրահներ, յատկապէս ներկայացումների համար ընդարձակ և գեղեցիկ շէնքեր։

Ղալա-Թաղի սրահը աւելի հին է, իսկ Լիլաւայինը շինւել է 1895 թւին։ Իսկ 1900 թւին երկու թաղերումն էլ կազմակերպւում են «թատերասէրների» ընկերութիւններ։ Այդ ընկերութիւններից ամեն մէկը թէև սկզբում ունէր ժամանակցողներ-անդամների փոքր թիւ, բայց կամաց-կամաց սուաբտնում է։ Մասաւորապէս նոյն այդ ժամանակներում կազմակերպւեց «երաժշտասիրաց» ընկերութիւնը, որը յետոյ միա-

ցաւ. Ղալա-Թաղի «Թատերասէրաց» ընկերութեան հետ և կոչուեց «Թատերա-երաժշտասէրաց» ընկերութիւն.

Եւ յաջորդ երկու տարիներում, 1901—2 թուերին, Թաւրիզում եղան մի շարք ներկայացումներ, որ տուին այդ ընկերութիւնները, ուսուցչական խմբերը, Ծելէկեան քոյրերը տիրոջների մասնակցութեամբ։ Եղան հետևեալ պիէսները։

«Ֆրէյինսկու հարսանիքը», «Սկապէնի արարքները», «Մկնդեղ», «Բարեգործութեան դիմակի տակ», «Կրոթ-կրոթ», «Մեծապատիւ մուրացկանները», «Ոճրագործի ընտանիքը», «Օրթանալու քէֆը», «Ալշալոյս» (2 անգամ) «Մեհրուժան», «Մէդէա», «Ռոյր-Թերեզա», «Անջելօ», «Մկնիկ» և այլն։

Բացի այդ՝ եղել են նոյնպէս գրական-երաժշտական երեկոյթներ և տօնածառեր։ Իսկ յաջորդ տարեշրջանում խաղում են էլ աւելի պիէսներ, ընտիր և օգտակար պիէսներ, որոնցից արժէ յիշատակել հետևեալները.—«Օտարներ», «Բարեկամներ», «Թագի համար», «Մարդոյ ճրագներ», «Հեղինէ» և այլն։

Ներկայացումները Ատրպատականում ընդհանրապէս դրուում են բարեգործական նպատակներով։ Դպրոցի հոգաբարձութիւնը, բիւրժէի մի մասը ծածկելու համար. յոյսը դրել է ներկայացումների վրայ, գրադարանի վարչութիւնը իր տարեկան ծախսի մի նշանաւոր մասը ներկայացումներով է ծածկում, հայուհեաց բարեգ. ընկերութիւնը մի որոշ գումար արդիւնք է ստանում ներկայացումներից, այդ նպատակով կազմուած ընկերութիւնների ակնկալութիւնը աւելի քան հասկանալի է։ Դեռ չեմ թուում մի շարք յայտնի և անյայտ մարմիններ և ընկերութիւններ, որոնք սպասելիքներ ունեն ներկայացումներից։ Եւ չափազանցութիւն չի լինի, եթէ ասեմ, որ տարի է պատահում, որ Թաւրիզում աւելի ներկայացումներ են տրւում, քան Թիֆլիսում։ Եւ այդ պատճառով շատ անգամ ժողովուրդը ուղղակի գլուխ է և ընկնում Թատրոնի վարկը ժողովրդի աչքում։

Ասացինք որ ներկայացումները լինում են բարեգործական նպատակներով, հետևապէս շահադիտական դրդումներով։ Այդ երևոյթը աչք է ծակում ոչ միայն Թաւրիզում, այլ և՛ ամբողջ Ատրպատականում։ Հէնց այդ երևոյթով պիտի բացատրել այն, որ տոմսակների գները աւելի քան թանգ են նշանակում՝ 12—20 դրանը շատ սովորական գներ են առաջին կարգի համար, չնայած որ համարեա բոլոր ներկայացումներին էլ Թատերասրահը լիքն է լինում։ Գների թանգութեան և անմատչելիութեան պիտի վերագրել և այն, որ Թատրոնը ասես սեփականութիւն է միայն ունևորների, հարուստների համար. հա-

սարակ ժողովուրդը առհասարակ լաւ ներկայացումներից զուրկ է մնում։ Շատ քիչ է մոտենում թատրոնը ընդհանուրի սեփականութիւնը դարձնել. ժողովրդի գեղագիտական ճաշակը զարգացնել և նրբացնել, ներկայացման պահանջ առաջ բերել։ Զգում են, որքան հնարաւոր է շատ փող ձեռք բերել։ Ահա ինչն է անհամակրելին։

Թաւրիզում, և ընդհանրապէս Ատրպատականում խաղացւում են անխտիր ամեն տեսակի պիէսներ, մանաւանդ յանախ լինում են Ֆրանսերէնից թարգմանութիւններ, որոնք մեծ մասով հնացած և արխիւային միլիոնդրաներ են և դրանք իրենց ախ-վախով շատ-շատ մի բոպէ կարող են միայն ազդել։ Անհրաժեշտ են հայ ժողովրդի սրտին մօտիկ, մոքին նիւթ տուող պիէսներ և դրանց օգուտը անկասկածելի է։ Այդպիսի բնաւորութիւն է կրում պ. Վ. Փափազեանի «Արշալոյս» ինքնուրոյն պիէսը, որը երկու անգամ խաղացուել է Թաւրիզում և մի անգամ Սալմաստում։ Քանի որ այս պիէսը ռուսահայոց բեմի վրայ չի երևացել և անյայտ է, աւելորդ չեմ համարում մի երկու խօսքով տալ նրա բովանդակութիւնը։ Թիւրքա-հայոց կեանքն է, կազմում այդ պիեսի նիւթը։ Զալալցի և Բաքրանցի քիւրդերը կեղեքում. հարստահարում են Գարեկանի հայերին, անպատուում կանանց, յափշտակում աղջիկներին և գիւղացիների արիւնը ծծում։ Դանակը ոսկորին է հասել։ Մի անգամ էլ Մեր Իւսուֆը (քիւրդ ցեղապետ) պահանջում է աղջիկ. այլևս անհնարին է լինում դիմանալ։ Գիւղի վարժապետը գլուխ է անցնում, ոտի կանգնեցնում գիւղացիներին, մոքեր պատրաստում. նրա հետ միանում է գաւառի երիտասարդութիւնը և գիւղի ուէսը։ Ամբողջ գաւառը ոտքի է։ Վարժապետի ցուցմունքներով և դեկավարութեամբ յարձակւում են քիւրդերի վրանների վրայ, սպանում նրանց, աւերում, քանդում նրանց բոյն-որջը։ Ահա «Արշալոյսի» սիւժէտը։

Թատրոնական գործը արդէն կանոնաւոր և յարաջունընթացքի մէջ է մտել, մնում է միայն աւելի համախմբել կարևոր ոյժերը և կազմակերպել, դարձնել թատրոնը ժողովրդի սեփականութիւնը աւելի լայն չափերով։ Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է նախ՝ ամեն և մատչելի գներ որոշանակել, հնարաւոր եղածին չափ չդեկավարուել շահադիտական նպատակներով և տալ շնորհով ներկայացումներ, և երկրորդ, ներկայացնել ընտիր պիեսներ, որոնք շօշափեն մեր կեանքի մօտիկ հարցեր և կրթիչ նշանակութիւն ունենան։

Ահա միայն այդ ժամանակ բեմը իր իսկական նպատակին կը ծառայի։

III.

Իսկ ինչ է ներկայացնում բեմը գաւառներում։

Հարցի պատասխանը այնքան էլ միարարական չէ։ Առհասարակ բեմ կազմելու և պահպանելու համար անհրաժեշտ են ոյժեր, կրթուած և գիտակցող անձնաւորութիւններ։ Իսկ ուր բացակայում են այդ գործօնները, այնտեղ անհնարին է ունենալ թատրոնական գործ։ Ատրպատականում կան անկիւններ, ուր հասարակ գրաճանաչներին անգամ մատով կարելի է հաշուել, տեղեր կան, որ այդ էլ չկայ։ Իսկ դպրոցի մասին ուսուցչի քան աղօտ գաղափար ունեն, այդպիսի պայմանների մէջ էլ ինչպէս կարող է առաջանալ և հիմնուել բեմ և թատրոնական գործունէութիւն։

Այժմ ընդհանրապէս Ատրպատականի այն գաւառները կամ գիւղերը ունեն բեմ և թատրոնական գործ, որոնք ունեն կանոնաւոր դպրոցներ, քիչ ու շատ պատրաստուած ուսուցիչ ու ուսուցչուհիներով։ Այս կողմից էլ Ատրպատականի գաւառների շարքում առաջնութեան տեղը գրաւում է Սալմաստը։ Բեմական գործը Սալմաստում փոքր ի շատէ կանոնաւոր ընթացքի մէջ է մտնում 1895—6 թուերից սկսած։ Առաջին թատերասրահը շինուում է 1894 թուին, Հաֆթվանում, հանդուցեալ Մ. Աւետիսեանի ջանքերի շնորհիւ։ Այդ թատերասրահը համարուում էր իր ժամանակին յարմար և ընդարձակ շէնք։ Մինչև այդ թուականը ներկայացումները Սալմաստում տրուում էին մասնաւոր տների մէջ։ Այժմ Ղալասար փոքրիկ գիւղն էլ ունի իր գեղեցիկ թատերասրահը, որը շինել են 1900 թուին. Իսկ անցեալ 1904 թուին Փայաշուկ գիւղում շինուեց ընդարձակ և յարմար թատերասրահ։ Մահլամ գիւղն էլ ունի փոքր, բայց քիչ ու շատ բաւարարութիւն տուող թատրոնական շէնք։ Այժմ Սալմաստի նշանաւոր գիւղերից իւրաքանչիւրը տարեկան մէկ և մի քանի ներկայացումներ է տալիս, չհաշուած գրական հանդէսները։ Այս վերջին 1904—5 տարեշրջանին Սալմաստը ունեցաւ մօտաւորապէս 15 ներկայացում, մի թիւ, որ Սալմաստի համար փոքր չէ։ Խաղացել են սեղանին հետեւեալ հրապարակում յայտնի պիեսները։ «Ռուզան», «Մարդ ճրագներ», «Ամերագործի ընտանիքը», «Ասլան բալասի», «Թագի համար», և «Մեծապատիւ մուրացկաններ»։ Այսպիսի վայրերում, նոյնիսկ թաւրիզում, բնականօրէն գործի ծանրութեան մեծագոյն բաժինը կրում են ուսուցիչները և ուսուցչուհիները։ Այստեղ էլ ներկայացման վրայ առհասարակ նայում են իբր շահի աղբիւրի։ Եւ այս առնւազը անհամակրելի երեւոյթը ասես մի չարիք

է, որ ստիպված պիտի կրեն։ Ահա ինչու։ Դպրոցների բուգ-ժէի, եթէ չասեմ, մեծագոյն մասը, գոնէ մի նշանաւոր մասը գիւղացիները ծածկում են ներկայացումներով։ Կրկնում եմ, նախ այդ միայն խուսափելի չարիք է, թէև զօրեղ հարուած իսկական գործի համար։ Այդ երևոյթը կը-վերանայ միայն այն ժամանակ, երբ դպրոցները ամենա-պէս քիչ ու շատ կապահովեն։ Այստեղ. ուսուցիչների պայ-մանների մէջ յանախ կպատահէք նաև ազատիսի կէտի՝ «պարտաւորւում է կազմակերպել տալ տարեկան երկու կամ երեք ներկայացում դպրոցի օգտին»։ Սուտ չէ, որ այսպիսի վայրերում ուսուցիչները երենց ռոմիկը իրենք են աշխատում, իրենց արիւն քրտինքով և ջանքերով ձեռք բերում։

Թատրոնական գործը միւս գաւառներում անհամեմատ ուշ է սկսել Ռուսիում առաջին ներկայացումը եղել է 1897 թուականին, շարժական բեմի վրայ։ Նրանից յետոյ երկար ժա-ժամանակ ներկայացում չի տրւում, միայն 1902 թուին մի խումբ սիրողներ մի երկու ներկայացում են տալիս և նրանց արդիւնքով թատերարան շինում։ Այստեղ էլ իսկապէս նախա-ձեռնողը էլի ուսուցիչ է. նոյնն է, շատ քիչ բացառութեամբ, և միւս գաւառամասերում և քաղաքներում։ Նոյն էլ ունի փոքրիկ և յարմար բեմ դպրոցական շէնքի մէջ և երբեմնակի լի-նում են ներկայացումներ։ Գոհացուցիչ վիճակի մէջ են նոյն-պէս Արդաբիլ և Մարաղա քաղաքները։

Իսկ սրանց դիմաց Ատրպատականում կան մի շարք գա-ւառներ և գիւղեր, որ չգիտեն ինչ ասել է ներկայացումը, Ահա Մակուի Խանութիւնը, ընդարձակ և հայաշատ Ղարադաղը, Պարսկա-Քիւրդստանը։ Սրանք բոլորովին զուրկ են մեացեալ ներկայացումներից։ Նոյն վիճակին են ենթարկւած նաև Ռուսիի մի շարք գիւղերը։ Բեմ և թատրոնական գործ ունեցող վայրերը Ատրպատականում ներկայանում են որպէս արտօնեալ տեղեր։

Առհասարակ դա սկսուած երևոյթ է—ուր և երբ կայ դպրոց, լինում են ներկայացումներ, փակւում է ուսումնարանը, դադարում է և՛ ներկայացումը։

Ահա թատրոնական գործի դրութիւնը Ատրպատականում։

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ

I.

Ատրպատականի հայերը առհասարակ կարդալու առանձին հակում չունեն և ընթերցանությունը աւելի քան քիչ է տարածուած, նամանաւանդ գաւառահայերի մէջ։ Այն աստիճանի է հասնում շատ անգամ ժողովրդի անտարբերությունը, որ գեկավար հասարակ գործչի մէջքն են կոտրում և թևերը թուլացնում։ Թէև, եթէ մանրազնին քննենք հարցը, ժողովուրդը մեղաւոր չէ։ Ազգաբնակութեան ճնշող մեծամասնությունը մօտաւորապէս կանգնած է այնպիսի աստիճանի վրայ, որ անկարող էր ընթերցանությունը պահանջ դառնալ։ Մի շարք գիւղեր, նոյնիսկ գաւառներ ունենք, որ զուրկ են տարրական դպրոցներից, այդպիսի վայրերում աւելի քան տգիտություն է փնտռել ընթերցանություն, ընթերցասիրություն։ Ինչպէս ամեն առաջադիմության նպաստող գործ, նոյնպէս և՝ ընթերցանությունը, կապուած է դպրոցի հետ։ Ե՞րբ և ո՞ւր կայ դպրոց, այնտեղ էլ ընդհանրապէս կազմուում է գրադարան, սկսւում ընթերցանությունը։ Այս երևոյթը մի քանի տեղ շեշտենք։ Ամբողջ Ատրպատականում միմիայն մի քանի գրադարան—ընթերցարաններ կան, իսկ դրանցից միայն մի երկուսը բաբելաւ վիճակի մէջ են և տալիս համեմատաբար բաւարար թիւ կարդացողների։

Բայց անցնենք փաստերին։

Նախ խօսենք Թաւրիզի մասին։ Թաւրիզը ունի երկու գրադարան-ընթերցարան—Ղալա և Լիլաւա թաղերում։ Այս երկու գրադարաններից Ղալայինը աւելի հին է և հիմնուել է 1874 թուին, Անդրէաս արքեպիսկոպոսի առաջնորդության օրով, որը եղել է հիմնադիրներից մէկը։ Սկզբում ունեցել են շատ անհան քանակութեամբ գրքեր։ Գրադարանական ընկերությունը ունեցել է միմիայն 75 կտոր գիրք, առաջնորդարանից էլ տացուում է 81 գիրք և դրանով սկիզբը դրուում, բայց յետոյ ինքնիրեն աւելանում, այն էլ ոչ զգալի կերպով։ Ահա այսպէս։

Թվին	հասնում է	կտորի	Թվին	հասնում է	կտորի
1876	. . . . .	218 »	1886	. . . . .	994 »
1881	. . . . .	274 »	1887	. . (պակասում է)	960 »
1882	. . . . .	774 »	1900	. . . . .	1,000 »
1884	. . . . .	861 »	1902	. . . . .	1300 »

Առաջ բերուած թվերի մէջ չեն հաշուած օտար լեզուով եղած գրքերը, որոնց թիւը հասնում էր 500 ի։ Կան նաև ձեռագիր դրուածներ, հին և կրօնական գրքեր մօտ 50 կտոր։

Լիլաւա-Թաղի «Ա. Աբովեան» գրադարանը աւելի ուշ է հիմնուել, Մխիթարեան եպիս. առաջնորդութեան միջոցին, 1889 թվին, հէնց հիմնադիրն էլ եղել է ինքը թեմակալը։ Բայց ինչպէս է սկսել գործը, ինչպէս է եղել գրադարանը առաջին տարիներում, այդ մասին ոչինչ յայտնի չէ, ոչ մի գրութիւն չկայ։ Գրադարանը կանոնաւորուում է միմիայն 1893—4 թուականներից սկսած, երբ Լիլաւայի դպրոցում եղել է պատրաստուած խումբ։ 1902 թվին «Աբովեան գրադարանը ունէր 1303 տեսակի 1377 կտոր գիրք, որոնց թւում չէ հաշուած միայն ամսագիրը, որովհետև մեծ մասով կիսատ-պռատ են։ Երկու գրադարաններում էլ գերակշռող տեղ են բռնում բնչեարիստիկական գրուածները։ Երկու Գրադարան-ընթերցարանում էլ ստացուում են հայերէն եղած գլխաւոր թերթերը և ամսագրերը երբեմն ստացուում են նաև ռուսերէն և Ֆրանսերէն թերթեր, որոնց մեծ մասը համարեա լինում է նէր։

Բայց ինչ չափով են օգտուում Գրադարան-ընթերցարաններից. ահա ամենահետաքրքիրը։ Ղալայի գրադարանից օգտուողների թիւը 1901 թուականի ընթացքում եղած է 333, իսկ «Աբովեանի» գրադարանից՝ 1210։ Թիւրիմացութեան տեղիք չտալու համար անհրաժեշտ ենք համարում նկատել, որ այս թիւերը ցոյց են տալիս ոչ այն թէ քանի անձինք են օգտուել գրադարաններից, այլ այն, թէ քանի անգամ են օգտուել կամ քանի կտոր գիրք է կարդացուել։

Այստեղ գեղարուեստական գրուածները ահագին տոկոս են կազմում, կէսից շատ աւելի։ Ահա այսպէս։

ՂԱԼԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆԸ	գիրք	ԼԻԼԱՒԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆԸ	կտոր
1) Վիպական բաժնից կարդացուել է	254 »	Վիպական . .	826 »
2) Թատերական	29 »	Թատերական .	74 »
3) Գիտական	22 »	Գիտական հաս.	98 «
4) Պատմական	19 »	Բանաստեղծակ.	89 »
5) Պարբերական հրատարակ. .	194 »	Պարբերական .	123 »

Ուշադրութեան առնելով առաջ բերուած թիւերը նկատում ենք երկու գրադարանների վերաբերմամբ էլ, որ կարգացուած գրքերի մէջ բելետրիստիկական գրականները լրիւնց քանակութեամբ առաջին տեղն են բռնում, պարբերական հրատարակութիւնները երկրորդ, իսկ լուրջ գրականութիւնը շատ չնչին տոկոս է կազմում։ Նկատելի է և այն, որ բելետրիստիկայի մէջ գերիշխում է վէպը, որ Թաւրիզի հայերի ամենասիրելի գրականն է, և ընդհանրապէս զարգացման այս աստիճանի վրայ կանգնած ժողովրդի համար սիրելի է վէպը և նա է ամենից շատ կարդացուում։ Այս էլ պիտի ասել, որ նրանց շատ քիչ է հետաքրքրում գրքի իդէան, այլ գրաւում է վէպի ֆաբուլան, լոկ զուտութիւնը. նրանք իւրացնում են միայն որոշ արկածներ և դէպքեր։

Այստեղ անհրաժեշտ եմ համարում առաջ բերել Ղալա Թազի գրադարանից 6 ամսուայ ընթացքում տարած գրքերի ցուցակը, 1902 թւի յունուարից մինչև յունիս, որովհետև անցեալ տարի գրադարանը անկանոն է եղել։

	կտոր
Վիպական գրքեր	491 »
Թատերական	41 »
Պատմական	7 »
Գիտական	12 »
Քննադատական	5 »
Հասարակական, կրօնական, կենսագրական	19 »
Պարբերական հրատարակութիւններ . .	156 »
Ընդամենը	731 կ. գիրք

Շատ հետաքրքիր էր իմանալ թէ օգտուող անձինք ինչ դասակարգից են, բայց ցաւելով պիտի ասել, գրադարանների վարչութիւնները այդ հաշիւները չունեն։ Միայն այսքանը կարելի է վստահութեամբ ասել, որ օգտուողների ամենամեծ տոկոսը, գրեթէ կէսից աւելին, կազմում են աշակերտները, իսկ մնացածը բռնում են գործակատարները, ուսուցիչները և արհեստաւորները։ Ուրախութեամբ պիտի ասենք, որ «Արմենան» գրադարանի վարչութիւնը վերջին երեք տարիները համեմատաբար աւելի լաւ է կանոնաւորել գործը, այժմ արդէն նշանակում է ընթերցողի ինչ դասակարգից լինելը։ Բացի այդ վերջին տարիները նոր գրքեր և հրատարակութիւններ են բերել տուել և ամեն կերպ աշխատում են հարստացնել գրադարանը, իսկ Ղալայինը գրեթէ չի աւելացրել։

Գալով ընթերցարաններին, ցաւելով պէտք է խոստովան-

ւել, որ աւելի քան անմխիթար և անբաւարար են։ Ճանախորդները շատ անեղան թիւ են կազմում. այդ ասում ենք ի հարկէ մեր տեսածի, ամենօրեայ դիտողութեան վրայ հիմնուելով, քանի որ վարչութիւնները, չունէին ժամանակաւոր հաշիւ յանախորդների վերաբերմամբ։ Միայն վերջին երկու տարիները, մանաւանդ «Արովեանը» սկսել են ուշադրութիւն դարձնել դրա վրայ, կանոնաւորել է ընթերցարանը և դրել համեմատաբար լաւ հիմքերի վրայ։ Ընթերցարաններում էլ յանախորդների նշանաւոր մասը կազմում են աշակերտները և ուսուցիչները։ Երկու ընթերցարանների վերաբերմամբ էլ կարելի է վստահութեամբ ասել, որ հազիւ օրեկան միջին թւով 5—10 յանախորդ ունենան։

Այժմ ընթերցողի ուշադրութիւնը դարձնենք Թաւրիզի մի ուրիշ գրադարան-ընթերցարանի վրայ, որը էութեամբ շատ հետաքրքիր է։ Դա Թաւրիզի կանանց բարեգ. ընկերութեան գրադարան-ընթերցարանն է, որը կազմուած է «յատկապէս կանանց և օրիորդների համար», որովհետև «տեղական ինչ-ինչ սովորութիւնների և հասկացողութիւնների պատճառով տիկիններն և օրիորդները չեն կարողանում օգուտ քաղաքում գտնուած միւս գրադարաններից», պատճառաբանում է ընկերութիւնը։

Այսպէս է արևելքը... հարեմական հասկացողութիւնները ահա որքան խոր արմատներ են ցցել։ Այդ գրադարան-ընթերցարանի գոյութիւնը ընկերութեան համար առնւազն մի արտառ է և մեր բարեկամական խորհուրդն է անմիջապէս վերացնել այդ։ Արդէն եղած գրադարան-ընթերցարանները հերիք են. և "ակնարկւած, «ինչ-ինչ հասկացողութիւնները ու սովորութիւնները», ինչպէս և այլ խոչնդոտներ, կբվերանան, եթէ միայն, ընկերութեան վարիչ տիկինները կանոնաւոր յանախեն գրադարան-ընթերցարանները։ Այդ, գոնէ մեզ համար, աւելի քան զարմ է։

II.

Այժմ անցնենք գաւառներին։

Սալմաստը, այս կողմից էլ, առաջնութեան տեղն է գրաւում։ Այժմ Սալմաստի համարեա բոլոր նշանաւոր գիւղերն էլ ունեն գրադարաններ։ Դրանցից ամենահինն է Հաճիվանի «Վ. Գօլշեան» գրադարանը, որը հիմնուել է 1886 թւի մարտի 16-ին. հանգուցեալ Վարդան Գօլշեանի նախաձեռնութեամբ։ Այս

ձեռնարկությունը անցնելու է լայն ծրագիր և նպատակ ունէր և կոչուում էր «Մալմասոի գրատիրաց ընկերություն»։ Ընթերցանություն տարածելուց զատ, այդ ընկերությունը նը-պատակ էր դրել գրագիտություն տարածել, նպաստել հայ ազ-գաբնակության մտաւոր և բարոյական զարգացմանը, իր կա-րողության համեմատ տալ ժողովրդական դասախօսություններ թէ իր շրջանում և թէ ուրիշ գիւղերում։

Հաֆիվանի գրադարանը այժմ ունի 750 տեսակի 900։ կտոր գիրք։ Լուծելու դէպքում այս հիմնարկության բոլոր գոյքը և դրամը պէտք է յանձնել Հաֆիվանի գպրոցին։ Այս գրադարանը ստանում է «Մուրճ», «Մշակ», «Տարազ-Ազ-գիւր» «Առոգլապահիկ» և արտասահմանեան մի քանի թեր-թեր։

Մալմասոի ամենահարուստ գրադարանն է Ղալասար գիւ-ղի «Գ. Արծրունին» որը հիմնուած է թէև աւելի ուշ, 1899 թուա-կանին, գիւղի երիտասարդության նախաձեռնությամբ։ Այս, ինչպէս «Գօլօշեան» գրադարանից օգտուելու իրաւունք ունեն նաև շրջակայ գիւղերը։ Գրադարան-ընթերցարանների համար մի հիմնական դրամագլուխ ստեղծելու նպատակով խնայում է տարեկան ընդհանուր եկամուտի մի որոշ %-ը։

Ասացի, որ Ղալասարի գրադարանը ամենահարուստն է և համեմատաբար կանոնաւորը։ Այժմ «Գ. Արծրունի» գրադա-րանը ունի մօտաւորապէս 1300 կտոր գիրք, բոլորն էլ պէտ-քական գրքեր։ Վարիչները ամեն կերպ աշխատում են նոր-հրատարակությունը անմիջապէս ձեռք բերել։ Ընթերցաբա-նում ստացւում են «Մուրճ», «Մշակ», «Առոգլապահիկ թերթ», և մի քանի արտասահմանեան թերթեր։

Դեռ 1894 թուին Փայաջուկում հիմնւում է «Ռաֆֆի» գրա-դարանական ընկերությունը, բայց միայն երկու տարի է շա-րունակւում։ Թէև 1897 և 1899 թուականներին փորձեր եղել են նորից կազմակերպելու, բայց ապարդիւն են անցնում, այդ էլ շնորհիւ այն բանի, որ Փայաջուկը զուրկ է դեկավար ոյ-ժերից և երիտասարդներից, որոնք շատ աննշան բացառու-թեամբ օտարության մէջ են։ «Ռաֆֆի» գրադարանը վերա-կազմուեց միայն անցեալ 1903 թուին և այս երկու տարուայ ըն-թացքում հնարաւոր եղաւ միմիայն 500 կտոր գիրք ձեռք բե-րել։ Անցեալում այս գրադարանը ունեցել է բաւականին մեծ թւով գրքեր, բայց բոլորն էլ կորել է, տարել են զանազան մարդիկ և այլևս չեն վերադարձրել։

Մանկական գրադարանն էլ երկար ժամանակ մատնուած էր անուշադրության, միայն 1903 թուից սկսեցին նորէն կազմա-

կերպել և կարգի դնել։ Այս գրադարանը ունի նիւթական միջոցներ և եթէ խելացի երիտասարդներ անցնեն գործի գլուխ, հնարաւոր է գրադարանը հարստացնել, կանոնաւորել։

Բացի այս չորս գիւղերից, գրադարաններ կան նաև Սուրբ, Հին-Բաղաք, Ախտախանա գիւղերում, և ունեն բաւականին գրքեր։ Այդպէս ուրեմն, Սալմաստը ունի 7 գրադարան թիւը աւելի քան գոհացուցիչ է։ Բայց այդ չէ գլխաւորը։ Ի՞նչ չափով է օգտւում ժողովուրդը այդ հաստատութիւններից։ Ահա մի հարց, որի պատասխանը աւելի քան տխրիթիթ է։ Հաֆթվանը անգամ որը ամենահայաշատ գիւղն է, չի տալիս գոհացուցիչ թիւ ընթերցողների։ Փոքր քանակութեամբ կարդացողներ կան Դալասար գիւղում, թաք-թուք էլ միւս գիւղերում։ Մի խօսքով այնպիսի պատկեր է ներկայացնում ընթերցանութիւնը, որ հասարակական գործին, դեկավար վարչութեան երբէք չի կարող ոգևորել։ Այս բոլոր գրադարանների ամենալաւ ընթերցողներն են աշակերտ-աշակերտուհիները և դպրոցները աւարտած պատանիները։ Հէնց այդ տարրն էլ մեզ հարկաւոր է և աւելի քան լուրջ ուշադրութիւն դարձնել նրանց վրայ, խելացի կերպով դեկավարել նրանց և գրադարանները հարստացնելիս, նոր հրատարակութիւններ բերելիս աւելի այդ ընթերցողներին, նրանց մտաւոր պահանջները ի նկատի ունենան։

Ժողովրդի անընթերցասիրութեան պերճախօս փաստերից մէկն էլ այն է, որ ամբողջ գաւառում, չնայած գրադարանները, ստացւում է միմիայն մէկ օրինակ «Մուրճ» և մի քանի օրինակ «Մշակ»։

Ահա Սալմաստի ընթերցանութեան գործը։

Այժմ անցնենք միւս գաւառներին։ Ուրմի ծովակի արևմտեան և հարաւային ընդարձակ ափերում, Ուրմի-Բարանդուզ, Սուլդուզ, Սօուղ-բուլաղ, Միանդուաբ գաւառներում, իրար կայ միմիայն մէկ գրադարան, այն էլ Ուրմի քաղաքում. որը կազմել է 1901 թ-ին և կոչւում է «Գ. Զանշեան»։ Ահա իրականութիւնը։ Միմիայն վերջերս նկատւում է հետաքրքրութիւն և աշխատում են գլխաւոր գիւղերումն էլ կամաց-կամաց կազմակերպել։ Գրութիւնը մեզ երբէք չի զարմացնում, այլ զարմանալի կլինէր հակառակը։ Ի՞նչպէս կարող է մի ժողովրդի մէջ առաջանալ գրադարան, կազմակերպւել ընթերցանութեան գործը, երբ նոյն այդ ժողովուրդը չունի տարրական ուսումնարաններ, չկան ազատ կարդացողներ և մի շարք անանպատ պայմաններ են տիրում։

Մարդասէր շարժումի նշաններ է ցոյց տալիս։ Դեռ ան-

ցեալում Մարդան ունեցել է «կրթական» ընկերութիւն և իր գրադարան-ընթերցարանի միջոցով տարածում էր ընթերցանութիւն, բայց յետոյ փակւում է գրադարանը։ Մի քանի ընթերցասէր անձինք, զգալով այդ պակասը, 1802 թւին, կազմակերպեցին «Ալ. Երիցեան» գրադարանը, որը միաժամանակ նպատակ է դրել ընթերցանութիւն տարածել նաև Սօսդ-բուլաղ, Միանդուաբ գաւառամասերում։ Ոչ միայն այդ, նա մտադիր է գրագիտութիւն էլ տարածել այդ թրքախօս և քրդախօս հայերի մէջ։

Գրադարաններ կան նոյնպէս Խոյ և Արդաբիլ քաղաքներում և Թաւրիզի մօտ գտնւող Մուժամբար գիւղում։ Ընդարձակ Ղարադաղը, ուր կայ 7,000 բնակիչ, չունի համարեա և ոչ մի գրադարան։ Համարեա եմ ասում, որովհետև այս կամ այն գիւղում երբեմն կազմելու նշաններ են երևում, Այնտեղ չէ տարածւում և՛ ոչ մէկ պարբերական հրատարակութիւն։

ՊԱՐՍԿԱՀԱՅԵՐԻ ԹԻՎԸ

Աթոռական Թեմում	տուն	բնակիչ
Թաւրիզում և իր շրջակայ գիւղերում . .	948	6,000
Մարագա քաղաքում	100	600
Արդաբիլ քաղաքում և այլն	40	260
Ղարադաղ գաւառում	1199	7000
Սալմաստ գաւառում	1916	10,250
Ուրմի » »	1000	5600
Խոյ գաւառում և Նախտավկայ վանքի գիւղում	289	1490
Մակուի խանութիան մէջ	180	1000
Սուլդուզ և Միանդուաբ գաւառներ. և շրջակ.	282	1600
Ընդամենը	5,954	33,800

Պարսկա-Հնդկաստանի Թեմում	տուն	բնակիչ
Թեհրանում և իր շրջակայ գիւղերում . .	410	2200
Նոր-Ջուղայում և Ղազբինում	564	3000
Համադանում և կից Շաւարին գիւղում .	140	750
Բուշիր և Ինգէլի քաղաքներում	122	650
Շիրազ, Բուշիր, Բալֆրուշ, Մեշեդիսար և ն.	40	200
Փերիա գաւառում	1500	8000
Զնոր-մնալում	800	4300
Բուրվարի գաւառում	630	3400
Գեամարա »	530	2800
Գեաբիշա »	460	2400
Գեաղաղ »	450	2300
Ընդամենը	5646	30,000
Պարսկահայերը	11,600	63,800

II ՄԱՍ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

ԵՒ

ԹՈՒՐՔԵՐԻ ՄԱՍԻՆ ԵՂԱԾ ՑՕԴԻԱԾՆԵՐԸ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

I.

ԲՆԱԿԱՆ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՀԱՑ ԱՐԴԻՒՆԱԲԵՐՈՂՆԵՐ

Պարսկաստանի հողը ընդհանրապէս պտղաբեր է, չհաշուած նրա մնապատային բաժինը։ Այս երկիրը բնական բերքերով հարուստ է և այդ բնական հարստութիւնները բազմազան են։

Բովանդակ Ռուսաստանին ստրգա և նուշ մատակարարողը համարեա միայն Պարսկաստանն է։ Ահագին քանակութիւն ստրգայի տականներ բուժ։ Ուրմիի իր տարեկան տալիս պուդ ստրգա։ Նուշ, որ Ուրմիի տուքիւնը հաստիչ ստիճաններից էր և՛ անթէև յորդ և անները մի յայտնի փշացրին և արտով իջաւ։ դիւնաբերութիւնը նշանաւոր տեղ ունի, Ղօչանը, գան իր շրջան և տալիս են ամ-

Հրեուհի

միայն Ատրպատ է արդիւնաբերշրջականներով է մօտ մի միլիոն Տարիներ են լիստրգայի առանում է ապշեցուրի։ Այդ տարիներից 1904 թիւը, ընդհատ անձրևքանակութիւն ժէքը զգալի կերՍտրգայի արթեան կողմից են բռնում Ղազբինարը Մարտակայքով և այլն, ուստ բերբ։

Հարուստ է Պարսկաստանը նաև չոր մրգերով, ինչպէս և բրինձով։ Ամեն տարի մի քանի միլիոն պուդ միայն նուշ է արտահանուում, ի հարկէ իր բոլոր տեսակներով, նոյնքան, դեռ էլ աւելի քանակութիւն տալիս է բրինձ։ Եւ պէտք է նկատել, որ

Պարսկաստանի նուշը, ինչպէս և սարդան շատ գովւած են և ընտիր տեսակի են։ Նուշ տալիս են Պարսկաստանի հաւարեա բոլոր կողմերը, ինչպէս Թաւրիզ, Բինաբ, Ղօչան, Ղարաբաղը (Ուրմիի մօտ), Մարաղա և այլն։ Այդ նոյն քաղաքները արդիւնաբերում են նոյնպէս բրինձ, նոյնպէս Ռաշտը, Սօուղ-բուլաղը, Ուրմին։

Բամբակի, բրդի և մետաքսի արդիւնաբերութիւնն էլ պակաս նշանաւոր տեղ չի բռնում Պարսկաստանում։ Այդ կողմից ամենագլխաւոր և յայտնի վայրերն են Խորասանը և ընդարձակ Մազանդարանը։ Բամբակի բերքի իր սկզբնական արտահանութիւնը և մշակութիւնը շատ սահմանափակ է եղել, միայն վերջին տաս տարիները, այն էլ շնորհիւ մեծ մասով հայ արդիւնաբերողների, բամբակի արտահանութիւնը աւելի մեծ և լայն ծաւալ ստացաւ։ Անցեալ 1901 թւին միայն Խորասանի Նիշապուր և Սարդւար քաղաքներից արտահանւել է մօտ 300,000 պուդ բամբակ։ Թէև Խորասանի բամբակը իր որակով և տեսակով չի կարող համեմատւել Երևանեան նահանգի բամբակի հետ, բայց, եթէ վերացուեն խանգարող պայմանները, այնքան էլ ստոր չէ։ Այդ խանգարող պատճառները թէև շատ են, բայց գլխաւորը երկուսն են։ Առաջինն այն է, որ տեղական կառավարութիւնը ժամանակին չթոյլատրելով քաղել, անձրևները յայտնի չափով փչացնում են. և երկրորդ, բամբակի մշակութիւնը Իրանի երկրում կատարւում է բոլորովին նահապետական ձևով։ Ո՞վ պիտի աշխատի վերացնել այդ խանգարող արգելքները. կառավարութիւնը զբաղւելու տրամադրութիւն ցոյց չի տալիս. իսկ արդիւնաբերողներն էլ, մի նշանաւոր մասը կազմում են հայերը, դեռ շօշափելի և գրական ձեռնարկութիւն չեն արել։ Հապա ՞ումն է վերապահւած այդ դերը. դրա մասին յետոյ երկար կըխօսենք։

Այս բոլորից պարզւեց թէ որքան հարուստ է Պարսկաստանը բերքերով և որքան պտղաբեր է նրա հողը։

Պարսկաստանը ունի նոյնպէս բնական, հանքային հարստութիւններ, որոնք սփռւած են նրա ամբողջ տարածութեան վրայ։ Ուրմիոյ լիճը ներկայացնում է ադի մի անսպառ աղբիւր, որ խելացի շահագործման դէպքում կըտայ ահագին հարստութիւն։ Կան նոյնպէս ադի հանքեր, ինչպէս Խոյի ճանապարհի վրայ գտնւող ադէ բլուրը։ Ղալաղաղը ծածկող լեռնային ցանցերը պարունակում են իրենց մէջ հանքային մեծ հարստութիւն, ինչպէս երկաթ, պղինձ, քարածուխ, կապար, արծաթ։ Իսկ այդ ամբողջ լեռնացանցերը, ինչպէս և Մազանդարանի շրջակայքը համարեա ծածկւած են խիտ անտառնե-

ջով։ Էլբրուսը հարուստ է լաւ քարածուխով և ընտիր փիրուզայով։ Վերջերս յայտնի եղաւ, որ Թաւրիզի մօտ գտնուած լեռներումն էլ երևացել է քարածուխի հանք։ Դեռ որքան հանքային հարստութիւններ կան, որոնք թաղուած են երկրի խորը ծալքերի մէջ և ճեռացել անմշակ, քընած դրութեան մէջ։ Երկրի խորքերում թաղուած և կառավարութեանը հատար անյայտ հարստութիւններից էր նաև նաւթը։ Միմիայն վերջերս պարզուեց, որ Պարսկաստանը հարուստ նաւթահանքեր ունի, այդ էլ պարտական ենք Եւրոպացիների հետազօտութիւններին։ Այդ նաւթահանքերը գտնուում են Պարսից ծոցին կից՝ Արաբստան և Խուժաստան նահանգներում և Լաուրիստանում, որը կից է Թիւրքիայի սահմանին և Բաղդատին մօտ։ Պարսկաստանի այդ մասի նաւթը այնքան առատ է, այնպիսի յուսալի ապագայ է խոստանում նրա շահագործութիւնը, որ գրաւել է Անգլիայի նշանաւոր և խոշոր ընկերութիւնների յուրջ ուշադրութիւնը։

Ահա որքան հարուստ է Պարսկաստանը իր բնական բերքերով և հանքերով։ Բայց ինչ չափով շահագործուում են այդ հարստութիւնները քնիկ ժողովրդի և կառավարութեան կողմից։ Մի հարց, որի պատասխանը շատ անմխիթար է։

Պարսկահայ վաճառականների ուշադրութիւնը գրաւել է գլխաւորապէս ստրգան, նուշը, մասամբ նաև բամբակը։ Եւ իսկապէս հայ խոշոր արդիւնաբերողները զբաղուած են այդ հում նիւթերի արտահանութեամբ։ Հայերը թէև չունեն խոշոր կապիտալներ, բայց յամենայն դէպս մեծ քանակութեամբ ստրգա, և չոր մրգեր և բամբակ են արտահանում Արտասահման, գլխաւորապէս Ռուսաստան։ Հազիւ տասնհինգ տարի լինի, որ հայերը առանձին թափով նետուեցին այդ ասպարէզը և սկսեցին մեծ ձեռնարկութիւններ։ Մի քանի տարուայ փայլուն աջողութիւնը շատերին շլացրեց և գրաւեց առևտրական ասպարէզը։ Շատ էր գրաւիչ այդ գործը և փայլուն էր երևում նրա ապագան։ Արհեստաւորները մէկիկ-մէկիկ թողնում են իրենց արհեստները և յուսով նետուում առևտրի գիրկը, անդամակցում այս կամ այն ընկերութեան կամ գործաւորի պաշտօն ստանձնում։

Արտակարգ արագութեամբ, մէկը միւսի յետևից երևան են գալիս մանր և խոշոր ընկերակցութիւններ, որոնք բացառապէս զբաղուում են հում, անմշակ նիւթերի արտահանութեամբ։ Այդ ընկերութիւններից և վաճառական տների շարքում ամենառաջին և նշանաւոր տեղը բռնում է է «Եղ. Թումանեանների» վաճառատունը, որը առհասարակ մեծ վստահութիւն է վայե-

լում Պարսկաստանում իրրև հարուստ և ապահով առևտրական տուն։ Պակաս նշանաւոր չէին «Աբամեան» և «Սեան» ընկերութիւնները, որոնք ահագին շրջանառութիւն ունէին։ Կազմակերպուում են նաև «Արարատ», «Արաքս», «Հայկազեան», «Թուրան» և այլ մեծ ու մանր ընկերութիւններ։ Բացի այդ ընկերակցութիւններից, անաշակ նիւթերի արտահանութեամբ զբաղուում են նոյնպէս վաճառականական տներ, ինչպէս «Եղբ. Արզումանեան», «Եղ. Աֆթանդիլեան», «Եղ. Մանասէրեան» և ուրիշները, որոնք գուցէ աւելի են արտահանում, քան այդ ընկերակցութիւններից մի քանիսը։ Երևոյթը շատ էր ուրախալի։ Իսկապէս ցանկալի է, որ առհասարակ ընկերակցութիւնները կազմակերպելու ոգին, որքան կարելի է, լայն տարածի պարսկահայերի կեանքում։ Այդ ոգին և ժամանակակից պահանջներին համեմատ կրթութիւնը միայն կարող է խելացի հիմքերի վրայ դնել պարսկահայերի տնտեսական գործունէութիւնը։ Բայց գործը մնայուն և յարաճուն դարձնելու համար, անհրաժեշտ է նոյն այդ գործը դնել խելացի և հաստատուն հիմունքների վրայ։ Բայց ընկերակցութիւնների նշանաւոր մասի գործունէութիւնը չեն համապատասխանում այդ պահանջներին։ Եւ դրա պերճախօս փաստը կարող է ծառայել անցեալ 1900—1901 տարուայ ընդհանուր առևտրական կրիզիսը, որը ազդեց բովանդակ Պարսկաստանի վրայ, այդ ուժեղ և աւերող հարուածին ենթարկեցին համարեա բոլոր հայ արդիւնաբերող ընկերակցութիւնները, շատ աննշան բացառութեամբ։

Այդ խիստ և ընդհանուր կրիզիսի պատճառների շարքում նշանակալից տեղ են բռնում մի քանիսը։

Երախուսած անցեալ տարիների արտակարգ յաջողութիւններից, առևտրական տները 1900—1901 շրջանում աւելի մեծ թափով սկսում են գործը։ Դրանցից ամեն մէկը ձգտում է աւելի մեծ քանակութեամբ ձեռք բերել արտահանուող նիւթերից և բնականաբար բարձրանում է ապրանքների սովորական գինը։ Շատ դէպքում էլ հէնց իրենք արդիւնաբերողներն են արհեստական ձևով բարձրացնում գները։ Առևտուրը ստանում է շահագիտական, սպեկուլիատիւ բնաւորութիւն։ Հետեւաբար հանւում է արևտրական շուկան անհամեմատ մեծ քանակութիւն հում նիւթերի, բայց սպառողների պահանջը նոյնն է։ Բնականաբար ապրանքի արժէքը իջնում է, այն էլ շատ զգալի չափով։ Ցանկարծ բամբակի գինը 9 ր. 50 կոպէկից իջնում է, 6 ր. 8 կոպէկի. այդ համեմատութեամբ իջնում է նաև սարգայի արժէքը։ Ուստի հէնց այդ գներով էլ ծախում են արտահանուած ապրանքը, իսկ շատերը, գլխաւորապէս մեծ ըն-

կերակցութիւնները, երկար սպասում են, յոյս ունենալով, որ գները նորից կբարձրանան։ Սպասում են երկար, բայց ոչ միայն չի բարձրանում արժէքը, այլ աւելի ու աւելի իջնում։ Մի կողմից այս հանգամանքը, միւս կողմից մասնաճիւղերի անընդհատ կրկնուող պահանջները և ծախքերը, դրանց վրայ աւելանալով և այն, որ հեռագիրն սնանում, փչանում է սամպան, գլխաւորապէս Ղօշանի սարքան,—Այդ բոլորը ստիպում են շատերին վաճառել արտահանած ապրանքը համարեա կէս գնի։ Հարուածը շատ խիստ էր, իսկ տպաւորութիւնը ճնշող, սարսափեցնող։

Կրիզիսի պատճառների շարքում նշանակալից տեղ է բռնում և այն, որ ընկերակցութիւնները զուրկ են խոշոր հիմնական կապիտալից։ Եւ յանկարծ գրամագլխից աւելի գումար գնում են գործառնութեան մէջ, հետևաբար վճարում վերցրած գումարների համար ահագին տոկոս։ Կրիզիսի և սնանկութիւնների հարցում պակաս նշանաւոր տեղ չեն բռնում ռուս-ճապոնական պատերազմը և խօլերան, ի հարկէ, 1904—5 թուերին. երկար ժամանակ ուղղակի առևտուրը դադարել էր և կանգ առել։ Արտահանած ահագին ապրանքը ամբարուած էլ մնացել էր։ Մուշտարիներ չկային։

Բայց սրանով չեն վերջանում սնանկութիւնների պատճառները։ Հայ արդիւնաբերողը անհոգատես և անպատրաստ այդ գործում, Տգիտութիւնը պակաս նշանաւոր տեղ չի բռնում։ Հայ վաճառականը առանց լուրջ և խորը մտածելու առանց իմանալու շուկաների գները և պահանջը, բախտին է յանձնում իր ամբողջ ունեցածը։ Եւ իսկապէս հայ վաճառականի առևտուրը հիմնուած է միմիայն «Բախտի» վրայ։ «Բախտի» բերմամբ նա մի տարի շահում է, իսկ միւս տարեշրջանում էլի նոյն «բախտի» բերմունքով մնաս կրում։

Այն ինչ դրանց հանդէպ կանգնած են ուրիշ շահագործողներ—Եւրոպացի, որոնք հրապարակ են իջնում աւելի լուրջ պատրաստութեամբ, տեղեակ առևտրական շուկաներին և խոշոր կապիտալներով։ Իսկ դրանց դէմ անկարող են մրցել հայ վաճառականները, հետևապէս առևտրի գլխաւոր մասը անցնում է նրանց ձեռքը և տիրում են կամաց-կամաց բոլոր շուկաներին։

Այս վերոյիշեալ պատճառների վրայ պիտի աւելացնել և այն, որ ընկերակցութիւնների վարկը բոլորովին ընկնում է, նոյնիսկ մեծ տոկոսներով փող չեն տալիս։ Սնանկութիւնները դառնում են անխուսափելի։ 1900 թուականին յաջորդեցին Պարսկաստանի վաճառականութեան համար չորս անաջող տարեշրջաններ և իրար հետևից սնանկացան մի շարքառևտրա-

կան ընկերութիւններ և տներ,—«Արաքս», «Սևան», «Իրան», «Եղբ. Միքայէլեաններ», «Եղբ. Տէր-Գրիգորեաններ», «Բուրան» և «Արամեան», և այլ մանր առևտրական տներ։

Այս առևտրական ընկերակցութիւնները, մանաւանդ «Արամեանը» և «Սևանը», վարում էին ընդարձակ առևտուր Պարսկաստանում և արտահանում մեծ քանակութեամբ անմաքրակ նիւթեր։ Այդ երկու ընկերութիւններն էլ բռնում էին Պարսկաստանի հայ վաճառականների մէջ պատկառելի տեղ թէ իրենց գործերի ընդարձակութիւնով և թէ դիրքով։

Բոլոր այդ առևտրական տները և ընկերակցութիւնները ունէին մի շարք ճիւղեր Պարսկաստանի նշանաւոր վայրերում և Ռուսաստանի կարևոր քաղաքներում։ Այդ ընկերութիւնների մէջ աշխատում էին սուար թուով գործաւորներ, որոնք սընանկութիւնների և առևտրի դադարման պատճառով դուրս մնացին։ Շատերը դրանցից, որոնք անցեալ տարիների յաջող առևտրից խրախուսւած թողել էին իրենց արհեստը և նետուել առևտրական ասպարէզը՝ էլի սկսում են իրենց նախկին ազատով գործը։

Այս երևոյթը—գործաւորների պարապութիւնը, գրաւել է շատերի ուշադրութիւնը և ձգտում են, հնարաւոր եղածին չափ, դիւրութիւն տալ գործակատարներին։ Ատրպատականի կեանքում երևացին նաև «ինայոդական» ընկերութիւններ որոնք նպատակ են դրած օգնել գործակատարներին և արհեստաւորներին կեանքի դժուար բոպէներում։ Օրինակ, գործ ըսկսելու համար։ Եթէ արհեստաւորը կամ գործակատարը հիւանդ է, անկարող է աշխատել և աշխատող ուրիշ ձեռք չկայ, ընկերութիւնը պարտաւորւում է խնամել նրան, օգնութեան հասնել, իսկ անդամը պէտք է նոյն գումարը հասցնի ընկերութեանը՝ առողջանալուց յետոյ, երբ աշխատանք կըսկսի։ Մի խօսքով, ընկերութիւնը պարտք է զգում օգնութեան հասնել աջակցութեան կարօտ ամեն մի անդամին, լինի նա արհեստաւոր թէ գործակատար։

Այդ ինայոդական և օգնող ընկերակցութիւնների մէջ նշանաւոր տեղ է բռնում «Արարատը», որը համեմատաբար աւելի շուտ է կազմակերպւած և հաստատ հիմունքների վրայ դրւած։

Ցանկալի է, կրկնում ենք նորէն, որ առհասարակ ընկերակցութիւններ կազմակերպելու ոգին լայն տարածւի Ատրպատականի հայերի կեանքում, ի հարկէ դրւած խելացի և վընասուն հիմքերի վրայ։ Դրանով միայն հայ արդիւնաբերողը, հայ վաճառականը հնարաւորութիւն կունենայ մրցել գէթ որոշ չափ Եւրոպացի արդիւնաբերողների դէմ։

II.

ՕՏԱՐ ԱՐԴԻՒՆԱԲԵՐՈՂՆԵՐ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Հայ արդիւնաբերողները, ինչպէս տեսանք, արտահանում են միմիայն հում, անմշակ նիւթեր, չհաշուած «Ծղր. Թուրանեանների» վաճառականական առունը, որը զբաղուում է նաև արծաթի առևտրով։ Հետևապէս հայ առևտրականները կատարում են միմիայն միջնորդի դեր։ Նոյն այդ դերն են կատարում և պարսիկ արդիւնաբերողները։ Եւ այդ երևոյթը շատ հասկանալի է, քանի որ բովանդակ Պարսկաստանը չունի և՛ ոչ մի գործարան, որ անմշակ նիւթից ապրանք պատրաստի, չհաշուած դորգեգործարանը, որը այնքան էլ զարգացած չէ։

Օտար կապիտալիստ գործարանատէրը ստանալով հում, անմշակ նիւթերը, տեխնիքական ինդուստրիայով արդիւնաբերում, մշակում, ապրանք դարձնում և կրկին ներմուծում է Պարսկաստան, նորէն Պարսկաստանի հարստութիւնը ծախսում իրեն վրայ՝ ի հարկէ թանգ գնով. ինքը՝ Պարսկաստանի բնիկ ժողովուրդը լինելով անտեսապէս թոյլ և մտաւորապէս տգէտ, բնականաբար ամբողջ արտաքին և ներքին մեծ ձեռնարկութիւնները կենդրոնանում է օտարի—եւրոպացու ձեռքում և վերջինս ամենևին չի խնայում իր մեծաքանակ կապիտալով շահագործել Պարսկաստանի պտղաբեր հողը, բնական և հանքային հարստութիւնները։

Այժմ Պարսկաստանի շուկաներում ծախսում են գրեթէ միմիայն եւրոպական ապրանքներ։ Մանր արդիւնագործութիւնը տեղի է տալիս և վերանում. Եւրոպական տէրութիւններից իւրաքանչիւրը ձգտում է աւելի հեղինակաւոր դիրք գրաւել և լայն չափերով տարածել իր ապրանքը և մրցել միւս շահագրգռող կառավարութիւնների դէմ։ Ասացինք, որ եւրոպացին Պարսկաստանի հում նիւթը տեղափոխում է իր երկիրը, մշակում, ապրանք դարձնում և էլի յետ բերում։ Այդ եւրոպացու յաջողուել գործն է։ Հաւանօրէն չի անցնելու երկար տարիներ, որ նոյն այդ օտարը՝ եւրոպացին հում, ու անմշակ նիւթերից հէնց տեղնուտեղը, Իրանի հողի վրայ կարտադրի՝ տեխնիկական կատարելագործուած միջոցներով անհրաժեշտ ապրանքներ։ Այժմեանից արդէն դրա նշանները երևում են։ Ահա Զիգլէր գերմանական առևտրական ընկերութիւնը։ Այս ընկերութիւնը չբաւականանալով երկրորդ և երրորդ ձեռքերից գործեր առնելով 30—35 տարի ուղարկում է

առանձին ներկայացուցիչներ, դրանց ձեռքով է գնում գործերը և ճանապարհում Եւրոպա։ Ընկերությունը դրանով էլ չի բաւականանում։ Լաւ ուսումնասիրելուց և տեղական պայմանների հետ ծանօթանալուց յետոյ ընկերությունը Գեաղազ գաւառի Սուլթանաբաթ ասանում մի գործարան, որ այսօր առաջինն է ամբողջ Պարսկաստանում։ Գործը, խօսք չկայ, կանոնաւոր հիմքերի վրայ է դրուած և լաւ կազմակերպուած։ Արդէն 25 տարի է, որ գոյութիւն ունի այդ գործարանը և հետզհետէ կատարելագործւում է արդիւնաբերութեան այս ճիւղը։

Վերջին տարին Ի. Կ. Պօղոսեանցի ակցիոներական ընկերությունը առևտրական ճիւղեր է բացել Թորաասանում և այսօր նահանգի երկու արդիւնաշատ քաղաքներում ունի եւրոպական վերջին տիպի կատարելագործուած մեքենաներ, որոնցով զուտած բամբակը շատ աւելի թանգ է ծախւում, քան նահապետական ձևով պատրաստուածը։

Դրանցից զատ, այսօր Պարսկաստանի համարեա բոլոր նշանաւոր քաղաքներում, ինչպէս Թաւրիզ, Թէհրան, Ռաշտ, Բուշիր, Ուրմի և այլն—կարելի է ցոյց տալ եւրոպական առևտրական ճիւղեր կամ ագենտներ՝ Անգլիայի, Ֆրանսիայի, յոյն և այլն և այլն, և որոնք մեծ աջողութեամբ արտահանում են անմշակ նիւթեր և ներմուծում պատրաստի ապրանք։ Եւրոպական շատ տէրութիւններ աչք են տնկել Պարսկաստանի վրայ, շատերի ախորժակը գրգռել է և գրգռում է Իրանի պըտղաբեր հողը և բնական հարստութիւնները, բայց շնորհիւ որոշ պայմանների՝ ասպարէզում մնացել են իրար դէմառդէմ երկու զօրեղ տէրութիւններ— Անգլիա և Ռուսաստան։

Ռուսաստանը վերջին տասը-քսան տարում շատ զօրեղ կերպով առաջ տարաւ իր շահերը Իրանի հողի վրայ և անգլիացիները ասես սոսկ հանդիսատես էին Ռուսաստանի այդ առաջխաղացութեան հանդէպ։ Ռուսաստանը իր կեսր նպատակն է դրել տնտեսապէս և քաղաքականապէս նուաճել և տիրել ամբողջ Պարսկական երկիրը։ Եւ 1828 թ. Թուրքմենչայի առևտրական դաշնագրի տապալումը, նոր դաշնագրի երևան գալը ցոյց է տալիս, որ Ռուսաստանը ամուր կերպով կանգնած է այդ տընտեսական նուաճման հողի վրայ։ Այդ դաշնագրի մասին մանրամասն կըխօսենք մի քիչ գլխում.

Բացի այդ դաշնագրից, ուր ասեն բան փոխել է յօգուտ Ռուսաստանի, ինչպէս յայտնի է, մինչև մօտ ութսունական թուականները Եւրոպական ապրանքները ներմուծւում էին Պարսկաստան Ռուսաստանի վրայով, տրանզիտով։ Ռուսաստանի շահերի տեսակէտից անհրաժեշտ էր փակել տրանզիտը Եւրոպա-

յի առաջ։ Եւ այդպէս էլ արեց, թողնելով միայն տրանզիտ Պարսկաստանի արտադրութիւնների համար՝ արտահանելու զանազան երկրներ։ Այնպէս որ մօտ ութսունական թւականներից սկսած եւրոպական ապրանքները ներմուծւում են Պարսկաստան շատ երկար ճանապարհով, գլխաւորապէս Թուրքիայի վրայով, Տրապիզոն-Էրզրում-Մակու-Խոյ-Թաւրիզ՝ տրանզիտով։ Բացի այդ եւրոպական ապրանքները մտցնում են նաև Բաղտադի ճանապարհով, Պարսից ծոցի նաւահանգիստներով և այլն։ Այսպէս ահա, տեղափոխութեան այդ աննպաստ պայմանի շնորհիւ եւրոպական ապրանքների արժէքը անհամեմատ բարձրանում է պարսկական հողի վրայ, իսկ Ռուսաստանը, որ իր ապրանքները ներմուծում է սահմանագլխի բոլոր կէտերով Ջուլֆա, Շայթախտ, Էնզէլի, Աստարա և այլն—հնարաւորութիւն է ունենում մրցել եւրոպական ապրանքների դէմ։

Կայ և մի ուրիշ աննպաստ հանգամանք, այն, որ եւրոպական ապրանքները շատ ուշ են հասնում տեղ։ Երբեմն ամբողջ տարի է տևում, բայց սովորական ժամանակամիջոցը 8—9 ամիսն է։ Չնայած այդ խիստ, նշանակալից արգելքներին, էլի եւրոպական ապրանքները տարածւում են Պարսկաստանում. հէնց նոյնիսկ հիւսիսային Պարսկաստանում, մինչև անգամ ռուսական ապրանքի առաջն առնում։ Այդ էլ եւրոպական կատարելագործած ֆաբրիկանների շնորհով, որոնք անհամեմատ աժան են բաց թողնում ապրանքները, քան ռուսականը։ Վերջին տարիներս է միայն, որ ռուսական շաքարն է տիրապետողը հիւսիսային Պարսկաստանում, ընդհանրապէս ամբողջ երկրում։ Առաջ տարածւում էր համարեա միմիայն ֆրանսիական շաքարը։ Այժմ էլ, եթէ տիրապետողն է ռուսական շաքարը, շնորհիւ կառավարութեան պրեմիաների, որ տալիս է արտահանողներին։ Առանց այդ պրեմիաների երբէք չի կարող ռուսական շաքարը մրցել ֆրանսիականի դէմ։ Դրան ապացոյց կարող է ծառայել այն, որ ռուսական նոյն շաքարը, որը Գովկասում ծախւում է 16—18 կոպէկ, այստեղ արժէ 12—13 կոպէկ, չնայած կայ տեղափոխութեան ծախս, մաքս և այլն։ Եւ եթէ վերացնի պրեմիայի սիստեմը, անպայման էլի ֆրանսիականը կլինի տիրապետողը.

Այժմ Պարսկաստանի առևտրական շուկաները հանում են գլխաւորապէս ռուսական և անգլիական ապրանքներ, մասամբ և ֆրանսիական և աւստրիական։ Այդ տէրութիւններն են, մասնաւորապէս Ռուսաստան և Անգլիա, որ շահագործում են Իրանի բնական հարստութիւնները։ Ցաւոտի չէ մեզ, թէ վերջին տարին ինչ չափով ապրանք է ներմուծել Եւրոպայից, որից կարո-

դանալինք իմանալ իւրաքանչիւր տէրութեան արտահանածը և ինչ է դրանցից գերակշռող տեղ բռնում։ Միայն լրագրութեան մէջ տուել է 1901 և 1902 թուականների ներմուծած ապրանքների մասին մանրամասնութիւններ։

Այդ երկու տարեշրջաններում Ռուսաստանից, Անգլիայից, Ֆրանսիայից, Հնդկաստանից, Գերմանիայից, Աւստրիայից, Բելգիկայից և այլն ներմուծուել է Պարսկաստան 55.000,000 թուման ապրանք, 1901 թ-ին 25,000,000 թուման, իսկ 1902 թ. 30,000,000։ Այնպէս որ ամեն մի բնակիչ ծախսել է, կամ տուել եւրոպացուն տարեկան մօտ 4 թուման, եթէ ազգաբնակութիւնը ընդունենք մօտաւորապէս 8 միլիոն։

Այդ 55,000,000 թուման ներմուծած ապրանքը ըստ տեսակների և երկրների վրայ բաժանուած է այսպէս։

1. Հացահատիկներ

	1901 թ.		1902 թ.	
Ռուսաստան	500,000	թուման	212,000	թուման.
Անգլիա	62,000	»	412,000	»
2. Նաւթ.				
Ռուսաստան	510000	»	293,000	»
3. արծաթ.				
Ռուսաստան	4,000,000	թուման	114,000	»
Անգլիա	230,000	»	1,835,000	»
4. շաքար.				
Ռուսաստան	4,901,000	»	5,270,000	»
Ֆրանսիա	725,000	»	850,000	»
Անգլիա	346,000	»	104,000	»
Աւստրիա	38,000	»	232,000	»
5. մանուֆակտուրա				
Անգլիա	4,6000,000	»	7,325,000	»
Ռուսաստանում.	1,752,000	»	3,735,000	»
6. մահուդեղէն				
Աւստրիա	496,000	»	550,000	»
Անգլիա	192,000	»	232 000	»
Ֆրանսիա	181,000	»	576,000	»
Ռուսաստան	120,000	»	78,000	»
7. մետաքսեղէն				
Ֆրանսիա	243,000	»	425,000	»
Անգլիա	95,000	»	65,000	»
Ռուսաստան	14,000	»	36,000	»
Աւստրիա	12,000	»	4,000	»

8. Հագուստեղէն

	1901 թ.		1902 թ.	
Ռուսաստան	2,900	թուման .	65,000	թուման.
Անգլիա,	36,000	» . . .	13,000	»

9. ատամնեղէն

Ռուսաստան	230,000	» . . .	246,000	»
Ֆրանսիա	49,000	» . . .	102,000	»
Անգլիա	22,000	» . . .	17,000	»

10. թէյ

Անգլիա	758,000	» . . .	992,000	»
Ռուսաստան	170,000	» . . .	40,000	»

Այսպէս ուրեմն, առաջ բերած թուերից երևում է, որ 1900—1901 տարեշրջանում ներմուծուած 250,000,000 թուման ապրանքից՝ Ռուսաստանը ներմուծել է 13,500,000 թուման, իսկ Անգլիան 7,500,000 թուման ապրանք։ 1901—1902 տարեշրջանի 300,000,000 թ. ապրանքից՝ Անգլիան ներմուծել է 120,000,000 թուման, Ռուսաստանը, 11,5000,000 թուման ապրանք։ Մնացած գումարի ապրանքը ներմուծուել է Ֆրանսիայից, Աւստրիայից, Գերմանիայից և այլ տէրութիւններից։ Մենք առաջ բերինք միայն մի քանի տէրութիւններից ներմուծուող ապրանքների մանրամասնութիւնները։

Այսպէս ահա, եւրոպացին իր ձեռքն է առել ամբողջ Պարսկաստանի տնտեսական կեանքի գործերակը, ամբողջ տընտեսական ոյժը, հետևապէս ամբողջ երկրի առևտրական վիճակը կախուած է օտարից, կենտրոնացած է օտարի ձեռքում, և այս պահուն տիրող, բնիկ տարրը իրականապէս դադարում է իր տան տէր դառնալուց, նա, կորցնելով իր կենսական յենակէտը, անկարող է յարատև գոյութիւն ունենալ, պէտք է ինքն իրեն տարրալուծի և տեղի տայ օտարին։ Եւ այդ ճանապարհի վրայ է կանգնած այժմեան Պարսկաստանը, հաւանօրէն այդ է լինելու նրա ապագան։

Այժմ խօսենք առանձնապէս Ռուսաստանի ազդեցութեան մասին, որով էլ աւելի ամբողջացած գաղափար կը կազմենք այդ երևոյթի, ինչպէս և Ռուսաստանի նուաճումների վերաբերմամբ թէ տնտեսապէս և թէ քաղաքականապէս։

III.

ՌՈՒՍԱՑ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ

Նոր չէ, որ Ռուսաստանը ուշադրութիւն է դարձնում Պարսկաստանի վրայ։ Դեռ դարեր առաջ նա ցգտել է տեղ բրո-

նել այդ երկրի մէջ, նաւահանգիստներ անել և զօրեղացնել իր դիրքը թէ քաղաքական և թէ տնտեսական տեսակէտներից։ Նոյն այդ ձգտումը շարունակւում է և այժմ աւելի ուժեղ և որոշակի կերպով։ Բայց անցեալում նաւահանգիստները կառաւարւում էին զէնքի միջոցով, իսկ այժմ խաղաղ ճանապարհով, տնտեսապէս։

Ռուսաստանը սկսեց առանձին ուշադրութիւն դարձնել Պարսկաստանի վրայ մանաւանդ վերջին տասը տարում և այդքան կարճ ժամանակամիջոցում շատ աչքի ընկնող աջողութիւններ ունեցաւ և ապագայի փառաւոր հեռանկարից ոգևորւած՝ այժմ աւելի ու աւելի ձգտում է դիրք գրաւել։ Հիւսիսային Պարսկաստանը, այսինքն ատրպատականի ընդարձակ նահանգը, ուր առաջ ազդեցիկ հեղինակութիւն վայելողը Անգլիան էր, այժմ գտնւում է համարեա բացարձակապէս Ռուսաստանի ազդեցութեան տակ։

Հիւսիսային Պարսկաստանում նա իր դիրքը ապահովելով՝ այժմ ձգտում է իր ոյժը տարածել ամբողջ Պարսկաստանում, առևտրական նաւահանգիստներ անել Իրանի ամբողջ երկրում։ Այդ նպատակին հասնելու համար նա մի կողմից աշխատում է բարեկամական յարաբերութիւն պահպանել իր հարևանի հետ, ուրախութեամբ խոշոր գումարներով պարտք է տալիս նրան և այլն։ Իր այդ հեռատես քաղաքականութեան արդիւնքը արդէն տեսնում է Ռուսիան։ Պարսկաստանը չը կարողացաւ 1903 թ. փետրուարի 1-ին (ն. տ.) վճարել սահմանուած գումարը՝ Ռուսիայից իր ստած փոխառութեան %-ը հանգցնելու համար, ուստի ռուսաց կառավարութիւնը կարգադրել է, որ սրանից յետոյ մաքսատների հասոյթները, որոնք բացառապէս դրւում են Պարսկաստանի պարտքի տոկոսը ծածկելու համար, ստանան Պարսկաստանի ռուսաց բանկը կամ նրա բաժանմունքները, իսկ ուր բանկ չը կայ, կըստանան յատուկ այդ նպատակով այնտեղ նշանակւած գործակալները։

Այս մի քանի տարուայ ընթացքում Ռուսաստանը այնպիսի հիմնարկութիւններ հիմնեց Պարսկաստանում և այնպիսի ձեռնարկութիւններ սկսեց, որոնք գալիս են աւելի ու աւելի առևտրական յարաբերութիւններ կանոնաւորելու և սերտ կապեր հաստատելու երկու հարևան երկրների մէջ։ Այդ հիմնարկութիւններն ու ձեռնարկութիւններն են՝ ռուսական փոխառու բանկը, ռուսաց ապահով. և ճանապարհ. հաղորդակց. ընկերութիւնը, խճուղի շինելը և այլն։

Ռուսաց բանկ հիմնեց Թաւրիզում 1901 թ-ին, որը կազմում է ռուսաց պետական բանկի մի ճիւղը։ Ռուսական բանկը ամեն կերպ աշխատում է արտօնութիւններ ու դիւրու-

թիւններ տալ թէ թուրք և թէ հայ վաճառականներին, նամանաւանդ նրանց, որոնք ռուսական ապրանք են ներմուծում։

Ռուսական բանկը ձգտում է վերացնել նաև մի աբգելք դա կուրսի փոփոխական դրութիւնն է։ Բանկը ձգտում է հաստատեցնել ռուսական ռուբլին պարսկական 5 դրանին. հէնց այդ նպատակով Պետերբուրգի պետական դրամատանը կտրում են պարսկական 5 դրանանոց արծաթ դրամներ, որի քաշը 61 գոլիայով ծանր է ռուսական ռուբլուց։ Այս նոր կտրուած դրամից Թաւրիզի ռուսական բանկը արդէն 60,000 թուական 1902 թուին մացրել է շրջանառութեան մէջ։ Եթէ բանկը կարողանայ հասնել իր նպատակին, կըստեղծուի վաճառականների համար մի շատ նպաստաւոր դրութիւն, և դրանով զգալի կերպով դարկ կըտրուի ռուսական ապրանքների աւելի լայն չափերով տարածելուն. մի խօսքով ռուս-պարսկական առևտրի համար շօշափելի դիւրութիւն կըստեղծուի։ Բայց պիտի խոստովանել, որ մինչև այժմ այդ անընդհատ դրութիւնը տիրում է, ոչնչով չի փոխուել։

Մեծ դարկ են տալիս ռուսական ապրանքների տարածելուն մանաւանդ «Надежда», «Росс. страх, транс.» ընկերութիւնները, որոնք ձգտում են ամեն դիւրութիւններ տալ վաճառականներին. վերադիր վճարով ընդունում են ապրանքներ Ռուսաստան ուղարկելու և կամ առանալու արտասահմանից։ Այս երկու ընկերութիւններն էլ մեծ քանակութեամբ շաքար են վաճառում Հիւսիսային Պարսկաստանում։

«Надежда» ընկերութիւնը, ինչպէս և միւս ընկերութիւնը, գլխաւորապէս գործում է Ատրպատականում, մասնաւորապէս ամբողջ Պարսկաստանում։ Ատրպատականի գրեթէ բոլոր կենդրոնական քաղաքներում այժմ «Надежда»-ն բաժանմունքներ ունի ինչպէս՝ Թաւրիզ, Արդաբիլ, Ուրմի, Մարազա և Սաուջ-բուլաղ և այլն։ Իսկ Պարսկաստանի միւս մասերից միայն Խորասանում ունի ագենտ, բացուելու են նաև ուրիշ վայրերում առանցին բաժանմունքներ։ «Надежда»-ն այս մի տարի է, ինչ սկսել է իր գործունէութիւնը Պարսկաստանում, բայց այդքան կարճ ժամանակամիջոցում շատ արագ կերպով տարածուեց, և մեծ շանսեր կան, որ շատ մօտիկ ապագայում յայտնի դարկ կըտայ ռուսական ազդեցութեանը, և ռուսական ապրանքները անագին քանակութեամբ կըներմուծուեն Պարսկաստան, գլխաւորապէս Հիւսիսային Պարսկաստան, կըտիրեն այդ մասի առևտրական շուկաները և միակ տէրը կըլինեն, առանց որևէ մրցակցի։

Ռուսաստանը աշխատում է նուաճել իր ապրանքներով

ամբողջ Պարսկաստանի առևտրական աշխարհը՝ չբաւականանալով միայն Ատրպատականի նահանգով։ Այժմ նոյնիսկ մի քանի խոշոր առևտրական ֆիրմաներ, օր. Морозовъ, յատկապէս մարդիկ են ուղարկում Պարսկաստան՝ ժողովրդի պէտքերը և ճաշակը ուսումնասիրելու համար։ Այժմ յանախ զանազան մանուֆակտուրային ընկերութեան ներկայացուցիչներ են գալիս Թաւրիզ ինչպէս և «Поповъ»-ի խոշոր ֆիրմայի ներկայացուցիչը՝ ռուսական ապրանքը այս երկրում տարածելու համար։ «Надежда»-ն էլ տեղափոխութեան ամեն տեսակ դիւրութիւններ է տալիս պարսիկ վաճառականներին, եթէ ի հարկէ նրանք վերը յիշած ֆիրմաների հետ պայմանաւորուեն։

Հէնց այժմ ռուսական մի քանի ապրանքներ, օրինակ նաւթը, շաքարը, չիթեղէնը, ահագին նւաճումներ են անում Պարսկաստանի, մանաւանդ Ատրպատականի շուկաներում։

Իսկ Ռուս-Պարսկական առևտրական նոր դաշնագիրը, որ հաստատուեց փետրուարին (1903), գալիս է էլ աւելի զօրեղացնելու ռուսաց ազդեցութիւնը Իրանի երկրում։

Այժմ մեր ձեռքի տակ ունենք տպագրուած նոր տարիֆների մէջ ամբողջ շարք շատ մանրամասն և որոշակի, որ արդէն գործադրութեան մէջ է մտել։ Ռուս-Պարսկական նոր դաշնագրով շատ բան է փոխուել մաքսի վերաբերմամբ, չափերի և ատիճանների իջնելը և բարձրանալը շատ զգալի է։ Եւ մի բան, որ շատ ակնյայտնի է և աչքի է ընկնում հէնց սկզբից, այդ այն է, որ գրեթէ ամեն ինչ փոխուել է յօգուտ Ռուսաստանի։

Այն ապրանքները, որոնցից մեծ քանակութեամբ ներմուծուում էին եւրոպական միւս պետութիւններից, օրինակ մետաքսէ գործուածքներ, թանդագին քարեր, ոսկէ և ուրիշ տեսակի ժամացոյցներ, թէյ, մահուդեղէններ և այլն, դրանց մաքսերի չափերը սարսափելի ատիճանի են հասել, որ երբէք ձեռնատու չէ դրանց առևտրով զբաղուել Պարսկաստանում, թէյի մաքսը, որից ահագին քանակութիւնով ներմուծուում էր ուրիշ երկրներից, գլխաւորապէս Հնդկաստանից առաջ 5% էր, այժմ բարձրացել է 50—75%-ի (սպիտակ և սև թէյ)։ Այն ինչ՝ նաւթը, շաքարը և այլն, որոնք բացառապէս ներմուծուում են Ռուսաստանից, դրանց մաքսը աւելի իջել է։ Նաւթի մաքսը, որ առաջ 5% էր, այժմ 3% է, շաքարը առաջ 5% էր, այժմ 3½ %։ Կոնեակ, լիքեօր, վիսկի, գլխարկներ և այլն, որոնք շատ անհնարին բացառութեամբ գալիս են Արևմտեան Եւրոպայից, դրանց համար վերցնում են ահագին մաքս, այն ինչ գարեջուր, ածուխ, ամեն տեսակի ալիւրներ, ձկնեղէն, բամբակէ գործուածք-

ներ, կենդանիներ, (ձի, էշ, ոչխար և այլն), կաւէ թրծած և չթրծած ամանեղէններ, որ բաւականին արտահանում է Ռուսաստանը ներմուծում են Պարսկաստան առանց մաքսի։

Այդպէս ուրեմն ներմուծման դէպքում ամեն կողմից շահը Ռուսաստանի կողմն է։ Նոյն բանը կայ և շատ նկատելի է Պարսկաստանից արտահանուած ապրանքների վերաբերմամբ։ Ցաւանի է, որ Պարսկաստանը մեծ քանակութեամբ հում նիւթեր է արտահանում, ինչպէս սաթը իր բոլոր տեսակներով, մասամբ բամբակ, և բացառապէս Ռուսաստան կամ Ռուսաստանի միջոցով ուրիշ երկրներ։ Այդ մրգեղէնների մաքսը թէև մի փոքր բարձրացել է, բայց այդ երբէք չէ խանգարելու աւելի մեծ քանակութեամբ արտահանելուն, որովհետև Պարսկաստանը դրանմաքս չէ վերջինչ չափով համարեա աւելացել է վրայ։ Արտավաճառականապրանքներ Նոյն ցել։ ապրանքները, շալ և այլն, ոհրաժեշտ են նին, արտապրանքներ առանց Ահա այս փոփոխել է սաստանի։ Զը

Մակուի Սարդարը

ցից այլևս ցնելու։ Առաջ վերցնում էր, Նոյնքան այժմ ուսաց մաքսի հանողների և ների համար չափն է Ցաւ։ Այն ինչ՝կան օրինակ՝ գորգ, բանք շատ ան։ Ռուսաստան հանում են մաքսի։ պէս ամեն ինչ յօգուտ Ռումոռանանք ասել, որ այդ նոր դաշնագրի 8-րդ յօդուածով իբրև չափ որոշում է Թաւրիզի բաթմանը, որ ունի 640 պարսից մէխալ կամ ռուսական 7,27 գրա։ 9-րդ յօդուածով որոշում է, որ քաշը լինելու է brutto։ Ուրեմն Ռուսաստանին աջողել է փոխել նաև մաքսային սիստեմը։ Առաջ սովորականն էր արժէքի մաքսը, բայց այժմ կշռոքի մաքսը։ Ուրիշ խօսքով այսուհետև ապրանքի մաքսը պէտք է վերցնեն ոչ թէ հատ ապրանքի իսկական արժէքի, այլ չափած կշռի։ Բայց ինչ շահ ունէր այդ խնդրում Սուսաստանը։ Ցաւանի է, որ Անգլիայից ներմուծող բամբակեղէն ապրանքի համար, շնորհիւ արժան արտ-

դիւնաբերութեան, լաւ որակի և արժան տեղափոխութեան, վճարուում էր անհամեմատ աւելի փոքր մաքս, այն ինչ Ռուսաստանը՝ շնորհիւ թանգ արդիւնաբերութեան և տեղափոխութեան նոյնքան ապրանքի համար վճարում էր աւելի մաքս։ Այնպէս որ այդ կարգադրութեամբ վերանում է Անգլիայի վայելած այդ առաւելութիւնը և Ռուսաստանը հնարաւորութիւն կունենայ մրցել նրա դէմ։

Վերև յիշուած յօդուածներից զատ, 4-րդ յօդուածով ոչնչացնում են ռահդարին, ալաֆխանան, դափանը և ուրիշ տեղական հարկերը [1])։ Այս տեղական տուրքերը վերանալով Պարսկաստանի համար՝ ի հարկէ, ֆինանսական տեսակէտից մի ասաքման ինչաս է, բայց մեծ չափով նպաստում է վաճառականութեան տարածման և տալիս է մի շարք յարմարութիւններ։

Ինչպէս տեսնում էք, ռուս-պարսկական այս նոր դաշնագրով լայն և ընդարձակ ասպարէզ է բացւում Իրանի երկրում ռուսական ապրանքների համար և տարէց տարի աւելի ու աւելի կընդլայնուեն և անագին նւաճումներ կանեն։ Միակ արգելքը, որ մեծ չափով խանգարում է աւելի տարածուելուն և կանոնաւոր յարաբերութիւններին, դա շնորհքով ճանապարհների կատարեալ բացակայութիւնն է։ Հաղորդակցութեան միջոցները դեռ հնագարեան վիճակի մէջ են, ձգւում են ձորերի առուների միջով, հանգամանք, որը խանգարում է կանոնաւոր երթևեկութեան և առևտրի հաղորդակցութեան զարգանալուն։ Այս հանգամանքը լուրջ կերպով գրաղեցնում է ռուսաց կառավարութեան, և եռանդուն կերպով աշխատում են վերացնել այդ արգելքը, և յայտնի չափով հասել են իրենց նպատակին։

Արդէն յայտնի է, որ Ռուսաստանը, վերջին մեծաքանակ փոխառնութեան միջոցին, պայման է կապել, որ Պարսկաստանը մինչև 1912 թիւը, բացի Ռուսաստանից, այլև ոչ մի տէրութեան չպէտք է կօնցեսիայ տայ երկրի մէջ երկաթուղու գծեր կառուցանելու։ Արդէն Ռուսաստանը ձեռնարկել է խճուղու շինելը Թաւրիզից Ջուլֆա։

Ռուսաստանի ձեռք բերած այս բոլոր արտօնութիւններին և յաջողութիւններին անշուշտ չէր կարող անտարբեր հանդիսատես լինել Անգլիան, որը ահագին շահեր ունի Պարսկաստանում։ Ռուս-Պարսկական առևտրական այդ դաշնագիրը ար-

---

1) Արտասահմանեան ապրանքը Պարսկաստան մտնելիս՝ ստանում բացի նշանակուած մաքսը սառանալուց, այդ ապրանքը Պարսկաստանի իւրաքանչիւր քաղաքից անցնելիս տալիս էին որոշ տուրք, որ կոչւում էր «ռահդարի» դափանն է մրգեղէնները կշռելու տուրք, ալաֆխանան՝ փայտի տուրք։

գէն մեծ յուզում առաջ բերաւ Անգլիայում։ Աշխատում էր ամեն կերպ, որ չեզօքացնեն այդ դաշնագիրը, պահեն իրենց վայելած արտօնութիւնները, բայց ապարդիւն անցաւ ամեն ինչ։ Բայց Անգլիան հեշտութեամբ չի կարող կուլ տալ այդ։ Օգտուելով Ռուս-Եապօնական պատերազմից, երբ Ռուսաստանի ամբողջ ուշադրութիւնը բեւեռուած է դրա վրայ, Անգլիան ձգտում է զօրեղացնել իր ազդեցութիւնը պարսկական հողի վրայ, մանաւանդ հարաւային Պարսկաստանում և նուաճումներ անել։

II.

Հիւսիսային Պարսկաստանի գլխաւոր քաղաքում, Թաւրիզում կան հիւպատոսներ եւրոպական շատ տէրութիւններից բայց դրանցից ամենաազդեցիկը անպայման ռուսաց հիւպատոսն է։ Ռուսաց կօնսուլատը առանձին դիրք և հնդինակութիւն է վայելում Ատրպատականի նահանգում։ Կօնսուլատի վրայ թուրքերը նայում են որպէս մի ամենաուժեղ և կարող հիմնարկութեան վրայ։ Ռուսաց կօնսուլատի հեղինակութիւնը աւելի բարձրացաւ և աւելի սկսեց տարածուել, ուժեղանալ նրա ազդեցութիւնը նամանաւանդ 1897 թւի գարնանը Թաւրիզում տեղի ունեցած ամբոխային ցոյցից յետոյ։ Թուրք խառնիճաղանճ խուժանը ելրդուած մի դէպքից՝ յարձակուում է հայաբնակ թաղերի վրայ և սկսում է կողոպտել, թալանել։ Հայերը պատսպարան են գտնում ռուսաց կօնսուլատում։ Ռուսաց կօնսուլ Պետրովի կարգադրութեամբ ռուսաց զօրքը պէտք է մտնէր Թաւրիզ քրիստոնեաներին պաշտպանելու համար, բայց խաղաղուում է ամբոխը, դադարում է թալանը, և, ինչպէս պատմում են ռուսաց զօրքը յետ է դառնում Արաքսի ափից։ Բոլոր կողոպտուած հայ ընտանիքները ռուսաց կօնսուլի կարգադրութեամբ մանրամասն ցուցակով ներկայացնում են իրանց կրած վնասները, և պ. Պետրովը առանց որևէ զիջումի ստանում է այդ պարսից կառավարութիւնից և յանձնում հայերին։ Այս դէպքը մեծ սարսափ է տարածել ընիկ ժողովրդի վրայ և հեշտութեամբ չէ մոռացուում։

Թէև առհասարակ օտարահպատակի գոյքը և կեանքը ապահով է Պարսկաստանում, բայց ռուսահպատակինը ուրիշ է։ Նա միանգամայն ազատ է այս երկրում, ազատ կողոպուտներից, հարստահարութիւններից, ազատ յարձակումներից։ Նրա մոտին անգամ ոչ ոք չէ յանդգնում դիպչել։ Իսկ եթէ մի բան է պատահում ռուսահպատակին, թէկուզ շատ աննշան վնաս է

կրում նա, խիստ պատժի է ենթարկվում շարագործը պարսից կառավարության կողմից՝ ի հարկէ՝ ռուսաց կենսուլատի պահանջի համաձայն. եթէ նրան ճանապարհորդելիս կողոպտում հեն աւազակները, նոյն տեղի, կամ մօտիկ տեղերի (ուր կատարել է այդ) ժողովուրդը տուժում է կրկնապատիկը, թէկուզ Աստրպատականի մի խուլ հեռաւոր անկիւնում, եթէ իմացուեց, առնում է կենսուլատը գեռ ինքից աւելի։ Քանի-քանի նման դէպքեր են պատահել։ Իսկ եթէ թուրքը յանդգնում է ձեռք բարձրացնել մի ռուսահպատակի վրայ, վնաս նրան, տուժում է նա շատ խիստ կերպով։

Հէնց այս հանգամանքն է, որ շատ հայեր, մանաւանդ թուրքեր ձգտում են, մեծագումարներով գրամ են ծախսում, որպէսզի աջողեցնեն ռուսահպատակութիւն ընդունել։ Շատ շատերի նախանձն է գրգռում ռուսահպատակ լինելը։ Անուշադիր լինելու համար ասենք, որ ռուս-եւրոպական պատերազմի անաջողութիւնները շատ ազդեցին և բոլորովին թուլացրին այդ բուռն և ընդհանուր տրամադրութիւնը։ Այլևս այնքան աչքի չի զարնում այդ մղումը. թուրքերը նոյնիսկ սառն աչքով են նայում ռուսների վրայ։

Առհասարակ Պարսկաստանի կեանքի բոլոր երևոյթների մէջ աչքի է զարնում Ռուսաստանի զօրեղ ազդեցութիւնը։ Ֆրանսերէն լեզուն առաջ տիրապետող օտար լեզուն էր հէնց նոյնիսկ Աստրպատականում, Թաւրիզում, այժմ համարեա թէ տեղի է տուել ռուսաց լեզուին։ Հետզհետէ ռուսաց լեզուն մի անհրաժեշտ տարր է դառնում Աստրպատականի կեանքի շատ երևոյթներում, մանաւանդ այս փոխադրական ընկերութիւնների, ռուսաց բանկերի հիմնելուց յետոյ։ Շատ շատերը ձգտում են այդ նոր հիմնարկութիւնների մէջ պաշտօններ ստանձնել, քանի որ տալիս են «չաղ» ռոճիկներ։ Իսկ այդ պաշտօնների համար անհրաժեշտ է գիտենալ ռուսաց լեզուն։ Ճնուղի են ձեռնարկել. հարկաւոր են պաշտօնեաներ, էլի պէտք է ռուսերէնը։ Մի խօսքով ստրպատականցին ամեն քայլափոխում զգում է ռուսերէնի անհրաժեշտութիւնը։ Այդ զգում են նաև կրթական հիմնարկութիւնները։

Թաւրիզի թէ «Աբամեան» և թէ «Հայկազեան-Թամարեան» դպրոցներում ռուսաց լեզուն համարում է որպէս առաջնակարգ առարկայ, վերջին դպրոցում սովորեցնում են նոյնիսկ աշակերտուհիներին։ Ռուսաց լեզուն կայ նաև բողոքականների ուսումնարանում։ Բացի դրանցից՝ թուրքաց «Գիմազիա» և «Լոզմանեան» դպրոցներում ուրիշ լեզուների շարքում կայ և ռուսաց լեզուն. Թաւրիզում բացել են նաև մասնաւոր դպրոց-

բոցներ, ուր անցնում են բացառապէս ռուսաց լեզու, աշակերտները՝ ի հարկէ, թուրքեր են։ Ինչպէս լսում ենք, մոտաբրութիւն կայ բանալ Թաւրիզում ռուսաց մի դպրոց բէալական դպրոցների ծրագրով... և որպէս թէ Ն. Բ. Թագաժառանգը խոստացել է իր բարոյական և նիւթական աջակցութիւնը այդ հիմնելիք դպրոցին։ Գաւառներում՝ էլ շատ լաւ զգում են այդ պահանջը։ Հիւսիսային Պարսկաստանը այնպէս ամուր է կապուած Ռուսաստանին, որ անհնարին է աչք փակել դրա առաջ։ Սալմաստ հայաշատ գաւառի դպրոցներում օտար լեզուներից միմիայն ռուսերէնն է ընդունուած պարտադիր առարկաների շարքում. և դա ունի իր խորը պատճառները։ Սալմաստի հայը ապրում է դրեթէ Ռուսաստանով։ Նրա հայ աղգաբնակութեան առնւազը 50—60%-ը միշտ պանդխտութեան մէջ է Ռուսաստանում։ Ահա ինչ... Եւ այս բոլորը ռուսաց լեզուի անհրաժեշտութիւն կազմող յայտնի փաստեր են։ Շնորհիւ այդ դպրոցների, նոյնպէս և այն յաճախակի յարաբերութիւնների, որ պարսկաստանցիները ունեն Ռուսաստանի հետ, ուրեմն թէ Թաւրիզում և թէ ուրիշ տեղերում լսւում են ռուսերէն ազաւաղուած խօսքեր, ինչպէս օրինակ՝ փադի սուդա, բլդրասքի. հուբ-ս փայդոս, փ-ասոլ և այլն։ Գործածութեան մէջ են՝ սաամովար, ստարեկա, եամշիկ, ցեպօչկա, խոզեային, կնուտ, ստոյկա, ռապօգ, պօլսապօժկա, չօբf, վոդկա և այլն։

Ամորեղջիներ վաճառող (կանդիտեր) խանութների թիւը Թաւրիզում արագ կերպով աճում է, նման բոլորովին ռուսականներին, և քանը այն է, որ խանութպանները ռուսահայի հետ աշխատում են ապառնառ ռուսերէն խօսել, որոնք ի հարկէ՝ եղել են Ռուսաստան։ Թաւրիզում եթէ տեսնէք փոքր ի շատէ կանոնաւոր և մաքուր խանութ, իմացէք, որ նրա տէրը անշուշտ եղել է Ռուսաստան։

Շատ քիչ վաճառականներ կըլինեն, որ տարին մէկ կամ մի քանի անգամ Կովկաս և Ռուսաստան չըգնան. նրանք միշտ էլ յարաբերութիւն ունեն Ռուսաստանի հետ։ Ոչ միայն վաճառականները, այլև հասարակ, ռայեա ժողովրդին էլ են ծանօթ Կովկասը և Ռուսաստանը։ Սա ստրպատականցու միակ պանդխտավայրն է։ Տարեկան մօտաւորապէս 30,000 հոգի պանդխտում են գլխաւորապէս Բագու, Շուշի, Թիֆլիս, Բաթում, Փոթի, Վլադիկաւկազ, Ռոստով Դոնի վրայ, Հաշտարխան և այլն։ Բացառութիւնների շարքում պիտի ընդունել այն հայերին, որոնք մէկ կամ երկու անգամ գնացած չլինեն Ռուսաստան։

Ահա ինչպիսի կապեր կան Ռուսաստանի և արևելքի այս երկրի մէջ։ Բացի այդ, շատ պարզ նկատելի է և՛ այս, որ

Ատրպատականի հայերը ռուսականին նման շատ անուններ ունեն, օրինակ՝ Սոնիա, Օլգա, Մանիա, Անիւտա, Իւան, Դիմիտրի և այլն։

Զարմանալի չէ անշուշտ, եթէ ասեմ, որ դուք ամեն քայլափոխում, հիւսիսային Պարսկաստանի ամեն մի անկիւնում նկատում էք Ռուսական ազդեցութիւնը։ Եւ պարսիկ կառավարութիւնը ասես միայն նրան է ընդունում. չուզենալով ճանաչել մի ուրիշ տէրութիւն։ Իր ազդեցութիւնը տարածելու և մրցելու համար Ուրմիում՝ ռուսաց կառավարութիւնը բաւական չհամարեց ռուս միսիոնարների գործունէութիւնը, 1903 թւին դարձրեց փոխ-հիւպատոսարան։

Անգլիայի աչքից չի վրիպում ի հարկէ այդ բոլորը և չի կարողանում հաշտուել այն մտքի հետ, որ Ատրպատականը միանգամայն ընկած է Ռուսաստանի ազդեցութեան տակ և անկարող է մրցել նրա դէմ։ Ռուս-եապոնական պատերազմից հրատարակելու օրից Անգլիան առանձին հետաքրքրութիւն է ցոյց տալիս և աշխատում է հեղինակութիւն ձեռք բերել և զօրեցնել իր դիրքը։ Աւելի ոյժ տուեց Թաւրիզի հիւպատոսարանին և ուժեղացրեց, հնդիկ զինուորներ դրկեց կոնսուլատի համար. նոյնը և Ուրմիում։ Ցոյի գեղեցիկում, անցեալ 1903 թւի աշնանը սպանեցին մի ամերիկացի միսիոնարի՝ իր ծառայի հետ։ Ամերիկահպատակների պաշտպանութիւնը Ատրպատականում յանձնուած է անգլիացիներին։ Անգլիայի հիւպատոսարանը յուրջ ուշադրութիւն դարձրեց դրա վրայ և ամուր բռնեց՝ խիստ պահանջներ դնելով։ Անգլիական կառավարութիւնը, եթէ չեմ սխալւում, նոյնիսկ սպառնաց նաւային ցոյցով՝ պարսից ծոցում։ Եւ վերջերս այդ. սպանութեան պատճառով ստացաւ 52,000 թուման տուգանք պարսից կառավարութիւնից։ Այս աննշան դէպք չէ. անշուշտ կազդի նրա ազդեցութեան զօրեղանալուն։ Բայց միայն այդքան. յամենայն դէպս անկարող կլինի մրցել Ռուսաստանի դէմ։ Հէնց միայն աշխարհագրական յարմարութիւնը բաւական է Ռուսաստանի համար։ Իսկ երբ երկաթուղին էլ կմիացնէ երկու հարևան պետութիւնները, այն ժամանակ Անգլիայի թևերը բոլորովին կըկոտրուեն, և զարմանալի չի լինիլ, եթէ Ատրպատականը դառնայ Երևանեան նահանգի շարունակութիւնը։

IV.

ԱՐՀԵՍՏԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ

Ատրպատականը, նոյնպէս և բովանդակ Պարսկաստանը չունի և ոչ մի ֆաբրիկա։ Արհեստագիտութիւնն այս երկ-

բում այնքան ծաղկած վիճակի մէջ չէ և պիտի ասել, որ առանձին ջանք և ուշադրութիւն էլ չի նկատուում այդ գործի բարգաւաճման և ծաղկեցնելու վերաբերմամբ։

Պարսկաստանի արհեստագիտութեան մէջ առաջին և նշանաւոր տեղը բռնում է գորգագործութիւնը։ Պարսկաստանը իր նուրբ և գեղեցիկ գորգերով յայտնի է և հռչակուած է համարեա ամբողջ աշխարհում։ Չափազանցութեան մէջ ընկած չենք լինի եթէ ասենք, որ Պարսկաստանի արտահանութեան մէջ միայն գորգն է մշակուած. պատրաստի ապրանք կան ի հարկէ նաև շալեր, մետաքսեղէններ, բայց դրանք նշանաւոր տեղ չեն բռնում։ Պարսկաստանը գրեթէ բոլոր եւրոպական տէրութիւններին գորգ է տալիս։ Գորգը, ինչպէս մետաքսեղէն ուրիշ նուրբ գործուածքները կազմում են ոչ միայն պարսիկի տան զարդը, այլ և ամեն մի եւրոպացու։ Եւրոպական տէրութիւնները, բացի այն որ առանում են երկրորդ, և երրորդ ձեռքից, այլ և առանձին ագենտներ են ուղարկում Պարսկաստան, իրենց ճաշակով պատրաստել տալիս և անշուշտ համեմատաբար աւելի աժան է նստում։ Դրանով էլ չեն ուզում բաւականանալ, ձգտում են գործարաններ հիմնել։ Զիգլեր ընկերութիւնը, ինչպէս տեսանք, արդէն ունի գործարան և տարեկան արտահանում է մօտաւորապէս 150,000 թումանի գորգ։ Դրսեցի հայերի ուշադրութիւնն էլ գրաւել է գորգի արտահանութիւնը։ Գիւլպէնկեանները էլ ունեն Թաւրիզում ագենտներ և մեծ քանակութեամբ գորգ են արտահանում Տանկաստան, Ամերիկա և այլն։ Պարսկաստանը արտահանում է տարեկան մօտաւորապէս 2,000,000 թումանի գորգ։

Պարսկաստանի գորգը ընդհանրապէս յայտնի է իր նրբութեամբ և գեղեցկութեամբ, բայց ամենից շատ հռչակուած և գովուած է Բիրմանի, Թաւրիզի, Ղորասանի և Սուղ-բուլաղի գորգերը, վերջինիս յայտնի է նամանաւանդ իր ամրութեամբ և դիմացկունութեամբ։ Պարսկաստանի բոլոր գլխաւոր քաղաքներումն էլ կան գորգագործարաններ, այն էլ մի քանի հատ։ Թաւրիզում կան տասի չափ գորգագործարաններ, գուցէ և աւելի։ Հետաքրքիր են այդ գորգագործարանները, մանաւանդ նրանցում տիրող աշխատանքը։ Գորգագործարանը ներկայացնում է մի մեծ սենեակ, աւելի հիշտ մի ընդարձակ սրահ, որը կտրուած է և բաժանուած փոքրիկ, նեղ ու երկար բաժանմունքների, ամեն մի բաժանմունքում դրուած է դազգահը, իսկ դազգահի առաջ շարուած են բանւոր-աշխատողները։ Աշխատանքը կատարուում է երգելով։ Բանւորներից մէկը՝ որ տեղ է բռնած լինում դազգահի ծայրում, առաջը ունի մի

գիրք, անընդհատ երգելով կարդում և հրահանգում է, թէ ինչպէս պիտի գործել, ինչ գոյնի թելից և այլն։ Մի խօսքով գորգագործարանի ներսը իրենով ներկայացնում է մի խիստ հետաքրքիր և ուշագրաւ տեսարան։ Իդէալ, ասենք, որ այստեղ որոշ աշխատանքներ կատարւում են երգելով, ինչպէս որմնադիրութիւնը։ Վարպետը կաւը, ադիւսը, բարը ուզում է երգելով և այլն, նա երբեմն այնքան է տարւում իր երգով, որ բոլորովին ընկնում է էքստազի մէջ։ Նոյն այդ բանը և սովորութիւնը կայ Երևանեան նաւանգում։

Գորգագործարաններում աշխատում են ընդհանրապէս փոքր երեխաներ, մօտ 8—15 տարեկան և ստանում են սարսափելի քիչ վարձատրութիւն։ Այստեղ սովորական օրավարձը հատւում է, ինչ էք կարծում, ինչքան, 4—6 շահին, ռուսական հինգ կոպէկը։ իսկ հասակաւորները ստանում են առհասարակ մէկ դրան (18 կոպէկ)։ Իրանի երկրում ամեն ինչ ստարօտի է, չզարմանաք։

Գորգը տոհասարակ ծախւում է քառակուսի արշինով։ Հասարակ, բրդից գորգերի քառակուսի արշինը ծախւում է մօտ 3—6—7 թուման, իսկ ժամանակս գորգը 20—30 թուման։ Ընդհանրապէս հին գորգը համարւում է անթիրա, շատ ուելի թանգ է գնահատւում, քան նորը։ Շատ անգամ հէնց գործարանատէրերը նոր գորգեր տալիս են սրան-նրան բանեցնելու, մաշեցնելու համար, կամ գցում են հէնց բազարի մէջ, մարդկանց ոտների տակ, որ գնալ-գալով մաշեցնեն։ Գործարանատէրերը կարողանում են հիանալի նախշաւոր և նկարաւոր գորգեր տալ, նոյնիսկ ապշեցուցիչ նրբութեամբ և բէլիէֆ կերպով։ Այդպիսի գործուածքների առաջ մարդ ուղղակի սքանչանում է։ Պատմում են, որ Խուսաց Գայսեր նուէր է ուղարկուած մի գորգ, կայսեր և թագուհու նկարներով, այնքան ռէլիէֆ, ամենանուրբ գծագրութիւնները և մասերը այնպէսի հմտութեամբ դուրս բերուած, ասես կենդանի առաջդ են կանգնած։

Պարսկահայ առևտրական ընկերութիւնները և տները չեն զբաղւում, չեն էլ զբաղւել, գորգագործութեամբ, գորգի արտահանութեամբ։ Այդ առևտուրը մնացել է պարսիկների ձեռքը. հայերը կպել են հէնց իրենց պապերի սկսած գործին—հում, անպատրաստ նիւթերի արտահանութեան, և չեն ուզում ազատուել դրանից ու մի քայլ առաջ գնել։ Միայն Թաւրիզի հայուհեաց ընկերութիւնը 1896—97 տարեշրջանում առաջին փորձը արեց, բայց աջողութիւն չունեցաւ, եօթ տարի գոյութիւն ունեցաւ և փակւեց։ Ասենք այդ գործարանը հիմնուած էր ոչ

քէ մրցելու թուրք գործարանատէրերի դէմ, աւելի ու աւելի ընդարձակելու, այլ, կարծում ենք. գաղթականներին որոշ չափով գործ, աշխատանք տալու։ Այդ նոյնիսկ ընկերութեան կէտ նպատակից դուրս էր և անկարող ընդարձակ գործ առաջ բերելու։

Փորգագործութիւնից զատ, Պարսկաստանը յայտնի է նաև իր ուրիշ գործուածքներով, ինչպէս թաւիշ, ժեստաքեայ ջէջիմներ, որոնք իրենց նրբութեամբ և գեղեցկութեամբ, մանաւանդ առաջինը, գերազանցում են եւրոպականին և աւելի են գնահատւում։ Մեծ մասամբ թաւիշ է արտահանւում եւրոպա։ Նուրբ և բարակ ջէջիմները գործ են ածւում նոյնպէս մուշտէիդների, ընդհանրապէս բարձր կրօնաւորների համար իբր ապարոշ։ Պարսկաստանում պատրաստւում են նոյնպէս շալեր, հռչակուած են Քիրմանի շալերը, կարպետներ, քէշա-թաղիքներ։ Թաղիքները պատրաստում են շատ հասարակ ձևով, բուրդը գզում, փաթաթում են փայտի վրայ և սկսում են գլորել գետնին ու ոտով խփել մի քանի հոգով, այնքան են գլորում, մինչև որ ամրանում և դառնում է թաղիք։ Այդ ձևով են պատրաստում թաղիքը նաև մեր կողմերում, Երևանեան նահանգում։

Արհեստագիտութեան մէջ պարսկական կեանքի համար խիստ նշանաւոր և կենսական տեղ էր բռնում և դեռ խաղում է շիլաչութիւնը, զանազան կտաւէ և չթէ գործուածքները։ Դեռ ինքնուրոյն թուականներին Ատրպատականը ոչ միայն չէր ստանում դրսից այդ տեսակի ապրանքներ, այլ և ինքն էլ արտահանում սահմանակից նահանգները։ Ամբողջ Երևանեան նահանգը գիւղի չթեր, կտաւեղէններ և շիլաներ ստանում էր Թաւրիզից և Սալմաստից, մի խօսքով Ատրպատականից։ Միայն Թաւրիզը ունէր մի շարք գործարաններ, իսկ Սալմաստի մի քանի գիւղերը, օրինակ Փայաշուկ, Ղալասար, Հաֆթվան, գրեթէ զբաղուած էին միմիայն շիլաչութեամբ։ Այդ գործից ապրում էր Սալմաստի, ինչպէս և Ատրպատականի ազգաբնակութիւնը մինչև մօտ 1894—5 թուականները։ Եւ այդ ժամանակամիջոցը համարւում է Սալմաստի հայերի տնտեսական ամենափայլուն շրջանը, որը տեղացին յիշում է առանձին թերկրութեամբ։ բայց մինչև ժամանակ սրտի ցաւով։ Այդ շրջանում կեանքը եռում էր Սալմաստում, գործ, աշխատանք կար, շիլայի գործարաններից անընդհատ բարձրանում էր ծուխը։ հայը ապրում, մնում էր իր օջաղում, իր յարկի տակ, նա չէր պանդխտում օրուայ ցամաք հացը ձեռք բերելու համար։ Լաւ էին այդ տարիները։ լաւ էին ոչ միայն Սալմաստի համար, այլ ամբողջ Ատրպատականի։

Վրայ են հասնում 1894—6 թուականները։ Ռուսաստանի կտաւէ գործուածքները. զանազան տեսակ գիւղի չքիրը շուկայ են հանւում և կամաց-կամաց ներմուծւում Անդրկովկաս, Երեւանեան նահանգը, նոյնիսկ Ատրպատական։ Տեղական նոյն գործուածքները ոչ միայն չեն կարողանում մրցել Ատրպատականում, այլ և տեղի են տալիս։ Եւ դա շատ հասկանալի է, քանի որ ռուսականը աւելի աժան էր ծախւում լաւ էլ պատրաստուած էր։ Այդ հարուածը շատ էր խիստ, շատ փոխեց Ատրբպատականի տնտեսական կերպարանքը։ Շուկաները մնացին միմիայն ռուսական ապրանքներին, այժմ էլ շարունակւում է նոյնը աւելի ուժեղ կերպով և լայն չափերով։

Արհեստագիտութեան այդ ճիւղի միայն բնկորներն են մնացել։ Ատրպատականում դեռ պատրաստւում են չարաւներ, որ գործ է ածւում գլխաւորապէս կանանց համար։ Իրանի երկրում կանայք փողոց դուրս գալիս ծածկւում են այդ չարաւներով, գոյնը կապոյտ, պատրաստւում է մեռաքսից և հասարակ նիւթից։ Հարուստ խանների, ընդհանրապէս բարձրաստիճան պաշտօնեաների կանայք գործ են ածում մեռաքսեա հրաշալի չարաւներ։ Թաւրիզում հայ կանայք էլ չարաւ են գործ ածում, միայն վերջին մի երկու տարին կամաց-կամաց վերացւում է։

Արհեստագիտութեան մէջ ապակէգործութիւնն էլ պակաս նշանաւոր տեղ չի բռնում։ Տնտեսագիտութեան նոյն ելէջը, ինչ տեսանք չիթէ գործուածքների, միաժամանակ պատահել է և այստեղ։ Կատարուած երևոյթը նոյն բնոյթն է կրում։ Մի երկու տասնեակ տարի առաջ Ատրպատականը, գլխաւորապէս Թաւրիզը ունէր իր ապակէ փոքրիկ գործարանները, ինքն էր ամբողջ ազգաբնակութեանը մատակարարում ապակէ և չինեղէն պարագաներ։ Անշուշտ դրանք հասարակ տեսակի էին և ոչ լաւ կատարելագործուածներ, քանի որ չկար ֆաբրիկա, կանոնաւոր գործարան, բայց տարածւում, գործ էր ածւում։ Կամաց-կամաց եւրոպական ապակեղէնները, ֆաբրիկաներում պատրաստուած գեղեցիկ և աժան, ներս են մտնում Ատրբպատականի շուկաները և դուրս վանում տեղական ապրանքը։ Այժմ էլ պատրաստւում են Թաւրիզում ապակէ ամանեղներ, բայց շատ հասարակ բաներ են և անկարող են մրցել եւրոպական ապրանքների հետ։ Դեռ մի քանի տարի առաջ Թաւրիզի մի հարուստ թուրք ձեռնարկեց ապակէգործութեան ընդարձակ գործարան հիմնել Թաւրիզում։ Ահագին ծախս է դնում, գործարանի բոլոր պահանջող պարագաները բերում Ռուսաստանից, նոյնիսկ հմուտ վարպետներ հրաւիրում ան-

գին ռոճիկներով, բայց նա աջողություն չի ունենում։ Իսկ ինչու։ Պատճառն են, գլխաւորապէս վարպետների խարդախութեան պատճառով։ Երկրորդը առաջինի շինածը քանդում, նորոնոր ծախսեր էր ցոյց տալիս և այլն։ Այդ վարպետ-վանագէտներն էլ, ասում են, կաշառած են եղել խոշոր ֆաբրիկանտների կողմից։ Մինչև այժմ Թաւրիզի գործարանը ամբողջապէս պահուած է և միանգամայն գատապարտուած անգործածութեան։ Այս մի քանի տարի է, որ այդ թուրք գործարանատէրը իր որդուն ուղարկել է Ռուսաստան առանձնապէս ուսումնասիրելու և կատարելագործելու այդ տեսակի գործարանների տեխնիկական գործը, հմտութիւն ձեռք բերելու, վերադառնալու հայրենիք և հաստատ ու կանոնաւոր հիմունքների վրայ դնելու իր հօր սկսած գործը։

Սալմաստումն էլ ապակեգործարանի հիմքը դրել է։ Ձեռնարկողն է տեղացի մի երիտասարդ՝ պ. Յակոբ Բաբլոյեան, որը երկար ժամանակ եղել է գործարաններում, լաւ և մասիկից ծանօթ է այդ գործին։ Գործարանի շէնքը արդէն պատրաստ է. շինուած է Հաֆիֆվանին մօտ մի ընդարձակ հողի վրայ, որը գրեթէ գաւառի կենդրոնումն է։ Գործարանի շէնքը բռնել է ընդարձակ տեղ, իսկ շուրջը շարուած են մի շարք սենեակներ վարպետների, կառավարիչների և բանուորների համար։ Մի խօսքով իսկական գործարանի տպաւորութիւն է թողնում և հէնց ռուսական գործարանների ծրագրով ու պլանով է կառուցուած։ Մինչև աշուն հաւանական է գործարանը բոլորովին պատրաստ լինի և գործել սկսի։ Գործը ձեռնարկուած է խելացի կերպով և յոյս կայ, ապագայում ընդարձակուելու և աջողութիւն ունենալու։ Գործարարանատէրը նպատակ է դրել առաջին մի երկու տարին պատրաստել միմիայն ապակեղէններ, իսկ յետոյ նաև շինեղէններ։ Նա յոյս ունի ապագայում ոչ միայն մրցել դրսի ֆաբրիկաների հետ, այլ և կտրել դրսից եկած ապրանքների մուտքը։ Արդեօք այդ աստիճան նա աջողութիւն կունենայ, մենք դրական ոչինչ չենք կարող ասել, դա դեռ տարիների հարց է, բայց այս կասենք, որ գործը ըսկսուած է լի հաւատով, գործարանատէրը կարող է և կդիմանայ մի քանի տարուայ դէֆիցիտին—առաջին մի երկու տարին նա այդ ի նկատի ունի—երկիրն էլ այդ գործի համար ներկայացնում է իրական հող և տալիս է պահանջուող նիւթեր։ Այս էլ չմոռանամ ասել, որ երիտասարդ գործարանատէրը հակառակ պարագային կարող է վարպետութիւն անել։ Ուզում եմ ասել, որ նա լաւ ծանօթ է գործին և հնարաւորութիւն կունենայ տարէց տարի ընդարձակել և կանոնաւորել։

հշգրիտ տեղեկութիւնների գրեթէ անհնարին է առաջ բերել։ Այնն երևոյթ ունի իր պատճառները, որոնց պիտի փնտռել երկրի անիշխանական և քաոսային կարգերի մէջ։

Պարսկաստանը չունի դրական օրէնքներ, հետևապէս օրէնսգրքեր, որոնց հրահանգներով ղեկավարուէր ամբողջ տէրութիւնը։ Ուրիշ խօսքով ամբողջ երկիրը դատապարտուած է անիշխանութեան, բաժանուած է միանգամայն տարբեր «էլերի» մէջ։ Եւ յիրաւի, այժմ Պարսկաստանում de facto կայ ոչ թէ մի իշխող, այլ մի շարք բէգ-խաներ և կրօնաւորներ, որոնց ձեռքումն է իրօք կենտրոնացած Պարսկաստանի և՛ հարստութիւնը, և՛ կառավարութիւնը։ Իսկ այդպիսի պայմանների մէջ չի կարող գոյութիւն ունենալ և հաստատուել միօրինակ կարգեր և օրէնքներ։ Իւրաքանչիւր «էլ» ունի իր տարբեր օրէնքները և կարգերը, օրէնքներ կարգեր, որոնք բղխում են ցեղապետի քմահաճոյքից և ինքնիշխան կեանքից։ Հէնց այդ անիշխանական կարգերի անմիջական հետևանքն է այն, որ հարկերը այս երկրում բազմազան են և իւրաքանչիւր գաւառ ունի իր առանձին չափը։

Պարսկաստանում միակ օրէնքը, որով էլի ղեկավարուում է ժողովուրդը, համարուում է զորանը, «շառիաթի» օրէնքը։ Շառիաթի օրէնքով սեփականութիւն չպէտք լինի. միայն տէրութեան գլուխը՝ Շահնշահը, որը ամբողջ երկրի տէրն է համարուում, կարող է հողը—երկիրը տալ սրան-նրան կապալով շէնացնելու համար։ Եւ շառիաթով ամբողջ արդիւնքի $^{9}/_{10}$ մասը պատկանելու է մշակողին $^{1}/_{10}$ կառավարութեան, իսկ մնացած $^{1}/_{10}$ էլ կապալառուին։ Այդ է շառիաթի թելադրութիւնը և հրահանգը։ Բայց հէնց նոյն շառիաթով՝ կալուածները անցնում են իրենց տէրերի ժառանգներին և այդպէս շարունակ... և առեղծուել է ներկայ անիշխանական դրութիւնը։ Նոյն այդ շառիաթը, որ սեփականութիւն չի ընդունում, իշխելու, բռնութեամբ օգուտներ ունենալու իրաւունքը անբռնաբարելի է համարում։ Եւ առաջացաւ այն, որ հրապարակում երևան եկան ուժեղները, սկսեցին նուաճել, հողեր կալուածներ ձեռք բերել և ուրիշի ու ուրիշի ամբացնել իրենց դիրքը։ Երկիրը բաժանուում է մեծ և փոքր, անկախ և կիսանկախ խանութիւնների։ Պարսկաստանը, յիրաւի, ուժեղ երկիր է, թոյլը անկարող է ապրել, նա կուլ է գնում։ Կալուածները կենտրոնանում են խոշոր կապիտալիստ հոգևորականների և խանխաներների ձեռքը, որոնք ազատօրէն նշանակում են հարկեր, կարգեր հաստատում, ինչպէս նրանց լիազօր կամքն է թելադրում, շահագործում են տէրութեան պտղաբեր հողը, հարստահարում գիւղացինե-

ին։ Բնականաբար առաջացան «իշխող» և «ռայեաթ» դասակարգերը։ Առաջինը հրամայող և ուտող է, իսկ երկրորդը աշխատող և կերակրող։

Կալուածատէրերի մի շարք և բազմապիսի հարկերի և տուրքերի ծանրութեան տակ ռայեաթը հիւծուում, քամուում է, նրա տնտեսական դրութիւնը դառն և ցաւալի է։ Ժողովուրդը իր կեանքի համար կենսական անհրաժեշտութիւն ներկայացնող ամեն մի նիւթի և պարագայի համար հարկ-տուրք է վճարում։ Այնքան բազմազան, այնքան շատ են այդ հարկերը, որ դժուար է որոշ խմբակցութիւնների վերածել և սիստեմի ենթարկել, որով աւելի հնարաւորութիւն կունենայի պարզ գաղափար տալ ձեզ տիրող հարկերի մասին։ Եւ այդ երևոյթը առաջացել է շատ յայտնի պատճառներից, ինչպէս վերևն էլ ուրուագծեցինք։ Մենք կըդժուարանանք ամբողջ Ատրպատականում ցոյց տալ մի քանի տասնեակ գիւղեր, ուր տիրող կարգերը, հետևապէս հարկերը և տուրքերը միօրինակ լինէին։ Բովանդակ նահանգը բաժանուած է մի երկար շարք կազմող գիւղատէր աղաների մէջ։ Միայն Ջոյ գաւառը ունի 50-ից աւելի գիւղատէր աղա-խաներ։ Նոյն համեմատութեամբ պիտի ընդունել նաև Ատրպատականի միւս գաւառների վերաբերմամբ։ Էլի գաւառի բաժան-բաժան լինելը կալուածատէրերի մէջ յայտնի չափով հասկանալի է և կարելի է մի կերպ հաշուել այդ երևոյթի հետ, բայց երևակայէք գիւղն էլ բաժանուած է տարբեր գիւղատէրերի մէջ։ Սալմաստի Սալամերիկ գիւղը, ուր անանուն բնակութիւն կայ, բաժանուած է երեք կալուածատէր թուրքերի մէջ։ Ահա ինչու ասում ենք Ղարսկասանում de facto իշխողը ոչ թէ Շահն է, այլ ուրիշները, իսկ այդ «ուրիշները» ուղղակի անհաշիւ են։ Իսկ ինչքան են այդ «ուրիշները», գրեթէ նոյնքան է և հարկերի տեսակը ու չափը։

Բերքի-ցորենի, գարու և այլն—հարկի վերաբերմամբ Ատրպատականի գիւղերը կարելի է ժառանգաբար բաժանել երեք տեսակի—խալիսա, բարֆալրդ եւ աղալրդ։ Առաջին տեսակի գիւղերի թիւը, որոնք արքունական են գիւղի սեփականութիւն, Ատրպատականում շատ շատ աննշան է։ Գիւղերի մեծագոյն բաժինը Աղալրդ է, աղայի սեփականութիւն, գիւղացիները կատարեալ ճորտեր են։ Տարեայ բերքի $^2/_3$—$^1/_2$ բաժինը գիւղատիրոջն է, ամբողջ աշխատանքն էլ գիւղացու վրայ է։ Բարֆալրդ գեղերն էլ աղաների սեփականութիւններ են, բայց ժողովուրդը փոքր ինչ ազատ է, իրաւունքներ է վայելում նա ունի իր սեփական հողը և իրաւունք ունի այդ ծախել, իսկ

տուրք էլ վճարում է 1/7—1/9 մասը բերքի։ Այդ տեսակի գիւղերի թիւն էլ Ատրպատականում այնքան շատ չէ։ Մանրամասն գիւղերը վճարում են արքունական հարկ 1/10։ Ամենախայտառակ և դառն դրութեան մէջ են ապալոգ գիւղերը։ Այդ անթիւ գիւղերի ապրանքաւորութիւնը, ուրիշ խօսքով Ատրպատականի ժողովրդի մեծագոյն բաժինը, միանգամայն հոգս-իրաւազուրկ է և իրենով ներկայացնում է Ատրպատականի աշխատող ճորտերի հսկայ դասակարգը։ Այդ դասակարգը տիպական ոչինչ չունի, որի վրայ կարողանար յենուել և առաջ տանէր գոյութեան կռիւը. նա նոյնիսկ իր տան տէրը, իր օջաղի տէրը չէ։ Աղայի քէֆը ուզած դէպքում կարող է գիւղացու օձիքից բռնել և դուրս շպրտել։ Վերջինս միայն տէր է տունը եղած իրերին և միայն այն կարող է վերցնել, մէկ էլ տան ծածկի փայտերը, եթէ գիւղացին է շինել տունը իր ծախսով այդ շարութով վերապահուած է գիւղացուն, թէև այդ էլ չեն անուամ։ Ընդհանրապէս գիւղատէրերն են շինում տները և յանձնում գիւղացիներին։

Խոյի Դեղ-Բոլին

Շատ անպատ ցորենը դաշտում կամ կալում փչանում է, որովհետև քաղելու, ծեծելու և էլեանելու (մաքրել) համար անպայման պիտի ստանայ գիւղատիրոջ կամ մուլքաշիրի թոյլատրութիւնը, իսկ վերջինս յաճախ ձգձգում է, ստանում-բերում գիւղացիներին, թէ ինչու, դուցէ իրենք էլ չգիտեն, հէնց այնպէս, քէֆները այդպէս է ուզում։ Իրանին ամեն ինչ առնում ապում է։ Ցորեն չտեսնելու հա մուլքաշիրի ներկայութիւնը ան-

ին։ Բնականաբար առաջացան «իշխող» և «ոչ-իշխող» դասակարգերը։ Առաջինը հրամայող և ուտող է, իսկ երկրորդը աշխատող և կերակրող։

Կալուածատէրերի մի շարք և բազմապիսի հարկերի և տուրքերի ծանրութեան տակ ռայեթը հիւծւում, քամւում է, նրա անտեսական դրութիւնը դառն և ցաւալի է։ Ժողովուրդը իր կեանքի համար կենսական անհրաժեշտութիւն ներկայացնող ամեն մի նիւթի և պարագայի համար հարկ-տուրք է վճարում։ Այնքան բազմազան, այնքան շատ են այդ հարկերը, որ դժւար է որոշ խմբակցութիւնների վերածել և սիստեմի ենթարկել, որով աւելի հնարաւորութիւն կունենայի պարզ գաղափար տալ ձեզ տիրող հարկերի մասին։ Եւ այդ երևոյթը առաջացել է շատ յայտնի պատճառներից, ինչպէս վերևն էլ ուրուագծեցինք։ Մենք կըդժւարանանք ամբողջ Ատրպատականում ցոյց տալ մի քանի տասնեակ գիւղեր, ուր տիրող կարգերը, հետևապէս հարկերը և տուրքերը միօրինակ լինէին։ Բովանդակ նահանգը բաժանւած է մի երկար շարք կազմող գիւղատէր աղաների մէջ։ Միայն Խոյ գաւառը ունի 50-ից աւելի գիւղատէր աղա-խաներ։ Նոյն համեմատութեամբ պիտի ընդունել նաև Ատրպատականի միւս գաւառների վերաբերմամբ։ Էլի գաւառի բաժան-բաժան լինելը կալուածատէրերի մէջ յայտնի չափով հասկանալի է և կարելի է մի կերպ հաշտւել այդ երևոյթի հետ, բայց երևակայէք գիւղը էլ բաժանւած է տարբեր գիւղատէրերի մէջ։ Սալմաստի Սարաժերիկ գիւղը, ուր աննշան բնակութիւն կայ, բաժանւած է երեք կալուածատէր Թուրքերի մէջ։ Ահա ինչու ասում ենք Պարսկաստանում de facto իշխողը ոչ թէ Շահն է, այլ ուրիշները, իսկ այդ «ուրիշները» ուղղակի անհաշիւ են։ Իսկ ինչքան են այդ «ուրիշները», գրեթէ նոյնքան է և հարկերի տեսակը ու չափը։

Բերքի-ցորենի, գարու և այլն—հարկի վերաբերմամբ Ատրպատականի գիւղերը կարելի է ժամանակաւորապէս բաժանել երեք տեսակի—խալիսե, բորփալը եւ աղալը։ Առաջին տեսակի գիւղերի թիւը, որոնք արքունական են գիւղի սեփականութիւն, Ատրպատականում շատ շատ աննշան է։ Գիւղերի մեծագոյն բաժինը Աղալը է, աղայի սեփականութիւն, գիւղացիները կատարեալ ճորտեր են։ Տարւայ բերքի $^2/_3$—$^1/_2$ բաժինը գիւղատիրոջն է, ամբողջ աշխատանքն էլ գիւղացու վրայ է։ Բորփալը գեղերն էլ աղաների սեփականութիւններ են, բայց ժողովուրդը փոքր ինչ ազատ է, իրաւունքներ է վայելում նա ունի իր սեփական հողը և իրաւունք ունի այդ ծախել, իսկ

տուրք էլ վճարում է [illegible] մասը թերթիս։ Այդ տեսակի գիշերների թիվն էլ Աստրագանում այնքան շատ չէ։ Մաքրեպ գիշերը վճարում են արքունական հոգի [illegible]։ Ամենաբազմաբնակ և գաղտնի գրաքիսան մեջ են այդպիսի գիշերները։ Այդ անքիթ գիշերների ապպարտակությունը, ուրիշ խոսքով Աստրագանի ժողովրդի մեծագույն բաժինը, միանգամայն հոգա-բրատապուրկ է և իրենով ներկայացնում է Աստրագանի աշխատող ճարտարների հոկայ գաղափարը։ Այդ գաղափարը սեփական աչքիս շուտի, որի վրայ կարողանար լինել և առանց տանջ գոյությունն կարար։ Դա ղոյնիսկ իր տան տերը, իր օջախի տերը չէր։ Աղայի քնիկը ուզած գնպրում կարող է գիշերային ձիրիցը քաշանել և դուրս շպրտել։ Վերջինս միայն տերը է տանը եղած իրերին և միայն այն կարող է միջոցներ, մեկ էլ տան ծածկի փայտերը, եթե գիշերային է շինել ատանը իր ծախսով այդ շարաթով վերադարձած է գիշերային, թեև այդ էլ չեն անում։ Ընդհանրապես գիշերաները նա շինում տանիքը և ամենում գիշերայինները։



Կոլի Գեորգ Բեգլի

Շատ անգամ գրքեր գտնում կամ կարում փչանում էր, որովհետև բոլորս, ծեծերս և Լրանելյան (տարբեր) համար անպայման պիտի տանեինք գիշերային կամ ուրբաթի թեյարանները, իսկ վերջինս բանտ ձգվում է, տանում-բերում գիշերայինները, թե ինչու, գոյն իրենք էլ չգիտեն։ Տնից աչքս, քնիները այդպես է ուզում։ Իրանին տանն ինչ տանում է Աստեն չափերս նա ուրբաթի ներկայությունը անս-

հրաժեշտ է, դրանում խօսք չկայ։ Խեղճ գիւղացին պարտաւոր է նրա ամեն մի քմահաճոյքը կատարել, նրան լաւ կերակրել, գառ, հաւ, ձու տալ, լաւ հոգալ։ Այս բոլորի վրայ եթէ աւելացնենք և այն, որ, բացի գիւղատիրոջից, սէյիդն էլ իր բաժինը ունի, նա նոյնիսկ իրաւունք ունի պահանջելու, դէրվիշն էլ իր հերթին գալիս-տանում, մուքաշիրը հօ կայ ու կայ, ինչ ասեմ, իսկ ինչ մնաց խեղճ, անճար աշխատող, տնքող ժողովրդին։

Կատարենք ճշտենք են...

Այդ միայն հացահատիկների հարկն է, դեռ հարկերի երկար շարքը մնում է։ Ժողովուրդը տալիս է մալիաթ, աբքունական տուրք, և գլխահարկ, նա տուրք է տալիս հասոյթից, խոտից, դարմանից, անասոյի համար, նա տուրք է տալիս անասունների համար, իսկ բեգեանը, ձրի աշխատեցնելը, այդ հօ սարսափելի է և բոլորովին կոտրում, ծռում է խեղճ ռայեաթի մէջքը։

Ստորև առաջ ենք բերում հարկերի այդ շարքը, որով աւելի պարզ գաղափար կընկալենք այդ մասին։ Անհրաժեշտ ենք համարում նկատել, որ առաջ բերուած թիւերը պիտի ընդունել մօտաւոր ճշտութեամբ։ Մենք սնձամբ շրջել ենք Ատրպատականի գլխաւոր գաւառները, ծանօթացել այդ բազմազան հարկերի և չափերի հետ, բայց էլի ոչ վստահ, առաջարկում ենք ստորև թիւերը ընդհանուր Ատրպատականի վերաբերմամբ։ Այս երկրում առհասարակ սիսկովի բան է ստատիստիկայի վերաբերմամբ դրականօրէն խօսք ասել, դա, եթէ չասենք յանդգնութիւն, առնւազն անխոհեմութիւն է։

Ահա հարկերի և տուրքերի ընդհանուր և մօտաւոր չափերը ատրպատականում։

1) ցորենի, մալիաթ. թանաքին մօտ 4 դրան 10 շահի.
2) Գլխահարկ . . . . . 4—12 դր. 10 շահի[1])
3) Տուն-ծուխ . . . . . 2—5—7 դրան
4) Բաժ. առուոյտի թան. ցանած 6—8—14 դրան
5) Այգու և անտառի թանաքին նոյնքան,
6) Սոխի և բոստանի թանաքին 8—14 դրան.
7) Գով . . . . . 1 դր. 10—շահ. 3 դր.
8) Ձի էգ . . . . . 2—4 դրան
9) էլ էգ . . . . . 2—4 »

---

[1]) Գլխահարկ վերցնում են 16—17 տարեկան պատանուց սկսած, այդ հասակի տէրերը արդէն համարւում են աշխատանքի ընդունակ. իսկ փոքրերից չեն վերցնում։

10) Գոմէշ էգ . . . . . 1—5 » [1])

11) Ոչխար կթան . . . . 8 շահուց—1 դր. 10 շ.

Բացի այս մի շարք հարկերից, ապալրդ գիւղացիները պէտք է հարստանիքին 2—4 դլուխ շաքար տանեն ապային, նովրուզին իւրաքանչիւր տունը պարտաւոր է մօտ մի դռան տալ։ Նա, գիւղացին է ապայի ցանած բամբակի, բրնձի և այլն, վրայ աշխատում. Իւրաքանչիւր տուն պարտաւոր է 3—5 ձրի աշխատող (բեգեար) տալ դիւղատիրոջը կամ դրա փոխարէն 3—5 դռան փոդ։ Իւրաքանչիւր տուն պարտաւոր է տալ գիւղատիրոջը մօտ 2—4 հաւ, ապայի ուղածի չափ ձու, իւղ և այլն։ Եթէ մանր-մունր բաներին հետևենք, դեռ բաւականին կըշարունակի այդ շարքը։

Ատրպատականի արքունական-պետական հարկերի մասնանը առաջին անգամ կազմել է միայն յիսունական թուականներին, ինչպէս և նահանգի արդիւնարերութեան մօտաւոր չափը։ Հիշում է, նրանից յետոյ մի երկու անգամ վերաքննութեան են ենթարկուել այդ մասնանները և «իբր» նոր վիճակագրութիւն կազմել, բայց ամեն ինչ բնականաբար փոխուել է յօդուտ հարուստ կալուածատէրերի. տուժողը էլի թոյլը, անճարն է։ Եւ դա շատ հասկանալի է, քանի որ «իբր բարեփոխութիւն» անողները հէնց նոյն այդ կապիտալիստ կալուածատէրերն են։ Մի գիւղ, որ առաջ, մասնանները կազմելիս, ունէր 100 տուն քնակիչ, այժմ աւելացել և դառել է կրկնապատիկը, գուցէ և եռապատիկը, բայց էլի առաջուայ չափ հարկ է տալիս։ Բայց չկարծէք գիւղը օգտուում է դրանով,—ոչ, էլի նրա ջանից գուրս է գալիս. տուժողը լինում է կառավարութիւնը։ Մուրաշիրը նշանակուած չնչին գումարը հասցնում է յարքունիս, իսկ աւելի գանձածը գնում է նրա անյատակ գըրպանը։ Մուրաշիրը, ոչ միայն կնոիքում է կառավարութիւնը, այլև հարուստ գիւղատէրին հէնց նոյն այդ ձևով։ Գիւղատէրն էլ, մանաւանդ շատ հարուստները, այնքան հետևողներ չեն, շատերը չորս հինգ տարին մի անգամ հազիւ այցելեն իրենց գիւղերը ամեն ինչ թողնում է գրեթէ մուրաշիրին, գիւղատիրոջ ներկայացուցիչին, որը վայելում է համարեա նոյն հեղինակութիւնը գիւղում, ինչ գիւղատէրը, եթէ չասենք աւելին։

Ահա այսպէս, ինչպէս տեսանք, Ատրպատականը բաժան-

[1]) Գոմշից (արու), եզից, ձիուց, էշից (արու), հարկ չեն վերցնում, որովհետև այսպէս են բացատրում, թէ որոնք արդէն աշխատում են, նրանց տան արդիւնքից արդէն բաժին է տանում է ապան։ Կանացից և աղջիկներից էլ գլխահարկ չեն առնում. որովհետև չեն աշխատում. այլ միայն ուտում են։

բաժան է եղել մի շարք կալուածատէրերի մէջ, որոնցից և՛ կախուած է հարկերի նշանակումը։ Տեսաք նոյնպէս, որ ամեն ինչ կախուած է քահանայից, չկայ որոշ սիստեմ կալուածատիրութեան մէջ. տիրում են անիշխանական և քաոսային կարգեր ու ամեն ինչ հիմնուած է ուժի վրայ։ Եւ երբ հարց է լինում կալուածատիրութեան բարեփոխութեան, ըէֆորմների մասին, խոշոր կալուածատէր խանխաւանները և կղերը իսկոյն ձեռնամ են ընկնում ժողովրդին գրգռում կեղ՝ուպատիր խօսքերով, որոնք կանգնեցնում և յետ կասեցնում կառավարութեան ստադրութիւնը։ Մի ուժեղ, իսիստ զօրեղ ձեռք է հարկաւոր, որ այդ բոլոր «մի շարք» իշխողներին դուրս շպրտի, իւրի կալուածները և ժողովրդին ազատի արիւն-արցունքներից։ Այդ անելու համար հարկաւոր է Պարսկաստանին Պետրոս Մեծի նման մի զօրեղ, անընկուն անձնաւորութիւն, «զօրեղ» եմ ասում, որովհետև նա ունի իր առաջ գիւղատէրերի մի մեծ և ուժեղ բանակ, նրա հետ միացած հէնց նոյն կեզեքչող և հրկայ ոգէտը—ժողովուրդը։

Այդ սրբազան օրը կրկապմի անշուշտ Պարսկաստանի համար մի դարապլուխ և հարստահարուած ժողովրդի ազատագրութեան ակտը։

Բայց դեռ ինչքան պիտի սպասի Պարսկաստանը այդ օրանը...

ՊԱՐՍԻՑ ԴՊՐՈՑՆԵՐԸ

I.

ՄՈՒԱԼԻՄ ԽԱՆԱՆԵՐԸ

Պարսկաստանը թէև հարիւրաւոր դարերի կեանք ունի, բայց քաղաքակրթութեան տեսակէտից նա դեռ շատ է յետ մնացել։ Լուսաւորութեան և քաղաքակրթութեան դողդոջուն ճառագայթները նոր են սկսել մուտք գործել Իրանի երկրում։ Այդ լաւ նկատւում է դպրոցական գործի հետ ծանօթանալուց։ Դրանք մուալիմ խաններն են, եւրոպական տիպի դպրոցները։

Բայց նախ քան եւրոպական տիպի պարսկական ուսումնարանների մասին տեղեկութիւններ տալս՝ կանգ առնենք սովորական տիպի դպրոցների վրայ, որովհետև անհամար է դրանց թիւը Պարսկաստանում, և նրանց մթնոլորտի մէջ է անցնում, մեծանում և պատրաստւում Պարսկաստանի գրեթէ ամբողջ մատաղ սերունդը, նրանք են մտաւոր, բարոյական կերպարանք տալիս ժողովրդին։

Դրանք մադրասաներն են։

Պարսկաստանի ամեն մի քաղաքում, ամեն մի գիւղում շատ կան այդպիսի դպրոցներ, իսկ Թեհրանում, Թաւրիզում դրանց թիւը հասնում է հարիւրների։ Թաւրիզում համարեա ամեն մի քայլափոխում մարդ պատահում է պարսից մադրասաների։ Այդ մադրասաները լինում են մէջիդներին կից մութ և ցածր սենեակներում, որի մի անկիւնում անհրաժեշտ ֆաչախկան է դրած։ Այդ մադրասաները յիշեցնում են մեր խալիֆայական ուսումնարանները։ Աշակերտները խառն ի խուռն նստոտած են ճիպոտով գինուած ուսուցիչ-մոլլայի շուրջը, մադրասայի զանազան մասերում, ոմանք խսիրների վրայ. մի քանիսը կապերտների վրայ, հարուստ երեխաներն էլ իրանց տներից բերած խալիչաների վրայ, ինչպէս և մոլլան։

Նրանք ծնկների վրայ դրած ունեն դասագրքերը և անդադար գլուխները խոնարհում, բարձրացնում, տանում բերում,

ցած ու բարձր անում, իւրաքանչիւրը իրան համար լսելի ձայնով կարդում. մոմառում է, և այդպիսով բարձրանում է մի ընդհանուր վզվոց։

Ամեն մի մադրասայում առնւազը կայ 40—100 աշակերտ. միաժամուրիւն կըլինէր մեթոդ, սիստեմ սպասել այդ դպրոցներում։ Մադրասայում սովորեցնում են կրօնական գրքերի վրայ լոկ ընթերցանութիւն, այն էլ մի քանի տարուայ ընթացքում, մեծ դժուարութեամբ։

Իսկ ինչ են ներկայացնում եւրոպական տիպի կրթական հիմնարկութիւնները։ Այդպիսի հիմնարկութիւնների առաջին փորձերը եղել են օսմանեանական թուականներին։ Այդ ժամանակներում Նասրէդդին-շահի ջանքերով և նրա կարգադրութեամբ թէ Թեհրանում, մի քիչ ուշ՝ թէ Թաւրիզում հիմնւում են եւրոպական կարգ ու կանոնով տէրունական դպրոցներ։ Այդ թուականին Թաւրիզումն էր թագաժառանգ-վալիաթ Մուզաֆէր-էդդինը, այժմեան շահը, և ի պատիւ նրա՝ Թաւրիզի տէրունական դպրոցը կոչում են «Մուզաֆէրիէ», իսկ Թեհրանում մէկը միւսի ետևից բացւում են մի քանի դպրոց, որոնց ից ամենայայտնին էր Դարուլ-Ֆնուն (գիտութիւնների տուն)։ Այդ դպրոցներում աւանդում են ֆիզիկա, այգեբրա, աշխարհագրութիւն, պատմութիւն, թուաբանութիւն, ֆրանսերէն և այլն։

Բացի ներքին փոփոխութիւնից՝ այդ դպրոցները տարբեր էին սովորական մադրասաներից նաև իրանց արտաքին կողմերով. աշակերտներն ունէին իրանց յատուկ դպրոցական համազգեստը, դպրոցական շինութիւնները փոքրիշատէ հաժամատ էին առողջապահութեան պահանջներին, կային նստարաններ, ջոկ-ջոկ դասարաններ, մի խօսքով չըկար սովորական մադրասայի և ոչ մի նմուշ։ Այդ դպրոցների դասատուները կամ եւրոպացիներ էին և կամ Եւրոպայում կրթուած պարսիկ նրիտասարդներ։

Այդ դպրոցները, մանաւանդ «Դարուլ-Ֆնուն», աւելի գիտաւորական դպրոցի բնաւորութիւն էին կրում. այդ դպրոցներից դուրս եկածները գլխաւորապէս ստանձնել են արքունական պաշտօններ։

Թաւրիզի «Մուզաֆէրիէ» մուալիմխանան գոյութիւն ունեցաւ մօտ 15 տարի։ 1896—97 թուականներին շատ խառն վիճակ էր տիրում Պարսկաստանի մէջ. մի կողմից Նասրէդդին-շահի սպանութիւնը, միւս կողմից թագաժառանգ Մուզաֆէր-էդդինի Թաւրիզից հեռանալը՝ մատնում է «Մուզաֆէրիէ» մուալիմխանան անուշադրութեան. գործը սկսում է կաղել, չըկար վալիաթի նման մի ուժեղ ձեռք և գործին նուիրուած մէկը,

ուսոի հէնց նոյն թեւկանից դասարաններբը հետզհետէ պակասում են, և դպրոցը վերջիվերջոյ փակւում է...

Բայց դպրոցի փակումով նրա սերմանած գաղափարները չեն մեռնում։ «Մուզաֆէրիէն» այդքան տարիների ընթացքում ստեղծել էր և տալ մի քանի ընթացաւարտ սերունդներ։ Մի պարսիկ միրզա պատմում էր, որ Թաւրիզի այժմեան գլխաւոր պաշտօնեաների, փոքրիշատէ աչքի ընկնող գրագէտ անձնաւորութիւնների յայտնի մասը կազմում են այդ դպրոցի ընթացաւարտները։

Իսկ Թեհրանի «Դարուլ-Ֆնուն» մուալէմխանան լինելով նիւթապէս միանգամայն ապահով և Մուզաֆէրէդդին-շահի անմիջական հովանաւորութեան տակ՝ աւելի ու աւելի զարգանում է, բարեկարգւում և ստանում եւրոպականաձև դպրոց։ Տարեցտարի աւելանում է նման տիպի մուալէմխանաների թիւը Թեհրանում և այժմ հասնում է 20-ի։ Արժէ յիշատակել դրանցից «Ճարաֆս», «Իֆթիդաիյէ», «Մուշաիեաս», և «Սադաթ»։

Ուրեմն Թեհրանում սկսած գործը կանոնաւոր շարունակւում էր և այժմ էլ շարունակւում է, իսկ Թաւրիզի «Մուզաֆէրիէն» թէև փակւեց, բայց ապրում էր գաղափարը։ Եւ իսկապէս. «Մուզաֆէրիէ» մուալէմխանայի փակւելուց դեռ մի երկու տարի չանցած՝ այդ դպրոցի մի քանի ընթացաւարտ պարսիկ երիտասարդներ հաւաքւում, խորհում և ծրագրում են այդպիսի մուալէմխանա բանալ Թաւրիզում և իսկոյն ձեռնարկում են գործը։ Այդ լուրը անմիջապէս հասնում է մոլլաների ականջը։ Նրանք սկսում են եռանդուն կերպով պրոպագանդա անել հակառակ այդ ձեռնարկութեան, կանչում են հրապարակներում, մէչիդներում, գրգռում մոլեռանդ ամբոխին, սպառնալիքներ կարդում։ Եւ խափանւում է այդ մի քանի երիտասարդների ձեռնարկութիւնը. նրանք խոհեմութիւն են համարում յետ կանգնել իրանց մտադրութիւնից, վախենալով ամբոխի յարձակումներից և կղերի սպառնալիքներից։

Բայց յամենայն դէպս էլի բոլորովին չէ մեռնում գաղափարը. ներկայ Թագաժառանգի Լոքմանը—բժիշկը հիմնում է նոյն ծրագրով մի դպրոց, որ իր անունով և կոչւում է «Լոքմանեան»։ Այդ դպրոցը ազատ չէր՝ ինարկէ՝ խուժանի և կղերի յարձակումներից և սպառնալիքներից։ բայց նա ապրեց, իր գոյութիւնը շարունակեց այդ էլ որոշ չափով շնորհիւ վալիաթի որը մի յայտնի չափով հովանաւորում է «Լոքմանեան» դպրոցին։ Դրանից յետոյ հետզհետէ տարէցտարի բացւում են «Թեամալ», «Իրքալ», և «Բասիրիաթ» մուալէմխանաները։ Այնպէս որ այժմ Թաւրիզում կան չորս դպրոցներ, որոնք այսպէս թէ

այնպէս կրում են եւրոպական դպրոցների բնաւորութիւն, իսկ դրանցից ամենականոնաւորները և ուշադրութեան արժանիները առաջին երկուսն են, այսինքն «Լոզմանեան» և «Բեամալ» դպրոցները։

«Բեամալ» (իմաստութիւն) դպրոցը ունի 6 բաժանմունք, երեք պատրաստական բաժանմունքներ և երեք հիմնական դասարաններ, մօտ 100 աշակերտներով։ Ես այցելեցի այդ դպրոցը, և, պէտք է ասել, տպաւորութիւնը շատ մխիթարական և բաւարար էր։ Այնտեղ կայ կարգ և կանոն. դասարանները բաժան-բաժան, շնորհով նստարաններ, աշակերտները մատ են բարձրացնում՝ դաս պատասխանելու համար, կուռնալով կարդալը միանգամայն վերացած, դասատուները պատրաստուած, որոշ կրթութիւն առած անձնաւորութիւններ, բաւարար դասընթաց և այլն։ Մի խօսքով՝ «Բեամալ» մուսլիմանան թողնում է կանոնաւոր դպրոցի տպաւորութիւն։

«Բեամալ» դպրոցում անցնում են աշխարհագրութիւն, թուաբանութիւն, փոքր ինչ պատմութիւնից, ռուսերէն, ֆրանսերէն, արաբերէն և պարսկերէն։ Ռուսերէն և ֆրանսերէն լեզուների դասատուները հայեր են. իսկ դպրոցի տեսուչը և տնօրէնը «Մուզաֆէրիէ» մուսլիմանայի ընթացաւարտներից է, մի ազատ մտածող պարսիկ։ Իմ հարցին, թէ ինչու այսպիսի դպրոցների թիւը արագ չի աճում, նա պատասխանեց, որ ժողովուրդը շատ ոգէտ է, նա անկարող է դեռ ևս գնահատել և հասկանալ մուսլիմանների առաւելութիւնները։

Զըմոռանամ աւելացնել այս դպրոցի վերաբերմամբ, որ բարձր դասարանի աշակերտները պարապում են ստորին դասարանների հետ։

Իսկ գալով միւս դպրոցներին, պէտք է ասեմ, որ «Ղրքայն» և «Բասրաթը» համեմատաբար աւելի անկանոն վիճակի մէջ են, մանաւանդ վերջինը, որ մօտ 7 ամիս է ինչ հիմնուել է և գտնուում է դեռ անկերպարան դրութեան մէջ. իսկ «Լոզմանեան» մուսլիմանան աւելի կանոնաւոր է, աւելի լաւ և հաստատուն հիմքերի վրայ է դրուած, քան «Բեամալը», և աւելի հին է։ Այս դպրոցն էլ ունի մօտաւորապէս 100 աշակերտ։

Ես մոռացայ «Լոզմանեան» դպրոցի վերաբերմամբ և այնուհետև նա ունի և իր փոքրիշատէ կանոնաւոր գրատուն-ընթերցարանը, ունի գեղատուն՝ բացուած յատկապէս աշակերտների համար և գտնուում է Լոզմանի հսկողութեան տակ։ Դպրոցը արտաքին յարձակումներից պաշտպանելու համար նշանակուած են պահապան զինուորներ, որոնք հսկում են։

Ահա Թաւրիզում եղած այն դպրոցները, որոնք փոքրիշատէ կրում են եւրոպական դպրոցների բնաւորութիւն։

Պարսկաստանի ուրիշ քաղաքներում համարեա թէ չկան մուալիմներ, միայն վերջին մի երկու տարիներում սկսել են Թաշաուում նման դպրոցներ բանալու փորձեր անել։

Անտարակոյս այս դպրոցները անկարող են միանգամից յեղաշրջել պարսիկների կեանքը, մի զօրեղ և լայն հոսանք առաջացնել. բայց յամենայն դէպս այն էլ պարզ է, որ պարսիկների կրթական գործը այդ մուալիմներով մտնում է մի նոր փազիսի մէջ և կանգնած է ուղիղ ճանապարհի վրայ։ Աւելի գործ կատարելու և առաջադիմելու համար պահանջւում են երկրի հիմնական վերանորոգութիւններ...

II.

ԹԱԼԱԲԻԷՆԵՐԸ

Մենք առաջին անգամ կանգ առանք միայն երկու տիպի դպրոցների վրայ—մադրասաների և մուալիմանների։ Բացի այդ երկու կարգի կրթական հիմնարկութիւններից՝ Պարսկաստանում կան նաև բարձր դպրոցներ, որոնք յայտնի են «թալաբիէ» անունով։ Թալաբիէները՝ եթէ կարելի է այսպէս ասել, Պարսկաստանի կրօնական համալսարաններն են, իսկ աշակերտներն էլ Պարսկաստանի ուսանողները։ «Թալաբա» նշանակում է ուսանող։

Պարսկաստանի այդ «բարձրագոյն դպրոցները» ոչ այլ ինչ են, եթէ ոչ մադրասաների շարունակութիւնը աւելի բարձր կուրսերով, աւելի շատ առարկաներով, բայց տիրապետող ոգին, որ ամենապլխաւորն է, էլի նոյն նեղ կրօնականն է։

«Թալաբիէները»՝ ինչպէս ասացի՝ կրում են զուտ կրօնական բնաւորութիւն։ Այդ հիմնարկութիւնների մէջ պատրաստւում է Պարսկաստանի կղերական դասը։

Նոր չէ, ինչ Պարսկաստանում հիմնւել է Թալաբիէն։ Դեռ շատ հին ժամանակներից, ամբողջ դարեր առաջ, եղել են այդ տիպի դպրոցներ։ Ամեն մի փոքրիշատէ աչքի ընկնող քաղաք ունի մէկ կամ մի քանի «Թալաբիէ», իսկ մեծ քաղաքները, օրինակ, Թեհրան, Թաւրիզ, ունեն էլ աւելի շատ։ Բոլոր Թալաբիէների ծրագիրը հաւասարա մինոյնն է, միայն մի տեղ աւելի կանոնաւոր հիմունքների վրայ է դրուած, մի ուրիշ տեղ Թոյլ, մի տեղ լաւ և պատրաստուած ուսուցիչներ կան, հետե-

սապէս լաւ էլ անցնում են դասընթացը, մի ուրիշ տեղ կաղում է այդ կողմից։ Մի խօսքով հիմնական ծրագիրը ընդհանուր է բոլորի համար։

Այնտեղ անցնում են բոլոր այն գիտելիքները, որոնք անհրաժեշտ են մի մոլլայի, մի սէյիդի համար։ Թալաբիէներում սովորեցնում են, թէ ինչպէս պէտք է նամազ անել, ժեռել թա-



Թալաբիէ

ղել, այս կամ այն ժառանգութիւնը բաժանել, կարդացել ըստ շարիաթի։ Այնտեղ անցնում են աստուածաբանութիւն, դուրանի մեկնութիւն, օրէնսդրութիւն (ի հարկէ կրօնական)։ Բացի այդ՝ այնտեղ դասաւանդում են աստղաբաշխութիւն (հինը), ժառաֆիզիկա, թուաբանութիւն, կրօնական խնդիրների մեկնութիւններ։ Այս բոլոր առարկաները անցնում են արաբերէն

չեղով, որի վրայ շատ ուշադրություն է դարձնում այդ դպրոցների մեջ։

Ահա ինչով և ինչպիսի միջավայրի մեջ է խմորվում ու մեծանում Պարսկաստանի «բարձր կրթություն» առած երիտասարդությունը։ Աւելացնենք և այս, որ բոլոր թալաբաներումն էլ գտնւանդում են կրօնական պեռները—մուշտէյիդները, մոլլաները և այլն։

Երևակայեցէք մի մեծ և ընդարձակ բակ, դրա շուրջը շարուած փոքր և մեծ սենեակներ կամ խուցեր և դուք կըստանաք Պարսկաստանի բարձրագոյն դպրոցը։ Ամեն մի սենեակում ապրում է մէկ կամ երկու թալաբա, իսկ ամբողջ դպրոցում մօտաւորապէս 200—300 թալաբա։

Այդ տիպի դպրոցներ Թաւրիզում կան թւով հինգը, յիշենք օրինակի համար «Թալաբիէ», «Սադղիէ», «Հաջի-Ալի-Ասկար» և այլն. կան աւելի պակաս թւով Թաշտում, Իսպահանում, համարեա բոլոր գլխաւոր քաղաքներում, իսկ Թեհրանում դրանց թիւը հասնում է 10-ի, դեռ էլ աւելի շատ։ Յոյն էլ ունի թալաբա, որը շատ հետաքրքիր է, և արժէ յատկապէս այդ թալաբիէի մասին մի քանի խօսք ասել։ Բայց այդ մասին մի փոքր յետոյ։

Պարսկական այս բարձրագոյն բոլոր դպրոցներումն էլ աշակերտները սովորում են ձրիաբար և գիշերօթիկներ են. ոչ միայն ձրի են, այլ որոշ ռոճիկ էլ են ստանում թէ մուշտէյիդից և թէ ժողովրդից։ Ինչո՞ւ ժողովուրդ։ Եւ ինչու. որովհետև թալաբաները խանգարում են ժողովրդի հանգիստը, որովհետև բարեհաճում են բողոքել և կուել լուսաւոր գաղափարների, նոր կարգերի դէմ։ Թալաբաները՝ պէտք է այս էլ ասել, որ շատ մեծ դեր են խաղում Պարսկաստանի կեանքի մէջ. նրանք զօրեղ և յանդուգն բողոքողներն են, ցոյցեր և ըմբոստութիւններ յարուցանողները։ Կատարում են համարեա նոյն դերը, ինչ ուրիշ պետութիւնների մէջ ուսանողները։ Բայց ի հարկէ միանգամայն հակառակ սկզբունքներով։ Այնտեղ, արտասահմանում ուսանողը հրապարակ է դուրս գալիս յանուն նոր, լուսաւոր մտքերի, իսկ այստեղ թալաբան խաւարի պաշտպան է։ Այնտեղ ուսանողը ազատում է յանուն ժողովրդի շահերի, իսկ այստեղ թալաբան կուում է կղերի օգտին. պաշտպանում է անարդարութիւնները։ Վերջապէս լուսաւոր է այնտեղ ուսանողը, իսկ այստեղ թալաբան ֆանատիկ է, այդ բառը ամենափիս և վատ մտքով վերցրած։ Միշտ էլ թալաբաներն են անցնում Պարսկաստանում յարուցած ամբոխային ցոյցերի գլուխը, նրանք են գրգռում և ոտքի կանգնեցնում պարսիկ

մոլեռանդ խուժանին։ Հենց Թաւրիզում 1903 թ-ին կատարած խառնակութիւնների խնդրում ահագին դեր են խաղացել այնտեղի թալաբանները։ Նրանք են առաջին անգամ յարձակուել հայերի խանութների վրայ, քարուքանդ արել. նրանք են ատիպել ժողովրդին, որ հաւաքուեն, աղմուկ բարձրացնեն, թողնեն իրանց գործերը։

Եւ պէտք է ասել, որ այդ հիմնարկութիւնները շատ մեծ յարմարութիւններ են ներկայացնում ամբոխային ցոյցեր առաջացնելու։ Բաւական մեծ թիւ են կազմում իւրաքանչիւր դպրոցում եղած թալաբանները. հերիք է դրանք բոլորը միասին գուրս թափուեն, լցուեն բազարը, որ աղմուկ բարձրացնեն և աջողեցնեն կողոպել տալ խանութները։ Իսկ Պարսկաստանի ցոյցն էլ հենց բազարը կողոպելու մէջ է կայանում։

Այսպէս են ահա թալաբանները՝ նրանք յետադէմ մտքերի, նախաջրհեղեղեան կարգերի և անշարժութեան մոլեռանդ պաշտպաններ և երկրպագուներ են։ Սրանց ուսուցիչներն են մոլլաները կամ թէև շատ քիչ տեղերում մուշտէիդները։ Դասաւանդութիւնը դպրոցում չէ լինում. մէկ կամ մի քանիսը գնում են ուսուցչի մօտ, դաս առնում և նորից վերադառնում իրանց բնակարանը։ Այսպէս և միւսները։ Աշակերտները դպրոցում ունենում են յանախակի վիճաբանութիւններ կրօնական այս կամ այն խնդրի մասին։ Թալաբանները հագնուում են համարեա մոլլայի նման։ Դրանք են դասաւանդում փոքր թալաբաներին։ Թաւրիզի թալաբիէների ուսուցիչներն են մի քանի մոլլաներ, որոնք՝ ինչպէս պատմում է մի պարսիկ միրզա, բաւականին լաւ կրթուած են և գիտեն այդ առարկաները և սովորել են Նաջաֆ-Ֆեալրլահում մեծ մուշտէիդի մօտ։

Իւրաքանչիւր թալաբիէ—դպրոց ունի իր տեսուչը (ռայիս)։ Այդ ռայիսները կատարում են համարեա մեր վերակացուների պաշտօնը. նրանք են հսկում աշակերտների վրայ, նրանք են աշակերտների պահանջները և ցանկութիւնները տեղ հասցնում, հետևում են, որ աշակերտները անկարգութիւններ չանեն թալաբիէներում, չընկուեն միմեանց հետ, սովորեն իրանց դասերը նայեն։ Այդ ռայիսներն էլ հպատակում և գտնուում են մուշտէիդի իրաւասութեան տակ, նրանից են հրամաններ և պատուէրներ ստանում դպրոցի վերաբերմամբ։ Մուշտէիդը հաստատում է թալաբաների դիրեկտորը, սա է ծրագիրը տալիս, ուղղութիւն մտցնում դպրոցներում, դասերի մէջ փոփոխութիւն մտցնում և կարգադրում ամեն ինչ։

Ահա Պարսկաստանի բարձրագոյն դպրոցների—թալաբիէների պատկերը։

Բայց այժմ տեսնենք, թէ ինչ բանի մէջ է կայանում Ռոյի թալաթիէի առանձին հետաքրքրութիւնը։ Այո, շատ հետաքրքիր է այդ դպրոցը։ Նա կոչւում է Մակվարա և ունի մօտ 200 աշակերտ։ Այս թալաթիէն ունի վանք, իսկ կողքին էլ մզկիթ։ Մակվարան համարւում է միենոյն ժամանակ և սրբատեղի, իսկ այդ թալաթիէի հետ կապւած են հազար տեսակ հրաշքներ, և այժմ էլ կատարւում են նման հրաշագործութիւններ, որոնք ընդունւում են ժողովրդի կողմից ամենայն երկիւղածութեամբ, սրբութեամբ պահպանւում և տարածւում ժողովրդի մէջ։

Ցիշենք այդ հրաշագործութիւններից երկուսը. այս երկու հատիկ փաստը շատ բնորոշ են և շատ բան կասեն մեզ։

Շատ առաջ մէկ ուղտ, ինչպէս է լինում, դուրս է գալիս քարվանից, և պատահաբար մտնում Ռոյի թալաթիէն, երևի քարվանսարա կարծելով։ Եւ պէտք է ասել, որ թալաթիէները միանգամայն նման են Պարսկաստանի քարվանսարաներին։ Այս նկատում են թալաթները և իսկոյն յարձակւում են ուղտի վրայ։ Կարծում էք ծեծելու համար, ոչ։ Նրանք փայփայում, համբուրում են ուղտին և հաշակում են սուրբ։ Ինչու՞ Նա եկել է թալաթիէ սրբատեղին պատսպարելու, նա էլ գիտէ, որ այս տեղը սուրբ է, նեփրական հրաշագործ։ Եւ ահա թալաթները աղօթում են, կանչում։ Ռռնւում է թուրք ամբոխը, իմանում եղելութիւնը, նրանք էլ են յարձակւում ուղտի վրայ։ Ծունր դնում նրան, իրար առանց հերթ տալու փնտռում են կենդանու մազերը և որպէս սրբութիւն տանում, պահում են։

Վերջերս էլ՝ ինչպէս պատմում են՝ թալաթանները լուր են տարածում, որ այնտեղ բժշկւել է մի անդամալոյծ։ Լուրը իսկոյն հասնում է ամենքին և աւելտում սուրբ գործը։ Բոլորն էլ՝ իհարկէ՝ հաւատում են, քաղաքում կատարւում է հրավառութիւն, ուրախանում են բոլորը, օրը տօնական դնելու է կրում. և այսպիսով աւելի ու աւելի է բարձրանում թալաթիէ անունը ժողովրդի աչքում։ Ահա ինչ ասիական ֆանատիկ է պարսիկ ժողովուրդը։

Թալաթիէները աւարտող աշակերտները կարող են լինել միայն մոլլաներ կամ մոլլաներից մի քիչ աւելի բարձր աստիճան կրատանան, իսկ դրանցից աւելի մեծ պաշտօնեայ, օրինակ՝ մուշտէիդ դառնալու համար նրանք պէտք է տարին նաև ամենագլխաւոր կրօնապետի մօտ, որը լինում է Նաջաֆ-Բեալրբլահում։ Այժմեան կրօնապետը՝ ինչպէս պատմում են՝ մի շատ ազդեցիկ, հեղինակաւոր մուշտէիդ է։ Նրա գերիշխանու-

թիւնը տարածւում է նաև Հնդկաստանի, Բելուջստանի և Աֆղանստանի մահմեդականների վրայ և անպայման հաստակրանք է վայելում բոլորի կողմից էլ։ Նա մի հսկայական այժ է ներկայացնում այս մահմեդական աշխարհներում, մի այժ, որ կարող է բոլորովին ինչպէս կախարդական գաւազանով ցնցել ամբողջ Իրանի երկիրը, յեղաշրջել ամեն ինչ և ոտքի կանգնեցնել ամբողջ ազգաբնակութիւնը։

Ահա այդ անձնաւորութեան մօտ են ստանում իրանց վերջնական կրթութիւնը թալաբիէները աւարտող աշակերտները։ Բացի նրանից, գլխաւոր կրօնապետից, կան Նաջաֆ-Քեալբելահում և՛ ուրիշ մուշտէիդներ, որոնք դասախօսում են։ Այնտեղի կրթական հիմնարկութիւնը, ասենք համալսարանը՝ կրում է լսարանի բնաւորութիւն. ուսուցիչները կարդում են դասախօսութիւններ որոշ առարկաներից, ինչպէս աստղաբաշխութիւն, դուրանի մեկնութիւն և այլն. նա կազմում է թալաբաների շարունակութիւն։ Այնտեղ սովորում են աշակերտները 5—6 տարի. դրանք անպայման աւելի բարձր աստիճան են ստանում, քան հասարակ մոլլաները, և նրանց իրաւունք է տրւում թալաբաներին դաս տալու։ Իսկ մուշտէիդի աստիճան ստանալու համար հարկաւոր է լինում առնւազն տասն տարի, դեռ էլ աւելի ժամանակամիջոց մնալու Քեալբելահում։ Մուշտէիդի աստիճանը համապատասխանում է մօտաւորապէս մեր եպիսկոպոսութեան։ Ամեն գաւառ և նահանգ, ուրիշ խօսքով ամեն մի թեմ ունի իր մուշտէիդը կամ առաջնորդը։ Այս մուշտէիդները նշանակւում են գլխաւորապէս կրօնապետի կողմից։

Բացի Նաջաֆ-Քեալբելահից՝ կայ նման դպրոց նաև Խորասանում, որը մի վանք է և կոչւում է Իմամ-Իրզա։ Բայց վերջինս անհամեմատ ցածր է, քան առաջինը, և այնտեղ աւարտողներին շատ քիչ է աջողւում ստանալ մուշտէիդի պաշտօն։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՄԱՍՈՒԼԸ

Հոգևորականությունն և ազիտությունն՝ ահա այն երկու գործոնները, որ սերտ կապերով շղթայված իրար, կառավարում են ամբողջ Պարսկաստանը։ Ահա դրանք են, որ շատ անողոք կերպով հալածում են ամեն մի լուսաւոր միտք, ամեն մի գաղափար, որ կարող է որևէ կերպով պարսիկ ժողովրդի աչքերը բանալ։ Ահա դրանով պէտք է բացատրել, որ պարսիկ լրագիրները, մեծ մասով կամ հէնց իրանց սաղմային վիճակի մէջ են մեռնում, կամ լոյս տեսնելուց անմիջապէս յետոյ, և կամ շատ կարճ կեանք են ունենում։ Եւ այդ կարճ ժամանակամիջոցումն էլ անկարող են յեղափոխել կեանքը, նոր հոսանք մտցնել նրա մէջ։

Պարսկաստանում լրագիր, պարբերական հրատարակութիւններ ունենալու փորձեր, ինչպէս անցեալներում, նոյնպէս և ներկայում, արել և արում են, բայց միշտ էլ մոլլաների և ազգ ամբոխի կողմից անաջողութեան է հանդիպել, միշտ էլ հալածուել և այժմ էլ հալածուում է։

Դա փաստ է, որ պարսից մէջ պարբերական հրատարակութիւններ և կանոնաւոր դպրոցների ձեռնարկութիւններ եղել են և այժմ էլ կան, և միշտ էլ նախաձեռնողը, սկսողը եղել է ազատամիտ երիտասարդութիւնը, բայց ափսոս, որ այդ երիտասարդները այնքան աննշան թիւ են կազմում թանձր խաւերի մէջ խարխափող պարսիկ ամբոխի և մոլլաների հետ համեմատած։ Մասուլը իր իսկական գերի մէջ մտնելու համար անհրաժեշտ է գիտակցող և հասկացող տարր, իսկ այդ դրութեան հասնելու և մտաւոր զարգացում ձեռք բերելու միակ միջոցը կրթական հիմնարկութիւններն են և դպրոցները։ Բայց կա՞ն արդեօք Պարսկաստանում այդպիսի դպրոցներ։—Ոչ։ Նոյն հին խալիֆայական դպրոցներն են այժմ, ինչպէս և շատ առաջ. բոլոր դպրոցներն էլ գտնուում են հոգևորականների ձեռքում, աշակերտներին աւանդուում են միմիայն կրօնական առարկաները։ Գիտութիւնների, օտար լեզուների և այլ կարեւոր առարկաների հոտն անգամ չկայ։ Բոլոր դպրոցներում

էլ տիրում են հին, խալիֆայական կարգերը. մեծ, մութ ու նեղ սենեակ, ուր բազմաթիվ աշակերտներ, մեծ և փոքր, խոնված միասին և չոգած գետնին։

Ճիշտ է, Թեհրանում կան մի քանի դպրոցներ, որ իրանց տեսակով տարբերվում են վերև նկարագրված խալիֆայական դպրոցներից, ուր կրթությունը տարվում է ավելի լուրջ և բազմակողմանի ու մեծ ուշադրություն են դարձնում զարգացման վրայ, բայց այդ մի քանի դպրոցները ինչ կարող են անել։ Նոյն տեսակի դպրոց այս տարի բացվեց և Թաւրիզում, շնորհիվ թագաժառանգի լոզմանի (բժիշկ), որ սովորել է Եւրոպայում, և մի քանի կրթված պարսիկ երիտասարդների։ Այդ դպրոցում աւանդվում էին ռուսերէն, ֆրանսերէն, պարսկերէն և արաբերէն լեզուները, թուաբանություն, ֆիզիկա և աշխարհագրություն։ Լոզմանեան դպրոցը ունէր և իր գրադարանը-ընթերցարանը և հիւանդանոցը։ Նա միայն 8 ամիս կանոնաւոր շարունակվեց, բայց այդքան կարճ ժամանակամիջոցում զգալի առաջադիմություն նկատվեց. ահա այդ առաջադիմության թույլ ճառագայթները դեռ չորս պատերի միջից դուրս չեկած, հանգան, շնորհիվ ոգէտ և ժոլեռանդ ժոլլանների, որոնք ունեն իրանց հետ և ժողովուրդը։ Նրանք յայտարարություններ կպցնելով պատերին յորդորում են ժողովրդին, որ իրանց տղաներին չուղարկեն «լոզմանեան» դպրոցը, առարկելով, որ այնտեղ սովորեցնում են մոլորեցնող բաներ։ Դպրոցը կապեց, և այժմ հոգիվարքի մէջ է։

Ահա Պարսկաստանի կրթական գործը և ժողովրդի ու հոգևորականության բռնած դիրքը դէպի այդ։ Այդպիսի դպրոցական կարգեր ունեցող երկրի մասուլը ինչ պէտք է լինի։

Պարսից առաջին լրագիրը, որքան յայտնի է հաւաքած տեղեկություններից, լոյս է տեսել Սպահանում 70-ական թուականներին դոկ. Միրզա Թաղիխանի (Քաշանցի) եռանդուն ջանքերով։

Եւրոպայում կրթություն առած Միրզա Թաղիխանը վերադառնում է Սպահան, ուզում է իր գաղափարները տարածել ժողովրդի մէջ, ժողովրդին ծանոթացնել գիտական աշխարհի հետ և շեղտել Պարսկաստանի յետամնացության վրայ։ Բայց ինչպէս, ինչ միջոցներով։ Չըկային կանոնաւոր դպրոցներ, չըկային և ուրիշ հասարակական հիմնարկություններ։ Նա մտածեց լրագիր հրատարակել և անմիջապէս ձեռնարկեց «Ծաղիկ» գիտական-հասարակական թերթը։ «Ծաղիկը» միայն մի քանի տարի հրատարակվեց, բայց էլի այդքան կարճ ժամանակամիջոցում որոշ արդիւնքներ ցոյց տվեց, զգալի հետ-

քեր թողեց իր եռևից, շատերի թմրած մտքերը շարժեց, ոչ-մանք ընդունակ դառան նոր խնդիրների մասին խորհել։ Իսկ թէ որքան խուլընդոտների պատահած կըլինի «Ֆարհանգը», շատ պարզ է. կարդացող մասը շատ աննշան թիւ էր կազմում։ Եւ ահա երբ մեռաւ՝ այդ թերթը իր ջանքերով տանող դոկ. Միրզա Թաղիխանը, մեռաւ նրա հետ և իր «Ֆարհանգը»։

«Ֆարհանգը» ճանապարհ հարթեց, նախադուռն եղաւ մի շարք լրագրերի, աւելի լուրջ ու կարևոր թերթերի, որ հետզհետէ, իրար եռևից երևում են պարսից ոգորմելի կեանքի մէջ և կազմում են պարսից գրականութեան մէջ մի-մի երևոյթներ։

«Ֆարհանգից» յետոյ, Նասր-էդդին Շահի ժամանակ, 1880—81 թուականներին, էյթմադ Սալթանէի ջանքերով թէհրանում լոյս տեսաւ «Իրան» պաշտօնական թերթը, որ մինչև այժմ էլ հրատարակւում է։ «Իրանի» հրատարակութեան գործում պակաս դեր չէ խաղացել և Նասր-էդդին Շահը։ «Իրանը» գրական-հասարակական խնդիրներով այնքան էլ չէ զբաղւում, այլ մեծ մասամբ ուշադրութիւն է դարձնում քաղաքական խնդիրների վրայ։

Համարեա նոյն դերն է կատարում և «Իթթիլահ» (տեղեկութիւն) շաբաթաթերթը, որ այժմ էլ կայ և հրատարակւում է էլի էյթմադ Սալթանէի խմբագրութեամբ։

Թաւրիզում, դեռ 1889—90 թուականներին, Նասր-էդդին Շահը հիմնեց կառավարութեան դպրոց և իր անունով կոչեց «Նասրի»։ Այդ հիմնարկութեան մէջ գործում էին թէ ազատամիտ երիտասարդներ և թէ եւրոպացիներ։

«Նասրի» դպրոցում գործող մարդիկ կարիք են զգում և մի լրագրի։ Նրանք առանց ձգձգելու, մանաւանդ որ Շահից վայելում էին և ապահովութիւն և առանում խրախուսանք, ձեռք են զարկում թերթի հրատարակութեան գործին։ Այդ աջողւում է նրանց։ Թերթը կոչում են «Նասրիէ», ի պատիւ Շահի։ Լրագիր և դպրոց միացրած, նրանք հանդուն և արիաջան կերպով առաջ են տանում։ Կրթութեան աջողութիւնը դպրոցում, լրագրի տարածելը աւելի լայն շրջաններում, աւելի բազմաթիւ համարներով, խրախուսում և քաջալերում են նրանց իրանց սիրելի գործում։ Նրանք շատ լաւ հասկանում էին, որ հոգևորականութիւնն է միակ պատճառը, որ այժմ Պարսկաստանը այս ոգորմելի դրութեան մէջ է, որ Պարսկաստանը մնտեսական տագնապի մէջ է գտնւում և ժողովուրդը խաւարի մէջ է խարխափում։ Դէտք է նրա ոյժը և ազդեցութիւնը թուլացնել, նրան այդքան նշանաւոր դեր չլուսալ։ Այդ բոլորի մէջ նրանք հաւատացած էին, բայց միևնոյն ժամանակ

վախենում էին ազատ կերպով քարոզել այդ, մերկացնել իրականությունը, քանի որ իրանց դէմ կանգնած էր հոգևորականությունը, դրա հետ միացան և ոգէտ ամբոխը։

Ահա հէնց նոյն ժամանակներում և նման պայմանների մէջ մի խումբ երիտասարդներ Թեհրանում հրատարակեցին «Ռուզնամէյի Թարիաթ» (կրթական լրագիր) հասարակական-կրթական շաբաթաթերթը, որ աշխատում է կրթութիւն և զարգացում տարածել ժողովրդի մէջ, ցոյց տալ, պարզել այն խորը յետամնացութիւնը, որ ներկայացնում է Պարսկաստանը միւս տէրութիւնների հետ համեմատած։ Նա շեշտում է, որ միայն կրթութիւնը կարող է Պարսկաստանին փրկել, հանել այս թանձր խաւարի միջից և դնել առաջադիմութեան և զարգացման հանապարհի վրայ։ Բայց թէ որքան, ինչ չափով է հասնում իր նպատակներին, արդեօք արդիւնքներ ունենում է, ահա կարևոր հարցեր։ Ճիշտ է, նկատում է դրանց հետքը և արդիւնքը. բայց այնքան անհնան, այնքան աղօտ, որ ուշադրութիւն նոյն իսկ չէ դրաւում։

Բայց ինչ,—անցաւ էլի մի երկու տարի. հոգևորականութիւնը կատարեց իր սովորական դերը. խափանուեց «Նասրի» դպրոցը, դադարեց դրա հետ և «Նասրիէ» թերթը, միայն 8 տարի գոյութիւն ունենալով. իսկ «Ռուզնամէյի Թարիաթը» դեռ շարունակւում է հրատարակւել շնորհիւ, մեծ մասամբ, Շահի աւելի մօտիկից հսկողութեանը։

«Էհտիաջ» (ակնկալութիւն) շաբաթաթերթը, աւելի հեռուն գնաց, նա աւելի պահանջկոտ էր։ Նա հարուածում էր ամենն մի տգեղ երևոյթ և արարք, կռւում էր տիրող հին և ճնշական կարգերի դէմ, սրան-նրան, այս պաշտօնեային, այն կառավարչապետին խիստ ընդդատում։ Բայց «Էհտիաջը» դժբախտաբար միայն 3—4 ամիս հրատարակւեց, նա խափանուեց դեռ ոչինչ չարած, թէև այդքան կարճ ժամանակում որոշ շրջաններում համակրութիւն էր ձեռք բերել և շատ հետաքրքրութեամբ էր կարդացւում։ Բայց ով եղաւ պատճառը այդ թերթի դադարացման։ Թաւրիզի նախկին կառավարչապետ Ամիր-Նիզամը, որ յայտնի է եղել որպէս կեղեքող և հարստահարող ուշադրութիւն չէ դարձրել ժողովրդի կարիքների վրայ, անհոգ է եղել դէպի իր պաշտօնը։ Ահա այդ պակաս կողմերը խիստ կերպով քննադատել է «Էհտիաջ» շաբաթաթերթը։ «Էհտիաջի» բռնած այդ դիրքը բնականաբար կատաղեցնում է կառավարչապետին, որ ոչ թէ միայն դադարեցնում է թերթը, այլ և խիստ թակել ու ծեծել է տալիս խմբագրին։ Բայց ում բոզոքի պարսիկ խմբագիրը, ով է նրա ասածին լսողը, մի՞թէ

կառավարչապետին կրթողնեն և կանցնեն աղքատ ու իր դիրքով ոչնչութիւն ներկայացնող մի որևէ խմբագրի կողմը...

Թաւրիզում էլ մի-մի խումբ երիտասարդների ջանքերով 1897 թուին լոյս տեսաւ «Հադիդ» շաբաթաթերթը, բայց միմիայն 4—5 համար. նա խափանուեց, ինչպէս իր նախորդները։

Բացի վերև առաջ բերուած լրագրերից, որ ընդհանրապէս հասարակական-քաղաքական բնաւորութիւն էին կրում, կան թերթեր թէ Թաւրիզում և թէ Թեհրանում, որոնք մի տեսակ ընտանեկան բնաւորութիւն են կրում, օրինակ, «Աղաբ» (քաղաքավարութիւն), «Թեամալ» (հասկացողութիւն) և այլն։

«Աղաբը», ինչպէս անունն էլ բնորոշում է, միայն քաղաքավարական ձևեր է սովորեցնում, թէ ինչպէս պիտի ընդունել մեծին, ինչպէս վերաբերուել օտարին և այլն։ Իսկ «Թեամալը» զուտ բանաստեղծական թերթ է, բայց շատ ողբմելի և խղճալի բան է ներկայացնում իր ոտանաւորներով և գրողներով։ Իրանց ոտանաւորների մէջ սրան-նրան, իր հօրը, պապին են գովում, շատ շատ միայն սէր են երգում։ «Թեամալի» մէջ բոլոր գրողներն էլ միրզաներ են (գրագիր)։

Զարմանալի չէ, եթէ ասենք, որ չէք գտնի մի գրագէտ պարսիկ, որ գոնէ մի ոտանաւոր գրած չլինի։ Հեղինակաւոր բանաստեղծները չեն մասնակցում այդպիսի ամսագրերի, սրանց գրուածքները առանձին գրքերով են հրատարակւում։

Ինչպէս ընթերցողը տեսնում է, վերև յիշուած լրագրերը մեծ մասամբ շաբաթաթերթեր են եղել. և դա շատ հասկանալի է։ Մթթէ այդ պայմանների մէջ հնարաւոր է օրագիր ունենալ և պահպանել նրա գոյութիւնը. մամուլ չկայ, աշխատակցող քիչ և այլն։ Միակ օրագիրը «Ջուլասաթլ-հաւատոս» (պատահած դէպքերի համառօտութիւն), որ հրատարակւում Թեհրանում և այժմ էլ գոյութիւն ունի։ Դրա թէ հրատարակութիւնը կանոնաւոր չի տարւում և թէ մի առանձին աչքի ընկնող դեր չի խաղում, նա միայն արձանագրում է պատահած դէպքերը։

Բացի այդ, Թեհրանում հրատարակւում են նաև երկու պատկերազարդ ամսագրեր,—«Մուզնամիի շարաֆ», «Մուզնամիի շարաֆ ֆաթ», որոնք նշանաւոր և հեղինակաւոր մարդկանց,—թէ գրագէտ և թէ քաղաքագէտ, մեծ մասամբ վերջինների,—նկարներ են տալիս համառօտ կենսագրականներով։ Այդ ամսագրերը մեծ հանակրութիւն են ձեռք բերել և բաւականին տարածուած են թէ հասարակ ժողովրդի մէջ և թէ նոյն

իսկ հոգևորականների մէջ։ Այս տարի երկու ամսագրերի էլ երեք տարին լրացաւ։

Մի ուրիշ լրագիր, որ ուշադրութեան արժանի երևոյթ է ներկայացնում Պարսկաստանում, դա «Ֆալահաթլ-Մուզաֆֆարիյ» թերթն է, որ այս տարուանից է հրատարակւում։ «Ֆալահաթլ-Մուզաֆֆարիյ» թերթը երկրագործական լրագիր է, որ հրատարակում են մի խումբ մասնագէտ ֆրանսիացիներ, ռուսներ և պարսիկներ։

Մեր այս թռուցիկ տեսութիւնից պարզ երևում է որ պարսիկ երիտասարդների մէջ էլ կայ եռանդ, գործելու ցանկութիւն, նա էլ ընդունակ է ժառաւոր կեանքով զբաղւելու, նրա մէջ էլ կան առաջադիմելու նշաններ։ Բայց դրա դէմ կանգնած է հոգևորականութիւնը, իր հետ ժոլեռանդ, տգէտ ժողովուրդը։ Ահա թէ ինչու ժամուլը, լրագրական խօսքը չի կարողանում իր իսկական դերի մէջ մտնել և շատ շուտով խափանւում է. երբեմն էլ գաղարում է, որովհետև կարդացող չունի։

Մի քանի խօսք էլ արտասահմանեան պարսից ժամուլի մասին և ապա անցնենք զանազան հրատարակութիւնների հարցին։

Արտասահմանեան ժամուլը աւելի խիստ լեզու է բանեցնում և վերանորոգչական բնաւորութիւն է կրում։ Գոնւեցին մի քանի պարսիկ երիտասարդներ, որոնք ազատ չկարողանալով իրանց միտքը յայտնել Պարսկաստանում, ձեռնարկեցին Եգիպտոսում և Հնդկաստանում մի քանի թերթերի հրատարակութեան, ինչպէս «Մուզնամիի Փարուարիշի», «Սուրէյիա» (Եգիպտոս), «Համբուլ-Մութին» (Հնդկաստանում)։ Դրանք միշտ հարւածում են հին կարգերը, հարւածում մեծ պաշտօնական մարդկանց, նոյնիսկ յարձակւում են կառավարութեան վրայ նրա համար, որ միանգամայն աչքաթող է արած կրթական անհրաժեշտ գործը։ Նա քարոզում է նոր հոսանք մտցնել, ինտելիգենտ դաս կազմել, որ մաքառի անպէտք կարգերի և օրէնքների դէմ, բարենորոգումների ձեռք զարկել և այլն։ Այդ լրագրերի ազատ մուտքը Պարսկաստանում երբեմն արգելւում, երբեմն էլ թոյլատրւում է։ Այժմ դրանց մուտքը արգելւած է։

Դպրոցից և մամուլից զատ զարգացման գործում որոշ դեր են խաղում և զանազան հրատարակութիւնները, ինքնուրոյն և թարգմանական գրական աշխատութիւնները։ Ինքնուրոյն գրւածքներից ամենից շատ կարդացւում և տարածւած են Սադիի և Հաֆիսի բանաստեղծութիւնները։ Այդ երկուսից պակաս տեղ չէ բռնում և համակրութիւն վայելում նաև Օմա-

բա-Ֆայաս, որի բանաստեղծութիւնները միայն վերջին տարի-ներս հրատարակեցին մի քանի եւրոպացիներ։ Սրան ոմանք մի քանի կողմերով աւելի բարձր են դասում, քան առաջին երկուսին։ Ինքնուրոյն գրականութեան մէջ կան և վէպեր, անեկդոտներ, իսկ ամենից շատ կրօնական գրուածքներ։ Թարգմանական գրուածքներից ամենից տարածուածը Թօքինգօնն է, որ ձեռքէ ձեռք խլում, կարդում է նոյնիսկ հասարակ ժողովուրդը։ Տարածուած են նաև Սե-նըֆար-Թուանգդար (երեք գինակիր) և Մանտերբիսոի գրուածքների թարգմանութիւնները, և այլ վիպական, փոքր տասով և գիտական գրուածքներ, մանաւանդ անեկդոտներ։

ԴԷՐՎԻՇՆԵՐԸ

Դէրվիշները, մահմէդականութեան այդ թափառաշրջիկ քարոզիչները, մի հետաքրքիր և խորհրդաւոր դասակարգ են ներկայացնում պարսկական աշխարհում։ Ամեն տեղ են նրանք։ Իրանի ամենայն տեղ անկիւնում անգամ կարելի է նրանց տեսնել։ Եւ նրանք միշտ դուրսն են, փողոցում, հրապարակում, ժողովրդի մէջ։

Դէրվիշի արտաքինը նոյնքան հետաքրքիր է և ուշագրաւ։ Նրա երկար, ցիրուցան թափուած մազերը հասնում են մինչև ուսերը. դէմքը ամբողջապէս թափուած մազերի մէջ, իսկ աչքերը խիստ փայլում են դէմքի հաստատուած թխութեան մէջ։ Ուսերին գցած է հաստ, բրդոտ մորթի, որ իջնում է մինչև ոտները, իսկ ձեռքին ունի երկար և հաստ, խորդուբորդ և ահագին գլխով մահակ, որը հանդիսաւոր կերպով շարժում, ծռնում է այս ու այն խանութին, խորհրդաւոր կերպով կանչում «հակ» (արդարութիւն), ոտանում մէկ փուլ, մէկ շահի և շարունակում իր ընթացքը։

Ահա այնտեղ, քիչ հեռու, փողոցի հակառակ ծայրում խռնուած է հոծ բազմութիւն։ Բազմութեան մէջ, իրար դէմուդէմ, գլուխները բարձր բռնած, կուրծքները դուրս գցած կանգնել են երկուսը այդ հետաքրքիր անձնաւորութիւններից։ Նրանք խորամիտ կերպով քայլում են, խիստ մրցում է տեղի ունենում, վիճում են, հերթով խօսում, հարցեր տալիս, և իւրաքանչիւրը ձգտում է ինքը յաղթող դուրս գալու։ Նրանք խօսում են բարձր, եղանակով—երգելով, բառերը արտասանում են հատիկ-հատիկ, շեշտում իւրաքանչիւրի վրայ, պահպանում գերասանական ամենանուրբ շարժումները և ձևերը, միևնոյն ժամանակ հանդիսաւոր կերպով շարժում երկաթից շինած իրանց թուրը, որը արևի ճառագայթների տակ փայլփլում է, իսկ ձեռքներին կախած ունեն քէշկիւլը։

Ահա այնտեղից, շատ հեռից, հնչում է մի մելամաղձոտ, թախծալի կկլոց, նման ընդհատուող հառաչանքի, որը տար-

տուս է բերում մարդի վրայ։ Դա էլ դէրվիշ է, որը պատմում է Ալիի արկածներից, ներքողում նրան...

Բայց ով է դէրվիշը, ինչ է ներկայացնում նա իրանով, ինչ դաւանանքներ ունի և վերջապէս ինչու է նա այդպէս թափառում երկրէ երկիր։

Դէրվիշութիւնն էլ մի տեսակ վարդապետութիւն է, բայց և կրում է ճգնաւորական կնիք—բնաւորութիւն։ Դէրվիշութիւնը հասարակ թէ մի տեսակ ճգնաւորութիւն է, դուցէ միայն այն տարբերութեամբ, որ դէրվիշները կամաց-կամաց դուրս են եկել, հեռացել ճգնաւորի միայնակեաց վիճակից, բայց հիմքը, էութիւնը մնացել է նոյնը։

Դէրվիշները, են բացատրում, բար արաբից, է երկնքից իջած հինգերորդը (Ահամ, Ցոր երանելիներ է դէրվիշի Ուրեմն դէրվիշ Պարսկաստանի ժամանակ այնքան տարածկանոնաւոր կազմի տեր կազմածների մէջ։ Կենտրոնը հարաստանը, ուր վիշների ընդհանմեծաւորը՝ Շադրա հետ Խորասան 40 ուրիշ վիշներ, որոնք

Դէրվիշը

ինչպէս նրանք սերուած են Ղաժորը համարում եօթ գոյներից դամ, Նոյ, Աբրահի և Ղաժարը), և կերպարանքով, շութիւնը սկսել նում անյիշատակներից և այժմ ուած է, որ ունի մակերպութիւն, բոլոր իր հատ։

Դէրվիշների մարում է Խոնատում է և դերնուր զեկավարը, մի Ալի շահը։ սանում մնում են նշանաւոր դերմեծի հետ միա-

ցած՝ հսկում են միւս մասերի վրայ։ Խորասանն է նշանակում զեկավար անձնաւորութիւններ զանազան գաւառների և քաղաքների, ինչպէս Սալմասի, Թաւրիզի, Խոյի, Ռաշտի, Ուրմիի և այլ տեղերի համար։ Նա է հետևում դէրվիշների վայելուչ ընթացքի վրայ, հրահանգներ տալիս, կարգադրութիւններ անում։

Խորասանի այդ 40 հոգի դէրվիշները մեծաւորի խորհրդականներն են. դրանք միշտ էլ մնում են այնտեղ։ Մեռնելիս

ժեծաւորը կանչում է 40 դէրվիշներից ամենախելօքին և ընտրում է իր տեղը—նա ժառանգ չունի։ Նա ունենում է երեք սուրբ գիրք, դրանցից երկուսը յանձնում է իր յաջորդին, իսկ մէկը թաղում են նրա հետ։ Թորհրդականների քարտուղն թիւը լրացնելու համար, ընտրում են դրսից մի յայտնի դէրվիշ, և այդպէս շարունակաբար։

Այդ կենդրոնից գաւառները և քաղաքները ուղարկւած դէրվիշները ունեն գրեթէ նոյն պաշտօնը, ինչ մուշտէիզները։ Նրանք են հոգում իրանց յանձնւած վայրի դէրվիշների պէտքերը, հսկում կանոնաւոր գործունէութեան վրայ և այլն։ Նրանք ունեն ընդհանուր ժողովատեղի, որ շինւած է ամֆիթատրոնի նման, ուր հաւաքւում են որոշ օրեր—կիրակի, ունենում են կրօնական վէճեր և աղօթում են։ Այդ ժողովատեղին կոչւում է թաքիա, որի մէջ գտնւում է և դէրվիշների դպրոցը, ուր սովորում են հասակաւոր մարդիկ և պատրաստւում են դէրվիշութիւն ընդունելու։ Որոշ դասընթաց կայ, որ պիտի անցնեն և ապա ստանան դէրվիշութիւն։ Ով ուզում է դէրվիշ դառնալ, նա ամբողջ եօթ տարի մնում է թաքիայում, մեծ մօտ, ծառայում, պատրաստւում, գրքեր կարդում, և ապա, եթէ տեսնում են ընդունակ է և կարող, ընդունում են նրան դէրվիշութեան մէջ և առաջին անգամ տալիս են կացին—թաւար։ Երբեմն թաւարի տեղ, մանաւանդ աննշան դէրվիշներին, տալիս մի հաստ մահակ։

Կարճ ժամանակից յետոյ, նորընծայ դէրվիշին տրւում է քէշկիւլ—ընկոյզի ամանը, որը լինում է սև գոյնի, որ միշտ էլ դէրվիշները կախում են ձեռքներից, փողը այնտեղ են գցում։ Քէշկիւլից յետոյ նորընծան ստանում է փուստը։ Դա բրդեայ մորթի է, որը գցում են ուսերի վրայ և ծածկում ամբողջ մէջքը։ Փուստը համարւում է դէրվիշի անկողինը, որը անբաժան է իրանից և միշտ էլ, ճրթ և ձուր կամենայ, կարող է հանգըստանալ, քնել։ Փուստը հէնց անկողնու մտքով է տրւում դէրվիշին։ Այդ բոլորից յետոյ դէրվիշին տրւում է թաջը—գըլխարկ։ Թաջը լինում է ամբողջապէս սպիտակ. բայց բոլոր դէրվիշներն էլ չեն ստանում թաջ, միայն ընդունակներն են այդ ստանում, իսկ անընդունակները, որոնց խենթ են համարում, պատում են գլխաբաց, երկար մազերը դէպ ետ ածած գըլխին. դէրվիշները առհասարակ երկար մազեր են թողնում. շատ անգամ այնպէս են հիւսում, թւում է թէ գլխարկ է, գըլխի վէջտեղը դնում են կարմիր թասակ, շատ անգամ էլ զանազան թալիսմայական գրուածքներով ասեղնագործած թաց։

Այս բոլորից զատ, դէրվիշներին տալիս են սպիտակ կը-

տորից շապիկ, որը իջնում է մինչև գետին։ Այդ սպիտակը համարում է դերվիշի պատանքը, որը դեռ կենդանի ժամանակ կրում է իր վրայ։ Ձեռնադրության միջոցին տրված շապիկը չեն հագնում, մաքուր պահում են, սպիտակ կտորից նորն են կարել տալիս և հագնում, իսկ այն իսկականը միայն մեռնելիս է գործ ածվում իբր պատանք։

Սպիտակ հագնելը—շապիկ և թաղ—բացի այն, որ կենդանի թաղածի նշան է, հեռու աշխարհային զարմանքներից, կեանքի ցոփություններից և զեղխություններից, համարվում է նաև նշան մաքրության, յատակության և անթծության, այդպէս մաքուր պիտի լինի և դերվիշի սիրտը, նրա հոգին։ Եւ իսկապէս, հէնց դերվիշության հիմքն, ուսմունքն էլ դրա մէջ է կայանում։ Վերցնենք անարատության ճշմարտության և մաքրության զաղափարի ուսմունքը, խախտում է և դերվիշական վարդապետության ամբողջ շէնքը, այն ժամանակ տեղ կներկայանայ մի անմիտ, առանց որոշ դաւանանքների ազանդ, զուրկ էությունից և գլխաւոր հիմունքներից։ Դերվիշները պատկանում են ահ—հագիգաթ վարդապետության, որ նշանակում է ճշմարտության հետևողներ։ Եւ իրենց դրած նպատակին—ճըշմարտության հասնելու համար, դերվիշները ունեն երկու աստիճան։ Այդ աստիճաններն են նախ սերլ, որը ընդունում են բարոյականության հիմք. և երկրորդ, ծէսեր, որ ամեն ճգնություններով և մարմնական տանջանքներով ժեռցնում են մարմնականությունը, մաքրում հոգին և սիրտը։ Դերվիշների կեանքում շատ բնորոշ է այն, որ վերոյիշեալ մի շարք արարողությունների միջոցին խփում են նորընծայ դերվիշի գլխին և ասում. «Կոյր եղիր, խուլ եղիր, խեղճ եղիր»։ Այդ պատգամը, որ շատ բնորոշում է դերվիշության վարդապետությունը, կրկնում են երեք անգամ, իւրաքանչիւր խօսքը երեք անգամ կրկնելով և շեշտելով։

Այդ պատգամի մէջ է կայանում վարդապետության էությունը և դերվիշների ամբողջ դաւանանքը։ Կոյր եղիր, որ մէկի տունը գնալիս յանցաւոր միտումներով չնայես այդ տան կնոջ վրայ. առհասարակ ոգեղ, վատ բան չտեսնես. խուլ եղիր, որ չլսես, յանցաւոր խօսքեր չտանես բերես. խեղճ եղիր, ուրիշներին մի ճնշիր, մի հարստահարիր, մի կեղեքիր։ Եւ իսկապէս. դերվիշները կոչում են նաև ֆաղիր, զալանդար, որ նշանակում է խեղճ։

—Ահա ինչքան ծանր և դժուար է դերվիշությունը,—ոգեորված նկատեց մի դերվիշ, երբ բացատրում էր այդ պատգամի էությունը։ Ճիշտ է, ծանր, խիստ դժուար է այդ բոլորը,

բայց այդ գաղափարը մեզ համար շատ բարձր, նուիրական է։ Մթթէ դրանից աւելի վեհ, աւելի հմայիչ դաւանանք կայ, լինել մաքուր, յստակ հոգով, ուրիշին միայն բարի ցանկանալ, մթթէ դրանից աւելի մեծ անձնազոհութիւն կայ, երբ դեռ ողջ ժամանակ կրում ենք՝ մեր վրայ պատանք...

Այսպէս են միշտ դէրվիշները. ամենահասարակ խօսակցութեան ժամանակ անգամ գործ են դնում հարուստ միմիկա և դերասանական ձևեր, խօսում են ճոխ և գեղեցիկ, էլ ուր մնաց իրանց հաւատալիքի մասին խօսելիս։

Դէրվիշութիւնը, եթէ այսպէս կարելի է ասել, բաժանւում է մի շարք աղանդների, թւով մօտ 17։ Այդ աղանդ-սըլսըլաները բաժանւում են երկու որոշ խմբերի։ Առաջին խմբի սըլսըլաները, ինչպէս դաւուդի, քէքիսար, դուդէի, հաքանի և այլն, չեն ամուսնանում, իսկ միւս խմբի սըլսըլաները, օրինակ աջամի, սուլթանի, ընդունում են ամուսնութիւնը։

Դէրվիշի կինը երբ մեռնում է, նա այլևս իրաւունք չունի երկրորդը առնելու, այդ խիստ արգելւում է։ Դէրվիշութիւնը ընդունում է միակնութիւնը, և եթէ մէկ դէրվիշ յանդգնում է գաղտնի կենակցութիւն վարել մի երկրորդի հետ և այդ պարզւում է, այն ժամանակ շատ անողոք են վերաբերւում դէպի յանցագործը։ Նրան կանչում են հրապարակական ժողովի թաքիայում, բոլորի ներկայութեամբ անպատւում են, առնում դէրվիշին յատուկ իրերը—փուստ, թաջ, թաւար, քէշկիւլ, և ճանապարհ դնում՝ զրկելով ի հարկէ նրան դէրվիշի իրաւունքներից։

Զմոռանանք նկատել, այդ սըլսըլա-աղանդները իրանց էութեամբ և դաւանանքի զկզրունքների տեսակէտից շատ աննշան տարբերութիւն են ներկայացնում։ Այնքան աղօտ, անորոշ են այդ տարբերութիւնները, որ իրանք՝ տարբեր սըլսըլաների պատկանող դէրվիշները անգամ չեն կարողանում բացատրել, պարզել։ Շատ սըլսըլաները տարբերւում են միայն աննշան արտաքին ձևերով, ծէսերով, արարողութիւններով։ Միակ աչքի զարնող և յայտնի տարբերութիւնը այն է, ինչ վերը ընդգծեցինք, այսինքն միքանի սըլսըլաներ ընդունում են ամուսնութիւնը, իսկ միւսները մերժում են։

Դէրվիշը առհասարակ վարում է ասստանդական, թափառական կեանք. նա այսօր այստեղ է, կարճ ժամանակից յետոյ, կամ գուցէ հէնց վաղը կըհեռանայ։ Դէրվիշը նստակեաց կեանք չի վարում. նա միշտ էլ ոտի վրայ է, միշտ էլ շրջում, խօսում, քարոզում է։ Այդ թափառելուն նպաստում է այն, որ դէրվիշը ընդհանրապէս չունի սեփականութիւն, նա կապուած

չէ հոգի հետ, նա չունի—և չպիտի ունենայ էլ—հարստություն։ Նա լիք է, գրպանը մաքուր։ Դէրվիշի միակ հարստությունը կազմում են թաշը, թաւարը, քէշկիւլը, փուստը, որոնք նաև նրա անբաժան ընկերներն են։

Դէրվիշը ամեն մարդի բարեկամն է. նա չունի, և իսկապէս չպիտի ունենայ, ընտանիք։ Դէրվիշի ընտանիքը հատուկ մարդկութիւնն է, իսկ հայրենիքը՝ ամբողջ աշխարհը։ Նա ամեն օր պտտում, շրջան է կատարում, հաւաքում է, ծախսում և ուտում, իսկ մնացածն էլ տալիս է աղքատներին։ Դէրվիշութիւնը իսկապէս դրուած է շիտակ և յստակ կոմունիստական հիմքերի վրայ. դէրվիշը ճշմարիտ կոմունիստ է։

Ամեն ազգերից էլ կան դէրվիշների մէջ, ինչպէս պարսիկ, արաբ, խաֆշիկ, հնդիկ, թուրք, աղուան։ Դէրվիշները, շատ անհնարին բացառութեամբ, կորած են ածում աֆիոն, անձնատուր լինում նրան և երազանքների մէջ ընկնում։ Դէրվիշներին իրաւամբ կարելի է համարել Գարսկաստանի փիլիսոփաները, իմաստութեան միսիոնարներ և իսկապէս նշանաւոր դեր են խաղում Իրանի մտաւոր կեանքում։ Նրանք անընդհատ պտտում են ամենուրէք, խօսում են, քարոզում կեանքի իմաստութիւնը, մուրում և ժողովրդի տուած փուլերով ապրում։ Եւ ժողովուրդն էլ տալիս է այդ փողերը. այդ «տալը» ասես տացել է պարտաւորութեան բնաւորութիւն։

ՊԱՏԻԺՆԵՐԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

Մի հարիւր տարի առաջ Անդրկովկասի մի մասը պարսկական բէժիմին էր ենթակայ։ Անցնելով ռուսների ձեռքը, այդ մասը մեծ փոփոխութիւնների ենթարկուեց, մինչդեռ Պարսկաստանում տիրում են նոյն կարգերը, որոնց ականատես էին մեր պապերը Երևանեան նահանգում։ Այդ հին կարգերի բնորոշ կողմերից մէկն էլ պատիժների ձևն ու գործադրութիւնն է։

Ե ղ բ ա յ ր ա ծ ն ե ր

Պարսկաստանում օրէնագրքեր չկան, մասնաւորապէս պատիժների և ընդհանրապէս բոլոր կարգերի օրէնքները կամայականութիւնների և քմահաճոյքների մի անվերջ շարք է։ Դատ է կտրում հաքիմը, ինչպէս իր քէֆն է ուզում, կողոպտում է սարդարասը, ինչպէս իր կամայականութիւնն է թելադրում։ Այսօր մարդասպանին գլխատման հրաման է տալիս հաքիմը, վաղը նոյն պայմանների մէջ կատարուած յանցանքը յանկարծ անպատիժ է մնում կամ մի քանի թումանով վերջացնում, որովհետև նրա քէֆը այդպէս է ուզում, որովհետև այդպէս է տրամադրուած։ Այսօր քնարգուզարը մի որևէ յանցանքի համար, օրինակ հաւատ հայհոյելու, հարիւր ճիպոտի հարուած է

նշանակում, բայց վաղը մի ուրիշ քեարդուզար նոյն յանցանքի համար առնում է միայն մի քանի թուման տուգանք։ Այսպէս է ամեն ինչ Պարսկաստանում։ Կամայականութիւնների աշխարհ է։

Այժմ էլ Պարսկաստանում, ինչպէս և հաբիւր տարի առաջ, այնպիսի սոսկալի պատիժներ են կատարւում, որոնք յիշեցնում են մարդկութեան շատ հին և վայրենական շրջանները։

Պարսկաստանում գործադրւող պատիժները կարելի է բաժանել հետևեալ երեք խմբերին՝ նախնական, բռնի եւ սովորական պատիժներ։

Նախնական պատիժներն էլ լինում են թեթև և ծանր. առաջինները գործ են դրւում թեթև յանցանքների դէպքում, իսկ երկրորդները ծանր յանցանքների։ Նախնական պատիժների մէջ ամենահեշտը և տանելին էլի համարւում է «ֆալախկա»։ Ծանցագործի ոտները դնում են ֆալախկայի մէջ և ամուր սեղմում են, երբեմն այնքան ամուր, որ մատների ծայրերից սկսում է արիւն կաթել։ Այս վիճակի մէջ մնում է նա այնքան, մինչև խոստովանւում է իր յանցանքը, իսկ եթէ չի խոստովանում, ֆալախկային հետևում է ուրիշ աւելի ծանր պատիժ։ Սկսում են անխիղճ կերպով տաքացած երկաթներով դաղել նրա մերկ մարմինը, շիկացած թասեր դնել յանցագործի ածիլած գագաթի վրայ, ի հարկէ ածիլած է լինում պաշտօնեայի կարգադրութեամբ։ Այս կարգի պատիժներին են պատկանում նաև հետևեալները։ Վերցնում են սուր քարեր կամ սրացրած փայտեր, դնում ձեռների մատների արանքը և ամուր կապում մատների ծայրերից, կամ թէ մեծ քարեր են դնում ոտների, ազդրերի մէջ և հատ թոկով ոտների ծայրերից կապում։ Պատժւածը երկար ժամանակ այս վիճակի մէջ է մնում. պատահել է, որ ձեռքի մատները կտրուել են։ «Զու դնելն» էլ այս կարգի պատիժներից է, բայց սա այնքան սարսափելի և ծանր չէ, ինչքան տարօրինակ։ Զուն լաւ տաքացնում են և անցկացնում յանցաւորի յետոյքից. մի պատիժ, որ իսկապէս պարսկի ուղեղը միայն ընդունակ է հնարել, մըտածել այդպիսի մի բան։

Շատ աւելի ծանր և սարսափելի պատիժներ կան, որ գործ են դնում ծանր յանցաւորների, օրինակ մարդասպանների վերաբերմամբ։ Այս կարգի ամենածանր և եղերական պատիժները «դամիշ դնելը» և «ամորձիկներից կախելն» են։

«Դամիշ դնելս», հէնց այդ անունը մարդու սարսուռ է ազդում։—Նախ վերցնում են ամուր եղէգն, լաւ սրում, ապա անցկացնում մատների եղունգների տակից, այնքան խրում, մին-

չև որ հասնում է բաղուկին։ Երբ մի փոքր փուշ է մտնում մեր եղունգի տակը, մի բոպէ անգամ չենք կարողանում տանել, երևակայէք ուրեմն ահագին դամիշը, որ կտրել, անցել և հասել է մինչև բազուկը։ Սարսռում էք չէ՞, ընթերցող։ Իսկ ատրձիկներից կախիչը։ յանձագործին, ձեռները շղթայած, հաստ թոկով կախում են մի բարձր տեղից (թոկը ամրացրած է լինում թեւերի տակից), ատրձիկներից կախում են լիդրանոց, էլ աւելի ծանր, քար, իսկ ցաւը կատարեալ դարձնելու համար, երբեմն էլ քարը ցնցում են։

Այս երկու պատիժներից քիչ սարսափելի չէ ճիպոտներով ծեծելը։ Աւելի ծանր է այս պատժի ձևը։ Մեղապարտի ոտները և ձեռները շատ ամուր կապում են իրար, վզի վրայ նստեցնում մի ծանր մարդ, երբեմն էլ երկուսը (ծանր մարդ չգտնելու դէպքում) և սկսում են ճիպոտներով հարուածել ոտներին, երբեմն ձեռներին և նոյնիսկ մերկ մէջքին, նայած թէ հաքիմը կամ քեարգուզարը քանի ճիպոտի հրաման է տուել։ Ինքնադրենք 50 ճիպոտի հրաման է արձակուած, այդ ոչ թէ նշանակում է 50 անգամ խփել, ոչ, այլ 50 ճիպոտով այնքան խփել, ինարկէ առանձին-առանձին, որ բոլորն էլ կոտրուեն, փշուր-փշուր լինեն։ Տասը ճիպոտով հնարաւոր է նոյնիսկ հարիւր հարուած տալ, գուցէ դեռ աւելի, այդ էլ խփողների կամայականութիւնից կախուած։ Բայց, առհասարակ, նկատուած է որ խփողները գիտեն ձևը, այնպէս են խփում, որ ճիպոտները երկրորդ, երրորդ հարուածից յետոյ կոտրտուում են։ Այսպիսի պատիժների ժամանակ մեծ նշանակութիւն ունի և այն հանգամանքը, թէ արդեօք յանցաւորի ազգականները «քաղցրացրել» են խփողների բերանները ինչ չափով։ Այդպիսի դէպքում նախ հարուածները ուժեղ չեն լինում և երկրորդ՝ այնպէս են խփում, որ իսկոյն ճիպոտը կոտրուում է։ Նոյնիսկ գլխատման դէպքում մեղապարտի ազգականները «տեսնում» են դահիճներին, որպէս զի շատ չըշարշարի և մի հարուածով կտրի։ Շատ անգամ պատահում է, որ դահիճը ունենում է բութ դանակ և յանցաւորին պատճառում անասելի տանջանք։ Տարօրինակ է, չէ՞. բայց շատ էլ մի զարմացէք, ամեն ինչ այս երկրում տարօրինակ է։

Անցնենք բուն պատիժներին։ Այս էլ պիտի իմանալ, որ վերոյիշեալ նախնական պատիժները գործ են ածւում իբր բուն պատիժ, ինարկէ նայած յանցանքին։

Բուն, իսկական պատիժները թէև ծանր են, բայց աւելի կտրուկ։ Երբ ձեռքն է դեր խաղացել յանցագործութեան մէջ, ձեռքն են կտրում, իսկ երբ ոտը կամ մարմնի ուրիշ անդամը, նրանից են զրկում։ Բայց որպէսզի ցաւը աւելի սաստիկ լինի,

կարելուց ամիջապես յետոյ, ձեռքը կամ ոտքը դնում են եռացրած ջրի մէջ. այդ անում են միևնոյն ժամանակ այն նպատակով, որ սեղմի, կուչ գայ և արիւն չհոսի։

Հրացանի կամ թուրի (թնդանօթ) բռնելն էլ այս կարգին են պատկանում։ Մի քանի տարի առաջ Թաւրիզում երեք թուրք աւազակ-մարդասպանների թուրի բռնեցին։ Սրանցից մէկը, որ բաւականին հարուստ է լինում, նախօրօք կաշառում է թուրչիներին և թուրը այնպէս են բռնում, որ վրիպում է։ Տգեղ ամբոխը հրաշք է համարում այդ և ենթադրում է, որ Ալլահի մատը խառն է, թէ նա արդար էր։ Բայց դատաւորը այս անգամ հրացանի բռնելու վճիռ է արձակում։ Ժուժանը սպասում էր էլի հրաշքի, բայց... իզուր,

Սարսափելի է և այն պատիժը, որ յանցաւորին սպանում են «ջրի կաթիլներով»։ Մեղաւորին ամուր և խնամքով կապում են սիւնից, որ գլուխն էլ հնարաւորութիւն չունենայ շարժելու և վերևից ջուրը կաթիլ-կաթիլ, հաւասար ոյժով կաթում է հէնց նրա գանգի վրայ։ Եւ այս դրութիւնը տևում է ամիսներ, մինչև ծակւում է գանգը և անցնում ուղիղին։ Այժմ այս պատիժը համարեա թէ վերացել է։

Ուշ-ուշ է պատահում նաև «սառոյցով սպանելը»։ Մեղապարտին նստեցնում են սառոյցի վրայ, շրջապատում են սառոյցով և նա մահանում է։ Թէև այս պատիժը յանախ չի կրկնւում, բայց մերկացած՝ սառոյցի վրայ և սառը ջրում կանգնեցնելը սովորական պատիժ է համարւում։ Շատ անգամ էլ տաք, եռացրած ջուր են լցնում մեղաւորի մերկ մարմնի վրայ, որը, իհարկէ, բոլորովին խաշւում է։

Կախելն էլ Պարսկաստանում ընդունւած և գործադրւող պատիժ է համարւում և այդ շատ անգամ կատարւում է մեծ հանդիսաւորութեամբ, որ սարսափ ազդի ժողովրդի վրայ։

Պատահում է, որ մարդին ողջ-ողջ թաղում և սպանում են։ Մեղապարտին կանգնեցնում մի փոսի մէջ, շորս կողմը լցնում են կիրով և միայն նրա գլուխն է դուրս մնում։ Այսպէս ողջ-ողջ նա խաշւում, մեռնում է։ Պատահում է նաև պատի մէջ բացւածք են թողնում, մեղաւորին կանգնեցնում այդ ճեղքի մէջ, կողքերից նորից շարում են, շարում են նոյնպէս վերևից և նա կենդանի-կենդանի մնում է պատի մէջ և մեռնում։ Ահա ինչեր է ստեղծել պարսկի ուղեղը։

Սրանից պակաս տարօրինակ և եղերական չէ նաև հեռանալ պատիժը։ Ծանցաւոր կնոջը դնում են մի տոպրակի մէջ. նոյն տոպրակի մէջ դնում են նաև մի կատու և մի շուն, երբեմն դրանցից մէկնումէկը։ Ապա կապում են տոպրակի բե-

բանը և սկսում են ճիպոտներով ծեծել։ Տոպրակի մէջ սկսում է մի եղերնական, քստմնելի տեսարան, գերբնական կռիւ երեք ողջ թաղուածների մէջ և այդ զարհուրելի կռիւը վերջանում է երեք մահով։ Այս պատիժը գործադրւում է գրեթէ միմիայն կանանց վերաբերմամբ, և ընդհանրապէս պոռնիկ կանանց համար։

Կանանց համար էլ սահմանուած կայ ճիպոտի ծեծը, բայց շատ հեռաքրքիր է ձևը և միևնոյն ժամանակ բնորոշ պարսկական բարքերի տեսակէտից։ Կնոջը մտցնում են մի տան մէջ և միայն ձեռքերը դուրս են հանում փոքրիկ լուսամուտից և սկսում են ճիպոտով խփել ձեռքերին։

Բանտարկութիւնը իր էութեամբ թեթև պատիժ է համարւում Պարսկաստանում։ Բանտարկեալները առհասարակ շատ անշան թիւ են կազմում, նախ այն պատճառով, որ դա թեթև պատիժ է համարւում և երկրորդ, որ գլխաւորն է, գոյութիւն չունի բանտային կառավարութիւն։ Բանտարկեալի պէտքերը, ինչպէս հաց, ջուր, ծխախոտ և այլն, հոգում են նրանց բարեկամ-ազգականները, իսկ եթէ որոշ ունևոր մարդկանց տրւում է բանտապետների կողմից, այն էլ շատ հասարակ բան, համոզւած լինելով, որ յետոյ մէկին տասը կառնեն։

Ո՜հ, ինչ սարսափելի են Պարսկաստանի բանտերը։ Պարսկաստանում ամեն մի պաշտօնեա, օրինակ վալիագ, քեարգուզար, ընդհանուր նահանգապետ և այլն, ունի իր առանձին բանտը։ Ինձ աջողւել էր տեսնել հասարակ պաշտօնեանների բանտերը, բայց շատ հետաքրքրւում էի մտնել վալիագի բանտը։ Այդ էլ ինձ աջողւեց։ Ես այնտեղ մնացի միմիայն տաս րոպէ, բայց քիչ էր մնացել խեղդւէի։ Բանտի դուռը զրնդալէն վեր բարձրացաւ և ես սարսափով մտայ ուղղակի գետնի տակը։ Նեղլիկ և մութ ճանապարհը գնում էր գետնի տակով։ Ճանկարծ երևաց լոյսի աղօտ և թոյլ շողեր։ Եւ ես մտայ բանտը։ Դա մի երկար և նեղ ստորերկրեայ նկուղ էր, ամբողջ երկարութեամբ դրւած էր երկու երկար ու հաստ գերաններ, որի շուրջը նստուած էին բանտարկեալները։ Սրանք ազատ չէին, բոլորի ոտներն էլ ամրացրւած էին գերանին հագցրած երկաթէ հաստ օղերի մէջ և կողպւած, մի քանիսի ձեռքերը շղթայած էին, իսկ ոտքերին էլ կար հաստ և ծանր քիսմներ։ Մեռելային կընիք էր նկատւում բոլորի դէմքերին էլ։ Ծոնաւութիւնը մզմզացնում էր մարդի, իսկ գաթշահոտութիւնը հօ անտանելի էր։ Նկուղը խաւար էր, լոյսի մի քանի աղօտ շողեր միայն վերից էր թափւում և բանտին տալիս աւելի սարսափելի, միևնոյն

ժամանակ խիստ խորհրդաւոր բնաւորութիւն։ Եւ ես սարսափով փախայ այդ սպանդանոցից։

Այսպէս են բանտերը Պարսկաստանի բոլոր կողմերում, դեռ մեր նկարագրածը գուցէ էլի լաւ համարուի։

Կայ մի տարօրինակ պատիժ էլ, որ գործ է ածւում գլխաւորապէս անչափահասների վերաբերմամբ և ընդհանրապէս թեթև յանցանքների, օրինակ ձու, հաւ, կամ նման արժէքաւոր առարկաներ գողանալու դէպքում։ Փոքրիկ գողերի քթերի միջնորմը ծակում, ամուր թել են անցկացնում, ապա ֆարրաշը թելի երկու ծայրերից բռնում և պտտեցնում է ամբողջ գիւղի շուրջը, որպէսզի ամանչեն և մէկ էլ այդպիսի բան չանեն։ Շատ անգամ էլ, ֆարաշը չարաճճի է լինում և ուզում է տանջել փոքրիկներին, սկսում է առաջ վազել և թելը աւելի ձգելով ցաւը սաստկանում է, իսկ տղաներն էլ սոխլաած նոյն արագութեամբ վազում են ֆարաշի յետևից։

Գործածւող պատիժ է նաև այն, որ յանցաւորի ականջը մեխում են ծառին, երեսը ծածկում և գնացող եկողը երեսը բաց է անում, թքում և անցնում։

Անցնենք ողորմական պատժին։ Դա գլխաւորապէս ջառման է։ Գողութիւնների, կռիւների և ընդհանրապէս միւս յանցանքների դէպքում միշտ էլ հարուստը հնարաւորութիւն է ունենում ազատուել, իսկ աղքատը անպայման կրում է պատիժը։

Երբ երկու մարդ կռուում են, կամ մէկը միւսին փող է պարտ լինում և գործը հասնում է դատաւորին կամ սարպարատին, էլ հերիք է։ Թէլօք դատաւորը շատ լաւ գիտէ իր անելիքը։ Նա նախ կանչում է իրը յանցաւորին, մի լաւ ծեծում, մի գուսար էլ «ջառման» առնում և ճանապարհ դնում։ Կանչում է միւսին, նրան էլ փետրում և ճանապարհում է։ Բայց դեռ գործը չի վերջացել. մի քանի օրից յետոյ նորէն դատաւորը կանչում նրան ծեծում, առնում և ճանապարհում։ Այս այնքան սովորական երևոյթ է պարսկական կեանքում, որ ամեն տեղ, ամեն քաղաքում և ամենայն օր պատահում, միշտ էլ ականատես ենք։ Այդպիսի հանգամանքներից ֆարաշներն էլ գիտեն օգուտներ։ Նրանք իրաւունք են համարում չոքել յանցաւորի դռանը, և միայն այն ժամանակ հեռանալ, երբ կստանան մի քանի դրան, իսկ չտալու դէպքում նա սպառնում է քաշել, տանել դատաւորի մօտ։

Մնթադրենք թէ մի որևէ գիւղում մարդասպանութիւն է պատահել, դատաւորները ոչ թէ հեռանում, աշխատում են չարագործին բռնել և պատժել, այլ այդ գիւղից ահագին տուգանք են պահանջում, պատճառաբանելով, որ նրանց գիւ-

զուգն է պատահել սպանությունը, ուրեմն նրանք էլ պիտի տուժեն։

Այսպես, յիշենք հազարաւոր դէպքերից մէկը. մի հայաբնակ գիւղում սպանուում է մի հրէայ։ Դատաւորը իմանում է այդ և տասներեքը սրած մտնում է գիւղը սուսկալի պահանջներով։ Գիւղացիներն ցոյց են տալիս մարդասպանին և պատճառաբանում, որ իրենք մեղաւոր չեն։ Բայց դատաւորին ինչ, նա իր փողի տէրն է և ամբողջ գիւղը 200 թուման ջառմա է տալիս։ Սա եղակի օրինակ չէ, ոչ էլ ուշ-ուշ կրկնուող, այլ առօրեայ քան սովորական։ Պաշտօնեաները բոպէ առ բոպէ աչքները մնկած սպասում են, որ մի բան պատահի, որպէսզի կեղեքեն, քամեն ժողովրդին և լցնեն իրենց անկուշտ կոկորդը։ Շատ անգամ էլ հէնց իրենք պաշտօնեաները ստիպ են պատրաստում և, ինչպէս ասում են, մի «սահանայով» կանչում են սրան-նրան և ջառմայում։ Գնացէք Սալմաստ, ջառմայի կլասիկ երկիրը և ականատես եղէք անցած-դարձածին։ Պարսիկ պաշտօնեաները ոչ միայն չեն պատժում որոշ սրիկայ և չարագործ մարդկանց, այլ ընդհակառակը հովանաւորում և պահպանում են, նոյնիսկ իրենց բռնած դիրքով քաջալերում այդ սրիկաներին։ Այդ անում են ինարկէ իրանց շահը աչքի առաջ ունենալով։ «Ջառման» է որ սնտեսապէս քայքայում, խեղճացնում է ժողովրդին, թոյլ, անկարող տարրին։

Ահա այդ «ջառման» է որը համարում է պատիժների շարքի մէջ իր էութեամբ ամենածանրը և քայքայողը, և որին մենք տալիս ենք ասվարական պատիժ անունը։

III ՄԱՍ

ԱՍՈՐԻՆԵՐԸ ԵՒ ՔԻՒՐԴԵՐԸ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԱՍՈՐԻՆԵՐԸ

I.

Ասորեստանը, որը իր նշանակալից դերը ունեցել է ընդհանուր ազգերի պատմական կեանքի մէջ և մի օղակով կապել է Արևմուտքը Արևելքի հետ—ընկաւ, դրկուեց իր քաղաքական անկախութիւնից Քրիստոսից դեռ մի քանի դար առաջ։ Այնուհետև ամբողջ Ասորեստանը թատերաբեմ է դարձնում պարսիկների, մարերի, բաբելացիների, մակեդոնացիների արշաւանքների համար։ Եւ դրանցից իւրաքանչիւրը մի որոշ ժամանակով ենթակայանում է իրեն տէր, իշխող Ասորեստանին։ Երկիրը տարուում, ոտի տակ է գնում. ժողովուրդը կոտորուում և հալածուում, մնացածն էլ ցրուում։ Այժմ մնացել են այդ պատմական ժողովրդի միայն բեկորները՝ յեղաքիւրած, այլասերուած, մի մի յիշատակներ անցած փառքի։ Թէև ասորիները 1 ½ միլիոն հոգի լինեն, բայց նրանց կարելի է հանդիպել նոյնիսկ ամենահեռաւոր անկիւններում, անկիւններ, ուր ասորիների անունը այժմ հազիւ է յիշուում և կամաց-կամաց ձուլուում, հալուում են բնիկ տարրերի մէջ։ Բայց յամենայն դէպս ասորիների մեծ և նշանաւոր բաժինը կենտրոնացած է Սիրիայում, համարեա բոլորն էլ արաբախօս են։ Լիբանանում եղած ասորիների թիւը հաշուում են մօտ 250,000։ Այս ասորիները, Մարոն պատրիարքի անունով, կոչում են մարոնի, որովհետև վերջինս է կազմակերպել դեռ եօթներորդ դարում։ Մարոնի ասորիներ կան նաև ուրիշ վայրերում, նոյնիսկ կենտրոնում։ Մարոնի ասորիները բաժանուել են իրենց եկեղեցուց VI դարում և արաբախօս են. հին ասորերէնը այժմ միայն ծիսական լեզու է։ Մարոնի ասորիները խաչակիրների արշաւանքների ժամանակ նշանաւոր դեր են խաղացել, նրանք եղել են դաշնակիցներ խաչակիրներին՝ մահմեդականների դէմ։ Սրանք դրեթէ առանց բացառութեան կաթոլիկներ են և դեռ XIII դարի սկզբում (1215) ընդունել են Պապի հեգեմոնութիւնը։ Ֆրանսիան միշտ էլ առանձին հովանաւորութիւն և պաշտպանութիւն է ցոյց տալիս այդ ասորիներին։ Իր

դարաւոր խաբի և տակտիկայի հաստաձայն, օսմանեան կառավարութիւնը այստեղ ևս աշխատում էր նւազեցնել, կոտրել անուղղակի միջոցներով քրիստոնեա ժողովուրդներին։ Դրա հետևանքն էր վաթսունական թւերում մարոնի ասորիների և դիւրզիների յայտնի ընդհարումը, որի ժամանակ զոհւեցին մօտ 13,000 ասորիներ։ Այդ կռւին մասնակցել են նաև թուրք կանոնաւոր և անկանոն զինւորներ։ Վերջի վերջոյ Ֆրանսիայի և Անգլիայի միջնորդութեամբ Լիբանանը զատւեց, վերածւեց առանձին փաշայութեան և տրւեց որոշ իրաւունքներ։ Փաշան ընտրւում է քրիստոնեաներից և տարեկան տալիս են մի որոշ տուրք, թէև համարւում է Սիրիայի մի նահանգը։

Բէյրութ քաղաքը, որը ամբողջ Սիրիայի ուսումնական, մտաւոր կենտրոնն է համարւում և մտաւոր սննունդ է մատակարար իր յայն շրջակայքին, ունի մօտ 100,000 բնակիչ, որի 1/8 ասորիներ են։ Բէյրութի ասորիները մարոնի, եաղուբի, յունադաւան և կաթոլիկ են։ Բէյրութում կան երկու կոլէջներ (ամերիկացիների և ճիզւիթների). առաջինում տիրող լեզուն է անգլերէնը, իսկ միւսում ֆրանսերէնը, կայ նաև արաբերէնը։

Սիրիայի ասորիների դրութիւնը վատթարացաւ մանաւանդ Եփեսոսի ժողովից յետոյ, երբ խիստ հալածանք սկսւեց յոյն կայսրների կողմից։ Եւ մեծ թւով եաղուբի և քաղդիական ասորիներ, մասամբ և յունադաւաններ, թողնում են Սիրիան և խմբերով գաղթում Քաղդիա, այնտեղից էլ Հնդկաստան։ Մնացածներն էլ ընդունում են յունադաւանութիւն, բայց սրանք էլ նեղւում են և ստիպւած կամաց-կամաց դիմում են դէպի Ամերիկա. այնպէս որ այժմ Ամերիկայում եղած ասորիների թիւը հասնում է մօտ 70—80,000։

Մի բուն եաղուբի ասորիներ, թւով մօտ 50,000, կան բուն Ասորեստանում՝ Մէրտին։ Եաղուբիները բաժանւել են ասորոց հին եկեղեցուց Քաղկեդոնի ժողովում և այդպէս կոչւում էին բոլոր «Մի բնութիւն» դաւանող քրիստոնեաները։ Եաղուբի ասորիները առհասարակ բողոքում են այդ անւան դէմ և իրենք ուզում են «հին ասորիք» կոչւել։ Եաղուբիները ունեն երկու պատրիարքարան՝ Անտիոք և Դէյրել Զէֆրան (փոքրիկ գիւղաքաղաք, Մէրտինից 8 մղոն հեռաւորութեան վրայ)։ Անտիոքի պատրիարքն է կառավարում և հոգում Սիրիայի և Լիբանանի եաղուբիներին։

Եաղուբի ասորիներ կան նաև Խարբերդի շրջանում, որոնք երբեմն անւանւում են նաև եփրեմեան, Մար-Եփրեմի անունով, որը ասորի եկեղեցական գրականութեան ամենաերևելի դէմքն

պատակելու նպատակով, իսկ վերջիններս էլ դիմադրում են։

Անցեալ 1903 թվի գարնանը Մաւանայի ջէլօնները խիստ կերպով ընդհարուեցին բայզաղէ քրդական աշիրէթի հետ։ Կռիւը տեւեց տմբողջ երկու ամիս։ Ասորիները ունենում են միմիայն 200 կուռողներ, այն ին չ քիւրդ բայզաղէները լինում են 6000-ից աւելի։ Կռիւը վերջանում է երկուստէք զոհերով, ջէլօնների ընկնում են աւելի քան 10 լաւ կուռողներ։ Մաւանացիները մեծ յոյս ունէին պարսից կառավարութեան վրայ և սպասում էին օգնութեան, բայց տէրութիւնը ձրեթէ անտարբեր դերի մէջ մնաց։

Լեռնցի ասորիները առհասարակ ունեն կանոնաւոր կազմուածք, լայն թիկունք և արտայայտիչ դէմք։ Ասորի կանայք ընդհանրապէս գեղեցիկ են, ունեն երկայն դէմք, կանոնաւոր և գեղեցիկ դիմագծեր։ Ասորիների մէջ պատահում են կանայք, որ ուղղակի գեղեցկուհիներ են։ Կանայք ընդհանրապէս սիրում են սպիտակ կտորներ, ասես այդ գոյնը աւելի է սազում նրանց։

Խիստ կերուում են լեռնցի ասորիները նաև տով։ Լեռնցիում են լայն, մի խօսքով ասներին, խաղահագուստ, շատ շորերին։ Իսկ դաշտեցիները զական ժողովրդաշէւար, արխալուքով տարբերուում են դաշտեցի աիրեանց հագուստները հագնուածակ հագուստ, պատ շարժումներին չխանգարող նման քրդական ընդհակառակը հագնուում են տեղի նման, նեղ լուղ, կամ պինջակ և շատերը ծածկում են ֆուրաշկա։ Ջէլօնների հագուստը խայտաբղէտ է, գործ են ածում սիրուն կտորից գօտի, որը կապում են զանազան ծալքերով և օղերով, իսկ ծածկում են քօլօզ փաթաթուած գեղեցիկ, գոյնզգոյն եազմաներով։

Ասորի կին

Լեզուի կողմից համեմատաբար աւելի բարձր են Պարսկաստանի ասորիները, քան միւս հատուածները։ Սրանց գրաբարն ասորերէնն է։ Բոլոր դպրոցներում ասորերէնը խիստ պարտադիր է և լուրջ ուշադրութիւն է դարձնուում լեզուի վրայ։ Լեզուի տարածմանը և զարգացմանը մի յայտնի չափով մղում, զարկ են տալիս նաև ասորական հրկու թերթերը։ Միայն Բարանդուզի և Սուլդուզի ասորիները թրքախօս

են։ Այդ շրջանում իրականապէս կայ միայն մի լեզու՝ թուրքերէն, որ ընդհանուր է բոլոր ազգութիւններին։ Հայերն էլ թրքախօս են, չկարծէք նրանք հայերէն գիտեն բայց խօսում են թուրքերէն։ Ոչ. հասակաւորները հայերէն մի բառ անգամ չգիտեն միայն փոքրիկները սկսել են թոթովել հայերէնով՝ շնորհիւ նոր հիմնուած դպրոցների։ Նոյնը պիտի ասենք նաև այդ շրջանի ասորիների վերաբերմամբ։ Կան փոքր, աննշան թիւով նոյնպէս քրդախօս և հայախօս ասորիներ, բայց դրանցից շատերը գիտեն նաև իրենց մայրենի լեզուն։ Այս. ժողովուրդները—քիւրդեր, թուրքեր, ասորիներ, մասամբ և հայեր—ընդհանրապէս խառնուած են իրար, վարում են նոյն կենցաղը, ունեն նոյն վարք ու բարքը, մինչև իսկ նման են իրենց արտաքինով և բնաւորութեան խառնուածքով։ Անասողոր աչքը անկարող է ջոկել ասորին՝ հայից, թուրքը՝ հայից և ընդհակառակը։ Շատ անգամ սխալւում են նոյնիսկ տեղուանը երկար ժամանակ ապրող մարդիկ։ Այդ դժուար է նամանաւանդ Սուլդո գում և Բարանդուզում։ Այդ ժողովուրդների մէջ յանախ տեղի են ունենում նաև ամուսնութիւններ և այդ հանգամանքը աւելի դարկ է տալիս նրանց խառնելուն, ի մի ձուլելուն։

III.

Դեռ դարերից ի վեր զանազան դաւանութեան միսիոնարութիւններ մտել են ասորական ժողովրդի մէջ և բոլոր ասորաբնակ վայրերը դարձրել են իրենց եռանդուն պրոպագանդի յենակէտներ։ Սիրիայի ասորիները, ինչպէս և ասորական միւս հատուածները, նոյնիսկ ամենահեռաւոր և խուլ անկիւններում ցրուած ասորիները, դարերից և տասնեակ տարիներից ի վեր դաւանել են իրենց հին ասորական եկեղեցուց և բաժան-բաժան եղել մի շարք դաւանութիւնների մէջ։ Ճիշտ է մի շարք տարբեր դաւանութեան միսիոնարութիւններ կան և իւրաքանչիւրը ունի իր հետևողները, բայց ասորական ժողովրդի մեծագոյն բաժինը կաթոլիկներ և բողոքականներ են։

Պարսկաստանի ասորիների մէջ էլ բուն դրել են և գործում իսկապէս բազմապիսի միսիոնարներ, ինչպէս բողոքականներ, կաթոլիկներ, ռուսներ, եպիսկոպոսականներ և այլն։

Այդ միսիոնարութիւններից ամենից առաջ բողոքականներն են մտել Ուրմի, Պարսկաստանի ասորիների մէջ գործելու, իրենց պրոպագանդը առաջ տանելու։ Այդ եռեռնական թուերին էր։ Սրանք պատկանում են ամերիկական պրեսպիտե-

քական կամ երիցական եկեղեցուն և Board ընկերութեան ներ-կայացուցիչներն են։

Բողոքականները հաստատուել և գործում են դաշտեցի ասորիների մէջ. լեռնցիները մինչև այժմ մնացել են անմատչելի։ Հէնց սկզբից ասորական ժողովուրդը գրկաբաց ընդունում է բողոքական միսիոնարներին և կրօնական միասիայի պրոպագանդը ծաւալւում է լայն չափերով։ Այո, գրկաբաց են ընդունում։ Եւ այդ շատ հասկանալի պատճառով։ Այդ միսիոնարական Board ընկերութեան կենդրոնական վարչութիւնը ոչինչ չի խնայում իր քարոզիչների գործունէութիւնը գիւրացնելու համար։ Վերջիններս ստանում են առատօրէն դրամ, օգնում ասորիներին, քարեկաւում ասորիների ընտանեկան դրութիւնը, ձրի աղքատանոցներ և հիւանդանոցներ բացում, հիմնում են ասորին, ժողովրդական ուսումնարաններ, ուր ուսումը աւանդւում է ձրիաբար. նոյնիսկ բոլոր աշակերտները, անշան բացառութեամբ, ստանում են դասական պիտոյքներ, որոշ չափով և հագուստներ։ Այդ բոլորին աւելացրէք և այն հանգամանքը, որ բողոքական ասորիները աւելի ապահով, աւելի ազատ են լինում Թուրք գիւղատէրերի հարստահարութիւններից և սարկաւագների կեղեքումներից, մի խօսքով, նրանց կեանքը շատ աւելի ապահով լինում, քան նեստորական ազգակիցներինը։

Ահա այն մի շարք գրաւիչ հանգամանքները. և երևոյթները, որոնք առանձին թափով մղեցին նեստորական ասորիներին պրեսբիտերեան եկեղեցու գիրկը։

Այժմ բողոքականները ունեն մի շարք ասորին երկսեռ դպրոցներ (մօտաւորապէս 50), Պարսկաստանի ասորիների մէջ, գլխաւորապէս Նադլու-Հայ, Շհար-Հայ և Բալանդուզ մահալներում, ուր սովորում են մօտ 1200—1500 աշակերտներ և աշակերտուհիներ։ Իսկ Ուրմի քաղաքից քիչ հեռու, Շհար-Հայի մօտ, մի ընդարձակ գեղում կառուցել են իրենց կոլէջը, հիւանդանոցը, դեղատունը և այլ մի շարք հաստատութիւններ։ Այդ կոլէջը առաջ եղել է միջնակարգ դպրոց, գիմնազիական դասընթացով, կենտրոնականի դեր է կատարել գիւղական դպրոցների համար, ունեցել է աստուածաբանական, բժշկական. արհեստագիտական և լեզուաբանական բաժիններ (անցնում էին, այժմ էլ դասաւանդում են, չորս լեզուներ—անգլիերէն, ասորերէն, պարսկերէն և օսմանեան Թուրքերէն), ուր պատրաստւում էին շրջիկ պրոպագանդիստներ և ֆէլդշերներ,—բայց այժմ այդ կոլէջը ընկած է և աւելի ու աւելի ընկնում է իր բարձրութիւնից և անկարող է կատարել առաջւայ գեղեցիկ դերը։ Եւ արիթ

[illegible] ապաստարանը շատ էր անմխի-թար, [illegible] մի քանի փոքր կայ փքուն, ուռցրած ծը-ռանգով [illegible] մեծ մասը [illegible] անհրաժեշտ յարմարութիւն-ներ։ Այն ինչ որ դիտաց կանգնած են միսիոնարներին յատկա-նները, [illegible] ամեն յարմարութիւններով, իսկ իրենք էլ ապ-ջրեց կերպով, ամեն յարմարութիւններով, կահաւորուած են ամենա-ցրուած շէնքերը, որոնք զարդարուած, կահաւորուած են ամենա-[illegible] ճաշարան։ Եւ խեղճ կոյլէջ, ասես մի հեգ-ռում են [illegible]։ Ասորի բողոքական ուսուցիչ-նութիւն է այս բոլորի դիմաց։ Ասորի բողոքական ուսուցիչ-ները ամսական առանում են 10—18 թուման վարձատրութիւն-ներ։ Այս ինչ է ծանրացած գործի մեծագոյն բաժինը, այն և դրանց վրայ է ծանրացած գործի մեծագոյն բաժինը, այն ինչ միսիոնարները առանում ահագին, աւելի քան «չաղ» ռո-ճիկներ, փշրանքներն է միայն, որ տրուում է միւս ուսուցիչնե-րին։ Այս ոգեղ և հակակրելի երևոյթը նկատելի է Պարսկաս-տանի ամեն անկիւններում, ուր կան բողոքականներ և կաթո-լիկներ։ Վերջիններիս մէջ էլ նոյն երևոյթը հաւասար չափով աչքի է խփում։ Շատ անգամ որպէսզի աւելի «չաղ» պատառը մեծ իրենց, միսիոնարները վարձում են ուսուցիչներ անպատ-բաստ, իրենց կոչմանը անարժան անձնաւորութիւններից՝ քիչ ռոճիկ տալու համար։

Անաչառութեան դէմ չմեղանչելու համար ասենք, որ այդ կոյլէջը ժամանակին մեծ դեր է խաղացել, տուել է բաւական թուով ասորի կրթուած երիտասարդներ, մասնիկ գիւղերի և գա-ւառների համար ուսուցիչներ, պատրաստել է արհեստաւոր-ներ և տուել է անթիւ համալսարանական բժիշկներ։ Այդ բժիշ-կները սովորել են գլխաւորապէս Ամերիկայում և Անգլիայում։ Այժմ Ուրմիում կան աւելի քան հարիւր համալսարանական ասորիներ, առաւելագոյն մասը բժիշկներ, ուր դառնում էք համալսարանական էք հանդիպում, բայց նրանք աւելի քան ան-պէտութիւն և դատարկութիւն են ներկայացնում։ Ասես նրանք ազատ, բարձր մտքերի բովից չեն անցել և քաղաքակիրթ երկրներից չեն գալիս։ Նրանք ոչնչով չեն հետաքրքրուում Ուրմի-ում, չի նկատուում հասարակական ազգային ջիղ, կենդանի, թարմ հոսանք նրանց, կրթուած ասորիների մէջ, նրանք ոչինչ նոր բան չեն բերում։ Եւ դա շատ պարզ պատճառով։ Նրանք արտասահմանում մնում են այնպիսի միջավայրի մէջ, խմոր-ուում են այնպիսի ժամերով և աշխարհայեացքներով, որ ուրիշ բան անկարելի էր սպասել։ Ասորական ժողովրդի համար այդ ինտելիգենտ, համալսարանական երիտասարդութիւնը բոլորո-վին անտէր է, ազգայնական ոչինչ չկայ նրանց մէջ և ամեն ինչ մեռած է։

ելու։ Մուստաֆա-բէյի կալուածները Սարդարը յանձնել է նը-շանաւոր Կոր-Մահմէդ-բէյին, որը նոյնպէս հայդարանցի է և Մուստաֆա-բէյի ոխերիմ թշնամին։ Այսպիսով կռուի, արիւն-հեղութիւնների սպառնալիքը թողնում է սարդարը երկու քիւրդ ցեղապետներին։

Առհասարակ քիւրդ ցեղապետները և աշիրէթները, հե-տևապէս ամբողջ ցեղերը, հաշտ աչքով չեն նայում իրար վը-բայ, միշտ էլ աշիրէթների յարաբերութիւնները լարուած են. քիւրդի այդ թուլութիւնից շատ են օգտուել տաճիկ և պարսիկ կառավարութիւնները։ Ով ուժեղ, հզօր է, նրան է և՛ իրաւունքը, և՛ հողը, նրա կողմն է և՛ արդարութիւնը։ Այսպէս է տրամաբանում քիւրդի ուղեղը և այդ ընդունում է առաջնորդող դաւանանք։ Եւ այդ հանգամանքը յայտնի չափով նպաստում է մի շարք կռիւների, ապերածների առաջանալուն։ Բայց չպի-տի մոռանալ և այն, որ ընդհանուր թշնամու դէմ կռուելիս նը-բանք հեղութեամբ կը թողնեն այդ աշիրէթական թշնամու-թիւնները և կը միանան թշնամուն դէմ դնելու համար։

Պարսկաստանի քիւրդը առհասարակ գեղեցիկ է, բարձ-րահասակ, սև աչքերով, դուրս ընկած կրծքով, թուխ դէմքով։ Բայց կան և շէկ մազերով, կապոյտ աչքերով, ինչպէս օրի-նակ Աւդօր ցեղապետ Ջաֆար-աղան։ Պարսկաստանի քիւրդը սիրում է հագնուել ճոխ, խայտաբղէտ հագուստներ, վառ, փայ-լուն գոյներ, բարձր գլխարկներ՝ փաթաթուած գոյնզգոյն և շքեղ շալերով ու եռամաններով։ Դեղեցիկ կտորից է լինում և նրանց օգտին, որ մի քանի տակ փաթաթում են, իսկ դրա մէջ էլ խրում են դանակներ, եռաթաղաններ, ատրճանակներ, նրանք անբաժան են հրացանից և ժապաւէններով զարդարուած նիպակ-ներից։ Այսպիսի շքեղութեամբ քիւրդը սիրում է զարդարել և իր ձին, որին քիւրդը աւելի է սիրում, քան իր կնոջը։ Քիւր-դի զգեստները առհասարակ լայն են կարուում, այնքան լայն, որ կարողանան ազատ շարժուելիս անել մանաւանդ ձիու վրայ։

Պարսկաստանի քիւրդերը ընդհանրապէս շատ հմուտ են զինավարժութեան մէջ, մանաւանդ նրանք մեծ հմտութեամբ բանեցնում են դաշոյն, նիզակ, նոյնպէս և զեկավարում են ձիերը։ Քիւրդերը հէնց մանուկ հասակից, իբր դպրոցական դասընթաց, վարժուում են զինավարժութեան և ձիավարժու-թեան մէջ, քաջ գիտնալով, որ դրանք են կազմելու նրա կեանքի անբաժան ընկերները։ Ամեն մի քիւրդ իր զաւակին սովորեցնում է անվեհերութիւն և ձիավարժութիւն, աւազակու-թիւն և զինավարժութիւն, պատմում են ցեղագրութիւնը, այն

են։ Այդ շրջանում իրականապէս կայ միայն մի լեզու՝ թուրքերէն, որ ընդհանուր է բոլոր ազգութիւններին։ Հայերն էլ թրքախօս են, չկարծէք նրանք հայերէն գիտեն բայց խօսում են թուրքերէն։ Ոչ. հասակաւորները հայերէն մի բառ անգամ չգիտեն միայն փոքրիկներն սկսել են թոթովել հայերէնով՝ շնորհիւ նոր հիմնուած դպրոցների։ Նոյնը պիտի ասենք նաև այդ շրջանի ասորիների վերաբերմամբ։ Կան փոքր, անհրաժեշտ թիւով նոյնպէս քրդախօս և հայախօս ասորիներ, բայց դրանցից շատերը գիտեն նաև՝ իրենց մայրենի լեզուն։ Այդ ժողովուրդները—քիւրդեր, թուրքեր, ասորիներ, մասամբ և հայեր—ընդհանրապէս խառնուած են իրար, վարում են նոյն կենցաղը, ունեն նոյն վարք ու բարքը, մինչև իսկ նման են իրենց արտաքինով և բնաւորութեան խառնուածքով։ Անտարբեր աչքը անկարող է ջոկել ասորին՝ հայից, թուրքը՝ հայից և ընդհակառակը։ Շատ անգամ սխալւում են նոյնիսկ տեղու�ը երկար ժամանակ ապրող մարդիկ։ Այդ դժուար է նամանաւանդ Սուլդո գում և Բարանդուզում։ Այդ ժողովուրդների մէջ յաճախ տեղի են ունենում նաև ամուսնութիւններ և այդ հանգամանքը աւելի զարկ է տալիս նրանց խառնուելուն, ի մի ձուլուելուն։

III.

Դեռ դարերից ի վեր զանազան դաւանութեան միսիոնարութիւններ մտել են ասորական ժողովրդի մէջ և բոլոր ասորաբնակ վայրերը դարձրել են իրենց եռանդուն պրոպագանդի յենակէտներ։ Սիրիայի ասորիները, ինչպէս և ասորական միւս հատուածները, նոյնիսկ ամենահեռաւոր և խուլ անկիւններում ցրուած ասորիները, դարերից և տասնեակ տարիներից ի վեր զաւուել են իրենց հին ասորական եկեղեցուց և բաժան-բաժան եղել մի շարք դաւանութիւնների մէջ։ Ճիշտ է մի շարք տարբեր դաւանութեան միսիոնարութիւններ կան և իւրաքանչիւրը ունի իր հետևողները, բայց ասորական ժողովրդի մեծագոյն բաժինը կաթոլիկներ և բողոքականներ են։

Պարսկաստանի ասորիների մէջ էլ բուն դրել են և գործում իսկապէս բազմապիսի միսիոնարներ, ինչպէս բողոքականներ, կաթոլիկներ, ռուսներ, եպիսկոպոսականներ և այլն։

Այդ միսիոնարութիւններից ամենից առաջ բողոքականներն են մտել Ուրմի, Պարսկաստանի ասորիների մէջ գործելու, իրենց պրոպագանդը առաջ տանելու։ Այդ եռանդական թեերին էր։ Սրանք պատկանում են ամերիկական պրեսպիտե-

բական կամ երիցական եկեղեցուն և Board ընկերութեան ներկայացուցիչներն են։

Բողոքականները հաստատուել և գործում են գաղտնի ասորիների մէջ. լեռնցիները մինչև այժմ մնացել են անմատչելի։ Հէնց սկզբից ասորական ժողովուրդը գրկաբաց ընդունում է բողոքական միսիոնարներին և կրօնական միտքի պրոպագանդը ծաւալւում է լայն չափերով։ Այո, գրկաբաց են ընդունում։ Եւ այդ շատ հասկանալի պատճառով։ Այդ միսիոնարական Board ընկերութեան կենդրոնական վարչութիւնը ոչինչ չի խնայում իր քարոզիչների գործունէութիւնը դիւրացնելու համար։ Վերջիններս ստանում են առատօրէն դրամ, օգնում ասորիներին, բարելաւում ասորիների ընտանեկան դրութիւնը, ձրի ազգատանոցներ և հիւանդանոցներ բացում, հիմնում են ասորին, ժողովրդական ուսումնարաններ, ուր ուսումը աւանդւում է ձրիաբար, նոյնիսկ բոլոր աշակերտները, անշան բացառութեամբ, ստանում են դասական պիտոյքներ, որոշ չափով և հագուստներ։ Այդ բոլորին աւելացրէք և այն հանգամանքը, որ բողոքական ասորիները աւելի ապահով, աւելի ազատ են լինում Թուրք գիւղատէրերի հարստահարութիւններից և սարդարաստի կեղեքումներից, մի խօսքով, նրանց կեանքը շատ աւելի ապահով լինում, քան նեստորական ազգակիցներինը։

Ահա այն մի շարք գրաւիչ հանգամանքները. և երևոյթները, որոնք առանձին թափով մղեցին նեստորական ասորիներին պրեսբիտերեան եկեղեցու գիրկը։

Այժմ բողոքականները ունեն մի շարք ասորին երկսեռ դպրոցներ (մօտաւորապէս 50), Պարսկաստանի ասորիների մէջ, գլխաւորապէս Նադլու-Հայ, Շհար-Հայ և Բարանդուզ մահալներում, ուր սովորում են մօտ 1200—1500 աշակերտներ և աշակերտուհիներ։ Իսկ Ուրմի քաղաքից քիչ հեռու, Շհար-Հայի մօտ, մի ընդարձակ գետնում կառուցել են իրենց կոլէջը, հիւանդանոցը, դեղատունը և այլ մի շարք հաստատութիւններ։ Այդ կոլէջը առաջ եղել է միջնակարգ դպրոց, գիմնազիական դասընթացով, կենտրոնականի դեր է կատարել գիւղական դպրոցների համար, ունեցել է աստուածաբանական, բժշկական, արհեստական և լեզուաբանական բաժիններ (անցնում էին, այժմ էլ դասաւանդում են, չորս լեզուներ—անգլիերէն, ասորերէն, պարսկերէն և օսմանեան Թուրքերէն), ուր պատրաստւում էին շրջիկ պրոպագանդիստներ և ֆէլդշերներ,—բայց այժմ այդ կոլէջը ընկած է և աւելի ու աւելի ընկնում է իր բարձրութիւնից և անկարող է կատարել առաջուայ գեղեցիկ դերը։ Եւ ուրիշ

ունեցայ այցելել կօլլէջը և տպաւորութիւնը շատ էր անմխիթար։ Թողնենք այն, որ թղթի վրայ կայ փքուն, ուռցրած ծրագիր, բայց իրականութեան մէջ գործադրւում է միայն մի մասը —դասատուներն անգամ չունեն անհրաժեշտ յարմարութիւնները։ Այն ինչ դրա դիմաց կանգնած են միսիօնարներին յանձնուած շէնքերը, որոնք դարձուած, կահաւորուած են ամենաշքեղ կերպով, ամեն յարմարութիւններով, իսկ իրենք էլ ապրում են ինչպէս ճորտեր։ Եւ խեղճ կօլլէջ, ասես մի հեգնութիւն է այս բոլորի դիմաց։ Ասորի բողոքական ուսուցիչները ամսական ստանում են 10—18 թուման վարձատրութիւն և դրանց վրայ է ծանրացած գործի մեծագոյն բաժինը, այն ինչ միսիօնարները ստանում ահագին, աւելի քան «չաղ» ռոճիկներ, փշրանքներն է միայն, որ տրւում է միւս ուսուցիչներին։ Այս տգեղ և հակակրելի երևոյթը նկատելի է Պարսկաստանի ամեն անկիւններում, ուր կան բողոքականներ և կաթոլիկներ։ Վերջիններիս մէջ էլ նոյն երևոյթը հաւասար չափով աչքի է խփում։ Շատ անգամ որպէսզի աւելի «չաղ» պատատը մնայ իրենց, միսիօնարները վարձում են ուսուցիչներ անպատրաստ, իրենց կոչմանը անարժան անձնաւորութիւններից՝ քիչ ռոճիկ տալու համար։

Անաչառութեան դէմ չմեղանչելու համար ասենք, որ այդ կօլլէջը ժամանակին մեծ դեր է խաղացել, տուել է բաւական թւով ասորի կրթուած երիտասարդներ, մասնիկ գիւղերի և գաւառների համար ուսուցիչներ, պատրաստել է արհեստաւորներ և տուել է անթիւ համալսարանական բժիշկներ։ Այդ բժիշկները սովորել են գլխաւորապէս Ամերիկայում և Անգլիայում։ Այժմ Ուրմիում կան աւելի քան հարիւր համալսարանական ասորիներ, առաւելագոյն մասը բժիշկներ, ուր դառնում էք համալսարանական էք հանդիպում, բայց նրանք աւելի քան անպէտքութիւն և դատարկութիւն են ներկայացնում։ Ասես նրանք ազատ, բարձր մտքերի բովից չեն անցել և քաղաքակիրթ երկրներից չեն գալիս։ Նրանք ոչնչով չեն հեռաբերւում Ուրմիում, չի նկատւում հասարակական ազգային ոգի, կենդանի, թարմ հոսանք նրանց, կրթուած ասորիների մէջ, նրանք ոչինչ նոր բան չեն բերում։ Եւ դա շատ պարզ պատճառով։ Նրանք արտասահմանում մնում են այնպիսի միջնորդի մէջ, խմորւում են այնպիսի մտքերով և աշխարհայեացքներով, որ ուրիշ բան անկարելի էր սպասել։ Ասորական ժողովրդի համար այդ ինտելիգենտ, համալսարանական երիտասարդութիւնը բոլորովին անտէր է, ազգայնական ոչինչ չկայ նրանց մէջ և ամեն ինչ մեռած է։

ելու։ Մուստաֆա-բէյի կալուածները Սարդարը յանձնել է նը-շանաւոր Կոր-Մահմէդ-բէյին, որը նոյնպէս հայդարանցի է և Մուստաֆա-բէյի որսերիմ թշնամին։ Այսպիսով կուի, արիւն-հեղութիւնների ասպարէզը թողնում է սարդարը երկու քիւրդ ցեղապետներին։

Առհասարակ քիւրդ ցեղապետները և աշիրէթները, հե-տեւապէս ամբողջ ցեղերը, հաշտ աչքով չեն նայում իրար վը-րայ, միշտ էլ աշիրէթների յարաբերութիւնները լարուած են։ Քիւրդի այդ թուլութիւնից շատ են օգուտ առնիկ և պարսիկ կառավարութիւնները։ Ով ուժեղ, հզօր է, նրան է և՛ իրաւունքը, և՛ հողը, նրա կողմն է և՛ արդարութիւնը։ Այսպէս է արա-մաքանում քիւրդի ուղեղը և այդ ընդունում է առաջնորդող դաւանանք։ Եւ այդ հանգամանքը յայտնի չափով նպաստում է մի շարք կռիւների, ասերածների առաջանալուն։ Բայց չպի-տի մոռանալ և այն, որ ընդհանուր թշնամու դէմ կուելիս նը-բանք հեշտութեամբ կը թողնեն այդ աշիրէթական թշնամու-թիւնները և կը միանան թշնամուն դէմ դնելու համար։

Պարսկաստանի քիւրդը առհասարակ գեղեցիկ է, բարձ-բահասակ, սև աչքերով, դուրս ընկած կրծքով, թուխ դէմքով։ Բայց կան և շէկ մազերով, կապոյտ աչքերով, ինչպէս օրի-նակ Աւդօի ցեղապետ Զաֆար-աղան։ Պարսկաստանի քիւրդը սիրում է հագնուել ճոխ, խայտաբղէտ հագուստներ, վառ, փայ-լուն գոյներ, բարձր գլխարկներ՝ փաթաթուած գոյնզգոյն և շքեղ շալերով ու եռամաներով։ Դեղեցիկ կտորից է լինում և նրանց օգտին, որ մի քանի տակ փաթաթում են, իսկ դրա մէջ էլ խրում են դանակներ, եաթաղաններ, ատրճանակներ, նրանք անբաժան են հրացանից և ժապաւէններով զարդարուած նիզակ-ներից։ Այսպիսի շքեղութեամբ քիւրդը սիրում է զարդարել և իր ձին, որին քիւրդը աւելի է սիրում, քան իր կնոջը։ Քիւր-դի զգեստները առհասարակ լայն են կարուում, այնքան լայն, որ կարողանան ազատ շարժումներ անել մանաւանդ ձիու վրայ։

Պարսկաստանի քիւրդերը ընդհանրապէս շատ հմուտ են զինավարժութեան մէջ, մանաւանդ նրանք մեծ հմտութեամբ բանեցնում են դաշոյն, նիզակ, նոյնպէս և դեկավարում են ձիերը։ Քիւրդերը հէնց մանուկ հասակից, իբր դպրոցական դասընթաց, վարժուում են զինավարժութեան և ձիավարժու-թեան մէջ, քաջ գիտնալով, որ դրանք են կազմելու նրա կեանքի անբաժան ընկերները։ Ամեն մի քիւրդ իր զաւակին սովորեցնում է անվեհերութիւն և ձիավարժութիւն, աւազակու-թիւն և զինավարժութիւն, պատմում են ցեղագրութիւնը, այն

հերոս նախահայրերի մասին, որոնք դիցազնական անուն են ժառանգել այս ինչ կռի և վրէժխնդրութեան մէջ։ Եւ այդ պատմութիւնները, որոնք անվեհերութիւն են ներշնչում և վրէժխնդրութեան հակումներ առաջացնում, անցնում են սերունդէ սերունդ։

Քիւրդ ժողովրդի աչքում առհասարակ մեծ արժէք չունի կեանքը։ Հէնց դրան անշուշտ պիտի վերագրել այն, որ նա առանձին ժղում և սէր է զգում դէպի արկածներով լի կեանքը. նա ձանձրանում է խաղաղ, անդորր և միօրինակ կեանքից։ Դասախարակ հոր կրթութեան հետ միանալով և այդ ազդեցութիւնը՝ արտադրում են իսկապէս հրաշք, որի վրայ կարող են հիանալ և եւրոպացի դասախարակները։

Պարսկաստանի քիւրդ կինն էլ գեղեցիկ է, առողջ, կանոնաւոր և սիրուն կազմւածքով, երկար և սև մազերով։ Ընդանք էլ իրանց ամուսինների նման սիրում են հագնել գեղեցիկ և ճոխ։ Ընտանեկան գործերին երբէք չի խառնւում քիւրդը՝ այդ նոցը. քիւրդը պարապ ժամանակ չի թողնում իր դրում նրանց փորձեր անում, փամփուշտներ իսկ ձին էլ միշտ նստած է, որպէսզի գայթն իսկոյն վրայ և շտապի դրաւելու պաշտպան չի կարելի սում է քիւրդաքը,—կինը, զէնքերը թողնած է կըտանն անգամ նակ՝ ձեռքից բաց զէնքերը. անդադար հետ է խաղում, մաքրում, նոր լցնում և այլն. պատրաստ կանգնած պարտէրը թոչի նրա յարմար գիրք պանելու։ Երբէք տալ ուրիշին, ակն ասացածը—և ձին։ Քիւրդերի կրթողութիւնները, օրինակ՝ ամուսնութիւն, թլպատութիւն և այլն, կատարում են շէյխերը և մոլլաները։ Քիւրդ շէյխը հագնում է ոտից գլուխ մաքուր սպիտակ կտորից զգեստներ. սպիտակ է և նրա գլխի ապարոշը։ Քիւրդ շէյխը խաղաղ ժամանակ հոգևոր պետ է, իսկ պատերազմի ժամանակ քաջ զօրապետ։ Շէյխն է, որ թշնամու դէմ դուրս գալիս բարձրացնում է իր յուժկու ձայնը, կոչ անում բոլոր աշիրէթներին, ոտի կանգնեցնում և ինքն էլ՝ որպէս ընդհանուր զօրապետ՝

Քրդուհի

անցնում է աշիրէթների գլուխը։ Ընդհանրապէս հոգևոր պետերը շատ մեծ հեղինակութիւն և դիրք են վայելում քիւրդերի մէջ։ Միթէ չէր Մահմոդ Սրդիկը, հոչակաւոր չէր Իրազուլլահի որդին, մի կոչ ուղղի Պարսկաստանի ընդհանուր աշիրէթներին, բոլորն էլ ոտի կըկանգնեն, չնայած որ շատ աշիրէթներ կարող են նոյնիսկ նրան հակառակորդ, թշնամի լինել այժմ։

Այն ընդարձակ տարածութիւնը, ուր այժմ ապրում են քիւրդերը, դարեր առաջ բռնուած էր հայ ժողովրդով։ Դեռ մինչև այժմ էլ, թէև անցել են ամբողջ դարեր, Սոմայի գաւառում կան հայութեան մնացորդներ,—գերեզմաններ, արձանագրութիւններ, եկեղեցիների բեկորներ։ Այժմ Սոմայում կան միայն 4—5 տուն հայեր։

III.

Պարսկաստանի քիւրդերը, ինչպէս ասացինք, բաժանուած են երկու խոշոր, միևնոյն ժամանակ խիստ հակադիր դասակարգերի,—աշիրէթներ կամ, լաւ է ասել, ձրիակերներ, և ռայա կամ աշխատող, կերակրող ձեռներ։

Ռայա դասակարգը գործ ունի գլխաւորապէս հողի հետ։ Նա պարապում է երկրագործութեամբ. շատ տեղերում ցանում է բացառապէս ցորեն, պահում է խաշներ և մասամբ տաւարներ։ Քիւրդերի ցանած հողերի մեծագոյն մասը դեմի (անջրդի) է։ Դեմի արտերի սովորական ցանքը բաւարար է լինում. անձրևի ժամանակ մէկին 15—20, իսկ տարիներ են լինում, որ բերքը տալիս է 1-ին 25—30, դեռ էլ աւելի։ Զմռռանանք այս էլ նկատել, որ պատահում են և սակաւ անձրևային տարիներ, որ դեմի հողերը տալիս են շատ աննշան բերք։ Քիւրդը ամեն տարի բերքի մի որոշ մասը ծախելով՝ բաւարարութիւն է տալիս իր միւս պահանջներին։ Իդէպ է ասել, որ քիւրդերի մէջ մինչև այժմ մնացել է աւանդական, դրամի ծագումից առաջ եղած առևտրի սովորութիւնը, այն է՝ իրեր, ապրանքներ փոխանակել։ Ցորեն չունեցող քիւրդը տալիս է խաշն կամ տաւար և դրա դիմաց առնում ցորեն. դրամ ընդհանրապէս՝ սակաւ է հարուում քիւրդերի մօտ, մանաւանդ մեծ գումար, և առհասարակ քիւրդը փող չի սիրում։

Այսպէս ուրեմն, ռայա քիւրդերը պարապում են երկրագործութեամբ և անասնապահութեամբ։ Իսկ աշիրէթները. նրանց գլխաւոր և աւանդական ժառանգած զբաղմունքն է

աւազակութիւնը և պատերազմը, թալանը և ապաստակութիւնը, կատարած կամ իրանց օգտին, իսկ ուրիշի, իբր վարձկաններ։ Քիւրդը սիրում է կռիւ և կողոպուտ. նա կողոպտուած է իր ապրուստը հայթայթելու համար, իսկ թալանի մէջ կրում է, արիւն է թափում իր վրէժխնդրութեանը և վայրենի հակումներին յագուրդ տալու համար։ Քիւրդը թալանում է ընդհանրապէս թոյլին, որին իր ոյժը կը յաղթի. և այդ անում է առանց խորութեան։ Սխալ է կարծել, որ քիւրդերը առանձին ատելութիւն են տածում դէպի հայ ժողովուրդը և հէնց դրա համար են կողոպտում, սպանում։ Քիւրդը թալանում է և՛ հային, և՛ թուրքին, և՛ քիւրդին, և՛ եւրոպացուն և՛ ընդհանրապէս նրանց, որոնց կը պատահի և հատուցը ուռա կանի։

Քիւրդերի մէջ ասես սրբութեան չափ պահպանում է «հաւկն ընդ ական» սկզբունքը։ Աշիրէթները ձմեռը, սարերը ձնելու միջոցին, ցած են գալիս լեռներից և բացառապէս ծանրանում են ոայս դաստակերդի վրայ։ Թայաթը պարտաւոր է կատարել նրանց իւրաքանչիւր քմահաճութիւնը և կերակրել ամբողջ 3—4 ամիս, ձմեռուայ ընթացքում։

Սկսում է գարունը, գետինը ծածկւում կանաչ խոտով, սարերից վերանում ձիւնը, քիւրդ աշիրէթները վերցնում են «չադիրները» և գնում «եայլաղ», դէպի սարերը։ Այդ օրերում է առհասարակ տպրիլից, այդ ժամանակում հապիւ սարերում ձիւնը հալւում է։ Աշիրէթները իրանց չադիրները հաստատելով սարերի յարմարաւոր դիրքերում, կանաչոտ և ստահով վայրերում, սկսում են իրանց սովորական կողոպուտը, աւարառութիւնը և ապաստակութիւնները։

Քիւրդ աշիրէթները մնում են սարերի վրայ մինչև աշնան վերջը, երբ սարերը ձնում են։ Այդքան ժամանակի ընթացքում անդադար յարձակւում են մօտիկ գաւառների և գիւղերի վրայ, քշում տանում են հօտերով ոչխարներ, ձիեր, կողոպտում են ունները, կտրում կարուանների առաջ և թալանում, իսկ շատ անգամ էլ բնականաբար լինում են ընդհարումներ և կատարւում սպանութիւններ։

Քիւրդ աշիրէթի անտիշական յարձակումներին ամենից շատ ենթակայ է Սալմաստ գաւառը։ Սալմաստի համարեա բոլոր շրջապատող բարձրութիւններին թառած են քիւրդերը։ Հարաւի փեշերը լռնել են մամադիները։ Ճարան և նրա շրջակայքը՝ Ջաֆարաղան, Սոմայի քիւրդերն էլ միւս կողմից։ Անցեալ 1903 թւի յուլիս, օգոստոս և սեպտեմբեր ամիսների կազմած մանրամասն վիճակագրութիւնս ցոյց տուեց, որ քիւրդերը տարել էին միայն Սալմաստից 6000 թուման ժալ, իսկ

այդ մեծ դուժար է Սալմասի հանար։ Շատ գիւղեր, որոնք գտնուում են ասելի հեռու և սահմանի վրայ, ստիպուած չեն պահում տաւարներ և ոչխարներ։ Առհասարակ նրանք շատ քիչ են մօտենում հայաբնակ գիւղերին. քիւրդերը ինչ-որ «դերբնական ոյժ» են գտնում հայաբնակ գիւղերում, իսկ «զաչաղ» անունը հօ ասպասփոնում է նրանց։ Անցնում են հայաբնակ գիւղերի մօտով, ոչինչ չեն անում և յարձակուում են Թիւրքաբնակ գիւղերի վրայ։

Առհասարակ քիւրդերի տաւարատուութիւնները կատարուում են օրը ցերեկով, պարսիկ պաշտօնեաների քթի տակ և միշտ էլ մնում են անպատիժ։ Կառավարութեան պաշտօնեաները տատիկ վախենում են քիւրդ ցեղապետներից. և յանախ շոգոքորթական յարաբերութեան մէջ լինելով նրանց հետ, մի կողմից էլ ոյժ տալիս նրանց աւերիչս տենչին։ Ցիշենք մի երկու փաստ։ Մօտիկ ժամանակներում, դեռ մի քանի տարի առաջ, Սոմայի Ղասըմ աղայի ժարգկանցից բանտարկուած են լինում Դիլիմանում։ Ղասըմ աղան ցերեկով յարձակուում է Դիլիմանի վրայ, տիրացիրմարդ նում։ Եւ նրա դուքն վարտարում է դիմադրում է անգարսիկները խանգնում են գային, յայտ աղայի հօ են Դիլիմանում։ Ղասըմ աղան դանը։ Ջերբարը իսկոյն Ջաֆար-աանմիջապէս հանում բանկանց և տարա այդ յանմունքը կատանց որեկ թեան և մը պատիժ։ պաշտօնարէս թեամբ Մահմադ-ասնի Ջաֆարը, տանում և ձերբակատաւորի տակալման լուհանում է գային. նա վերցնում է

Ջաֆար-աղա

մօտ 50—60 լաւ կուռղներ և գայիս յարձակուում է Դիլիմանի վրայ, հրացանի բռնում գատաւորի տունը և Մահմադ աղային ազատում, տանում։

Սալմասցիներին շատ լաւ յայտնի են Ջաֆար-աղայի յանդուգն քաջագործութիւնները. նրանից դողում էին ոչ մի-

այն պարսիկ պաշտօնեաները, այլև քիւրդ ցեղապետները։ Նա ընդհարում ունեցաւ և իր հօր հետ, որը այժմ ապրում է պարսկա-տաճկական սահմանագլխում, Շէյխ Մահմադ Սաղբկի մօտ։ Անհասարակ այդ ընտանիքը ուել է յայտնի քիւրդեր։ Այդ ընտանիքի մասին մենք կը խօսենք մանրամասն յաջորդ գլխում։

Պարսկա-տաճկական սահմանակից գաւառները և գիւղերը ենթակայ են նաև Տաճկաստանի քիւրդերի յարձակումներին։ Տաճկաստանի քիւրդերը, մեծ մասով տխրահռչակ Շարաֆ-բէգի աշիրէթները, յաճախ անցնում են սահմանը և Պարսկաստանի հողի վրայ աւերած առաջ բերում, կողոպտում, թալանում, սպանում և նորից անցնում սահմանը։ Ահա այս պարագայում Պարսկաստանի աշիրէթները ներկայանում են մի զօրեղ պատնէշ և սանձում նրանց յարձակումները։ Պարսկաստանի քիւրդերն էլ նոյն ձևով պատասխանում են Տաճկաստանի քիւրդերին, սրանք էլ շուտ-շուտ անցնում են տաճկաց հողը, յարձակւում նրանց վրայ և կողոպտում, սպանում, աւերում։

Հեռացրէք այդ ընդդիմադիր ոյժը, և անմիջապէս Պարսկաստանի սահմանակից գաւառները կը դառնան Տաճկաստանի քիւրդերի սանձարձակ և ընչաքաղց աւազակութիւնների և կողոպուտի թատերաբեմ, անմիջապէս ոտի տակ կը տրորեն և սարսափելի աւերմունք կառաջացնեն, իսկ պարսից կառավարութիւնն էլ հազիւ թէ կարողանայ գէթ որոշ չափով սանձել քիւրդերին։

Տաճկաց կառավարութիւնը առես մի անգամ ընդմիշտ Պարսկաստանի քիւրդերին զսպելու համար, այն էլ պարսից կառավարութեան միջոցով, անցեալ աշնան սկզբներին պարսկաստան էր ուղարկել մի զայմագամ և միւդիր, որոնք խիստ պահանջում էին մամադիների տարած թալանը. Պարսից կառավարութիւնը շատ նեղն էր ընկել։ Խոյի, Ուրմիի և Սալմաստի դատաւոր Մաջիդ-ուլ-Սալթանէի հրամանով մամադիների ցեղապետ Եօմար-աղան գալիս է Դիլիման. նրա հետ է լինում իր եղբայրը և 45 ձիաւորներ։ Կարգադրւում է գործը վերջացնել 400 թումանով, և Եօմար-աղան էլ համաձայնում է, բայց Մաջիդ-ուլ-Սալթանէն գործը ձգձգում է՝ ունենալով իր գաղտնի մտադրութիւնը։ Նոյեմբերի 7-ին կրկին Եօմար-աղան իր հետևորդներով գնում է Մաջիդ-ուլ-Սալթանէի մօտ և ընկնում պատրաստած ծուղակի մէջ։ Մաջիդ-ուլ-Սալթանէն յայտնում է, թէ թագաժառանգից հեռագիր ունի, որ անմիջապէս յետ է պահանջում ամբողջ թալանը, եթէ չի ուզում խիստ

պատժի։ Ծամար-աղան պահանջում է ցույց տալ վալիաթի հեռագիրը։ Մաջիդ-ուլ-Սալթանէն սաստիկ զայրանում է և հրամայում իր մարդկանց՝ ձերբակալել Ծամար-աղային։ Վերջինս իսկոյն ատրճանակը քաշում է, բայց Մաջիդ-ուլ-Սալթանէն դաշույնով վիրաւորում է նրան և վինաթափ անում։



Ծամար-աղան պատանդի ցանկում։

Այս իրարանցումը անմիջապէս դուրսը յայտնւում է։ Ահմէդը, Ջմար-աղայի եղբայրն անցնում է մաժադինների գլուխը, վազում են քարվանսարա՝ ձիերը ֆստեցու և պաշտպանողական դիրք բռնելու, բայց յանկարծ դռները փակւած են զանում։ Նրանց և սարբազների մէջ սկսւում է կռիւ։ Վիրաւորւում են Ահմէդ-աղան և մի ուրիշ մաժադի։ Մաջիդ-ուլ-Սալթանէի կարգադրութեամբ անմիջապէս դրանց գլխատում են և գլուխները կախում հեռագրատան առաջ ի ցույց խռնւած ամբոխի։ Ձեռ-

բակալուած էր և մի ուրիշ մամադի, որին յաջորդ օրը Թնդանօթի բռնեցին։

Ներբակալուած Եսմար-աղային էլ տարան Ուրֆի ընդ. դատաւորի մօտ։ Ենթադրւում էր, որ էլ ճանապարհին մամադիները կը յարձակուեն և կը փախցնեն իրանց ցեղապետին, կամ կաշառքով կազատեն։ Եւ իսկապէս վախենում էին մամադիների յարձակումից, անշուշտ հէնց դրա համար էր, որ մի օր առաջ դիտաւորեալ լուր էր տարածուած, թէ Թաւրիզ է տարուելու, և յանկարծ լուր ստացուեց, որ արդէն Եսմար-ազան Ուրմիում բռնուած է Թնդանօթի։

Այս դէպքը ճնշող տպաւորութիւն թողեց քիւրդերի վրայ։ Ասում են, որ նման խաղ պատրաստուած էր և Զաֆար-աղայի վերաբերմամբ, բայց այդ չ'աջողուեց։ Զաֆար-աղան շատ զգոյշ էր, Դիլիման գալիս հետը բերում էր 30—50 լաւ զինուած քիւրդեր, անգամ հեռագրատուն մտնելիս նա մի քանի քիւրդեր էր վերցնում հետը սենեակում, իսկ ինքը հրացանը ձեռքից վայր չէր դնում։

Մամադիները զրկուելով իրանց քաջ առաջնորդներից՝ անգլուխ ճեպին և բաւականին ցրուեցին։ Մամադիների մի մեծ բազմութիւն չեղաւ դէպի Սոմայի։ Մի ժամանակ լուր տարածուեց, թէ Եսմար-աղայի 12 տարեկան որդին անցած մի խումբ մամադիների գլուխ՝ յարձակւում է այս կամ այն գիւղի վրայ, սպանում պատահած թուրքին՝ որպէս վրէժխնդրութիւն։ Այժմ մամադիները սկսել են կամաց-կամաց խմբուել և ցեղապետ է համարւում Մասո ասպին, Եսմար-աղայի ծերունի հայրը։ Նորից տաք արիւնը եռ է եկել ծերունի ցեղապետի երակներում. նա կրակ է կորել և վրէժխնդրութիւնը իր գլուխը բարձրացրել։ «Ես կը հանգստանամ միայն այն ժամանակ, երբ այս ձեռներով կը բռնեմ Մաջիդ-ուլ-Սալթանէի ծնօտներից, կը ճզեմ և կանեմ երկու կէս։ Ահա Մասո ասպու երդումը»՝ նորից հրացանը վերցնելիս և ցեղի գլուխը անցնելիս։

Մի քանի ամիս առաջ խօսւում էր, թէ օսմանեան կառավարութիւնը առաջարկել էր պարսից կառավարութեան զինաթափ անել քիւրդերին։ Բայց այդ խօսակցութիւնը որոշ հետևանք չունեցաւ։ Ոմանք ընդունում էին այդ որպէս բարեբար մի ջոց. բայց տանկական կառավարութիւնն աւանդական բէժիմին ստոիկ ծանօթ մարդիկ գտնում էին դատոնի խաղ թագնուած այդ մտքի տակ։ Կարծւում էր, որ տանկաց կառավարութիւնը կը խարի և ապա դատոնի կերպով ինքը կը բաժանի իր քիւրդերին։ Թէ որքան իրական է այդ առաջարկը տա-

ճիկ կառավարության կողմից և ինչ բանակցություններ եղան երկու տերությունների միջև, որոշակի յայտնի չէ։

IV.

Անցեալ 1904 թ-ի աշնանը ամբողջ երկու ամիս աղգոյ ցեղապետ Ջաֆար-աղան բովանդակ Ատրպատականի ուշադրությունը դարձրել էր իր վրայ։

Նրա կոզոպուտը և ասպատակությունը վերջերս այնքան սանձարձակ, այնքան յանդուգն ու ծայրայեղ դարձան, որ Պարսից կառավարությունը այլևս չկարողանալով տանել այդ՝ պատերազմ սկսեց, նրան բնաջինջ անելու նպատակով։

Բայց ով է Ջաֆար աղան։

Աղգոյ ցեղը ընդհանրապես նշանավոր դիրք և հեղինակություն է վայելում Պարսկաստանի քիւրդերի մեջ։ Այդ ցեղի աշիրեթները յայտնի են ոչ միայն իրանց քաջությունով, յանդուգն կռիվներով, որ շատ անգամ առասպելական և խորհրդաւոր դոյն են ստանում ժողովրդի բերանում, այլև՝ համարւում են սերուած ազնիւ ցեղից. նրանք երոուսներ են։

Առաջին կռիվը պարսից կառավարության հետ տեղի է ունեցել հռչակաւոր Ալի խանի ցեղապետության օրով։

Դեռ մի քանի տարի էր, ինչ մեռել էր Իսմայէլ աղան, Ալիի հայրը։ Աղգոյ ցեղը Տաճկաստանից եկել է Պարսկաստան և բռնել է Ճարան Իսմայիլ աղայի ժամանակ, մօտ վաթսունական թուականներին։

Հէնց առաջին օրերից, երբ Աղգոյ ցեղը եկաւ Ճարա և տեղը ամրացրեց, նա վարում էր գրեթէ անկախ դրություն, չէր ուզում ճանաչել պարսից կառավարության գերիշխանությունը։ Իսկ այս հանգամանքը աւելի խիստ բնաւորություն ստացաւ և աչքի զարնեց մանաւանդ Ալի խանի ցեղապետության ժամանակ։ Թանի-քանի անգամ պարսից կառավարությունը նրան կանչել է Թաւրիզ և Թէհրան, բայց նա միշտ էլ արհամարհել է և կտրուկ ու բացարձակ մերժել է կառավարության պահանջը։ Սրանից զատ՝ Ալի խանը պարբերաբար յարձակւում էր մօտակայ գիւղերի վրայ, թալանում, կողոպտում, սպանում...

Ահա այս յանդուգն քիւրդին և նրա բոյնը բնաջինջ անելու համար էր, որ կառավարությունը կազմակերպել էր այդ առաջին կռիվը։

Պարսից կառավարության թելադրության և դիմումի համաձայն՝ Տաճկաստանը ձերբակալում է Ալի խանին Բաշղա-

լայի ժողովրդը և յանձնում պարսից կառավարութեան, որ բերում է Նրան Թաւրիզ և բանտարկում։ Թաւրիզ են բերում նաև Ալի խանի երկու կանանց։ Ամբողջ երեք տարի Ալի խանը մնում է բանտում։ Քիւրդերի ցեղային բնոյթը բնորոշող փաստ են պատմում նրա բանտային կեանքից։

Այդ ժամանակ Ալի խանը լինում է մօտ եօթանասուն տարեկան, գուցէ և աւելի, մազերը ճերմակած, թէև առոյգութիւնը տեղը։ Բանտապետը ինչ որ լպիրշ ակնարկ է անում Ալի խանի կնոջ վերաբերմամբ, ի հարկէ՝ բանտի մէջ։ Ալի խանի խոր ընկած աչքերը փայլատակում են, արիւնը խփում է դլուխը, նա սեղմում է ջլուտ ձեռները և ուժգնութեամբ քաշում հանում է գեռնից ահագին երկաթը, որին ամրացրած էր ձեռքի շղթան, և այնպէս է խփում բանտապետի գլխին, որ իսկոյն մահանում է։ Այս փաստը յայտնի է ամբողջ Ասորպատականին, ամենքը պատմում են առանձին յափշտակութեամբ և երկիւղածութեամբ։

Ալի խանը բանտումն էլ մեռնում է։

Մահմադ աղան, Ալի խանի որդին, գնում է Թաւրիզ, բերում է դիակը՝ Շաբայում հանդիսաւոր կերպով թաղում։

Ալի խանը հռչակ և անուն է հանել ոչ միայն պարսից կառավարութեան դէմ մղած իր հերոսական և ըմբոստ կռուով, այլև նա մի շարք ընդհարումներ է ունեցել Տաճկաստանի քիւրդերի հետ և միշտ էլ յաղթող է դուրս եկել։ Այդ ընդհարումների շարքում ամենանշանաւորը և փայլունը կազմում է Ջօմար (Շարաֆ բէյի հայրը) և Դրբէ աղաների դէմ մղած կռիւը։

Ալի խանը թողնում է երկու որդի՝ Մահմադ և Թաժըր։ Աւագների գլուխ է անցնում մեծ որդին, Մահմադ աղան։ Նա ընակութիւն է հաստատում Սոմայում։ Շուտով կռիւ է ծագում Մահմադ աղայի և կարդար քիւրդերի մէջ։ Մահմադ աղան չկարողանալով դէմ գնել կարդարների զօրեղ ուժին՝ յետ է քաշւում և անցնում է տաճկական հողը։ Օսմանեան կառավարութիւնը ընդհանրապէս հաճութեամբ և գրկաբաց ընդունում է հալածւող քիւրդ ցեղապետներին և տեղ է տալիս սահմանագլխում, որոնք կազմում են մի տեսակ պատնէշ տաճիկ պետութեան համար դրսի «աւերիչ» հոսանքի հանդէպ։ Եւ իսկապէս Մահմադ աղան էլ ուրախութեամբ ընդունւում է, և ապաստան է տրւում մի հայաբնակ գիւղ։ Բայց նա երկար չի մնում իր նոր ապաստարանում և անցնում է Վան, ուր օիրալիր կերպով ընդունւում է Համիդ փաշայի կողմից։ Մահմադ աղայի հետ լինում է և նրա եղբայրը՝ Թաժըր աղան։ Նրանք երկարանկարող են լինում մնալ Վան և 1893 թւին նորից անցնում

են Պարսկաստան ու զոռով հաստատուում նորից իրանց հողի վրայ՝ Ճարա։ Եւ կառավարութիւնը ստիպուած՝ էլի Ճարայի հաքիմութիւնը յանձնում է աւղոի ցեղին, Մահմադ աղային։ Իսկ երկու տարի յետոյ, 1895 թւին, Մահմադ աղան և նրա որդի Ջաֆարը կանչւում են Թեհրան, մի խոշոր գումար առւգանք է (ջառիմա) նշանակւում կառավարութեան կողմից նրանց անցեալ յանցագործութիւնների համար, խոլաթ և շքանշաններ [1]) են տալիս և ճանապարհում Սալմաստ՝ Ճարա։ նստելու։

Ասքանից յետոյ Մահմադ աղան ապրելի է երես առնում և ապրելի սանձարձակ դառնում իր ապստամբութիւնների մէջ։ Եւ երբ նրան ու Ջաֆար աղային կանչում են Դիլիման, Սալմասի կենտրոնական քաղաքը և պահանջում են Թեհրանի նշանակած առւգանքը, նրանք կարուկ և յանդուգն կերպով մերժում են կատարել դատաւորի պահանջը։ Անմիջապէս հէնց Դիլիմանում կռիւ է առաջանում քիւրդերի և դատաւորի մէջ։ Պարսիկներից սպանւում են 2—4 սարբազ, իսկ քիւրդերը մի զոհ տալով՝ շտապում են Ճարա։

Այդ օրից էլի խիստ լարւում է պարսից կառավարութեան և աւղոի աշիրէթի մէջ յարաբերութիւնը։ Կառավարութիւնը մեծ ուժով գնում է Ճարայի վրայ։ Հարկ է զգացւում կռիւ դաշտ հանել նաև թնդանօթ։ Քիւրդերը գրաւած լինելով ամուր դիրքեր՝ մեծ հարուած են տալիս պարսից զօրքին և չեն թոյլ տալիս բարձրանալ լեռները։ Միքանի անգամ քիւրդերը յետ են մղում զօրքին։ Մի յարձակման ժամանակ, ինչպէս պատմում են, Մահմադ աղան և Ջաֆար աղան վիրաւորւում են մի թնդանօթ և իրար թէ մի-երկու օր պահելուց յետոյ, լուր են ուղարկում զօրքի ընդհանուր հրամանատարին, որ գան տանեն, քանի որ իրանց պէտք չէ։

Անկարող լինելով երկար դիմադրել՝ Մահմադ աղան գիշերով Ջաֆար աղայի հետ անցնում են տաճկական սահմանը։ Պարսկները նորից գալիս և տիրում են Ճարան։

Այս դէպքից մի քանի ամիս յետոյ սկսւում է ֆէյդայիների արշաւանքը տխրահռչակ Ճարաֆ բէյի վրայ։ Քիւրդերին օգնութեան է գնում և Ջաֆար աղան։ Նա մի երկու տեղ կռիւ

---

[1]) Առհասարակ դա Պարսկաստանում ընդհանրացած երեւոյթ է։ Եթէ չասենք միշտ, գէթ յաճախ, պաշտօնանկ արած կամ յանցանքի մէջ բռնուած պաշտօնեային կանչում են Թաւրիզ, անպատուում են, բանտարկում, առւգանքի ենթարկում և ապա սիրալիր ընդունելուց յետոյ խալաթ տալիս ու ճամբում իր պաշտօնին։

է բռնում ֆէդայիների հետ. մի ֆէդայու գնդակ վիրաւորում է նրա երեսը. սպին մինչև այժմ էլ պարզ նշմարելի է։

Զարա

«Արշաւանքից» յետոյ տանիկ կառավարութիւնը Զաֆարին՝ իր հօր հետ միասին՝ հաստատում է Խանիկ։ Նրանք շատ երկար չեն կարողանում մնալ այնտեղ։ Նրանք ընկնում են երեսի վրայ, անտէր. կառավարութիւնը առանձին ուշադրութիւն չի դարձնում, հնարաւորութիւն չեն ունենում իրանց պահանջներին բաւարարութիւն տալու, ծառաներն էլ կամաց-կամաց հեռանում են նրանցից։ Նրանց վիճակը դառնում է անտանելի։ Երբ ներկայ շահ Մուզաֆէր-էդդինը կատարում էր իր առաջին ճանապարհորդութիւնը դէպի Եւրոպա (1900 թ.) Զաֆար աղան շտապում է ընդառաջ, գնում է Զուլֆա, ներկայանում է սադրազամին, պարզում է իր վիճակը և խնդրում

է ապաստան։ Սադրազամի կողմից յարգւում է նրա ինդիրը, և նորից իրաւունք է տրւում վերադառնալ Ճարա։

Ճարա հասնելուն պէս, Ջաֆար աղան կանչում է հօրը, բայց վերջինս մերժում է, առարկելով, գայժամ դու կըլինես մեծը, էլ ինչու եմ գալիս, դա ինձ համար անպատուութիւն է. բոլոր ծառաները քո շուրջը կըխմբւեն, և ես մենակ կըմնամ։ Էլի միքանի անգամ թախանձում, աղաչում է հօրը, որ համաձայնի գալ՝ խոստանալով ցեղապետութիւնը նրան յանձնել։ Մահմադ աղան վերջիվերջոյ համաձայնում է։ Ջաֆար աղան հանդիսաւոր և փառաւոր ընդունելութիւն է ցոյց տալիս, բաւական տարածութիւն գնում է դիմաւորելու և առաջնորդ բերում Ճարա։

—Ահա Ճարան, ասում է Ջաֆար աղան. ինչպէս քեզ հանեցի այստեղից, այնպէս էլ բերի, թող քեզ լինի. այսուհետև դու աղա, ես էլ քո ծառան։

Բայց նրանք՝ հայր և որդի՝ միայն երկուքեքեք ամիս են սիրով և համերաշխ ապրում։ Սկսւում են նորից գժտութիւններ։ Դրանց յարաբերութիւնը աւելի լարւում և սուր կերպարանք է ստանում նամանաւանդ այն ժամանակ, երբ Ջաֆար աղան մի կնոջ բռնաբարում է, իսկ հայրը նախատում է նրան։ Հայր և որդի խիստ ընդհարւում են իրար հետ, նոյնիսկ ծեծւում են։ Երկուսն էլ լինում են անզէն։ Մահմադ աղան ամբողջ մի դաստա մազ է հանում որդու քեաբիւլից։ Այդ ընդհարմանը մասնակցում են Մահմադ աղայի երկու որդիները՝ Շաքուր և Սմբկոն, թեթև կերպով վիրաւորւում է Շաքուրը, և այդ կռիւը վերջանում է նրանով, որ հայրը և որդին բաժանւում են, Սմբկոն հետևում է Ջաֆարին, իսկ Շաքուրը՝ հօրը։

Դրանից յետոյ ամբողջ հրապարակը մնում է Ջաֆար աղային, որ դառնում է միահեծան տէր և իշխող։ Նա աւելի ու աւելի ամրացնում է իր դիրքը, հեռացնում ստորացնում ծառաների և կուռղների թիւը, զինում նրանց կանոնաւոր զէնքերով և սկսում կողոպուտը, ասպատակութիւնները, սպանութիւնները... Նա յարձակւում է ժողովուրդի վրայ, գարկում տանում նախիրը, ոչխարի սուրուն, ժողովրդին անընդհատ պահելով զարգանդի, դողի մէջ, ճամբորդներին և գիւղացիներին բռնում, թալանում, յանդգնում է յարձակւել, այն էլ մի քանի անգամ, Սալմաստի կենդրոնական քաղաքի վրայ, ոչխարն ու տաւարը տանում, այն էլ ցերեկով։ Նա յաճախակի գնում է Տաճկաստան, ահագին քանակութեամբ մալ գարկում բերում այստեղ, ծախում շատ աման գներով, իսկ այստեղից,

էլ տանում Տաճկաստան, վաճառում։ Զանազանություն չի լինի, եթէ ասեմ, որ այս մի տարուայ ընթացքում միայն Տաճկաստանից բերած կըլինի մօտաւորապէս 20,000 թուման մալ, նոյնքան էլ, գուցէ և աւելի, կարելի է հաշուել Պարսկաստանից, գլխաւորապէս Սալմաստից։

Դեռ անցեալ տարուանից կառավարությունը միջոցներ էր խորհում նրան բռնելու։ Մաջիդ-ուլ-Սալթանէի պատրաստած թակարդը, որի մէջ ընկաւ մաժադինների ցեղապետ Նօսար աղան, իսկապէս պատրաստուած էր Զաֆարի համար։ Հէնց այդ դէպքից յետոյ Զաֆար աղան աւելի զգուշացաւ, սկսեց ուշուշ գալ Դիլիման և գալիս էլ ունենում էր մօտ 20—30 զինուած քիւրդեր, իսկ թալանի, կողոպուտի և սպանությունների մէջ էլ աւելի կատաղի, անխիղճ և անողոք դարձաւ։ Օր չէր անցնում, որ լուր չհասնէր մի որևէ թալանուած գիւղի մասին։

Ահա այս բոլորը վերջապէս համբերությունից հանեցին պարսիկ կառավարությանն և ձեռնարկեցին մի վճռական քայլ անելու։ Դեռ այս ապրիլից սկսած կամաց-կամաց Սալմաստ էին լցուում հետևակ և գլխաւորապէս ձիաւոր զօրք. և գալիս էին անընդհատ Թաւրիզից, Ղարադաղից, Մակուից, Ուրմիից, Մարանդից, շահսէվանները, Ատրպատականի ամենաքաջ, հրաշակուած և ընտիր համարուած կուռդները։ Իսկ թէ ինչի համար էին հաւաքուում, լցուում Սալմաստ, յայտնի չէր որոշակի, միայն պատում էին տարբեր, թերևս էլ ենթադրություններ և կարծիքներ։ Ընդհանրապէս նկատելի էր այն, որ պարսիկների սկսած գործը շատ լուրջ էր և տարուում էր լուռ, խելացի կերպով։ Միայն կուից մէկ թէ երկու օր առաջ պարզուեց նրանց միտքը։

Զաֆար աղան շրջանկատ մարդ է. նա անտարբեր աչքով չէր նայում պարսիկների այդ շարժումների, խուլ պատրաստությունների վրայ։ Նա պահում է լրտեսներ, որոնք ամեն ինչ ճշտությամբ հաղորդում են նրան։

Զօրքերի ընդհանուր հրամանատար Սէֆուլ-մաժալիքը յուլիսի 17-ին Զաֆար աղային կանչում է Դիլիման տեսակցելու և մի քանի կարևոր հարցերի մասին խորհրդակցելու պատրուակով, բայց իսկապէս ծուղակը գցելու նպատակով։ Զաֆար աղան բացարձակ մերժում է, և երկուստեք համաձայնությամբ տեսակցությանն վայր է նշանակուում Գիւլիզան գիւղը, որը 1½ ժամ հեռու է Ճարայից, իսկ մօտ 1 ժամ Դիլիմանից։ Տեսակցությունը նշանակուած էր յաջորդ օրը, սեպտեմբերի 18-ին, առաւօտեան ժամի 9-ին (1904 թ.)։

Նախօրօք Գիւլիզանի մի շարք կարևոր տեղերում զին-

տրներ է նշանակում, ինչպես և ճանապարհի որոշ կէտերում, և դրանց կարգադրված է լինում կենդանի ձերբակալել Ջաֆարին կամ հակառակ պարագային ուղղակի սպանել։

Եւ իսկապէս Ջաֆար աղան նշանակած ժամին մօտ 20—25 քիւրդերով մօտենում է Գիւլիզանին։ Մի քրդուհի, ինչպէս պատմում են, յայտնում է պարսիկների որոգայթի մասին, միւս կողմից էլ զինուորներն սկսում են զանազան կողմերից գնդակներ արձակել. Ջաֆար աղան յետ է դառնում և կռուելով հեռանում։ Պարսիկներից սպանւում են երկուսը, իսկ քիւրդերից և ոչ մէկը։ Այդ անաջող դէպքը խիստ իրարանցում է առաջացնում Գիւլիզանում՝ բանակի մէջ, նոյնը և Գիւլիմանում։ Մի յիսնապետ միայն իր զինուորներով հասնում է հետևել նրան, բայց շատ չանցած՝ ընկնում է, իսկ բոլոր զինուորներն էլ փախչում են Գիւլիզան։

Գիւլիմանում սարսափելի խառնաշփոթութիւն առաջացրին այդ լուրերը։

Այս անաջող դէպքերի տպաւորութիւնը Թաւրիզի վրայ էլ ազդեց. վայրաթը հեռագրով խիստ կարգադրում է «կամ Ջաֆարի գլուխը և կամ Սէֆուլ-մամալիքի»։ Ճանապարհ չի պատահում նման կորուկ, խիստ և որոշակի կարգադրութիւններ Իրանի աշխարհում։ Թագաժառանգը միայն այդ կարգադրութեամբ չի բաւականանում։ Նրա հրամանով էլի նոր ուժեր են ուղարկւում զանազան կողմերից լաւ հրացաններով զինուած, իր պալատի քէշիկչիբաշուն էլ ուղարկում է ընդհանուր զօրքի հրամանատարութիւնն ստանձնելու։ Կռիւը հեռագնում է լուրջ և տաք բնաւորութիւն է ստանում։

Ամենախիստ կռիւը տեղի ունեցաւ յուլիսի 20-ին, ճաշի մօտերը։ Քիւրդերը բռնել էին իրանց անառիկ դիրքերը, իսկ պարսիկները մօտենում էին բերդին և նրանց դիրքերին, թնդանօթով էլ միաժամանակ հարուածում բերդի ստորոտները և քիւրդերի բռնած վայրերը։ Կռիւը շարունակւում է գրեթէ ամբողջ օրը։ Պարսիկ բանակը չկարողանալով այլևս առաջ գնալ՝ տեղի է տալիս, կուի դաշտում թողնելով՝ ինչպէս ասում են՝ մօտ 30 դիակներ։ Քիւրդերի ինչը յայտնի չէ, թէև բոլորն էլ ասում են, որ Ջաֆար աղան ոչ մի զոհ չի տուել, բայց այդ դրականապէս դժուար է պնդել, քանի որ քիւրդերը դիակները իսկոյն վերցնում են, չեն թողնում կուի դաշտում։

Պատմում են, որ Ջաֆար աղան պարսիկ բանակի դէմ կռւում էր շատ աննման ուժով. նրա կռուողների թիւը 50-ի չափ է եղել։ Նրա յանդգնութիւնները և քաջագործութիւնները չափազանցրած գոյներով էր հասնում մեզ, և նա աւելի հե-

դինակութիւն, հոչակ էր ստանում ազգաբնակութեան աչքում։ Ամբրում է նա բերդը, կոտրում նոյնիսկ սենեակների ապակիները և դռները, թողնում է Ճարան և գիշերով հեռանում դէպի սահմանի բարձր դիրքերը, Շիփրանի մօտերը։

Թամբ-ապա Սմկо Ջուճար-ապա

Յաջորդ օրը զօրքը մտնում է Ճարա, նա էլ միւս կողմից սկսում է ամբած առաջ բերել։ Լաւ կողոպուտից յետոյ զօրքը հեռանում է լինում Ջաֆար աղային։ Վերջին կռիւը տեղի է ունենում Շիփրանի մօտ, ուր Ջաֆար աղան դրաւած է լինում ամուր դիրք։ Պատմում են, որ կռիւ ամենատաք ժամանակ, երբ թշնամու գնդակները կարկտի նման տեղում էին, Ջաֆար աղան նստած քարի յետեւը՝ թէյ էր խմում հանգիստ, անվրդով։ Այդտեղ իրրեւ միակ տաք կուռողը եղել է Սմբիկն, իսկ բոլորը միայն 11 հոգի են եղել։ Ջաֆար-աղան էլի հեռու է քաշւում, և պարսիկները ձեռնունայն վերադառնում են՝ լուր տարածելով թէ նա անցել է տաճկական հողը։ Դեռ զօրքը Ճա-

բայից չվերադարձած, Զաֆար աղայի մարդիկն էլ յարձակվում են մշտական գիւղերի վրայ և ոչնչացնելու փոխարէն թալանում։ Այսպէս գիւղի ամբողջ մալը տանելուց զատ՝ սպանում են նաև Ֆ-հոգի։ Յարձակումներ եղան նաև Հին-քարագրի, Վարդանի և Սարդարաբիկի վրայ։ Միայն Սարամերիկում հարիւր խիստ զիմադրող Թիւն ցոյց տուին։ Եւ այդ բոլորը կատարւում էր հէնց ընդհանուր հրամանատարի ներկայութեամբ։ Աչքի կարոտ-կարոտց ցրւում է զօրքը, իսկ Զաֆար աղան տանի խրոխտացած և նորեն առած՝ առաջ է տանում իր ստրատեգիական ծրագրերը։



ԶԱՖԱՐ-ԱՂԱ
(իր երկու հղերի հետ կախուած)

Աչքան վերջերը օր չէր անցնում, որ Խոյի ճանապարհի վրայ մարդ չթալանուէր։ Մի անգամ էլ քիւրդերը յարձակուեցին Խոյի գեղագրում հարանքարտների վրայ, վերջիններս զինուած լինելով՝ սկսում են պաշտպանուել, առաջանում է խիստ կռիւ և այդտեղ սպանւում է Հասէն, որը համարւում էր Զաֆարաղայի յայտնի կռուողներից։ Սեմնայանդուզն և վտանգաւոր կողոպուտների մէջ միշտ էլ նշանաւոր դեր խաղացողը եղել է Հասէն։ Վերջերս Հասէն Տանկասանից բերել էր 22,000 թուման մալ։

Զաֆար աղան երկար ժամանակ մեծ պարակա-տանկական ամենամագլխում։ Միայն յունիսին (1906) կանչեց Թաւ-

բիզ կառավարութեան կողմից՝ հաշուելու համար նա գնաց Թաւրիզ 30-ի մօտ կարիճներով, կառավարութիւնը սիրալիր կերպով ընդունեց, շատ պատիւներ տուեց, նոյնիսկ Թուրք-հայկական թեթև խռովութիւնների ժամանակ Լիլաւա թաղի պաշտպանութիւնը նրան յանձնեց։ Մի խօսքով շարժուում էին պարսիկ պաշտօնեաները իրենց դարաւոր քաղաքականութեամբ։ Երկար ժամանակ այդպէս խաբեցին, ձգձգեցին և վերջապէս ամսի վերջը նրան, ինչպէս իր հետ եկած քիւրդերին, ապանեցին՝ նախօրօք գցելով ցեղապետին ծուղակի մէջ։ Դատաւորին ներկայանալիս՝ հէնց սենեակում՝ միաժամանակ մի քանի կողմից խփում են։ Ինքը և իր քիւրդերը դիմադրութիւն չեն ցոյց տալիս, փոքր ինչ կռուում են, մի քանիսին ապանում, բայց իրենք էլ ընկնում են։ Յաջողւում է միայն մի չորս-հինգ հոգու փախչել, խրել-ապանելով դուրս գալ Թաւրիզից, անցնել գաւառներով՝ ի հարկէ ապանելով (եւ որպէս թէ մօտ 40—50 թուրք ապանում են) և հասնել Ճարաւ։ Երկար ժամանակ Ջաֆար աղայի և միւս քիւրդերի դիակները կախուած պահել են Ղալա-Գափիում։ Ապանման լուրը խիստ յուզմունք է առաջացնում քիւրդերի, մանաւանդ աւղօի ցեղի մէջ, և յարձակումները աւելի խիստ բնաւորութիւն են ստանում, ի հարկէ ուղղուած կառավարութեան դէմ։

Այս դէպքով քիւրդերի և պարսիկ կառավարութեան մէջ տիրող թշնամութիւնը լնականաբար էլ աւելի սաստկանում է։

V.

Քիւրդ ընտանիքը առհասարակ մեծ է, բազմանդամ, ինչպէս հայ նահապետական օջաղները։ Ընտանիքի անդամները, ամուսնացած տղաները, չեն ցրւում, զատւում հայրենի տնից։ Ամեն մի քիւրդ ընտանիք բաղկացած է առնւազը տասն հոգուց, կան և ընտանիքներ, որոնք ունեն 20—30 հոգի։ Ինչպէս նահապետական ընտանիք՝ ունի նա իր մեծը, իր հովանաւորող հայրը։ Բոլոր որդիները նրա առաջ են պատոյտ գալիս, նրա կարգադրութեամբ շարժուում։ Ամուսնացած որդին աւելի ազատ է և իրաւունքներ է վայելում, քան ամուրին։ Երիտասարդ, ամուրի քիւրդը գտնւում է հօր խիստ հսկողութեան տակ, նրան ուսուցանում է այն բոլորը, ինչ որ կսպասում են քիւրդի կեանքի մէջ անհրաժեշտ գիտելիքներ, ինչպէս ձիավարժութիւն, զէնք բանեցնել։ Հայրը թելադրում է գնալ և գողանալ ոչխարներ, ձիեր և այլն։ Քիւրդի աչքում մէկը այն ժամանակ միայն մարդի կոչում է ստանում, երբ նա

սպանում, թալանում, ասպատակում է։ Իսկ այդ բոլորը քիւրդի հայեացքով և տրամաբանութեամբ յանցանք չի համարւում, այլ առաւելութիւն։ Ինչ որ ձեռք է բերւում ոյժով, կռւով, դա արդար է քիւրդի համար և սրբազործւած։

Քիւրդ աղջիկը ընտանիքում առանձին. իրաւունքներ չի վայելում. նրա անհատականութիւնը համարեա մեռած է, նա հոր ճորան է։ Ամուսնութեան դէպքում շատ անգամ չեն հարցնում նրա կամքը։ Այս երևոյթը մեզ չի զարմացնում, քանի որ մեր շատ գիւղերումն էլ նոյն դրութիւնն է։ Ամուսնութեան մէջ քիւրդը խիստ կերպով առաջնորդւում է տնտեսական տեսակէտներով։ Քիւրդ աղջիկը համարեա ծախւում է, հօրը այնքան չի հետաքրքրում փեսայի ինչ դիրքի, քաջութեան տէր լինելը, որքան «բաշլղը», բայց քրդուհին ուրիշ աչքով է նայում։ Քիւրդերի մէջ սովորական «բաշլղը» համարւում է 50—500—200 լիրա, տանկական ոսկի, երբեմն էլ աւելի։ Տալիս են նոյնպէս ձի, զէնք և այլն։ Բաշլղի սովորութիւնը պարտադիր է բոլոր քիւրդերի մէջ։ Այս նոյն սովորութիւնը պահւում է և Արարատեան շատ հայաբնակ գիւղերում։

Աղջիկ փախցնելն էլ քիւրդի կեանքում սովորական երեւոյթների շարքն է անցել և սրբազործւած համարւում։ Ժողովրդական երգի հերոս, նիւթ է դառնում այն երիտասարդ քիւրդը, որը աղջիկ է փախցնում։ Եւ զարմանալին այն է, որ բախտաւոր է համարւում այն ամուսնութիւնը, երբ աղամարդը առնանգել է իր սիրուհուն հօր ընտանիքից, իսկ այսպիսի դէպքերում կինը մի առանձին հպարտութեամբ է նայում իր ընկերուհիների վրայ։

Ամուսնանալուց յետոյ քրդուհին գրաւում է պատուաւոր դիրք։ Ընդհանրապէս քիւրդ կինը շատ յարգւում է և անպայման աւելի ազատ է, քան հարեան ազգութիւնների, օրինակ՝ պարսիկների, տաճիկների կանայք։ Գինը ներկայանում է քիւրդի մօտ ոչ հարեմի զարդ, կրքերին յաղուրդ տուող արարած, ինչպէս այդ տեսնում ենք տաճիկների և պարսիկների մօտ, այլ իբրև ընկեր, աշխատող, աջակցող ձեռք։ Եւ ամուսնական կապը քիւրդերի կեանքում համարւում է ամենաուժեղ բանը։ Եւ հէնց քիւրդերի ամենախիստ, ծանր երդումը հաստատւած է այդ ամուսնական կապի—թալախի վրայ։ Քիւրդ կինն էլ որոշ տեղ ունի պատերազմի մէջ։ Ամենատաք կռւի ժամանակ անգամ եթէ քիւրդ կինը լաչակը գցի կռւող երկու կողմերի մէջ, իսկոյն զինադադար է լինում։ Կինն կռւում շատ է օգնում, նա փամփուշտ և այլ ռազմամթերք է մատակարարում, զանազան խօսքերով գրգռում կռւողներին։ Իսկ

եթէ մի քիւրդ փախչում է կամ փախցնում, կինը յոչակը արձակում է և զգում նրա գլխին։ Այդ ամենախիստ նախատինքն է քիւրդերի մէջ, որ նշանակում է, դու կին ես, ոչ թէ տղամարդ։ Այնպէս որ քաջութիւնը քիւրդերի կանանց հոտաբ առաջին տեղ է բռնում։ Կանանց կողմից սիրուած են այն քիւրդերը, որոնք քաջ են, անուն են հանած, ըմբոստ և կտրիճ են։ Հպարտութիւնը, հարատև փնտրտուն այնքան էլ գրաւչութիւն չունի քիւրդուհու աչքում։

Քիւրդի կեանքում կրկին տուսնութիւնը շատ քիչ է պատահում, որովհետև հանդիսանում է նախատինք, անպատուաբեր բան։ Եւ այդի կինը հաւատում է իր շուրջը որդիներին, պատմում, ամուսնու քաջագործութիւնները։ Վրէժխնդրութեան, քէնի գենը վառում նրանց մէջ—ինչ տուսնութիւն ապանուած է—ապագայում արիւն փոխարէնն առնելու։ Նա օրօրում է իրան ամուսնու քաջութիւններով և այսպէս անցկացնում իր կեանքը։

Արիւն վրէժխնդրութիւնը ինչպէս բոլոր կիսավայրենի ցեղերի, նոյնպէս և քիւրդերի կեանքում շատ խոշոր տեղ է բռնում։ Եւ այդ ժառանգաբար անցնում է սերունդից սերունդ և աւելի ու աւելի ուժգնութիւնամբ է արտայայտուում։ Քիւրդ ժողովրդի հակացգաութեամբ՝ ապանուածը հանգիստ չի լինում գերեզմանում, մինչև որ առնում են նրա արիւն փոխարէնը։ Շատ անգամ ապանում են ցեղի մի բոլորովին անմեղ քիւրդի՝ որպէս վրէժխնդրութիւն նոյն ցեղի յանցաւոր քիւրդի փոխարէնը։ Քիւրդ ցեղը ներկայանում է որպէս մի մեծ ընտանիք, որի բոլոր անդամներն էլ կապուած են իրար հետ և կազմում են մի ամբողջութիւն։ Հէնց դրա համար է, որ երբ մէկը յափշտակում է ուրիշ ցեղի մարդ, ապանում է, այդ դէպքում ոչ թէ թշնամանում, բարկում են երկուսերիք քիւրդերը, այլ ամբողջ ցեղերը։ Եւ այսպիսով առաջանում են ցեղերի մէջ անընդհատ կրկնուող յարձակումներ, կռիւներ, անհաշտ թշնամութիւններ։

Բայց այդ մեծ ընտանեկան կապը ունի և իր օգուտները։ Ամբողջ ցեղը աշխատում է հատասարութիւն պահպանել իր մէջ, չթողնել, որ մէկն ու մէկը փշանայ, ընկնի։ Երբ մէկի ոչխարները տանում են, ցեղի զատ-զատ մասնը ընտանիքները մի մի ոչխար են տալիս նրան և պակասը ծածկում։ Մի խօսքով այդ մեծ ընտանիքի մէջ կայ փոխադարձ օգնութեան սովորութիւնը։ այնպէս որ կարելի է ասել, որ կոմունիզմը որոշ չափով գործնականապէս տիրում է քիւրդերի մէջ։

Մոռացայ ասել, որ քիւրդերի ապառնալիքը՝ արիւն վը

ոչ-ինքնուրույն դեպքում՝ կայանում է «բրբակ» խոսքի մեջ։ Քիւրդի «բրբակը» (սպասիր) դատարկ սպառնալիք չէ։ Նա շատ խիստ հետևում է իր «բրբակ»-ին, և. բացառութիւններ պիտի համարել այն դեպքերը, երբ չի կատարում քիւրդը իր սպառնալիքը։ Ճիշտ է, շատ անգամ տարիներ են անցնում, բայց էլի չի մոռացում «Բրբակը»։ Քիւրդը քսաներորդ տարի յետոյ հանում է իր վրէժը և գոհ բացականչում, «ոբքան շատ եղաւ»։

Քիւրդը հիւրասէր, հաւատարիմ և ժանտանգ անկեղծ է, նա ներողութիւն, կեղծութիւն չգիտէ. ասենք այդ նրանց չի էլ աջողուում։ Շատ նկատած բան է, որ քիւրդը թէ թշնամութեան և թէ բարեկամութեան մէջ անկեղծ, ազնիւ է։ Քիւրդը շատ պատուասէր է. նա իր և իր ընտանիքի պատիւը պաշտպանելու համար չի խնայի իր արիւնը։ Քիւրդի հոգաբ պատիւը աւելի բարձր, աւելի թանգ է, քան իր կեանքը, խակ եթէ նրա պատիւը ոտնակոխ եղաւ, նա տարիներով պիտի աշխատի, մինչև որ առիթ և յարմարութիւն գտնի իր արատաւորած պատիւ վերականգնելու։

Նրա ժողովրդական երգը շատ ուրախ, պատերազմական և որոտընդոստ բնաւորութիւն է կրում, որ խիստ բնորոշում է քիւրդ ժողովուրդին. քիւրդի երգը լայկան, ցանուս շեղտ և խաղեր թէև ունի, բայց ոչ յուսահատութեան չափ։ Քիւրդ ժողովրդական երգը լսելիս թւում է, թէ քիւրդը նստած ձին, նիզակն ձեռքին, հրացանը ուսին՝ թռչում է գէպի լեռները։ Եւ քիւրդերը երգում են ոչ թէ փոքրիկ, յանգաւոր ոտանաւորներ, այլ երգում, պատմում են երկար դրամաներ, վէպեր։ Քիւրդ ժողովուրդը ոչ մի աչքի ընկնող երևոյթ չի մոռանում և դարձնում է կրակոտ երգի նիւթ։ Միտա նկատելի է ժողովրդական երգերի մէջ արեան վրէժնդրութեան կոչը, իսկ այդպիսի կտորները երգում են շատ ցասկոտ կերպով։ «Դիմ-դիմի» լեգենդան, որը ամբողջ մի պատմութիւն, մի վէպ, շատ երգում է, աւելի քան տարածուած է և բռնում է Պարսկաստանի քիւրդերի երգերի շարքում նշանաւոր տեղ։ Այդ լեգենդան ունի իր մի քանի վարիանտները և բոլորն էլ երգում են։

Դիմ-դիմ. դա մի ժայռ է, որ գտնուում է Ուրմի գաւառի արևմտեան կողմը, Պարսկա-տաճկական սահմանագլխում։

Մի անգամ Շահ-Աբասը ծպտեալ, դէրվիշի հագուստով, պտտում է իր երկիրը։ Այցելում է նաև Դիմ-դիմի շրջակայ վայրերը։ Շահ-Աբասը նստում է մի կանաչատ տեղ հանգստանալու, պատահում է մի քիւրդ հովիւ և սրանից խնդրում է չիբուխի համար կրակ։ Հովիւ Աբդալը իսկոյն կատարում է

խորհրդաւոր անձնաւորութեան խնդիրը և կրակը ափի մէջ դրած մօտեցնում է նրան։ Դէրվիշը լուռ և անշարժ դիտում է՝ առանց կրակը վերցնելու։ Լուռ է և Աբդուլը, հանգիստ, անվրդով։ Կրակը այրում է հովիւի ձեռքը, բայց նա անդորր է և դժգոհութեան նշաններ չի ցոյց տալիս։ Դէրվիշը լուռ է և հիացմունքով դիտում է, ապասելով հերոսական վախճանին։ Կրակը իր անողոք դերը կատարում է. այդպէս շարունակւում է երկար ժամանակ, այնքան, որ ձեռքի մէջքեղը ծակւում է և առաջանում մեծ բացուածք։ Բայց հովիւը դարձեալ անվրդով և անյոգդոդդ է, դարձեալ անշարժ և ձեռքը մեկնած Շահին։ Շահ-Աբասը հիացած այդ գերագոյն անձնազոհութեան վրայ՝ հովիւի ձեռքի մէջ առաջացած բացուածքը լցնում է ոսկով. հէնց դրա համար երգերի մէջ հովիւը կոչւում է խան Աբդալ լաբգերին (ոսկէձեռք)։ Բացի այդ, Շահ-Աբասը առաջարկում է, որ հովիւը մի նէր խնդրի։ Հովիւը ուզում է մի եզան կաշուի չափ տեղ Դիմ-դիմ սարի մօտ։ Շահ-Աբասը համաձայնում է։ Հովիւ Աբդալը կաշին անում է բարակ սիրիմ, մատի չափ բարակ գօտեր, և ստացւում է ահագին երկարութեամբ կաշէ թոկ։ Այդ երկար կաշէ թոկով, որը պատրաստուած է յամենայն դէպս մի եզան կաշուից, հովիւը չափում է Դիմ-դիմի շրջակայքը և մեծ տարածութիւն նէր ստանում, սեփականում։ Դիմ-դիմը ունենում է ոսկէ հանք. հովիւը դառնում է մեծ հարստութեան տէր, պարիսպներ է քաշում, ամուր դիրքեր պատրաստում, ժողովուրդը բազմանում և կամաց-կամաց դառնում մի անառիկ բերդ։ Աբդալի ցեղը այնքան առաջ է գնում, որ սկսում է ասպատակել շրջակայ գիւղեր, առերել, խանգարել ժողովրդի հանգիստը։ Շահ-Աբասը զայրանում, զօրք է դրկում խան Աբդալ լաբգերինին փչացնելու։ Բայց զօրքը կոտորւում է։ Էլի մի երկու անգամ ուղարկում է, բայց անաջող։ Շահը ինքը անձամբ զօրքի գլուխ անցած՝ գալիս է Աբդալի վրայ։ Կռիւը շարունակւում է ամբողջ եօթ տարի, բայց Աբդալը և իր բերդը կանգուն են և ասես հեգնում են շահին։ Մտածում է ուրիշ հնար։ Գտնել ջրի աղբիւրը և կտրել այն։ Բայց ինչպէս գտնել։ Մի ջրի ամբողջ քսան օր պարի են կերցնում, բայց ծարաւ պահում և բաց թողնում։ Զօրու միջոցով գտնում են ջրի աղբիւրը և կտրում։ Պաշարուածները ստիպւած անձնատուր են լինում և յաղթւում։ Խան Աբդալ լաբգերին ամենից վերջն է սպանւում։

Այս լեգենդան իրական դէպք է։

Մինչև այժմ էլ կանգուն են բերդի պարիսպների բեկոր-

ները, իսկ իսան Աբդալ լաբգեբինի ցեղերի մնացորդները այժմ էլ ապրում են Դիմ-դիմի մոտ։

Ահա Դիմ-դիմի լեգենդայի մի վարիանտը, որը պիտի համարել ամենահարազատը և ճիշտը։ Մի ուրիշ վարիանտի մէջ Շահ-Աբասը հովիւից սառնում է կաթ ևնեիրում այդ հողը։

Քիւրդ ժողովրդի կեանքի մէջ, նրա բարքերի շարքում խիստ նշանակալից տեղ է բռնում ցեղապետների, նշանաւոր քիւրդերի թաղման հանդէսը։ Ամբողջ ցեղի քիւրդերը սև են հագնում այդ օրը։ Բոլորը իրանց թոնրի ծոխերը հանում, տանում, լցնում են ցեղապետի դրան առաջ, այնպէս որ կազմւում է ծոխերի մի մեծ կոյտ։ Մեռնող ցեղապետի գլխարկը, կապում նրա զէնքերը և այսպէս բերում կանգնեցնում են դրան առաջ, սկսում վայ տալ, ագալ և ամբարուած փոշին վերցնում ու շաղ տալիս իրանց գլխին։ Եւ այդ ժամանակ բարձրանում է ընդհանուր վայնասունը, երկինքը ծածկւում է փոշիով։ Պատմում են, որ Ղասբմ-աղայի (Սոմայի ցեղապետ) թաղման ժամանակ թէև ահագին փոշու ամպակ էր կազմուած, բայց երբ նրա եղբայրը գալով (ուրիշ տեղ էր եղել)՝ ամբողջ փոշին սպառուած է գտնում, ոտիսուտ փէյին (կենդանու աղբ) է շաղ տալիս գլխին, լցնում բերանը, խփում գլխին և վայում։

Քիւրդերը մեռելը դնում են աջ կողքի վրայ։ Դերեզմանի բերանը լայն են անում, իսկ ցածը շատ նեղ, հազիւ մեռելը կողքի վրայ տեղաւորւում է. դնում են քարը և ապա հող լցնում։ Հետաքրքիր է այն, որ քարը դնելուց յետոյ մոլլան կամ շէյխը ծեծում է քարը և ասում. «Քեզ եմ ասում, լաւ լսիր, այս ինչի տղան (անւանում են մօր անունով), դու ես մեռել, զգոյշ եղիր, ռարիկան (սատանան) չգայ՝ քեզ խաբի, դու Աստուած ունիս, ասա՝ ես առաջ եմ մեռել։

Դրանով իրր թէ նախազգուշացնում են՝ չլինի թէ խաբուեն, որովհետև սատանան դերեզմանում անգամ հետևում է, որ նրանց ճանապարհից հանի։ Եթէ քիւրդը խաբւի, չի դնայ աքքայութիւն։ Սատանաները որպէս թէ հաւատում են ենթադրեալ քիւրդերին, որ նա մեռած չէ, հէնց դրա համար է, որ ասում է շէյխը. «ասա, որ ես վաղուց եմ մեռել։

Քիւրդ ռաւանդը, այսինքն կուռդը, երբ մեռնում է իր բնական մահով, քիւրդերը չեն լացում, չեն սգում, այլ կրկնում են. «Դու պիտի կուի դաշտում մեռնէիր, դու պիտի անուն հանէիր։ Երկու խօսք, բայց շատ բան է պարփակում, բնորոշում քիւրդերի հոգեբանութիւնից։ Եւ իսկապէս. քիւրդի համար բնական մահից շատ աւելի հաճելի է կուի դաշտում ընկնելը. և դրականապէս կարելի է ասել, որ քիւրդերի, ինարկէ երիտասարդ և չափահաս քիւրդերի, 60—70 %-ը ընկնում է կուի մէջ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

I. մաս

1. Առաջաբանի տեղ — Երես
2. Ամրպատականի հայերը 7
3. Մակաբի խանութիւնը 10
4. Վեց օր ս. Թադէի վանքում 27
5. Մեծ դաստուի ներկայ վիճակը 43
6. Թաբրիզի լաբանը 60
7. Սուլմաստի հայերը 65
8. Կապուտանի արեւմտեան և հարաւային ափերը
   ա) Ուրմիի հայերը 81
   բ) Պարսկական Թիւրքիստանի հայերը 90
9. Ղարադաղի հայերը 97
10. Պարսկաստանի թեմի հայերը 102
11. Պարսկահայերի կրթական գործը 106
12. Կանանց բարեգ. ընկերութիւնները 126
13. Արբաստականի առաջնորդութեան շրջանը . . . 142
14. Թատրոնական գործունէութիւնը 157
15. Ընթերցանութեան գործը 167
16. Պարսկահայերի թիւը 175

II. մաս

17. Տնտեսական հարցեր
   ա) Բնական հարստութիւններ և հայ արդիւնաբերողներ — 179
   բ) Օտար արդիւնաբերողներ և առեւտրական վիճակը — 185
   գ) Ռուսաց ազդեցութիւնը 189
   դ) Արհեստագիտութիւնը 198
   ե) Հարկերը 204
18. Պարսից դպրոցները
   ա) Մուսլիմանները 211
   բ) Թալաբիները 215
19. Պարսկաստանի մամուլը 221
20. Դէրվիշները 228
21. Պատիժները Պարսկաստանում 234

III. մաս

22. Պարսկաստանի ատրները 243
23. Պարսկաստանի քիւրդերը 265